ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՍԵՄԻ ԲԱՆԱԿԸ

II

«Հին Հայաստանի ռազմական գործը»
մատենաշար. հատոր II

Արա Գևորգյան. Տիգրան Մեծի բանակը. մ.թ.ա. 95 – 55 թթ. Պրակ II:

Երևան. «Արևելք – Արևմուտք» ԳԲՀ հրատ.

2010

9(47.925)
Գ-47

ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԲԱՆԱԿԸ

Մ. Թ. Ա. 95 – 55 ԹԹ.

Պրակ II

4420

ԵՐԵՎԱՆ

«Արևելք – Արևմուտք» ԳԲՀ հրատ.

2010

«Արևելք - Արևմուտք»
գիտական և բժշկական հիմնադրամ

Ռազմագիտական հետազոտությունների կենտրոն

ՀՏԴ 941 (479.25) :355/359
ԳՄԴ 63.3(2Հ)+68
Գ 477

Գևորգյան Ա.
Գ 477. Տիգրան Մեծի բանակը մ.թ.ա. 95–55 թթ. («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար. հատոր II.)/ Ա. Գևորգյան. - Եր. «Արևելք – Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2010 թ.
Պրակ II, – 449 էջ, նկ.

Աշխատության մեջ սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա ներկայացվում են մ. թ. ա. 95 - 55 թթ. Տիգրան Մեծի ռազմական և ռազմաքաղաքական գործունեության արդյունքները:

Ռազմական արվեստի պատմության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող ռազմաշավները և ճակատամարտերը ներկայացված են նոր լուսաբանությամբ:

Մանրամասնորեն ներկայացված և մեկնաբանված են մ.թ.ա. 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ընթացքը և հետևանքները:

Գիրքը նախատեսված է ռազմագետների, պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 941 (479.25): 355/359
ԳՄԴ 63.3(2Հ)+68

ISBN 978-9939-9003-1-5

© Ա. Գևորգյան, 2010 թ.

Հեղինակը իր խորին
երախտագիտությունն է հայտնում
մեծարգո պարոններ
Վահան և Հայկ Հարությունյաններին,
որոնց շնորհիվ հնարավոր դարձավ
հրատարակել «Տիգրան Մեծի բանակը
մ.թ.ա. 95–55 թթ.» աշխատության սույն՝
երկրորդ պրակը:

ՑԱՆԿ

էջ

ՊՐԱԿ I

Շնորհակալություններ 9

Մուտք 11

Նախաբան
ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 15

ՄԱՍ I.
Մ. Թ. Ա. 535 – 69 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Գլուխ 1.
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՄԻՆՉԵՎ ՏԻԳՐԱՆ Բ-ի
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
(մ.թ.ա. 535–95 թթ.) 34

Գլուխ 2.
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԾՈՓՔԻ ՄԻԱՑՈՒՄԻ ՆԱԽՕՐԵԻՑ
ՄԻՆՉԵՎ ԱՍՈՐԻՔԻ ՀՊԱՏԱԿԵՑՈՒՄԸ
(մ.թ.ա. 95–83 թթ.) 67

Գլուխ 3.
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ
(մ.թ.ա. 83–69 թթ.) 134

ՄԱՍ II.
Մ. Թ. Ա. 69 – 66 ԹԹ. ՀԱՅ – ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գլուխ 4.
ՀԱԿԱՍԱՐՏՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՈՒԺԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ
ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 178

Գլուխ 5.
Մ.Թ.Ա. 69 Թ. ՌԱԶՄԱՐՇԱՎԸ 237

Գրականություն 346
Հավելված 368

ՊՐԱԿ II

Շնորհակալություններ 394

Երկրորդ պրակի նախաբան 396

Գլուխ 6.
Մ.Թ.Ա. 68 Թ. ՌԱԶՄԱՐՇԱՎԸ 399

Գլուխ 7.
Մ.Թ.Ա. 67 Թ. ՌԱԶՄԱՐՇԱՎԸ 554

ՄԱՍ III.
ՀԱՅ – ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ.
ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՅՈ, ՊՈՆՏՈՍ՝ ՈՉ

Գլուխ 8.
Մ.Թ.Ա. 66 Թ. ՊՈՄՊԵՈՍԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ.
ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԾՆՈՒՆԴԸ 637

Գրականություն 782
Հավելված 807

ՊՐԱԿ III

Շնորհակալություններ

Երրորդ պրակի նախաբան

Գլուխ 9.
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՏԻԳՐԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՎԵՐՋՈՒՄ (մ.թ.ա. 65–55 թթ.)

Գլուխ 10.
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 11.
ԱՐԴԻ ՊԱՏՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
*ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Վերջաբան
ԱՊԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրականություն
Հավելված
Ամփոփում
Резюме
Summary

* * *

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

ՊՐԱԿ I

Շնորհակալություններ 9

Մուտք 11

Նախաբան
ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 15

ՄԱՍ I.
Մ. Թ. Ա. 535 – 69 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Գլուխ 1.
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՄԻՆՉԵՎ ՏԻԳՐԱՆ Բ-ի
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
(մ.թ.ա. 535–95 թթ.) 34
1.1.Հայկական բանակը Աքեմենյան տերության
ռազմական համակարգում՝ 535 – 331 թթ. 36
1.2.Երվանդունիների բանակը՝ 331–201 թթ. 48
1.2.1.Երվանդ Մեծի բանակը՝ 331 – մոտ 300 թթ. 48
1.2.2.Երվանդունիների զինուժը՝ 300 – մոտ 220 թթ. 50
1.2.3.Երվանդ Վերջինի բանակը՝ 220 – 201 թթ. 50
1.3.Արտաշեսյանների բանակը՝ 201–95 թթ. 51
1.3.1.Արտաշես ստրատեգոսի բանակը՝ 201–190 թթ. 51
1.3.2.Արտաշեսի ռազմական ռեֆորմը՝ մ.թ.ա. 190–189 թթ.
և Հաննիբալի դերը հայկական բանակի
բարեփոխումներում: 52
1.3.3.Արտաշես Ա բանակը՝ 188–160 թթ. 57
1.3.4.Տիգրան Ա և Արտավազդ Ա-ի բանակը՝ 160–95 թթ. 58
1.3.5.Մ.թ.ա. 112 – 111 թթ. հայ-պարթևական պատերազմը 61
1.3.6.Հայկական բանակի թվաքանակը և կառուցվածքը
մ.թ.ա.535 – 95 թթ. 64

Գլուխ 2.
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԾՈՓՔԻ ՄԻԱՑՈՒՄԻ ՆԱԽՕՐԵԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՍՈՐԻՔԻ ՀՊԱՏԱԿԵՑՈՒՄԸ
(մ.թ.ա. 95–83 թթ.) 67
2.1.Տիգրան Բ-ի ռազմավարական կոնցեպցիան 68
2.2.Ծոփքի միացումը՝ 94 թ. 92
2.3.Հայ–հռոմեական հակամարտությունը Կապադովկիայում՝ 93–91 թթ. 94
2.4..Տիգրանի Բ-ի առաջին ռազմական ռեֆորմը՝ 91–89 թթ. 99
2.5.Վիրքի և Աղվանքի հպատակեցումը՝ 89–87 թթ. 125
2.6.Երկրորդ հայ–պարթևական պատերազմը՝ 86–84 թթ. 127
2.7.Սիրիայի հպատակեցումը 83 թ. 131

Գլուխ 3.
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ
(մ.թ.ա. 83–69 թթ.) 134
3.1.Հայկական կայսրության բանակի թիվը, կազմը և մարտավարությունը՝ 83–69 թթ. 137
3.1.1.Ենթակա թագավորությունների զորքերը 140
3.2. 77 թ. կապադովկիական արշավանքը. 154
3.3.Տիգրան Մեծը և կիլիկյան ծովահենները՝ 83–69 թթ. 156
3.4.Տիգրան Մեծը և Սպարտակը՝ 73–71 թթ. 168
3.4.1.Միհրդատի փորձերը օգտագործել Սպարտակի ապստամբությունը 168
3.4.2.Տիգրանի աջակցությունը Սպարտակի ապստամբությանը 168
3.4.3.Սպարտակի անձնավորության մասին 169
3.5.Հարավսիրիական պատերազմը՝ 73–69 թթ. 170
3.6.Տիգրան Մեծը և Միհրդատ Եվպատորը՝ 73–69 թթ. 172

ՄԱՍ II.
Մ. Թ. Ա. 69 – 66 ԹԹ. ՀԱՅ – ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գլուխ 4.
ՀԱԿԱՄԱՐՏՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՈՒԺԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 178

4.1.Հռոմեական բանակի ուժերը և նրանց տեղակայումը Փոքր Ասիայում 69 թ. 178
4.1.1.Լուկիոս Լիկինիոս Լուկուլլոսի համառոտ կենսագրությունը 178
4.1.2.Երրորդ պոնտական պատերազմի ավարտը և Միհրդատի փախուստը Հայաստան 179
4.1.3.Լուկուլլոսի հայկական արշավանքի նախապատրաստումը 185
4.2.Լուկուլլոսի ռազմավարական ծրագրերը 210
4.3.Հայկական բանակի ուժերը և նրանց տեղակայումը կայսրությունում 69 թ. 212
4.3.1.Հայ-հռոմեական պատերազմին անմիջապես նախորդող իրադարձությունների ժամանակագրությունը 212
4.3.2.69 թ. գարնանը Հայկական տերության ռազմաքաղաքական վիճակի վերլուծություն 216
4.4.Տիգրանի ռազմավարական ծրագրերը 225
4.5.Կողմերի բանակների և ծրագրերի գնահատականը 227
4.5.1.69 թ. հռոմեական և հայկական բանակների գնահատականը 233

Գլուխ 5.
Մ.Թ.Ա. 69 Թ. ՌԱԶՄԱՐՇԱՎԸ 237
5.1.Լուկուլլոսի արշավանքի սկիզբը և առաջին մարտերը 239
5.1.1.Գեռանեցում և արշավ դեպի Տիգրանակերտ 239
5.1.2.Մերուժան զորաբանակի մարտը Սեքստիլիոսի հետ 246
5.1.3.Հայկական այրուձիու գրոհը Տիգրանակերտի մոտ 257
5.1.4.Տիգրանակերտի պաշարումը 265
5.1.5.Հայ-հռոմեական կռիվները Տավրոսում՝ Մուրենայի և Սեքստիլիոսի գրոհները 268
5.1.6.Տիգրանի և Լուկուլլոսի պատրաստությունները գլխավոր ճակատամարտին 271
5.2.Տիգրանակերտի գլխավոր ճակատամարտը 278
5.2.1.Լուկուլլոսի ճակատամարտի պլանը և հռոմեական բանակի դիսպոզիցիան 295

5.2.2. Տիգրանի ճակատամարտի պլանը և հայկական բանակի դիսպոզիցիան 303
5.2.3.Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքը 314
5.2.3.1.Ջորքերի նախնական դասավորությունը Տիգրանակերտի ճակատամարտից առաջ 314
5.2.3.2.Առաջին փուլ. հռոմեական թեթևազեն հետևակի գրոհը հայկական բանակի աջ թևում գտնվող բլրի վրա և հռոմեական հեծելազորի ճակատային գրոհը 320
5.2.3.3.Երկրորդ փուլ. հռոմեական հեծելազորի նահանջը և լեգեոնների մանները 322
5.2.3.4.Երրորդ փուլ. լեգեոնների գրոհը գումակի և ծանր հեծելազորի վրա, հռոմեական հեծելազորի փախուստի ավարտը 324
5.2.1.5.Չորրորդ փուլ. հայկական բանակի խուճապն ու փախուստը և նրա հետապնդումը 326
5.2.1.6.Տիգրանակերտի ճակատամարտի նշանակությունը պատերազմի ընթացքի համար. կողմերի կորուստները 329
5.3.Տիգրանակերտի անկումը և 69 թ. ռազմարշավի ավարտը 333
5.3.1.Հայկական բանակի վիճակը ճակատամարտից հետո 333
5.3.2.Տիգրանակերտի անկումը 335
5.3.3.Լուկուլլոսի նախապատրաստումը 68 թ. ռազմարշավին 338
5.3.4.Տիգրանի նախապատրաստումը 68 թ. ռազմարշավին. հայկական բանակի նոր ռեֆորմի անհրաժեշտությունը 339
5.3.5.Հայկական բանակի տիգրանակերտյան պարտության պատճառների վերլուծությունը 340
5.4. 69 թ. ռազմարշավի արդյունքները և գնահատականը 341

Գրականություն 346

Հավելված 368

ՊՐԱԿ II

Շնորհակալություններ 394

Երկրորդ պրակի նախաբան 396

Գլուխ 6.
Մ.թ.ա. 68 թ. ՌԱԶՄԱՐՇԱՎԸ 399
6.1.69–68 թթ. Տիգրան Մեծի երկրորդ ռազմական ռեֆորմը 400
6.2.68 թ. ռազմարշավի սկիզբը և առաջին մարտերը 415
6.2.1.Հռոմեական բանակի ուժերը և Լուկուլլոսի ծրագրերը 415
6.2.2.Հայկական բանակի ուժերը և Տիգրանի ծրագրերը 419
6.2.3.Հայ-հռոմեական կռիվները Տավրոսում 432
6.2.4.Հայ-հռոմեական կռիվները Արածանիի հովտում 435
6.2.5.Հայկական և հռոմեական բանակների վիճակը ու կորուստները Արածանիի ճակատամարտի նախօրեին 442
6.3.Արածանիի գլխավոր ճակատամարտը 445
6.3.1.Լուկուլլոսի ծրագրերը և հռոմեական բանակի զորադասավորումը 453
6.3.2.Տիգրանի ծրագրերը և հայկական բանակի զորադասավորումը 455
6.3.3.Արածանիի ճակատամարտի ընթացքը 458
6.3.3.1.Հայկական հեծելազորի գրոհը և հռոմեացիների հակագրոհը՝ հայկական և հռոմեական հեծելազորների մարտը 466
6.3.3.2.Հռոմեական կոհորտների գրոհը և հայկական հեծելազորի կեղծ փախուստը 468
6.3.3.3.Հայկական ծանր հեծելազորի գրոհը հռոմեական հեծելազորի վրա 472
6.3.3.4.Հայկական հեծելազորի արևելյան հեծելամարտը լեգեոնների դեմ 474
6.3.4.Արածանիի ճակատամարտի հետևանքները, նշանակությունը և կողմերի կորուստները 476
6.4.Հռոմեական բանակի նահանջը դեպի հարավ՝

Աղձնիք 482
6.4.1.Հռոմեական բանակի նահանջի պատճառները և հնարավոր ուղիները 482
6.4.2.Հայկական և հռոմեական բանակների կորուստները և կազմը երրորդ՝ Աղձնիքի գլխավոր ճակատամարտի նախօրեին 486
6.5.Աղձնիքի գլխավոր ճակատամարտը 489
6.5.1.Լուկուլլոսի ծրագրերը և հռոմեական բանակի զորադասավորումը 492
6.5.2.Տիգրանի ծրագրերը և հայկական բանակի զորադասավորումը 494
6.5.3.Աղձնիքի ճակատամարտի ընթացքը 498
6.5.3.1.Տիգրանի հեծելազնդերի գրոհը պարեն հավաքող հռոմեական ջոկատների վրա 499
6.5.3.2.Լուկուլլոսի գրոհը իր ճամբարից դուրս եկած հայկական հետևակային բանակի վրա 503
6.5.3.3.Տիգրանի հեծյալ բանակի անսպասելի գրոհը Լուկուլլոսի վրա թիկունքից 506
6.5.3.4.Լուկուլլոսի նահանջը դեպի իր ճամբարը 511
6.5.3.5. Հայկական բանակների կողմից հռոմեական ճամբարի պաշարումը 514
6.5.4.Աղձնիքի գլխավոր ճակատամարտի նշանակությունը և կողմերի կորուստները 516
6.6.Հայ-պոնտական հակահարվածը Պոնտոսում 523
6.6.1.Միհրդատի հեռաշրջավային զորաբանակի կազմը և արշավի նպատակները 523
6.6.2.Միհրդատի զորաբանակի մուտքը Փոքր Հայք և առաջին մարտերը 528
6.6.3.Փաբիոսի զորաբանակի պարտությունը և Պոնտոսի ազատագրման սկիզբը 531
6.6.4.Կոմանայի ճակատամարտը 536
6.6.5.Հայ-պոնտական հակահարձակման արդյունքները և նշանակությունը 540
6.7.68 թ. ռազմարշավի վերջին մարտերը Հայաստանում և Մծբինի պաշարումը 540
6.7.1.68 թ. ռազմարշավի վերջին մարտերը և Լուկիոս Փանիոսի ջոկատի շրջապատումը 545
6.7.2.Մծբինի անկումը 546

6.8.68 թ. ռազմարշավի արդյունքները և գնահատականը 549

Գլուխ 7.
Մ.Թ.Ա. 67 Թ. ՌԱԶՄԱՐՇԱՎԸ 554
7.1.Առաջավոր Ասիայի ռազմաքաղաքական իրավիճակը 67 թ. գարնան սկզբին և հակամարտող կողմերի ուժերը ու ռազմավարական ծրագրերը 563
7.1.1.Անտիկ աշխարհի և Առաջավոր Ասիայի ռազմաքաղաքական իրավիճակը 67 թ. գարնան սկզբին 563
7.1.2.Տիգրան Մեծի ուժերը ու ռազմավարական ծրագրերը 67 թ. գարնան սկզբին 570
7.1.3.Լուկուլլոսի ուժերը ու ռազմավարական ծրագրերը 67 թ. գարնան սկզբին 572
7.2.69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմ. ռազմական գործողությունների վերսկսումը Հայաստանի հարավում 67 թ. գարնանը 573
7.2.1.Լուկուլլոսի բանակի նահանջը Մծբինից՝ Պոնտոս 573
7.2.2.Տիգրանի գործողությունները 67 թ. գարնանը 577
7.3.69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմ. ռազմական գործողությունների վերսկսումը Պոնտոսում 67 թ. գարնանը 581
7.4.Զելայի գլխավոր ճակատամարտը 583
7.4.1.Տրիարիոսի ծրագրերը և հռոմեական բանակի Զորադասավորումը 583
7.4.2.Միհրդատի ծրագրերը և հայ-պոնտական բանակի զորադասավորումը 587
7.4.3.Զելայի ճակատամարտի ընթացքը 593
7.4.3.1.Կողմերի դասավորությունը ճակատամարտից առաջ 593
7.4.3.2.Ճակատամարտի «հանդարտ» սկիզբը և Միհրդատի հայկական թեթև հետևակի զորաշարժը 599
7.4.3.3.Հայ կատաֆրակտոսների գնդերի գրոհը հռոմեական լեգեոնների վրա և նրանց ձախ թևի ջախջախումը 603
7.4.3.4.Հայկական հեծելազորի թիկունքային

հարվածը հռոմեական հետևակին և հեծելազորին 607
7.4.3.5.Հռոմեական բանակի կազմալուծումը ու խուճապահար փախուստը և ճամբարի կորուստը 609
7.4.4.Զելայի ճակատամարտի նշանակությունը և կողմերի կորուստները 611
7.5.Հայկական բանակի հարձակումը Կապադովկիայում 619
7.6.67 թ. աշնանը Հայաստանում Տիգրան Մեծի դեմ սկսված խռովությունը և զինված ապստամբության սկիզբը 620
7.7.67 թ. ռազմարշավի արդյունքները և գնահատականը 625
7.8.69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ընդհատումը. միակողմանի զինադադար 627
7.9.67-66(63) թթ. չորրորդ պոնտական պատերազմի սկիզբը և Հայաստանը 629
7.10.69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմում կայացած ռազմական գործողությունների ընդհանուր բնութագիրը 631
7.10.1.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմը ռազմարվեստի պատմությունում 632

ՄԱՍ III.
ՀԱՅ – ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ.
ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՅՈ, ՊՈՆՏՈՍ՝ ՈՉ

Գլուխ 8.
Մ.Թ.Ա. 66 Թ. ՊՈՄՊԵՈՍԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՇՆՈՒՆԴԸ 637
8.1.Ռազմաքաղաքական իրավիճակը Օյկումենեում մ.թ.ա. 66 թ.-ի գարնանը 641
8.1.1.Ռազմաքաղաքական իրավիճակը Հայկական տերությունում 66 թ. գարնանը 641
8.1.1.1.Ռազմաքաղաքական իրավիճակը Հայաստանի ներսում 66 թ. գարնանը 642
8.1.1.2.Ռազմաքաղաքական իրավիճակը արևելյան սահմաններին 66 թ. գարնանը 645

8.1.1.3.Ռազմաքաղաքական իրավիճակը հարավ-արևելյան սահմաններին 66 թ. գարնանը 646
8.1.1.4.Ռազմաքաղաքական իրավիճակը հարավ-արևմտյան սահմաններին 66 թ. գարնանը 647
8.1.1.5.Ռազմաքաղաքական իրավիճակը Արևմուտքում՝ մասնավորապես Պոնտոսում 66 թ. գարնանը 648
8.1.1.6.Ռազմաքաղաքական իրավիճակը հյուսիսային սահմաններին 66 թ. գարնանը 649
8.1.2.Հռոմեական տերություն 651
8.1.2.1.Ռազմաքաղաքական իրավիճակը Հռոմեական հանրապետության ներսում 66 թ. գարնանը 651
8.1.2.2.Ռազմաքաղաքական իրավիճակը Հռոմեական հանրապետության Արևելքում 66 թ. գարնանը 652
8.1.3.Պարթևական տերություն 654
8.1.3.1.Ռազմաքաղաքական իրավիճակը Պարթևական տերությունում 66 թ. գարնանը 654
8.1.3.2.Ռազմաքաղաքական իրավիճակը Պարթևական տերության արևելյան սահմաններին 66 թ. գարնանը 654
8.1.3.3.Ռազմաքաղաքական իրավիճակը Պարթևական տերության արևմտյան սահմաններին 66 թ. գարնանը 655
8.2.Խռովարարների դեմ պատերազմի հաղթական ավարտը Հայաստանում 66 թ. գարնանը 656
8.3.66 – 64 թթ. երրորդ հայ- պարթևական պատերազմի սկիզբը. 66 թ. ռազմարշավը 657
8.3.1.Հրահատ Գ-ի ուժերը և ռազմավարական ծրագրերը 661
8.3.2.Տիգրան Մեծի ուժերը և ռազմավարական ծրագրերը 663
8.3.3.66-64 թթ. հայ- պարթևական պատերազմի սկիզբը 666
8.3.4. Փրասասպայի գլխավոր ճակատամարտը 667
8.3.4.1.Կողմերի նախնական զորադասավորումը 670
8.3.4.2.Հեծելազորային և հետևակային համառ մարտը 674
8.3.4.3.Հայ-ատրպատական հետևակի հաղթանակը 674
8.3.4.4.Պարթևական հեծելազորի հաղթանակը թևերում 674
8.3.4.5.Հայ-ատրպատական հետևակի շրջապատումը և գերումը 678
8.3.4.6.Հայկական բանակի նահանջը և փախուստը Հայաստան 678

8.3.4.7.Ճակատամարտի հետևանքները և կողմերի կորուստները 681
8.3.5.Փրաասպայի անկումը և հայկական զորաբանակի նահանջը Հայաստան 683
8.3.6.Միջագետքի հյուսիսի գրավումը պարթևների Կողմից 684
8.3.7.Պարթևների մուտքն Արարատյան դաշտ և Արտաշատի պաշարումը 684
8.3.8.Հայկական բանակի հակահարձակումը 685
8.3.9.Հայկական և պարթևական բանակների վիճակն ու կորուստները Արտաշատի ճակատամարտի նախօրեին 687
8.4. Արտաշատի գլխավոր ճակատամարտը 692
8.4.1.Տիգրան Մեծի ծրագրերը և հայկական բանակի զորադասավորումը 692
8.4.2.Պարթևների ծրագրերը և բանակի զորադասավորումը 695
8.4.3.Արտաշատի գլխավոր ճակատամարտի ընթացքը 696
8.4.3.1.Հեծելազորային և հետևակային մարտի սկիզբը 699
8.4.3.2.Հայկական ծանր հետևակի զորաշարժը 701
8.4.3.3.Հայկական հետևակի հաղթանակը ձախ թևում և գրոհը պարթև կատաֆրակտոսների դեմ 704
8.4.3.4.Պարթևական ծանր հեծելազորի պարտությունը և թեթև հեծելազորի չափավոր հաջողությունը 707
8.4.3.5.Պարթևական բանակի վերջնական ջախջախումը և փախուստը 709
8.4.3.6.Պարթևական բանակի ռազմավարական հետապնդումը 712
8.4.4.Արտաշատի գլխավոր ճակատամարտի նշանակությունը, հետևանքները և կողմերի կորուստները 712
8.4.5.66 – 64 թթ. երրորդ հայ- պարթևական պատերազմի առաջին փուլի արդյունքները 714
8.5.Հայկական բանակի աստեղային ժամը. Հայկական տերության դեմ մ.թ.ա. 66 թ. կնքված հռոմեա-պարթևական ռազմական դաշինքի ճակատագիրը 717
8.6.67–66(63) թթ. չորրորդ պոնտական պատերազմի ընթացքը և Հայաստանը 720
8.6.1.66 թ.-ին Միհրդատ Եվպատորի պարտությունը

և Տիգրան Մեծը 730
8.7.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ավարտը. հայ-հռոմեական զինադադարի նախնական պայմանագիրը 731
8.7.1.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ավարտը 736
8.7.2.Հայ-հռոմեական զինադադարի նախնական Պայմանագիրը 737
8.8.Պոմպեոսը Հայաստանում 741
8.8.1.Պոմպեոսի բանակի կազմը և թվաքանակը 741
8.8.2.Հայ-հռոմեական պայմանագրի կնքումը 745
8.9.Հայ-հռոմեական դաշնային պայմանագիրը և Արևելքում նոր աշխարհակարգի ստեղծումը 745
8.10.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի արդյունքներն ու գնահատականը 750
8.10.1.Հակամարտող կողմերի կորուստները 750
8.10.2.Հակամարտող կողմերի ձեռքբերումները 753
8.10.3.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի գնահատականը ժամանակակիցների՝ մ.թ.ա. I դարի գործիչների կողմից 754
8.10.4.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի արդի հայ պատմագրության գնահատականը 756
8.10.5.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի արտասահմանյան պատմաբանների գնահատականը 763
8.10.6.Հին աշխարհի ռազմական արվեստի պատմության մասնագետների գնահատականը 765
8.11.66 թ. Պոմպեոսի կովկասյան արշավանքը 767
8.12.66 թ. հայ-պարթևական ռազմարշավի և հռոմեա-հայկական առնչությունների արդյունքները և գնահատականը 772
8.12.1.66 թ. հայ-պարթևական ռազմարշավի արդյունքները և գնահատականները 774
8.12.2.66 թ. հայ-հռոմեական առնչությունների արդյունքները և գնահատականը 775

Գրականություն 782
Հավելված 807

ՊՐԱԿ III

Շնորհակալություններ

Երրորդ պրակի նախաբան

Գլուխ 9.
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՏԻԳՐԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՈՒՄ (մ.թ.ա. 65–55 թթ.)
9.1. Պոմպեոսի 65 թ. կովկասյան արշավանքը և Հայաստանը
9.2.66-64 թթ. երրորդ հայ-պարթևական պատերազմի վերջին ռազմարշավները
9.3. Պոմպեոսի գործունեությունը Արևելքում՝ 64-62 թթ. և Հայաստանը
9.4. Ռազմաքաղաքական իրավիճակը Արևելքում 62-55 թթ. և Հայաստանը

Գլուխ 10.
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
10.1.Քաղաքական
10.1.1.95-62 թթ. Արևելքի ռազմաքաղաքական իրավիճակի ամփոփիչ գնահատականներ
10.1.2. Տիգրանը որպես դիվանագետ և քաղաքագետ
10.2.Ռազմական
10.2.1.Հայկական պետության ռազմական գործի ամփոփիչ գնահատական
10.2.2.69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմի նշանակությունը ռազմարվեստի պատմության համար
10.2.3.Տիգրանը որպես զորավար
10.3.Բարոյահոգեբանական
10.3.1.Էթնոհոգեբանական տեսակետ
10.3.2.Ռազմական հոգեբանության տեսակետ

Գլուխ 11.
ԱՐԴԻ ՊԱՏՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

11.1.Վերականգնողական (ռեկոնստրուկտիվ) մեթոդների հիմնարար սկզբունքները
11.2.Վերականգնողական (ռեկոնստրուկտիվ) մեթոդների օգտագործելիության սահմանները Հին Հայաստանի մ.թ.ա. I դարի պատմության ուսումնասիրության համար

Վերջաբան
ԱՂԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ա. Ընդհանուր պատմություն
բ. Ռազմական պատմություն
գ. Հնագիտություն
դ. Պրոպագանդա

Գրականություն

Հավելված
1. Կենսագրական բառացանկ – տեղեկատու
2. Տեղանունների բառացանկ
3. Բառարան
4. Քարտեզների ցանկ
5. Նկարների ցանկ

Ամփոփում

Резюме

Summary



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կցանկանայի շնորհակալություն հայտնել անվանի պատմաբան Ռուբեն Մանասերյանին իր *Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ. Մ.թ.ա. 94 – 64 թթ.: Երևան, "Հայաստան", 1987, 240 էջ.* հոյակապ մենագրության համար, որը ոգևորեց և դրդեց ինձ "Հին Հայաստանի ռազմական գործը" եռահատորյակի ստեղծմանը, որի հրատարակումը սկսվում է Տիգրան Մեծի ժամանակաշրջանին նվիրված սույն՝ երկրորդ հատորից:

Շնորհակալություն եմ հայտնում արդի հայ մտավորականության ամենափայլուն ներկայացուցիչներից մեկին՝ մեծ ճարտարապետ Սաշուր Քալաշյանին, մեր բազմաթիվ քննարկումների և բանավեճերի ժամանակ ինձ պարգևած բազմաթիվ անսպասելի և խորաթափանց մտքերի համար:

Շնորհակալ եմ Դավիթ Հարությունյանին, Համլետ Գասպարյանին, Էմմա Հովսեփյանին և Համլետ Ծատուրյանին իմ աշխատությանը ծանոթանալու և արժեքավոր նկատողություններ և առաջարկներ կատարելու համար:

Շնորհակալ եմ դիտողությունների համար հիմնականում Նարինե Գևորգյանին, նաև Հրանուշ Խառատյանին, Մեղա Մկրտչյանին, Գագիկ Սարոյանին, Աշոտ Ասլանյանին, Անահիտ Էբեյանին և Էմմա Հովսեփյանին օգնության, ինչպես նաև իմ բանաստեղծական օպուսներին ավելի ընդունելի տեսք տալու համար: Շնորհակալ եմ Լիլիթ Ասոյանին, Տաթևիկ Հովսեփյանին վեկտորային գծանկարչության և նկարիչ Ծովինար Ղազարյանին արժեքավոր նկարների համար:

Շնորհակալ եմ Հրանուշ Խառատյան-Առաքելյանին բարձրակարգ խմբագրական աշխատանքի և իմ մայրենիի կատարելագործման համար:

Շնորհակալ եմ Տիգրան Կուչուկյանից և Ռուբեն Ավագյանից ցուցաբերված տեխնիկական օգնության համար:

Այս աշխատությունը անհնարին կլիներ հասցնել ավարտի առանց իմ եղբոր՝ Աշոտ Ղորուխչյանի մշտական օգնության, որի համար հայտնում եմ իմ խորին երախտագիտությունը:

Վերջապես, այս աշխատությունը անհնար կլիներ արագ ավարտել առանց իմ սիրելի տիկնոջը՝ Նարինե Գևորգյանի ինտելեկտուալ ու գործնական և մեր երեխաների, նաև իմ քրոջ և մայրիկիս բարոյական աջակցության, որի համար ես բոլորին հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը:

Հեղինակ
օգոստոս 2010 թ.
ք. Աշտարակ

ԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿԻ ՆԱԽԱԲԱՆ

«Տիգրան Մեծի բանակը. մ.թ.ա. 95 – 55 թթ.» մենագրության առաջին պրակում ներկայացված էր մ.թ.ա. VI – II դդ. Հին Հայաստանի ռազմական մեքենայի համառոտ ուրվագիծը և Տիգրան Մեծի ռազմաքաղաքական և ռազմական գործունեության վերլուծությունը մինչև մ.թ.ա. 69 թ. վերջը:

Մենագրության սույն՝ երկրորդ պրակը նվիրված է Տիգրան Մեծի ռազմաքաղաքական և ռազմական գործունեության վերլուծությանը մ.թ.ա. 68-ից մինչև 55 թթ.:

Աշխատության առաջին կեսում ցույց է տրվում, թե անտիկ ժամանակաշրջանի հայկական երեք թագավորություններից մեծագույնը՝ Մեծ Հայքը Երվանդունիների և իրենց հաջորդած Արտաշեսյանների եռանդուն գործունեության շնորհիվ ինչպես է ստեղծում և ամրացնում է իր հզորությունը:

Մ.թ.ա. 112 – 111 թթ. հայ-պարթևական պատերազմը ցույց տվեց Մեծ Հայքի ռազմական հզորությունը: Հաղթականորեն դիմագրավելով Արևելքի հզորագույն տերության՝ Պարթևստանի գրոհը, հայկական պետությունը նախադրյալներ է ստեղծում իր հետագա հզորացման համար: Դրան չի խոչընդոտում նույնիսկ թագաժառանգ Տիգրանի պարթևներին գերի ընկնելը:

Հայոց Տիգրան Բ արքայի հանճարեղ ղեկավարության շնորհիվ հին հայկական հասարակության ընդերքում կուտակված հզոր ռազմական ներուժը ժայթեց:

Նրա գահակալության առաջին կամ երկրորդ տարին կընքվում է հայ-պոնտական ռազմաքաղաքական դաշինքը, որը սկսում է կատաղի պայքար Հռոմի և Պարթևստանի դեմ՝ համաշխարհային տիրապետության հասնելու համար:

Ուղիղ մեկ տասնամյակ տևած այդ պայքարը, որի ընթացքում Հայաստանը ջախջախում է Պարթևստանին, իսկ Հռոմը՝ Պոնտոսին, վերջանում է դաշնակից արքաների ռազմավարական պարտությամբ (стратегическое поражение)՝ նրանք չեն հասնում իրենց վերջնական նպատակին: Այս պայքարի ընթացքում, սակայն, նորաստեղծ Հայկական կայսրությունը ցուցաբերում է այնպիսի հզորություն, որը զսպելու համար հարկադրված են լինում դաշնակցել աշխարհակալ Հռոմեական և Պարթևական տերությունները:

Երկրորդ տասնամյակը՝ մ.թ.ա. 84 – 74 թթ., Տիգրանի համար բնորոշվում է ախոյանների՝ Հռոմի և Պարթևստանի դեմ ծավալված անուղղակի պայքարով և Հայկական կայսրության վերջնական ձևավորումով:

Երրորդ տասնամյակի՝ մ.թ.ա. 74 – 64 թթ. առաջին կեսին՝ մ.թ.ա. 74 – 69 թթ. հարձակման է անցնում արդեն Հռոմը, պարտադրելով Միհրդատին Երրորդ պոնտական և Տիգրանին՝ Հարավսիրիական պատերազմները:

Պոնտոսում Լուկուլլոսի հաջողություններին հաջորդում է հայ-հռոմեական պատերազմը՝ 69 թ. գարնանն սկսված: Պատերազմի առաջին փուլն անցնում է հռոմեացիների ակնհայտ գերազանցությամբ, և ավարտվում է Տիգրանակերտի գրավումով: Դա 95 – 69 թթ. Տիգրանի կրած ամենածանր կորուստն էր:

Թվում էր, թե հռոմեական լեգեոնների հաղթարշավը կասեցնել այլևս անհնար է: Սակայն Հայաստանում գտնվեց մի ուժ, որը պարտության մատնեց Լուկուլլոսի հզոր բանակը ու վերականգնեց դաշնակից Պոնտոսի թագավորությունը, հետո ջախջախեց Հայաստանում թե՛ Տիգրան Կրտսերի ղեկավարությամբ խռովություն բարձրացրած հայ ավագանու զինված ուժերը, թե՛ նրանց օգնության հասած պարթևներին, որոնք դաշնակցել էին հռոմեացիներին: Այն ավարտվեց Արևելք եկած հռոմեացի խոշորագույն գործիչ՝ Գնեյոս Պոմպեոսի հետ՝ գրեթե հավասարը հավասարի հետ կնքված պայմանագրով:

Այս պայմանագիրը անկյունաքարային էր Առաջավոր Ասիայի հետագա ճակատագրի համար. այն մեծապես պայմանավորեց Հռոմ – Արևելք հետագա փոխհարաբերությունները և նոր աշխարհակարգի հիմք դրեց:

Տարբեր պատճառներով այդ ուժը չընդգծվեց ժամանակակիցների և անտեսվեց հետագա եվրոպական ու նրան հնազանդորեն հետևող հայկական պատմագրության ներկայացուցիչների կողմից: Այդքան հետևողականորեն լռությունը անխուսափելիորեն պետք է բերեր և բերեց մեր (և համաշխարհային) պատմության այս հատվածի անթույլատրելի խեղաթյուրմանը արդի պատմաբանների և նրանց շուրջը պտտվող զանազան

4420

գրչակների կողմից:

Սույն աշխատության երկրորդ պրակը կոչված է ընդմիշտ վերջ դնել նշված ժամանակաշրջանի ռազմաքաղաքական և ռազմական պատմության նման թերընկալմանը:

* * *

Առաջին պրակի հրատարակվելուց հետո ստացված արձագանքները ինձ համար շատ կարևոր էին այս աշխատության մեթոդաբանության մատչելիության աստիճանը պարզելու համար:

Այն ընթերցողներին, որոնք խիստ դժգոհում են վերականգնողական մեթոդով պատմական նյութի օգտագործման «կամայականության» դեմ, խորհուրդ կտայի «դիմանալ» երկրորդ պրակին, իսկ մոտ ժամանակներս հրատարակվող երրորդ (վերջին) պրակը սկսել ընթերցել վերականգնողական մեթոդին նվիրված գլխից, ապա գրքի ամփոփումից, որից հետո միայն վերադառնալ գրքի հետևողական ընթերցմանը:

Գլուխ 6.
Մ.Թ.Ա. 68 Թ. ՌԱԶՄԱՐՇԱՎԸ

Անտիկ պատմիչներից մեզ հասած տվյալների համաձայն 68 թ. ռազմարշավը ներառում էր հետևյալ արշավները, ռազմական ընդհարումները (մարտեր ու խոշոր ճակատամարտեր) և այլ գործողություններ:

Արշավներ

1. Լուկուլլոսի բանակի արշավանքը դեպի Արտաշատ,
2. Լուկուլլոսի բանակի նահանջը դեպի Աղձնիք, ապա Միգդոնիա՝ Մծբին,
3. Հայկական առաջին (հեծյալ) բանակի արշավանքը Լուկուլլոսի բանակի դեմ Արածանիի հովիտ,
4. Հայկական երկրորդ (հետևակային) բանակի արշավանքը Լուկուլլոսի բանակի դեմ Արածանիի հովիտ,
5. Լուկիոս Փանիոսի ջոկատը փրկելու համար Լուկուլլոսի անցկացրած արշավը,
6. Միհրդատի հայ-պոնտական զորաբանակի արշավանքը դեպի Պոնտոս,
7. Միհրդատի հայ-պոնտական զորաբանակի արշավանքը դեպի Կաբիրա:

Ռազմական ընդհարումներ

1. Երկու կամ երեք լեռնամարտ Հայկական Տավրոսի ստորոտներում ու կիրճերում,
2. Համառ մարտեր Արածանիի հովտում,
3. Հայկական պարենային պահեստներից մեկի կամ մի քանիսի գրավումը հռոմեացիների կողմից Արածանիի հովտում,
4. Երկրորդ՝ Արածանիի գլխավոր ճակատամարտը,
5. Հռոմեական բանակի պարենավորման խափանմանը ուղղված հեծելամարտերը Արածանիի ճակատամարտից հետո,
6. Լուկուլլոսի բանակի Աղձնիք նահանջելու ժամանակ կայացած մարտերը,

7.Երկու հայկական բանակների երրորդ՝ Աղձնիքի գլխավոր ճակատամարտը,
8.Միհրդատի հայ-պոնտական բանակի մարտերը Փոքր Հայքում ցրված հռոմեական զորամասերի դեմ,
9.Միհրդատի հայ-պոնտական բանակի ճակատամարտը Փաբիոսի հռոմեական զորաբանակի դեմ,
10.Միհրդատի հայ-պոնտական բանակի ճակատամարտը Տրիարիոսի հռոմեական բանակի դեմ Կոմանայի մոտ,
11.Լուկուլլոսի բանակի կողմից Մծբին քաղաքի պաշարումը և գրոհները,
12.Տիգրանի Մեծի բանակի մարտերը Հայաստանի հարավային նահանգներում,
13.Լուկիոս Փանիոսի ջոկատի շրջապատումը և Լուկուլլոսի ապաշրջափակմանը ուղղված հնարավոր մարտերը,
14.Տիգրանի ազատագրական և պատժիչ մարտերը Հարավային Հայաստանի հարակից տարածքներում,
15.Պաշարված Մծբինի համառ դիմադրությունը, անսպասելի անկումը և կայազորի նահանջը:

Այլ գործողություններ
1.Հայկական բանակի երկրորդ ռեֆորմի ավարտը,
2.Տիգրան Մեծի հարաբերությունները կայսրության հարավային թագավորությունների և Սիրիայի հետ,
3.Տիգրան Մեծի հարաբերությունները Պարթևստանի և իր արևելյան դաշնակիցների հետ,
4.Տիգրան Բ Մեծի դաշնակից կիլիկյան ծովահենների մարտական գործողությունները 68 թ.:

6.1.69–68 թթ. Տիգրան Մեծի երկրորդ ռազմական ռեֆորմը

69 – 68 թթ. ռազմական ռեֆորմը հայկական բանակի կառուցվածքի և մարտավարության մեջ Տիգրան Մեծի ձեռնարկած երկրորդ նշանակալի փոփոխությունն էր:

69 թ. ձմռանը իր անձնակազմը համալրած հայկական բանակը, որն ըստ Ապպիանոսի բաղկացած էր 70.000 հետևակից և

35.000 հեծելազորից, [17, 59] սկսեց իր զորավարժություններն ու մարզումները: Սույն մենագրության առաջին պրակում կատարված մեր հաշվարկները նույնպես մեծապես հիմնված են Ապպիանոսի հաղորդած տվյալների վրա և ենթադրում են հայկական բանակի զորատեսակների քանակի ու կառուցվածքի ապահովման որոշակի սկզբունք [291, էջ 99 - 125]: Ըստ այդ սկզբունքի տիգրանյան Մեծ Հայքի բանակի կազմը 100.000 բանակային և 4.000 թիկնազորային զինվոր և սպա էր, ընդամենը՝ 104.000 մարտիկ, որոնցից 72.000 հետևակ և 32.000 հեծելազոր: Բնական է, որ իրական թվերը միշտ տարբեր էին տեսականից, սակայն 69 թ. աշնանային – ձմեռային համալրումներից հետո այդ թվաքանակային տատանումը պետք է աննշան լիներ:

69 թ. ռազմարշավի մարտերը ցույց տվեցին, որ հեծելազորի ռեֆորմ անցկացնելու անհրաժեշտություն չկա՝ հայկական հեծելազորը հիմնականում լավ կատարեց իր մարտական պարտականությունները: Տիգրանակերտի ճակատամարտում հայոց և մեղաց ճոշավոր այրուձիու գնդերի պարտությունը պայմանավորված էր ոչ թե նրանց անբավարար մարտունակությամբ, այլ Տիգրան Մեծի թույլ տված լուրջ մարտավարական սխալներով: Հայկական թեթև հեծելազորը 69 թ. մարտական գործողությունների ընթացքում ցույց տվեց իր մարտունակությունը Մեհրուժանի զորաբանակի վարած մարտում, Տիգրանակերտից գանձերը և կանանոցը դուրս բերելիս և, ամենակարևորը՝ Տիգրանակերտի ճակատամարտում հռոմեական հեծելազորին ուժեղ հարված հասցնելով:

69 թ. մարտերը հայոց այրուձին անցկացնում էր մի հակառակորդի դեմ, որն ուներ լավ վարժված մեծաքանակ ծանր հետևակ: Ճակատամարտերը ցույց տվեցին, որ հայ աղեղնավորները հիմնականում պետք է զինված լինեն այնպիսի նետերով, որոնք ծանր ծայր և դրա հաշվին ուժեղ զրահահատ հատկություններ ունենան: Ես կարծում եմ, որ հենց 69-68 թթ. ձմեռ – գարնանային նախապատրաստությունների ժամանակ էր, որ աղեղնավորների մեծ մասը զինվել էր ծանր ծայրեր ունեցող նետերով: Հենց այս ժամանակ էր կիրառվել հայկական երկծայր նետերի գյուտը:

Հայկական երկծայր նետերի մասին մենք տեղեկություն ենք ստանում անտիկ հեղինակներից [51]: Այս նետերի կառուց-

վածքի մասին կան ժամանակակից պատմաբանների ենթադրությունները [11, 38], որոնցից ոչ մեկը բավարար համարել չի կարելի:

Իմ կարծիքով, նետերը կատարելագործվել էին հետևյալ ձևով՝ թեթև նետի ծայրի վրա հագցվել էր կարծր երկաթից, ավելի ցանկալի էր պողպատից լավ պատրաստված հատուկ ծայր, որն ամրացվել էր այնպես, որպեսզի մարդուն խոցելուց հետո հանվեր միայն բուն նետի ծայրը, իսկ ծանրացնող զրահահատ շառիկը մնացել է մարմնի մեջ (նկար 6.1.): Երկու ծայրերը միմյանց կարող էին միացվել ծառի խեժով կամ մեկ ուրիշ նման եղանակով: Մարտական արդյունավետության վրա դա չի ազդում, որովհետև ուղիղ գծով կատարվող հարվածը գնում է նետի առանցքով և ապահովում երկու ծայրերի միասնական գործողությունը ի հաշիվ ծայրի սրության, կարծրության և զանգվածի: Իր կառուցվածքի շնորհիվ առաջին ծայրը շատ դժվար էր հանել մարդու հյուսվածքներից և այդ հանգամանքը մահվան ու հաշմանդամության էր բերում վիրահատության ժամանակ. մահը վրա էր հասնում սուր ծայրերից վնասվող հյուսվածքներից առաջացող հնարավոր արյունահոսություններից, հետագայում նաև երկրորդային ինֆեկցիայի պատճառով: Եթե օգտագործումից առաջ նետաձիգները նետի ծայրը թեթևակի կեղտոտեին հողով կամ թրիքով, ապա ստացված վերքերի վիճակը կարող էր ծանրագույնս բարդանալ ի հաշիվ թարախային, այդ թվում նաև անաէրոբ ինֆեկցիայի:

Թեթև նետի ծայրը ծանրացնելու դեպքում, կայուն նետահարման համար անհրաժեշտ էր հավասարակշռել նետը՝ նրա սլաքի ետին մեկ երրորդ մասում համապատասխանորեն այն ծանրացնելով:

Նկար 6.1. Հայկական զրահահատ երկծայր նետի ծայրի կառուցվածքը

Այսպիսի զրահահատ երկծայր նետերի զանգվածային օգտագործումը Դիոն Կասսիոսը առաջին անգամ նշում է Արածանիի ճակատամարտում (հետագայում անտիկ պատմիչները հայկական նետերի այդ յուրահատկությունը չեն նշում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այսպիսի նետերի կառուցվածքը պարզապես եղած նետերի զրահահատությունը բարձրացնելու սահմանափակ խնդրի հարկադրված լուծումն էր, և դրանք, հավանաբար, պատրաստվում էին սահմանափակ ժամանակաշրջանում):

Այսպիսի լուծումը լավագույնն էր նաև տնտեսական տեսակետից, որովհետև երկրում կային մեծ քանակությամբ թեթև նետեր, որոնց կատարելագործումը նշված տեխնոլոգիայով բարձր մարտական արդյունք տվեց: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ զրահահատ ծանր նետերը ունեին միայն մինչև 100 մ արդյունավետ հեռահարություն, այն դեպքում, երբ թեթև նետերը կիրառվում էին մինչև 200-220 մ հեռավորության վրա գտնվող թույլ զրահապատ կամ զրահազուրկ հակառակորդի դեմ:

Ընդհանրապես, նետերի զրահահատությունը կախված էր բազմաթիվ պայմաններից, այդ թվում նաև հետևյալ բաղադրիչներից [82, 156, 260, 261, 291, 292, 307, 313, 314].

-նետի քաշից, զրահահատ նետերը՝ 50- 60, երբեմն 70 գ,
-նետի ծայրի ձևը և նյութից,
-նետի պատրաստման որակից՝ պատրաստման նյութից, բալանսավորվածությունից և այլն,
-աղեղի պատրաստման նյութից,
-աղեղի ձևից և պատրաստման եղանակից (բարդբաղադրիչ աղեղները ավելի հզոր և եղանակադիմացկուն էին),
-աղեղի ձգման ուժից, որը մարտական աղեղների մոտ 40-50 կգ երբեք չէր անցնում և հաճախ 30 կգ էր (որոշ անհատների արտակարգ ձիգ աղեղների մոտ հասնում էր 70 կգ, բայց երբեք ոչ ավելի, քան 80 կգ),
-ձգապարանի՝ աղեղալարի պատրաստման նյութից,
-աղեղալարի վրա ազդող կլիմայական պայմաններից,
-աղեղալարի մաշվածությունից,
-նետաձգության եղանակից,
-նետաձգության հեռահարությունից:

Աղեղալարի ձգման ուժը աղեղի հզորության միակ չափանիշն չէ՝ շատ բան է կախված պատրաստման եղանակից և օգտագործած նյութից (արդի սպորտային և որսորդական աղեղ-

ները նույն ձգման ուժի դեպքերում 10-20% գերազանցում են հնագետների վերականգնած հնադարյան կամ միջնադարյան նմանօրինակները):

Սկյութական ձիի նետ ու աղեղի էներգիան, որի նետի քաշը մոտավորապես 50 գ էր, կազմում էր 50-55 ջ, շատ ձիգ չինական աղեղինը, որը ձգման ուժն էր մինչև 66 կգ՝ 145 ջ, օգտակար գործակիցը հաշվի առնելով՝ իրականում ունեին մոտ 102 ջ էներգիա:

Նետի արագությունը սովորաբար չէր անցնում 50, շատ հազվադեպ՝ 60 մ/վարկ.-ից (80-85 մ/վարկ արագությունները հասանելի են միայն լավագույն արդի ընկերությունների ժամանակակից նյութերից պատրաստած որսորդական և սպորտային նետ ու աղեղներում):

Լավ նետաձիգներ պատրաստելու համար անհրաժեշտ էին տարիների մարզումներ. ավելին, եթե մարզումների մեջ մեծ ընդմիջում էր լինում, ապա աղեղնամարտի արդյունավետությունը ակնհայտորեն ընկնում էր: Բարդբաղադրիչ աղեղը և նրա ծանր զրահահատ նետերը՝ զենքի թանկ տեսակ էին, երբեմն մի քանի անգամ ավելի թանկ, քան սուրը և վահանը:

Այսպիսով, անհնար էր Հին աշխարհում օգտագործվող լավագույն նետ ու աղեղներով նույն հին աշխարհի վարպետների կողմից պատրաստված որակյալ զրահը և վահանը խոցել, այնպես, որ լուրջ վնաս պատճառեր նրանց կրողին:

Մենք քաղել ենք անտիկ պատմիչներից բազմաթիվ տեղեկություններ նետ ու աղեղի բարձր արդյունավետության մասին Հին աշխարհի ճակատամարտերում: Ինչու՞ է առաջացել այս հակասությունը:

Հին աշխարհում, պատերազմների ժամանակ, այսպիսի որակյալ զրահ կրում էին միայն մի քանի տասնյակ կամ հարյուր ընտրյալներ: Այսպիսի սպառազինությունը չափազանց թանկ էր: Բայց այսպիսի զրահում ևս կային խոցելի, մարմինը համեմատաբար վատ պաշտպանող տեղեր: Մնացած, նույնիսկ ծանր պաշտպանական միջոցներ ունեցող զինվորների մոտ, զրահի որակը այդքան բարձր չէր, մետաղյա մասերը պատրաստված էին երկաթից, որի թիթեղների հաստությունը չէր գերազանցում 1,5 մմ: Վերջիններիս զրահը նետով խոցվում էր, երբեմն սպանելով, առվորաբար, վիրավորելով զինվորին:

Սակայն, կար ևս մեկ պատճառ, որը լավ նետաձիգների

գնդերին վերածում էր Հին աշխարհի ճակատամարտերի ահ ու սարսափին՝ այդ նետաձգության մասսայականությունն էր: Թշնամու մարդկային հոծ զանգվածների վրա նետեր էին արձակում առանց նշանադրության, ոչ պակաս, քան 10 նետ մեկ րոպեում. փորձառու զինվորը կարող էր հասնել 15-ի, իսկ վարպետը՝ 18 նետերի մեկ րոպեում: Դա նշանակում էր, որ 1.000 նետաձիգներից կազմված գունդը, հակառակորդի վրա մեկ րոպեում կարող էր արձակել 10-15.000 նետ: Ոնց որ օրենք, արձակած նետերից ոչ մեկը անտեղի չէր կորում՝ չափից մեծ էր թիրախը: Այս դեպքում, նպատակին հասած ամեն քսաներորդ նետը կարող էր հակառակորդի լեգեոնից կամ փաղանգից 500 - 700 զինվոր խոցել, վերջիններիս մի մասին էլ շարքից հանել կամ սպանել:

Մարտում, արագաշարժ նետաձիգները կարող էին հեշտությամբ դուրս գալ ծանր հետևակի հարվածից, նահանջել կամ փախնել, վերադասավորվել և կրկին գրոհել ծանրազենների վրա:

Նետահարումը կատարվում էր երկու եղանակով՝ մեծ հեռավորության վրա գագաթնահար, իսկ մոտիկից՝ գետնամերձ եղանակով: Առաջինի զրահահատ հնարավորությունները զգալիորեն զիջում էին երկրորդին, սակայն թույլ էին տալիս նետահարել 150-220 մ հեռավորության վրա գտնվող թշնամուն: Երկրորդ եղանակի դեպքում լավագույն արդյունքներն ստացվում էին մինչև 100 մ, հաճախ նույնիսկ՝ 60 մ-ից:

Հայկական բանակը Մելկյաններից հետո մեծաքանակ ծանր հետևակ ունեցող հակառակորդի դեմ չէր պատերազմել (կամ գրեթե) չէր պատերազմել: 69 թ. մարտերը ցույց տվեցին ծանր նետերի առավելությունը և հայերը 69-68 թթ. ձմեռվա ընթացքում բանակում և պահեստներում կուտակված գրեթե բոլոր նետերը վերածեցին ծանրերի:

Հետագայում, հայերի անցկացված բազմաթիվ պատերազմներում, անտիկ պատմիչները այդպիսի նետերի ծայրերի մասին այլևս չեն հիշատակում, որն ն հիմնավորում է իմ կարծիքը, որ այս միջոցառումը 69-68 թթ. ձմեռային – գարնանային նախապատրաստությունների հարկադրված տարր էր [42, 51, 59]:

Նետ ու աղեղին, ինչպես և այլ զենքերին մանրամասն կանդրադառնանք սույն մատենաշարի սպառազինությանը նվիրված վերջին՝ չորրորդ հատորում:

Կազմակերպչական փոփոխություններ չկրելով, անցկացվող ռեֆորմին հայկական հեծելազորը ակտիվորեն մասնակցեց մարտավարական վարժանքներով, լուծելով մի շարք մարտավարական խնդիրներ.

-թեթև հեծելազորի համագործակցությունը նոր կազմակերպված ծանր հետևակի ստորաբաժանումների հետ մարտի դաշտում.

-թեթև հեծելազորի համագործակցությունը նոր կազմակերպված ծանր հետևակի ստորաբաժանումների հետ արշավի ժամանակ.

-ծանր հեծելազորի և ծանր հետևակի համագործակցության մարտավարության մշակումը (այս խնդրի լուծումը մասամբ տեսնում ենք հետագայում կայացած երրորդ՝ Աղձնիքի գլխավոր ճակատամարտում, և միայն 67 թ. Զելայի գլխավոր ճակատամարտում Միհրդատ Եվպատորին հաջողվեց կատաֆրակտոսների գնդերի հարվածով իրագործել հռոմեական լեգեոնների մարտաշարքի ճեղքումն ու ջախջախումը, և ապա լեգեոնների ոչնչացումը հայ-պոնտական ծանր ու թեթև հետևակի և հեծելազորի համաձայնեցված գործողությունների շնորհիվ. դրա մանրամասներին կանդրադառնանք ստորև):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հայկական հեծելազորը պահպանեց իր հին կազմակերպչական ձևերը, սակայն վերակառուցված հետևակային զորամասերի հետ լրջորեն մարզվեց համապատասխան մարտավարություն յուրացնելու համար:

Հայկական թեթև հետևակն իր որակով չէր զիջում Լուկուլլոսի իտալիկյան և դաշնակից թրակիական, կամ կորդվական ու կապադովկիական հետևակին, իսկ նետաձիգների ընտիր գնդերն՝ ակնհայտորեն գերազանցում էին նրանց: Նրանցից մեկական գունդ կցվեց նորաստեղծ հայկական զորագնդերին՝ լեգեոններին, համատեղ անցկացվեցին բոլոր մարտավարական վարժությունները: Թեթև հետևակի մնացած գնդերն, ըստ երևույթին, պահպանեցին իրենց նախկին կառուցվածքն ու մարտավարությունը:

Արդեն 69 թ. ձմռանը սկսվեց հայկական ծանր հետևակի՝ վահանակիրների ու նիզակակիրների գնդերի վերակազմումը՝

ռեֆորմը: Ռեֆորմի ընթացքը կարելի է պատկերացնել հետևյալ կերպ. անձնակազմի համալրումից հետո 40.000-ոց հայկական ծանր հետևակի կեսը կազմող բոլոր վահանակիրների գնդերը և 16.000 նիզակակիրները հռոմեական լեգեոնների նման բաժանվել էին 6.000-ական վեց զորագնդերի՝ լեգեոնների. ընդամենը 36.000 ծանրազեն զինվոր: Ինձ թվում է, որ այդ նիզակակիրները բաժանվել էին վեց խմբերի և գրեթե հավասարապես կցվել վահանակիրներից ստեղծված վեց զորագունդ-լեգեոններին:

Նոր կազմակերպված ծանր հետևակում վերացվում էր վահանակիրների և նիզակակիրների միջև գոյություն ունեցող սպառազինության և մարտավարական տարբերությունը: Նրանք այսուհետ ստանում էին միանման ծանր սպառազինություն՝ մեկ նիզակ (մտցվում է, թե ոչ հռոմեական ազգային նիզակը՝ պիլումը սպառազինությանը՝ տեղեկություն չունենք, սակայն ավելի ուշ ժամանակների համար մենք այդպիսի տվյալներ չունենք և ես կարծում եմ, որ հավանաբար չի մտցվում) ու սուր. պաշտպանական հանդերձանքից՝ մեծ ուղղանկյուն կամ օվալաձև վահան, սաղավարտ, լանջապանակ և հնարավոր է նաև սոնապաններ:

Մնացած 4.000 նիզակակիրները պահպանում էին իրենց նախկին կառուցվածքը և սպառազինությունը, չորս գունդ՝ 1.000-ական զինվորներով: Գծանկար 6.4.-ում ներկայացված են 69 - 68 թ. ռազմական ռեֆորմի կառուցվածքային արդյունքները:

Նորաստեղծ զորագնդերն (լեգեոնները) իրենց հերթին բաժանվում էին տասը մեծ վաշտերի (կոհորտների), յուրաքանչյուրում՝ 600 զինվոր: Այս գնդերը վարժեցնում էին հռոմեացի վտարանդի սպաները և Միհրդատի այն պոնտացի զորավարները, որոնք ծանոթ էին հռոմեական հետևակային մարտավարությանը:

Նման ռեֆորմ Միհրդատ Եվպատորն անցկացրել էր պոնտական բանակում դեռ 74-73 թթ., որի արդյունքում պոնտական ծանր հետևակը կազմակերպվել էր հռոմեականի նման: Պլուտարքոսը նշում է պոնտական բանակի որակի զգալի բարձրացումը. «*...Մտադրվելով երկրորդ անգամ պատերազմ սկսել, նա սահմանափակեց իր ուժերը և դրանք զինեց միայն այն ամենով, ինչ իրապես անհրաժեշտ էր իր գործի համար: Նա հրաժարվեց խայտաբղետ հրոսակներից, զանազան բարբարոսական ահաբեկող աղաղակներից. Այլևս չէր պատվիրում ոս-*

կով ու թանկարժեք ակներով զարդարված զենքեր պատրաստել, որոնք ոչ թե իրենց տիրոջ հզորությունն էին ավելացնում, այլ սոսկ թշնամու ընչաքաղցությունը: Նա կարգադրեց թրերը կռել հռոմեական ձևով. հրամայեց պատրաստել երկար վահաններ և ընտրել այնպիսի ձիեր, որոնք թեև գեղեցիկ զարդարված չեն, բայց լավ են մարզված: Նա հավաքեց 12 բյուր հետևակ և այն զինեց հռոմեականի նման.» Պլուտարքոս. Կենսագրություններ. Լուկուլլոս. 7. [42]:

Այդ գործընթացին մեծապես նպաստել էին Միհրդատի մոտ Սերտորիոսի ուղարկած վտարանդի հռոմեացի սպաները: Իսպանիայում 72 թ. Սերտորիոսի դավադրաբար սպանությունից հետո, այդ սպաների մի մասը մնացել էր Միհրդատի բանակում, որովհետև հայրենիք՝ Հռոմ վերադառնալը նրանց համար հավասարազոր էր ինքնասպանության: Միհրդատի փոքրիկ՝ 4.000-ոց զորաբանակում կային նաև զգալի թվով հույն սպաներ, որոնք լավ էին յուրացրել հռոմեական կոհորտային մարտավարությունը և նույնպես կարող էին մարզել հայկական ծանրազեն հետևակը:

68 թ. գարնանը ծանրազեն հայկական հետևակը «դիմել էր» հռչակավոր հռոմեական «սրերին ու երկար վահաններին», պատրաստվելով իր հեծելազորի օժանդակությամբ լրջորեն հակադրվել հոյակապ հռոմեական լեգեոններին:

Այժմ հաշվենք թե ինչքան կրտսեր, միջին և ավագ սպա կպահանջվեր հայկական հետևակի նորաստեղծ 6 լեգեոնի համար:

Մեկ հռոմեական լեգեոնում կար 60 հարյուրապետ՝ կենտուրիոն և 6 (հազվադեպ՝ մինչև 10) հազարապետ՝ տրիբուն: Տրիբունները հաճախ ղեկավարում էին առաջինից վեցերորդ կոհորտները, մնացածի հրամանատարները համապատասխան կոհորտի առաջին հարյուրի՝ կենտուրիայի հարյուրապետերն էին: Լեգեոնի հրամանատարն լեգատն էր, որի տեղակալը հեծելազորի հրամանատարն էր (հետո՝ առաջին տրիբունը): Հատուկ պաշտոն էր լեգեոնի գումակի հրամանատարը, որը կատարում էր լեգեոնի տնտեսական ղեկավարի պարտականությունները: Հռոմեական լեգեոնի կազմում պարտադիր կար մեկ ալա՝ 300 հեծյալներից կազմված զորամաս, որը բաղկացած էր 10 տուրմայից՝ 30-ական հեծյալներով: Տուրման ղեկավարում էր տուրմայի հրամանատարը՝ ավագ տասնապետը՝ դեկուրիոնը:

Այսպիսով բուն լեգեոնն ուներ հետևյալ հրամանատարական կազմը.

-կրտսեր սպաներ՝ 60 հարյուրապետ,

-միջին սպաներ՝ 6-10 հազարապետ,

-ավագ սպաներ՝ 3, ընդամենը՝ 69 սպա:

Այս կազմին պետք է գումարել նաև երկու կոհորտ թեթևազենների 10-12 հարյուրապետներին և պրեֆեկտին, նաև ալայի 10 տուրմայի հրամանատարներին՝ ավագ դեկուրիոններին՝ ևս 21-23 սպա: Բնականաբար, թեթևազենների և հեծելազորի սպաները հայեր էին, որոնք պետք է կատարեին իրենց սովորական իմացածից փոքր ինչ այլ պարտականություններ:

Այսպիսով, 6 լեգեոնի ծանր հետևակի սպայակազմը հասնում էր 414-428 հոգու՝ 360 հարյուրապետ, 36-60 հազարապետ և 9 բարձրաստիճան սպա:

Միհրդատի զորաբանակում կար 4.000 «հեծյալ», որից առնվազն, քան 2.000-ը փոքրհայքյան հեծելազորն էր, հավանաբար մեկական զրահապատ և թեթևազեն հեծելագնդեր, մնացածը պոնտական ավագանու և նրանց զինվորներից բաղկացած հեծելագունդն էր: Մի գունդ էլ կազմում էր Միհրդատի թիկնազորը և հռոմեական վտարանդիների ջոկատը: Հենց վերջին գնդի կազմից էլ, ըստ երևույթին մոտ 400 - 450 հոգի, ձևավորել էին հայկական բանակի ծանր հետևակի սպայակույտը: Կասկածից վեր է, որ նրանցից յուրաքանչյուրին կցվել էին հայ սպաներ՝ սովորելու և, ինչու չէ, նաև իրադրությունը վերահսկելու համար:

Տիգրանի առաջարկով, Միհրդատ Պոնտացին ղեկավարում էր հայկական ծանր հետևակի հռոմեական ոճով անցկացվող մարզումները: Այստեղ պետք եկավ պոնտական բանակում նույնպիսի ռեֆորմ անցկացնելու նրա փորձը և հայերենի սքանչելի իմացությունը:

Հայկական ծանր հետևակում ծառայող զինվորների կեսից ավելին ունեին պատկառելի մարտական փորձ, մնացածը նոր էին հավաքագրված: Նման բարեփոխումների փորձը տարբեր երկրների բանակներում թույլ է տալիս ենթադրել, որ սպայակազմի և մարտական փորձ ունեցող զինվորների շնորհիվ կես

տարում հնարավոր էր նորակոչիկներից մարզել բավականին մարտունակ վեց հայկական զորագունդ-լեգեոն:

Նորաստեղծ հայկական լեգեոնների սպառազինության հարցն, ըստ երևույթին, լուծվել էր հետևյալ կերպ. նախկին վահանակիրների գնդերի 20.000 զինվորների զենքը համապատասխանում էր նոր խնդիրներին: Մեծ օվալաձև կամ ուղղանկյուն վահանը, սուրը, նիզակը, ինչպես նաև զրահը մնացել էին անփոփոխ: Նախկին 16.000 նիզակակիրները հնարավորինս ստացել էին հռոմեական վահաններ (scutum) և նիզակներ (pilum)՝ մի մասը ռազմավարային զենքից, մնացածը պատրաստված էր հայկական զինագործական արհեստանոցներում: Եթե չէին հաջողել պատրաստել 16.000 կոմպլեկտ, ապա մնացածը պահպանում էին նիզակակրի հին սպառազինությունը: Միանգամայն հնարավոր էր հասնել նրան, որ նորաստեղծ հայկական լեգեոնների առաջին 2-3 շարքերը ապահովված լինեին հռոմեական լեգեոներների սպառազինությամբ համապատասխանող զենքերով: Նոր կազմավորված հայկական հետևակի սկզբնական դասավորությունը, արտաքին տեսքը և զորաշարժերը 68 թ. ամռանը պետք է, որ զարմացնեին և անհանգստացնեին հռոմեացի զորավարներին:

Զորագունդ-լեգեոնների 6.000 ծանրազեներին կցվում էին 1.000 թեթևազեներ (ես կարծում եմ, որ նորաստեղծ լեգեոնի կազմի մեջ ներառվում էր արդեն գոյություն ունեցող թեթևազենների գնդերից մեկը, որը հայկական բանակում բաղկացած էր 1.000 աղեղնավորից կամ պարսավորից): 300 հոգուց բաղկացած ալայի փոխարեն հայերի համար ավելի տրամաբանական էր զորաբանակի կազմում ներգրավել թեթև հեծելազորի կիսագնդեր՝ 5 վաշտ 500 հեծյալով: Այդպիսով, մեկ զորագնդում կար 7.500 զինվոր՝ 6.000 վահանակիր, 1.000 նետաձիգ կամ պարսավոր, և 500 թեթև հեծելազորային: Զորագնդի գումակում ծառայող զինվորների թիվը պետք է լիներ ոչ պակաս, քան 500 հոգի: Այդպիսով, հռոմեականի նմանությամբ, լեգեոնը իր օգնական զորամասերով դառնում էր 8.000 զինվորից բաղկացած լեգեոնային միավորում՝ զորաբանակ: 6 նորաստեղծ հայկական լեգեոնային միավորումներում՝ զորաբանակներում կար 48.000 զինվոր, ինչը կազմում էր հայկական բանակի գրեթե կեսը:

Այս բարեփոխումով խիստ կրճատվեց նաև գումակի քանակը և մոտեցավ հռոմեական բանակի գումակի չափերին՝

հայկական հետևակային բանակը դառնալով ավելի շարժուն, իսկ հայ ծանրազեն հետևակայիններն, ըստ երևույթին, երթի ժամանակ նմանվեցին «Մարիուսի ջորիներին» [170, 281]:

> Հայկական բանակը սկսեց յուրացնել հռոմեական դաշտային ճամբարների կառուցման կատարելագործված արվեստը [59, 291], հայկական բանակի համար չափազանց կարևոր մի գիտելիք, որը հայերին մեծապես նպաստեց հետագայում երրորդ՝ Աղձնիքի գլխավոր ճակատամարտում հաջողության հասնելու: Դրան էականորեն նպաստեցին նաև հայկական բանակում և պոնտական զորաբանակում գտնվող հույն ճարտարագետներն ու ճարտարապետները:

Ծանր հետևակի բարեփոխումից դուրս մնացած նիզակակիրների 4 գունդը պահպանեցին իրենց կազմը և մարտավարությունը՝ լեռնային Հայաստանը միջին հետևակի (պելտաստների) որոշ քանակության մշտապես կարիք ուներ:

Այժմ ընդհանուր հայացք գցենք վերափոխված հայկական բանակի հնարավոր ընդհանուր կառուցվածքին (գծանկար 6.4.).

-10 գունդ կատաֆրակտոսներ՝ 10.000 ծանրազեն հեծյալներ.
-17 գունդ թեթև հեծելազոր՝ 17.000 թեթևազեն հեծյալներ.
-6 զորագունդ-լեգեոն՝ 48.000 զինվոր, որից
- 36.000 ծանր հետևակ,
- 6.000 թեթև հետևակ,
- 3.000 թեթև հեծելազոր,
- 3.000 օժանդակ զորք՝ գումակ.
- 4 գունդ նիզակակիր՝ 4.000 զինվոր,
-14 գունդ թեթև հետևակ՝ 14.000 նետաձիգ ու պարսավոր,
- 7 գունդ օժանդակ զորք՝ 7.000 սակրավորներ, պաշարողական զորամասեր, գումակ:

Այսպիսով բանակում կրկին կար 100.000 զինվոր, որին կարող ենք գումարել արքայից արքայի 4.000-ոց թիկնազորը.

-2.000 կատաֆրակտոսներ,
-1.000 վահանակիր և
-1.000 նետաձիգ:

Թիկնազորի հետևակային գնդերն ապահովում էին արքունիքի անվտանգությունը, հեծելազորն ուղեկցում էր արքայից արքային:



Գծանկար 6.2. Հայկական բանակի կառուցվածքը 68 թ. ռազմական ռեֆորմից հետո:

Ըստ երևույթին, ապագա մարտերին էին նախապատրաստվում նաև հայկական բանակի կազմում ներգրավված Ատրպատականի, իբերական, մարդական և, հավանաբար, աղվանական զորքերը:

Այսպիսով Տիգրանն առաջնակարգ այրուձիու հետ մեկտեղ փորձում էր Հայաստանում ստեղծել նաև հռոմեական հետևակային մարտավարությամբ մարտնչող բարձրորակ ծանր հետևակ: Չափազանց աշխատատար այս խնդիրն անհրաժեշտ էր հաջողությամբ ավարտել մինչև 68 թ. գարնան վերջը:

Բոլոր միջոցառումները կատարվում էին երկրի կենտրոնում, հավանաբար մայրաքաղաք Արտաշատի մոտակայքում: Հարավային սահմանները վերահսկելու համար Տիգրանը կենտրոնացրել էր բարեփոխմանը չմասնակցող այլ մարտունակ զորամիավորումներ: Այդ զորամիավորումների հնարավոր քանակը և կազմը մենք կպարզենք մի փոքր հետո:

Իր գահակալության ընթացքում Տիգրանն անցկացրեց երկու խոշոր ռազմական բարեփոխում. 90-89 թթ.-ին կատարելագործեց հայկական ծանր հեծելազորը, իսկ 69-68 թթ.-ին՝ հայկական ծանր հետևակը: Առաջինը վերջնականապես յուրացրեց և զարգացրեց պարթևական կատաֆրակտոսների կատարելագործված մարտառճի նրբությունները, երկրորդը կիրառեց հռոմեական լեգեոնների կոհորտային մարտավարությունը:

Այսպիսով Հին աշխարհի ռազմական արվեստի գագաթնակետը հանդիսացող հեծելազորային և հետևակային զորամիավորումների կառուցվածքն ու մարտավարությունը յուրացվեց հայկական բանակի կողմից:

Անշուշտ, հետագայում նույնպես հայոց մեջ այրուձին զբաղեցնում էր շատ ավելի կարևոր տեղ, քան հետևակը: Որոշ ժամանակահատվածներում պարտության մատնելով նույնիսկ պարթևական այրուձիուն, նա այդ ժամանակաշրջանում կարող էր արժանիորեն համարվել աշխարհի լավագույն ծանրազեն այրուձին: Հետագայում իր մարտունակությամբ հայոց ծանր հեծելազորը՝ կատաֆրակտոսները, փառաբանվեցին աշխարհով մեկ: Հայկական բանակում շատ ավելի համեստ, բայց անփոխարինելի էր հետևակի դերը:

Հայկական ծանր հետևակը երբեք չհայտնվեց այն բարձ-

ռունքին, որ կարողանար հավասարը հավասարի հետ մրցակցել հռոմեացիների փառաբանված լեգեոնների հետ:

Սակայն բազում ճակատամարտերում հայկական հետևակային գնդերը, համագործակցելով այրուձիու հետ, ծանրակշիռ ավանդ են ներդրել գրեթե մեր բոլոր հաղթանակներում:

Մ.թ.ա. II դ. երկրորդ կեսից մինչև մ.թ. III դ. առաջին քառորդը Հայաստանի մշտական հակառակորդներն էին հռոմեացիները և պարթևները: Առաջիններին, հաշվի առնելով հռոմեացիների բազմադարյան ռազմական ավանդույթը, գերազանցել հետևակային մարտով գրեթե անհնարին էր: Պարթևներին հաջողվել էր մի քանի անգամ գերազանցել հեծելամարտում, որովհետև Հայաստանը նույնպես ուներ բազմադարյան հեծելազորային ավանդույթներ և անհրաժեշտ ձիաբուծական ու նյութական բազա:

Աշխարհում ռազմական գործը մ.թ.ա. I դարից կեսից մինչև մ.թ. IV դարի սկիզբը, կատարելագործվում էր պատերազմներում զրահապատ հեծելազորի դերի և տեսակարար կշռի բարձրացման ուղղությամբ: Հայկական բանակի զարգացումը նույնպես, բնականաբար, ընթանում էր դեպի նրա գլխավոր հարվածող ուժի՝ զրահապատ այրուձիու կատարելագործումը: Սակայն որքան էլ կարևոր լիներ հեծելազորը, առանց ուժեղ հետևակի դժվար էր պատկերացնել հայկական բանակը և 69 – 68 թթ. ռազմական ռեֆորմը զգալիորեն բարձրացրեց նրա մարտունակությունը:

Ի տարբերություն ծանր հետևակի, որտեղ հայկական հետևակային գնդերը երբեք չհասան լեգեոնների արհեստավարժությանը, հայ նետաձիգները և պարսավորներն իրենց վարպետությամբ չէին զիջում իր ժամանակի ամենալավ համապատասխան ստորաբաժանումներին: Հայ նետաձիգների գնդերը Հին աշխարհում փառաբանված էին գրեթե նույնքան, որքան հայոց այրուձին:

69 - 68 թթ. մարզումների շնորհիվ հայերը հռոմեացի սպաներից սովորեցին կառուցել հռոմեական ձևի դաշտային ճամբարներ: Այս նորամուծությունը մեծապես հարստացրեց հայկական բանակի մարտավարությունը, այն վերածելով իր ժամանակի ամենազարգացած ռազմական համակարգերից մեկը:

Հետագայում, 68 թ. աշնանը Հայաստանի հարավում՝ Աղձնիքում, հռոմեացիների և հայերի միջև տեղի ունեցած երրորդ

գլխավոր ճակատամարտը կհաստատի, որ հայկական ծանր հետևակը որոշ պայմաններում կարողանում էր հաջողությամբ դիմակայել նույնիսկ հռչակավոր հռոմեականին:

6.2. 68 թ. ռազմարշավի սկիզբը և առաջին մարտերը

68 թ. ռազմարշավը վճռորոշ էր պատերազմի ելքի համար՝ հատկապես կարևորվում է Արածանիի ճակատամարտը, որը բեկումնային էր պատերազմի ելքի համար: Ռազմարշավը սկսեց ամառվա կեսից և տևեց մինչև ձմռան սկիզբը: Այն խիստ ուշագրավ է նաև համաշխարհային ռազմարվեստի պատմության ուսումնասիրության տեսակետից:

Անտիկ պատմիչների հաղորդած տեղեկությունները բավարար նյութ են պարունակում ռազմարշավի հիմնական դրվագները բացահայտելու և վերականգնելու համար [42, 51, 60, 115-117, 149, 150, 191-193, 195-196, 197, 238, 249, 250, 304-306, 319]:

68 թ. ռազմարշավի իրադարձությունները վերականգնելու համար անհրաժեշտ է լավ պատկերացնել հակամարտող կողմերի ուժերի վերաբաշխումը, Տիգրանի ու Լուկուլլոսի մշակած ծրագրերը:

6.2.1. Հռոմեական բանակի ուժերը և Լուկուլլոսի ծրագրերը

Հաշվարկենք 69 թ. ռազմարշավում հռոմեացիների ունեցած հնարավոր բոլոր կորուստները:

Սույն աշխատության առաջին պրակում մենք հաշվարկել էինք հռոմեական բանակի հնարավոր կորուստները մինչև Տիգրանակերտի ճակատամարտը՝ մոտ 7.000 զինվոր, որից 2.000 լեգեոներ: Այս թվերին պետք է գումարել ավելի քան 1.000, հիմնականում հեծյալ զինվորների, կորուստը Տիգրանակերտի ճակատամարտում, ինչպես նաև զոհվածների քանակը Տիգրանակերտի գրավման ժամանակ, որն ըստ երևույթին չի գերազանցել 1.000 զինվորը: Սրան պետք է գումարել վերքերից, հիվան-

դություններից և այլ պատճառներից հետագա ծառայության համար ոչ պիտանի մարդկանց թիվը, որոնց մի մասը պիտանի էր գումակում, սակայն ոչ մարտական շարքերում: Այս զինվորների թիվը նույնպես պետք է լիներ նշանակալի, հաշվի առնելով 69 թ. ռազմարշավի գործողությունները, սակայն ոչ ավելին, քան 1.000 զինվոր: Այսպիսով, Լուկուլլոսի մարտական և ոչ մարտական կորուստները 69 թ. ռազմարշավին կարող ենք համարել մոտ 10.000 զինվոր, որից.

- մոտ 2.500՝ հռոմեական լեգեոներ,
- մոտ 3.000՝ դաշնակիցների ծանր հետևակ,
- մոտ 2.000՝ թեթև հետևակ,
- մոտ 2.000՝ հեծելազոր,
- մոտ 500 գումակի զինվոր:

Այսպիսով 69 թ. վերջին Լուկուլլոսի բանակում մնացել էր

- 20.000 հռոմեական լեգեոներից՝ 17.500-ը,
- 20.000 դաշնակցային ծանր հետևակից՝ 17.000-ը,
- 4.000 թեթևազեն հետևակից՝ 2.000-ը,
- 9.000 հեծելազորից՝ 7.000-ը:

Եթե համաձայնենք, որ հռոմեական և դաշնակցային թեթևազեն հետևակի և հեծելազորի կորուստները եղել են իրենց թվաքանակին համապատասխան, կարող ենք համարել, որ հռոմեացիները կորցրել էին հռոմեական, կամ իտալիկյան 1.000 թեթևազեններից 500 մարտիկ և 3.000 հեծելազորի մեկ երրորդը՝ մոտ 1.000 հեծյալ, միասին՝ 1.500 զինվոր: Եթե այս թվին գումարենք լեգեոներների կորուստը՝ 2.500 հոգի, ապա բուն հռոմեական բանակն իր 24.000 զինվորից կորցրել էր 4.000-ը: Լուկուլլոսի բանակում մնացել էր 20.000 հռոմեացի, մնացածը, տարբեր դաշնակից ազգերի ներկայացուցիչներ էին:

68 թ. ամռանը Լուկուլլոսը Կորդուքում ուներ հետևյալ ուժերը. 4 հռոմեական լեգեոնային զորամիավորում՝ Մուրենայի, Սեքստիլիոսի, առաջին և երկրորդ փիմբրիականները: Այդ միավորումները բաղկացած էին բուն հռոմեական լեգեոնից և դաշնակիցների զորքերից: Նրանք բոլորը 69 թ. մարտերին զգալի կորուստներ էին ունեցել: Հռոմեացիները հազվադեպ էին համալրում արդեն ձևավորված զորամասերը, նախընտրելով կազմել նորերը: Դժվար կլիներ դաշնակից գալատների, բութանիացիների, թրակիացիների ստորաբաժանումների մեջ ներառել

կորդվացիներին, կապադովկիացիներին, հույներին և այլն:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, կարող ենք ենթադրել, որ նոր հավաքագրված զինվորները կազմում էին նոր դաշնակից կոհորտներ:

Լուկուլլոսի բանակի համալրումն, ըստ երևույթին կատարվել էր ի հաշիվ.

- վարձկան սիրիացի հոպլիտների, որոնք անցել էին ծառայության Լուկուլլոսի մոտ Տիգրանակերտի անկումից հետո՝ 3-5.000 ծանրազեն հետևակային: Ես ավելի իրական եմ համարում նվազագույն թիվը՝ 3.000-ը, որովհետև 5.000 հոպլիտներից բաղկացած փաղանգը քանակով հավասար էր մեկ լեգեոնին, իրենց մարտական պատրաստությամբ հոպլիտները բարձր էին հռոմեացիների դաշնակիցների ծանր հետևակից և մարտունակությամբ զիջում էին միայն լեգեոներներին: Այսպիսի լուրջ համալրման մասին պետք է, որ ինչ-որ արձագանք պահպանվեր անտիկ հեղինակների երկերում: Անշուշտ, Տիգրանի մոտ ծառայող ոչ բոլոր վարձկաններն էին ներգրավվել Լուկուլլոսի բանակի կազմում, մի մասը վերադարձել էր հայրենիք՝ Սիրիա (ընդհանրապես, նման հաշվարկների դեպքում անհրաժեշտ է լինել ծայրահեղ զգույշ և պահպանողական՝ շատ հեշտ է հնարավորի տեղը ներկայացնել ցանկալին):
- կորդվացի և կապադովկիացի թեթևազեններից՝ մոտ 2.000 թեթև հետևակային. Լուկուլլոսի բանակը թեթևազեն զինվորների մեծ կորուստ էր կրել և տրամաբանական է, որ Լուկուլլոսը իր դաշնակից Արիոբարզանեսից պահանջեր գոնե 1.000 թեթևազեն հետևակային: Իսկ Տիգրանին դավաճանած կորդվացիներն ուղղակի պարտավոր էին հնարավորինս աջակցել Լուկուլլոսին: Իմ ենթադրությամբ, դրանք կարող էին լինել մոտավորապես կորդվացի 3.000 զինվոր, որից մոտ 1.000՝ թեթևազեն հետևակային (այս քանակը նվազագույնն է, իրականում կորդվացիները կարող էին տրամադրել մի քանի անգամ ավելի շատ զինվորներ),
- կորդվացի թեթև հեծելազորից՝ մոտ 1.000 հեծյալ,
- կորդվացի պաշարողական ստորաբաժանումներից և գումակից՝ ոչ պակաս 1.000 զինվոր,
- Լուկուլլոսի խոստումին հետևած բութանիացի, թրակիացի և, հատկապես, գալատացի զինվորներ, ովքեր ժա-

մանել էին Լուկուլլոսի մոտ, ակնկալելով հարստանալ Հայաստանի կողոպուտի հաշվին՝ մոտ 1.000 զինվոր (ավելի մեծ քանակ դժվար է պատկերացնել, հաշվի առնելով Սոռնատիոսի և ուրիշ հռոմեացի զորավարների մերժումը մեկնել Կորդուք՝ Լուկուլլոսի մոտ):

Այսպիսով, համալրման ընդհանուր թիվը կարող էր հասնել 8.000 զինվորի և անհավանական է, որ գերազանցեր 10.000 զինվորը:

Լուկուլլոսին հաջողվել էր 69 – 68 թթ. ձմռանը և գարնանը համալրել իր բանակը և գրեթե վերականգնել նրա թվաքանակը. 68 թ. մարտական գործողություններից առաջ նա կարող էր ունենալ մոտ 53.000 զինվոր: Սակայն այս համալրումը լիարժեքորեն չվերականգնեց հռոմեական բանակի մարտունակությունը՝ նոր հավաքագրված զորամասերը որակապես զգալիորեն զիջում էին հին զորամասերին. ի բացառյալ, թերևս սիրիացի վարձկան հոպլիտների:

Ամփոփելով շարադրվածը, կարող ենք ենթադրել, որ Լուկուլլոսի բանակը կարող էր համալրվել մոտավորապես հետևյալ զորամասերով.

4 ալա կորդվացի թեթև հեծելազոր՝	մոտ 1.000 հեծյալ,
2 կոհորտ կորդվացի թեթև հետևակ՝	մոտ 1.000 զինվոր,
2 կոհորտ կորդվացի պաշարողական զորք՝	1.000 զինվոր,
սիրիացի վարձկանների փաղանգ՝	մոտ 3.000 հոպլիտ,
2 կոհորտ կապադովկիացի թեթև հետևակ՝	1.000 զինվոր,
դաշնակիցների երթային համալրում՝	մոտ 1.000 զինվոր,
Ընդամենը՝	մոտ 8.000 զինվոր:

Այսպիսով, 68 թ. ռազմարշավին Լուկուլլոսի բանակը մոտավորապես բաղկացած էր.

- 17.500 լեգեոներից՝ 4 հռոմեական լեգեոնում,
- 20.500 դաշնակցային և վարձկան ծանր հետևակից,
- 4.000 թեթևազեն հետևակից, որից 500 իտալիկյան,
- 8.000 հեծելազորից, որից 2.000 իտալիկյան,
- 3.000 օժանդակ, այդ թվում պաշարողական զորքից,

Ընդամենը՝ 53.000 զինվոր:

Հռոմեական բանակի մարտական ոգին բարձր էր, նրանք հավատում էին իրենց իմպերատորի հանճարին և լի էին մարտերում հայկական բանակին ջախջախելու վճռականությամբ:

Լուկուլլոսը համարում էր, որ իր բանակը միանշանակ ուժեղ է հակառակորդից և ծրագրում էր 68 թ.-ին հասնել ու պաշարել Արտաշատը (անցնել Տավրոսը, Արածանիի հովտով մոտենալ Արարատյան դաշտի մատույցներին, հետո վերջին արագացված երթով գնալ և պաշարել «երկրորդ Կարթագենը»): Հայկական մայրաքաղաքի գրավումով նա ծրագրում էր հաղթանակով վերջացնել պատերազմը:

Այսպիսի ուժերով 68 թ. կեսին Լուկուլլոսը վերսկսում էր իր պայքարը:

6.2.2. Հայկական բանակի ուժերը և Տիգրանի ծրագրերը

Մինչև հայկական բանակի ուժերի վերլուծությանն անցնելը, քննարկենք մեզ հայտնի հայկական զորավարների կազմը: Տիգրանի զորավարներից անտիկ հեղինակները հայտնում են Տիգրանի եղբայր Գուրասի՝ Գոռի, Բագադատի՝ Բագրատի, Մանկայոսի՝ Մամիկի, Միհրաբարզանեսի՝ Մերուժանի, Միհրդատ Մեղացու և Ադիաբենեի թագավորի մասին: Վերջինիս անունը մեզ հայտնի չէ (կամ մենք դեռ կհայտնաբերենք այն, եթե ավելի ուշադիր ուսումնասիրենք այդ ժամանակաշրջանին վերաբերող բոլոր առկա նյութերը):

Մերուժանը, որը ըստ երևույթին Ծոփքի կուսակալը՝ բդեշխն էր, հերոսի մահով զոհվել էր հայ-հռոմեական պատերազմի առաջին ճակատամարտում:

Տիգրան Մեծի եղբայր Գուրասը, Միգդոնիայի բդեշխն էր և մեզ հայտնի է որպես Մծբինի համար պաշտպանության ղեկավար:

Մանկայոսը, ով ըստ երևույթին Աղձնիքի բդեշխն էր, այսինքն հայոց արքունիքում ավագ բդեշխը և Տիգրանակերտ մայրաքաղաքի կայազորի պարետը, կորցնելով Աղձնիքը՝ չէր կորցրել իր զորաբանակը և 68թ. գարնանը պատրաստ էր ակտիվ ռազմական գործողությունների:

Բագադատը Տիգրանի ամենահավատարիմ ու գնահատված ռազմական և քաղաքական գործիչներից էր: Նա Սիրիայի կուսակալն էր և դրանով ամեն ինչ ասված է (շատ մեծ

վստահություն պետք է ունենար այն անձնավորությունը, ով, ըստ էության պետք է կառավարեր Տիգրանի երկրորդ թագավորությունը նրա բացակայության ժամանակ): 69 թ. ռազմական անհաջողություններից հետո նա իր զորաբանակի մեծագույն մասով Սիրիայից շտապեց հայրենիք և զորավիգ եղավ իր թագավորին: 68 թ.-ն, ըստ երևույթին, նա պետք է զբաղեցներ Արտաշատ մայրաքաղաքի և Այրարատում գտնվող բոլոր զորքերի (բացի դաշտային բանակներից) գերագույն հրամանատարությունը և ըստ էության, այստեղ նույնպես կատարեր կուսակալի պարտականությունները: Թիկունքում ունենալով Բագաղատի նման հուսալի և փորձառու ռազմական և պետական գործչի՝ Տիգրանը կարող էր հանգիստ զբաղվել Լուկուլլոսի դեմ պատերազմով: Արտաշատից Տիգրան Մեծի բացակայության պարագայում, հայկական ավագանուց միայն Բագաղատը, անհրաժեշտության դեպքում, իր հեղինակությամբ կարող էր վնասազերծել հայոց արքունիքում Միհրդատ Եվպատորի գերակտիվ գործունեության անցանկալի հետևանքները:

Միհրդատ Մեդացին՝ Տիգրանի փեսան, զինակիցը և ամենահավատարիմ վասալը փորձված հեծելազորային զորահրամանատար էր, որի տաղանդը հատկապես կփայլի հայ-հռոմեական պատերազմի երկրորդ՝ 68 թ. և երրորդ՝ 67 թ. ռազմարշավների ժամանակ:

Նոր Շիրականի և Գուգարքի բդեշխների անունները չեն պահպանվել:

Ադիաբենեի թագավորը լքել էր հայերի համար անհաջող Տիգրանակերտի ճակատամարտի դաշտը և հեռացել իր երկիրը, որտեղ իրեն ոչ միայն հայտարարել էր անկախ, այլև որոշ հարաբերությունների մեջ մտել հաղթանակած հռոմեացիների հետ:

Հայ-հռոմեական պատերազմի ընթացքը Տիգրան Բ Մեծի զորավարի դասի կարգեց նաև Պոնտոսի արքա Միհրդատ Զ Եվպատորին, նրա փայլուն ռազմավարական տաղանդը և հռոմեացիներին խորտակելու անկուն կամքը մեծապես նպաստեցին Տիգրանի հաղթանակներին:

Այսպիսով, Հայկական կայսրության բանակի բարձրագույն հրամանատարությունը ներկայացված էր ժամանակաշրջանի ռազմարվեստին տիրապետող հմուտ զորավարներով:

69 թ.-ին անցկացված համահայկական զորահավաքից հետո՝ 68 թ. գարնան կեսին Հայկական կայսրության զինված ուժերը, իր դաշնակիցներով, ուներ հետևյալ կազմը.

- բուն հայկական բանակն, ըստ Ապպիանոսի՝ 100.000 զինվոր, որին գումարվում էր թիկնազորի 4.000 զինվորը, ընդամենը՝ 104.000 մարտիկ,
- Տիգրանին ենթակա երկրների զորքերը,
  ա. ատրպատականյան բանակը՝ մոտ 50.000 զինվոր,
  բ. իբերների, աղվանների և մարդերի զորքերը՝ մոտ 25.000 զինվոր,
- Միհրդատի դաշնակից զորաբանակը՝ 4.000 զինվոր:

Ընդամենը՝ 183.000 կամ մոտավորապես 180–185.000 զինվոր: Զորքերի այս ընդհանուր թվաքանակից պատերազմին ակտիվորեն կարող էին ներգրավվել հետևյալ ուժերը.

-Հայկական բանակի թվաքանակը տրված է Ապպիանոսի մոտ՝ 70.000 հետևակ և դրա կեսին չափ հեծելազոր: Պլուտարքոսի հաղորդած համամասնությունները պահպանելու դեպքում հայոց բանակի կազմի մասին Տիգրանակերտի ճակատամարտի ժամանակ, որը ինչպես մենք պարզեցինք սույն աշխատության առաջին պրակում, վերաբերվում էր ամբողջ զինված ուժերին, մենք 70.000 հետևակից 10.000 համարում ենք օժանդակ (սակրավորներ, գումակի պահակազոր, պաշարողական ստորաբաժանումներ և այլն), մնացած 60.000 հետևակի կեսը կազմում է 30.000 հեծելազորը, որից 10.000-ը՝ զրահապատ: 60.000 հետևակից 20.000-ը թեթև հետևակն էր, 40.000-ը՝ ծանր հետևակը, ինչպես նշվեց վերը վերակազմված էր 6 լեգեոնի: Կազմված էր երկու դաշտային հայկական բանակ, առաջինը գերազանցապես հեծյալ՝ Տիգրանի գլխավորությամբ և երկրորդը, հիմնականում հետևակային՝ Միհրդատ Պոնտացու ղեկավարությամբ: Զորքերի ընդհանուր հրամանատարությունն իրականացնում էր Տիգրան Բ Մեծ արքայից արքան: Թիվ 6.1. աղյուսակը ներկայացնում է հայկական կայսերական բանակի զորատեսակների հնարավոր թվաքանակը:

Մնացած զորքերը բաժանված էին չորս խոշոր զորաբանակների՝ Ադձնիքի, Նոր Շիրականի, Միգդոնիայի և Գուգարքի բդեշխների հրամանատարությամբ: Խոշոր ուժեր էին կենտրոնացած նաև մայրաքաղաքում՝ Արտաշատում: Հայաստանի

մնացած մասերում տեղաբաշխված էին աննշան զորամասեր: Հայաստանի բազմաթիվ բերդաքաղաքների և ամրոցների պաշտպանությունն իրականացվում էր նաև բնակիչներից կազմված աշխարհազորով:

Գարնանը Հայաստանում կազմակերպվեցին երկու հայկական դաշտային բանակներ. առաջինը Տիգրան Մեծի գլխավորած հեծելազորային բանակն էր, երկրորդը Միհրդատ Եվպատորի հրամանատարությանը ենթարկված երկրորդ՝ հետևակային բանակն էր:

Հայկական առաջին՝ հեծելազորային բանակի հնարավոր կազմը.

2 գունդ Տիգրանի հեծյալ թիկնազոր՝ 2.000 կատաֆրակտոսներ,
6 գունդ հայկական ծանր այրուձի՝ 6.000 կատաֆրակտոսներ,
10 գունդ հայկական թեթև հեծելազոր՝ 10.000 հեծյալ,
ընդամենը՝ 18.000 հայկական հեծելազոր
3 գունդ մեդական ծանր այրուձի՝ 3.000 կատաֆրակտոսներ,
3 գունդ մեդական թեթև հեծելազոր՝ 3.000 հեծյալ,
3 գունդ իբերական թեթև հեծելազոր՝ 3.000 հեծյալ,
3 գունդ մարդական թեթև հեծելազոր՝ 3.000 հեծյալ.
ընդամենը՝ 12.000 վասալների հեծելազոր:

Աղյուսակ 6.1. Հայկական կայսրության բանակի զորատեսակների հնարավոր թվաքանակը 68 թ. գարնանը

Զորատեսակները	Ընդհան. քանակը	Հեծյալ բանակը	Հետևակ բանակը	Մնացած վայրերում
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ				
Ծ.հեծելազ.	10.000	6.000	-	4.000
Թ.հեծելազ.	20.000	10.000	3.000	7.000
Ծ. հետևակ	40.000	-	30.000	10.000
Թ. հետևակ	20.000	-	5.000.	15.000
Օժ. զորք	10.000	1.000	3.000	6.000
Ընդամենը	100.000	17.000	41.000	42.000
ԱՐՔԱՅԻ ԹԻԿ-ԶՈՐ				
Ծ.հեծելազ.	2.000	2.000	-	-

Ծ.հետևակ	1.000	-	-	1.000
Թ.հետևակ	1.000	-	-	1.000
Ընդամենը	104.000	19.000	41.000	44.000
ՎԱՍԱԼՆԵՐ				
Ատր. ծ.հեծ.	6.000	3.000	-	3.000
Ատր. թ.հեծ.	9.000	2.000	-	7.000
Ատր.հետևակ	35.000	-	-	35.000
Իբեր.թ.հեծ.	4.000	3.000	-	1.000
Իբեր.հետևակ	7.000	-	-	7.000
Աղվ.թ.հեծ.	4.000	-	-	4.000
Աղվ.հետևակ	7.000	-	-	7.000
Մարդ.թ.հեծ.	3.000	3.000	-	-
Ընդամենը	75.000	11.000	-	64.000
ԴԱՇՆԱԿԻՑ				
Պոնտ.հեծ.	2.000	-	2.000	-
Փ.Հայք.ծ.հեծ.	1.000	-	1.000	-
Փ.Հայք.թ.հեծ.	1.000	-	1.000	-
Ընդամենը	4.000	-	4.000	-
Ընդամենը	183.000	30.000	45.000	108.000

Հեծյալ բանակի սպասարկման համար անհրաժեշտ էր գոնե փոքրաթիվ հեծյալ գումակ՝ առնվազն 1.000 զինվոր, որով հայկական առաջին դաշտային բանակի թիվը հասնում էր 31.000 զինվորի: Այս բանակի հրամանատարը Տիգրան Մեծն էր, որն այդպիսով ոչ միայն բոլոր հայկական ուժերի գլխավոր հրամանատարն էր, այլև անմիջապես գլխավորում էր դաշտային առաջին՝ հեծելազորային բանակը: Հայկական կայսրության զինված ուժերում ծառայող 12.000 հայ և 6.000 մեդացի կատաֆրակտոսների մեծ մասին՝ 11.000 հայերի և մեդացիների կատաֆրակտոսներին Տիգրանը կենտրոնացրել էր Լուկուլլոսի դեմ: Նրանք հայկական կայսերական բանակի գլխավոր հարվածային ուժն ու պարծանքն էին:

Հայաստան ներխուժած հռոմեական բանակի դեմ պայքարելու համար նախատեսված երկրորդ դաշտային բանակը գրեթե գերազանցապես հետևակային էր: Բանակին որպես դաշնակից կցված էին Միհրդատի ուժերը՝ 4.000 պոնտական հեծելազորը:

Հայկական հետևակային բանակի հնարավոր կազմը.

- 30.000 վահանակիր (ծանր հետևակ)՝ 5 նորաստեղծ լեգեոն (վեցերորդ լեգեոնը ամենայն հավանականությամբ, տեղակայված էր Արտաշատում, որով լրացնում էր մայրաքաղաքի պաշտպանության համար անհրաժեշտ ծանր հետևակի պակասը),
- 5.000 աղեղնավոր և պարսավոր (թեթև հետևակ),
- 2.5-3.000 օժանդակ զորք (սակրավորներ, գումակ),
- 2.5-3.000 թեթև հեծելազոր.

ընդամենը բուն հայկական զորք՝ 40-41.000 զինվոր.

դաշնակից պոնտական այրուձի՝ 4.000 հեծյալ (որից մոտ 2-3.000 փոքրհայքյան հեծելազոր, այդ թվում ոչ պակաս, քան 1.000 զրահապատ հեծելազոր: Բուն պոնտական հեծելազնդերից մի քանի հարյուր հոգի ժամանակավորապես ծառայում էին որպես հետևակային խորհրդատու սպա հայկական ծանրազեն հետևակում), ընդամենը երկրորդ դաշտային բանակում՝ մոտ 44-45.000 զինվոր, որից մոտ 7.000 հեծյալ: Այս բանակը սկզբնական շրջանում գտնվում էր Արտաշատի մոտակայքում և ինտենսիվ մարզվում էր նոր՝ հռոմեական հետևակային մարտաոճով, նախապատրաստվելով 68 թ. ամառվա մարտերին, և գարնանը արշավեց Արածանիի հովիտ:

Այսպիսով, 68 թ. գարնան վերջին Լուկուլլոսի բանակի հարձակմանը դիմակայելու էին հայկական դաշտային բանակների մոտավորապես 75.000 զինվոր: Հայկական հեծյալ և հետևակային բանակները գարնան վերջին արդեն գտնվում էին Արածանիի հովտում և Տավրոսի նախալեռներում, որպեսզի արգելակեն Լուկուլլոսի մուտքը Արածանիի դաշտ: Այստեղ Տիգրանի դաշտային բանակը համագործակցում էր Աղձնիքի բդեշխի՝ Մանկայոսի զորագնդի հետ, որոնք սկզբում փակել էին Հայկական Տավրոսի լեռնանցքները, իսկ հետո, ըստ երևույթին, որպես կայազոր օգտագործվում էին Տուրուբերանի բնակատեղերը պաշտպանելու համար:

Այժմ փորձենք պարզել Աղձնիքի զորաբանակի մոտավոր կազմը. Ծոփքի բդեշխության զորքերը Մերուժանի գահվելու պատճառով հավանաբար մեծամասնությամբ մտել էին դաշտային բանակների կազմի մեջ, մի մասն էլ ներգրավվել էր Աղձնիքի զորաբանակի և այլ զորամիավորումների մեջ: Այս զորաբանակի կազմը կարելի է պայմանականորեն ընդունել հետևյալը.

1 գունդ նիզակակիրներ՝ 1.000 զինվոր,
3 գունդ նետաձիգներ և պարսավորներ՝ 3.000 զինվոր,
1 գունդ սակրավորներ և գումակ՝ 1.000 զինվոր,
ընդամենը՝ 5.000 զինվոր:

Բնականաբար, բնակավայրերի պաշտպանության ժամանակ լայնորեն օգտագործվում էր աշխարհազորը, որի հնարավորությունները, սակայն, առանց կանոնավոր բանակի զորամասերի մասնակցության անհնար էին: Ըստ իս, Աղձնիքի զորաբանակի կազմում հեծելազոր պետք է չլիներ, որովհետև նա կատարելու էր զուտ բնակավայրերը պաշտպանողի դեր, իսկ անհրաժեշտության դեպքում, մոտակայքում գտնվող Տիգրանի զորամասերը Մանկայոսին միշտ կկարողանային օժանդակել հեծելազորով: Մանկայոսը կարող էր ունենալ միայն հարյուր կամ մի քանի հարյուր հեծյալ հետախուզության համար: Կարելի է ասել, որ ֆունկցիոնալ իմաստով Մանկայոսը, անհրաժեշտության դեպքում, Տիգրանի հետևակն էր, իսկ Տիգրանի զորագնդերը՝ Մանկայոսի հեծելազորը:

Այսպիսով, 68 թ. գարնան կեսին Լուկուլլոսի 50.000 մարտիկներին Տավրոսից հյուսիս թափանցելու համար պետք էր դաշտում հաղթահարել Տիգրանի երկու բանակների 71.000 զինվորների դիմադրությունը (3.000-ոց հռոմեական, 4.000-ոց հայկական գումակը և Տուրուբերանի հայկական կայազորները հաշվի չեն առնվում):

Տիգրանի հեծյալ բանակը շատ արագաշարժ էր և, ի տարբերություն 69 թ. հայկական կայսրության բանակի, դրանում զգալիորեն գերազանցում էր հռոմեական բանակին: Սակայն ծանր հետևակի բացակայությունը վճռական ընդհարումների ժամանակ թույլ չէր տալիս հայերին լիակատար հաղթանակի հասնել: Հետագայում, մենք կտեսնենք, որ Արածանիի ճակատամարտում Տիգրանը, ելնելով իր նախընտրած մարտավարությունից հարկադրված էր գործել առանձ հետևակի:

Ինչու հայկական երկու դաշտային բանակները միացված չէին մեկ հզոր բանակի կազմում: Որովհետև ամեն մի հայկական դաշտային բանակ ուներ իր մարտավարական խնդիրը, որը կատարում էր՝ սերտ համագործակցելով մյուս դաշտային

բանակի հետ: Ոչ պակաս կարևոր էր մեծ բանակի պարենավորման խնդիրը. անհամեմատ ավելի հեշտ էր տեղավորել և պարենավորել փոքրաքանակ բանակը: «Քայլել առանձին, կռվել միասին» բռնապարտյան սկզբունքը կիրառվում էր նաև հնադարում [263]:

68 թ. ոչ այդքան մեծ, սակայն լավ մարզված և կարգապահ հայկական դաշտային բանակները ընդունակ էին Լուկուլլոսին անհամեմատ ավելի շատ գլխացավանք պատճառել, քան հզոր, սակայն դանդաղաշարժ 69 թ.-ի հայկական կայսերական բանակը:

Այժմ փորձենք պատկերացնել մնացած հայկական զորքերի հնարավոր տեղաբաշխումը Հայաստանի տարածքում:

Դաշտային բանակների և Աղձնիքի զորաբանակի կազմից դուրս կային հետևյալ զորքերը.

Արտաշատի կայազորը, ըստ երևույթին, կազմված էր հայկական 6-րդ լեգեոն-զորագնդից՝ 6.000 ծանրազեն հետևակային, 1.000 թեթևազեն հետևակային և 1.000 թեթև հեծելազոր, որին գումարվում էին սակրավորների և այլ օժանդակ զորքերի գնդերը՝ մոտ 2.000 զինվոր, ընդամենը՝ 10.000 զինվոր (քաղաքի պաշարման դեպքում ի զեն էր կանչվում նաև ավելի քան 150.000-ոց քաղաքի աշխարհազորը՝ 5–15.000 զինվոր, հիմնականում ծանրազեն և միջին հետևակ, ավելի քիչ պարսավոր ու նետաձիգ):

Արտաշատում տեղակայված էին նաև Տիգրանի թիկնազորի հետևակային (պալատական) գնդերը.

1 գունդ թիկնազորի վահանակիրներ՝ 1.000 զինվոր,

1 գունդ թիկնազորի աղեղնավոր՝ 1.000 զինվոր:

Այս զորքերը պարտադրաբար գտնվում էին Արտաշատում և կատարում էին բացառապես պալատի, միջնաբերդի և գանձարանի պաշտպանման ֆունկցիա:

Ընդհանրացնելով, կարող ենք ենթադրել, որ մայրաքաղաքի 10.000-ոց կայազորը, որին գումարվում էր 2.000 պալատական ընտիր հետևակը և 5-10.000 աշխարհազորային, կարող էր հուսալի պաշտպանել Արտաշատը ցանկացած հակառակորդի անսպասելի հարձակումից:

Մեր հաշվարկից դուրս են մնացել հետևյալ զորքերը.

-4 գունդ ծանր այրուձի՝ 4.000 կատաֆրակտոսներ,

-6 գունդ թեթև հեծելազոր՝ 6.000 թեթև հեծելամարտիկ,

-3 գունդ նիզակակիր՝ 3.000 զինվոր,

-11 գունդ թեթև հետևակ՝ 11.000 աղեղնավոր և պարսավոր,

-4 գունդ օժանդակ զորք՝ 4.000 զինվոր,

ընդամենը 18.000 հետևակ և 10.000 հեծելազոր, ընդամենը՝ 28.000 զինվոր:

Այժմ փորձենք պատկերացնել, թե Հայաստանում ինչպես կարող էր տեղաբաշխված լինել այս հայկական զորքը:

Տիգրանի մշտական մտահոգությունն Պարթևստանի հետ սահմանի անձեռնմխելիությունն էր: Այդ խնդիրը հնարավոր էր լուծել Նուշիրականում հզոր հեծյալ զորաբանակ պահելով, որը անհրաժեշտության դեպքում կարող էր արագ օգնության հասնել նաև հարձակման ենթարկված Ատրպատականին: Նուշիրականի բդեշխի զորաբանակի կազմը կարելի է պատկերացնել.

3 գունդ ծանր այրուձի՝ 3.000 կատաֆրակտոսներ,

3 գունդ թեթև հեծելազոր՝ 3.000 թեթև հեծելամարտիկ,

3 գունդ թեթև հետևակ՝ 3.000 աղեղնավոր և պարսավոր,

1 գունդ օժանդակ զորք՝ 1.000 զինվոր,

ընդամենը՝ 10.000 կանոնավոր բանակի զինվոր, որոնց թշնամու հարձակման դեպքում կմիանային հազարավոր աշխարհազորայիններ՝ իրենց քաղաքները և բերդաքաղաքները պաշտպանելու համար:

Հայաստանի հարավում գտնվող Միգդոնիայի մայրաքաղաք Մծբինը կարևորագույն դեր էր կատարում Հայաստանի տնտեսության և պաշտպանության համար: Այստեղ բդեշխ էր Տիգրանի եղբայրը՝ Գուրասը (Գոռը), որը իր մայրաքաղաքն ու նահանգը վերահսկելու համար պետք է ունենար բավական ուժ: Նրա զորաբանակի ընդհանուր թիվը ենթադրվում է մոտ 8.000 զինվոր, որից.

1 գունդ թեթև հեծելազոր՝ 1.000 թեթև հեծելամարտիկ,

2 գունդ ծանր (միջին) հետևակ՝ 2.000 նիզակակիր,

4 գունդ թեթև հետևակ՝ 4.000 աղեղնավոր և պարսավոր,

1 գունդ օժանդակ զորք՝ 1.000 զինվոր:

Մծբինի պաշտպանների շարքերը անհրաժեշտության դեպքում կարող էին ստվարացնել հազարավոր աշխարհազորայիններ, որոնց մի ստվար մասը հայեր էին (Մծբինի բնակչության

զգալի մասը հայեր էին [18, 39]):

Հայաստանի հյուսիսային սահմանները պաշտպանում էր Գուգարքի բդեշխի զորաբանակը: Այս սահմանը Հայկական կայսրության ամենահանգիստներից էր, սակայն հռոմեացիների կողմից Պոնտոսի թագավորության զավթումից հետո Կովկասը դադարեց լինել Հայկական և Պոնտական տերությունների «ետնաբակը»: Հիմնական վտանգը տեղափոխվեց դեպի Մեծ ու Փոքր Հայքերի սահմանագլուխ: Այդ պատճառով Գուգարքի զորաբանակից մի հզոր միավորում ուղարկվեց Փոքր Հայքի սահման, մնացած ուժերը, արքայից արքային ենթակա Իբերիայի և Աղվանքի զորքերի հետ միասին, պահպանում էին Հայկական կայսրության հյուսիսը: Մեր հաշվումներով Գուգարքի զորաբանակում պետք է լիներ մոտ 9.000 զինվոր.

1 գունդ ծանր այրուձի՝ 1.000 կատաֆրակտոսներ,
2 գունդ թեթև հեծելազոր՝ 2.000 թեթև հեծելամարտիկ,
1 գունդ ծանր (միջին) հետևակ՝ 1.000 նիզակակիր,
4 գունդ թեթև հետևակ՝ 4.000 աղեղնավոր և պարսավոր,
1 գունդ օժանդակ զորք՝ 1.000 զինվոր:

Այս ուժերից մի հզոր զորագունդ պետք է ուղարկված լիներ Փոքր Հայքի սահման.

1 գունդ ծանր այրուձի՝ 1.000 կատաֆրակտոսներ,
1 գունդ թեթև հեծելազոր՝ 1.000 թեթև հեծելամարտիկ,
1 գունդ ծանր (միջին) հետևակ՝ 1.000 նիզակակիր,
3 գունդ թեթև հետևակ՝ 3.000 աղեղնավոր և պարսավոր,
ընդամենը՝ 6.000 զինվոր:

68 թ. ռազմարշավում Տիգրանի նպատակն էր հռոմեական բանակը մանր բախումների և մարտերի միջոցով հյուծել և հռոմեական բանակի պարենավորումը դժվարացնել: Եթե Լուկուլլոսը սխալվեր, հայկական արագաշարժ հեծյալ բանակը պատրաստ էր փորձել ոչնչացնել հռոմեական զորաբանակներից որևիցե մեկը: Տիգրանի խնդիրն էր այնքան թուլացնել հռոմեացիներին, որ նրանք չդիմանան երկու հայկական դաշտային բանակների միացյալ գրոհին: Անհաջողության դեպքում թշնամուն կանգնեցնելու համար կմնար Արտաշատի հզոր պաշտպանական համակարգը:

Գործողությունների հերթականությունը բխում էր Տիգրանի ծրագրերից.

- դժվարացնել հռոմեական բանակի առաջընթացը ցանկացած բնական խոչընդոտի մոտ: Օր ու գիշեր շրջապատելով նրանց արագաշարժ հեծելազորային և թեթև հետևակային գնդերով ու վաշտերով՝ մշտական լարվածության մեջ պահել հռոմեացիներին.
- լուրեր տարածել հայկական լեռնաշխարհի դժվարամատչելիության ու դաժան կլիմայի մասին, և հռոմեացիների դեմ հանվող իրենց նախկինում անհայտ ցեղերի կատաղի կռվող մարտիկների մասին.
- Հայաստանում զավթիչների հանդեպ ատելության և վրիժառության մթնոլորտ ստեղծել:

Մեր հետազոտության ընթացքում հայկական կանոնավոր բանակի թիվը ընդունվում է 100.000 զինվոր, որին երբեմն գումարում ենք թագավորական թիկնազորի 4.000 զինվորին: Հարց է ծագում, ինչ՞ու հայկական բանակի կազմի ու թվի ռեկոնստրուկցիայի՝ վերականգնման ժամանակ ես չեմ զերազանցում այս թվաքանակը:

Տիգրանի բուռն ռազմական գործունեությունը մայր երկրից՝ Հայաստանից, պահանջում էր բավականին մեծ մարդկային ռեսուրսներ: Հայ-հռոմեական պատերազմի առաջին տարին հաստատեց այն միտքը, որ կարևոր է ունենալ ոչ թե շատ, այլ բավական քանակի լավ մարզված արհեստավարժ բանակ: Բոլոր բանակները անհրաժեշտ է սպառազինել ու կերակրել: Հսկայական դանդաղաշարժ և պակաս մարտունակ բանակները միջոցների անտեղի վատնում էր և կասկածից դուրս է, որ Տիգրանը որոշել էր այսուհետ բարեփոխել բանակը և բարձրացնել նրա մարտունակությունը միայն նրա որակի լավացման հաշվին: Մի քանի տարի առաջ նման բարեփոխումների ճանապարհով էր գնացել նաև իր դաշնակից Միհրդատ Զ Եվպատորը:

68 թ. Հայկական կայսրության բանակի կառուցվածքը էականորեն տարբերվում էր Տիգրանի 69 թ. զորքից, ինչն իր վրա միանգամից զգաց Հայաստանի կենտրոն ներխուժած հռոմեական բանակը: Մանրամասն վերլուծենք, թե ի՞նչ տարբերություններ են դրանք, ինչը թույլ կտա ընկալել Տիգրանի ռազմավարական մտքի զարգացումը:

95 – 83 թթ. հայկական բանակը կազմակերպված էր հիմնա-

կանում պարթևական բանակի ձևով, ի տարբերություն պարթևականի ունենալով բավականին մեծաքանակ մարտունակ միջին և ծանր հետևակ:

83 – 69 թթ. հայկական կայսրության բանակն իր կառուցվածքով ավելի էր նմանվում նաև սելևկյան բանակներին, որոնցից տարբերվում էր ծանր ու թեթև հեծելազորի պարթևական կազմակերպման ձևով:

69 թ. հոկտեմբերի 6-ին Տիգրանակերտի մոտակայքում հռոմեական խոշոր բանակի հետ ընդհարվել էր Տիգրանի հելլենիստական՝ սելևկյան տիպի մեծաքանակ հզոր բանակը, որի ծանր այրուձին և թեթև հեծելազորի մի մասը կազմակերպված էին իրանական՝ պարթևական ձևով: Այս բանակը պարտվեց վճռական ճակատամարտում ոչ միայն Տիգրան Բ Մեծ արքայից արքայի կատարած մարտավարական սխալների պատճառով, այլև իր կառուցվածքի անուղղելի թերությունների հետևանքով:

68 թ. ամռանը Լուկուլլոսի դեմ կանգնած էր մի բանակ, որը խիստ տարբերվում էր նախորդ տարվա իր հակառակորդից: Հայկական բանակի հետևակը ուներ բացարձակ հռոմեական տիպի կազմակերպություն, այրուձին՝ պարթևական: 69 թ. աղետից հետո պահպանված վասալներից պատերազմին մասնակցում էին պարթևական տիպի կազմակերպված ատրպատականյան ծանր այրուձին ու թեթև հեծելազորը՝ մոտ 5-6.000 հեծյալ, և իբերական ու մարդական թեթև հեծելազորները՝ մոտավորապես 3.000-ական հեծյալ: Վերջիններս Արածանիի ճակատամարտից հետո չեն հիշատակվում, հնարավոր է, որ այս ճակատամարտից որոշ ժամանակ անց նրանք արձակվել են (ուղարկվել են իրենց հայրենիք): Պատճառը ոչ այնքան նրանց կրած բավականին մեծ կորուստներն էին, որքան թերությունները մարտավարական ու կարգապահական: Ինչևիցե, Արածանիի ճակատամարտում մարդական և իբերական թեթև հեծելազնդերը լրիվ կատարել էին իրենց վրա դրված բոլոր խնդիրները: 67 թ. ռազմարշավին Տիգրանը պատերազմում էր արդեն միայն հայկական և ատրպատականյան զորքերով:

68 թ.-ին Լուկուլլոսի հակառակորդը շատ ավելի վտանգավոր էր: Շարժունակությամբ, մարզվածությամբ և հաղթելու վճռականությամբ հայկական ու հռոմեական բանակները ոչ մի բանով չէին զիջում իրար: 68 թ. ռազմարշավի բազմաթիվ կռիվները և երկու մեծ ճակատամարտերը վերջ ի վերջո ծանրության

նժարը թեքեցին հօգուտ հայոց ռազմական մեքենայի: (Հետագայում, մենք կապացուցենք, որ Պոմպեոսին դեպի խաղաղություն մղեց նաև հայկական բանակի ցուցաբերած բարձր մարտունակությունը: Նույնիսկ Պոնտոսում իր համար այդքան հաջողակ 66 թ.-ին Պոմպեոսը գիտակցում էր, որ իր հսկայական բանակի արշավը հայերի դեմ ամենևին էլ վճռական հաղթանակ չի խոստանում. Լուկուլլոսի բանակի ճակատագիրը լավ զսպաշապիկ էր Պոմպեոսի փառասիրության համար):

Սկզբնական շրջանում թշնամուն պետք է զսպեին Տիգրանի արագաշարժ հեծյալ և Միհրդատին ենթարկած հետևակային բանակները: Եթե հռոմեացիներին հաջողվեր մոտենալ Արտաշատին, ապա նրանք կհայտնվեին Արտաշատի հսկայական պաշտպանական համակարգի և հայկական երկու դաշտային բանակների միջև, որից երկրորդը՝ հետևակայինը կարող էր նաև համալրել պաշտպանական համակարգի մարտիկների թիվը: Այսպիսով, եթե հաշվի առնենք նաև Արտաշատի կայազորը, ապա Հայկական կայսրությունը Արարատյան դաշտում կարող էր Լուկուլլոսի բանակի դեմ կենտրոնացնել իր ընդհանուր ռազմուժի կեսը՝ մոտ 90.000 զինվոր:

Այս պարագայում Լուկուլլոսը կարող էր հաջողության որոշակի շանս ունենալ միայն Տիգրանի հեծելազորային կամ Միհրդատի ղեկավարած հետևակային բանակներից որևիցե մեկը առանձին գլխովին ջախջախելուց հետո:

Հայկական բանակի բարեփոխումները, նոր ռազմարշավի մասշտաբային պատրաստությունները, ռազմահայրենասիրական պրոպագանդան արեցին իրենց գործը՝ ժողովրդի մոտ ստեղծելով համապատասխան տրամադրություն:

> Հայկական բանակը կազմող ազնվականությունը, փոքրաթիվ քաղաքացիները և ստվար գյուղացիությունը հայրենիքը ասպատակող ոսոխի դեմ վճռական մարտի էին ելել: Փոխվեց պատերազմի բնույթը, այն դարձավ ազգային պատերազմ՝ «պատերազմ զոհասեղանների և հայրենիքի համար» (война за «алтари и отечество») [70]:

Պատերազմի էության այդ փոփոխությունը լավ էր ըմբռնել գերմանացի անվանի պատմաբան Թեոդոր Մոմզենը: Ճիշտ է,

լինելով իր դարին բնորոշ նախապաշարմունքների կրող, նա Տիգրանին պատկերել էր XIX դ. մահմեդական տիրակալների՝ սուլթանների նմանությամբ: Այս պատկերացումները շատ հեռու էին իրականությունից: Իսլամի ժամանակաշրջանի և մ.թ.ա. 69 թ. մեջ կա սկզբունքային տարբերություն: Սակայն պետք չէ զարմանալ նույնիսկ մեր օրերում արևմտյան որոշ պատմաբանների համար հայրենասիրությունը և ազնվությունը «ապրում են միայն» Արևմուտքում ... Հայրենասեր կարող է լինել հռոմեացին, իսկ Արևելքում ապրող մարդը միայն «ստրկորեն կատարում է իր տիրակալի բոլոր հրամանները»: Այսպիսի պարզունակ կաղապարներ մենք հանդիպում ենք ամենուր և մեր պարտականությունն է պայքարել դրա դեմ:

Մ.թ.ա. 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի երկրորդ տարում այն հայերի համար վերածվեց Հայրենական պատերազմի:

6.2.3. 68 թ. հայ-հռոմեական կռիվները Տավրոսում

68 թ. ամռան կեսերին Կորդուքում հանգստացած և համալրված հռոմեական բանակը սկսեց իր արշավը դեպի Արտաշատ: Անհասկանալի է մնում Լուկուլլոսի դանդաղկոտությունը: Ժամանակի գործոնը լավ գիտակցող, և իր ողջ մարտական գործունեությամբ ժամանակի արժեքը իմաստավորած հմուտ զորավարը դուրս է գալիս արշավի հնարավորից մոտ երկու ամիս ուշացումով: Այդ դանդաղումը պետք է հիմնավոր պատճառ ունենար: Անտիկ պատմիչների նշումները, որ նա միայն վախենում էր սառը եղանակից (ձյունաշատ լեռնացքների՞ց), կամ սպասում էր ցորենի բերքին, այնքան էլ համոզիչ չեն:

Հռոմեացիների վճռական հաղթանակը 69 թ. գլխավոր ճակատամարտում, Տիգրանակերտի գրավումը՝ իր մեծաթիվ զանձերով, հետագայում նաև Արտաշատի սպասելիք գրավումը և հարուստ ավարը՝ այս ամենը Լուկուլլոսի համար լավ հնարավորություն էին ստեղծել կոչերով դիմել ինչպես ենթակա ու դաշնակից փոքրասիացիներին, այնպես էլ իր նոսրացած լեգեոնները համալրելու Ասիա և Լեռնային Կիլիկիա նահանգներում գտնվող հռոմեական զորքերի հաշվին:

Պլուտարքոսը գրում է. «*Այդ պատճառով նա Պոնտոսում*

գտնվող Սորնատիուսին և մյուս զորավարներին հրաման հղեց իր մոտ բերել այնտեղ տեղակայված զորքերը: Նա ծրագրում էր արշավել Գորդիենից: Սակայն, եթե այդ զորավարները նախկինում ևս հանդիպել էին իրենց զինվորների մռայլ անհնազանդությանը, ապա այս դեպքում արդեն նրանք համոզվեցին իրենց ստորադրյալների կատարյալ սանձարձակությանը: Ոչ մեղմությամբ, ոչ խստությամբ նրանք չէին կարողանում համոզել զինվորներին, որոնք աղաղակում էին, թե իրենք այստեղ այլևս չեն մնա և կհեռանան Պոնտոսից, այն թողնելով առանց որևէ պաշտպանի: Երբ այս լուրը հասավ Լուկուլլոսին, վատ ազդեցություն ունեցավ նաև նրա մոտ մնացած զորքերի վրա.» (Կենսագրություններ, Լուկուլլոս, 30) [42]:

Պլուտարքոսի այս դրվագին նախորդում է Լուկուլլոսի իբր թե ասված այն ցանկությունը, որ նա կուզենար պատերազմել նաև պարթևների թագավորի դեմ, որպեսզի մեկ հարվածով հաղթեր Արևելքի բոլոր մեծ թագավորներին: Այս պարծենկոտ հայտարարությունը հորինված է հետո և, ըստ երևույթին ոչ թե Լուկուլլոսի, այլ իր մերձավորներից մեկի՝ բանաստեղծ Աքսիասի կողմից: Ինչպե՞ս պետք է պատերազմեր պարթևների դեմ մի զորավար, որը չէր ավարտել պատերազմը Տիգրանի և Միհրդատի նման ահեղ թշնամիների հետ, և որին չէին ենթարկվում նույնիսկ սեփական զինվորները: Սակայն գտնվում են ժամանակակից ռուս և եվրոպական պատմաբաններ, որոնք ոչ միայն հավատում են այս ամենին, այլև լրջորեն քննարկում են պարթևների դեմ Լուկուլլոսի հնարավոր արշավանքի հետևանքները [109, 169, 218]:

Իրականում 68 թ. ռազմարշավի համար Լուկուլլոսին անհրաժեշտ էր հնարավորինս մեծ բանակ կենտրոնացնել Կորդուքում: Հմուտ զորավարի կանխազգացմամբ նա զգում էր, որ 68 թ.-ի սպասվող արշավը վճռորոշ է լինելու պատերազմի ելքի համար:

Հռոմեական Ասիայի զորամասերից համալրում նա չստացավ, ինչը մասամբ պայմանավորված էր հռոմեական ներքին քաղաքական պայքարում Լուկուլլոսի կողմնակիցների դիրքերի թուլացումից և դրանից բխող անցանկալի հետևանքներից [42, 51]: Համալրում նա չստացավ նույնիսկ իր գերագույն հրամանատարության տակ գտնվող Պոնտոսում տեղակայված լեգեոններից [11, 42, 51]: Փոխարենը Լուկուլլոսը հնարավորու-

թյուն ուներ իր բանակ հավաքագրելու Տիգրանակերտում հայերի դեմ ապստամբություն բարձրացրած մի քանի հազար հույն վարձկաններից, կորդվացիներից, կապադովկիացիներից և այլն: Այստեղ արդեն ոչ մի դեր չէր խաղում այն փաստը, որ հռոմեական ծերակույտի կողմից այս պատերազմը պաշտոնապես հայտարարված չէր: Ռազմավարի սպասելիքը բոլոր ժամանակների, բոլոր պատերազմների գլխավոր շարժառիթներից մեկն է:

68 թ. ռազմաբշավի համար Լուկուլլոսին նոր մեծաքանակ զորք հավաքել չհաջողվեց: Ըստ երևույթին նրան հաջողվել էր միայն մասնակիորեն վերականգնել բանակի 69 թ. ռազմաբշավի կորուստները, համալրելով նրանց վարձկաններով, փոքրասիացիներով և կորդվացիներով:

69 - 68 թթ. ձմռանը Լուկուլլոսի համար, ըստ երևույթին, ավելի կարևոր էր համալրել իր բանակի 9-10.000 զինվորի կորուստը, հատկապես հեծելազորում, քան երկու ամսվա ժամանակային առավելություն ստանալ: Շատ ժամանակ նա կորցրեց, ըստ երևույթին, նաև հայրենակիցների հետ անպտուղ բանակցությունների ու վեճերի պատճառով և, փաստորեն, հռոմեացիների կողմից իր բանակը լուրջ համալրում այդպես էլ չստացավ:

Միայն համալրելով իր բանակը եթե ոչ մինչև նախկին թվաքանակը, ապա գոնե հասցնելով 50-53.000-ին, Լուկուլլոսը սկսեց իր արշավը դեպի Արտաշատ:

Հռոմեական բանակը հաղթահարեց Հայկական Տավրոսի լեռնանցքները և իջավ Արածանիի դաշտ: Տավրոսի լեռնանցքներում հայկական զորքերը մի քանի անգամ հարձակվեցին հռոմեացիների վրա, սակայն ետ մղվեցին: Մենք ոչ մի տեղեկություն չունենք այս մարտերի ծավալների, համառության, կիրառված մարտավարության մասին: Մենք գիտենք միայն, որ գրոհները ետ մղվեցին և հռոմեացիները շարունակեցին իրենց ճանապարհը: Սրանից մենք կարող ենք եզրակացնել, որ այս լեռնային մարտերում ընդհանուր առմամբ հռոմեացիներն ունեին որոշակի գերակշռություն:

Լուկուլլոսի բանակը դժվարություններով հաղթահարեց Տավրոսի լեռնաշղթան, սակայն հայկական զորքերը չփորձեցին վճռականորեն փակել Տավրոսի լեռնանցքները: Ըստ երևույթին Տիգրանին ևս ձեռնտու էր պայքարել հռոմեական բանակի դեմ

այնպիսի տեղանքում, որտեղ նա լիովին կկարողանար օգտագործել իր բանակի գլխավոր հարվածային ուժը՝ մեծաքանակ հեծելազորը, հատկապես կատաֆրակտոսներին: Տավրոսի ոլորապտույտ նեղ կիրճերում հեծելազորը, հատկապես ծանրազենը, անելիք չուներ: Իմ պատկերացմամբ հայերը Տավրոսի լեռնաշղթայի թեք լանջերին և խորը կիրճերում մարտնչել են գերազանցապես նետաձիգների և պարսավորների գնդերով, որոնց երբեմն օժանդակել են սահմանափակ քանակությամբ նիզակակիրների և թեթև հեծելազորայինների ջոկատներ: Այս մարտերին անպայման պետք է մասնակցեին սակրավորների գնդերը, որոնց կառուցած պատնեշները մեծապես պետք է խոչընդոտեին, կամ գոնե դժվարացնեին հռոմեական բանակի առաջխաղացումը: Այս կռիվների գլխավոր նպատակը, առանց ծանր մարտերի բռնվելու, հռոմեացիներին հնարավորինս շատ կորուստներ պատճառելն էր: Անցումը կիրճերից պետք է լիներ դանդաղ, հակառակորդի՝ հարձակման սպասելիքի մշտական լարումով:

Այս դատողություններից ելնելով, պետք է ենթադրենք, որ Տիգրանի հեծյալ և Միհրդատի հրամանատարության տակ դրված հայկական երկրորդ՝ հետևակային բանակները գտնվում էին Արածանիի հովտում, որտեղ մարզվում ու նախապատրաստվում էին մոտալուտ մարտերին, իսկ Հայկական Տավրոսի լեռներում ծավալված գործողությունները հիմնականում իրագործում էր Մանկայոսի Աղձնիքի բդեշխության զորաբանակը: Նրան օժանդակում էին հայկական դաշտային բանակների միայն սահմանափակ քանակությամբ զորամասեր: Քիչ հավանական է, որ Տավրոսի լեռների ստորոտներին ու կիրճերում կռվեր ավելի, քան 10.000 հայ զինվոր, ըստ երևույթին նրանց թիվը տատանվում էր 5-ից մինչև 10 հազարը:

6.2.4. Հայ-հռոմեական կռիվները Արածանիի հովտում

68 թ. Արածանիի հովտում տեղի ունեցած հայ-հռոմեական կռիվներին անտիկ պատմիչներն անդրադառնում են հպանցիկ:

Պլուտարքոս. Կենսագրություններ. Լուկուլլոս.31.

"... *Նա հրաժարվեց պարթևների դեմ արշավելուց և ամռան*

կեսին դարձյալ քայլեց Տիգրանի դեմ: Տավրոսն անցնելուց հետո նա վհատվեց, տեսնելով, որ արտերը դեռևս կանաչ են (հունձն այստեղ այսքան ուշանում է օդի սառնության պատճառով): Այնուամենայնիվ, նա ցած իջավ, երկու թե երեք անգամ ետ մղեց հայերին, որոնք համարձակվել էին հարձակվել իր վրա և սկսեց անարգել ավերել բնակավայրերը: Նա գրավեց Տիգրանի համար պատրաստված ցորենի պաշարները, դրանով իսկ թշնամուն մատնեց այն զրկանքներին, որոնցից մինչ այդ վախենում էր ինքը: Լուկուլլոսը քանիցս փորձեց հայերին մարտի կոչել, նրանց ճամբարը խրամատներով փակելու միջոցով, կամ էլ նրանց աչքի առաջ երկիրը ավերելով: Սակայն նրանք, այն բանից հետո, երբ Լուկուլլոսը իրենց պարտության էր մատնել, հանգիստ էին մնում: Այնժամ նա շարժվեց դեպի Արտաշատ, Տիգրանի մայրաքաղաքը, որտեղ գտնվում էին թագավորի մանկահասակ երեխաները և նրա կանայք. Լուկուլլոսը ենթադրում էր, թե Տիգրանն այս քաղաքն արդեն առանց մարտի չէր զիջելու: [42]"

Ապպիանոս. Միհրդատական. 87.

"... իրենց (Տիգրանին և Միհրդատին և Ռ.Մ.) մոտեցած Լուկուլլոսի դեմ Միհրդատը ամբողջ հետևակը և հեծելազորի մի մասը ժողովեց բլրի կատարին, մնացած հեծելազորով Տիգրանը հարձակվեց սենդամթերք հավաքող հռոմեացիների վրա և պարտվեց: Այդ բանից հետո հռոմեացիները էլ ավելի անվախ էին հավաքում պարենը հենց Միհրդատի բանակատեղի մոտակայքում, որտեղ էլ տեղադրեցին ճամբարը: Եվ դարձյալ բարձրացավ փոշու մեծ ամպ, քանի որ հարձակվում էր Տիգրանը: Նրանց մտահղացումն այն էր, որ Լուկուլլոսն ընկնի (հայտնվի) երկուսի մեջտեղում: Լուկուլլոսը, այդ հասկանալով, իր հեծյալներից լավագույններին նետեց առաջ՝ Տիգրանի հետ որքան կարելի է հեռու կռվի բռնվելու և ռազմերթային շարվածքը մարտական դասավորության դարձնելը խոչընդոտելու, իսկ ինքը Միհրդատին ճակատամարտի կանչելով ... և ճամբարը խրամատով շրջափակելով չէր հրավիրում մարտի, մինչև որ սկսված ձմեռը վերջ տվեց պատերազմական գործողություններին" [34]:

Այս հատվածը թարգմանել է Ռուբեն Մանասերյանը: Ապպիանոսի երկի այս հատվածի թարգմանությունը «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» -յում՝ թերի է [17], որը հաս-

տատում է նաև Ապպիանոսի ռուսերեն թարգմանության [59] հետ համեմատությունը: Ռ. Մանասերյանի և ռուսերեն թարգմանությունները շատ մոտ են իրար և պահպանում են Ապպիանոսի պատմածի հույժ կարևոր մանրամասնությունները:

Դիոն Կասսիոս. Հռոմեական պատմություն. Գիրք 36. Քսիֆիլինոս. 4, 2.

«... Լուկուլլոսը արդեն ամռան կեսին սկսեց արշավանքը, քանզի ցրտերի պատճառով անկարելի էր գարնանը ներխուժել թշնամու երկիրը, և ավերեց երկրի որոշ մասերը, որպեսզի բարբարոսները պաշտպանելով այն, ներքաշվեն պատերազմի մեջ, բայց քանի որ նրանք դարձյալ չշարժվեցին, ինքն արշավեց նրանց վրա» [51]

Պլուտարքոսի, Ապպիանոսի և Դիոն Կասսիոսի հաղորդած տեղեկությունները համընկնում են և ընդհանուր առմամբ բավարար են Արածանիի հովտում ծավալված պայքարում հայերի և հռոմեացիների կիրառած մարտավարությունը պատկերացնելու համար: Պոլիբիոսը նկարագրելով Երկրորդ պյունիկյան պատերազմի սկզբնական, հռոմեացիների համար դժբախտ, ընթացքը, մանրամասնորեն անդրադառնում է Հռոմեական Հանրապետության դիկտատոր Փաբիոս Մաքսիմի հաղթանակած Հաննիբալի դեմ կիրառած մարտավարությանը [100, 139, 196]:

Երկրորդ պյունիկյան պատերազմի ժամանակ՝ մ.թ.ա. 218-216 թթ., հռոմեացիները գլխավոր ճակատամարտերում կրել էին մի քանի ծանր պարտություն՝ տալով տասնյակ հազարավոր կորուստ, և գիտակցում էին, որ նոր ճակատամարտը կարող է ունենալ նույն ելքը: Այդ պատճառով իրենք ընտրեցին հետևյալ մարտավարությունը. երբեք խոշոր մարտերի մեջ չբռնվել, այլ մանր պատերազմով անընդհատ անհանգստացնել կարթագենացիներին, դժվարացնել պարենավորումը: Հռոմեական բանակը կրնկակոխ հետապնդում էր կարթագենական բանակին, սակայն մարտի չէր բռնվում, և կարթագենական ամբողջ բանակի գրոհներին դիմակայում էր բլուրների վրա ամրանալով՝ հիմնականում մարտը վարելով իր ճամբարային ամրությունների հետևից: Հռոմեացիներին գլխավոր ճակատամարտի ներքաշելու Հաննիբալի բոլոր փորձերը Փաբիոսի կողմից մեծ վճռականությամբ կասեցվեցին: Ուժերի հարաբերությունը դանդաղորեն սկսեց թեքվել հօգուտ հռոմեացիների, հիմ-

նականում այն պատճառով, որ գտնվելով սեփական երկրում, իրենք ձեռքի տակ ունեին անհամեմատ ավելի շատ մարդկային և նյութական, հատկապես մթերային, միջոցներ: Հետո հռոմեական ծերակույտում տեղի ունեցան Պոլիբիոսից մեզ հայտնի դժգոհությունները երկրի ավերման առթիվ և Փաբիոսի մարտավարությունը մերժվեց [100, 196, 291, 305]: Հետևանքը Կաննի հռչակավոր ճակատամարտն էր, որի հետևանքով հռոմեացիները կրեցին իրենց պատմության ամենաաղետալի պարտություններից մեկը և կորցրին մոտ 70.000 զինվոր, որոնցից ավելի քան 55.000-ը՝ սպանված: Ստացած դաժան դասը հռոմեացիներին ստիպեց վերադառնալ Փաբիոս Դանդաղկոտի մարտավարությանը, որն ավարտվեց փայլուն ռազմական հաջողություններով՝ չկրելով Իտալիայում ոչ մի պարտություն գլխավոր ճակատամարտում, այնուամենայնիվ Հաննիբալը հարկադրված էր նահանջել Աֆրիկա. աֆրիկյան ափ իջած Սկիպիոնի հռոմեական հերարշավային բանակից արդեն Կարթագենի բուն տարածքը պաշտպանության կարիք ուներ [196]:

Անշուշտ, հռոմեացիների այս հաջողությունը ուներ նաև երկրորդ բաղադրիչը՝ անուղղակի գործողությունների ռազմավարության (стратегия непрямых действий) գրագետ կիրառումը հռոմեացիների կողմից [100, 139, 148]:

Այս ռազմավարության մասին մենք մանրամասն կխոսենք ստորև, երբ կքննարկենք Տիգրան-Միհրդատյան հարվածը Պոնտոսում 68 թ. վերջին, սակայն այդ հարվածը, ինչպես ժամանակին (Երկրորդ պունիկյան պատերազմի երկրորդ փուլում) հռոմեացիների գործողությունները Պիրենեյան թերակղզում և Հյուսիսային Աֆրիկայում անհնար էին առանձ բուն Իտալիայում կիրառված Փաբիոսի մարտավարության հաջողությունից [100, 170, 196]:

Տիգրանը և Միհրդատը այս մարտավարությանը ծանոթ էին նախ այն ժամանակաշրջանի գրականությունից՝ բացի հունալեզու Պոլիբիոսի մեծարժեք երկից հին աշխարհում կային այս դեպքերին նվիրված բազմաթիվ այլ գործեր՝ այդ թվում նաև հունարեն: Վերջապես թե՛ Տիգրանը, թե՛ Միհրդատը իրենց կյանքում արդեն օգտագործել էին նման ռազմավարության տարրերը մեկը հռոմեացիների, մյուսը՝ պարթևների դեմ:

Տիգրանը նման փորձ կարող էր ունենալ 112 – 111 թթ. և 86 – 84 թթ. հայ-պարթևական պատերազմներից, Միհրդատը՝ 89-85,

թթ. առաջին և 73 – 71 թթ. երրորդ պոնտական պատերազմներից [94, 95, 291]:

Ժամանակակից հետազոտողների համար արժեքավոր են ոչ միայն Պոլիբիոսի [195, 196], այլ նաև Տիտոս Լիվիոսի [304-306], Ֆրոնտինիոսի [238], ավելի քիչ՝ Ապպիանոսի [59, 60] և մի շարք այլ հեղինակների [83, 167, 219, 289] հաղորդած տեղեկությունները մեր նկարագրված մարտավարության մասին, որն անվանվում էր «պատերազմ բլրերի ու ... համար» [100]:

Արդի պատմա- և ռազմապատմագիտական գրականության մեջ պունիկյան պատերազմների ժամանակաշրջանում օգտագործված տարբեր ռազմա- և մարտավարական հնարքներին տրված է մանրամասն և համոզիչ (եթե ոչ սպառիչ) գնահատական [99, 100, 126, 139, 199, 220, 247, 291]: Հետազոտված են այդ մարտավարական հնարքների օգտագործման հնարավորությունը տարբեր իրավիճակներում, բացահայտված են անտիկ հեղինակների նկարագրված դրվագներում տեղ գտած որոշ անճշտությունները, երբեմն նույնիսկ ճակատամարտի նկարագրման ոչ ճիշտ՝ առասպելական բնույթը (օրինակ Կաննի ճակատամարտի Ապպիանոսի նկարագրությունը) [100]: Այս ամենը մեզ թույլ է տալիս ընդհանուր առմամբ պատկերացնել 68 թ. Տիգրանի ու Լուկուլլոսի բանակների միջև ծավալված կռիվների ընթացքը:

Ըստ երևույթին, ինչպես բազմիցս նկարագրել են անտիկ պատմիչները, Միհրդատն իր հրամանատարության տակ դրված բանակով շարժվում էր Լուկուլլոսից մի քանի ժամից մինչև կես օր հեռավորության վրա: Լուկուլլոսի գրոհի ժամանակ նա ամրանում էր մոտակա բլրի վրա և այնտեղ սպասում թշնամուն: Նույն տեղն էր շտապում նաև Տիգրանի հեծելաբանակը: Երբեմն, չունենալով պաշտպանվելու բավարար հնարավորություն, Միհրդատը նահանջում էր մինչև իր հին ճամբարը: Լուկուլլոսը սկսում էր մարտը Միհրդատի դեմ և շարունակում այնքան ժամանակ, մինչև Տիգրանի հեծելազորը կամ մոտալուտ գիշերը վտանգավոր չէին դարձնում ճակատամարտի շարունակությունը հենց Լուկուլլոսի համար:

Երբեմն Լուկուլլոսը դիտմամբ հնարավորություն էր տալիս, որ Միհրդատի բանակի ստորաբաժանումները հաղթեին մանր

հռոմեական ստորաբաժանումներին՝ մանիպուլներին կամ կոհորտներին այն հույսով, որ ոգևորված հայ զինվորները կհետապնդեն «պարտված» թշնամուն, այս ոգևորությունը կփոխանցվի հայկական ճամբարում գտնվող մնացած զինվորներին և նրանք դուրս կգան ճամբարային խրամատներից և կհետվեն «հաղթական» կռվի: Քանի՞ անգամ, հաղթանակի հասնելու համար, այս հնարքը հաջողությամբ օգտագործել են իրենք՝ հռոմեացիները, երբեմն էլ նրանց հակառակորդները: Սակայն Տիգրանի և Միհրդատի սահմանած պողպատյա կարգապահությունը ձախողում էր Լուկուլլոսի նման փորձերը:

Պատերազմն ընթանում էր սահմանափակ մի տարածքում, որտեղ պարենավորման հարցերը ձեռք էին բերում կարևորագույն, երբեմն՝ վճռորոշ նշանակություն: Արածանու հովտի սահմանափակ միջոցներն անկարող էին ամիսներ շարունակ կերակրել հակամարտող կողմերի գրեթե 130.000 զինվորների և մի քանի տասնյակ հազարի հասնող ծառաների, ստրուկների և գերիների վիթխարի զանգվածը:

Անտիկ հեղինակները հակամարտության այս ժամանակահատվածում Լուկուլլոսի կարևորագույն հաջողություններից են համարում հայկական բանակի համար նախատեսված մի քանի մթերային պահեստի գրավումը հռոմեացիների կողմից:

Լուկուլլոսի աճող անհանգստությունը հակամարտող արքաների ընտրած մարտավարության կապակցությամբ ուներ իրական, նյութական պատճառ՝ սովի սպառնալիքը, որը հռոմեական բանակի մշտական ուրվականն էր: Բնական է, որ հայրենի երկրում մարտնչող հայկական բանակի համար մթերային խնդիրը նման սրությամբ չէր կանգնած, սակայն գրեթե 80-100 հազար մարդ կերակրելու համար Տիգրանի գումակային ծառայությանը պարտադրաբար պետք է լուծեր բարդ բեռնափոխադրական խնդիրներ:

Ստեղծված վիճակից հռոմեացիների դժգոհությունը ուժեղացավ հատկապես այն բանից հետո, երբ պատերազմական արհավիրքներին ենթարկված երկրամասում այլևս կողոպտելու բան չմնաց: Դա միանգամից թուլացրեց հռոմեական բանակի (ինչպես կլիներ աշխարհի գրեթե բոլոր բանակներում) մարտական եռանդը:

Արածանիի հովտի փոքր քաղաքները և բերդաքաղաքները զավթիչներին ավար գրեթե չտվեցին. նրանք ի սկզբանե շատ

հարուստ չէին, ամենաթանկարժեք ունեցվածքն էլ արդեն վաղուց հասցրել էին տեղափոխել ավելի ապահով վայրեր:

Կարելի է պատկերացնել հռոմեական բանակի տրամադրություններն: Նրանք հիշում էին, որ իրենց ընկերները մնացել են արդեն նվաճված Պոնտոսում, որտեղ շարունակում էին թալանել եթե ոչ Առաջավոր, ապա գոնե Փոքր Ասիայի ամենահարուստ քաղաքները, իսկ իրենք վարում էին հոգնեցուցիչ ու ծանր պատերազմ հզոր թշնամու դեմ, վարձատրվելով միայն չունևոր գյուղացիներից թալանված կահկարասիով:

Երկու ամիս Արածանիի հովտում թափառելուց հետո, որի ընթացքում մի քանի անհաջող հաջողություններից բացի Լուկուլլոսը բան ձեռք չբերեց, ըստ երևույթին հռոմեական լեգեոներների դժգոհությունը հասավ գագաթնակետին: Լուկուլլոսին անհրաժեշտ էր բերում մտցնել ռազմավարության մեջ, անհրաժեշտ էր հաղթանակ մեծ ճակատամարտում, և Լուկուլլոսը սրընթաց շարժվեց դեպի Արտաշատ:

Լուկուլլոսն իր զորաշարժը կատարեց մեծ վարպետությամբ: Հավանաբար, օգտագործել էր անտիկ պատմիչների բազմիցս նկարագրված հնարքները.

-կառուցել հիմնավոր դաշտային ճամբար և հաջորդ օրն անընդհատ ուժեղացրել ամրությունները խրամատների վրա որոշ քանակությամբ զինվորներ աշխատացնելով,

-ճամբարի շրջակա տարածքում պարեն հայթայթել և ակտիվ հետախուզություն կազմակերպել,

-ձգտել ոչ մի արտասովոր շարժումով չանհանգստացնել հայկական հետախուզությանը,

-գաղտնի պահել իր մտադրությունները նույնիսկ իր մերձավորներից:

Այս ամենից հետո լուսաբացից 1-2 ժամ առաջ դուրս գալ ճամբարից իր ընտրած ուղղությամբ՝ իր զինվորներին մահվան սպառնալիքի տակ արգելելով վերցնել սահմանվածից ավել բեռ, և կարգադրելով չմարել կրակները: Այս դեպքերում խոսակցությունները շարքերում խստիվ արգելվում են, իսկ ճամբարում թողնում են մի քանի հարյուր թեթևազեն հեծյալների, որոնց խնդիրն է որոշ ադմուկի և շարժման մակարդակ պահպանել ճամբարում՝ թմրեցնելով հակառակորդի հետախուզության զգոնությունը:

Այս հնարքները թույլ են տալիս մի քանի ժամվա առա-

վելություն ստանալ և թեթևացնել բանակի շարժունակությունը, որի շնորհիվ՝ կտրվել հակառակորդից: Այսպես Լուկուլլոսը կարող էր կտրվել իրեն հետևող Միհրդատի հայկական հետևակային բանակից և սրընթաց շարժվել դեպի Արտաշատ:

Լուկուլլոսի հաշվարկը արդարացավ և հնարքը ստացվեց, սակայն Միհրդատի հայկական հետևակային բանակից կտրվելով, նա գիտեր, որ չի կարող խուսափել Տիգրանի հեծելաբանակի հետ հանդիպելուց:

Սակայն Լուկուլլոսը հենց այդ էր երազում: Նրան անհրաժեշտ էր իրարից առանձնացնել երկու հայկական դաշտային բանակները: Երկամսյա համառ պայքարից հետո նա համոզվեց, որ անկարող է հաղթել Տիգրանին և Միհրդատին միաժամանակ: Ուրեմն անհրաժեշտ էր բաժանել երկու արքաներին, որպեսզի կործանի նախ Տիգրանի, հետո նաև Միհրդատի ուժերը: Մի խոսքով, տաղանդավոր զրագետ զորավարի ճիշտ կայացրած որոշում. մնում էր իրագործել: Առաջինը պետք էր հաղթել Տիգրանին, որը ինչպես ճշմարիտ մտածում էր Լուկուլլոսը, չէր հանդուրժի հարձակումն իր երկրի մայրաքաղաքի վրա:

Տիգրանն իսկապես նեռվեց Լուկուլլոսի հետևից և օգտվելով իր բանակի արագաշարժությունից՝ առաջ անցավ ախոյանից, և հետապնդման չորրորդ օրը կտրեց նրա ճանապարհը Արածանիի գետանցին:

Այսպիսով, Լուկուլլոսն Տիգրանին ի վերջո պարտադրեց իր համար այդքան անհրաժեշտ գլխավոր ճակատամարտը:

6.2.5.Հայկական և հռոմեական բանակների վիճակն ու կորուստները Արածանիի ճակատամարտի նախօրեին

68 թ. Արածանիի հովտում ծավալված կռիվների ընթացքում կողմերի կրած կորուստների մասին սկզբնաղբյուրները մեզ ոչ մի բան չեն հաղորդում: Այդ պատճառով կորուստների մասին մեր դատողությունները խիստ մոտավոր են և կարող են մի քանի անգամ տարբերվել իրականից: Այնուամենայնիվ, հետևելով մեր իսկ ընտրած վերականգնողական մեթոդի սկզբունքներին, ելնելով անցկացված մարտերի բնույթից, մենք կարող ենք ենթադրել հետևյալը.

-մարտերի ընթացքում հռոմեական հեծելազորը և թեթև հետևակը զիջում էին հայկականին և հաճախ կարողանում էին մարտնչել միայն իրենց ծանրագեն հետևակի օգնությամբ.

-հռոմեական ծանրագեն հետևակը զգալիորեն գերազանցում էր հայկականին և չնայած հայկական հետևակը վարում էր հիմնականում պաշտպանական մարտեր ճամբարում, կամ ամրացված բլուրներում, ըստ երևույթին, կրում էր ավելի շատ կորուստներ, քան հռոմեականը:

Երկամսյա արյունալի պայքարի հետևանքով, որտեղ մարտերի մեծ մասի նախաձեռնողները հռոմեացիներն էին, ըստ իս, նրանք կարող էին կորցնել 3-5.000 զինվոր: Այս թիվը նվազագույնն է, եթե հետևենք Պոլիբիոսի և Տիտոս Լիվիոսի նմանատիպ մարտերում ավելի փոքրաթիվ հռոմեական և կարթագենական զորքերի կորուստների մասին տվյալներին [195, 196, 304-306]: Այստեղ, անշուշտ, պետք է հաշվի առնել կողմերի կորուստների մասին հիշյալ հեղինակների չափազանցությունները:

Հռոմեացիների կորուստը խիստ մոտավոր՝ պայմանական կարելի է համարել.

- 1.000 հեծելազոր,
- 1.000 թեթևազեններ,
- 2.500 ծանրազեններ, որոնցից մոտ 1.000 լեգեոներ և
- 500 գումակային:

Արագացած երթով ընթանալու համար Լուկուլլոսը պետք է լուծեր իր հիվանդ և վիրավոր զինվորների և գումակի ծանրաշարժ բեռների փոխադրման խնդիրները:

Այսպիսով, Արածանիի ճակատամարտին կարող էր մասնակցել Լուկուլլոսի 45-48.000-ոց բանակը:

Հայկական հեծելազորի և թեթևազենների կորուստները ես ընդունում եմ հռոմեականին հավասար, ծանրագեն հետևակի կորուստները երկու անգամ ավելի շատ, որովհետև առանձին զինվորների և ստորաբաժանումների արհեստավարժությունը ավելի էր խնայում հռոմեացի լեգեոներների կյանքը, քան համեմատաբար ավելի անփորձ հայկական հետևակի հիմնականում պաշտպանական մարտերը: Այսպիսով, հնարավոր հայկական կորուստները Արածանիի հովտում ես գնահատում են մոտ.

- 1.000 հեծելազոր,
- 1.000 թեթևազեններ և

- 5-6.000 ծանրազեններ, ընդամենը՝ 7--8.000 զինվոր:

Այսպիսով, Արածանիի ճակատամարտից առաջ Տիգրանի հեծելաբանակը մոտ 30.000 հեծյալ էր, իսկ Միհրդատի ղեկավարության տակ գտնվող հայկական հետևակային բանակը՝ մոտ 37-39.000 զինվոր: Արածանիի ճակատամարտին մասնակցել էր Տիգրանի միայն հեծյալ բանակը:

Լուկուլլոսը դժգոհ էր թե՛ իր արշավի արագությունից, թե՛ մեծ ճակատամարտից խուսափելու Տիգրանի ռազմավարությունից: Չնայած արշավի դուրս եկած հռոմեական բանակը առաջ էր շարժվում շատ դանդաղ, հռոմեական բանակի կարևոր նվաճումներից էր հայկական բանակի համար նախատեսված մթերային խոշոր պահեստների գրավումը Արածանիի հովտում: Սակայն դա բավարար չէր հաջողության հասնելու համար, Լուկուլլոսին պետք էր մեծ վճռական ճակատամարտ:

Տիգրանին ճակատամարտ հարկադրելու համար Լուկուլլոսը կտրուկ փոխեց իր ռազմավարությունը և սրընթաց երթով շարժվեց ուղիղ դեպի Արտաշատ:

Տիգրանը պետք է ընտրեր՝ կամ ճակատամարտ տալ Լուկուլլոսին միայն իր արագաշարժ հեծյալ բանակով, որովհետև Միհրդատի հրամանատարության տակ գտնվող հայկական հետևակային բանակը չէր հասցնում սրընթաց շարժվող հռոմեացիների հետևից, կամ էլ պայքարել հռոմեական բանակի դեմ Արտաշատի հզոր պարիսպների տակ:

Մի շարք նկատառումներով Տիգրանն ընտրեց առաջինը.

- նա պատրաստվում էր ճակատամարտ տալ Լուկուլլոսին իր նախընտրած տեղում և իր նախընտրած մարտաոճով, որին Լուկուլլոսը ծանոթ չէր,
- Արտաշատում էր գտնվում հայկական խոշոր զորագունդ, որը Արտաշատի պարիսպների վրա արդյունավետ կարող էր հակադրվել ցանկացած հռոմեական բանակին մինչև հայկական դաշտային բանակների մոտենալը: Տիգրանի նախապատրաստվող նոր ճակատամարտի անհաջող ավարտն էլ չէր կանխորոշում պատերազմի ելքը, որովհետև հայկական բանակը կարող էր հակահարված տալ թշնամուն արդեն Արտաշատի պատերի տակ,
- պատրաստվող ճակատամարտի անհաջողության դեպքում Տիգրանի հեծյալ բանակը իր արագաշարժության հաշվին կարող էր դուրս գալ հռոմեացիների հարվածի տակից և նահանջել դեպի Արտաշատ:

Տիգրանը պատրաստ էր երկրորդ գլխավոր ճակատամարտին: Նա որոշեց ճակատամարտել հեծյալ բանակով իր նախընտրած վայրում՝ Արածանիի գետանցում:

6.3. Արածանիի գլխավոր ճակատամարտը

68 թ. մ.թ.ա., սեպտեմբերի կեսին, Արածանիի ափին տեղի ունեցավ 69-66 թթ. հայ – հռոմեական պատերազմի չորս գլխավոր ճակատամարտերից՝ երկրորդը:

Արածանիի ճակատամարտի մասին մեր միակ աղբյուրները Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի վկայություններն են: Բերենք այդ հատորդումները Սիմոն Գրքաշարյանի բարձրակարգ թարգմանությամբ.

Պլուտարքոս, Լուկուլլոս, գլ.31, 32.

«Լուկուլլոսը շարժվում էր դեպի այդ քաղաքը, և Տիգրանը չէր կարող այս հանդուրժել: Նա իր զորքերով արշավեց և չորրորդ օրը բանակեց հռոմայեցիների մոտ, որոնցից իրեն բաժանում էր Արսանիաս գետը: Արտաշատ գնալու ճանապարհին հռոմեացիներն անհրաժեշտաբար պետք է անցնեին այդ գետը: Լուկուլլոսը զոհ մատուցեց աստվածներին, ասես հաղթանակն արդեն տարել էր, և սկսեց իր զորքն անցկացրել մյուս ափը, առջևում դասավորելով իր 12 կոհորտաները, իսկ մնացյալ զորքը թողեց հետևում, որպեսզի թշնամին չհարվածի թիկունքից: Նրանց դեմ կանգնած էին թշնամու մեծաթիվ հեծելազորը և ընտիր զորքեր, իսկ առաջին շարքերում գտնվում էին հեծյալ աղեղնավոր մարդերը և նիզակակիր իբերները, որոնց բոլոր օտարականներից ավելի, Տիգրանը վստահում էր իբրև առանձնապես մարտունակների: Բայց սրանք ոչ մի սխրանք չկատարեցին, այլ, հռոմեական հեծելազորի հետ մի փոքր ընդհարվելուց հետո, չդիմացան հետևակի հարձակմանը և ցրվեցին այս ու այն կողմ: Հռոմեական հեծյալները, նրանց հալածելով, նույնպես ցրվեցին տարբեր կողմեր: Այդ պահին երևաց Տիգրանի հեծելազորը: Լուկուլլոսը, տեսնելով ձիավորների շքեղությունը ու բազմությու-

նը, վախեցավ և հրամայեց իր հեծյալներին՝ դադարեցնել հետապնդումը: Ինքը առաջինը հարվածեց ատրոպատենցիներին, որոնց լավագույն ուժերը գտնվում էին հենց իր դիմաց. նրանց սկզբից նեթ այնպիսի սարսափ պատճառեց, որ նրանք փախուստի դիմեցին դեռևս ձեռնամարտի չբռնված: Այդ ճակատամարտում Լուկուլլոսի դեմ մասնակցած երեք թագավորներից առավել խայտառակ փախչողը Միհրդատ Պոնտացին էր, որը չդիմացավ անգամ հռոմեացիների ռազմական աղաղակներին: Հետապնդումը երկար տևեց և շարունակվեց ամբողջ գիշեր, քանի դեռ հռոմեացիները չհոգնեցին ոչ միայն սպանելուց, այլև գերիներ վերցնելուց և ավար հավաքելուց: Լիվիոսը պատմում է, որ եթե առաջին ճակատամարտում թշնամու կորուստը ավելի մեծ էր, ապա այս կռվում սպանվել ու գերի էին ընկել առավել անվանի մարդիկ:

Նման հաջողությունից ոգևորված ու քաջալերված, Լուկուլլոսը որոշեց շարունակել իր ուղին դեպի երկրի խորքը և վերջնականապես ճնշել թշնամու դիմադրությունը: Սակայն աշնանային գիշերահավասարի ժամանակ եղանակն անսպասելիորեն սաստիկ փչացավ: Գրեթե անընդհատ ձյուն էր տեղում, իսկ երբ երկինքը պարզվում էր, այնժամ եղյամ էր նստում և սառցակալում էր: Ձիերը հազիվ էին կարողանում խմել սառցակալած ջուրը. նրանք դժվարությամբ էին անցնում սառած գետը, քանի որ սառույցը ճզում էր և կտրում նրանց ջլերը: Այդ վայրերի մեծագույն մասը ծածկված էր խիտ անտառներով, շատ էին կիրճերն ու ճահիճները. այնպես որ զինվորները ոչ մի կերպ չէին կարողանում չորանալ: Ճանապարհին զինվորները ծածկվում էին ձյունով, թրջվում և, քանի որ գիշերում էին բաց տեղերում, խիստ տանջվում էին: Այդ պատճառով էլ ճակատամարտից հետո նրանք սոսկ մի քանի օր հետևեցին Լուկուլլոսին, այնուհետև սկսեցին բողոքել: Սկզբում իրենց տրիբունների միջոցով խնդրում էին նրան, բայց հետո նրանց հավաքները դարձան ավելի աղմկալի, իսկ վերջում սկսեցին գիշերները աղմկել վրաններում. Իսկ դա արդեն ապստամբական տրամադրության դրսևորում էր: Ու թեև Լուկուլլոսը համառորեն խնդրում էր ու պնդում, որ նրանք մի փոքր ևս համբերեն, մինչև որ, վերցնելով Հայաստանի Կարթագենը, չոչնչացնեն ամենաթշնամի մարդու գործը (նա ակնարկում էր Հաննիբալին), բայց համոզել չկարողացավ. նա ստիպված ետ վերադարձավ: Ետդարձի ճանապարհին նա Տավրոսն անցավ այլ լեռնանցքներով և իջավ Միգդոնիա կոչված բարեբեր և տաք երկիրը: Այստեղ գտնվում է խոշոր և մարդաշատ մի քաղաք, որ բարբարոսները կոչում են Նիսիբիս, իսկ հույները Միգդոնյան Անտիոք:» [42]:

Դիոն Կասսիոս, գք. 36, գլ. 4 – 6

«... Լուկուլլոսը արդեն ամռան կեսին սկսեց արշավանքը, քանզի ցրտերի պատճառով անկարելի էր գարնանը ներխուժել թշնամու երկիրը, և ավերեց երկրի որոշ մասերը, որպեսզի բարբարոսները պաշտպանելով այն, ներքաշվեն պատերազմի մեջ, բայց քանի որ նրանք դարձյալ չշարժվեցին, ինքն արշավեց նրանց վրա: Եվ այս ընդհարման ժամանակ հռոմեացի հեծյալներին թշնամու հեծելազորը դժվար դրության մատնեց, իսկ հետևակի հետ նրանցից ոչ մեկը ձեռնամարտի դուրս չեկավ, այլ նրանք փախչում էին ամեն անգամ, երբ Լուկուլլոսի վահանակիրները օգնության էին հասնում հեծելազորին: Այսուհանդերձ թշնամիները որևէ վնաս չկրեցին. այլ նրանք ետ դառնալով և հետապնդողներին նետահարելով, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին: Ու վերքերը ծանր էին ու դժվար բուժելի. քանզի նրանք գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե՛ մարմնի որևէ մասում մնալու և թե՛ դուրս քաշվելու դեպքում, արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ:

Այնժամ Լուկուլլոսը, քանի որ շատերը վիրավորվում էին և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց այնտեղից և արշավեց Նիսիբիսի վրա:» [51]:

Ապպիանոսի հաղորդումը հայերի և հռոմեացիների միջև 68 թ. կայացած խոշոր ճակատամարտի մասին Արածանիի ճակատամարտին չի վերաբերվում: Այն կայացել էր խորը աշնանը և ճակատամարտին մասնակցել էր նաև հայկական դաշտային երկրորդ՝ հետևակային բանակը, Միհրդատ Եվպատորի հրամանատարությամբ: Այս ճակատամարտի ընթացքին մանրամասն կանդրադառնանք սույն գլխի վերջում:

Այժմ փորձենք վերականգնել իրադարձությունների հնարավոր ընթացքը:

XIX – XXI դդ. պատմաբաններից Արածանիի ճակատամար-

տի ընթացքն են ուսումնասիրել Դրումանը, Թեոդոր Մոմմզենը, Ռեյնախը, Կուրտ Էքհարտը, Հ. Աստուրյանը, Հակոբ Մանանդյանը, Սարգիս Սարգսյանը, Ռուբեն Մանասերյանը և Հայկ Հակոբյանը [5, 11, 21, 29, 34]: Վերոհիշյալ հեղինակների հետազոտությունները և արտահայտած կարծիքները կարևոր են ճակատամարտի իրական ընթացքը վերականգնելու համար:

Դրումանի, Մոմմզենի և Ռեյնախի մոտեցումները հիմնավոր քննադատության էր ենթարկել դեռ Կուրտ Էքհարտը, ցույց տալով նրանց ծայրահեղ միակողմանիությունը և սկզբնաղբյուրների տվյալների հանդեպ քմահաճ վերաբերմունքը:

Նկարագրելով ճակատամարտի ընթացքը՝ ես միայն անհրաժեշտության դեպքում կանդրադառնամ նախորդներիս հայտնած կարծիքներին:

Սարգիս Սարգսյանը [45], Արածանիի ճակատամարտի նկարագրելիս, հիմնվում է Հակոբ Մանանդյանի արտահայտած կարծիքների վրա (գծանկար 6.3.) [29]: Լինելով բոցավառ հայրենասեր, նա անընդհատ գրում է հայոց բանակի շարունակական հաղթանակների մասին մինչև Արածանիի ճակատամարտը, և ճակատամարտից հետո, սակայն հռոմեական բանակը, չգիտես ինչու շարունակում է առաջանալ դեպի Արտաշատ:



Գծանկար 6.3. Արածանիի ճակատամարտի ընթացքը ըստ Ս. Սարգսյանի:

Մինչև ճակատամարտի մեր վերականգնումը շարադրելը և հիմնավորելը, անդրադառնանք սկզբնաղբյուրներին:

Ըստ Պլուտարքոսի՝ Լուկուլլոսը հռոմեական բանակը դասավորում է այնպես, որ առջևում լինեն հռոմեական 12 կոհորտ: Նա անցնում է Արածանին, որի հակառակ ափին կանգնած էր Տիգրանի հեծելազորը, որոնց առաջին գծում էին աղեղնավոր մարդերը և նիզակակիր իբերները: Վերջիններիս գրոհին դիմակայում է հռոմեական հեծելազորը, որին Լուկուլլոսը օգնության է ուղարկում իր հետևակի մի մասը: Մարդերն ու իբերները կռվի են բռնվում հռոմեական հեծելազորի հետ, սակայն հետևազորի դեմ մարտից խուսափում են ու դիմում փախուստի: Հռոմեական հեծելազորը հետապնդում է հակառակորդին և, չնայած Լուկուլլոսի հրահանգին, ցրվում է դաշտով մեկ, հեռանալով սեփական հետևակից: Վրա է հասնում հայկական զրահապատ այրուձին, որը հռոմեական հեծելազորի հետ ձեռնամարտից հետո, հետևակի հետ ձեռնամարտից խուսափում է ու նահանջում, հետադարձ նետահարելով իրենց հետապնդող հռոմեական հետևակին: Սակայն, ըստ Պլուտարքոսի, հռոմեացիներին հաջողվում է կոտորել և ավելի, քան սպանել՝ գերել մեծաթիվ հայերի: Լուկուլլոսի հրամանով հետապնդումը շարունակվում է մինչև ուշ գիշեր:

Ճակատամարտի ընթացքը սկզբում շարադրված է ավելի հստակ, հետագայում շատ սխեմատիկ և անվստահ: Հասկանալի չէ, ինչ կարող է ծանր հետևակայինը հետապնդել ու գերել թեթև հետևակայինին, առավել ևս հեծյալին:

Պլուտարքոսից մենք կայացած ճակատամարտի մասին ստանում ենք շատ կարևոր մանրամասնություններ.

1. Տիգրանի բանակը, հռոմեական զորքերի արագացված երթի չորրորդ օրը՝ Արածանիի հակառակ ափին կտրում է Լուկուլլոսի բանակի ճանապարհը,
2. հայկական բանակը բացարձակ հեծելազորային էր,
3. հռոմեական բանակը մարտակարգ է ընդունում գետանցի հակառակ՝ ձախ ափին,
4. ճակատամարտը տեղի է ունեցել մի դաշտում, որտեղ հնարավոր էր անցնել Արածանին և, որը բավական ընդարձակ էր ճակատամարտի համար,
5. ճակատամարտից հետո՝ դաշտը մնում է հռոմեացիներին,
6. հռոմեական հետևակին չի հաջողվում ձեռնամարտի բռնվել

հայերի հետ,
7. տեղի է ունենում հեծելամարտ, որի ընթացքում հռոմեական հեծելազորը ցրվում է դաշտում,
8. Լուկուլլոսը տեսնում է հայկական ծանր հեծելազորի ընթացքը և տագնապում,
9. հայկական ծանր հեծելազորը լեգեոներների դեմ ձեռնամարտի չի գնում և նախընտրում է նետաձգությունը,
10. Լուկուլլոսը հայտարարում է իր հաղթանակի մասին,
11. Ճակատամարտին մասնակցած հայերի և հռոմեացիների թիվը Պլուտարքոսը չի նշում,
12. Զոհվածների թիվը Պլուտարքոսը չի նշում. միայն հաղորդում է, որ հայերը ավելի քիչ են կորցրել Արածանիի, քան Տիգրանակերտի ճակատամարտում:

Ինչ վերաբերում է հայկական և հռոմեական զորքերի տեղաշարժերին, ապա Պլուտարքոսի մոտ սկիզբը նկարագրված է հստակ, վերջը՝ անհամոզիչ:

Պլուտարքոսի նկարագրությունը թերի է և եթե ընդունվի որպես ճակատամարտի վերջնական պատկեր՝ անհավանական: Վերջին երկու դարի հետազոտողների մեծ մասը ընդունել է Պլուտարքոսի տված նկարագրությունը, սակայն ռազմական պատմության այնպիսի ակնառու գործիչ, ինչպիսին Հանս Դելբրյուկն էր, հեգնանքով էր խոսում այսպիսի առասպելական նկարագրություններին հավատացողների մասին [100, 101]:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ առանց Պլուտարքոսի հայտնած տեղեկությունների, ճակատամարտի մեր վերականգնման փորձը կլիներ խիստ թերի:

Իմ կարծիքով, Արածանիի ճակատամարտի նկարագրությունները Դիոն Կասսիոսի և Պլուտարքոսի մոտ կատարված են մեկ աղբյուրից [7], ընդ որում պատմիչներից ամեն մեկը ճակատամարտի նկարագրությունից վերցրել է իրեն հետաքրքրող մանրամասները: Ըստ երևույթին, ինչպես Տիգրանակերտի ճակատամարտի նկարագրության ժամանակ, մենք գործ ունենք ճակատամարտի մասնակցի նկարագրության հետ: Դա կարող են լինել Լուկուլլոսի մերձավորներից կամ սպաներից մեկի գրառումները:

Դիոն Կասսիոսը հստակ պատմում է հռոմեական հեծելա-

զորի գրոհի, ապա դարանակալած հայկական հեծելազորի հարվածի տակ ընկնելու մասին: Ջախջախված հեծելազորի մնացորդները փրկում է հռոմեական հետևակը, որի հետ հայերը ձեռնամարտի չեն բռնվում և նահանջելիս նետահարում են լեգեոներներին՝ մեծ կորուստներ պատճառելով նրանց: Հայկական հեծելազորը որևիցե վնաս չկրելով հեռանում է, մարտադաշտը թողնելով հռոմեացիներին, որոնք սկսում են գիտակցել իրենց կորուստների ծանրությունը:

Այս բավականին օբյեկտիվ նկարագրության մեջ չկա որևիցե չափազանցություն և հստակ շարադրված է ճակատամարտի ընթացքը և ելքը: Եթե այս ամենին գումարենք հռոմեական բանակի Պլուտարքոսի ներկայացված մարտակարգը, ճակատամարտի պատկերը վերջնականապես ամբողջանում է:

Այս հստակ նկարագրությունը ամենայն հավանականությամբ պատկանում է ինչ-որ զինվորականի գրչին:

Ավելի քիչ հավանական է, որ այս տեղեկությունները ներկայացվել են հակամարտության հակառակ՝ Տիգրան – Միհրդատյան կողմի մեզ անհայտ աղբյուրները: Դա կարող էր լինել և՛ Միհրդատի, և՛ Տիգրանի շրջապատի հույն սպայակույտի կամ մտավորականության այլ ներկայացուցիչ, հնարավոր է նաև հռոմեացի վտարանդի (սերտորիական) սպա: Այդ դեպքում նա կարող էր մասնակցել հայ – հռոմեական պատերազմի բոլոր չորս՝ Տիգրանակերտի, Արածանիի, Աղձնիքի և Զելայի գլխավոր ճակատամարտերին:

Այս անհայտ աղբյուրի կողմից բերվող պատերազմական նկարագրությունները հստակ են, գրված զինվորականի լեզվով, սակայն մեզ են հասել Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի վերապատմածով:

Առաջինի գերխնդիրը Լուկուլլոսի գործունեության հիման վրա տրված նրա բնավորության և անցած ուղու գնահատականն է: Պլուտարքոսն անտարբեր է պատմական և ռազմական այն անցքերի վերաբերյալ, որոնք ըստ իր որդեգրած կոնցեպցիայի կարևոր չեն Լուկուլլոսի բնութագրության համար: Նա անվարան դեն է նետում մեր անհայտ աղբյուրի այն տեղեկությունները, որոնք հակասում են իր ստեղծած կերպարին: Արդյունքում, Պլուտարքոսը ստեղծում է Լուկուլլոսի իր բարոյախոսական կերպարը, որը զգալիորեն տարբերվում է իրական գործչի կենսագրությունից:

Այսօր մենք չունենք ավելի մանրամասն և ճշգրիտ աղբյուր, քան Լուկուլլոսի կյանքի պլուտարքոսյան նկարագրությունը, որի մանրամասնությունները մենք կարող ենք մերժել կամ հիմնավորել այլ անտիկ հեղինակներից ստացած տեղեկությունների պատառիկների հիմամբ:

Դիոն Կասսիոսը և այլ հեղինակներ լուծել են իրենց ստեղծագործական խնդիրները և իրենց հասանելի սկզբնաղբյուրներից ընտրել իրենց համար պիտանի նյութը: Այդ պատճառով Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի սկզբնաղբյուրը կարող է լինել նույնը, սակայն Արածանիի ճակատամարտի ընթացքի նկարագրության մեջ դրվեն տարբեր շեշտեր:

Դիոն Կասսիոսի տեղեկությունները Արածանիի ճակատամարտի մասին խիստ կարևոր են նրա ընթացքը պատկերացնելու համար, սակայն չեն բացահայտում մարտում հռոմեական բանակի դասավորությունը և հնարավոր շարժերը: Այս բացը լրացնում է Պլուտարքոսը, որի նկարագրությունը բավարար է հռոմեական բանակի զորադասավորումն բացահայտելու համար: Ինչպես Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքը բացահայտելու համար հիանալի լրացնում էին իրար Պլուտարքոսի, Ապպիանոսի և Ֆրոնտինիոսի հաղորդումները, այդպես էլ Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի նկարագրությունները բավարար են Արածանիի ճակատամարտի ընթացքը և ելքը, ճակատամարտի մանրամասները վերականգնելու (ռեկոնստրուկցիայի) համար:

Արածանիի ճակատամարտում հռոմեական զորավարի գրագետ և մտածված գործողություններին հայ միապետ – զորավարը հակադրում է միանգամայն այլ մարտավարություն, քան Տիգրանակերտի ճակատամարտում:

Արածանիի ճակատամարտում Տիգրանը ոչ մի բանով չի նմանվում տիգրանակերտյան ճակատամարտի Տիգրանին: Տարբեր են ոչ միայն մարտավարական ոճերը, այլև պատերազմի ընդհանուր ռազմավարությունը:

Արածանիի ճակատամարտից մի քանի օր հետո Լուկուլլոսը կհասկանա Տիգրանի ռազմավարության էությունը, և իր՝ 68 թ. ձեռնարկած արշավանքի ողջ կործանարարությունը: Այս ճակատամարտից հետո Լուկուլլոսի բանակն արդեն հարկադրված է լինելու պայքարել իր փրկության համար:

Տիգրանակերտի ճակատամարտին նվիրված ենթագլխի

նշանաբանի՝ «Երբ ուժն է դժվարացնում շարժման ազատությունը, փոքրիկ ճկունությունը կհաղթի սաստիկ ճնշումը ...» (Լյու Ցզի (1311 – 1375 թթ.)՝ չինացի զորավար [128]) իմաստը Արածանիի ճակատամարտում և հաջորդող իրադարձությունների ժամանակ արդեն հակառակ նշանակություն է ձեռք բերում մարտնչող կողմերի համար:

6.3.1.Լուկուլլոսի ծրագրերը և հռոմեական բանակի զորադասավորումը

Լուկուլլոսը Արածանիի գետանցի մոտ տեսնելով մարտին պատրաստվող Տիգրանի հեծելաբանակը, հասկացավ, որ վերջապես հասել է իր նպատակին և գլխավոր ճակատամարտի է հարկադրել Տիգրանին:

Լուկուլլոսը, նույնիսկ մ.թ.ա. I դարի տաղանդաշատ զորավարներով հարուստ ժամանակաշրջանում, աչքի էր ընկնում իր արտակարգ ընդունակություններով և գրեթե անսխալ գործելու հազվադեպ օժտվածությամբ: Նա քաջ գիտակցում էր, որ Տիգրանի շարժուն բանակը հնարավոր է հաղթել միայն իր հեծելազորի և հետևակի համատեղ գործողություններով: Համեմատաբար փոքրաթիվ հռոմեական հեծելազորը կարող էր դիմակայել և հաղթել հայկականին միայն իր ծանրազեն հետևակի գործուն օգնությամբ: Ուստի բանակի զորամիավորումները պետք է դասավորվեին այնպես, որ հռոմեական հետևակը մարտի ցանկացած պահի կարողանար օգնության հասնել նեղն ընկած հռոմեական հեծելազորին:

Մարտական դասավորության մեջ անհրաժեշտ էր հաշվի առնել նաև այն, որ հռոմեացիների դաշնակից գալատական և բութանիական ծանրազեն հետևակը, ի տարբերություն բուն հռոմեականի, ավելի ընդունակ էր պասիվ դիմադրության, կամ մեկ ուղղությունով՝ գրոհի, և գրոհելու պահին հավանականորեն խախտելու էր իր շարքերը: Որևիցե լուրջ զորաշարժ մարտի ընթացքում դաշնակցային հետևակը կատարել չէր կարող: Այդ պատճառով Լուկուլլոսը պետք է ընտրեր այնպիսի մարտակարգ, որ դաշնակցային հետևակը ապահովեր հռոմեական հետևակին թիկունքից, վերջինիս գրոհի անցնելու պահին:

Վերջինը՝ հռոմեական բանակը ճակատամարտի ընթաց-

քում կարող էր հարձակման ենթարկվել բոլոր կողմերից, ուստի հռոմեական մարտակարգը պետք է հայկական հեծելազորից բոլոր ուղղություններով ապահովեր ակտիվ պաշտպանություն, պաշտպանելով նաև գումակը: Հռոմեական հեծելազորը ծայրահեղ անհրաժեշտության դեպքում նույնպես կարող էր պատսպարվել հռոմեական բանակի ստեղծած հսկայական կարրեի ներսում:

Պլուտարքոսը միակն է, որ տալիս է Լուկուլլոսի ընտրած մարտակարգի կարևորագույն մանրամասնությունը՝ առաջին գծում 12 կոհորտ և թևերին՝ հեծելազոր, որը, հաշվի առնելով մեր առկա գիտելիքները հռոմեական բանակի կառուցվածքի և մարտակարգի մասին (դաշնակիցների կոհորտների կամ փաղանգի տեղը մարտակարգում, թեթևազենների տեղաբաշխումը), բավարար է հռոմեական բանակի հնարավոր մարտակարգը վերականգնելու համար:

Հռոմեական բանակի մարտակարգը ներկայացված է թիվ 6.6. և 6.7. գծանկարներում: Երկրորդի վրա ներկայացված են Լուկուլլոսի բանակի չորս լեգեոն-զորաբանակների հնարավոր դասավորությունը:

Լուկուլլոսի բանակի մարտակարգի վերականգնումը մեկ անգամ ևս ապացուցում է հռոմեական առաջնորդի արտակարգ զորավարական տաղանդը: Հռոմեական մարտակարգը անթերի էր թե՛ հարձակման, թե՛ պաշտպանության համար: Եթե դրան գումարենք նաև զգալի քանակային գերազանցությունը, Լուկուլլոսը պետք է վստահ լիներ իր մոտալուտ հաղթանակին:

Լուկուլլոսին հայտնի բոլոր մարտավարական հնարքների սահմաններում նա հոգացել էր առավելագույնը: Մենք չենք կարող մեղադրել Լուկուլլոսին նրանում, որ նա արհամարհանքով էր վերաբերում Տիգրանի զորավարական տաղանդին, կամ հայկական բանակի մարտական ընդունակություններին: Լուկուլլոսի գործողությունները վկայում են այն մասին, որ արվել էր ամեն ինչ հզոր հայկական հեծելազորի գրոհը կանգնեցնելու, հետ մղելու, ապա հայկական հեծելազորի հնարավոր մեծ մասը ոչնչացնելու համար: Արածանիի ճակատամարտում Տիգրանի օգտագործած մարտավարական հնարքը ոչ միայն անծանոթ էր Լուկուլլոսին, այլ նաև կատարվեց այնպիսի արագությամբ ու վարպետությամբ, որ մենք չենք կարող թերահալու մեջ մեղադրելու մեծ հռոմեացի զորավարին:

Եթե Արածանիի ճակատամարտը ունենար այլ ելք, անկասկած Լուկուլլոսը նույն սրընթացությամբ շարժվելու էր դեպի Արտաշատ. մոտալուտ ձմեռը շտապեցնում էր նրան:

6.3.2.Տիգրանի ծրագրերը և հայկական բանակի զորադասավորումը

Լուկուլլոսի հանկարծակի առաջ նետվելու պահը անսպասելի էր Տիգրանի համար, սակայն դա չի նշանակում, որ արքայից արքան բացառում էր այդ հնարավորությունը: Տիգրանի հեծյալ բանակը նետվեց Լուկուլլոսի հետևից, իսկ Միհրդատի ղեկավարած հետևակային բանակը նույնպես արագացած երթով շարժվեց հռոմեական բանակի հետևից:

Տիգրանը գիտեր, որ կանգնեցնել կամ զգալիորեն դանդաղեցնել հռոմեական բանակի ընթացքն այլևս կարելի է միայն ճակատամարտ տալով:

Անհրաժեշտ էր ճիշտ ընտրել մարտավարությունը. ճակատային ձեռնամարտը հռոմեական բանակի հետ գրեթե անխուսափելի կվերջանար հռոմեացիների հաղթանակով: Տիգրանն ընտրում է պարթևա-սարմատական ավանդական հեծելազորային մարտավարությունը, որը պարթևները բազմիցս հաջողությամբ օգտագործել էին Սելևկյանների, երբեմն էլ Արտաշեսյանների դեմ: Այս մարտավարությանը Տիգրանը տիրապետում էր կատարյալ՝ վկայությունը 86-84 թթ. հայ-պարթևական պատերազմում Արբելայի և Նինվեյի գլխավոր ճակատամարտերում տարած հաղթանակներն էին, նաբաթեական բանակի ջախջախումը Դամասկոսի մոտ կայացած գլխավոր ճակատամարտում և այլ ճակատամարտեր: Ապրելով որպես պատանդ Պարթևստանում երկար ու ձիգ 16 տարի, նա լավ էր յուրացրել այս մարտավարությունը:

Տիգրանը որոշել էր ճակատամարտում բաժանել հռոմեական հեծելազորը իր հետևակից և մի ուժեղ, շեշտակի հարվածով ոչնչացնել այն, մինչև վրա կհասնի հռոմեական հետևակը: Այս որոշումը իրականացնելու համար պահանջվում էր լավ վարժված, փորձված այրուձի և հմուտ հեծելազորային սպաներ: Եվ՝ առաջինը, և՝ երկրորդը Տիգրանն ուներ, իսկ համապատաս-

խան տեղը ճակատամարտի համար ինքն արդեն ընտրել էր:

Ամենևին պատահական չէ, որ 68 թ. սեպտեմբերի կեսին հայոց հեծելազորը դիմավորեց հռոմեական բանակին Արածանիի գետանցի վրա: Ուժեղ գծային հետևակին գետանցից հետո ուժեղ հեծելազորով գրոհելը հին ավանդույթներ ուներ՝ մ.թ.ա. 334 թ. Գրանիկոսի ու մ.թ.ա. 326 Գիդասպ գետի ափին տեղի ունեցած ճակատամարտերի ժամանակ Ալեքսանդր Մակեդոնացու գործողությունները, մ.թ.ա. 218 թ. Հաննիբալի ճակատամարտը վոլքերի դեմ Ռոդանի ափին և այն դրա վառ օրինակներն են: Տիգրանին անհրաժեշտ էր ընտրել այնպիսի մի տեղանք, որը հնարավորություն ստեղծեր դարանում պահել իր մեծաթիվ հեծելազորի մեկ երրորդը: Այդպիսի հնարավորություններ նա կարող էր ունենալ միայն համապատասխան տեղանքում. Բագրևանդի դաշտը այդ իմաստով շատ հարմար էր:

Տիգրանի նպատակն էր ոչնչացնել կամ գլխովին ջախջախել հռոմեական հեծելազորը, խուսափելով հռոմեական ծանրազեն հետևակի, հատկապես լեգեոնների հետ ձեռնամարտից: Սակայն հռոմեական լեգեոնները նույնպես պետք է հայոց հեծելազորի հարվածից բաժին ստանային՝ ձեռնամարտից փախչող հեծելազորի կողմից հեռահար նետահարումը մեծ կորուստներ կպատճառեր լեգեոներներին: Այսպիսի հեծելամարտ հնարավոր էր իրականացնել միայն հռոմեական հեծելազորը շարքից հանելուց հետո, ուստի ճակատամարտի առաջին փուլի հաջողությունը պայմանավորում էր երկրորդ փուլի՝ հեռահար նետահարման հնարավորությունը և հայերի համար ճակատամարտի բարենպաստ՝ հաղթական ելքը:

Ըստ ճակատամարտի ընթացքի իմ վերականգման, ճակատամարտի օրը հայկական զորքերը կանգնած էին Արածանիի աջափնյակին՝ գետից 2-3 ասպարեզ հեռավորության վրա երեք հեծյալ զորաբանակով՝ աջ, կենտրոնական և ձախ: Երեք զորաբանակն էլ ունեին 5.000-ական հեծյալ և շարված էին երկու գծով՝ թևային զորաբանակների առաջին գծում էին մարդերի ու իբերների երեքական գունդ, որոնց հետևից երկրորդ գիծ էին կազմում հայկական թեթև հեծելազորի երկուական գունդ: Կենտրոնում առաջին գիծը կազմում էին ատրպատականյան կատաֆրակտոսների երեք գնդերը, որոնց առաջնորդում էր Միհրդատ Մեդացին, երկրորդ գիծը կազմում էին մեդական թեթևազեն երկու հեծելազնդերը:

Հայկական կատաֆրակտոսների ուժ գունդ դարանակալած էին հայկական առաջավոր դիրքերից մոտավորապես 10 ասպարեզ հեռավորությամբ և ճակատով նայում էին դեպի այն վայրը, ուր պետք է ներքաշեին հռոմեական հեծելազորին: Հայկական մեկական թեթև հեծելագունդ դարանակալած կատաֆրակտոսների թևերին ապահովում էին հայկական զրահապատ դրագոնայի թևերը: Այդպիսով, դարանակալած հայկական հեծելազորի թիվը հասնում էր 10.000-ի: Այս զորաբանակն առաջնորդում էր ինքը՝ գլխավոր հրամանատարը, հայոց արքայից արքան:

Հռոմեական բանակի թիկունքում պետք է գործեին մի քանի՝ 3-4 հայկական թեթև հեծելագունդ, որոնք, անընդհատ երևալով հեռվում, պետք է մշտական լարվածության մեջ պահեին հռոմեացիներին:

Մարդերը և իբերները պետք է սկսեին գրոհը և մարտի բռնվեին հռոմեական հեծելազորի հետ, որին, ինչպես արդեն բազմիցս եղել էր, օգնության կգային հռոմեացիների կոհորտները և թեթևազենները: Մարդերը և իբերները, բնական է, որ չէին կարողանա դիմանալ նման ճնշմանը և կդիմեին փախուստի: Փախուստի ուղղությունը իրենց արդեն հուշել էին, բացի դրանից ետևում՝ երկրորդ գծում կանգնած հայկական հեծելազնդերը նույնպես պետք էին նահանջեին, սակայն կանալիզացնելով փախչող իբերների և մարդերի երթուղին:

Կենտրոնում գտնվող ատրպատականյան հեծյալ զորագունդը, Միհրդատ Մեդացու գլխավորությամբ, նույնպես պետք է նետվեր փախուստի, ամեն կերպ դա ներկայացնելով որպես հարձակվող հռոմեացիներից վախեցած բարբարոսական մի ամբոխ: Այս երեք զորագունդը պետք է «փախուստի» դիմեին այնպիսի հաշվարկով, որ «հաղթանակով» ոգևորված հռոմեական հեծելազորն անցներ «պարտված բարբարոսների» հետապնդմանը, հեռանար հռոմեական հետևակից և ցրեր իր շարքերը:

Երկրորդ գործողությունը պետք է լիներ հայկական զրահապատ հեծելազորի հարվածը հռոմեական հեծելազորի վրա, որի ժամանակ «նահանջող» ատրպատականյան և հայկական հեծելազնդերն իրենց հերթին պետք է շրջվեին դեպի հակառակորդը: Այս փուլը տևելու էր այնքան, մինչև վրա հասներ հռոմեական հետևակը: Հայկական հեծելազորի խնդիրն էր փորձել այս կարճ

ժամանակահատվածում լրիվ ոչնչացնել հռոմեական հեծելազորին կամ այնպիսի վիճակի հասցնել նրան, որ նա բացարձակ հնարավորություն չունենար մարտը շարունակելու:

Տիգրանի նախատեսած երրորդ գործողությունը նախատեսում էր հռոմեական հետևակի հետ ձեռնամարտի չբռնվել և նահանջել հետադարձ նետահարումով, ընդ որում այս ամենը կատարել ոչ թե մեկ անգամ, այլ՝ շարունակական: Նահանջած հայկական հեծելազնդերը պետք է հեռվում վերականգնեին իրենց մարտակարգերը, վերցնեին նետերի նոր պաշար և կրկին սուրային հռոմեացիների դեմ: Հայկական նոր զրահահատ նետերը լավ էին ծակում զրահը, նետածայրի առաջին ծայրն էլ մնում էր վիրավորի մարմնում. այնպես որ Տիգրանը հույս ուներ հռոմեացիներին զգալի կորուստներ պատճառել:

Հետագայում Տիգրանը պլանավորում էր այնքան դժվարացնել հռոմեացիների պարենավորումը և տեղաշարժը, որ նրանք մատնվեին սովի: Պարտված հռոմեական հեծելազորի մնացորդներն արդեն չէին կարող լրջորեն դիմադրել հայկական հեծելազորին: Հռոմեացիների վիճակը հատկապես կդժվարանար, երբ դանդաղացած հռոմեական բանակին հասներ Լուկուլլոսի զորքի դեմ արագացած երթերով շտապող հայկական հետևակային բանակը. Միհրդատ Պոնտացին լի էր վճռականությամբ իր ավանդը ներդնելու հռոմեացիների վերջնական ջախջախման գործում:

Որքանով հաջողվեց Տիգրանի այս մտահղացումը՝ կքննենք ճակատամարտի ընթացքը շարադրելուց հետո:

6.3.3.Արածանիի ճակատամարտի ընթացքը

Մ.թ.ա. 68 թ. սեպտեմբերի կեսերին Արածանիի ափին, ըստ երևույթին Բագրևանդի դաշտում, տեղի ունեցավ 69 – 67 թթ. հայ-հռոմեական պատերազմի երկրորդ գլխավոր ճակատամարտը: Ճակատամարտի ընթացքը նպատակահարմար է բաժանել կողմերի նախնական դիրքի և բուն ճակատամարտի չորս փուլերի.

0. կողմերի դասավորությունը ճակատամարտից առաջ (գծանկար 6.4. և 6.5.),
1. հայկական հեծելազորի գրոհը և հռոմեացիների հակագրոհը՝ հայկական և հռոմեական հեծելազորների մարտը (գծանկար 6.6.),
2. հռոմեական կոհորտների գրոհը և հայկական հեծելազորի կեղծ փախուստը (գծանկար 6.7. և 6.8.),
3. հայկական ծանր հեծելազորի գրոհը հռոմեական հեծելազորի դեմ (գծանկար 6.9.),
4. հայկական հեծելազորի «սկյութական» մարտը լեգեոնների դեմ (գծանկար 6.10.):

Այժմ պարզենք հռոմեական բանակի դասավորության ճակատային երկարությունը և խորությունը:

Մ.թ.ա. I դարի առաջին կեսին հռոմեական լեգեոնի մարտակարգը բաղկացած էր երեք գծից, որպես օրենք՝ առաջինում 4 կոհորտ, երկրորդում և երրորդում՝ երեքական: Սակայն լեգեոնի կոհորտային կառուցվացքը թույլ էր տալիս հռոմեական զորավարներին փոխել հռոմեական մարտակարգի դասավորությունը ըստ անհրաժեշտության: Անտիկ հեղինակներից մենք գիտենք, որ լեգեոնը կարող էր ունենալ մեկ, երկու, չորս գծային շարվածք, երբեմն էլ ուժեղացվել ուրիշ լեգեոններից վերցված կոհորտներով: Տվյալ դեպքում Լուկուլլոսն ուժեղացնում է առաջին գծում գտնվող Մուրենայի (7) լեգեոնը երկու կոհորտով և ըստ մեր ռեկոնստրուկցիայի այս կոհորտները օգտագործում է չորրորդ գիծ կազմակերպելու համար:

Փորձեմ հիմնավորել իմ ենթադրությունը: Եթե Լուկուլլոսը այս կոհորտները օգտագործեր լեգեոնի մարտակարգի ճակատը երկարացնելու համար, ապա մեկ կոհորտը պետք է տեղադրեր առաջին, և երկրորդ հավելյալ կոհորտը՝ երկրորդ գիծ: Արդյունքում, լեգեոնի ճակատը 350 մետրից կդառնար 400 մ մի փոքր ավելի: Այս տարբերության մարտավարական իմաստը հասկանալի չէ: Սակայն եթե Լուկուլլոսը ստեղծում էր ծանր հետևակի չորրորդ գիծը, ապա հայկական հեծելազորի գրոհի ժամանակ կարող էր բախումի ժամանակ ունենալ ոչ թե սովորական մարտական դասավորություն՝ առաջին շարք՝ 7 կոհորտ, երկրորդը 3, այլ երկրորդ գծում ունենալ արդեն 5 կոհորտ, որը բավարար էր կրկնակի խորության փաղանգ ստեղծելու համար, որով և մտադիր էր կանգնեցնել հայկական հեծելազորին, եթե նա փորձեր ճակատային գրոհով ճեղքել հռոմեական մարտական դասավորությունը:

Հռոմեական հետևակի հակահարձակման ժամանակ երկու հավելյալ կոհորտները թույլ էին տալիս առաջին գծի հարձակվող կոհորտների թիկունքում ունենալ անընդհատական մարտական գիծ:

Կոհորտը որպես օրենք կարող էր ունենալ լեգեոներների 6-ից 10 շարք խորություն (6-ը կամ նույնիսկ 4-ը, ավելի հազվադեպ էր) [77, 88, 100, 132, 137, 258]: Հաշվի առնելով, որ Արածանիում նա պետք է դիմակայեր հայոց հեծելազորի հնարավոր գրոհը, շարքերի խորությունը չէր կարող ավելի քիչ լինել, քան 10-ը: Մեկ լեգեոները զբաղեցնում էր մոտ 0,9 – 1,0 մ երկայնքով ու 1,2 – 2 մ խորությամբ տարածություն, ուստի մեկ կոհորտի ճակատը 10 շարքի դեպքում հավասար էր մոտավորապես 45 – 50 մ, իսկ 7 կոհորտները կզբաղեցնեին 320 – 350 մ ճակատ, հաշվի առնելով կոհորտների միջև որոշ ինտերվալների անհրաժեշտությունը՝ 330 – 360 մ, միջինը՝ մոտ 350 մ (Արածանիի ճակատամարտին մասնակցող հռոմեական լեգեոնների գրեթե բոլոր կոհորտներում 500 լեգեոներից քիչ էր մնացել, հատկապես փիմբրիական լեգեոններում: Սակայն նույնիսկ 400 լեգեոներ ունեցող կոհորտը կարող էր ապահովել 50 լեգեոներ առաջին շարքում, շարվելով 8 շարքով):

Կոհորտի խորությունը 10 շարքի դեպքում կազմում էր մոտ 15 մ: Կոհորտների չորս գծերը միասին կազմում էին 60 մ, որոնց անհրաժեշտ է գումարել կոհորտների գծերի միջը եղած տարածությունը: Այս տարածությունը փոփոխական էր, հաճախ հավասար էր կոհորտի խորությանը, մեր դեպքում՝ 15 մ: Ես կարծում եմ, որ իրականում այն կարող էր լինել ավելի քիչ՝ մոտ 10 մ, հաշվի առնելով, որ հռոմեացիները պետք է մարտնչեին մեծաթիվ հեծելազորի դեմ և, անհրաժեշտության դեպքում, շարքերը միացնելով, կազմեին մեկ մեծ փաղանգ: Այսպիսով, ամենահավանականն է, որ 12 կոհորտները զբաղեցնում էին 350 x 90 մ տարածություն:

Մեր ներկայացրած մարտակարգից երևում է, որ առաջին գծով գրոհող հռոմեական թևերը պաշտպանված էին դաշնակիցների ծանր հետևակով, ընդ որում դաշնակցային կոհորտները կազմում էին իրար մոտ երկու գծով կանգնած փաղանգ: Եթե հաշվենք, որ դաշնակցային կոհորտների շարքերը պետք է լինեին 10-ից ոչ պակաս, իսկ շարքերում կանգնած ծանրազեներները կանգնած էին ավելի խիտ (որպեսզի դիմակայեն հայկական

հեծելազորի գրոհին), ապա մոտավորապես 4.500 մարտիկից բաղկացած զանգվածը կունենար մոտ 200 մ ճակատային երկարություն և երկու գիծ՝ 10-ական զինվորով՝ 12 մ երկու անգամ՝ 24 մ և մոտ 6 մ երկու գծերի միջև՝ 30 մ: Այդպիսով կարող ենք համարել, որ լեգեոնի երկու թևերին փաղանգի մարտակարգով կանգնած էին դաշնակիցները՝ ամեն թևին զբաղեցնելով 200x30 մ տարածություն:

Այսպիսով, հռոմեական հետևակի մարտակարգի ճակատային երկարությանը կազմում էր 350 + 200 + 200 = 750 մ, որին գումարում ենք լեգեոնի և փաղանգների միջև ընկած փոքր տարածությունը, որն անհրաժեշտ է թեթև հետևակի մարտական զորաշարժի համար, ընդամենը՝ մոտ 770 մ:

Հռոմեական բանակի առաջին գծի հետևակի թևերին կանգնած է հռոմեական ողջ հեծելազորը՝ մոտ 7.000 հեծյալ: Եթե համարենք, որ նրանք դասավորված են հռոմեական տուրմայում ընդունված 5 շարքով և ունեն այնպիսի երկու գիծ, այսինքն 10 հեծյալներից բաղկացած դասավորության խորություն, ապա կարող ենք հաշվել, որ 3.500 հեծյալների մարտակարգի ընդհանուր խորությունը կլիներ երկու անգամ 15-20 մ, 30-40 մ և 10-20 մ ինտերվալ հեծելազորի առաջին և երկրորդ գծի մեջ՝ 40-60, միջինը՝ 50 մ:

Ճակատային երկարությունը հաշվում ենք 350 հեծյալներից ամեն մեկին նվազագույնը 1,5 մ հաշվարկով, որից ստանում ենք 525 մ և առնվազն 75 մ գումարում ալաների մեջ որոշ ինտերվալ ունենալու համար: Այսպիսով, հետևակի թևերին կանգնած էր երկու հեծյալ զորագունդ, որոնցից յուրաքանչյուրը զբաղեցնում էր 600x50 մ տարածություն:

Այսպիսով, հռոմեական բանակի ճակատի երկարությունը կազմում էր 770 + 600 + 600 = 1970 մ, հաշվի առնելով որոշ անհրաժեշտ ինտերվալը հեծելազորի և հետևակի միջև՝ 2.000 մ:

Այժմ պարզենք հռոմեական բանակի կազմած կարրեի խորությունը:

Երկու կողմից կարրեի կողմերը կազմում են մեկական փիմբրիական լեգեոն, որոնց կոհորտներում 8 շարքից ավելի, ըստ երևույթին, չէին կանգնում՝ վետերանները 8 շարքով նույնքան կայուն էին, որքան մնացած լեգեոներները 10-ում: Այդ պատճառով շարասյուների երկարությունը կազմում էր 350, իսկ լայնությունը՝ մոտ 70 մ, ամեն մի փիմբրիական լեգեոնը

զբաղեցնում էր 350x70 մ տարածություն:

Կարբեի վերջին գծում կանգնած էր Լուկուլլոսի բանակի չորրորդ՝ Սեքստիլիոսի (?) լեգեոնը, որին մնացել էր 8 կոհորտ երանք կարող էին կանգնած լինել ևս երեք գծով և զբաղեցնել 250x70 մ տարածություն:

Կարբեի վերջին գծում կանգնած լեգեոնի թևերին տեղավորված էին դաշնակիցների կոհորտները, դասավորված փաղանգի ձևով, և սիրիացի հույն վարձկանների փաղանգը:

Կարբեի առաջին գծի հաշվարկի ժամանակ մենք ստացանք դաշնակիցների դասավորության չափը՝ 200x30 մ: Հաշվի առնելով, որ հակառակորդի հետ անմիջական շփում չէր նախատեսվում, երանք կարող էին քայլել մի փոքր ավելի նոսր՝ 200x40 մ:

Հաշվարկենք կարբեի վերջին գծի երկարությունը՝ 250 + 200 + 200 = 650 մ: Կարբեի առաջին գծի երկարությունը մոտ 770 - 800 մ է, ուրեմն տարբերությունը կազմում է 120 - 150 մ: Իմ կարծիքով, հենց այս հատվածը զբաղեցնում էր վարձկան հոպլիտների կառանգը՝ 20 շարք երկու գծով, 150 մարդիկ ճակատով՝ 140x40 մ:

Այդպիսով, Լուկուլլոսի բանակը կազմել էր հսկայական՝ 800 x 550 մ կարբե: Ստեղծված կարբեի ներսում էր գտնվում գումակը: Թեթևազեները՝ մոտ 8 կոհորտ, տեղակայված էին կոհորտների միջանկյալ տարածքներում և լեգեոնների և փաղանգների ինտերվալներում (գծանկար 6.7.):

Հռոմեացիները, հատկապես ուժեղ հեծելազորի դեմ մարտնչելիս, նախընտրում էին թիկունքում կամ թևերում ունենալ իրենց թեթևազեներով զբաղեցված որևիցե բլուր: Սակայն ճակատամարտի նկարագրությունում այդպիսի նշում չկա, ինչը վկայում է, որ ճակատամարտի դաշտում այդպիսի հնարավորություն չկար:

Այսպիսով, հռոմեական բանակի ճակատի երկարությունը մոտ 2 կմ էր, մարտակարգի խորությունը՝ 550 մ: Մեր հաշվարկի հնարավոր անճշտությունը 100 – 200 մ է:

Հայկական հեծելաբանակի դասավորությունը վերականգնվում է ելնելով հայկական բանակի դասավորության մասին մեզ հասած տեղեկություններից և մեծաքանակ հեծյալներին կառավարելու անհրաժեշտությունից:

Հայկական բանակի ճակատի երկարությունը հռոմեականից պակաս չէր, մոտ 2-2.200 մ: Հայկական բանակը բաժանվում էր կենտրոնի և թևերի, յուրաքանչյուրը՝ 5.000 հեծյալ, որից 3.000-ը կանգնած էր առաջին գծում: Եթե ամեն գծի խորությունը պայմանական համարենք 10 շարք, ապա զորագունդը կունենա մոտ 600 մ ճակատ և 100 մ խորություն: Երեք զորագնդի ճակատային երկարությունը՝ 1.800, ինտերվալներով զորագնդերի մեջ՝ 2.000 մ:

Մի քանի թեթևազեն հեծելազնդեր տարբեր կողմերից՝ պատկառելի հեռավորության վրա ուղեկցում են հռոմեական կարբեն:

Դարանակալած հայկական հեծելաբանակին հռոմեացիները չեն տեսնում: Այդ բանակի զբաղեցրած տարածությունը պետք է մոտավորապես լիներ 500x400 մ (մեկ կատաֆրակտոսների գունդը՝ 50 հեծյալից 20 շարքով՝ 100x80 մ, 4 գունդ առաջին գծում, 4՝ երկրորդ և 2՝ երրորդ՝ կլինի 500x400 մ տարածություն):

Ճակատամարտի համար անհրաժեշտ դաշտի մեծությունը որոշելու համար անհրաժեշտ է հաշվարկել, թե ինչ տարածություն էր անհրաժեշտ Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի նկարագրված զորաշարժերի համար:

Ըստ ճակատամարտի ընթացքի, հռոմեական և հայկական թեթև հեծելազորի բախումից հետո հայկականը կեղծ փախուստով հռոմեականին զգալիորեն հեռացնում է հռոմեական հետևակից և գցում ծանր հայկական հեծելազորի հարվածի տակ: Դա մոտ 3,5 – 5 կմ պետք է լինի, որպեսզի նույնիսկ վարժված լեգեոներները վազքով չկարողանան արագ հասնել և պարտությունից փրկել իրենց հեծելազորը: Միաժամանակ պետք է լինի այնքան տարածություն, որ հայկական թեթև ու զրահապատ հեծելազորները հասցնեն նահանջել և վերադասավորվել՝ ևս առնվազն 5 կմ:

Այսպիսով, նկարագրված ճակատամարտը անհրաժեշտորեն պահանջում էր առնվազն 10-15 կմ երկարությամբ և 3,5-5 կմ լայնությամբ դաշտ Արածանիի աջափնյակում: Այդպիսին կարող էր լինել Բագրևանդի դաշտը: Որոշ հեղինակների մատնանշած ժամանակակից Դիադինի տարածքը ճակատամարտի նկարագրությանը ավելի քիչ է համապատասխանում:



Գծանկար 6.4. Արածանիի ճակատամարտը պատկերող գծանկարների պայմանական նշանները:



Գծանկար 6.5. Կողմերի դասավորությունը Արածանիի ճակատամարտից առաջ:

6.3.3.1. Հայկական հեծելազորի գրոհը և հռոմեացիների հակագրոհը՝ հայկական և հռոմեական հեծելազորների մարտը (գծանկար 6.6.)

Հայկական հեծելաբանակի երկու թևերը, որոնց առաջին շարքում էին գտնվում մարդերի և իբերների գնդերը, անցնում են գրոհի: Առաջին շարքերում ալացող մարդերից և իբերներից որոշ տարածության վրա շարժվում են հայկական թեթև հեծելազնդերը: Նրանց զորաշարժը ոգևորում է մարդերին և իբերներին, սակայն այս հայկական հեծելազնդերը գրոհի ժամանակ առաջին գծին չեն մոտենում և մարտի մեջ չեն մտնում:

Լուկուլլոսի հրամանով, ողջ բուն հռոմեական և դաշնակիցների հեծելազորը նետվում է հակագրոհի: Սկսվում է կարճատև թեժ հեծելամարտ: Մարդ և իբեր 6.000 հեծյալները կատաղի կռվում են Լուկուլլոսի 7.000 հեծյալների դեմ. ընդհարման ելքն էլ դեռ անորոշ էր:

Հեծելամարտի սկսվելու պահից մի առ ժամանակ հետո, Լուկուլլոսը հրամայում է հռոմեական հեծելազորին օգնության ուղարկել առաջին գծի լեգեոնի կոհորտները: Վերջիններս արագացած երթով մոտենում են հեծելամարտի դաշտին և թևից գրոհում են մարդական ու իբերական հեծելազորներին: Վերջիններս, ենթարկվելով երկկողմանի ճնշմանը, չեն դիմանում լեգեոնների հարվածին և սկսում են նահանջել:

Սկսվում է ճակատամարտի երկրորդ փուլը:



Գծանկար 6.6. Արածանիի գլխավոր ճակատամարտ. առաջին փուլ՝ հայկական հեծելազորի գրոհը և հռոմեացիների հակագրոհը. հայկական և հռոմեական հեծելազորների մարտը:

6.3.3.2. Հռոմեական կոհորտների գրոհը և հայկական հեծելազորի կեղծ փախուստը (գծանկար 6.7. և 6.8.)

Առաջին գծում գտնվող ուժեղացված լեգեոնի կոհորտների մի մասը երկու թևում էլ գրոհում էր իբերական և մարդական հեծելազնդերի վրա:

Վերջիններս հռոմեական հետևակի հետ մարտի գրեթե չեն բռնվում և դիմում են «փախուստի»: Հեծելամարտում «տաքացած» և հայերի «փախուստով» ոգևորված ամբողջ հռոմեական հեծելազորը նետվում է հայկականի ետևից: Սկսվում է «պարտված» հայկական հեծելազորի հետապնդումը:

Այդ պահին հռոմեական առաջապահ լեգեոնի առաջին գծի կոհորտները մոտենում են կենտրոնում կանգնած Միհրդատ Մեդացու կատաֆրակտոսների և նետաձիգների հեծելազնդերին: Վերջիններս, «չդիմանալով» լեգեոներների մարտական աղաղակներին, դիմում են «ամոթալի փախուստի»: Ամեն ինչ արվում է այնքան բնական, որ հռոմեացիները չեն էլ կասկածում, որ իրենց ներքաշում են ծուղակի մեջ:

Տեսնելով շքեղ զգեստները և արքայական պատվանշանները, հռոմեացիներն ընկնում են մոլորության մեջ: Նրանց թվում է, որ դա Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորն է, որը «չի դիմացել անգամ հռոմեացիների մարտական աղաղակներին» [11, 42]. Ինչքա՞ն հեշտ է հավատալ կարծեցյալին, եթե դա քեզ ցանկալի է: Սակայն, դա ոչ թե Միհրդատ Պոնտացին էր, ով ընդհանրապես չի մասնակցել այս ճակատամարտին, այլ Ատրպատականի թագավոր Միհրդատ Մեդացին, ով ճակատային գրոհի համար նախատեսված հայկական, մեդական, իբերական և մարդական հեծելազորների ընդհանուր հրամանատարն էր:

Այս ճակատամարտին Միհրդատ Եվպատորի մասնակցության մասին անտիկ ժամանակներից մինչև այսօր առաջարկված բոլոր վարկածները [11, 42] ինձ բացարձակ անհավանական են թվում՝ մեծ հույնը (Պլուտարքոսը) այստեղ ակնհայտորեն սխալվում էր: Արածանիի ճակատամարտի ժամանակ Միհրդատ Եվպատորը իր հետևակային բանակով արագացած երթերով շարժվում էր դեպի Լուկուլլոսի և Տիգրանի բանակները:



Գծանկար 6.7. Արածանիի գլխավոր ճակատամարտ. երկրորդ փուլ՝ հռոմեական կոհորտների գրոհը և հայկական հեծելազորի կեղծ փախուստը

Լուկուլլոսը ցնծում է, սպասվող ծանր հակամարտությունը անսպասելիորեն վերածվում էր թեթև ձեռք բերված «փառահեղ հաղթանակի»:

Ոգևորված հռոմեական հեծելազորը հետապնդում էր հայկականին և զգալիորեն հեռանում հետևից վազող հետևակից: Լուկուլլոսին դուր չի գալիս, որ իր հեծելազորը կտրվել էր հետևակից, սակայն ինչպես վկայում է պատերազմների պատմությունը՝ շատ դժվար է կանգնեցնել իր հաղթանակով արբեցած, հակառակորդին հետապնդող, հեծելազորին: Լուկուլլոսին մնում է իր հետևակով հետևել «հաղթանակած» հեծելազորի հետևից:

Այդ պահին Լուկուլլոսը նկատում է հռոմեական հեծելազորի վրա գրոհող հայկական ծանր հեծելազորի հսկայական զանգվածը, որն առաջնորդում էր ինքը՝ Տիգրան Մեծ արքայից արքան և, «վախենում» է [42]:

Սկսվում է ճակատամարտի վճռական՝ երրորդ փուլը:



Գծանկար 6.8. Արածանիի գլխավոր ճակատամարտ. երկրորդ փուլ՝ հռոմեական հեծելազորը հետապնդում է «փախչող» հայկական հեծելազորին:

6.3.3.3. Հայկական ծանր հեծելազորի գրոհը հռոմեական հեծելազորի վրա (գծանկար 6.9.)

Լուկուլլոսի տագնապը տեղին էր՝ նա նկատում է, թե ինչպես հայկական թեթև հեծելազորը դադարեցնում է իր կեղծ նահանջի ընթացքը և դրանով իսկ թուլացնում հետապնդող հռոմեական հեծելազորի շարժման արագությունը:

Գրեթե անշարժացած հռոմեական հեծելազորի վրա գրոհում է հայկական ծանր այրուձին, որի հարվածը հռոմեացիների համար կործանիչ է: Հայկական թեթև և ծանր հեծելազորների մեջ սեղմված հռոմեական հեծելազորին իսպառ կոտորվելուց փրկում է վրա հասած հռոմեական ծանր հետևակը: Հռոմեական հեծելազորի մնացորդները փախչում են դեպի վրա հասնող հռոմեական հետևակի շարքերը և պատսպարվում նրանց կողքին: Մարտը շարունակելու համար նրանք արդեն պիտանի չեն:

Դաշտով մեկ ցրված հռոմեական հեծելազորի մնացորդները փորձում են խույս տալ հայկական հեծելազնդերի հարվածներից և, եթե հաջողվում է խուսափել ոչնչացումից կամ գերությունից, պատսպարվում են հսկայական հռոմեական կարրեում:

Սկսվում է ճակատամարտի վերջնական՝ չորրորդ փուլը, վրա հասած հռոմեական հետևակի մարտը հայկական հեծելազորի հետ, որի անցկացման եղանակը հռոմեացիների համար խիստ անսպասելի էր:



Գծանկար 6.9. Արածանիի գլխավոր ճակատամարտ. երրորդ փուլ՝ հայկական ծանր հեծելազորի գրոհը հռոմեական հեծելազորի վրա:

6.3.3.4. Հայկական հեծելազորի արևելյան հեծելամարտը լեգեոնների դեմ (գծանկար 6.10.)

Հայկական հեծելազորը խուսափում է մարտի բռնվել հռոմեական ծանր հետևակի հետ, սակայն եռդարձին սկսում է նետահարել հռոմեացի լեգեոներներին: Նետահարության ժամանակ պարզվում է, որ հայերն օգտագործում են նոր, ծանր ծայրով նետեր, որոնք ավելի լավ են խոցում զրահները և վահանները (հետագայում կպարզվի, որ նրանք շատ վտանգավոր են նաև այն պատճառով, որ ծայրերից մեկը համեմատաբար թույլ է միացված և մնում է մարմնի մեջ, սպանելով վիրավորին): Նետահարումից հետո հայկական հեծելազնդերը հեռանում են, սակայն նրանց հաջորդում է հեծյալների հաջորդ ալիքը: Այդ ժամանակահատվածում առաջին ալիքի հեծելազնդերը կարգի են բերում իրենց շարքերը՝ գրոհը կրկնելու համար: Հռոմեացիներին հետադարձ նետահարում են հիմնականում թեթևազեն հեծելազնդերը, սակայն որոշ կատաֆրակտոսների գնդեր ևս շարունակում են նետահարումը:

Հնարավոր է, որ հայկական հեծելազնդերը փորձում են նետահարել նաև կարրեով շարված հռոմեական այլ լեգեոնները և դաշնակցային կոհորտները, որոնց մի մասը նույնպես կարող էր փորձել գրոհել հայկական հեծելազորի վրա: Հայկական հեծելազորի վրա կոհորտներով գրոհելու մի քանի ապարդյուն փորձերից հետո, երբ պարզվում է, որ հայկական հեծելազնդերի անհամեմատ ավելի մեծ արագաշարժությունը կասկածից վեր է և հռոմեական լեգեոներների հետ ձեռնամարտից խուսափելու նրանց մարտավարությունն էլ՝ արդյունավետ, Լուկուլլոսը, հայկական նետաձգության հետևանքով առաջացած կորուստներից մտահոգված, հարկադրված կանգնեցնում է մարտը:

Մարտի դաշտը մնացել է հռոմեացիների ձեռքին և նրանք չեն հապաղում հայտարարել իրենց «հաղթանակը»: Հայկական հեծելազնդերը հեռանում են, հռոմեացիների տեսանելիության դաշտում թողնելով որոշ քանակությամբ հեծելազոր, որպեսզի լարված պահեն հոգնած թշնամուն: Արածանիի ճակատամարտն ավարտվում է:



Գծանկար 6.10. Արածանիի գլխավոր ճակատամարտ. չորրորդ փուլ՝ հայկական հեծելազորի «սկյութական» մարտը լեգեոնների դեմ:

6.3.4. Արածանիի ճակատամարտի հետևանքները, նշանակությունը և կողմերի կորուստները

Լուկուլլոսը հայտարարում է իր հաղթանակը, սակայն դա տարօրինակ հաղթանակ էր: Եթե «հաղթող կողմը» հռոմեացիներն էին, ապա նրանց հաղթանակի միակ ապացույցը պետք է հանդիսանար իրենց մնացած մարտի դաշտը: Սակայն, այդ մարտադաշտը հիմնականում ծածկված էր հռոմեացիների բազմաթիվ դիակներով, որոշ հեծելամարտերի վայրերում մի քանի հարյուր մարդերով և իբերներով, մի քանի տասնյակ կամ հարյուր հայ կատաֆրակտոսներով: Նրանց կողքին ընկած էին հազարավոր զոհված հռոմեացիներ և Հռոմի դաշնակիցներ: Տիգրանը կիրառել էր նոր, Լուկուլլոսին անծանոթ մարտառճ և Տիգրանի հեծելաբանակը նահանջել էր ոչ թե պարտության, այլ մարտական առաջադրանքը լրիվ կատարելու պատճառով:

Սակայն Լուկուլլոսն իր պարտության ծավալը գնահատեց միայն հաջորդ օրը, երբ բազմաթիվ վիրավորված զինվորների մոտ հայկական նետերի ծայրերից մեկը հնարավոր չեղավ հանել վիրավորվածների մարմնից, և դա դարձավ ծանր տառապանքների, ոմանց համար էլ՝ մահվան պատճառը:

Հռոմեացիները ցնցված էին, նրանց մարտական ոգին՝ քայքայված: Դիոն Կասսիոսը փայլուն է նկարագրում ամբողջ հռոմեական բանակը համակած հուսահատության ու բարոյալքության մթնոլորտը: Միամտություն կլիներ մտածել, որ հռոմեացիների համար տրամադրության նման փոփոխությունը միայն հասարակ մարտական անհաջողության հետևանք էր: Հռոմեական բանակը բաղկացած էր շատ քաջ և համառ մարտիկներից և գերազանց պատրաստված սպաներից: Նրանց չէր կարող այդքան ընկճել նույնիսկ սովորական պարտությունը ճակատամարտում: Հին Հռոմի ռազմական պատմությունը լի է օրինակներով, թե ինչպես մեկ-երկու բավական ծանր պարտությունից հետո հռոմեացիները զրոհում էին հանգստացած ախոյանի վրա, նրանցից խլելով փափագած հաղթանակը:

Երկու ամիս Տուրուբերանում տևած ռազմական գործողությունները մեծ լարում էին պահանջում հակամարտող կողմերից: Հռոմեացիները գերազանց անցկացրին անթիվ մանր ճակատամարտերը և զորաշարժերը: Կռվելով հայերի նման ուժեղ և համառ հակառակորդի դեմ, նրանք հույս ունեին ջախջախել նրանց խոշոր ճակատամարտում, իսկ հետո գրավել հայոց մայրաքաղաքը:

Արածանիի ճակատամարտը մեկ հարվածով վերջ դրեց հռոմեացիների սպասումներին՝ ոչ միայն սպաներին, նաև հասարակ զինվորներին հասկանալի դարձավ հաղթանակի անհնարինությունը: Հռոմեական ռազմական ահեղ մեքենայի մարտական ոգին կոտրված էր: Նա դեռ ընդունակ էր հզոր՝ մահացու հարվածներ հասցնել, սակայն նա այլևս Հայկական տերության ճակատագրում որոշիչ դերակատար չէր: Պատերազմի ընթացքում առաջացավ խախուտ հավասարակշռություն, որը տևեց միայն երեք օր՝ երրորդ օրվա վերջին վրա հասավ Միհրդատ Պոնտացու հրամանատարության տակ գտնվող հայկական հետևակային բանակը: Հայոց ռազմական գերակշռությունը դարձավ անվիճելի, և Լուկուլլոսը ստիպված էր բռնել նահանջի ճանապարհը:

Արածանիի ճակատամարտում կրած կորուստների մասին աղբյուրներում կոնկրետ թվեր չեն պահպանվել: Պլուտարքոսը նշում է, թե իբր հայերը ավելի քիչ կորուստ են ունեցել, քան Տիգրանակերտի ճակատամարտում, սակայն զոհվել են ավելի շատ երևելիներ: Այս պնդումն ակնհայտորեն քարոզչական բնույթի է և ճակատամարտի ընթացքի հետ ոչ մի կապ չունի: Դիոն Կասսիոսի ճակատամարտի նկարագրությունը թույլ է տալիս որոշ ենթադրություններ անել հնարավոր կորուստների մասին:

Հայկական հեծելաբանակում ամենաշատ կորուստներ կրեցին մարդերի և իբերների թեթև հեծելազնդերը, որոնց վրա ընկավ հռոմեական հեծելազորի հիմնական հարվածը: Իրենց կորուստի մեծ մասը նրանք ունեցան կեղծ նահանջ – փախուստի ժամանակ: Մնացած հեծելազնդերը մարտին գրեթե չէին մասնակցել և կարող էին միայն պատահական կորուստներ ունենալ: Հայկական թեթև հեծելազորի ընդհանուր կորուստներն առավելագույնը կարող էին հասնել 1.000 հեծելամարտիկի, որոնց մեծ մասը վերը նշված իբերներն ու մարդերն էին:

Այժմ պարզենք հայկական և մեդական կատաֆրակտոսնե-

րի գնդերի հնարավոր կորուստները: Մարտի ընթացքը՝ հարվածը հակառակորդի խախտված հեծելազորի վրա, թվային մեծ գերակշռությունը, հռոմեական հետևակի հետ մարտի չբռնվելու ռազմավարությունը և, վերջապես, Տիգրան Մեծի ու Միհրդատ Մեդացու հմուտ ղեկավարությունը թույլ է տալիս մտածել, որ ծանր հեծելազորի կորուստները չեն անցել մի քանի հարյուրից, որի մեջ ներառում ենք նաև հռոմեական թեթև հետևակի կողմից հեռվից խոցված զինվորներին: Այստեղ ընդունում ենք կորուստների հնարավոր մեծ, գրեթե անհավանական թիվը՝ 200-300 սպանված կատաֆրակտոսներ (ծայրահեղ թիվն 500-ն է), որով հայկական հեծելաբանակի ընդհանուր կորուստները հասնում են 1.2-1.500 զինվորի:

Պլուտարքոսի հաղորդումը զոհված հայ մեծաքանակ ազնվականների մասին հիմնված էր կատաֆրակտոսների հանդերձանքով բոլոր զոհված մարտիկներին ազնվական ծագում վերագրելուն:

Հռոմեական բանակի կորուստներն անհամեմատ ծանր էին: Հսկայական կորուստներ էր կրել Լուկուլլոսի հեծելազորը, ոչ պակաս, քան իր կազմի կեսը՝ մոտ 3.500 հեծելամարտիկ: Սեղմված լինելով հայկական թեթև և ծանր հեծելազնդերի միջև, ենթարկվելով հայկական և մեդական կատաֆրակտոսների կործանիչ հարվածին կիսաշրջափակված վիճակում, նրանք կարող էին իսպառ ոչնչացվել, եթե չլինեին առաջին գծի լեգեոնի կոհորտների և թեթևազեների սրընթաց գործողությունները: Հայկական հեծյալները լեգեոներների գրոհը և ձեռնամարտի նետվելը չընդունեցին և նահանջեցին: Նահանջելիս հայկական հեծելազորը կիրառեց ետադարձ նետահարումը, ինչը պետք է մեծ կորուստներ պատճառեր լեգեոներներին և, հատկապես, պաշտպանական զրահներից զրկված թեթևազեներին: Ամենակոպիտ հաշվարկներով կարելի է համարել, որ լեգեոները և թեթևազեները կորցրին մեկ հազարական զինվոր, որոնց անհրաժեշտ է գումարել հայկական նետերից ստացած վերքերից մահացած ևս առնվազն 500 զինվոր: Այդպիսով, հռոմեական բանակի ընդհանուր կորուստը Արածանիի ճակատամարտում հասավ 6.000 զինվորի, որոնցից գրեթե 1.000՝ լեգեոներ: Մեծ էր նաև վիրավորների քանակը:

Կարծում եմ, որ անհաջող ճակատամարտը կարող էր որոշ քանակությամբ դասալիքներ տալ հռոմեական բանակին, հիմնականում օժանդակ և գումակային զորամասերից՝ մոտ 500 հոգի: Այստեղ ծառայում էին կորդվացիք, նաև փոքրասիացիներ, որոնց հնարավոր էր դասալքության մղել մեղմ վերաբերմունքի խոստումով:

Քննենք ճակատամարտի հետևանքները կողմերի համար:

> Ճակատամարտից մի քանի օր հետո, մարտական ոգու անկման, մեծաթիվ վիրավորների և պարենավորման վատթարացման պատճառով Լուկուլլոսը նահանջում է [51, 29, 34]:
>
> Նահանջի գլխավոր պատճառը անտիկ հռոմեասեր պատմիչներից ոչ մեկը չի ակնարկում. վրա է հասնում Միհրդատի ղեկավարած հայկական հետևակային բանակը: Հռոմեական բանակի դանդաղած երթը անխուսափելի էր դարձնում Արածանիի հովտի մղձավանջի կրկնությունը, մի էական տարբերությամբ՝ արդեն ուժեղ՝ հարձակվող կողմը հայերն էին:

Պլուտարքոսն իր հերոսի այդ քայլը արդարացնում է վաղ վրա հասած ձմռան վախով, այն դեպքում, երբ հռոմեացիների ճանապարհին հանդիպած ցանկացած գյուղացի կբացահայտեր սեպտեմբերի կեսերին սարերի փեշերին երևացող ձյան հալվելու անխուսափելիությունը: Կա ևս մի կարևորագույն պատճառ, որը նշում էին թե Պլուտարքոսը, թե Դիոն Կասսիոսը՝ դա հռոմեացիների մարտական ոգու խիստ անկումն էր: Հռոմեական լեգեոներները, որոնք իրենց պրոֆեսիոնալիզմով և արիությամբ կարող էին սրբագրել նույնիսկ իրենց զորավարների սխալները (Հին աշխարհի ռազմական պատմության մասնագետների վերջին տարիներին անցկացված վերլուծությունը անողոք է նույնիսկ Հուլիոս Կեսարի նկատմամբ՝ եթե չլիներ փառաբանված X լեգեոնի զինվորների արտակարգ արհեստավարժությունը և արիությունը, ապա մ.թ.ա. 47 թ. Զելայի ճակատամարտում Կեսարը կարող էր Միհրդատի որդի Փառնակեսից ծանր պարտություն կրել [259]), ծանր դաս ստացան, որի հետևանքով զգալիորեն ընկավ կարգապահությունը: Կատաֆրակտոսները հանդիսացան այն զորատեսակը, որոնք հետագայում թույլ տվեցին Հայաստանին և, հատկապես, Իրանին մշտապես դիմակայել Հռոմին:

Արածանիի ճակատամարտից սկսած ռազմավարական նախաձեռնությունն անվերապահորեն անցնում է Տիգրանի

ձեռքը: Հռոմեական բանակի վիճակը զգալիորեն վատանում է, և Լուկուլլոսն այստեղ հիմնականում սահմանափակվում է պաշտպանական գործողություններով: Մեկ անհաջող ճակատամարտը, որտեղ Լուկուլլոսի զինվորների միակ մխիթարանքը կարող էր լինել սակավաթիվ զոհված հայ մարտիկների դիակապտությունը, արմատապես փոխեց պատերազմի ընթացքը: Հռոմեացիք չէին պարտվել բուն ճակատամարտում, սակայն այս ճակատամարտում իրենց մարտառճով հաղթել էին հայերը: Ըստ Էության, հռոմեացիներն Արածանիի ճակատամարտում պարտվեցին ճակատամարտից միայն մի քանի օր հետո: Արածանիի ափին, Հայաստանի խորքում, հռոմեական բանակի վրա կախվեց իսպառ ոչնչանալու վտանգը: Արածանիից հետո հռոմեական բանակը պայքարեց այլևս ոչ թե Հայաստանին տիրանալու, այլ պարզապես չկործանվելու համար: Տիգրանը վերականգնեց մեծ զորավարի իր ձիրքը: Հայկական կայսրության բանակը անցավ հակառակորդի հետապնդմանը:

Արածանիի ճակատամարտը մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հին աշխարհի ռազմական արվեստի զարգացման տեսանկյունից: Աշխարհի լավագույն զրահապատ այրուձին՝ հայկական կատաֆրակտոսները (86-84 թթ. հաղթական մարտերը պարթևների հետ թույլ են տալիս վստահաբար հանգել այդպիսի եզրակացության) իրենց ուրույն ոճով [33, 34, 291] մարտնչում են աշխարհի լավագույն ծանր հետևակի՝ Լուկուլլոսի վետերանների լեգեոնների դեմ [83, 100, 281, 291]: Հայկական զրահապատ այրուձին կիրառում է Արևելքում՝ պարթևասարմատա-հայկական միջավայրում ծնված ծանր և միջին հետևակի (հոպլիտների փաղանգներ, պելտաստներ, մակեդոնական փաղանգ) դեմ ընթացքից ետադարձ նետահարության հեռահարային մարտառճը: Այս մարտառճը զարգացրել և ամենաբարձր մակարդակի էին հասցրել առաջին հերթին պարթևները: Տիգրանը պարթևական արքունիքում պատանդ եղած ժամանակ շատ լավ էր ուսումնասիրել այն, որի շնորհիվ 86-84 թթ. հայկական այրուձիուն հաջողվեց ընկճել պարթևականին: Կատաֆրակտոսների երկրորդ հնարքը՝ նիզակներով հարված և հետագա ձեռնամարտ՝ սուսերա- կամ թրամարտ Արածանիի ճակատամարտում չի կիրառվել: Չի բացառվում, որ հռոմեական հետևակին լարվածության մեջ պահելու համար այդպիսի

զրոհի իմիտացիա ևս կատարվել է:

Հռոմեացիները ճակատամարտում չէին կիրառել իրենց դաշտային հրետանին՝ կատապուլտները, բալիստները, օնագրերը և այլն [65, 88, 102, 132, 200]: Այդպիսի վկայություններ մենք չունենք [42, 51, 59, 238, 281]: Կարելի է մտածել, որ այդպիսի հեռահար միջոցներով հնարավոր կլիներ որոշակիորեն վնասել հայկական զրահապատ այրուձիու հոծ շարքերը: Այդպիսի տեղեկությունների բացակայությունը կողմնակիորեն վկայում է այն մասին, որ 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ժամանակ հռոմեացիները Հայաստանում արշավելիս նման դաշտային տեխնիկա չեն ունեցել: Ընդհանրապես, հռոմեացիների կողմից դաշտային «հրետանու» լայն կիրառումը սկսվեց 69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմից միայն մոտ երկու տասնամյակ հետո:

69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմի ընթացքում, 68-ի սեպտեմբերին՝ Արածանիի ափին, Տիգրանը առաջին անգամ վճռականորեն դիմակայեց Լուկուլլոսին՝ լավագույն հռոմեական զորավարներից մեկին, տակտիկապես, իսկ հետագա գործողությունները հաստատեցին նաև Լուկուլլոսի հանդեպ նրա ակնհայտ ռազմավարական գերազանցությունը:

Հռոմեացիները Արածանիի ճակատամարտից դաս չքաղեցին: 15 տարի հետո Խառանի մոտ նույն մարտառճով պարթև զորավար Սուրենը գլխովին կործանեց Կրասսոսի ավելի քան 50.000-ոց բանակը:

Ռազմական արվեստի պատմության օտարազգի մասնագետները պարթև զորավար Սուրենին են վերագրում հռոմեական լեգեոնների դեմ պայքարի այս գլուխը [71, 79, 103, 190, 199, 220, 315]: Սակայն իրականում մեկ ուրիշ հանճարեղ է այն մտահղացել և իրագործել: Սուրեն պարթևը միայն երկրորդն էր [21, 34, 38, 291]:

Խազանովը [239-241] իրավացիորեն գրում է, որ ծանր հեծելազորը՝ կատաֆրակտոսները, զորքերի այն միակ տեսակն էին, որոնք կարող էին արդյունավետ հակադրվել լեգեոնին, ընդ որում ոչ թե պատահական, այլ՝ մշտական: Եթե լեգեոնը անտիկ ռազմական մտքի բարձրագույն նվաճումն էր հետևակային մարտավարությունում, ապա կատաֆրակտոսները նույնն էին հեծելազորայինում [240, 291]:

Պարթևա-հայկական ռազմական մարտավարությունը հաղթեց հռոմեականին: II – IV դարերում հռոմեացիները հարկադրված եղան կազմակերպել նմանատիպ ծանր հեծելազոր: Այդ հակամարտության հաղթական սկիզբը դրվեց Տիգրանի կերտած Արածանիի ճակատամարտում:

6.4.Հռոմեական բանակի նահանջը դեպի հարավ՝ Աղձնիք

Պատերազմները՝ միայն հակառակորդների միջև ընթացող տարբեր զինված բախումները կամ մեծ ճակատամարտերը չեն: Կարևորագույն այլ բաղկացուցիչների հետ միասին, հսկայական նշանակություն ունեն մարտնչող բանակների արշավները: Հսկայական մարդկային ու կենդանիների զանգվածների, նաև գույքի տեղափոխումները հարյուրավոր, երբեմն հազարավոր մղոն հեռավորության վրա պատերազմող կողմերից պահանջում են հսկայական ջանքեր և համապատասխան կազմակերպվածության աստիճան: Եթե այդպիսի արշավները կատարվում են հակառակորդի հետ անմիջական մարտական շփման պայմաններում, ապա դժվարությունները զգալիորեն ավելանում են: 69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմի ընթացքում մեր հետազոտման համար հետաքրքիր են նաև այս բազմաթիվ արշավները, որոնք իրենց դժվարությամբ երբեմն չեն զիջում զորաշարժերից և զինված ընդհարումներից:

6.4.1.Հռոմեական բանակի նահանջի պատճառները և հնարավոր ուղիները

Արածանիի ճակատամարտը Լուկուլլոսին ստիպեց արմատապես վերանայել պատերազմի իր ծրագիրը: Արշավել Արտաշատի վրա այլևս անհնար էր, այդպիսի արկածախնդրությունը կարող էր վերջանալ հռոմեական բանակի կործանիչ պարտությամբ հայոց մայրաքաղաքի պարիսպների տակ և նրա իսպառ ոչնչացմամբ: Սակայն եթե նա կարողանար վերադառնալ Հայաստանի հարավ և իր ձեռքում պահել այն, հատկապես Ծոփքը

և Աղձնիքը, ապա նա կարող էր դեռ շատ անհանգստություններ պատճառել Տիգրանին:

Նույնիսկ Արածանիի ճակատամարտից հետո հռոմեական բանակը իրենից դեռ պատկառելի ուժ էր ներկայացնում: Նրա կազմում կար մոտ 18.000 հռոմեացի և իտալիկյան զինվոր՝

- 16.000 լեգեոներ,
- 500 թեթևազեն հետևակ և
- 1.500 հեծյալ:

(Սեքստիլիոսի և Մուրենայի լեգեոններում կար մոտավորապես 4.500-ական լեգեոներ, իսկ երկու փիմբրիական լեգեոններում՝ 3.500-ական):

Հռոմեական դաշնակիցները ունեին մոտ 23.500 զինվոր.

- 18.000 ծանրազեն հետևակ,
- 1.500 թեթևազեն հետևակ,
- 1.500 հեծյալ և
- 2.500 օժանդակ զորք՝ պաշարողական և գումակային զորամասեր:

Դաշնակիցների ծանր հետևակը բաժանված էր 4 մասի՝ ամեն մեկը մոտ 4.500 զինվոր, որոնք կցված էին իրենց լեգեոններին:

Այսպիսով, նահանջի պահին Լուկուլլոսի հռոմեական բանակն իր կազմում ուներ մոտ 41.500 զինվոր և դեռ շատ ուժեղ հակառակորդ էր:

Աղձնիք նահանջել իր իսկ ավերած հին ճանապարհով Լուկուլլոսը չէր կարող՝ թալանի ենթարկված երկրամասն անընդունակ էր անհրաժեշտ քանակով մթերք մատակարարել: Անհրաժեշտ էր ընտրել այնպիսի ճանապարհ, որը պետք է բավարարեր մի շարք պահանջների.

1.հռոմեական բանակը կարողանար թալանով հայթայթել իր մթերքը,
2.տեղանքը հնարավորին չափ խոչընդոտեր հայկական մեծաթիվ հեծելազորի գործողություններին,
3.ճանապարհը դեպի Հայաստանի հարավ՝ Աղձնիք լիներ հնարավորին չափ կարճ. եթե հռոմեական բանակը ուշ հասներ Հայկական Տավրոսի լեռնանցքներին, ապա ձմեռային ցրտի և տեղումների պատճառով նրանք արդեն կարող էին փակ լինել,
4.Հայկական Տավրոսի լեռնանցքը համեմատաբար մոտ լիներ

բարեկամական Կորդուքին, որպեսզի Հարավային Հայաստանում գտնվող փոքրաթիվ հռոմեական ստորաբաժանումների և կորդվաց օժանդակ զորքը կարողանար նախապես զբաղեցնել նրանց:

Լուկուլլոսը գիտեր, որ նահանջը դեպի Հայկական Տավրոսի լեռնաշղթան խիստ դժվարացած է լինելու հայկական բանակների ակտիվ գործողությունների պատճառով:

Ինձ թվում է, որ ժամանակակից մի շարք հեղինակների կողմից առաջարկվածներից [11, 29] ամենաընդունելի երթուղին Բագրևանդի դաշտից դեպի Վանա լճի արևմտյան ափ՝ Խլաթ և Բաղեշ տանող ճանապարհներն էին, որից հետո մոտակա լեռնանցքով կարելի էր անցնել Աղձնիք:

Հռոմեական բանակի այս նահանջի մասին Պլուտարքոսը քար լռություն է պահպանում, նա ոչ մի գովասանական խոսք չի ասում իր հերոսի մասին: Մենք հարկադրված ենք այդ «անարդարությունը» շտկել և գովասանական մի քանի խոսք ասել հռոմեացի մեծ զորավարին:

Լուկուլլոսի արտակարգ զորավարական տաղանդի վառ վկայություններն են ոչ միայն նրա շահած բազմաթիվ ճակատամարտերը, այլև այս չափազանց ծանր նահանջի բարեհաջող ավարտը: Հռոմեական բանակի խիզախությունը և արհեստավարժությունը բավարար պայման չէին հայաստանյան այս նահանջի ժամանակ փրկվելու համար. նրանց հետապնդող հայկական բանակը ահեղ հակառակորդ էր: Նման վիճակում Մուրենայի կամ Տրիարիոսի ղեկավարությամբ նույն հռոմեական բանակը վստահաբար կկործանվեր և Հայաստանից դուրս չէր պրծնի ոչ մի հռոմեացի, ինչպես իր ժամանակին կործանվեց և իսպառ ոչնչացվեց Հայաստանում Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Մենոնի զորաբանակը [55, 291]:

Նահանջի երթուղին մանրամասն քննել են Կ. Էքհարտը և Հ. Մանանդյանը: Որևէ բան ավելացնել նրանց ենթադրություններին և ստուգաբանություններին՝ առանձ նոր տվյալներ ներգրավելու դժվար գործ է:

Բագրևանդի դաշտից մինչև Հայկական Տավրոսի նախալեռները՝ մոտ 55-73 փարսախ (300-400 կմ), հռոմեական բանակն անցավ մոտ մեկ ամսում, որից հետո ևս մեկ շաբաթում

68 թ. հոկտեմբերի կեսին կամ վերջին օրերին մտավ Աղձնիք:

Նահանջող հռոմեական բանակի ընթացքն անհամեմատ ավելի արագ էր, քան ամառային հարձակման ժամանակ: Ամառներ Լուկուլլոսի զինվորները լավ հանգստացած էին, նպատակառղղված դեպի հայկական զորքերի վերջնական ջախջախումը ու դրանից հետո՝ Հայաստանի մայրաքաղաքի գրավումը և թալանը, իսկ աշնանը միակ ցանկությունը հայոց լեռնաշխարհից կենդանի դուրս պրծնելն էր: Ամառներ Լուկուլլոսը երկու երկար ու ձիգ ամիս ծախսեց, փորձելով թակարդի մեջ գցել և ջախջախել հայկական բանակներից որևիցե մեկը:

Հռոմեական բանակի նահանջի սրընթացությունը կոտրում էին հայկական բանակի ծավալած ռազմական գործողությունները, որոնք խիստ խոչընդոտում էին պարենի հայթայթումը այն դեպքում, երբ հայկական բանակները կանոնավոր պարենավորվում էին Հայաստանի այլ վայրերից ուղարկված մթերքով: Հռոմեական բանակը վերածվեց կիսաքաղցած մարդկանց հսկայական զանգվածի: Տիգրանը և Միհրդատը լավ էին գիտակցում այս աստիճանի նեղության հասած թշնամուց եկող վտանգի աստիճանը:

Առաջիկայում Տավրոսի լեռնանցքներով մեծ դժվարություններով անցնելով հարավ, հռոմեացիները դեռ հարկադրված թողնելու էին գումակում պահ դրած իրենց ավարի մի զգալի մաս:

68 թ. սեպտեմբերի վերջերից ռազմական գործողությունների ծավալը, ըստ երևույթին, չնվազեց և դրանք նույնպես ընթացան շատ լարված պայքարում: Հարձակվող կողմն արդեն հիմնականում հայերն էին, որոնց երկու բանակները փորձում էին ծուղակի մեջ գցել ու շրջապատել հռոմեական բանակը: Վերջինս, վարպետորեն պաշտպանվելով ուժեղ հակառակորդից, նահանջում էր հարավ: Միհրդատի ղեկավարած բանակի հայկական ծանր հետևակը դեռ զգուշանում էր բաց դաշտում մարտի բռնվելու հռոմեական լեգեոնների հետ, սակայն վերջին ամիսների մարտերը խիստ բարձրացրել էին նրա մարտունակությունը: Վերջապես, 68 թ. հոկտեմբերի վերջին Աղձնիքում տեղի ունեցավ 69 – 67 թթ. հայ-հռոմեական պատերազմի երրորդ գլխավոր ճակատամարտը:

Այս ճակատամարտի մասին առաջին անգամ խոսեց Ռու-

բեն Մանասերյանը, հիմնվելով Ապպիանոսից մեզ հասած միակ, բայց շատ կարևոր վկայության վրա [34]: Այս ճակատամարտը վճռականապես հաստատեց հայկական բանակի գերազանցությունը և թույլ տվեց Տիգրանին Պոնտոսում անցնել հակահարձակմանը:

6.4.2.Հայկական և հռոմեական բանակների կորուստները և կազմը երրորդ՝ Աղձնիքի գլխավոր ճակատամարտի նախօրեին

Արածանիի ճակատամարտից հետո Բագրևանդից մինչև Աղձնիք նահանջելու ճանապարհին հռոմեացիները խոշոր կորուստներ ունեցան: Մարտական գործողությունների այն տարբերակը, որ ընտրել էին Տիգրանն ու Միհրդատը շատ հոգնեցուցիչ էր երկու կողմերի համար, իսկ հռոմեացիների համար պարենի մշտական պակասը հարկադրում էր նրանց, գյուղերը թալանելիս, անընդհատ մարտի բռնվել հայկական ստորաբաժանումների հետ, անտեսելով դարաններից ու ծուղակներից եկող վտանգները: Այդ պատճառով հռոմեական բանակի համար հայթայթված պարենի համար նրանք առատորեն վճարում էին հռոմեական զինվորների և իրենց դաշնակիցների արյունով: Եթե դրան գումարենք հայկական զորքերի հրահրած հաճախակի բռնկվող մարտ ու մեծ ընդհարումները, որոնցից որոշները իսկական ճակատամարտերի էին վերածվում, ապա պետք է ընդունենք, որ հռոմեացիների կորուստներն իսկապես մեծ էին: Ըստ իս այս, հռոմեացիների համար դժվարագույն, նահանջը նրանցից խլեց նվազագույնը մոտ 5.000 զինվորի կյանք: Գիտակցելով մեր հաշվարկների ծայրահեղ հարաբերականությունը, այնուամենայնիվ, փորձենք մեկ անգամ ևս կազմել հռոմեական բանակի հնարավոր կորուստների ցանկը:

Բուն հռոմեական բանակ.

- 16.000 լեգեոներներից՝ մոտ 500-ը, մնաց՝ 15.500-ը,
- 500 թեթևազեներից՝ գրեթե կեսը, մնաց՝ մոտ 300-ը,
- 1.500 հեծյալներից՝ մոտ 500, մնաց՝ մոտ 1.000-ը,
- մոտ 200 հոգի գումակի զինվորներից:

Այսպիսով, բուն հռոմեացիները 18.000-ից կորցրին մոտ 1.500-ին և նվազեցին մինչև 16.500-ը: Լեգեոներների կորուստը

մեծ էր հիմնականում նոր հավաքագրված լեգեոններում, փիմբրիական վետերանները կրեցին անհամեմատ ավելի քիչ կորուստ: Այդպիսով, մենք կարող ենք ենթադրել, որ նահանջից հետո Մեքստիլիոսի և Մուրենայի լեգեոններում կար մոտ 4.250-ական լեգեոներ, իսկ երկու փիմբրիական լեգեոններում՝ 3.500-ականից մի փոքր պակաս:

Հռոմեական դաշնակիցների կորուստներն անհամեմատ շատ էին: Նախ՝ նրանք չունեին հռոմեական լեգեոնների հոյակապ մարզվածությունն ու կարգապահությունը և, երկրորդ (ըստ երևույթին՝ ամենակարևորը)՝ Լուկուլլոսը նրանց անհամեմատ պակաս էր խնայում, քան հռոմեական զորամասերը: Հռոմեական բանակի դաշնակիցների հնարավոր կորուստների ցանկը կարելի է պատկերացնել հետևյալ կերպ.

- 18.000 ծանրազեն հետևակից՝ մոտ 2.000, մնաց՝ 16.000,
- 1.500 թեթևազեն հետևակից՝ մոտ 500, մնաց՝ 1.000,
- 1.500 հեծյալից՝ մոտ 500, մնաց մոտ 1.000 զինվոր և
- 2.500 օժանդակ զորքից (պաշարողական և գումակային զորամասեր)՝ մոտ 1.000, մնաց՝ 1.500:

Այսպիսով, դաշնակիցների մոտ 23.500 զինվորից սպանվեց մոտ 4.000-ը և Աղձնիք հասան մոտ 19.500-ը (դաշնակիցների ծանր հետևակի կոհորտները բաժանված էին 4 մասի՝ մոտավորապես 4.000-ական զինվոր և կցված իրենց լեգեոններին):

Մենք պարզեցինք, որ Աղձնիք նահանջած Լուկուլլոսի բանակը իր կազմում կարող էր ունենալ մոտ 36.000 զինվոր և չնայած հոգնած, սակայն դեռ ուժեղ հակառակորդ էր:

Ի՞նչ համալրում կարող էր ստանալ Լուկուլլոսի բանակը Աղձնիքում: Անշուշտ, Աղձնիքում ու Կորդուքում, հնարավոր է նաև Տմորիքում տեղակայված լինեին հռոմեական դաշնակիցների փոքրիկ ջոկատներ, ընդհանուր թվով ոչ ավել, քան 1.000 զինվոր: Կորդվացիք, իրենց դավաճանության համար վախենալով Տիգրանի վրեժխնդրությունից, հնարավոր է ուղարկեին օժանդակ զորք: Լուկուլլոսը կորդվացիներից առաջին հերթին պետք է պահանջեր հեծելազոր ու նետաձիգներ: Եթե համարենք, որ երկու զորատեսակից էլ կորդվացիք ուղարկել էին 1.000 զինվոր, ընդամենը՝ 2.000 օժանդակ զորք Կորդուքից, ապա ստանում ենք Լուկուլլոսի բանակի հնարավոր համալրման կազմը.

- 1.000 ծանր հետևակ,

- 1.000 թեթև հետևակ,
- 1.000 թեթև հեծելազոր,

ընդամենը՝ 3.000 զինվոր:

Հռոմեական բանակը պարենի կարիք ուներ, որը հնարավոր էր ուղարկել Կորդուքից ևս մոտ 1.000 գումակի պահապան զինվորներով: Այսպիսով, Լուկուլլոսն Աղձնիքում կարող էր ստանալ մոտ 4.000 զինվոր համալրում, որից հետո հռոմեական բանակի թիվը կարող էր հասնել 40.000-ի:

Այժմ փորձենք պարզել հայկական բանակի հնարավոր կորուստները:

Հնարավոր հայկական կորուստները Արածանիի հովտի կռիվներում և Արածանիի ճակատամարտում միասին կազմում էին մոտ.

- 2.500 հեծելազոր,
- 1.000 թեթևազեներ և
- 5-6.000 ծանրազեններ, ընդամենը՝ 8,5--9.500 զինվոր:

Եթե գումարենք հիվանդներին և այլ պատճառներով բացակայողներին՝ կորստի թիվը մի փոքր ավելանում է:

Աղձնիքում, երրորդ գլխավոր ճակատամարտից առաջ Տիգրանի հեծելաբանակը մոտ 28.000 հեծյալ էր, իսկ Միհրդատի ղեկավարության տակ գտնվող հայկական հետևակային բանակը՝ մոտ 38.000 զինվոր: Իրականում Տիգրանի հեծելաբանակի կազմում այլևս չեն հիշվում մարդերն ու իբերները և մենք կարող ենք ենթադրել, որ հայկական բանակի կազմում նրանք այլևս չէին մարտնչում: Այդ դեպքում Տիգրանի հեծելաբանակում կար մոտավորապես 25.000 զինվոր: Հռոմեացիների նահանջից հետո Միհրդատի հրամանատարության տակ գտնվող հետևակային բանակը կարող էր համալրում ստանալ նաև Արտաշատի կայազորից՝ այնտեղ գտնվող լեգեոն-զորաբանակից մոտ 2.000 ծանրազեն զինվոր: Այս զորամիավորումը նույնպես կարիք ուներ մարտում թրծվելու, իսկ հռոմեացիները լավ ուսուցիչ էին: Այս հաշվարկով, Միհրդատն ուներ մոտ 40.000 զինվոր:

Մեծ դժվարություններով անցնելով Հայկական Տավրոսի կիրճերով, հակառակորդները հայտնվեցին Աղձնիքում, որտեղ Լուկուլլոսի 40.000-ոց բանակը պետք է դիմակայեր հայկական երկու՝ Տիգրանի 25.000 հեծյալ ու Միհրդատի 40.000 հետևակային բանակների հարվածներին: Բայց այդ էլ բավական չէր. Հայ-

կական Տավրոսի լեռնանցքներով Աղձնիք էր մտել նաև Աղձնիքի բդեշխի՝ Մանկայոսի հետևակային զորաբանակը, որի թիվը մոտավորապես 4.5-5.000 զինվոր էր (մեկական գունդ նիզակակիր ու սակրավոր, և երեք գունդ թեթև հետևակ):

Հայկական բանակի հնարավոր կազմը երրորդ՝ Աղձնիքի ճակատամարտում.

Տիգրանի հեծելաբանակ՝ 25.000 մարտիկ,

- կատաֆրակտոսներ՝ 10.000 , այդ թվում մեդական՝ 2.500,
- թեթև հեծելազոր՝ 14.000, այդ թվում մեդական՝ 2.500,
- օժանդակ զորք՝ 1.000:

Միհրդատի հետևակային բանակ.

- ծանր հետևակ՝ 26.000,
- թեթև հետևակ՝ 4.000,
- թեթև հեծելազոր 7.000, այդ թվում պոնտական՝ 3.500,
- օժանդակ զորք՝ 3.000:

Մանկայոսի զորաբանակը կարող էր ուժեղացնել Միհրդատի հետևակային բանակը, միասին 38.000 հետևակ ու 7.000 հեծյալ, ընդամենը՝ 45.000 զինվոր: Տիգրանի և Միհրդատի բանակների ընդհանուր թիվը հասնում էր 70.000 զինվորի՝ 31.000 հեծելազոր և 39.000 հետևակային:

6.5. Աղձնիքի գլխավոր ճակատամարտը

1987 թ.-ին Ռուբեն Մանասերյանն իր հրապարակած մենագրությունում [34] առաջին անգամ խոսեց այն մասին, որ հռոմեական և հայկական զորքերի միջև Հայաստանի տարածքում տեղի է ունեցել ոչ թե երկու, այլ երեք գլխավոր ճակատամարտ: Նա մատնանշեց, որ Պլուտարքոսի, Դիոն Կասսիոսի մի կողմից և Ապպիանոսի հաղորդումների մեջ՝ մյուս կողմից կա մի ակնհայտ հակասություն, և վերջինիս հաղորդումը Արածանիի ճակատամարտին վերաբերվել չի կարող [42, 51, 59]:

Պլուտարքոսը և Դիոն Կասսիոսը հաղորդում են մի ճակատամարտի մասին, որը.

-տեղի էր ունեցել 68 թ. սեպտեմբերի կեսերին (մի քանի օր հետո աշնանային գիշերահավասարն էր),

-հայերի կողմից ճակատամարտին մասնակցել էր բացա-

ռապես հեծելազորը,
-Դիոն Կասսիոսի վկայությունով Միհրդատը ճակատամարտին չի մասնակցել, իսկ Պլուտարքոսի հաղորդումը մասնակցության մասին խիստ կասկածելի է՝ նա ակնհայտորեն Միհրդատներից Մեդացուն շփոթել է Պոնտացու հետ,
-հայերի և հռոմեացիների միջև տեղի է ունեցել հեծելամարտ, որտեղ ըստ Դիոն Կասսիոսի հռոմեացիները պարտվել են,
-հայերի վրա գրոհի գնացած հռոմեական լեգեոնների հետ հայերը ձեռնամարտի չեն բռնվել, նահանջել են հետադարձ նետահարելով հռոմեացիներին,
-ճակատամարտի դաշտը ճակատամարտի վերջում մնացել է հռոմեացիներին:

Ապպիանոսի ճակատամարտի նկարագրության մեջ առանձնացնենք հետևյալ կետերը.
-Ճակատամարտը տեղի էր ունեցել 68 թ. ուշ աշնանը,
-հայերի կողմից մասնակցել էր և՛ հեծելազորը, և՛ հետևակը,
-Միհրդատը մասնակցել էր ճակատամարտին և ղեկավարել էր հայկական հետևակի գործողությունները,
-հայերի և հռոմեացիների միջև տեղի էր ունեցել և՛ հեծելամարտ, և՛ հետևակային մարտ,
-հայկական հետևակը ձեռնամարտի էր բռնվել հռոմեական հետևակի հետ իր ճամբարի մատույցներում,
-ճակատամարտի վերջում հռոմեացիները նահանջել էին իրենց ամրացված ճամբարը, որտեղից էլ հետ էին մղում հայկական հետևակի և հեծելազորի գրոհները,
-ճակատամարտի դաշտը մնացել էր հայերին:

Այս ամենը թույլ տվեց Ռ. Մանասերյանին պնդել, որ 68թ.-ի վերջին՝ ուշ աշնանը, Հայաստանի հարավում Տիգրանի և Լուկուլլոսի բանակների միջև տեղի էր ունեցել 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի երրորդ գլխավոր ճակատամարտը, որը վերջացել է հայերի ակնհայտ առավելությամբ:

Մեզ թվում է, որ Փլեգոնի վկայությունն այն մասին, որ Լուկուլլոսի և Տիգրանի միջև կայացած ճակատամարտում հայերի թիվը 30.000 հեծելազոր և 40.000 հետևակ էր, վերաբերում է հենց այս ճակատամարտին:

Մեր հաշվարկները՝ մոտ 31.000 հեծյալ և 39.000 հետևակային այս երրորդ՝ Աղձնիքի ճակատամարտում փաստորեն համընկնում են Փլեգոնի տվյալների հետ, սակայն ստացված են մեր հաշվարկների միջոցով և դրանով իսկ խիստ արժեքավոր են, կողմնակիորեն վկայելով 69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմի մեր վերականգնողական մոդելի ճշտության մասին:

Կուրտ Էքհարտի ենթադրությունը, որ Փլեգոնի տվյալները վերաբերում են ոչ թե Արածանիի, այլ Տիգրանակերտի ճակատամարտին մեզ անհամոզիչ են թվում հետևյալ պատճառով. Տիգրանակերտի ճակատամարտը քաջ հայտնի էր անտիկ հեղինակներին և դժվար թե նրանք շփոթեին այդ ճակատամարտը մեկ ուրիշի հետ: Փլեգոնի հաղորդման մեջ ոչ մի նշում չկա Տիգրանակերտի ճակատամարտի մասին: Արածանիի և հարավային Հայաստանում տեղի ունեցած մեծ ճակատամարտերը այդքան մեծ արձագանք չստացան անտիկ հեղինակների մոտ: Պատճառն ակնհայտ է. մի բան է պատմել հռոմեական զենքի փառապանծ հաղթանակի մասին, այլ բան է նկարագրել հռոմեական բանակի նեղված վիճակը, կամ պարտությունը հետագա ճակատամարտերում: Այս վերջինների մասին ընդունված էր գրել կարճ և հպանցիկ:

Երրորդ՝ Աղձնիքի գլխավոր ճակատամարտը հրահրեցին դաշնակից արքաները: Լուկուլլոսը այս ճակատամարտի անհրաժեշտությունը չուներ: Ավելին, նրա խնդիրն էր խուսափել մեծ ճակատամարտից, որում նույնիսկ կրած վճռական հաղթանակը չէր ապահովում Հայաստանի հանդեպ հարձակողական ռազմավարության վերսկսումը. ուժերը շատ անհավասար էին: Նույնիսկ հայկական բանակներից որևիցե մեկի լիակատար պարտությունը Լուկուլլոսին չէր ապահովում կործանվելու հեռանկարից: Ուրեմն, Լուկուլլոսին ձեռնտու չէր այս ճակատամարտը:

Որ այս ճակատամարտը կարող էր տեղի ունենալ միայն 68 թ.-ի վերջում երևում է նաև այն հանգամանքից, որ այստեղ մենք առաջին անգամ ենք տեսնում հայկական հետևակի մարտը նոր մարտաձևով: Այդ մարտաձևը ներառում էր հռոմեական հետևակային մարտավարության որոշ հատկանշական ձևեր, օրինակ՝ պաշտպանական մարտ բլրի ամրացված գագաթին, և ճա-

կատամարտի վերջում հռոմեական ճամբարային ամրապատնեշների գրոհի իմիտացիա:

Հեծելազորի և հետևակի համագործակցությունը տվյալ ճակատամարտում հռոմեացի և հույն հեղինակների կողմից բազմիցս հիշատակված հունական և հռոմեական մարտաոճ էր:

6.5.1.Լուկուլլոսի ծրագրերը և հռոմեական բանակի զորադասավորումը

Արածանիի ճակատամարտից հետո, հռոմեական բանակի չափավոր կորուստներով Աղձնիք վերադառնալը Լուկուլլոսի մեծ նվաճումն էր: Այստեղ նա որոշ համալրում ստացավ և վերջապես կարողացավ գոնե մեկ անգամ կուշտ կերակրել իր զինվորներին:

Լուկուլլոսը պետք է որոշեր իր հետագա գործողությունները: Նա լավ էր գիտակցում, որ երկու հայկական բանակների գրոհներին երկար դիմանալ չէր կարող: Ձմեռել կիսաքայքայված Աղձնիքում նա չէր կարող: Տիգրանի հեծելազորը և Միհրդատի հետևակն ամեն ինչ կանեին հռոմեացիներին սովամահության մատնելու համար: Նահանջել ցորենաշատ Կորդուք կնշանակեր հեռանալ Կապադովկիայից, նշանակում է՝ Պոնտոսից: Եթե արքայից արքան փակեր ճանապարհը դեպի Կապադովկիա, ապա Լուկուլլոսին Կորդուքից դժվար կլիներ բանակով անցնել Սիրիա, որտեղ արդեն ձևավորվել էր ազդեցիկ հռոմեասեր կուսակցություն: Կորդուքում Լուկուլլոսը համեմատաբար լավ պաշտպանված կլիներ թե՛ սովից, թե՛ Տիգրանից, սակայն Փոքր Ասիայում ծավալվող անցքերին ազդելու հնարավորությունը խիստ կպակասեր:

Եթե Լուկուլլոսը արշավեր դեպի Կապադովկիա, նա կկորցներ իր ռազմարշավի նվաճումների վերջին մնացորդները և կվարկաբեկեր հռոմեական զենքի փառքը ողջ Արևելքում: Այս դեպքում ոչ ոք չէր խոչընդոտի Տիգրանին հարված հասցնել Կապադովկիայում:

Սակայն մնում էր ևս մեկ, հանդուգն ուղի՝ մեկ անգամ ևս փորձել պարտության մատնել հայերին և պահպանել իր տիրապետությունը Հայաստանի հարավում: Հետագայում մենք կիմանանք, որ Լուկուլլոսը հավանաբար սպասում էր իր մոտ եկող երկրորդ՝ Տրիարիոսի բանակի արշավանքին դեպի Հայաստան, որը, ըստ Դիոն Կասսիոսի, իրենից պատկառելի ուժ էր ներկայացնում՝ 2 լեգեոն, մեծաքանակ դաշնակցային համալրումներով՝ մոտ 25.000 զինվոր [51]:

Այսպիսով, Լուկուլլոսը երկփեղկված էր իրադրության երկու հնարավոր հանգուցալուծումներով. նա հակված էր նահանջել հարավ, նույնիսկ Կորդուք, սակայն չէր բացառում, որ իր բախտը փորձի բարենպաստ պայմաններում Տիգրանին ևս մեկ մեծ ճակատամարտ տալով:

Իրադարձություններն իրենց հետևից տարան Լուկուլլոսին: Հայերի «անհաջող» գրոհը պարենավորման համար մեկնած հռոմեական ստորաբաժանումների վրա, նրանց փախուստը, հռոմեական ճամբարում առաջացած ոգևորությունը, նոր վրա հասած լուրջ, մոտ 4.000 զինվորներից բաղկացած համալրումը Լուկուլլոսին «համոզեցին» ճամբարից իր հետևակը դուրս հանել Միհրդատին ջախջախելու համար: Դրան նպաստեց նաև Միհրդատը, ով «անզգուշորեն» ճամբարային խրամատներից դուրս էր հանել ու շարել հայկական զորաբանակ-լեգեոնները: Մի պահ Լուկուլլոսին թվաց, որ Բախտը՝ Ֆորտունան, մեկ անգամ ևս դեմքով թեքվել է իրեն:

Ճակատամարտում Լուկուլլոսի ծրագիրը հետևյալն էր. օգտվելով Տիգրանի հեծելազորի բացակայությունից և Միհրդատի «հանդուգն համարձակությունից» գրոհել հայկական հետևակային բանակի վրա և ջախջախել նրան, դուրս շպրտել սեփական ճամբարից, իսկ Տիգրանի հնարավոր գրոհը ետ մղել՝ ամրանալով սեփական և իր կողմից գրաված հայկական հետևակային բանակի ճամբարում: Ծրագրի իրականացումը հայկական հետևակը կջախջախեր և խիստ կթուլացներ Տիգրանին:

Հռոմեական զորքերի դասավորության մասին դժվար է դատել, սակայն ելնելով Լուկուլլոսի նախկին ճակատամարտերի զորադասավորումներից և իրեն բնորոշ բնական զգուշությունից, կարելի է ենթադրել, որ հռոմեական հետևակը ունեցել է երկու մարտազիծ (էշելոն), կենտրոնում հռոմեական լեգեոնները, թևերին՝ դաշնակիցների կոհորտները: Հեծելազորը պահպանել է հետևակի թևերը և ինքն է գտնվել հետևակի պաշտպանության տակ: Փիմբրիական լեգեոնների վետերանները,

որոնք Արածանիի ճակատամարտից հետո անհնազանդության որոշ դրսևորումներ էին ունեցել, դժվար թե համաձայնվեին կազմել միայն առաջին գիծը: Ինձ թվում է, որ առաջին գծում եղել է մեկ փիմբրիական և Մեքստիլիոսի կամ Մուրենայի լեգեոնը, ընդ որում փիմբրիականը՝ պատվավոր աջ թևում (նրա հարվածի ուժից շատ բան էր կախված): Փիմբրիական երկրորդ լեգեոնը կանգնած էր առաջինի հետևից, համապատասխանաբար, Մեքստիլիոսի կամ Մուրենայի լեգեոնը: Այս դասավորությունը ապահովում էր Լուկուլլոսին Տիգրանի հեծելազորի հանկարծակի հարձակումից թիկունքից՝ երկրորդ գծի 180 աստիճան շրջադարձով: Ոչ այնքան հեռու գտնվող հռոմեական ճամբարում տեղակայված էին մի քանի հռոմեական և դաշնակցային կոհորտներ, գումակը և այլն:

Աղձնիքի գլխավոր ճակատամարտում հայկական և հռոմեական բանակների հնարավոր նախնական դասավորությունը ներկայացված է թիվ 6.11. գծանկարում:

6.5.2.Տիգրանի ծրագրերը և հայկական բանակի զորադասավորումը

68 թ. հոկտեմբերին, երեքամսյա համառ մարտերից հետո, որոնց պսակը Արածանիի գլխավոր ճակատամարտն էր, հայերը, Լուկուլլոսի հռոմեական բանակին զգալի կորուստներ պատճառելով, Հայաստանի միջնաշխարհից դուրս մղեցին դեպի երկրի հարավային նահանգները: Աղձնիքում կենտրոնացան հսկայական հայկական ուժեր՝ Տիգրանի հեծելազորային, Միհրդատի հետևակային բանակները և Մանկայոսի Աղձնիքի զորաբանակը՝ շուրջ 70.000 զինվոր: Ռազմավարական նախաձեռնությունը հայերի մոտ էր, սակայն նաև մտահոգություն առաջացնող լուրջ խնդիրներ, որից ամենակարևորը պարենային էր:

Հայկական Տավրոսի հարավային լանջերը իջած հայկական բանակը տեղում պարենավորվելու չափավոր հնարավորություններ ուներ: Նա չէր կարող, հռոմեացիների նման, դաժանաբար խլել տեղացի հայրենակիցների վերջին պարենը, սովամահության մատնելով ամբողջ գյուղեր: Հայկական բանակները

մատակարարվում էին Հայաստանի այլ նահանգներից բերված մթերքով, որոնց բեռնափոխադրումը իրականացվում էր Տավրոսի մի քանի լեռնացքներով: Մոտալուտ ձմեռն անխուսափելիորեն կփակեր այդ ճանապարհները: Տիգրանը պետք է շտապեր հանգուցալուծել պարենային առկա խնդիրները մինչև ձմեռ՝ 70.000 (ծառաների, սպասավորների և ստրուկների հետ՝ մոտ 100.000) մարդկանց, մոտ 40.000 ձիերի և տասնյակ հազարավոր այլ կենդանիներին հնարավոր չէր երկար պահել մի տեղում: Այս դեպքում աճում էր նաև համաճարակի վտանգը: Այդ պատճառով հայկական զորքը բաժանված էր երեք խոշոր հատվածի:

Այս պայմաններում Տիգրանին ձեռնտու էր հնարավորինս արագ տալ մեծ ճակատամարտ, որովհետև մի քանի շաբաթ հետո նա պետք է Տավրոսից հյուսիս ձմեռելու ուղարկեր իր բանակի մեծ մասը: Այդ պատճառով Տիգրան Մեծն ու Միհրդատ Պոնտացին որոշեցին անհապաղ ճակատամարտ տալ Լուկուլլոսին:

Ի՞նչ մարտավարություն ընտրեցին դաշնակից արքաները: Տիգրանը և Միհրդատը որոշեցին իրենց երկու բանակներով Լուկուլլոսի բանակը շրջապատել և ոչնչացնել բաց դաշտում: Դրա համար անհրաժեշտ էր, որ Լուկուլլոսը վստահ լիներ, որ գործ ունի միայն հետևակային բանակի հետ, որովհետև, Արածանիից սկսած, նա համոզվել էր, որ նույնիսկ եթե իրեն հաջողվի հաղթել Տիգրանին, ապա լուրջ վնասել նրան չի կարող: Տիգրանը բազմիցս ապացուցել էր, որ ընդունակ է իր հեծելազորով շուտ կտրվել հակառակորդից ու հեռանալ:

Հայկական հետևակային բանակի մարտերը հռոմեացիների հետ ընթանում էին մեծ լարվածությամբ. մի քանի անգամ, եթե ժամանակին Տիգրանը չօժանդակեր Միհրդատին, Լուկուլլոսը վստահաբար կջախջախեր Միհրդատի հայերին: Այդ պատճառով Լուկուլլոսը նույնիսկ իր մոձավանջային մեկամյա նահանջից հետո վերջնականապես չէր հրաժարվել Միհրդատին ջարդելու գաղափարից: Ստեղծված վիճակում դա միակ շանսն էր ինչ-որ չափով փոխել իր համար այսքան անբարենպաստ պատերազմի ելքը:

Լուկուլլոսը շատ զգույշ և ուշադիր էր ռազմի դաշտում, սակայն, երբ Տիգրանը Տիգրանակերտի ճակատամարտի դաշտ իջավ այնպիսի գերազանց ուժերով, որոնց դեմ ճակատային

ընդհարումը վստահաբար բերելու էր հռոմեացիների ծանր պարտությանը, Լուկուլլոսը հանդգնեց իր զորաշարժը կատարել հիմնական ուժերով, հարվածել հայերին թիկունքից ու ձախ թևից և փայլուն հաղթանակ տարավ:

Չի բացառվում, որ արդեն քննարկվում էր Տրիարիոսի օգնական բանակի ժամանելու հարցը: Այդ դեպքում հաղթական ճակատամարտը Լուկուլլոսին հնարավորություն էր տալիս մեկ անգամ ևս փորձել ծնկի բերել Հայաստանին: Քանի կար տիգրանյան Հայաստանը, իսկ այնտեղ ծերացած, սակայն վճռական ու անկոտրում Միհրդատ Եվպատորը, Պոնտոսի հռոմեական եվաճումը ցանկացած պահ կարող էր դարձնել պատրանք: Լուկուլլոսը մեկ ամիս շարունակ Տիգրանի և Միհրդատի բոլոր հարվածները կրելով, դուրս էր պրծել այդքան իրեն տանջած Հայաստանի միջնաշխարհից, որտեղ թողել էր տասնյակ հազարավոր սպանված և գերի ընկած զինվորներ: Լուկուլլոսը լի էր նաև վրեժի զգացումով. ինքը՝ բարձրաստիճան հռոմեացին, չկարողացավ հնազանդեցնել երկու բարբարոս արքաներին ...

Ճակատամարտ էին ցանկանում նաև Լուկուլլոսի բոլոր զինվորները: Մեկ հաղթանակով կվերջանային իրենց երեքամյա անվերջանալի տառապանքները:

Մի խոսքով, թե՛ Զորավարը, թե՛ Զորք, պատրաստ էին խաբվելու և ... խաբվեցին:

Լուկուլլոսը զոհ գնաց դաշնակից արքաների նախատես մշակված խորամանկ հնարքներին՝ ստրատեգեմաներին: Արքաները սկզբում պետք է Լուկուլլոսին համոզեին, որ Տիգրանը անվտանգ թույլ և հեռու է, Միհրդատի հետ մարտը սկսելու պահին: Երկրորդը, որը ոչ պակաս կարևոր էր, հայկական հետևակի ճամբարից դուրս շարվելը պետք է ներկայացվեր, որպես հայ գնդապետների, այլ ոչ Միհրդատի նախաձեռնություն: Միհրդատը պետք է, որ իր համար պատահական առաջացած այս իրավիճակում «շփոթվեր» և անորոշ վիճակում իր հետևակը կանգնացներ բլրի ստորոտին: Մեռում էր, որ Տիգրանը «պարտվի» մոտակա գյուղակներում ծավալված մանր ընդհարումներում և թակարդը պատրաստ էր:

Այս ճակատամարտը հնարավոր դառնալ նաև այն պատճառով, որ Տիգրանը և Միհրդատը լավ էին ուսումնասիրել Լուկուլլոսի բնավորությունը: Հռոմեացի զորավարը պարզապես

չդիմացավ գայթակղությանը մեկ անգամ ևս ջարդել Միհրդատին, մոռանալով իմաստուն Պոլիբիոսի նախազգուշացումը.

«Իսկապես, պետք է լինել տգետ կամ կուրացած, որ չտեսնել, որ զորավարի կարևորագույն խնդիրն է ըմբռնել հակառակորդի առաջնորդի բնավորությունը և բնական հակումները: Եթե մենամարտում, շարքը շարքի դեմ, հաղթանակ տենչող կողմին անհրաժեշտ է հասկանալ ինչպես կարելի է հասնել նպատակին՝ հակառակորդի մարմնի որ մասերն են մերկացած, կամ պաշտպանված չեն զենքով, ապա ամբողջ զորքի ղեկավարը պետք է գտնի ոչ թե մարմնի բաց մասը, այլ թույլ կողմ հակառակորդի բնավորության մեջ, չէ որ շատերը թեթևամտության և լիակատար անփույթության հետևանքով կործանում են ոչ միայն պետությունը, այլև սեփական կյանքը:» Պոլիբիոս. Ընդհանուր պատմություն. Գիրք III, 81, (թարգմ. ռուսերենից Ա.Գ.), [195]:

Նկար 6.11. Տիգրան Բ Մեծ արքայից արքան Միհրդատ Զ Եվպատոր և Միհրդատ Մեդացի արքաների հետ

6.5.3.Աղձնիքի ճակատամարտի ընթացքը

Մեկ անգամ ևս ընթերցենք Ապպիանոսին և վերականգնենք ճակատամարտի ընթացքը.

«... իրենց /Տիգրանին ու Միհրդատին – Ա.Գ./ մոտեցած Լուկուլլոսի դեմ Միհրդատը ամբողջ հետևակը և հեծելազորի մի մասը ժողովեց բլրի կատարին, մնացյալ հեծելազորով Տիգրանը հարձակվեց սենդամթերք հավաքող հռոմեացիների վրա և պարտվեց: Այդ բանից հետո հռոմեացիները էլ ավելի անվախ էին հավաքում պարենը հենց Միհրդատի բանակատեղի մոտակայքում, որտեղ էլ տեղադրեցին ճամբարը: Եվ դարձյալ բարձրացավ փոշու մեծ ամպ, քանի որ հարձակվում էր Տիգրանը: Նրանց մտահոգումն այն էր, որ Լուկուլլոսն ընկնի (հայտնվի) երկուսի մեջտեղում: Լուկուլլոսը այդ հասկացավ, իր հեծյալներից լավագույններին նետեց առաջ՝ Տիգրանի հետ որքան կարելի է հեռու կռվի բռնվելու և ռազմերթային շարվածքը մարտական դասավորություն դարձնելը խոչընդոտելու, իսկ ինքը Միհրդատին ճակատամարտի կանչելով ... և ճամբարը խրամատով շրջապատելով չէր հրավիրում մարտի, մինչև որ սկսված ձմեռը վերջ տվեց պատերազմական գործողություններին» (App., Mithr. 87՝ թարգմ. Ռ. Մանասերյանի) [34]: (Ընթերցողն, անկասկած, նկատեց, որ Ապպիանոսի երկի այս մասը մեջբերվում է երկրորդ անգամ: Այստեղ վրիպակ չկա, առաջին անգամ մենք հույն պատմիչին ընթերցեցինք, որպեսզի պատկերացնենք հայ-հռոմեական ընդհարումների բնույթը Արածանիի դաշտում և հռոմեացիների նահանջի ժամանակ: Այս անգամ մենք ևս մեկ անգամ խորանում ենք այս տեքստի մեջ և նկատում ենք, որ այստեղ հստակ պատկերված է խոշոր ճակատամարտ):

Թե որտեղ կոնկրետ տեղի ունեցավ երրորդ գլխավոր ճակատամարտը՝ մենք չգիտենք: Ելնելով Ապպիանոսի հաղորդումից, որ խոր աշուն էր, կարող ենք եզրակացնել, որ Լուկուլլոսին արդեն հաջողվել էր հասնել Աղձնիքում գտնվող որևիցե մի բլրոտ վայր, որտեղ էլ Տիգրանն ու Միհրդատը Լուկուլլոսին տվեցին այս մեծ ճակատամարտը:

Ճակատամարտի ընթացքը կարելի է նկարագրել հետևյալ հինգ փուլերով.

1.Տիգրանի հեծելազնդերի գրոհը պարեն հավաքող հռոմեական ջոկատների վրա և կեղծ նահանջը,
2.Լուկուլլոսի գրոհը իր ճամբարից դուրս եկած հայկական հետևակային բանակի վրա,
3.Տիգրանի հեծյալ բանակի անսպասելի գրոհը Լուկուլլոսի վրա թիկունքից,
4.Լուկուլլոսի նահանջը դեպի իր ճամբարը,
5.Հայկական բանակների կողմից հռոմեական ճամբարի պաշարումը:

6.5.2.1.Տիգրանի հեծելազնդերի գրոհը պարեն հավաքող հռոմեական ջոկատների վրա (գծանկարներ 6.12. և 6.13.)

Տիգրանը և Միհրդատը Լուկուլլոսին զցեցին թակարդի մեջ հետևյալ ձևով: Լուկուլլոսի ճամբարի մոտակայքում գտնվող գյուղեր պարենավորման համար դուրս եկած հռոմեական ստորաբաժանումների վրա հանկարծակի հարձակվում են Տիգրանի թեթևազեն հեծյալները: Հռոմեացի զինվորների մի մասը սրի է քաշվում, մնացածը, հատկապես այն մասը, որը գտնվում էր գյուղերում, սկսում են դիմադրել Տիգրանի հեծելազորայիններին: Դիմադրությունը գնալով սաստկանում է, որովհետև գյուղերի շինությունները խանգարում են հեծյալների հաջող մարտական գործողություններին: Ըստ երևույթին, ինչպես ընդունված էր բոլոր այս դեպքերում, Լուկուլլոսը գերազանց օժանդակ ուժեր է ուղարկում գրոհի ենթարկված իր զորամասերին: Թեժ մարտը, որը սկզբում ընթանում էր հայերի ակնհայտ գերազանցությամբ, հռոմեացիների ստացած հետևակային և հեծելազորային համալրումներից հետո սկսում է թեքվել դեպի հռոմեացիները: Մարտը հայկական հեծելազնդերի համար սկսում է ընդունել այնքան անբարենպաստ ընթացք, որ Տիգրանը այդ գնդերը դուրս է բերում մարտից, որի մասին Ապպիանոսը գրում է, որ Տիգրանը «պարտվեց»: Իրականում այդ պարտություն չէր, այլ մի սովորական մարտավարական հնարք, զորքերը անբարենպաստ պայմաններում մարտնչելուց հանելու համար:

Համապատասխան կարգադրություն ստացած հայ գնդա-

պետներն այս մարտը և ընդհարմանը մասնակցող հեծելազնդերի հետագա կեղծ խուճապը կազմակերպեցին այնպես վարպետորեն, որ մեծ ոգևորություն առաջացրին հռոմեական ճամբարում: Իրականում հայկական հեծելազորը հեռանում էր իր շարքերը վերադասավորվելու համար:

Հռոմեացի զորավարների և ավագ սպաների մի մասն ըստ երևույթին, նույնպես կողմնակից էին հայերին նպաստավոր պայմաններում նոր գլխավոր ճակատամարտ տալու գաղափարին:

Լուկուլլոսի կասկածները փարատեց Միհրդատ Պոնտացու ղեկավարության տակ գտնվող հայկական հետևակային բանակի գնդերի պահվածքը, որոնք, ըստ երևույթին, բլուրներից մեկի գագաթին տեղադրված հայկական ամրացած ճամբարից դուրս եկան Տիգրանի հեծելազորին օժանդակելու և մարտական շարքերով շարժվեցին դեպի հռոմեացիները, սակայն որոշ տարածություն անցնելուց հետո, տեսնելով Տիգրանի հեծելազորայինների «պարտությունը», իրենց շարժումը դեպի հռոմեացիները դանդաղեցրին, ապա, ընդհանրապես, «անվճռականորեն» կանգ առան:



Գծանկար 6.12. Աղձնիքի գլխավոր ճակատամարտ. առաջին փուլ՝ Տիգրանի հեծելազնդերի զրոհը պարեն հավաքող հռոմեական ջոկատների վրա:



Գծանկար 6.13. Աղձնիքի գլխավոր ճակատամարտ. առաջին փուլ՝ Տիգրանի հեծելազնդերի գրոհը պարեն հավաքող հռոմեական ջոկատների վրա և կեղծ նահանջը:

6.5.2.2. Լուկուլլոսի գրոհը իր ճամբարից դուրս եկած հայկական հետևակային բանակի վրա (գծանկար 6.14.)

Այսպիսով, Տիգրանի հեծյալ բանակի զինվորները «պարտվել» էին դաշտում հռոմեական հեծելազորի ու հետևակի անհաղթ ուժերից, իսկ Միհրդատն իր հետևակայիններին «անզգուշորեն» դուրս էր հանել ճամբարի պաշտպանական ամրություններից և դանդաղ շարժվում էր բլրի ստորոտով վար, ուղղություն բռնելով դեպի հռոմեական ճամբարը:

Լուկուլլոսը որոշեց պահը բաց չթողնել. իր հետևակի ամբողջ ուժով հարձակվել և ջախջախել Միհրդատի հայկական հետևակը մինչև Տիգրանի «պարտված» հեծելազնդերը ուշքի կգան:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում այս ճակատամարտում հռոմեական բանակի մարտակարգը: Ապպիանոսից [59] մենք գիտենք՝ հենց որ թիկունքից երևաց Տիգրանի հեծելազորը, Լուկուլլոսը նրանց դեմ ուղարկեց իր «լավագույն» հեծելազնդերը, այսինքն Միհրդատի դեմ ճակատամարտում հռոմեական հեծելազորը չէր մասնակցում: Դժվար է պատկերացնել, ինչպես կկարողանալ մարտից շուտ դուրս գալ և դեպի Տիգրանի բանակը սլանար նույնիսկ աշխարհի ամենալավ հեծելազորը: Նշանակում է հռոմեական հեծյալ ջոկատները՝ ալաները կանգնած են եղել որպես պահեստազոր՝ երկրորդ գծում և Միհրդատի զինվորների դեմ մարտի չեն բռնվել:

Լուկուլլոսը, որը շատ ուշադիր և զգույշ զորավար էր, մշտապես տագնապում էր նրանից, որ Տիգրանի հեծելազնդերը մոտակայքում են և Միհրդատի դեմ դուրս ելնելիս, նա, անհրաժեշտաբար, պետք է ապահովեր իր թիկունքը անսպասելի հարձակումից: Ճակատամարտի ընթացքում, երբ Լուկուլլոսը հարկադրված էր իր ողջ հեծելազորը ուղարկել Տիգրանի հեծելաբանակի դեմ, նա ճնշումը Միհրդատի բանակի վրա ոչ միայն չթուլացրեց, այլև զգալիորեն ուժեղացրեց, նշանակում է նա ուներ մարտակարգի երկրորդ գիծը՝ էշելոնը: Այսպիսով, ճակատամարտի նկարագրությունը թույլ է տալիս պատկերացնել Միհրդատի վրա գրոհած հռոմեական բանակի մանրամասն դասավորությունը:

Ինչպես մ.թ.ա. 201 թ. Զամայի մոտ Սկիպիոնը Հաննիբալի

դեմ՝ Լուկուլլոսը ևս Միհրդատի դեմ դասավորեց իր զորքերը երկու գծով՝ էշելոնով [100, 196, 306], առաջին գծում՝ կենտրոնում երկու լեգեոն, որոնցից մեկը, ըստ երևույթին փիմբրիական լեգեոններից մեկն էր, երկրորդը կամ՝ Սեքստիլիոսի, կամ՝ Մուրենայի լեգեոնը: Թևերից, համապատասխանաբար, կանգնած էին դաշնակիցների կոհորտները, որոնց թևերը, իրենց հերթին, պաշտպանում էր թեթև հետևակը:

Երկրորդ շարքում կենտրոնում ևս կանգնած էին երկու հռոմեական լեգեոն՝ փիմբրիականներից երկրորդը և կամ՝ Սեքստիլիոսի, կամ՝ Մուրենային (համապատասխանաբար) լեգեոնը, որոնց թևերին կանգնած էր հռոմեական հեծելազորը (տես գծանկար 6.14բ.):

Լուկուլլոսի ընդունած մարտական դասավորությունը տրամաբանական էր և մտածված:

Հռոմեական լեգեոնները և դաշնակիցների կոհորտները սրընթաց դուրս եկան իրենց ճամբարից և վճռականորեն գրոհեցին հայկական ծանր հետևակի վրա: Լուկուլլոսի համար անսպասելիորեն, հայկական հետևակը ոչ թե խուճապահար նետվեց դեպի սեփական ճամբարը, որը հնարավորություն կտար հռոմեական հետևակին կոտորել հայկական հետևակի զգալի մասն հենց սեփական ճամբար մտնելու պահին, այլ ամրացավ բլրի ստորոտին, թիկունքով դեպի սեփական ճամբարը և վահանափակով ընդունեց հռոմեական լեգեոնների գրոհը:

Լանջի թեքությունը որոշ չափով մեղմեց հռոմեացիների հարվածի ուժը, սակայն այնուամենայնիվ, այն պետք է սարսափելի լիներ: Հայոց ծանր հետևակի մարտակարգը ճկվեց, մի փոքր հետ գնաց, սակայն հարվածին դիմացավ: Սկսվեց թեժ ձեռնամարտ: Լուկուլլոսը ցնծաց. վերջապես առանց Տիգրանի ահազդու հեծելազորի ներկայության հաջողվեց դաշտում ձեռնամարտի բռնվել հայկական հետևակի հետ:



Գծանկար 6.14. Աղձնիքի գլխավոր ճակատամարտ. երկրորդ փուլ՝ Լուկուլլոսի գրոհը իր ճամբարից դուրս եկած հայկական հետևակային բանակի վրա:

6.5.2.3.Տիգրանի հեծյալ բանակի անսպասելի գրոհը Լուկուլլոսի վրա թիկունքից (գծանկարներ 6.15-17.)

Իր սխալը Լուկուլլոսը զգաց միայն այն ժամանակ, երբ հեռվում երևացող հսկա փոշու ամպը կասկած չթողեց նրանում. սրընթաց մոտենում է տիգրանյան ամբողջ հեծելաբանակը [42, 51]: Վիճակը մի ակնթարթում փոխվեց. Լուկուլլոսը հասկացավ, որ մարտի բռնվելով հայկական հետևակի հետ, իր բանակը շուտով Տիգրանից հարված կստանա թիկունքից և գլխովին կկործանվի:

Լուկուլլոսի գործողությունները նպատակասլաց, կտրուկ ու արագ էին՝ մեծ զորավարին վայել: Նա հրամայեց, նախ որ իր ողջ հեծելազորը սլանա հայկական հեծելազորի դեմ ու դիմանա որքան հնարավոր է, նույնիսկ հեծելազորի ջախջախման և ոչնչացման գնով: Հայկական հետևակի հետ մարտնչող հռոմեական հետևակին հրամայվեց սաստկացնել գրոհն այնքան, որ կարճ ժամանակում կոտրեն հայերի դիմադրությունը և փախուստի մատնեն նրանց:

Հռոմեական հեծելազորը խիզախորեն նետվեց թե՛ որակով, թե՛ քանակով իրենցից անհամեմատ ավելի ուժեղ հայկական հեծելազորի դեմ: Տեղի ունեցավ մի կատաղի հեծելամարտ, որում հռոմեական հեծելազորի պարտությունը կանխորոշված էր, բայց հայկական հեծելազորի սրընթաց գրոհը դեպի հռոմեական հետևակի թիկունք ժամանակավորապես կասեցվեց:

Միհրդատը, օգտվելով Լուկուլլոսի հեծելազորի բացակայությունից, թևերից գրոհի նետեց իրեն վստահված բանակի հեծելազորները: Լուկուլլոսի հրամանով, նրանց դեմ դուրս եկան հռոմեական բանակի թեթևազենները և դաշնակիցների կոհորտները, որոնք վահանափակով դիմավորեցին հայկական և պոնտական հեծելազորին: Մի փոքր անց, Լուկուլլոսը գրոհի նետեց երկրորդ գծում կանգնած վերջին երկու լեգեոնները:

Սակայն, Լուկուլլոսի համար անսպասելի, հայկական հետևակը ձեռնամարտում ցուցաբերեց այնպիսի տոկունություն ու խիզախություն, որը ի չիգ դարձրեց արհեստավարժ լեգեոներների մարտը շահելու բոլոր ջանքերը: Հռոմեական հետևակի թիկունքում Տիգրանը ջախջախում էր կատաղի դիմադրող հռոմեական հեծելազորին: Հայկական զորագնդեր-լեգեոնների

վտարանդի հռոմեացի, հույն, հրուսիսային կապադովկիացի և փոքրհայքյան սպա-ուսուցիչները և նրանց օգնական հայ սպաներն անձնվեր մարտնչելով, իրենց ետևից տարան հայ վահանակիրների զանգվածը, որը ձգտում էր ետ չմնալ իր սպաներից: Կատաբվեց այն զարմանալի երևույթը, որը նախնական վիճակից վերափոխում և խիստ մարտունակ զորք է դարձնում բազմահազար մարդկային զանգվածը:

Իմանալով Միհրդատի բուռն խառնվածքը և խիզախությունը, չեմ կասկածում, որ այդ վճռական սպահին նա սուրը ձեռքին, անընդհատ ոգևորելով հայ զինվորներին իրենց մայրենիով, կռվում էր հետևակի առաջին շարքերում: Մեծ պոնտացին անձամբ էր գլխավորում հայ հետևակի մարտը, ճիշտ այնպես, ինչպես մեծն հայը՝ 72-ամյա արքայից արքա Տիգրանն էր անձամբ գլխավորում հայ կատաֆրակտոսների շեշտակի գրոհը: Լարումը ճակատամարտում հասավ գագաթնակետի. հռոմեացիները չդիմացան ու տեղի տվին:

Լուկուլլոսը հասկացավ, որ չի հասցնի ջախջախել Միհրդատին մինչև Տիգրանի մոտենալը և հռոմեացիները կարող են հայտնվել հայկական երկու բանակների մահաբեր գրկում: Լուկուլլոսը ընդունեց իր սխալը և ավելի ծանր պարտությունից խուսափելու համար, հրամայեց յուրայիններին արագ նահանջել դեպի ճամբարը:



Գծանկար 6.15. Աղձնիքի գլխավոր ճակատամարտ. երրորդ փուլ՝ Տիգրանի հեծյալ բանակի անսպասելի գրոհը Լուկուլլոսի վրա թիկունքից:



Գծանկար 6.16. Աղձնիքի գլխավոր ճակատամարտ. երրորդ փուլ՝ Տիգրանի հեծյալ բանակի անսպասելի գրոհը Լուկուլլոսի վրա թիկունքից. Լուկուլլոսի հեծելազորի հակագրոհը:



Գծանկար 6.17. Աղձնիքի գլխավոր ճակատամարտ. երրորդ փուլ՝ Տիգրանի հեծյալ բանակի անսպասելի գրոհը Լուկուլլոսի վրա թիկունքից. հայկական հետևակին ընկճելու անհաջող փորձը:

6.5.2.4.Լուկուլլոսի նահանջը դեպի իր ճամբարը (գծանկարներ 6.18. և 6.19.)

Լուկուլլոսին մնում էր փչել նահանջի փողերը, որպեսզի հետևակը հասցնի մարտի դաշտից նահանջել հռոմեական ճամբար այնքան արագ, որ չհայտնվեր հռոմեական հեծելազորին ջախջախած հաղթական հայկական հեծելազորի և հետապնդմանը անցած հայկական հետևակի միջև:

Լուկուլլոսն իր լեգեոնները և օժանդակ հետևակը արագորեն հանում է մարտից և նահանջում դեպի իր ամրացված ճամբարը: Ճամբար են հասնում նաև ջախջախված հռոմեական հեծելազորի մնացորդները: Հայկական երկու բանակները շրջապատում են հռոմեական ճամբարը, սակայն վճռական գրոհի չեն նետվում: Լուկուլլոսը նույնպես ակտիվ գործողություններ չի ձեռնարկում, Ապպիանոսի՝ «*Միհրդատին մարտի չի հրավիրում*» [59]: Ըստ Ապպիանոսի, հռոմեացիներն իրենց ճամբարում պաշարված են մնում ևս որոշ ժամանակ, մինչև վրահաս ձմռան վտանգը չի բաժանում հակառակորդներին:

Հայկական հետևակն առաջին անգամ բաց դաշտում մեծ ոգևորությամբ հետապնդում էր աշխարհահռչակ հռոմեական հետևակին: Ինչպե՞ս էր դա տեղի ունենում: Քիչ հավանական է, որ դա կատարվեր անմիջական կատաղի ձեռնամարտով: Հայկական ծանր հետևակը դեռ պատրաստ չէր բաց մարտում ձեռնամարտը շահել փիմբրիական վետերաններից: Ավելի շուտ հայերը որոշ տարածության վրա հետապնդում էին լեգեոներներին և հեռահար մարտ վարում՝ նետահարում, տեգահարում, քարահարում՝ պարսահարում՝ մեծ կորուստներ պատճառելով հռոմեացիներին: Հռոմեացիները հնարավորինս պատասխանում էին հայերին, սակայն նահանջի ժամանակ տվեցին ավելի շատ կորուստներ:

Հռոմեական հետևակի գերնպատակը մինչև հայկական հեծելազորի գրոհը սեփական ճամբար հասնելն էր: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ կոտորածի կենթարկվեին իրենց շարքերը խախտած հռոմեացի հետևակայինները, եթե, հատկապես, չխուսափեին ճոշավոր հայկական հեծելազորի գրոհից:



Գծանկար 6.18. Աղձնիքի գլխավոր ճակատամարտ. չորրորդ փուլ՝ Լուկուլլոսի որոշումը նահանջել դեպի իր ճամբարը:



Գծանկար 6.19. Աղձնիքի գլխավոր ճակատամարտ. չորրորդ փուլ՝ Լուկուլլոսի նահանջը դեպի իր ճամբարը և հեծելազորի կորուստը:

6.5.2.5. Հայկական բանակների կողմից հռոմեական ճամբարի պաշարումը (գծանկար 6.20.)

Լուկուլլոսի և այլ զորավարների վարպետությունը, հետևակի զինվորների տոկունությունը և դիմացկունությունը, հեծելազորի ինքնազոհ խիզախությունը ի վերջո փրկեցին հռոմեացիներին վերջնական և կատարյալ ջախջախումից: Հռոմեական հետևակը տեղավորվեց իր ճամբարի պաշտպանական պատնեշների և խրամատների ետևում ու այնտեղից դիմադրեց ճամբարը շրջապատած հայկական հեծելազորին և հետևակին: Ճամբարում ապաստան գտան նաև Լուկուլլոսի հեծելազորի խղճուկ մնացորդները:

Հայերը հռոմեական ճամբարը գրոհելու մեջ ջանասիրություն չցուցաբերեցին և սահմանափակվեցին նրա շրջափակումով:



Գծանկար 6.20. Աղձնիքի գլխավոր ճակատամարտ. հինգերորդ փուլ՝ հայկական բանակների կողմից հռոմեական ճամբարի պաշարումը:

6.5.3.Աղձնիքի գլխավոր ճակատամարտի նշանակությունը և կողմերի կորուստները

Աղձնիքի գլխավոր ճակատամարտը վերջացավ հայերի՝ Տիգրանի և Միհրդատի զորքերի հաղթանակով, սակայն այդ հաղթանակը լիակատար չէր՝ այն չավարտվեց թշնամու ուժերի ջախջախումով: Այնուամենայնիվ, այս ճակատամարտի նշանակությունը չափազանց կարևոր էր 69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմի ողջ հետագա ընթացքի համար:

Առաջին անգամ բաց դաշտում հռոմեական բանակի լեգեոնների դեմ որպես գրեթե հավասարը հավասարի դեմ արիաբար մարտնչեց հայոց ծանր հետևակը, անկասկած հենվելով իր գերազանց հեծելազորի վրա, և առաջին անգամ տեսավ իր ուժի արդյունքը՝ մարտի դաշտից հռոմեական արծիվների նահանջը: Հայկական հետևակն այս մարտում վերջնականապես թոթափեց հռոմեական լեգեոնների հանդեպ իր անլիարժեքության բարդույթը և այսուհետ դարձավ հռոմեական հետևակի և ամբողջ բանակի հզոր ախոյաններից մեկը:

Հայկական բանակի անվիճելի առավելությունը Աղձնիքի գլխավոր ճակատամարտում թույլ տվեց Տիգրանին նախաձեռնել իր վաղուց փափագած հակահարձակումը Պոնտոսում: Միհրդատ Եվպատորի ղեկավարությամբ Աղձնիքից Պոնտոս ուղարկվեց հայկական ուժեղ հեծյալ բանակ: Այս գործողությունը հաղթական Աղձնիքի գլխավոր ճակատամարտի ամենակարևոր հետևանքն էր:

Կողմերի կորուստների մասին կարող ենք դատել Փլեգոնի տվյալներով, նա նշում է 5.000 հայ զինվորների կորուստի մասին 68 թ. տեղի ունեցած ինչ-որ ճակատամարտում, որը նոր ժամանակների հետազոտողների մի մասը վերագրեցին Արածանիի ճակատամարտին [11]: Դրա հետ չհամաձայնվեց Կ. Էքհարտը, արդարացիորեն նշելով, որ Արածանիի ճակատամարտի նկարագրությունը հայկական բանակի կողմից այսքան խոշոր կորուստներ ենթադրելու առիթ չեն տալիս: Կարծում եմ, որ Կ. Էքհարտն այս կորուստները վերագրեց 69 թ. Տիգրանակերտի ճակատամարտին միայն այն պատճառով, որովհետև չգիտեր Աղձնիքի գլխավոր ճակատամարտի մասին: Ռ. Մանսերյանը այս ճակատամարտի եղելությունը ապացուցեց միայն 1987 թ., քննելով Ապպիանոսից մեզ հասած տեղեկությունները [34]: Ավելին, իմ կարծիքով, այս ճակատամարտի եղելությունը ապացուցվում է նաև 68 թ. ռազմարշավի ընթացքի ողջ ներքին տրամաբանությամբ՝ ինչ-որ կարևոր իրադարձություն պետք է տեղի ունենար, որ թույլ տար Տիգրանին 68 թ. հոկտեմբերին զգալիորեն թուլացնել իր ուժերը Հայաստանի հարավում՝ Աղձնիքում, ուղարկելով հյուսիս-արևելք՝ Պոնտոս հայկական զորքերի մի մասը և, ինչու չէ, Միհրդատ Պոնտացու նման հմուտ զորավարին: Տրամաբանական է մտածել, որ դա կարող էր լինել հենց այս հաղթական ճակատամարտը:

Աղձնիքի գլխավոր ճակատամարտի նկարագրությունը վկայում է արյունահեղ ճակատամարտի, հակառակորդների համառության և կողմերի հնարավոր մեծ կորուստների մասին: Տիգրանը և Միհրդատը բոլոր ուժերը գործադրեցին Լուկուլլոսին վերջնական պարտության մատնելու համար, սակայն մենք գիտենք Սուն Ցզիի (Չինաստան, մ.թ.ա. VI – V դդ.) հանրահայտ ասացվածքը, որ «հաղթանակը կախված է ինձանից և հակառակորդից, սակայն անպարտելիությունը կախված է միայն ինձանից» [138, 300]: Լուկուլլոսը մեկ անգամ ևս ապացուցեց ծանրագույն դրությունից դուրս գալու իր հազվադեպ հանդիպող հատկությունը: Ծանրագույն պայմաններում նա փրկեց հռոմեական բանակի հիմնական մարտական միավորները՝ հռոմեական լեգեոնները:

Ճակատամարտի ընթացքի վերլուծության և Փլեգոնի հայտնած տվյալի հիման վրա կարող ենք ենթադրել հայոց 5.000-ոց կորուստների հետևյալ պատկերը.

- մոտ 500 հեծյալ,
- մոտ 500 թեթևազեն և
- մոտ 4.000 վահանակիր:

Հեծելազորային ճակատամարտի ժամանակ հայկական հեծելազորի կորուստները չէին անցնի մի քանի հարյուրից, սակայն, ըստ երևույթին, հայկական (հատկապես թեթև) հեծելազորը փորձել էր նաև խոչընդոտել հռոմեական հետևակի պատսպարվելն իր ճամբարում: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև Միհրդատի հրամանատարության տակ գտնվող, հռոմեական հետևակի դեմ կռվող հեծելազորի կորուստները ևս: Այն-

պես որ այս մարտում հայկական հեծելազորը պետք է ունենար ոչ պակաս, քան 500 սպանված:

Հայկական թեթև հետևակի հիմնական կորուստներն առաջացել էին բլրի ստորոտին հռոմեացիների դեմ հայ վահանակիրների կատաղի ձեռնամարտի ժամանակ, երբ հայ աղեղնավորներն ու պարսավորները մեծ օժանդակություն ցույց տվեցին իրենց վահանակիրներին և ետ մղեցին թվով ավելի նվազ հռոմեական թեթև հետևակին: Հռոմեական բանակի նահանջի ժամանակ հայկական թեթև հետևակի կորուստներն աննշան էին, իմ գնահատականով՝ ընդամենը մոտ 500 սպանված:

Հայկական կորուստների մեջ մեծամասնությունն էր կազմում ծանր հետևակը՝ վահանակիրները, որոնց կորուստը ես գնահատում եմ նվազագույնը մոտ 4.000 սպանված: Հայկական ծանր հետևակը պատվով ձեռնամարտեց աշխարհի ամենաընտիր՝ հռոմեական ծանր հետևակի դեմ, այդ թվում դիմակայեց հռոմեական վետերանների՝ փիմբրիական լեգեոններից մեկի, գուցե երկուսի կատաղի գրոհները: Հռոմեական հետևակի նահանջի ժամանակ հայկական ծանր հետևակն անցավ հետապնդման առանց ձեռնամարտի, օգտագործելով հեռահար մարտի իր բոլոր հնարավորությունները. նիզակները, տեգերը, քարերը, միաժամանակ պահպանելով իր նետաձիգներին ու պարսավորներին թշնամու հնարավոր հարվածից՝ հռոմեական հետևակի ձեռնամարտի բռնվելու փորձերից: Կարելի է ենթադրել, որ հռոմեացիների հետապնդման ժամանակ հայ վահանակիրները ձգտում էին ձեռնամարտի բռնվել, սակայն դրա համար պետք էր հասնել արագ հեռացող հռոմեական ծանր հետևակին՝ չխախտելով սեփական շարքերը, մի բան, որը հայկական ծանրազենները հռոմեացիների նման վարժ անել դեռ չէին կարող: Ուստի նրանք, նետվելով դեպի հռոմեացիների նահանջող շարքերը, ձեռնամարտ չհրահրեցին, սակայն պատահական բռնկվող ձեռնամարտերից էլ չխուսափեցին, միաժամանակ հռոմեացիների վրա տեղալով նետելու բոլոր միջոցները, այդպիսով ետ գլորելով հռոմեական հետևակը դեպի հռոմեական ճամբարը:

Անմիջապես ճակատամարտից հետո Տիգրանի տրամադրության տակ Աղձնիքում կային հետևյալ ուժերը.

- 26.500 հեծելազոր, որից 10.000՝ կատաֆրակտոս,
- 34.500 հետևակ, որից 6.500 թեթև հետևակ և 4.000 օժանդակ

զորք,
- 4.000 դաշնակից պոնտացի զինվոր,

ընդամենը՝ 65.000 զինվոր:

Այժմ պարզենք Աղձնիքի գլխավոր ճակատամարտում հռոմեացիների հնարավոր կորուստները: Ելնելով ճակատամարտի նկարագրությունից և հայկական կողմի կորուստներից կարող ենք ենթադրել, որ հռոմեական կորուստները հետևյալն էին.

- մոտ 4.000 ծանր հետևակ, որից 1.000 լեգեոներ,
- մոտ 1.000 թեթև հետևակ,
- մոտ 2.000 հեծելազոր,

ընդամենը՝ 7.000 զինվոր:

Պարզաբանենք, թե ինչպես ստացանք Լուկուլլոսի ծանր հետևակի կորստի հնարավոր թիվը: Հռոմեացի 1.000 սպանված լեգեոներների դեմ հաշվարկում ենք 2.000 սպանված հայ ծանրազեն, մնացած 3.000 հռոմեացի դաշնակիցների ծանրազենների դիմաց՝ 2.000 սպանված հայ ծանրազեն, որովհետև ճակատամարտի վերջում հայերն են հետապնդել և հեռահար մարտ վարել (եթե լեգեոներները գերազանցում էին հայ վահանակիրներին մարտական հատկություններով, ապա հայերի և փոքրասիացիների ծանրազեն հետևակը մոտավորապես նույն որակի էր):

Եթե գնահատենք ճակատամարտի տարբեր փուլերի տևողությունը, ապա կկարողանանք կողմնորոշվել, թե մեր ենթադրությունները որքանով կմոտենան իրականին: Հետևակային ձեռնամարտը կարող էր տևել մոտ 1,5-2,0 ժամ, որի ընթացքում կողմերը կարող էին այդպիսի մեծ զոհեր ունենալ:

Հռոմեական հեծելազորը ճակատամարտում ստացել էր կործանիչ հարված և նրանից քիչ մարդ էր փրկվել, իսկ թեթև հետևակը հարկադրված էր կռվել իրենից թվով գերազանց հակառակորդի դեմ, որի պատճառով ծանր կորուստներ ունեցավ:

Ըստ երևույթին, ճակատամարտի վերջում մարտի դաշտից ոչ պակաս, քան 3.000 զինվոր, հիմնականում կորդվացիներ, պետք է, որ ինքնակամ լքած լինեին Լուկուլլոսի բանակը և վերադառնային Կորդուք: Հռոմեացիների անհաջողությունը ճակատամարտում ակնհայտ էր, որոշակի նշանակություն կարող էր ունենալ նաև հայկական կողմի քարոզչությունը՝ Տիգրանը կարող էր ներում խոստանալ իրեն դավաճանած, սակայն մեղա

եկած իր հպատակներին: Այդպիսով, հռոմեական բանակի անդառնալի կորուստները կարող էին կազմել մոտ 10.000 զինվոր՝ հայերի կորուստներից երկու անգամ ավելի:

Ճակատամարտից հետո Լուկուլլոսի տրամադրության տակ կային հետևյալ ուժերը.

1.բուն հռոմեական բանակ.

- 14.500 լեգեոներներ,
- մոտ 200 թեթևազեններ,
- մոտ 100 հեծյալ,
- մոտ 200 հոգի գումակի զինվորներից,

ընդամենը՝ մոտ 15.000 զինվոր:

Այսպիսով, մենք կարող ենք ենթադրել, որ ճակատամարտից հետո Մեքստիլիոսի և Մուրենայի լեգեոններում կար մոտ 4.000-ական լեգեոներ, իսկ երկու փիմբրիական լեգեոններում՝ մոտ 3.250-ական:

2.հռոմեական դաշնակիցների կազմը կարելի է պատկերացնել այսպես.

- 13.000 ծանրազեն հետևակ,
- մոտ 200 թեթևազեն հետևակ,
- մոտ 100 հեծյալ և
- 1.500 օժանդակ զորք,

ընդամենը՝ 14.800 – 15.000 զինվոր:

13.000 ծանրազեն հետևակը բաժանված էր մոտավորապես 4 մասի, պայմանական հաշվով՝ 3.250 զինվոր, և կցված էր համապատասխան լեգեոնի:

Աղձնիքի ճակատամարտից հետո Լուկուլլոսի բանակում կար մոտավորապես 30.000 զինվոր: Հռոմեացիները չնչին հեծելազոր ունենալով, կարող էին նրանց միջոցով այսուհետ կատարել միայն հետախուզական խնդիրներ, այսինքն հռոմեական բանակը դառնալ զուտ հետևակային բանակ:

Այս ճակատամարտից հետո հռոմեական բանակի հոգեբանական վիճակը վատացավ, մարտական ոգին ընկավ, նա ցընցվեց իր կազմի քառորդի կորստից և իր ճամբարի խրամատների ետևից անցավ խուլ պաշտպանության:

Աղձնիքի գլխավոր ճակատամարտից հետո հռոմեական բանակը մի քանի օր ուշքի էր գալիս (հայերը հռոմեական ճամբարի դաշտային ամրությունների զրոհի փորձեր չէին ձեռնարկում): Լուկուլլոսը քաջ գիտակցում էր, որ Տիգրանը պետք է շտապի ձմեռային բնակարաններ տեղափոխելու իր բանակի մեծ մասը և առանձնապես չէր շտապում:

Աղձնիքի գլխավոր ճակատամարտի գնալը, Լուկուլլոսի կողմից այս պատերազմում կատարած հազվադեպ սխալներից մեկն էր: Հակառակորդը Լուկուլլոսից ակնհայտ մեծաթիվ և ուժեղ էր, սակայն Լուկուլլոսին թվաց, որ ճակատամարտում իր կողմից է ժամանակի գործոնը: Տիգրանի համար ժամանակի կորուստը ուներ ոչ թե մարտավարական, այլ ռազմավարական նշանակություն: Փոքր հապաղումը կարող էր վերջանալ Տավրոսի լեռնանցքների անանցանելիությամբ և իր հսկայական բանակը կմնար ձմեռելու մի տեղ, որտեղ ձմեռել չէր կարելի: Լուկուլլոսը, որը պետք է շարժվեր հարավ, լեռնանցքներ անցնելու խնդիր չուներ:

Ճակատամարտում Լուկուլլոսը ստացավ ևս մեկ դաս, որը դժվար թե հնարավոր լինի ավելի լավ ձևակերպել, քան հանձարեղ Պոլիբիոսը.

«Դրանով հաջորդ սերունդներին դաս տրվեց, որ պատերազմի համար ավելի ձեռնտու է ունենալ հակառակորդի համեմատ կիսով չափ պակաս հետևակ և վճռականապես գերազանցել թշնամուն հեծելազորով, այլ ոչ թե հակառակորդի դեմ մարտի բռնվել կատարյալ հավասար ուժերով» Պոլիբիոս. Ընդհանուր պատմություն. Գիրք III, 117, [195] (թարգմ. ռուսերենից Ա.Գ.):

Իրապես, հնարավոր չէ ընդդիմանալ լավ կազմակերպված ու մեծ հեծելազոր ունեցող բանակին միայն հետևակով. Լուկուլլոսը, պատերազմը նախապատրաստելիս արդեն սխալվել էր: Միայն մի քանի դար հետո, Հռոմը վերջնականապես կըմբռնի լավ հեծելազոր ունենալու անհրաժեշտությունը:

Ճակատամարտից անմիջապես հետո Տիգրանն ընդունեց կարևոր ռազմավարական որոշումներ, որոնց իրագործման համար կատարեց հետևյալ գործողությունները.

- Միհրդատ Եվպատորին զորք տրամադրեց և ուղարկեց Պոնտոսն ազատագրելու,
- իր արագաշարժ զորագնդերից մեկով հետապնդեց Աղձնիքի գլխավոր ճակատամարտի դաշտը լքած կորդ-

վացի զինվորներին, մի մասին զերի վերցրեց, խույս տվածների հետ մեկտեղ մտավ Կորդուք և, ըստ երևույթին, հերթական անգամ գրոհով, իսկ ավելի շուտ, իր կողմնակիցների օժանդակությամբ մեկ անգամ ևս գրավեց Փինական (այդպիսի որոշում կընդունեին վերջին 5.000 տարվա միջակ ընդունակությունների զորավարներից երեք քառորդը, և մենք հիմքեր չունենք կարծելու, որ Տիգրանի և Միհրդատի նման տաղանդավոր զորավարներն այդ քայլին չէին դիմի),

- իր բանակի մեծ մասը, հատկապես ծանր հետևակը ուղարկեց Տուրուբերան և այլ նահանգներ ձմեռելու: Զորքերը հոգնած էին, պարենավորումն շուտով խիստ դժվարանալու էր Հայկական Տավրոսի լեռնանցքների մուտալուտ ձմեռային անանցանելիության պատճառով,
- Մանկայոսին կարգադրվեց հսկողության տակ վերցնել Աղձնիքում ազատագրված կարևորագույն բերդաքաղաքները և ամրոցները,
- հայկական, հնարավոր է նաև մեդական մի քանի թեթև հեծելազորերին հանձնարարված էր աչալրջորեն հետևել Լուկուլլոսի բոլոր տեղաշարժերին:

Միհրդատ Պոնտացու արշավը Պոնտոս կազմակերպվեց գաղտնի: Սկզբում նա հավանաբար շարժվել է հյուսիս՝ ձմեռելու մեկնող հայկական հետևակային բանակի հետ, սակայն մեկ երկու օրվանից սրընթաց արշավել է դեպի Մեծ և Փոքր Հայքերի սահմանագլուխը:

Նշված բոլոր զորաշարժերից հետո Տիգրանի տրամադրության տակ, ըստ երևույթին, մնացին մի քանի ծանր և թեթև հեծելազորեր, նաև մի քանի գունդ միջին և թեթև հետևակ, ընդամենը 15.000 զինվոր, չհաշված Մանկայոսի զորաբանակը: Այս բանակը բավարար էր թշնամուն մշտապես անհանգստացնելու համար, սակայն ջախջախել Լուկուլլոսին այս ուժերով նա չէր կարող:

Տիգրանի հիմնական ուժերի ձմեռելու մեկնելուց հետո, Լուկուլլոսը շունչ քաշեց՝ մինչև հաջորդ տարվա ամառը իր բանակին մահացու վտանգ արդեն չէր սպառնում: Մնում էր պարզել, որտեղ ձմեռել և միաժամանակ օգուտ քաղել ստեղծված իրավիճակից: Այստեղ Լուկուլլոսի, մեծ կոդոպտիչի, բնազդը՝ անթերի էր:

Լուկուլլոսը որոշեց հարձակվել Մծբինի վրա, գրավել այն և ձմեռել այնտեղ, որովհետև դեպի Կորդուք գնալը հեռանկարային չէր, հնարավոր է նաև, որ ճանապարհներն արդեն փակվում էին հայկական բանակի զորաշարժով, իսկ ուշ աշնանը Աղձնիքով անցնել, հետո Ծոփքով Կապադովկիա գնալ, բավականին վտանգավոր էր և կապված էր մեծաթիվ զոհերի հետ:

Մծբինը մեծ ու հարուստ քաղաք էր, որի կողոպուտը կարդարացներ քաղաքի պաշարման ժամանակ տված հազարավոր զոհերը:

6.6.Հայ-պոնտական հակահարվածը Պոնտոսում

68-ի տարեվերջին՝ ուշ աշնանը և ձմեռվա սկզբին, ռազմական գործողություններն Աղձնիքում և Միգդոնիայում չդադարեցին, դրանք նաև դուրս եկան Հայկական կայսրության տարածքից և տեղափոխվեցին հռոմեացիների կողմից բռնազավթած Պոնտոս: Այսուհետ պայքարը Հռոմի հանրապետության դեմ շարունակվելու էր ոչ միայն հարավհայաստանյան, այլև նորաստեղծ՝ պոնտական ռազմաճակատում:

6.6.1.Միհրդատի հեռարշավային զորաբանակի կազմը և արշավի նպատակները

Աղձնիքի ճակատամարտից անմիջապես հետո Տիգրանը Միհրդատ Պոնտացուն Պոնտոս արշավելու համար տվեց 4.000 հեծելազոր, որոնք պոնտական այրուձիու հետ միասին կազմեցին 8.000 –ոց հեծելաբանակ [34, 42, 51: «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա»-յում Ապպիանոսի. Գիրք XII. Միհրդատական. 88. հատվածը թարգմանված է որոշ վրիպակներով և անթույլատրելի կարճ.

«Արդ, Տիգրանը քաշվեց Հայաստանի ներքին մասերը, իսկ Միհրդատը գնաց Պոնտոսի իր թագավորության մնացած մասերը, իր հետ ունենալով 4.000 յուրայինների և նույնքան էլ Տիգրանից ստանալով» [17]:

Ապպիանոսի ռուսերեն թարգմանությունը ունի մի փոքր այլ շեշտադրում. Ապպիանոս. Գիրք XII. Միհրդատական. 88.

«Արդ, Տիգրանը հեռացավ Հայաստանի ներքին մասերը, իսկ Միհրդատը սլացավ Պոնտոս, որտեղ դեռ կային իր թագավորության մնացորդները, իր հետ ունենալով 4.000 յուրային զինվոր և նույնքան էլ վերցնելով Տիգրանից: Նրա հետևից շարժվեց և Լուկուլլոսը. նա նույնպես հարկադրված էր հեռանալ պարենի անբավարարության պատճառով.» [59]:

Պլուտարքոս. Կենսագրություններ. Լուկուլլոս. 34.

«... Վերջինս (Միհրդատը – Ա.Գ.) չհապաղեց Հայաստանից դարձյալ մտնել Պոնտոս և սկսեց վերանվաճել իր թագավորությունը, իսկ հռոմայեցի զինվորներն անգործ նստել էին Գորդիենեում, պատճառ բերելով ձմեռը և սպասելով, որ ահա ուր որ է կհայտնվի Պոմպեոսը կամ մեկ ուրիշ զորավար, փոխարինելով Լուկուլլոսին.» [42]:

Պլուտարքոսը այս դրվագում շփոթում է 69-68 թթ. ձմեռը, որը Լուկուլլոսի բանակն անցկացրեց Կորդուքում, 68-67 թթ. ձմռան հետ, որի ժամանակ հռոմեական բանակը գտնվում էր Մծբինում [34, 42, 291]: Այդ մասին ճշգրիտ տեղեկություններ է հաղորդում Դիոն Կասսիոսը [51]:

Դիոն Կասսիոս. Գիրք 36. Քսիփիլինոս. 8.2. *«Այնժամ նա (Տիգրանը – Ա.Գ.) Միհրդատին ետ ուղարկեց իր երկիրը, իսկ ինքը եկավ իր Հայաստանը և այստեղ իրեն դիմաղրած Լուկիոս Փանիոսին շրջապատեց ու պաշարեց, մինչև որ Լուկուլլոսն այդ մասին իմանալով, օգնություն ուղարկեց:*

9.1. Մինչ այդ դեպքերը տեղի էին ունենում, Միհրդատը, մտնելով մյուս Հայաստանը և նրա մերձակա շրջանները, հռոմայեցիներից շատերին, որոնք թափառում էին երկրով մեկ, հանկարծակի հարձակվելով՝ ոչնչացրեց, իսկ մյուսներին պատերազմում ջարդեց. և դրանով իսկ երկրի մեծագույն մասը արագորեն նվաճեց.» [51]:

Անտիկ հեղինակները միահամուռ վկայում են, որ Միհրդատ Պոնտացին ուղարկվեց Տիգրանի կողմից Պոնտոս հայկական օժանդակ զորքով իր երկիրը հռոմեացիներից ազատագրելու համար: Պարզենք, թե ինչ ուժերով 68 թ. հոկտեմբերի վերջին – նոյեմների սկզբին Փոքր Հայք մտավ Պոնտոսի արքան: Ապպիանոսը տեղեկացնում է, որ 8.000 հեծյալ զորաբանակից

4.000-ը Տիգրանի տրամադրած հեծելազորն էր, որից մեր բոլոր արդի հայ պատմաբանները փաստազուրկ հետևություն են անում, որ այս բոլոր հայ հեծյալները կատաֆրակտոսներ են [...]: Ինձ անհավանական է թվում, որ Տիգրան Մեծը Աղձնիքում գտնվող իր բանակներից պոնտոսյան օպերացիայի համար Միհրդատին տրամադրեր հայոց բանակի գլխավոր հարվածային ուժի՝ կատաֆրակտոսների մեկ երրորդը (կամ հայոց կայսերական բանակի մեկ քառորդը): Տիգրանը գիտեր, որ առջևում Լուկուլլոսի դեմ ծանր պայքարի շարունակությունն է: Ես ավելի հավանական եմ համարում Տիգրանի տրամադրած զորաբանակի հետևյալ համամասնությունը.

- 2 գունդ կատաֆրակտոսներ՝ 2.000 հեծյալ,
- 2 գունդ թեթև հեծելազոր՝ 2.000 հեծյալ:

Ինքը՝ Միհրդատն ուներ 4.000 պոնտական հեծելազոր: Այստեղ տեղին է հիշեցնել, որ 71 թ. վերջին պարտվելով Լուկուլլոսից, Միհրդատն անցնել էր Փոքր Հայքի Տոմիսա ամրոցից Մեծ Հայք միայն 2.000-ոց հեծելազորով: Նշանակում է, որ հետագա տարիներին փոքրհայքյան և պոնտացի զինվորականներն անընդհատ անցնում էին Մեծ Հայքի սահմանը և ծառայության մտնում Միհրդատ Եվպատորի մոտ: Ավելի հեշտ էր դա անել Մեծ Հայքի սահմանին գտնվող Փոքր Հայքի զինվորականներին, որոնք զանգվածային անցնում էին իրենց արքայի՝ Միհրդատի, հրամանատարության տակ: Այսպիսով, կարող ենք ենթադրել Միհրդատի պոնտական հեծյալ զորաբանակի հետևյալ կազմը.

- 1.000 փոքրհայքյան ծանր հեծելազոր (մեծհայքյան կատաֆրակտոսների նմանակում),
- 1.000 փոքրհայքյան թեթև հեծելազոր,
- 1.000 պոնտական (հյուսիսկապադովկիական) թեթև հեծելազոր,
- 1.000 հունական և վտարանդի հռոմեական ծանր հեծելազոր:

Վերջին գնդում ծառայող հռոմեացիների մեծ մասը և հույների զգալի մասը հետևակային սպաներ էին: Հետագայում Պոնտոսում նրանք կզբաղվեն Միհրդատի նոր հետևակային գնդերի մարզումով և ղեկավարությամբ, իսկ նրանց տեղը կզբաղեցնեն հույն և պոնտացի հեծյալները:

Այսպիսով, պոնտացիները ևս ունեին 2.000-ական ծանր և թեթև հեծելազոր, Տիգրանի տրամադրածի հետ՝ 4.000 ծանր և

նույնքան էլ թեթև հեծելազոր: Այս հեծելազորով Միհրդատ Պոնտացին սլացավ դեպի Մեծ և Փոքր Հայքերի սահմանը, սակայն արդյո՞ք միայն այս ուժերով նա մտավ իր երկրորդ թագավորությունը՝ Փոքր Հայք:

Ապպիանոսի հաղորդման մեջ հետևակի մասին հիշատակություն չկա: Ապպիանոսն ընդհանրապես ցածր է գնահատում պոնտական և հայկական հետևակի որակը և երբեմն չի էլ հիշատակում նրանց մասին: Հիշենք Մերուժանի մարտը հռոմեացիների՝ Մեքստիլիոսի զորաբանակի դեմ: Եթե Պլուտարքոսը խոսում է 3.000 հայ հեծյալների և շատ ավելի բազմաքանակ հետևակի մասին, ապա Ապպիանոսը սահմանափակվում է 2.000 հեծյալներին նշելով:

Ինձ թվում է, որ Պոնտոսի սահմանները վերահսկող հայկական զորաբանակի մի զգալի մասը Տիգրանը ևս վերաենթարկել էր Միհրդատին, և իր թագավորությունը մտնելիս, Պոնտոսի արքան ուներ առնվազն մի քանի հազար հայ հետևակային:

Մենք ենթադրել էինք, որ հռոմեացիների կողմից զավթված Փոքր Հայքի սահմանը պետք է, որ հսկեր մի հզոր զորագունդ.

1 գունդ ծանր այրուձի՝ 1.000 կատաֆրակտոս,
1 գունդ թեթև հեծելազոր՝ 1.000 թեթև հեծելամարտիկ,
1 գունդ ծանր (միջին) հետևակ՝ 1.000 նիզակակիր,
3 գունդ թեթև հետևակ՝ 3.000 աղեղնավոր և պարսավոր,
ընդամենը՝ 6.000 զինվոր:

Անհրաժեշտությունից ելնելով, այս ուժերից Տիգրանը Միհրդատ Պոնտացուն կարող էր վերաենթարկել հետևյալ գնդերը.

1 գունդ ծանր այրուձի՝ 1.000 կատաֆրակտոս,
1 գունդ ծանր (միջին) հետևակ՝ 1.000 նիզակակիր,
2 գունդ թեթև հետևակ՝ 2.000 աղեղնավոր և պարսավոր,
ընդամենը՝ 4.000 զինվոր:

Արդեն կարելի է պատկերացնել, թե ինչ ուժերով Միհրդատը մտավ Փոքր Հայք.

ա. պոնտական հեծյալ զորաբանակը.
1 գունդ փոքրհայքյան ծանր հեծելազոր՝ 1.000 հեծյալ,
1 գունդ փոքրհայքյան թեթև հեծելազոր՝ 1.000 հեծյալ,
1 գունդ պոնտական թեթև հեծելազոր՝ 1.000 հեծյալ,
1 գունդ հունական և վտարանդի հռոմեական ծանր հեծելազոր:

բ. Տիգրանի ուղարկած էքսպեդիցիոն զորաբանակը.

3 գունդ ծանր այրուձի՝ 3.000 կատաֆրակտոս,
2 գունդ թեթև հեծելազոր՝ 2.000 հեծյալ,
1 գունդ ծանր (միջին) հետևակ՝ 1.000 նիզակակիր.
2 գունդ թեթև հետևակ՝ 2.000 աղեղնավոր և պարսավոր.

Այսպիսով, դաշնակից արքաներից Միհրդատը սկսեց Պոնտոսի ազատագրումը հետևյալ զորքերով.

5.000 ծանր այրուձի, որոնցից 3.000 կատաֆրակտոսներ,
4.000 թեթև հեծելազոր,
1.000 նիզակակիր (պելտաստ),
2.000 թեթև հետևակ,
ընդամենը՝ 12.000 զինվոր:

Բանակի ճնշող մեծամասնությունը՝ 10.000-ը հայեր էին, երկու դաշնակից թագավորների հպատակները, ընդ որում մեկ անգամ ևս անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ մանկության մեծ մասն ու պատանեկությունը Փոքր Հայքում անցկացրած և հայոց Անտիպատրոս թագավորի կողմից որդեգրված Միհրդատ Եվպատորը հատկապես հայոց համար Տիգրանից հետո երկրորդ հայոց արքան էր (Միհրդատը ոչ թե նվաճել էր Փոքր Հայքը, որի օրինավոր թագավորն էր հանդիսանում, այլ միացրել էր իր երկու թագավորությունները՝ Պոնտոսը և Փոքր Հայքը: Ավելին, հետագայում, փոքրհայքյան ազնվականության պահանջով, նա նույնիսկ Փոքր Հայքին էր միացրել Պոնտոսի Տրապիզոնի մարզն) [25, 59, 291]:

Այս բանակը այնքան էլ մեծ չէր, սակայն արագաշարժ էր և կազմված էր կանոնավոր բանակի գնդերից, որի հիման վրա Պոնտոսում հնարավոր էր արագ հավաքագրել նոր հետևակային գնդեր: Հայտնի է, որ որակյալ հեծելագունդ մարզելու համար անհրաժեշտ է անհամեմատ ավելի շատ ջանք ու ժամանակ: Միհրդատը պայքարի հենց սկզբից արդեն ուներ մեծաքանակ, խիստ մարտունակ հեծելազոր, իսկ հետևակի հավաքագրման ու նախապատրաստման համար ուներ հմուտ հետևակային սպաներ, որոնք ժամանակին այնքան մեծ դեր խաղացին նաև Տիգրանի ծանր հետևակի մարզման գործում:

Լուկուլլոսը Պոնտոսում թողել էր երկու լեգեոն՝ Սոռնուտիոսի և Փարիոսի հրամանատարությամբ, որոնց մոտավոր թվաքանակը կարող ենք հաշվարկել: Ամեն մի լեգեոնում կարող էր լինել մոտ 5.000 լեգեոներ, նույնքան էլ փոքրասիացի դաշնակից ծանր հետևակում՝ մոտ 10.000 ծանրազեն, որոնց գումա-

ռում ենք մոտ 1-2.000 թեթև հետևակ և 500 հեծյալ, ընդամենը 23-5.000 զինվոր, չհաշված զումակում ծառայողներին: Բիթանիայում և Հռոմեական Ասիայում ևս կային զգալի ուժեր, որոնցից մեր հաշվարկների համար կարևոր են Տրիարիոսի հրամանատարության տակ գտնվող զորքերը՝ ոչ պակաս, քան մեկ լեգեոն իր բազմաթիվ օժանդակ զորքերով՝ մոտ 12-15.000 զինվոր: Հռոմեացիները, Արևելքում գտնվող իրենց զինված ուժերից մինչև 40.000 զինվորով, չհաշված նավատորմը, Պոնտոսում կարող էին անմիջապես հակազդել Միհրդատի գործողություններին: Այս դեպքում Բիթանիայում և հռոմեական նահանգ Ասիայում մնում էր 2-3 լեգեոն:

Հռոմեական զորքի վայրագությունները և համատարած թալանը Պոնտոսի բնակչությանը դրել էին շատ ծանր կացության մեջ: Գրեթե սպառվել էր երկրի նախկին հզոր մոբիլիզացիոն հնարավորությունը: Սակայն ատելությունը հռոմեացի զավթիչների նկատմամբ այնքան մեծ էր, որ Միհրդատի մոտ սկսեցին հավաքվել ոչ միայն նոր զինվորներ, այլ նաև իր նախկին զինակիցների մի մասը սկսեց լքել հռոմեական ծառայությունը:

Միհրդատը Պոնտոսում ուներ շատ ուժեղ հակառակորդ և նույնքան ուժեղ դաշնակիցներ՝ հզոր հայկական զորաբանակը և, ինչը պակաս կարևոր չէր՝ իր կեղեքված ու հարստահարված ժողովրդի ցասումը և հատուցման սպասումը:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Միհրդատի զորքերի հարձակումները հռոմեացիներն այլևս կասեցնել չէին կարող:

6.6.2.Միհրդատի զորաբանակի մուտքը Փոքր Հայք և առաջին մարտերը

Միհրդատի զորաբանակի մուտքը Փոքր Հայք և Պոնտոս և առաջին մարտերը նկարագրել են Դիոն Կասսիոսը, Ապպիանոսը և Պլուտարքոսը: Որոշ անուղղակի տեղեկություններ կարելի է ստանալ նաև այլ աղբյուրներից [167, 219]:

Դիոն Կասսիոս. Գիրք 36. Քսիփիլինոս. 8.2. « ... *Այնժամ նա (Տիգրանը – Ա.Գ.) Միհրդատին ետ ուղարկեց իր երկիրը, իսկ*

ինքը եկավ իր Հայաստանը և այստեղ իրեն դիմադրած Լուկիոս Փանեիոսին շրջապատեց ու պաշարեց, մինչև որ Լուկուլլոսն այդ մասին իմանալով, օգնություն ուղարկեց:

9.1. Մինչ այդ դեպքերը տեղի էին ունենում, Միհրդատը, մտնելով մյուս Հայաստանը և նրա մերձակա շրջանները, հռոմայեցիներից շատերին, որոնք թափառում էին երկրով մեկ, հանկարծակի հարձակվելով՝ ոչնչացրեց, իսկ մյուսներին պատերազմում ջարդեց. և դրանով իսկ երկրի մեծագույն մասը արագորեն եկամեց: Քանզի մարդիկ նրան համակրում էին և՝ համազգի լինելու, և՝ հայրենի թագավորական իշխանություն ունենալու պատճառով. մինչդեռ հռոմայեցիներին ատում էին և՝ այլազգի լինելու, և՝, որպես իշխողներ, իրենց հալածած լինելու պատճառով, հետևաբար անցան նրա կողմը և դրանից հետո հաղթեցին այնտեղի կառավարիչ Մարկոս Փաբիոսին: Քանզի թրակիացիները, որոնք նախապես վարձկաններ էին Միհրդատի մոտ, իսկ այժմ Փաբիոսի հետ էին, և հռոմեական բանակատեղում գտնվող ստրուկները նրանց մեծապես օգնեցին: Որովհետև թրակիացիները Փաբիոսի կողմից հետախուզության ուղարկվելով, ոչ մի որոշակի տեղեկություն չհաղորդեցին նրան, և դրանից հետո, երբ նա առաջվա նման անզգույշ էր առաջանում, և Միհրդատը հանկարծակի հարձակվեց նրա վրա, նրանք ևս համատեղ նետվեցին հռոմայեցիների վրա: Միաժամանակ ստրուկները ևս, որոնց համար բարբարոս (թագավորը) ազատություն էր հռչակել, մասնակցեցին գործին: Եվ կոչնչացնեին նրանց, եթե Միհրդատը, որ արդեն յոթանասուն տարեկանն անց լինելով դեռևս կովում էր, քարով չվիրավորվեր: Այս էլ երկյուղ ներշնչեց բարբարոսներին, թե նա կարող է մեռնել: Ուստի և այդ պատճառով նրանք դադարեցրին կռիվը, և Փաբիոսն ու մյուսները կարողացան ապահով տեղ փախչել:

10.1. Այս դեպքերից հետո (Փաբիոսը) փակվեց Կաբիրայում և պաշարվեց, բայց ազատվեց Տրիարիոսի կողմից: Քանզի սա Ասիայից Լուկուլլոսի մոտ գնալիս, գտնվում էր այդ շրջանում, և տեղեկանալով կատարված դեպքերի մասին, հավաքեց ներկա եղողներից հնարավորին չափ մեծ ուժ և այնպես շփոթեցրեց Միհրդատին, որը կարծեց, թե պետք է հանդիպի հռոմեական ամբողջ բանակին, որը ստիպեց նրան հեռանալ, դեռևս բոլորովին, ի տես չեկած: Եվ այս բանից հետո (Տրիարիոսը) պատպանվելով, փախչող (Միհրդատին) մինչև Կոմանա հալածեց և

այնտեղ հաղթեց: Քանի որ Միհրդատը բանակել էր հանդիպակած ափին այն գետի, որի կողմից մոտենում էին հռոմայեցիները, ապա ցանկացավ նրանց հետ կռվի բռնվել, քանի դեռ նրանք ճանապարհից հոգնած էին. ուստի և ինքը եկավ ընդառաջ և միաժամանակ ուրիշներին ևս կարգադրեց ճակատամարտի ընթացքում մեկ այլ կամրջով անցնելով՝ հարձակվել: Եվ ինքը, թեպետև երկար ժամանակ հավասար կերպով կռվում էր, կամուրջը, որի վրայով շատերը համատեղ բազմությամբ անցնում էին ... զրկեց նրան օգնությունից և շփոթության մատնեց:
11.1.Եվ սրանից հետո նրանք երկուսն էլ քաշվեցին իրենց ամրությունները, քանզի արդեն ձմեռ էր, և հանգիստ արեցին: ... » [51]:

Ապպիանոսի ռուսերեն թարգմանությունից. Գիրք XII. Միհրդատական. 88.

«*... Միհրդատը գնացավ Պոնտոս, որտեղ դեռ կային իր թագավորության մնացորդները, իր հետ ունենալով 4.000 յուրային զինվոր և նույնքան էլ վերցնելով Տիգրանից: Իր հետևից շարժվեց և Լուկուլլոսը. նա նույնպես հարկադրված էր հեռանալ պարենի անբավարարության պատճառով: Կանխելով նրան, Միհրդատը հարձակվեց Փաբիոսի վրա, որին այստեղ գլխավոր հրամանատար էր թողել Լուկուլլոսը, և նրան փախուստի մատնելով, սպանեց 500 մարդ: Փաբիոսը ազատեց իր ճամբարում գտնվող բոլոր ստրուկներին և ամբողջ օրվա ընթացքում կրկին ճակատամարտեց Միհրդատի դեմ: Ճակատամարտն ընթանում էր փոփոխական հաջողությամբ, մինչև հարկադրված պետք չեղավ մարտից շտապ դուրս բերել Միհրդատին, որը խոցվել էր քարով՝ ծունկից և նետով՝ աչքի տակ: Դրանից հետո երկար օրեր պահպանում էին հանգստություն՝ ոմանք վախից թագավորի առողջության համար, ոմանք էլ՝ մեծաթիվ վիրավորվածների պատճառով: Խնամում էին Միհրդատին ազարները՝ սկյութական մի ցեղ, որոնք բուժելու համար օգտվում էին օձի թույնից և այդ պատճառով միշտ գտնվում էին թագավորի շրջապատում: Փաբիոսի մոտ էլ իր զորքով ժամանեց Տրիարիոսը՝ Լուկուլլոսի մյուս զորավարը ու Փաբիոսից ընդունեց կոչումը և իշխանությունը: Միաժամանակ անց, երբ Տրիարիոսը և Միհրդատը պատրաստվում էին իրար դեմ սկսել ճակատամարտը, բարձրացավ այնպիսի մի փոթորիկ, որի նմանը չեն հիշում, պոկեց թե՛ մեկի, թե՛ մյուսի վրանները, վեր բարձրացրեց ուղեբեռներն ու լծվող անասուններին, և մարդկանցից էլ ոմանց գցեց անդունդը: Այն ժամանակ երկուսն էլ բաժանվեցին*» [59]:

Պլուտարքոս. Կենսագրություններ. Լուկուլլոս. 35.

«*Երբ, սակայն, լուր ստացվեց, որ Միհրդատը ջարդել է Փաբիոսին և գնում է Սոռնատիոսի ու Տրիարիոսի դեմ, զինվորներն ամոթ զգացին և հետևեցին Լուկուլլոսին: ...*» [42]:

Միհրդատի հակահարձակումը Փոքր Հայքում լիովին անսպասելի էր հռոմեացիների համար: Նրանց մեծ մասը ցրված էր երկրում ու զբաղված էր կողոպուտով: Հենց այս հռոմեական մանր ստորաբաժանումներն ընկան Միհրդատի ղեկավարած հայերի կատաղի հարվածների տակ և գրեթե իսպառ ոչնչացվեցին:

Մարկոս Ադրիանոս Փաբիոսի (Գրքաշարյանի մոտ՝ Մարկոս, այլոց մոտ՝ Ադրիանոս – ես միացրեցի՝ Ա.Գ.) լեգեոնի մնացորդները հավաքվեցին իր հրամանատարի մոտ հռոմեական բանակատեղում [42, 51, 59]:

Միհրդատը ուշի ուշիմ հետևում էր հռոմեացիների լծի տակ գտնվող իր թագավորության բոլոր անցքերին, և, անկասկած, Պոնտոսն ու Փոքր Հայքը նախապատրաստել էր հակահռոմեական ապստամբության: Նրա բազմաթիվ ժողովուրդների դեմ կատարած բռնությունները պետք է, որ ամրացնեին նրանց հակահռոմեական միությունը:

6.6.3.Փաբիոսի զորաբանակի պարտությունը և Պոնտոսի ազատագրման սկիզբը

Ճակատամարտը Մարկոս Ադրիանոս Փաբիոսի զորքերի դեմ, ըստ երևույթին, տեղի ունեցավ արդեն բուն Պոնտոսի տարածքում, որովհետև պարտությունից հետո Փաբիոսը պատսպարվեց Կաբիրայում: Փաբիոսն արդեն լուրջ կորուստներ էր ունեցել՝ Միհրդատի կոտորած հռոմեական ստորաբաժանումներն, ըստ երևույթին, պատկանում էին հենց իր լեգեոնին: Ճակատամարտից առաջ Միհրդատը, հավանաբար, իր հետախույզների միջոցով կապվել էր Փաբիոսի մոտ ծառայող թրակիացիների հետ, որոնք նախկինում վարձկան էին Միհրդատի մոտ, և նրանք հետախուզությունից հետո Փաբիոսին չտեղե-

կացրին Միհրդատի մոտեցող բանակի մասին, ավելին՝ ճակատամարտի ժամանակ անցան Միհրդատի կողմը [51]:

Ճակատամարտի ընթացքում ապստամբեցին նաև հռոմեացիների ճամբարի ստրուկները, որոնց Միհրդատը ազատություն էր խոստացել: Հռոմեացիների համար ճակատամարտի ընթացքը խիստ անբարենպաստ էր. Միհրդատի զորքերը նրանց վրա հարձակվեցին անսպասելի: Շուտով, ընկնելով Միհրդատի գրոհող բանակի, վարձկան թրակիացիների ջոկատների և ճամբարում ապստամբած ստրուկների միջև, նրանք իսպառ կոչնչացվեին, եթե հռոմեացիներին չփրկեր մարտում Միհրդատի անսպասելի վիրավորվելը. դիպուկ նետած քարից վնասվել էր ծունկը և նետի սլաքից՝ ակնակապիճի ստորին ոսկորը: Վիրավոր թագավորին դուրս բերեցին մարտի դաշտից և, տագնապած, մարտը դադարեցրին, ինչը կենդանի մնացած հռոմեացիներին հնարավորություն տվեց փրկել իրենց կյանքը:



Նկար 6.21. Միհրդատի բանակի գրոհը Փաբիոսի ջոկատի վրա

Ապպիանոսը տալիս է այս դրվագի այլ նկարագրություն. Այստեղ Փաբիոսը, որը Պոնտոսում հռոմեական զորքերի գլխավոր հրամանատարն էր, ինքն է ազատում իր բոլոր ստրուկներին, նրանցով համալրում իր զորքը, որի շնորհիվ կարողանում է ևս մեկ օր դիմադրել Միհրդատին:

Ինձ թվում է, որ և՛ Դիոն Կասսիոսը, և՛ Ապպիանոսը ճիշտ էին, ստրուկների մի մասը հրապուրվել էր Միհրդատի խոստումներով և անցել պանտացի արքայի կողմը, իսկ մեծամասնությունը մնացել էր Փաբիոսի մոտ ու մարտնչել էր Միհրդատի դեմ: Այս մարտում Փաբիոսը միայն իր լեգեոնից կորցրեց ավելի քան 500 լեգեոներ: Նա փակվեց Կաբիրայում և պաշարվեց, բայց ազատվեց Տրիարիոսի կողմից:

Դիոն Կասսիոսը գրում է, որ Տրիարիոսը իր բանակով գնում էր Լուկուլլոսի մոտ, երբ իմացավ, որ Փաբիոսը ջախջախված է և իր զորքի մնացորդներով պատսպարվել է Կաբիրա քաղաքում: Տրիարիոսը ոչ միայն համախմբեց իր ուժերը, այլև հավաքեց հնարավորինս մեծ բանակ և շարժվեց Միհրդատի վրա, որը դեռ չէր հասցրել տեղացիներից հավաքել քիչ թե շատ նշանակալի զորք: Տրիարիոսը պաշտոնազրկեց Փաբիոսին, իր վրա վերցրեց ողջ իշխանությունը և շարժվեց Միհրդատի դեմ [51]:



Նկար 6.22. Փաբիոսի պարտությունը և շրջափակումը ճամբարում

Տրիարիոսի և Սոռնատիուսի լեգեոնները, օժանդակ զորքերի հետ միասին արդեն ավելի, քան 25.000 զինվոր էին: Փաբիոսի լեգեոնը միացնելով, որոշ քանակությամբ զորք թողնելով Կաբիրայում, Տրիարիոսը Միհրդատի դեմ կարող էր հանել ավելի, քան 30.000-ոց բանակ: Լեգեոներին կից դաշնակցային կոհորտներում, ըստ երևույթին, հիմնականում ծառայում էին

բութանիացիները, որոնք առանձնապես շահագրգռված չէին պոնտացիների հաջողություններով:

Միհրդատը «ահաբեկված» իր վրա արշավող մեծաքանակ զորքի մասին տարածվող լուրերից, թողեց Կաբիրան և նահանջեց մինչև ոչ շատ հեռու գտնվող Պոնտոսյան Կոմանա, որտեղ կանգնած էր իր կայազորը: Կոմանայի մոտակայքում, գետի ափին տեղի ունեցավ ճակատամարտ Տրիարիոսի և Միհրդատի բանակների միջև, որի ելքը, ըստ Ապպիանոսի կամ Դիոն Կասսիոսի, հօգուտ հռոմեացիների էր:

Կոմանայի ճակատամարտի մանրամասները պահպանվել են Դիոն Կասսիոսի մոտ [51]: Դրանց վերլուծությունը շատ ուշագրավ է:

68 թ. իրադարձությունների մասին մենք տեղեկանում ենք հիմնականում Պլուտարքոսի, Դիոն Կասսիոս Կոկկեանի (շուրջ 155 – 235 թթ.) [42, 51] և Ապպիանոս Ալեքսանդրացու (95 – 165 թթ.) երկերից [59]:

Դիոն Կասսիոս. (Հռոմեական պատմություն. Գիրք 36. Քսիֆիլինոս. 8-13, 14.1, 14.2.) [51]:

«Ուստի Նիսիբիսը այս կերպ նա գրավեց, բայց Հայաստանի, ինչպես և Պոնտոսի շուրջը գտնվող մի շարք երկրամասեր կորցրեց:»

Փաբիոսի ջոկատը բաղկացած էր 2.000 լեգեոներներից (հավանաբար 4 կոհորտ), որը կազմում էր իր լեգեոնի մի մասը [169]: Մնացած 6 կոհորտներն, ըստ երևույթին, տեղակայված էին Պոնտոսի տարբեր վայրերում: Բացի լեգեոներներից Փաբիոսը ուներ բազմաթիվ դաշնակցային ուժեր: Հռոմեական հետախուզության միջոցով նա պետք է տեղեկացված լիներ, որ Միհրդատի բանակը բաղկացած է առնվազն 12.000 զինվորներից, ուստի նա կարող էր մարտի բռնվել Միհրդատի զինվորների հետ միայն այն դեպքում, երբ կունենար մեծաթիվ դաշնակցային զորքեր: Այդ զորքերից պատմիչները հիշում են միայն թրակիացիների ջոկատները: Դրանք այն զինվորներն էին, որոնք նախկինում ծառայել էին Միհրդատի բանակում:

Ըստ իս, ճակատամարտում մասնակցած Փաբիոսի դաշնակցային հետևակի թիվը մոտավորապես երկու անգամ պետք է գերազանցեր բուն լեգեոներների թվին, իսկ դաշնակցային հեծելազորն անհամեմատ ավելի շատ պետք է լիներ, քան հռոմեականը: Կարելի է ենթադրել, որ ճակատամարտում Փաբիոսը ուներ 6-7.000 հետևակ և 1.000-ից պակաս հեծելազոր՝ 7-8.000 զինվոր:

Այս ուժերով Փաբիոսը երկու օր ետ էր մղում պոնտացիների և հայերի կատաղի գրոհները, մինչև չջախջախվեց տեղի ունեցած ճակատամարտում և չփակվեց Կաբիրա քաղաքում: Ճակատամարտում Միհրդատ Եվպատորի վիրավորվելը փրկեց հռոմեացիներին գլխովին բնաջնջվելուց՝ աննկուն 64-ամյա արքան տնձամբ էր մասնակցում կատաղի ձեռնամարտին: Իր վրա նետած քարից նա սկզբում վիրավորվում է ծնկից և գրեթե միաժամանակ ստանում է շեշտակի հարված աչքի տակ դիպուկ արձակված նետից: Պոնտացին մի քանի օր շատ ծանր վիճակում էր: Նրան բուժեցին սկյութական ազգ ցեղի բժիշկները, որոնք բուժական նպատակով օգտագործում էին օձի թույն և անընդհատ գտնվում էին արքայի մոտ: Տարեց Միհրդատի պողպատյա առողջությունը հաղթեց հիվանդությանը:

Փաբիոսի 2.000-ոց հռոմեական ջոկատը մարտում կորցրել էր իր զինվորների զգալի մասը՝ պատմիչները տեղեկացնում են 500 սպանված հռոմեացիների մասին: Ճակատամարտի ընթացքը թույլ է տալիս ենթադրել, որ հռոմեացիները տվել են նաև մեծաքանակ գերիներ, ըստ իս, ոչ պակաս քան սպանվածների թիվը: Դա նշանակում է, որ Միհրդատն այս մարտից հետո ձեռք բերեց մոտ 1.000 կոմպլեկտ լեգեոներական սպառազինություն: Այսպիսով առաջին իսկ լուրջ բախումը Պոնտոսում հռոմեացիների համար վերջացավ աղետով՝ Փաբիոսը մարտում կորցրեց իր ջոկատի կեսը և պաշարվեց սեփական ճամբարում:

Կաբիրայում պաշարված Փաբիոսի լեգեոնին Ասիա նահանգից փրկության հասավ Տրիարիոսը: Նա ճանապարհին իրեն էր միացրել Պոնտոսում գտնվող երկրորդ՝ Սոռնատիուսի լեգեոնը: Տրիարիոսին, մի քանի աննշան ընդհարումներից հետո, հաջողվեց ազատել Փաբիոսին:

Այս ամենը որոշ ժամանակ պահանջեց, որի ընթացքում ծավալված մարտական գործողությունները դադարեցին վրա հասած ձմռան պատճառով: Հակառակորդները հանգիստ ձմռեցին՝ հռոմեացիները Կաբիրայում, Միհրդատը՝ Պոնտոսյան Կոմանայում: Ձմռան ընթացքում Միհրդատի հեծյալ ջոկատները շրջում էին երկրով մեկ, զինվորներ հավաքագրում ու պարեն հավաքում:

6.6.4. Կոմանայի ճակատամարտը

Տրիարիոսի 30.000-ոց բանակի դեմ Միհրդատն ուներ 15-20.000 զինվոր (Միհրդատի հետ Հայաստանից Պոնտոս եկած 4.000 պոնտացի ու 8.000 հայ զինվորներից բացի, մի քանի հազար էին կազմում նրա կողմն անցած վարձկան թրակիացիները, և մոտավորապես նույնքան էլ հռոմեացիներից ազատագրված ստրուկներ), և դիմակայել Տրիարիոսին Կաբիրայի մոտ նա չէր կարող:



6.23. Կոմանայի ճակատամարտ՝ Միհրդատի հայ-պոնտական և Տրիարիոսի հռոմեական բանակների նախնական դիրքը:

Տրիարիոսի դիրքը շատ ուժեղ էր՝ լավ պաշտպանված Կաբիրա քաղաքը թիկունք էր, ուներ հակառակորդին գրեթե երկու անգամ գերազանցող բանակ. միայն հեծելազորն ավելի թույլ էր, քան Միհրդատինը: Սակայն Միհրդատն իր համար անբարենպաստ պայմաններում մարտը չընդունեց: Նա արագ նահանջեց դեպի Պոնտական Կոմանա (չշփոթել բուն Կապադովկիայում գտնվող մեկ այլ, նույնանուն, Կոմանա քաղաքի հետ [219]) քաղաքը, որը գտնվում էր իր ձեռքում:



6.24. Կոմանայի ճակատամարտ, առաջին փուլ՝ Միհրդատի հայ-պոնտական բանակի հարձակումը Տրիարիոսի բանակի վրա վերջինիս երթի ժամանակ

Միհրդատի բանակը շատ արագաշարժ էր և կարողացավ հետապնդողներից կտրվել, ավելին, Կոմանայից ոչ հեռու գետերից մեկի ափին, Միհրդատը դասավորեց իր բանակը մարտի համար: Երբ երևացին հռոմեական բանակի երթից հոգնած զինվորների շարասյուները, նա սրընթաց անցավ գետը ու գրոհեց հռոմեացիների վրա, որոնք նույնիսկ երթակարգից չէին հասցրել դասավորվել մարտակարգով: Թեժ ճակատամարտ սկսվեց: Միաժամանակ Միհրդատը կարգադրեց մեկ այլ կամրջով գետն անցնել և հարձակվել հռոմեացիների վրա. Ըստ

երևույթին, այս երկրորդ զորախումբը պետք է թեից հարվածեր հռոմեացիներին: Սակայն այս կամրջի հետ ինչ-որ բան պատահեց (Դիոն Կասսիոսի տեքստն այստեղ վնասված է), որը Միհրդատին զրկեց օգնությունից և շփոթության մատնեց. ըստ երևույթին հռոմեացիներին ծուղակի մեջ գցելու նրա ծրագիրը ձախողվեց:



6.25.Կոմանայի ճակատամարտ, երկրորդ փուլ՝ Միհրդատի թևային հարվածի փորձը և նրա ձախողումը կամուրջի քանդվելու պատճառով

Ճակատամարտը վերջացավ առանց կռվերից որևէ մեկի հաղթանակի. Միհրդատի թիկունքային հարվածը ձախողվել էր և չնայած սկզբնական հաջողություններին, Տրիարիոսի թվային գերազանցությունը թույլ տվեց վերջինիս շտկել սկզբնական ծանր վիճակը: Տրիարիոսը նույնպես ոչ մի հաջողության չհասավ (նրա հաջողությունը չջախջախվելն էր), սակայն ազդարարեց իր հաղթանակի մասին: Միհրդատը չարձագանքեց՝ հարմար է, երբ հակառակորդի ոչ այնքան խելոք զորավարին թվում է, որ ինքը հաղթել է. սովորաբար դրանից հետո նա կորցնում է

զգուշությունը:



6.26.Կոմանայի ճակատամարտ, երրորդ փուլ՝Միհրդատի և Տրիարիոսի զորքերի վերադարձը նախկին դիրքերին:

Կոմանայի ճակատամարտի վերլուծությունը թույլ է տալիս պատկերացում կազմել Տրիարիոսի զորավարական ընդունակությունների մասին: Ճակատամարտի փուլերը ներկայացված են թիվ 6.25 – 6.28 գծանկարներում:

Այս դեպքերը տեղի էին ունենում 68 թ. նոյեմբերին – դեկտեմբերի սկզբին, ուստի հռոմեացիները նահանջեցին Կաբիրա, իսկ Միհրդատը՝ Կոմանա՝ ձմեռելու: Մարտի դաշտը մնաց Միհրդատին, և նա հիմք ուներ իրեն հաղթող համարելու թե՛ այդ պատճառով, թե՛ երկու անգամ սակավաթիվ բանակով ուժեղ թշնամուն կանգնեցնելու համար:

6.6.5.Հայ-պոնտական հակահարձակման արդյունքները և նշանակությունը

Դժվար է գերագնահատել Պոնտոսում հայ-պոնտական հակահարձակման նշանակությունը և ձեռք բերված արդյունքները: Բացելով երկրորդ՝ պոնտոսյան ռազմաճակատը, Տիգրանը գործեց «ոչ ուղղակի գործողությունների ռազմավարության» լավագույն ավանդույթներով [148]: Լուկուլլոսը ստացավ երկու ծանր հարված.

1. կորցրեց Պոնտոսը վերահսկելու իր մենաշնորհը: Միհրդատի բանակը, որը սկզբնական շրջանում գրեթե լրիվ բաղկացած էր Տիգրանի ուղարկած գնդերից, ջախջախեց հռոմեական մանր ստորաբաժանումներին և պարտության մատնեց Պոնտոսում գլխավոր հրամանատար կարգվաց Փաբիոսին: Վրա հասած Տրիարիոսի գերազանց ուժերն էլ ետ մղվեցին:

2. Տրիարիոսի մեծաքանակ ուժերը, որոնք, ըստ Դիոն Կասսիոսի հստակ հաղորդման, արշավում էին հարավային Հայաստան Լուկուլլոսի մոտ, կանգնեցվեցին Պոնտոսում և ներգրավվեցին Միհրդատի դեմ պայքարին: Այսպիսով, Լուկուլլոսը կորցրեց լուրջ համալրում ստանալու և պատերազմի անբարենպաստ ընթացքն իր օգտին փոխելու վերջին հույսերը [51]:

Լուկուլլոսի պարտությունը հարավային Հայաստանում դառնում էր ժամանակի հարց:

6.7. 68 թ. ռազմարշավի վերջին մարտերը Հայաստանում և Մծբինի պաշարումը

Աղձնիքի ճակատամարտից հետո երկու հայկական բանակները միավորվեցին Տիգրանի հրամանատարության տակ: Եթե մինչ այդ, Տիգրանը լինելով հայկական տերության բանակի գերագույն հրամանատարը, անմիջապես ղեկավարում էր միայն հայկական հեծյալ բանակը, ապա Միհրդատին վերաենթարկելով պատկառելի մի զորաբանակ և ուղարկելով նրան Պոնտոս, նա միավորեց իր հեծյալ և հետևակային բանակները: Մանկայոսի զորաբանակը, որը ժամանակավորապես միացել

էր հայկական հետևակային բանակին Աղձնիքի ճակատամարտի ժամանակ, Տիգրանը կրկին առանձնացրեց, որովհետև Մանկայոսի խնդիրն էր ապահովել Աղձնիքի ազատագրված տարածքների վերահսկողությունը:

68 թ. վերջին հայկական ուժերի ընդհանուր պատկերը հետևյալն էր. հայեր՝ ավելի, քան 60.000 զինվոր, որոնցից ատրպատականցիներ՝ մոտ 5.000 զինվոր, և դաշնակից պոնտացիները՝ մոտ 4.000 զինվոր (որոնցից 2.000-ը Փոքր Հայքի հայեր):

Այժմ պարզենք, ինչ հնարավոր թվաքանակ կարող էր ունենալ Տիգրանի հրամանատարության տակ գտնվող հայկական գործող բանակը 68 թ. ուշ աշնանը՝ Աղձնիքի ճակատամարտից հետո.

- կատաֆրակտոսներ՝ մոտ 8.000, որից, մեդական՝ 2.500,
- թեթև հեծելազոր՝ 15.000, այդ թվում մեդական՝ 2.500,
- ծանր հետևակ՝ 20.000,
- թեթև հետևակ՝ 3.500,
- օժանդակ զորք՝ 4.000:

Այսպիսով, Տիգրանի բանակում կար մոտ 23.000 հեծյալներ և 27.500 հետևակային, միասին գրեթե 51.000 զինվոր:

Միհրդատի էքսպեդիցիոն հեծյալ բանակում կար 4.000 հայ և 4.000 պոնտացի հեծյալներ (Աղձնիքի ճակատամարտում պոնտացի հեծյալների թիվը ցույց է տրված 3.500, որովհետև մոտավորապես 450-500 սպա և զինվոր մարտնչել էին հայկական ծանր հետևակի կազմում: Բնական է, որ այս զինվորականները գրեթե լրիվ կազմով վերադարձել էին իրենց հեծելազունդը՝ Միհրդատի հրամանատարության տակ: Այս սպաները հետագայում պետք է մարզեին ապագայում հավաքագրվող պոնտական հետևակային զորքը):

Մանկայոսի զորաբանակում կար մոտավորապես 4.500 հետևակ:

Այս հսկայաթիվ մարդկային և կենդանիների զանգվածը ձմռան պահել Աղձնիքում հնարավոր չէր պարենի պակասության պատճառով, և Տիգրանը բանակի մեծ մասն ուղարկել էր Հայաստանի կենտրոնական մասերը՝ մինչև Տավրոսի լեռնանցքների փակվելը: Իմ կարծիքով, Տիգրանն իր բանակից Աղձնիքում ձմեռելու թողեց մոտավորապես հետևյալ կազմը.

- կատաֆրակտոսներ՝ մոտ 6.500, որից մեդական՝ 2.500,
- թեթև հեծելազոր՝ 6.500, այդ թվում մեդական՝ 2.500,
- թեթև հետևակ՝ 2.000,
- օժանդակ զորք՝ 1.000,

ընդամենը 15-16.000 զինվոր: Մանկայոսի զորաբանակի հետ միասին Տիգրանն Աղձնիքում ձմեռելու թողեց մոտավորապես 20-21.000 զորք:

Այժմ փորձենք պատկերացնել Աղձնիքում մնացող բանակի բաժանումն ըստ զորամիավորումների: Այսպիսի հնարավորություն մենք ստանում ենք շնորհիվ նրա, որ բավական լավ ենք պատկերացնում 68 թ. աշնանն Աղձնիքում ստեղծված օպերատիվ վիճակը, որը և հուշում է բանակի հնարավոր ստորաբաժանումը.

1.Արքայից արքա Տիգրան Բ Մեծի հեծյալ զորաբանակ՝ 4.000 կատաֆրակտոս, որից 2.000 արքայի դրանիկ գնդերը և 3.000 թեթև հեծելազոր, ընդամենը՝ 7.000 հեծյալ,

2.Միհրդատ Մեդացու ատրպատականյան հեծյալ զորաբանակ՝ 2.500 կատաֆրակտոս և 2.500 թեթև հեծելազոր, ընդամենը՝ 5.000 հեծյալ,

3.Թեթև հետևակային զորաբանակ՝ թեթև հեծելազոր՝ 1.000 հեծյալ, թեթև հետևակ՝ 2.000 և օժանդակ զորամասեր՝ 1.000 զինվոր, ընդամենը՝ 4.000 զինվոր,

4. Ավագ բդեշխ Մանկայոսի Աղձնիքի զորաբանակ՝ մոտ 4.500 հետևակային և 500 հեծյալ, ընդամենը՝ 5.000 զինվոր:

Հայկական բանակի զորաբանակները շատ արագաշարժ էին և մեծաթիվ չէին, ինչը թույլ էր տալիս համեմատաբար հեշտ կազմակերպել նրանց պարենավորումը:

Ցուրաքանչյուր զորաբանակ ուներ իր առաջադրանքը.

1.Արքայից արքա Տիգրան Բ Մեծի հեծյալ զորաբանակը, Միհրդատ Մեդացու զորաբանակի հետ միասին որոշ ժամանակ հետապնդում էր նահանջող հռոմեացիներին, որի ընթացքում երկրում վերականգնում էր իր իշխանությունը: Հենց Տիգրանի ու Միհրդատ Մեդացու զորաբանակները շրջապատեցին Լուկիոս Փանիոսի ջոկատը:

2.Միհրդատ Մեդացու զորաբանակը սկզբնական շրջանում գործում էր Տիգրանի անմիջական հրամանատարության տակ, հետագայում, 67 թ. գարնանը, նա կուղարկվի Պոնտոս Միհրդատ Պոնտացուն օգնելու համար:

3.Թեթև հետևակային զորաբանակի գլխավոր խնդիրը, ըստ երևույթին, Կորդուքի հնազանդեցնելը, կամ չեզոքացնելն էր:

4. Ավագ բդեշխ Մանկայոսի Աղձնիքի զորաբանակը մտավ քանդված Տիգրանակերտ և այլ ամրոցներ և ամրացավ այնտեղ:

Հայկական 20-21.000 բանակից Լուկուլլոսի բանակին հետապնդում էին միայն 12.000 հեծյալներ: Նրանք շարժվում էին հռոմեացիներից զգալի հեռավորության վրա, սակայն ոչ այնքան հեռու, որ հռոմեացիները չկորցնեին վտանգի զգացումը: Խոշոր բախումներ հռոմեացիների հետ տեղի չունեցան, Տիգրանին անհրաժեշտ էր միայն լիովին վերականգնել իր դիրքերը ողջ այս տարածաշրջանում: Տիգրանի և Միհրդատի զորաբանակները բավարար չէին հռոմեացիներին պարտության մատնելու համար: Մոտալուտ ձմեռը անշեղորեն արգելակում էր հակառակորդների բոլոր զորաշարժերը:

Հայաստանի կենտրոնական մարզերը ձմեռելու վերադարձած հայկական բանակի հնարավոր կազմը.

- կատաֆրակտոսներ՝ մոտ 1.500,
- թեթև հեծելազոր՝ 8.500,
- ծանր հետևակ՝ 20.000,
- թեթև հետևակ՝ 1.500,
- օժանդակ զորք՝ 3.000,

ընդամենը 34.500 – 35.000 զինվոր:

Անտիկ հեղինակներից կարևորագույն տեղեկություններ կարողանում ենք ստանալ Դիոն Կասսիոսից և Պլուտարքոսից: Ապպիանոսը, որի նպատակն է պատմել Միհրդատի և հռոմեացիների հետ կատարվածի մասին, Հայաստանի ռազմական զարգացումների, մասնավորապես՝ Մծբինի գրավման մասին ընդհանրապես չի հիշատակում:

Դիոն Կասսիոս. Քսիփիլինոս. Գիրք 36.

«6.1. *Այնժամ Լուկուլլոսը, քանի որ շատերը վիրավորվում էին և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց այդ տեղից և արշավեց Նիսիբիսի վրա: Այս քաղաքը կառուցված է Միջագետք կոչված երկրում – քանզի այսպես է կոչվում Տիգրիս և Եփրատի միջև գտնվող ամբողջ (երկիրը) - և այժմ այն պատկանում է մեզ և համարվում է մեր գաղութը: Բայց այդ ժամանակ Տիգրանը պարթևներից վերցնելով այն, իր գանձերը և այլ*

հարստությունների մեծ մասը այնտեղ էր կենտրոնացրել և իր եղբորը այնտեղ բերդապահ էր կարգել: Լուկուլլոսը ամռանը հասնելով այս քաղաքը, թեպետև հարձակվում էր ոչ իմիջիայլոց, բայց ոչինչ չկարողացավ վճռել. քանզի (քաղաքի) պարիսպները և՛ կրկնակի, և՛ աղյուսաշեն լինելով, մեծ հաստություն ունեին և բաժանված էին խորը խրամատով. այնպես որ ոչ մի տեղում չկարողացավ (պարիսպը) ո՛չ քանդել, ոչ իսկ խախտել. ուստի և Տիգրանը նույնիսկ օգնության չեկավ յուրայիններին: Բայց երբ ձմեռը վրա հասավ, և բարբարոսները դարձան առավել անզգույշ, քանի որ իրենք գերազանցել էին հռոմայեցիներին և երբեք չէին սպասում, որ նրանք իրենց տեղերից կշարժվեն, (Լուկուլլոսը) ընտրելով անլուսնկա մի գիշեր, երբ ուժեղ տեղատարափ էր և ամպրոպ, ուստի և թշնամին չէր կարող նախապես ոչինչ տեսնել, ոչ իսկ լսել, լքեց արտաքին շրջապարիսպը և միջակա խրամատը թողնելով մի փոքր խումբ, և շատ տեղերում մոտեցավ պարսպին. առանց դժվարության անցավ հողաթմբերը և հեշտությամբ սպանեց այնտեղ թողնված ոչ մեծաթիվ պահակներին:

Եվ այսպիսով, խրամատի մի մասը լցրեց –քանզի բարբարոսները քանդել էին կամուրջները –իսկ ուժեղ տեղատարափի պատճառով, ոչ նետաձգությունը, ոչ իսկ կրակը չէին կարողանում նրան վնասեին: Ուստի անցնելով այն, անմիջապես գրավեց ամեն ինչ, քանի որ ներքին շրջապարիսպը այնքան ամուր չէր, որովհետև արտաքին պատի ամրությունը վստահություն էր ներշնչում: Իսկ միջնաբերդ փախածներին, որոնց մեջ էր նաև Տիգրանի եղբայրը, հետագայում ստիպեց հանձնվել: Այսպիսով և՛ մեծաքանակ հարստություն ձեռք բերեց, և՛ այնտեղ էլ ձմռեց.» [51]:

Պլուտարքոս. Կենսագրություններ. Լուկուլլոս. 32.

« ... Եռդարձի ճանապարհին նա Տավրոսն անցավ այլ լեռնանցքներով և իջավ Միգդոնիա կոչված բարեբեր և տաք երկիրը: Այս տեղ գտնվում է խոշոր և մարդաշատ մի քաղաք, որ բարբարոսները կոչում են Նիսիբիս, իսկ հույները՝ Միգդոնիան Անտիոք: Այս քաղաքում կառավարում էին երկուսը. իր բարձր դիրքի շնորհիվ կառավարիչը Գուրասն էր՝ Տիգրանի եղբայրը, իսկ իր փորձի ու մեքենաներ պատրաստելու մեծ հմտության՝ նույն այն Կալլիմաքոսը, որն Ամիսոսում Լուկուլլոսին այնքան շատ անախորժություններ էր պատճառել: Լուկուլլոսը բանակեց Նիսիբիսի պատերի տակ և գործի դրեց պաշարողական արվեստի բոլոր հնարները: Շուտով քաղաքը վերցվեց գրոհով: Գուրասը կամավոր հանձնվեց և արժանացավ գթալից վերաբերմունքի. իսկ Կալլիմաքոսին, թեև սա խոստացավ հռոմեացիներին ցույց տալ խոշոր գաղտնի գանձատները, Լուկուլլոսը չուզեց լսել և հրամայեց շղթայակապ անել, որպեսզի հետագայում նրան պատժի այն հրդեհի համար, որը ոչնչացրեց Ամիսոսը և զրկեց Լուկուլլոսին բավարարելու իր պատվասիրությունը և ցույց տալու հույներին իր բարյացակամությունը.» [42]:

6.7.1. 68 թ. ռազմարշավի վերջին մարտերը և Լուկիոս Փանիոսի ջոկատի շրջափակումը

Լուկուլլոսն արդեն պաշարել էր Մծբինը, երբ լուր ստացավ, որ Տիգրանի բանակը շրջապատել է Լուկիոս Փանիոսի ջոկատը, գցելով նրան շատ ծանր վիճակի մեջ: Լուկուլլոսը հարկադրված կիսում է բանակը, և մի մասը թողնելով Մծբինը պաշարելու, մնացածով շարժվում է Փանիոսին օգնության: Փանիոսն, ըստ երևույթին, գտնվում էր ինչ-որ ամրությունում, որը թույլ է տալիս նրան հաջողությամբ ետ մղել պաշարման համար համապատասխան միջոցներ չունեցող հայերի գրոհները: Հռոմեական զորաբանակի մոտենալուց հետո Տիգրանի պաշարող զորաբանակն առանց մարտի ետ է քաշվում. Տիգրանն արդեն խնայում էր իր ուժերը և երկրորդական նպատակների հասնելու համար անտեղի չէր համառում:

Լուկիոս Փանիոսի ջոկատի ապաշրջափակման պատմության մասին տեղեկությունը պատահական չի պահպանվել: Փանիոսի ջոկատին, հավանաբար, վստահված էր ինչ-որ կարևոր բան պահպանել, որը փրկելու համար Լուկուլլոսը այդքան ջանք թափեց:

Հնարավոր է նաև, որ Փանիոսի ջոկատը Միգդոնիայում հռոմեական ամենահյուսիսային պահակակետն էր, և Լուկուլլոսը պարզապես չէր կարող բախտի քմահաճույքին թողնել իր բանակի զորամասերից մեկը՝ հակալուկուլլոսյան տրամադրությունները բանակում արդեն շատ ուժեղ էին: Ինձ ավելի հավանական է թվում երկրորդ վարկածը:

6.7.2. Մծբինի անկումը

In rebus bellicis maxime dominatur Fortuna (Tacitus) – ռազմական գործում առավելագույն ուժն ունի պատահականությունը:

(Կորնելիոս Տակիտոս [70], Հին Հռոմ, մոտ 55–120 թթ.)

Մծբինը լավ ամրացված խոշոր կայազորով քաղաք էր, որի պաշարումը կարող էր թանկ նստել Լուկուլլոսին: Անշուշտ նա կարող էր հեռանալ Հայաստանից այն ճանապարհով, որով եկել էր՝ Ծոփքով դեպի Կապադովկիա: Սակայն, նա չէր կարող անփառունակ հեռանալ Հայաստանից: Պետք է ենթադրել, որ Լուկուլլոսի կարծիքով Մծբինի գրավումը նա մեկ հնարավորություն կտար շարունակելու պայքարը Տիգրանի դեմ: Տիգրանի հիմնական ուժերի ձմեռանոց հեռանալուց հետո, Աղձնիքում գտնվող հայկական բանակի գրոհներից նա զգուշանում էր, սակայն ջախջախվելուց չէր վախենում:

Մծբինի պաշտպանությունը ղեկավարում էին Տիգրանի եղբայր Գուրասը և հայտնի հույն ճարտարագետ ու ճարտարապետ Կալլիմաքոսը, որը փառաբանվել էր պոնտական Ամասիայի հմուտ ու համառ պաշտպանությունով:

Նկար 6.27. Հռոմեական «կրիա» վահանափակը:

Տիգրանը չհետևեց Լուկուլլոսին և նրա զորագնդերը սկսեցին վերանվաճել Կորդուքն ու հարավային Հայաստանում հռոմեացիների կողմից նվաճված, կամ հարևանների կողմից զավթած գավառները: Տիգրանն ապավինում էր Մծբինի ամրություններին, պաշտպանների վճռականությանը և վերահաս ձմռան դաժանությանը:

Հռոմեական զորքի հանգստանալու և ձմեռելու համար Լուկուլլոսին շտապ պետք էր այս բարգավաճ քաղաքը: Նա այնքան ուժասպառ և անհամբեր էր, որ պատահականությամբ Մծբինը գրավելուց հետո նախընտրեց բաց թողնել հայկական զորքերի մնացորդների հետ միասին Մծբինի միջնաբերդում փակված Գուրասին՝ միայն թե ընդհատի կռիվը և հանգիստ տա բանակին: Սակայն Կալլիմաքոսին՝ իր ռիսերիմ թշնամուն, նա Գուրասից պահանջեց և ձերբակալեց: Հայկական կայազորի մնացորդները լքեցին քաղաքը և անցան Աղձնիք:

Դիոն Կասսիոսը այս դեպքերը նկարագրել է մանրամասն և բացահայտել է քաղաքի գրավման բոլոր պատճառները [51]: Ինձ մնում է միայն բնութագրել կատարվածը:

Մծբինն ուներ հոյակապ պաշտպանական ամրություններ՝ պարիսպների երկու շարք, ուժեղ կայազոր և քաղաքի պաշտպանությանը պատրաստ, լավ սպառազինված բնակչություն, որը ղեկավարում էր Հայկական կայսրության ամենահեղինակավոր ազնվականներից մեկը՝ արքայից արքայի եղբայր Գուրը, օգնական ունենալով հռչակավոր հույն ռազմական ճարտարագետ Կալլիմաքոսին՝ պոնտական Ամիսոսի անվեհեր պաշտպանին: Ենթադրում եմ, որ նրանք նախապես զգուշացվել էին Տիգրանի կողմից ուղարկած սուրհանդակներով, որ իրենց վրա է գալիս Լուկուլլոսը. վերջինիս հայտնվելը Մծբինի պարիսպների տակ նրանք ընդունեցին հանգիստ:

Հռոմեացիների համար գրոհները ետ էին մղվում ամենայն վճռականությամբ, իսկ Լուկուլլոսի հոգնած բանակը հազարավոր զոհեր էր տալիս: Քաղաքացիների և կայազորի տագնապը գնալով նվազում էր, իսկ ինքնավստահությունը՝ աճում: Այս պայմաններում, եթե հրամանատարությունը կայազորի հայկական զորքերի զգոնությունը կարող էր պահել պարգևներով և ավելի շատ՝ պատիժներով, ապա քաղաքացիների ինքնապաշտպանական ջոկատների կարգապահության անկումը

զսպել անհամեմատ դժվար էր՝ չէ՞ որ իրենց վարած պաշտպանական մարտերը միշտ հաղթական էին:

Այս ինքնագոհ վիճակը շատ վտանգավոր էր, և պատիժը չհապաղեց՝ մի մութ, անլուսին, անձրևոտ գիշեր հռոմեացիները հանկարծակի գրոհեցին պարիսպների վրա և, կոտրելով հանկարծակիի եկած, բայց արիաբար կռվող քաղաքի պաշտպանների դիմադրությունը՝ մտան քաղաք: Չեմ կարծում, որ արժե որևէ բան ավելացնել Դիոն Կասսիոսի պատմածին:

Մծբինի պաշտպանները, հատկապես քաղաքացիները, իրենց անփութությամբ, անշուշտ, վաստակել էին քաղաքացիների հետագա սպանությունները, բռնաբարությունները և անողոք թալանը:

Լուկուլլոսը զավթած քաղաքում մի քանի օրից վերականգնեց կարգ ու կանոնը: Նրա ձեռքն ընկած մթերքի պաշարները բավարար էին քաղաքում ձմեռելու համար:

Գոռը և Կալլիմաքոսը հայկական կայազորի մի մասով փակվել էին միջնաբերդում և դեռ կարող էին մեծ գլխացավանք պատճառել Լուկուլլոսին: Վերջինս դա լավ գիտակցում էր, և կանխեց իր համար այդքան վտանգավոր դեպքերի զարգացումը յուրովի՝ Գոռին և կայազորի մնացորդներին անմիջապես հնարավորություն տրվեց թողնել քաղաքը՝ Կալլիմաքոսին հանձնելու պայմանով:

Քաղաքի անսպասելի գրավումից հետո շոկի մեջ գտնվող Գոռը համաձայնեց առաջարկված պայմաններին: Եթե նա սթափ քաղաքագետ ու զինվորական լիներ, ապա կկռահեր, որ գարնանը հայտնվելու է Տիգրանի ահագնու բանակը, որին Լուկուլլոսը չի կարող դիմադրել: Մծբինը կարող էր ծուղակ դառնալ հռոմեացիների համար, եթե Լուկուլլոսը չհեռանար մինչև հայկական զորքերի հայտնվելը: Մինչև ապաշրջափակվելը, Գոռը միայն ձմռան մի քանի ամիս պիտի դիմանար միջնաբերդում:

Մծբինի պաշտպանության ժամանակ ցուցաբերած անհոգությունը, ապա միջնաբերդը քաղաք մտած հռոմեացիներին հանձնելը և քաղաքից հեռանալը Միգդոնիայի բդեշխ Գոռի կոպիտ սխալն էր, որը թույլ տվեց Լուկուլլոսի բանակին Հայկական կայսրության հարստագույն քաղաքներից մեկում ողջ ձմեռ լավ հանգստանալ ու հարստանալ:

Մծբինի կորուստը Տիգրանի համար ոչ մի լուրջ ռազմաքաղաքական հետևանք չունեցավ՝ պատերազմի ելքը կանխորոշված էր: Միայն Տրիարիոսի օգնական բանակի հայտնվելը կարող էր գրեթե հավասարեցնել հակամարտող կողմերի շանսերը, սակայն կարելի է պատկերացնել, թե ինչպես էր փչացրել Տիգրանի տրամադրությունը այս անտեղի կորուստը:

6.8. 68 թ. ռազմարշավի արդյունքները և գնահատականը

Հայ-հռոմեական պատերազմի ելքի համար 68 թ. ռազմարշավը շրջադարձային էր: Արարատյան դաշտ թափանցելու և Արտաշատը պաշարելու Լուկուլլոսի փորձը վճռականորեն ձախողվեց Արածանիի ճակատամարտում:

Տիգրանակերտի ճակատամարտում Լուկուլլոսից պարտվելով, Տիգրանը լավ յուրացրեց իրեն տրված դասը: 68 թ.-ի այս պատերազմում բազմաթիվ դասեր ստացավ նաև Լուկուլլոսը: Նախորդ տարի՝ Տիգրանակերտի ճակատամարտում, Լուկուլլոսը թույլ չտվեց, որ Տիգրանը, օգտվելով իր հզոր հեծելազորից, շրջապատի և ճզմի հռոմեական բանակն իր հեծելազորի և հետևակի մեջ:

69 թ.-ին Տիգրանակերտում ձախողվել էր Լուկուլլոսի համար Կաններ ստեղծելու Տիգրանի փորձը: Լուկուլլոսը ճարպկորեն խուսափել էր հիմնական հարվածից, շրջանցել էր Տիգրանին, հարվածել թիկունքից ու աջ թևից և հասել վճռական հաղթանակի: Լուկուլլոսը կարողացավ առավելագույնս օգտագործել իր հիմնական զորատեսակի՝ հռոմեական լեգեոնների մարտական առավելությունները. ընդունենք, որ Հին աշխարհի գրեթե ոչ մի ծանր հետևակ ընդունակ չէր այսպիսի շարժունակության և կազմակերպվածության օրինակ ցուցաբերելու:

Այլ էր պատկերը 69 – 66 թթ. հայ – հռոմեական պատերազմի երկրորդ գլխավոր ճակատամարտում:

Արածանիի ճակատամարտում Տիգրանը ցուցաբերեց իր զորավարի և ոչ ստանդարտ մտածող անձի լավագույն հատկությունները: Ինչո՞վ էր գերազանցում Տիգրանը Լուկուլլոսին՝ հեծելազորով և ինչո՞վ էր զիջում հակառակորդին՝ հետևակով: Արածանիում Տիգրանը հակադրվեց Լուկուլլոսին միայն հեծելազորով: Արածանիի ճակատամարտի ողջ ընթացքը հեծելազորային հրամանատարի լուծումների անգերազանցելի գլուխգործոց է:

Համոզել հակառակորդին, որ ինքը թույլ է, և, երբ նրա հեծելազորը չգիտակցելով, որ նրան մղում են դարանակալած ծանր հեծելազորի հարվածի տակ, հաղթական ճիչերով նետվի հետապնդելու կեղծ փախուստի դիմած հայկականին, հարվածել թևից կատաֆրակտոսներով՝ դրա համար հարկավոր է մեծ զորավարական վարպետություն:

Ճակատամարտում Լուկուլլոսի համար սկսվում է առաջին անակնկալը՝ չգիտես որտեղից հայտնված հայկական կատաֆրակտոսները շեշտակի հարվածում են հռոմեական հեծելազորին, որն արդեն զգալիորեն հեռացել է իր հետևակից: Լուկուլլոսը միանգամից հասկանում է պահի վտանգավորությունը, սակայն հեծելազորին օգնել այլևս չի կարող: Հեծելազորը կործանվում է նրա աչքի առաջ: Երբ շնչակտուր լեգեոնները վրա են հասնում հեծելազորին օգնության, հայոց այրուձին ձեռնամարտը չի ընդունում և նահանջում է:

Լուկուլլոսի համար սկսվում է երկրորդ անակնկալը՝ հայոց հեծելազորը նահանջելիս ետադարձ նետահարում է հռոմեացիներին, որոնցից շատերը մահանում կամ վիրավորվում են՝ առանց հակառակորդին դեմ առ դեմ հանդիպելու:

Լուկուլլոսը ապշած է: Սկզբում նրան թվում է, որ տոնելու է իր հերթական փայլուն հաղթանակը, սակայն շուտով սթափվում է և հասկանում, որ հակառակորդի անծանոթ մարտավարություն կիրառելու հետևանքով ինքը պարտվել է:

Երեկոյան դա հասկանում է նաև ողջ հռոմեական բանակը: Մեծաքանակ վիրավորները տնքում են և օգնություն պահանջում: Պարզվում է, որ հայկական նետերը պատրաստված են հատուկ ձևով, և մարմնի մեջ մտած նետի չամրացած ծայրը դուրս քաշել հնարավոր չէ, այսինքն արագ ապաքինման հույս չկա: Ավելին, նույնիսկ ոչ ծանր վիրավորների մի մասը անխու-

սափելիորեն դատապարտված են մահանալու:

Կարծում եմ, հռոմեական բանակի տրամադրությունների ձևավորման մեջ մեծ դեր խաղաց այն վճռականությունը, որով Տիգրանը վարեց ճակատամարտը, ինչպես նաև հռոմեացիների համար նախկինում չտեսնված, հսկայական հեծելազորային զանգվածների արագ տեղաշարժերը և նետահարության կազմակերպված գրոհները:

Երրորդ, փիմբրիական վետերանները՝ բոլոր պոնտական պատերազմները անցած հռոմեացի կենտուրիոնները և լեգեոներները այս քանակությամբ և ակտիվությամբ հեծելազոր չէին տեսել: Արևմուտքի տերերի դեմ առաջին անգամ, իր ողջ հզորությամբ կանգնել էր ռազմատենչ Արևելքը ...

Վճռական բեկում տեղի ունեցավ հռոմեական բանակի տրամադրությունների և մարտունակության մեջ. պատերազմական նախաձեռնությունն անցավ հայերի ձեռքը:

Մի քանի օր հետո Լուկուլլոսը, խուսափելով Արածանիի հովտի իր ավերած գավառներից, սկսում է նահանջել:

Հայկական բանակը եռանդուն հետապնդում է Լուկուլլոսին և 68 թ. աշնան կեսին հայկական և հռոմեական զորքերի միջև Հայաստանի հարավում՝ Աղձնիքում, տեղի է ունենում 69 – 66 թթ. հայ – հռոմեական պատերազմի երրորդ գլխավոր ճակատամարտը:

Աղձնիքի գլխավոր ճակատամարտում Տիգրանն իր հեծյալ բանակով և Միհրդատն իր գերազանցապես հետևակային բանակով Լուկուլլոսին գցում են մահացու աքցանի մեջ, որից խուսափելու ու չջախջախվելու համար հռոմեացիները հարկադրված են լինում ծայրահեղ լարվածության հասցնել իրենց գերազանց ռազմական հատկությունները: Թվում է, թե մի փոքր էլ, և հայերը կհասնեն վճռական հաղթանակի, սակայն Լուկուլլոսի փորձը, զումարած հռոմեական լեգեոնների արտակարգ մարտունակությանը նս մեկ անգամ հռոմեացիներին փրկում են կործանումից:

Չնայած հայերը շահում են ճակատամարտը և մեծ կորուստներ պատճառում հակառակորդին, սակայն Լուկուլլոսին հաջողվում է ամրանալ սեփական ճամբարում և այնտեղից դիմակայել իրեն շրջապատող հայերին:

Վրա հասած ձմեռը բաժանում է կողմերին և մինչ Տիգրանը վերականգնում է իր իշխանությունը Հայաստանի հարավում, Լուկուլլոսը նահանջում է Միգդոնիա և փորձում գրավել Մծբինը:

Մծբինի անառիկության վրա հույսդված, Տիգրանը նրանց օգնության չի հասնում, նախընտրելով իր հպատակ երկրամասերի վրա վերջնականապես վերացնել հռոմեացիների վերջին ազդեցության նշույլները [42, 51, 59]:

68 թ. ձմռանը ուրախալի լուրեր են ստացվում Պոնտոսում Միհրդատի հաջողությունների մասին, սակայն բոլորը գիտակցում են, որ պատերազմի գլխավոր բեմը գտնվում է Աղձնիքում, և պատերազմի ելքը որոշվում է Տիգրան – Լուկուլլոս հակամարտության արդյունքով:

Մծբինը գրավելու հռոմեական բանակի սկզբնական բոլոր փորձերը ձախողվում են: Հռոմեացիները մեծ կորուստներ էին կրում և արդեն հուսահատվել էին: Որոշ չափով անհոգ էին դարձել նաև քաղաքի պաշտպանները: Դա թույլ տվեց Լուկուլլոսին անձրևոտ փոթորկալից մի գիշեր անսպասելի գրոհով գրավել Մծբինի արտաքին պարսպի հատվածներից մի քանիսը և ներխուժել քնած քաղաք:

Հռոմեացի մեծ զորավարի փորձառությունը և համառությունը օգնում են, որ բախտը ևս մեկ անգամ ժպտա Լուկուլլոսին՝ նա անսպասելիորեն գրավում է Մծբինը, որպես միջոց այսքան անհաջող անցկացված պատերազմի երկրորդ տարվա ռազմարշավի:

68 թ. ռազմարշավում Լուկուլլոսի գլխավոր հաջողությունները կապված էին բազմաթիվ փորձանքներից փրկվելու հետ: Ռազմարշավը, որը Արածանիի ճակատամարտից հետո ավելի ու ավելի էր ծանրանում հռոմեացիների համար և սպառնում վերջանալ աղետով, վերջանում է անսպասելի հաջողությամբ՝ Մծբինի գրավմամբ և հանգիստ ձմեռելու հնարավորությամբ:

68 թ. ուշ աշնանը Տիգրանը Միհրդատին ուղարկում է Պոնտոս 4.000 պոնտական հեծելազորով և 8.000 հայկական զորաբանակով: Միհրդատը մտնում է Պոնտոս և ակտիվ մարտական գործողություններ ծավալում. հռոմեացիները կրում են մի քանի

շոշափելի պարտություն:

Իր հայրենիքը հռոմեացիներից գրեթե ազատագրած Տիգրանը պատրաստվում էր հաջորդ՝ 67 թ.-ին ազատագրել Պոնտոսը և նախահարձակ լինել Հայաստանի սահմաններից դուրս:

Այսպիսով, չնայած 68 թ. Լուկուլլոսի բանակը վերջնական ջախջախել չհաջողվեց, բայց այս ռազմարշավը հայերը վստահորեն շահել էին:

Գլուխ 7.
Մ.Թ.Ա. 67 Թ. ՌԱԶՄԱՐՇԱՎԸ

69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմի 67 թ. ռազմարշավը տևել է 67 թ. գարնան կեսից մինչև ձմռան սկիզբը և ներառում է արշավներ, ռազմական ընդհարումներ (մարտեր ու խոշոր ճակատամարտեր) և այլ գործողություններ:

Արշավներ

1.Միհրդատի ռազմարշավները Փոքր Հայքում և Պոնտոսում մինչև 67 թ. աշնան սկիզբը,
2.Լուկուլլոսի բանակի նահանջը Մծբինից դեպի Պոնտոս,
3.Լուկուլլոսի նահանջող բանակի հետապնդումը Տիգրանի որոշ հեծելազնդերի կողմից,
4.Տիգրանի առաջապահ զորաբանակի՝ Միհրդատ Մեղացու հեծելազորի արշավը Պոնտոս,
5.Տիգրան Մեծի բանակի արշավանքը Կապադովկիա,
6.Լուկուլլոսի բանակի կազմալուծումը և նահանջը Գալատիա,
7.Տիգրան Մեծի բանակի շտապ վերադարձը Հայաստան Տիգրան Կրտսերի ապստամբությունը ճնշելու համար:

Ռազմական ընդհարումները

1.Մանր մարտեր Հայաստանում Լուկուլլոսի բանակի դեմ,
2.Մարտական գործողություններ Պոնտոսում Տրիարիոսի դեմ,
3.69 – 67 թթ. հայ-հռոմեական պատերազմի չորրորդ և վերջին՝ Զելեի գլխավոր ճակատամարտը,
4.Հայկական և պոնտական զորքերի մարտերը Պոնտոս վերադարձած Լուկուլլոսի բանակի դեմ,
5. Հռոմեական կայազորների վտարումը Պոնտոսից,
6.Տիգրանի բանակի զորամասերի մանր մարտերը Կապադովկիայում,
7. Տիգրան Մեծի բանակի հաղթական ճակատամարտը Տիգրան Կրտսերի ապստամբած ուժերի դեմ:

Այլ գործողություններ

1.Հռոմեական բանակի անհնազանդությունը Լուկուլլոսին Մծբինում,
2.Հռոմեական բանակի անհնազանդությունը Լուկուլլոսին Պոնտոսում,
3.Պոմպեոսի սպասվող նշանակումը Արևելք,
4.Պոմպեոսի ծովահեների դեմ ծավալված պայքարի նշանակությունը Տիգրանի տերության համար,
5.Հակատիգրանյան խռովության նախապատրաստումը Հայաստանում. Տիգրան Կրտսերի ապստամբությունը և Միհրդատ Եվպատորի դերը,
6.Պարթևական պետության վերաբերմունքը 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ավարտական փուլի իրադարձություններին,
7. Տիգրան Մեծի բանակի վերադարձը Հայաստան և խռովարարների դեմ ծավալված պատերազմի ընթացքը,
8. Տիգրան Մեծ – Միհրդատ Եվպատոր հարաբերությունների յուրահատկությունը 67 թ. վերջին,
9. Լուկուլլոսի հռոմեական բանակի կազմալուծման գործընթացը Գալատիայում:

Ծանոթանանք անտիկ պատմիչների հաղորդած տեղեկություններին 67 թ. իրադարձությունների մասին:

Պլուտարքոս. Կենսագրություններ. Լուկուլլոս. 35.

«33.*Մինչև հիմա բախտը, կարելի է ասել, ուղեկցել է Լուկուլլոսին նրա արշավանքների ընթացքում, բայց այդ պահից ասես նրա համար համընթաց քամին դադարեց. մեծ դժվարություններ էին առաջանում ամեն մի գործում, լուրջ խոչընդոտների էր նա հանդիպում ամենուրեք: Առաջվա նման նա ցուցաբերում էր լավագույն զորապետերին արժանի խիզախություն և հոգու արիություն, բայց նրա արարքները նրան ոչ փառք բերեցին, ոչ էլ երախտագիտություն: Ընդհակառակը, անհաջող ձեռնարկումների և անպտուղ վեճերի պատճառով, նա գրեթե զրկվեց իր նախկին փառքից: Այս հարցում վերջին պատճառը չէր նաև իր անձնական վարքը: Նա երբեք չէր կարողանում սիրալիր լինել զինվորական ամբոխի հետ, ստորադրյալներին հաճոյանալը համարելով իշխանավորի ստորացում և նրա հե-*

ղիեակության թուլացում. իսկ ամենից վատն այն էր, որ հզորների և ղիրքով իրեն հավասարների հետ ևս նա չէր հաշտվում. նրանց բարձրից էր նայում և իր հետ համեմատած ոչնչություն համարում: Այո, այսպիսի թուլություններ կային, ինչպես ասում են, Լուկուլլոսի բազմաթիվ արժանիքների կողքին. նա բարեկազմ էր, գեղեցիկ, պերճախոս և դրսևորում էր սուր միտք ոչ միայն Ֆորումում, այլև արշավանքների ընթացքում: Սալլուստիոսը հավաստում է, որ զինվորները չսիրեցին նրան հենց պատերազմի սկզբից, երբ նա ստիպեց նրանց ճամբարում անցկացնել երկու ձմեռ անընդմեջ. առաջինը՝ Կիզիկոսի, երկրորդը՝ Ամիսոսի մոտ: Այնուհետև ամեն ձմեռ նրանց համար դարձյալ դժվար էր լինում: Նրանք կամ պետք է ձմեռեին թշնամական երկրում, կամ դաշնակիցների երկրում տեղակայվեին վրաններում, բացօդյա. քանզի Լուկուլլոսը հունական կամ բարեկամ քաղաքները միանգամից զորքով չէր մտնում: Զորապետի հանդեպ նրանց անբարյացակամությանը առատորեն նոր սնունդ էին տալիս ժողովրդի պարագլուխները Հռոմում, որոնք ատելությունից մղված մեղադրում էին Լուկուլլոսին, որ պատերազմը շարունակելու են նրան մղում իշխանատենչությունը և շահասիրությունը, այն դեպքում, երբ նրա ձեռքում են գտնվում գրեթե ամբողջությամբ Կիլիկիան և Ասիա պրովինցիան, Բիթանիան և Պոնտոսը, Հայաստանը և մինչև Փասիսն ընկած երկրները, իսկ դրանց ավելացրած, վերջերս նա ավերեց նաև Տիգրանի պալատը, ասես նրան ուղարկել էին հատկապես թագավորներին կողոպտելու և ոչ թե նրանց դեմ կռվելու: Այդպիսի ճառեր էր արտասանում, ինչպես ասում են, պրետորներից մեկը՝ Լուկիոս Կվինտոսը: Սա էլ, գլխավորապես, հասավ այն որոշման, որ պրովինցիայի կառավարման համար Լուկուլլոսին հաջորդներ նշանակվեն: Որոշվեց նաև զորացրել շատ զինվորների, որոնք կռվում էին նրա հրամանատարության տակ:

34. Արդեն իսկ այս անախորժությունները բավականին լուրջ էին, բայց և սրանց ավելացավ ևս մի հանգամանք, որը վերջնականապես կործանեց Լուկուլլոսին: Կար ոմն Պուբլիոս Կլավդիոս, լկտի մի մարդ, անչափ ամբարտավան և ինքնապաստան: Սա Լուկուլլոսի կնոջ եղբայրն էր. նրա մասին, իմիջիայլոց, ասում էին, թե քրոջ հետ մեղսալի կապերի մեջ էր (վերջինս չափազանց անառակ կին էր): Այդ ժամանակ նա գտնվում էր Լուկուլլոսի բանակում և այնտեղ վայելում էր ոչ այն պատիվը,

ինչ ինքը ցանկանում էր. իսկ ինքը ցանկանում էր դասվել բոլորից բարձր: Մինչդեռ իր կենցաղավարության պատճառով շատերից ցածր էր կանգնած: Այդ պատճառով էլ նա գաղտնաբար սկսեց սիրաշահել փիմբրիականներին և նրանց լարել Լուկուլլոսի դեմ. իսկ սրանք հաճույքով էին լսում նրա շողոմ խոսքերը. հրամանատարի հաճկատարությունը և քծնանքը նրանց համար անսովոր չէր: Այդ նրանց էր մի ժամանակ Փիմբրիան զրգռել սպանելու կոնսուլ Փլակկոսին և զորապետ ընտրել իրեն: Այժմ էլ, ահա, նրանք սիրով լսում էին Կլավդիոսին և նրան անվանում "զինվորների բարեկամ" այն բանի համար, որ նա ձևացնում էր, թե իբր ինքը նրանց հոգսերը համարում է իրեները: Կլավդիոսը մշտապես գայրանում էր, որ պատերազմների և տանջանքների վերջը չի երևում, որ իրենց ստիպում են մինչև վերջին շունչը կռվել բոլոր ժողովուրդների հետ և քշում բոլոր երկրներով, մինչ դեռ այդ բոլոր արշավանքների համար արժանի պարգևներ չեն ստանում, այլ դրա փոխարեն ուղեկցում են Լուկուլլոսի սայլերին և ուխտերին, որոնք բեռնված են ոսկե գավաթներով և թանկարժեք քարերով: "Ահա տեսեք, - շարունակում էր նա, - Պոմպեոսի զինվորներին: Նրանք վաղուց արդեն խաղաղ քաղաքացիներ են և իրենց կանանցով ու երեխաներով ապրում են ինչ-որ տեղ բարեբեր երկրներում կամ քաղաքներում. մինչդեռ նրանք ստիպված չեն եղել Միհրդատին և Տիգրանին քշել անբնակ անապատներ կամ գրավել ասիական մայրաքաղաքներ. Նրանք ընդամենը կռվել են վտարանդիների դեմ Իսպանիայում և փախստական ստրուկների դեմ Իտալիայում: Իսկ եթե մենք պետք է ծառայենք անժամկետ և առանց հանգստանալու, ինչո՞ւ մեր մնացած ուժերը և կյանքը չտրամադրենք այնպիսի մի զորապետի, որն իր գերագույն պատիվը համարում է իր զինվորների հարստանալը":

Այս մեղադրանքներն իրենց ներգործությունն ունեցան Լուկուլլոսի զորքերի վրա, և նրանք չհետևեցին իրենց զորապետին Տիգրանի և Միհրդատի դեմ: Վերջինս չհապաղեց Հայաստանից դարձյալ մտնել Պոնտոս և սկսեց վերանվաճել իր թագավորությունը, իսկ հռոմայեցի զինվորները անգործ նստել էին Գորդիենեում, պատճառ բռնելով ձմեռը և սպասելով, որ ահա ուր որ է կհայտնվի Պոմպեոսը կամ մեկ ուրիշ զորավար, փոխարինելու Լուկուլլոսին:

35. Երբ, սակայն, լուր ստացվեց, որ Միհրդատը ջարդել է

Փարիոսին և գնում է Սոռնատիոսի ու Տրիարիոսի դեմ, զինվորներն ամոթ զգացին և հետևեցին Լուկուլլոսին: Տրիարիոսը, պատվասիրությունից մղված, չսպասելով արդեն մոտերքում գտնվող Լուկուլլոսին, ուզեց ձեռք բերել, ինչպես իրեն թվում էր, հեշտ հաղթանակ, բայց դրա փոխարեն ծանր պարտություն կրեց: Ինչպես հաղորդում են, այդ ճակատամարտում ընկան ավելի քան 7 հազար հռոմայեցիներ, որոնց թվում 150 ցենտուրիոն և 24 զինվորական տribուն: Ճամբարն ընկավ Միհրդատի ձեռքը: Երբ մի քանի օր անց Լուկուլլոսը հասավ այնտեղ, նա ստիպված եղավ Տրիարիոսին թաքցնել մոլեգնած զինվորներից» [42]:

Դիոն Կասսիոս. Քսիփիլինոս. Գիրք 36.

«12.1. Այս ամենի մասին այսքան. իսկ հաջորդ տարին, Մանիոս Ակիլիոսի և Գայոս Պիտոնի կոնսուլության ժամանակ, Միհրդատը բանակեց Տրիարիոսի (զորաբանակի) դիմաց, Գազիուրայի մոտ, մարտահրավեր կարդելով նրան և գրգռելով: 2.Քանզի նա հռոմայեցիների աչքի առաջ ոչ միայն ինքն էր մարզվում, այլ ամբողջ բանակը զորավարժություններ էր կատարում: Նա հուսով էր, որ Լուկուլլոսը Տրիարիոսին օգնության չհասած, ինքը կռվի կբռնվի և կհաղթի նրան ու դրանով իսկ ետ կնվաճի իր մնացած իշխանությունը: Բայց քանի որ այն մեկը չէր շարժվում, ուղարկեց ոմանց Դադասա բերդը, որտեղ հռոմայեցիների գումակն էր տեղավորված, որպեսզի նրանք, ստիպված լինելով այն պաշտպանելու, դրանով իսկ ներքաշվեն ճակատամարտի մեջ: 3.Եվ այդպես էլ եղավ: Քանզի Տրիարիոսը նախատես Միհրդատի բազմությունից վախենալով և սպասելով Լուկուլլոսին – քանզի սրան կանչել էր օգնության – հանգիստ էր մնում, բայց երբ տեղեկացավ Դադասայի պաշարված լինելու մասին, իսկ զինվորներն էլ վախենալով իրենց դիրքերից, անհանգստանում էին և սպառնում, որ եթե որևէ մեկը նրանց դուրս չառաջնորդի, ապա սեփական նախաձեռնությամբ կօգնեն իրենք իրենց, այնժամ նա ակամայից դուրս եկավ իր դիրքերից: 4.Եվ մինչդեռ նա առաջ էր ընթանում, բարբարոսները հարձակվեցին և իրենց բազմությամբ մի մասին շրջապատելով կոտորեցին, ապա շուրջանակի արշավելով, սպանեցին դաշտ փախածներին, որոնք անտեղյակ էին, թե գետը շրջված է դաշտի վրա:

13.1.Եվ նրանց գլխովին կոչնչացնեին, բայց հռոմայեցիներից ինչ-որ մեկը ձևացնելով, թե պատկանում է Միհրդատի դաշնակից զորաբանակին – քանզի, ինչպես ասել եմ, իր հետ արշավողներից շատերին նա զգեստավորել էր հռոմայեցիների նման – մոտեցավ (արքային) և իբր ցանկանալով նրան ինչ-որ բան ասել, միրավորեց: Եվ այսպիսով, այդ մարդը բռնվեց ու սպանվեց, իսկ բարբարոսները պատահարից շփոթվեցին, որից և շատ հռոմայեցիներ փրկվեցին: 2.Միհրդատն ահա բուժում էր իր վերքը և կասկածելով, որ բանակի ճամբարում դեռ կան ուրիշ թշնամիներ ևս, զինվորների ստուգատես կատարեց, իբր թե մեկ այլ պատճառով, որից հետո կարգադրելով ամեն մեկին արագորեն վերադառնալ իրեն վրանը, հայտնաբերեց բոլորին և մեկուսացած հռոմայեցիներին ոչնչացրեց:

14.1. Այս իրադրության մեջ, երբ Լուկուլլոսը ժամանեց, ոմանք այնպիսի հույս ունեցան, որ նա հեշտությամբ կկարողանա հաղթել Միհրդատին և արագ կերպով վերանվաճել այն ամենը, ինչ նախատես կորցրել էր. բայց ոչինչ չհաջողվեց անել: 2.Քանզի Միհրդատը, ամրանալով Տալավրայի մոտ գտնվող բարձրություններում, դուրս չեկավ նրա դեմ, իսկ Մեդիայից մյուս Միհրդատը, Տիգրանի փեսան, հանկարծակի հարձակվեց դեռևս ցրված հռոմայեցիների վրա և շատերին սպանեց. միաժամանակ լուր հասավ, թե ինքը Տիգրանը ևս մոտենում է, ուստի և զորքը ապստամբեց: 3.Քանզի վալերիականները բանակից զորացրվելուց հետո դարձյալ զորագրվել էին, անհանգստացան նույնիսկ Նիսիբիսում և՛ իրենց հաղթանակի, և՛ իրենց վայելած հանգստի համար, որովհետև նրանք առատ պարեն ունեին և մեծ մասամբ ժամանակն անց էին կացնում առանց Լուկուլլոսի, քանի որ սա բազում տեղեր էր մեկնում. միաժամանակ նաև Պուբլիոս Կլոդիոսը, որին ոմանք Կլավդիոս կոչեցին, բնածին խռովարարությունից մղված, դրդում էր նրանց ապստամբելու, թեպետև նրա քույրն ամուսնացած էր Լուկուլլոսի հետ: 4.Այնժամ նրանք մեծապես վրդովվեցին նաև տեղեկանալով, թե կոնսուլ Ակիլիոսը, որն ուղարկվել էր Լուկուլլոսին փոխարինելու վերոհիշյալ դեպքերի պատճառով, արդեն մոտենում է. քանզի նրանք արդեն Լուկուլլոսին արհամարհում էին, նրան դիտելով իբրև մասնավոր քաղաքացի:

15.1.Այնժամ Լուկուլլոսը և՛ այս ամենի պատճառով, և՛ որովհետև Ակիլիոսին իբրև կոնսուլ նախորդած Մարկիոսը,

որը ժամանելու էր Կիլիկիա իրրև կառավարիչ, մերժել էր իրեն օգնելու խնդրանքը, մեծ դժվարության մատնվեց. 2. և չուզենալով աննպատակ կերպով վերացնել ճամբարը, միաժամանակ վախենալով մնալ այդ երկրում, արշավեց Տիգրանի վրա (այն հույսով), որ գուցե կարողանար հանկարծակի հարձակումով ետ մղել նրան, քանի դեռ ռազմերթից հոգնած կլիներ, և դրանով իսկ ինքը կկարողանար մի կերպ դադարեցնել խռովություն բարձրացրած զինվորների հուզմունքը: 3.Բայց այս ամենից և ոչ մեկը չկատարվեց: Քանզի բանակը նրան հետևեց մինչև ինչ-որ վայր, որտեղից հնարավոր էր շրջվել դեպի Կապադովկիա և այնտեղ բոլորը միահամուռ, առանց մի խոսքի, շրջվեցին (դեպի այս երկիրը):Եվ հատկապես վալերիականները լսելով, թե իշխանությունները նրանց զորացրել են, ամբողջովին մեկնեցին:

16.1. Եվ թող ոչ ոք չզարմանա, որ Լուկուլլոսը, մարդկանց մեջ ռազմական արվեստի ամենահմուտը լինելով հանդերձ, և առաջինը լինելով հռոմայեցիների մեջ, որը պատերազմելու համար բանակով անցավ Տավրոսը, և հաղթելով երկու ոչ թույլ թագավորների, կարող էր նրանց իր ձեռքը գցել, եթե ինքը որոշեր արագորեն վերջացնել պատերազմը, այժմ չէր կարողանում իշխել իր զինվորներին, որոնք ամբողջ ժամանակ ապստամբում էին և ի վերջո լքեցին նրան: 2.Քանզի Լուկուլլոսը նրանց շատ բան էր հրամայում, ինքը դժվարահաղորդ էր, գործի նկատմամբ խստապահանջ, և պատժելիս անխնա լինելով, չէր իմանում ինչպես ն մարդուն սիրաշահել համոզելով, կամ՝ իրեն կապել մեղմությամբ, կամ՝ էլ պատիվներ ու դրամ պարգևելով բարեկամներ շահել, որպիսիք բոլոր դեպքերում շատ անհրաժեշտ են, իսկ առավել ևս ռազմարշավի ելնողին: 3.Ուստի և զինվորները, քանի դեռ բարօրության մեջ էին, և վտանգները փոխհատուցվում էին ձեռք բերված ավարով, հնազանդվում էին նրան. բայց երբ դժվարությունների հանդիպեցին, և նրանց հույսերը փոխարինվեցին երկյուղով, արդեն նրան չէին գերադասում: Դրա ապացույցն այն է, որ Պոմպեոսը վերցնելով նույն այս մարդկանց – քանզի նա վալերիականներին դարձյալ հավաքագրել էր – պահեց նրանց առանց որևէ մի խռովության: Այնքան շատ է մարդը տարբերվում մարդուց:

17.1. Զինվորների այս վարմունքից հետո Միհրդատը վերագրավեց համարյա իր ամբողջ տերությունը և Կապադովկիան ուժեղ կերպով ավերեց. քանզի ոչ՝ Լուկուլլոսը, Ակիլիոսի մոտիկ լինելու պատճառով, պաշտպանեց այն, ոչ՝ էլ ինքը՝ Ակիլիոսը: Որովհետև այս մեկն առաջին հերթին ցանկանում էր խլել Լուկուլլոսից հաղթանակի փառքը, իսկ այժմ, տեղեկանալով կատարված դեպքերի մասին, գորակոչման չեկավ, այլ մնաց Բիթանիայում: 2.Մարկիոսը ևս օգնության չեկավ Լուկուլլոսին պատճառաբանելով, թե զինվորները չեն ցանկանում հետևել իրեն. սակայն Կիլիկիա ժամանելով, նա ընդունեց ոմն Մենեմաքոսի, որը դասալիք էր եղել Տիգրանի մոտից, և Կլոդիոսին, որը Նիսիբիսում կատարված դեպքերի կապակցությամբ վախենալով, լքել էր Լուկուլլոսին. սրան նավատորմի հրամանատար կարգեց, քանզի ինքը նույնպես նրա քույրերից մեկին իրեն կին էր վերցրել: 3.Եվ այս մեկը ծովահեների կողմից գերի վերցվելուց և Պոմպեոսի հանդեպ նրանց ունեցած վախի պատճառով ազատ արձակվելուց հետո եկավ Սիրիայի Անտիոք քաղաքը, հայտարարելով, թե ինքը նրանց դաշնակիցը կլինի արաբների դեմ, որոնց հետ այդ ժամանակ վեճեր ունեին. այստեղ ևս ոմանց խռովության դրդելով՝ քիչ անց կործանվեց:[51]»

Ապպիանոս. Միհրդատական.

89.Սակայն լսելով Լուկուլլոսի մոտենալու մասին, Տրիարիոսը, ձգտելով մինչև նրա գալը ավարտել գործը, դեռ զիշերը շարժվեց դեպի Միհրդատի առաջապահ (պահակային) ջոկատները: Երկար ժամանակ ճակատամարտը անորոշ էր, այնժամ արքան իր հատվածում հզոր ճնշումով լուծեց ճակատամարտի ելքը և, ցրելով հակառակորդին, փակեց նրանց հետևակը ճահճոտ ջրանցքում, որտեղ նրանք գռնվեցին, չունենալով նույնիսկ կանգնելու հնարավորություն: Հեծելազորն էլ նա հետապնդում էր հարթավայրում, եռանդորեն ձգտելով օգտագործել ճակատագրի երջանիք շրջադարձը, մինչև ինչ-որ հռոմեական կենտուրիոն, որը որպես ստրուկ վազում էր նրա կողքին, զրահի պատճառով չհուսալով, որ կկարողանա խոցել նրան թիկունքից, չհարվածեց սրով նրա ազդրին՝ հասցնելով խորը վերք: Միհրդատի մերձավորները անմիջապես սպանեցին նրան (ստրուկին), իսկ Միհրդատին տեղափոխեցին թիկունք, և նրա ընկերները, չնայած փայլուն հաղթանակի, շուտափույտ ետ կանչեցին զորքը: Կռվողների մեջ այսպիսի անիմաստ եռահանջից շփոթություն և թյուրիմացություն առաջացավ, վախեցան՝ արդյոք չկա որևիցե սարսափելի բան հակառակ կողմից. վեր-

ջապես իմանալով ինչում է գործը, զինվորները շրջապատեցին հարթավայրում Միհրդատի մարմինը և աղմկում էին, մինչև բժիշկ Տիմոթեոսը կանգնեցնելով արյունը, ցույց տվեց նրան բարձր տեղից: նույնը կատարվել էր մակեդոնացիների հետ Հնդկաստանում, երբ նրանք վախեցել էին Ալեքսանդրի համար՝ ապաքինվող Ալեքսանդրը ներկայացավ նրանց տաճարի մոտ: Միհրդատը վերկացավ, անմիջապես կշտամբեց նրանց, որոնք ետ էին կանչել զորքը մարտից և նույն օրը զորքը տարավ հռոմեական ճամբարի վրա: Սակայն վախեցած հռոմեացիք այնտեղից արդեն հասցրել էին փախչել: Երբ թալանում էին սպանված հռոմեացիների դիերը, պարզվեց, որ սպանվել էր 24 տրիբուն և 150 կենտուրիոն: Հռոմեացիների մոտ հրամանատարների նման քանակ հազվադեպ էր գոհվում մեկ ճակատամարտում:

90. Միհրդատը սլացավ Հայաստան, որը հռոմեացիները այժմ անվանում էին Փոքր Հայք և այն, ինչ հեշտ էր տանել իր հետ պարենից, նա տանում էր, իսկ անհարմարը՝ ոչնչացնում, նախապես զրկելով պարենից մոտեցող Լուկուլլոսին: Եվ ահա մի հռոմեացի սենատոր՝ Աստիդիոս անունով, դատարանի որոշումով վտարված հայրենիքից, վաղուց արդեն Միհրդատի մոտ եկած և նրա ընկերությանը արժանացած՝ կալանավորվեց, քանի որ չարիք էր նյութում նրա դեմ: Արքան անարդար համարելով կտտանքների ենթարկել մի մարդու, որը հռոմեական ծերակուտական էր եղել՝ մահապատժի ենթարկեց նրան. խռովության այլ մասնակիցներին նա ենթարկեց սարսափելի տանջանքների: Իսկ ազատարձակներին, որոնք Աստիդիոսի մտադրության հանցակիցներն էին, նա անվնաս ազատեց՝ ասելով, որ նրանք միայն ծառայում էին իրենց տիրոջը: Երբ Լուկուլլոսը արդեն ճամբարել էր Միհրդատի դիմաց, Ասիայի կառավարիչը՝ ամենուրեք ուղարկելով իր լրտարներին, հայտարարեց, որ հռոմեացիները կշտամբում են Լուկուլլոսին, որ նա պետականից ավելի է ձգձգում պատերազմը և, որ նա ազատ է արձակում նրա զորքում եղած զինվորներին և չհնազանդվողների ունեցվածն էլ բռնագրավում: Երբ այս ամենը հայտարարվեց, որջ զորքը ցրվեց, բացի այն քչերից, որոնք լինելով շատ աղքատ և այդ պատճառով չվախենալով հայտարարված պատժից, մնացին Լուկուլլոսի մոտ (թարգմ. ռուսերենից – Ա.Գ.) [59]:

7.1.Առաջավոր Ասիայի ռազմաքաղաքական իրավիճակը 67 թ. գարնան սկզբին և հակամարտող կողմերի ուժերը ու ռազմավարական ծրագրերը

Տարածաշրջանում հետագա իրադարձությունների ընթացքը ըմբռնելու և զարգացումների թաքնված շարժառիթները հասկանալու համար նախապայման է Առաջավոր Ասիայի 67 թ. գարնան առաջին կեսի ռազմաքաղաքական իրավիճակի և հակամարտող կողմերի ուժերի ու ռազմավարական ծրագրերի մանրամասն վերլուծությունը:

7.1.1.Անտիկ աշխարհի և Առաջավոր Ասիայի ռազմաքաղաքական իրավիճակը 67 թ. գարնան սկզբին

Մ.թ.ա. I դ. 60-ական թվականներին Միջերկրական ծովի ափին գտնվող երկրները, Առաջավոր Ասիան և Միջին Ասիայի զգալի մասը վաղուց արդեն մի հսկայական ամբողջություն էին կազմում: Այս հսկա տարածաշրջանը բազմաթիվ առևտրատնտեսական և մշակութային թելերով կապված էր Հին աշխարհի երկու այլ հսկայական տարածաշրջան-քաղաքակրթությունների՝ Հին Հնդկաստանի և Հին Չինաստանի հետ: Հին աշխարհի հետ կապ չունեցող Մեսոամերիկայի հետ միասին (համենայն դեպս, այդպիսի կապերի մասին արժանահավատ տեղեկություններ մենք առայժմ չունենք) այն ամբողջացնում էր մ.թ.ա. I դ. մեր մոլորակի քաղաքակրթությունների արեալը: Այս բոլորից մենք անտիկ աշխարհ՝ Օյկումենե (հին հույների ապրած աշխարհ) ենք համարում փոխկապակցված հասարակությունների մի շղթա, որոնք տեղադրված էին Միջերկրական ծովի ափերին, ինչպես նաև Եվրոպայի հարակից շրջաններում և Առաջավոր Ասիայում:

Այստեղ խոշորագույն երկրներն էին հանրապետական Հռոմը և Հայկական ու Պարթևական թագավորությունները: Երեքն

էլ ունեին ընդգծված կայսերական կառուցվածք և տիրում էին բազմաթիվ հարևան ժողովրդների և թագավորությունների: Մ.թ.ա. 67 թթ.-ի գարնանը ստեղծված իրավիճակը 69-68 թթ. որոշ միտումների զարգացման արդյունք էր:

Իտալիա. 68 - 67 թթ. ձմեռը շատ ծանր անցավ Հռոմում սաստկացող սովի պատճառով. այն հատկապես ճգնաժամային էր հռոմեացի չքավոր խավի համար: Այս ամենը խոր դժգոհություն առաջացրեց Հռոմի հասարակական բոլոր խավերում և 67 թ. գարնան սկզբին բացահայտ պահանջներ լսվեցին Գնեյոս Պոմպեոսին արտակարգ լիազորություններով օժտելու և պահանջելու, որ նա Միջերկրական ծովը մաքրի կիլիկյան ծովահեններից և այդպիսով վերացնի Հռոմը ծովային ճանապարհներով ցորենով մատակարարելու միակ խոչընդոտը:

67 թ. հունվարին Գաբինիոսի օրենքով ծովահենների դեմ անցկացվող պատերազմում Գնեյոս Պոմպեոսին տրվեցին արտակարգ լայն լիազորություններ: 120.000 ծանր հետևակ, 4.000 հեծելազոր, մոտ 500 նավ (ըստ Ապպիանոսի՝ 260 [59]), 6.000 տաղանդ արծաթ, ծովափնյա 200 ստադիում խորությամբ անսահմանափակ իշխանություն՝ և այդ ամենը 3 տարով:

Դեռ երբեք Հռոմն այսքան իշխանություն չէր լիազորել մեկ մարդու [42, 51, 59]: Այս լիազորությունները հենց այնպես չէին տրվել՝ Հռոմեական հանրապետությունը շատ ծանր վիճակում էր: Մի քանի տասնամյակ տևող ծանր պատերազմները, որից ամենասարսափելին քաղաքացիականն էր, 89 – 84 թթ. Հռոմի համաշխարհային տիրապետությունը վիճարկող ուժի՝ հայ-պոնտական դաշնության հայտնվելը, Իտալիայում ստրուկների անախադեպ կուտակման և անմարդկային շահագործման հետևանքով առաջացած հզոր ապստամբությունները հիմնովին ցնցել էին հռոմեական հասարակությունը: Վերջին պատուհասը, որը վտանգում էր բուն հռոմեական պետության էությանը՝ Միջերկրական ծովահենությունն էր: Այս ծովահենության առաջացման առաջին մեղավորները հենց իրենք՝ հռոմեացիներն էին, որոնք անխնա ոչնչացրին ծովահենությունը արգելակող բոլոր հզոր ծովային պետությունները արևելյան Միջերկրածովքում, այդ ընթացքում խթանելով աճող ծովահենությունը և նույնիսկ չխորշելով զբաղվել ծովահենությամբ: Մ.թ.ա. 146 – 71 թթ.՝ Հունաստանում և Արևելքում հռոմեական նվաճումները

հիմք դրեցին հսկայական մարդկային զանգվածների տառապանքների: Հարյուր հազարավոր մարդիկ վաճառվեցին Իտալիայի անկուշտ ստրկական շուկաներում. տասնյակ հազարավորները մահացան այնտեղ անասանելի ծանր աշխատանքային շահագործումից և կիսաքաղց կենցաղից: Այդ պայմաններում տասնյակ հազարավոր մարդկանց համար ծովահենությունը դարձել էր իրենց կյանքը և արժանապատվությունը փրկելու միակ միջոցը: Ծովահենների նավատորմները շատ արագ վերածվեցին ազատ մարդկանց կամքով ստեղծված յուրովի ծովային պետության:

Անտիկ պատմիչները միահամուռ վկայում են, որ ծովահենները թշնամական վերաբերմունք ցուցաբերում էին միայն հռոմեացիների նկատմամբ, մնացած զերիների արժանապատվությունը չէին վիրավորում: Ծովահենները գրավել և ոչնչացրել էին Դելոս կղզու ստրկավաճառ պետությունը, որը, հռոմեացիների հովանավորությամբ, իր սարսափելի ստրկական շուկայով, դարձել էր Իտալիայի հիմնական ստրկական մատակարարը:

Մինչև 83 թ. ծովահենների հովանավորը Միհրդատ Զ Եվպատորն էր, որը ծովահենների հզոր ներուժը օգտագործել էր Պոնտոսի տերության որոշ ռազմավարական խնդիրներ լուծելու համար: Առաջին պոնտական պատերազմում պարտվելով Սուլլայից, նա այլևս չէր կարող ակնհայտ օժանդակել ծովահեններին, և վերջիններս գտան մեկ ուրիշ հզոր դաշնակից-այուզերեն՝ Տիգրան Բ Մեծին: 83-67 թթ.՝ տասնվեց տարի Տիգրանյան Հայկական կայսրության հզորությունը անձեռնմխելի էր պահում ծովահենների հիմնական՝ կիլիկյան հենակետերը:

67 թ. գարնան սկզբին այս ուժը Միջերկրական արևելյան ափերին այլևս չկար: 69 – 67 թթ. հայ-հռոմեական պատերազմի 68 թ. ռազմարշավում պարտված Լուկուլլոսը, գրավելով Մծբինը, համենայն դեպս, լրջորեն փոխեց տրամադրությունները Միրիայում ու Կիլիկիայում:

Եթե Տիգրանը 67 թ. գարնանը հնարավորություն ունենար իր բանակով մտնել Սիրիա և Կիլիկիա, ապա Պոմպեոսի թեթև հաղթանակները ծովահենների հանդեպ Միջերկրականի ողջ ավազանով կվերածվեին ծանրագույն պատերազմի, պատերազմ՝ անորոշ ելքով, որտեղ կշեռքի վճռական նժարը դեպի հռոմեացիները կարող էր փոխել միայն Պարթևական տերու-

թյան ուժեղ հարվածը Հայաստանի թիկունքին:

Լուկուլլոսի համառ դիմադրությունը Տիգրանի գերակշռող զորքերին հսկայական նշանակություն ունեցավ 67 թ. գարնանը ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի վրա: Տիգրանը կորցրեց իր կայսրության հարավն արագ վերագրավելու պատեհ հնարավորությունը և ողջ 68-ը և 67 թ.-ի սկիզբը հարկադրված էր զբաղվել Լուկուլլոսի բանակի վտարումով:

Այս ամենը վճռականորեն փոխեց ծովահենների ղեկավարների տրամադրությունները. առանց հայ-պոնտական դաշնության գործուն օժանդակության, նրանց պայքարը դառնում էր անհուսալի: Ծովահենները որոշեցին տեղի տալ, հատկապես հաշվի առնելով իրենց թշնամի հռոմեացիների առաջնորդ՝ Գնեյոս Պոմպեոսի բնավորության հավասարակշռված և շրջահայաց, երբեմն էլ՝ նույնիսկ մեղմ գծերը, որոնց շնորհիվ վերջինս առաջնորդվում էր ոչ թե կույր վրեժխնդրության, այլ Հռոմեական պետության համար առաջնահերթ շահերը պահպանելու սկզբունքով:

Ստեղծված պայմաններում Պոմպեոսի մեղմությունը, Հռոմի համար ամենալավ միջոցն էր ծովահենների խնդիրները արագ և արդյունավետ լուծելու համար:

67 թ. գարնանը Տիգրանը և Միհրդատը հռոմեական պետությունում կամ հասարակության որևէ շերտում կամ խմբավորություններում դաշնակիցներ չունեին: Դրա հետ մեկտեղ, հռոմեական հասարակությունը հոգնել էր պատերազմներից և ուզում էր արագ խաղաղություն հաստատել (մենք գիտենք, որ դեռ գրեթե 40 տարի Հռոմը դուրս չի գալու սահմանային և քաղաքացիական պատերազմների փոթորիկներից և միայն Օգոստոս Օկտավիանոսի օրոք նա շունչ կքաշի պատերազմների անվերջանալի տառապանքներից, սակայն 67 – 62 թթ. պատմական դրամայի մասնակիցները այդ մասին չէին կարող ենթադրել):

Պոնտոսի հելլենիստական տերության օժանդակությամբ հռոմեական տիրապետությունից դուրս գալու հունական հասարակության մի մասի երազանքը, 89 – 85 թթ. առաջին պոնտական պատերազմի ընթացքում իսպառ վերացավ: Այսուհետ Հռոմի տիրապետությունը թվում էր ընդմիշտ, դեռևս 146 թ.-ին նվաճված Հունաստանը, լավ հիշելով առաջին պոնտական պա-

տերազմի դասերը, այլևս իր անկախության մասին չերազեց:

74 – 70 թթ. պատերազմները Փոքր Ասիայի ժողովուրդներին նոր փորձանքներ բերեցին: Սակայն, հռոմեական վաշխառուների ախորժակները զսպելու կամ մեղմելու Լուկուլլոսի փորձերը, հռոմեական Ասիայի բնակչության մի մասի մոտ հռոմեացիների հանդեպ հանդուրժողական տրամադրություններ ստեղծեցին: Հռոմը Փոքր Ասիայում արդեն երեք նահանգ ուներ՝ Ասիան (նախկին Պերգամոսը), Լեոնային (կամ Քարային) Կիլիկիան և Բիթյանիան: Հռոմեական նահանգի կարգավիճակ էր նախատեսվում նաև նվաճված Պոնտոսի հատվածի, որի մի մասն արդեն ազատագրել էր Միհրդատ Պոնտացու ղեկավարած հայ-պոնտական բանակը:

Գալատները և կապադովկիացիները նույնպես հիացած չէին հռոմեական տիրապետության հեռանկարով, որին միանշանակ նախընտրում էին սեփական դինաստների կառավարումը, սակայն նրանք Հռոմի հնազանդ դաշնակիցներն էին: Նրանց ոչ մեծ պետությունները բուֆերային դեր էին կատարում Հռոմի և հայ-պոնտական դաշինքի տերությունների միջև:

67 թ. գարնանը Գալատիան և ռազմականորեն ավելի թույլ Կապադովկիան վերստին հայտնվեցին մեծ պատերազմական ավերածությունների շեմին՝ Պոնտոսում հայկական զորքերի օգնությամբ վերահաստատվում էր Միհրդատ Պոնտացին, իսկ հաղթանակած հայկական բանակի գրոհը դեպի Փոքր Ասիա դառնում էր անխուսափելի: Այս երկրների հասարակությունները Տիգրանի և Միհրդատի հանդեպ հիմնականում նույնպես թշնամաբար էին տրամադրված:

Սիրիան, որը 83 թ.-ին իր վերնախավի մեծամասնության միջոցով Տիգրան Մեծին հրավիրել էր գահակալել իրենց երկրում, և դրա շնորհիվ 14 տարի խաղաղության և տնտեսական մեծ վերելքի ժամանակաշրջան էր ունեցել (73 - 69 թթ. հարավսիրիական պատերազմը, որը հրահրել էր Հռոմը, սահմանափակ բնույթի էր, ընթանում էր միայն Կելեսիրիայում և սիրիացիների բարեկեցության վրա բացասաբար չազդեց), այլևս տրամադրված չէր դեպի Հայաստան:

69 թ. աշնանը, հայկական զորքերի մեծ մասի հեռանալուց հետո, Սիրիայում կրկին հաստատվեցին Սելևկյանների շառավիղները՝ Անտիոքոս XIII ու Փիլիպպոս II-ը, որոնք անմիջապես պատերազմ սկսեցին միմյանց դեմ: Սկզբնական շրջանում

գլուխին հաստատվեց առաջինը, որոշ ժամանակ անց, երկրորդին հաջողվեց հասնել առավելության և գրավել գահը:

Այս անփառունակ կառավարիչները անկարող էին զսպել 68 – 64 թթ. Սիրայի անապատներից արաբ քոչվորների սաստկացող ներհոսքը դեպի կենտրոնական շրջանները [34, 42, 51, 59]: Սիրիացիք, որոնք Տիգրանի իշխանության օրոք հիմնովին ետ էին վարժվել նման անիշխանությունից և անկարգություններից՝ սարսափեցին, և հիմա արդեն սկսեցին կողմնորոշվել դեպի հռոմեացիները, որպես Արևելքում պայքարի մեջ մտած երկու հսկա ուժերից ավելի զորեղը:

Սիրիայի, Կիլիկիայի և Փյունիկիայի ներքաղաքական զարգացումներին ուշադիր հետևող Տիգրանը, այդ մասին չիմանալ չէր կարող: Դա նշանակում էր, որ առանձ վերնախավի մեծ մասի դիմադրությունը հաղթահարելու Սիրիայի վրա վերահսկողություն սահմանելն անհնար էր:

Պակաս տագնապալի չէին զարգանում իրադարձությունները Հայաստանի հարավում և Պարթևստանում: Կոմագենեն, Օսրոյենեն, Ադիաբենեն, նույնիսկ Կորդուքը փաստորեն դուրս էին եկել արքայից արքայի իշխանությունից և դրացիական կապեր հաստատել Լուկուլլոսի հետ, որը գրավելով Մծբինը՝ վերահսկում էր Միգդոնիան: Այս բոլոր երկրամասերը և թագավորությունները ամենևին էլ չէին երազում կրկին հայտնվել հայկական գերիշխանության տակ:

Այս երկրերը Հայկական կայսրության կազմ կարելի էր ետ վերադարձնել կամ՝ ռազմական միջոցներով, կամ՝ Արևելքում հսկայական ռազմական գերակշռության հասնելու դեպքում, մի բան, որն այդ պահին հայերի համար անիրագործելի էր:

Պարթևստանը, որ զառամյալ Սանատրուկի ժամանակ չեզոք դիրք էր գրավում Հայաստանի նկատմամբ, այժմ՝ Հրահատ Գ-ի օրոք, ուշադիր հետևում էր հռոմեա-հայկական հակամարտության ընթացքին:

Տիգրանի՝ միջինասիական կամ մերձպարսիցծոցյան դաշնակիցների հետ ինչ-որ կապերի մասին 67 թ. գարնանը մենք ոչինչ չգիտենք, սակայն հետագայում, 66 թ. դեպքերը քննելիս, կհամոզվենք, որ ինչ-որ կապեր համենայն դեպս պահպանվել էին:

67 թ. վաղ գարնանը ռազմաքաղաքական իրավիճակը Արևելքում սպառնալի էր նաև հռոմեացիների համար՝ Լուկուլլոսի

հայաստանյան արշավանքը ձախողված էր, Պոնտոսի զգալի մասը՝ վերստին կորցրած, իսկ ծովում մոլեգնում էին ծովահենները ...

Պարթևստանը, որտեղ 69 թ. ծեր և խաղաղասեր Սանատրուկին փոխարինել էր նրա որդին՝ Հրահատ Գ-ն, վերելք էր ապրում: Վերջացան արքունական պառակտումները, պարթևաց թագավորը սկսեց ավելի ուշադիր հետևել արտաքին քաղաքական նորություններին: 69 - 66 թթ. հայ-հռոմեական պատերազմում Փրահատը չեզոքություն պահպանեց մինչև 66 թ., երբ դարձավ Հռոմի դաշնակիցն ընդդեմ Հայաստանի:

69 թ.-ից սկսած Տիգրանը զգում էր Պարթևական տերության աճող ուժը և իր հանդեպ դրսևորվող խուլ անբարյացակամությունը: Դրա հետ մեկտեղ, Հրահատ Գ-ին տագնապեցնում էր նաև Արևելքում Հռոմի ակտիվությունը: Հայ-հռոմեական պատերազմում նա ուներ իր ռազմաքաղաքական հետաքրքրությունները, որոնք չէին համընկնում Լուկուլլոսի կամ Պոմպեոսի շահերի հետ:

Տիգրան Մեծի կապերը և ազդեցության լծակները պարթևական արքունիքում զգալիորեն պակասել էին, դաշնակցային հարաբերությունները Քարակենեի ու Էյումայիսի հետ՝ թուլացել: Վերջիններս հազիվ թե երկար դիմանային վերստին հզորացող Պարթևական տերության աճող ճնշմանը:

Տիգրանի մյուս դաշնակիցները Միջին Ասիայում՝ սակարաուկները նույնպես իրենց վրա զգացել էին պարթևների հզորության աճը: Կարծում եմ, սակայն, որ ինչ-որ կապեր և իրադարձությունների վրա ազդելու որոշ լծակներ Արևելքում, Տիգրանն, այնուամենայնիվ, ուներ:

69 -66 թթ. հայ-հռոմեական պատերազմի վերջին՝ 67 թ. ռազմարշավը սկսվեց բարդ միջազգային իրադրության պայմաններում, որի Հայաստանին վերաբերող երբություններն անտիկ ժամանակաշրջանը ուսումնասիրող արդի պատմաբանները, միջազգայնագետները և ռազմագետները ցայսօր դեռ բազմակողմանիորեն չեն ուսումնասիրել:

7.1.2.Տիգրան Մեծի ուժերը ու ռազմավարական ծրագրերը 67 թ. գարնան սկզբին

67 թ. գարնան սկզբին Հայկական կայսրությունը վերահսկում էր Հայաստանի ողջ տարածությունը, Ատրպատականը, Վիրքը, Աղվանքը, հնարավոր է՝ նաև Կորդուքի մի մասը: Լուկուլլոսի վերահսկողության տակ էր մնացել միայն Հայաստանին կցված Միգդոնիայի մի մասը՝ Մծբին քաղաքով: Տիգրանն իր զորքերով օգնել էր ազատագրվել դաշնակից Պոնտոսի ու Փոքր Հայքի միացյալ թագավորությունը՝ վերջինս ամբողջովին ազատագրված էր, բուն Պոնտոսի հարակից տարածքներով:

Հայկական տերության զինված ուժերի տեղաբաշխումը հետևյալն էր.

Տիգրանի անմիջական ղեկավարության տակ Աղձնիքում էր գտնվում երեք զորաբանակներից բաղկացած բանակը.

1.Տիգրան Մեծի զորաբանակը՝
- 4.000 կատաֆրակտոս, որից 2.000 արքայի դրանիկ գնդերը,
- 3.000 թեթև հեծելազոր, ընդամենը՝ 7.000 հեծյալ,
- 2.000 նետաձիգներ,
- 1.000 սակրավորներ և օժանդակ զորամասեր,

ընդամենը՝ 10.000 զինվոր:

2.Միհրդատ Մեդացու հեծյալ զորաբանակը՝
- 2.500 մեդացի կատաֆրակտոս,
- 2.500 մեդացի թեթև հեծելազոր,
- 1.000 հայկական թեթև հեծելազոր,

ընդամենը՝ 6.000 հեծյալ:

3.Ավագ բդեշխ Մանկայոսի Աղձնիքի զորաբանակը՝ մոտ 4.500 հետևակային և 500 հեծյալ, ընդամենը՝ 5.000 զինվոր զբաղեցրել էր Աղձնիքի բոլոր կարևոր ամրությունները և մտել էր քանդված Տիգրանակերտ:

Հայկական Տավրոսից հյուսիս լեռնանցքների ձյունահալքին էին սպասում Տիգրանի բանակի հիմնական ուժերը.
- 1.500 կատաֆրակտոս,
- 8.500 թեթև հեծելազոր,
- 20.000 ծանր հետևակ,
- 2.000 թեթև հետևակ և
- 3.000 սակրավոր ու այլ օժանդակ զորք,

ընդամենը՝ 35.000 զինվոր:

Պոնտոսում գործող հայկական զորաբանակը գտնվում էր Միհրդատ Պոնտացու հրամանատարության տակ.
- 3.000 կատաֆրակտոս,
- 2.500 թեթև հեծելազոր,
- 1.000 նիզակակիր,
- 2.500 նետաձիգ,
- 1.000 օժանդակ զորք,

ընդամենը՝ 10.000 զինվոր:

Նկատի ունենալով Պոնտոսում ծավալված ռազմական գործողությունների ընթացքը, Միհրդատի մոտ գտնվող հայկական բանակի կորուստները ճակատամարտերում մոտավորապես հաշվել եմ 500 թեթև հեծելազոր և 500 նետաձիգ:

Այսպիսով, 67 թ. ռազմական գործողություններին հայկական կայսերական բանակից մասնակցում էին մոտավորապես 60-61.000 հայ և 5.000 մեդացի, ընդամենը՝ 65-66.000 զինվոր:

Մնացած հայկական զորքերի մոտավոր տեղաբաշխումը ներկայացված է սույն աշխատության ... էջում: Դաշնակից պոնտական զորքերի թվաքանակի և տեղաբաշխման յուրահատկությունների մասին կխոսենք ստորև:

Տիգրանի ռազմավարական ծրագրերը կազմված էին Օյկումենեում տիրող իրավիճակի մանրամասն վերլուծության հաշվառումով:

> 67 թ. գարնանը Տիգրանը եռանդորեն սկսեց լուծել իր առջև ծառացած չորս հիմնական ռազմաքաղաքական խնդիրներ.
> - վերականգնել իր իշխանությունը կայսրության հարավային երկրներում,
> - վերջնականապես ջախջախել ու դեպի հռոմեական տիրույթները ետ շպրտել Լուկուլլոսին և վերականգնել Պոնտական տերության նախկին հզորությունը,
> - բավարար ուժ կուտակել պարթևական ուղղության վրա, որպեսզի Պարթևական տերությանը Հայկական կայսրության հանդեպ պատերազմի սպառնալիքով ակտիվ գործողություններից հետ պահի,
> - վերականգնել պատերազմից տուժած Հայաստանի հարավային նահանգները:

7.1.3.Լուկուլլոսի ուժերը ու ռազմավարական ծրագրերը 67 թ. գարնան սկզբին

67 թ. գարնան սկզբին Լուկուլլոսի բանակի և, ընդհանրապես, հռոմեական զինված ուժերի տեղաբաշխումն Արևելքում հետևյալն էր:

67 թ. գարնան կեսին Մծբին հասան Պոնտոսում հռոմեացիների անհաջողությունների մասին լուրերը: Միհրդատը կարողացել էր ազատագրել գրեթե ողջ Փոքր Հայքը և բուն Պոնտոսի որոշ շրջաններ:

Լուկուլլոսին հաջողվեց բանակում որոշ չափով վերականգնել կարգապահությունը և գարնան կեսին նա Մծբինից շարժվեց դեպի Պոնտոս: Լուկուլլոսը շտապում էր դուրս գալ Մծբինից այնքան շուտ, որ Տավրոսի լեռնանցքները դեռ բացված չլինեին: Նա բացարձակապես չէր կամենում մեկ անգամ ևս հանդիպել ձմեռելուց վերադարձող հայկական բանակի հետ:

Գարնանը Լուկուլլոսի բանակի թիվը, հավանաբար, մի փոքր էլ նվազեց՝ պետք է, որ նրան լքած լինեին սիրիացի վարձկան հոպլիտները, որոնց համար բացարձակ անիմաստ էր արշավը դեպի Պոնտոս: Այս 2.000 հոպլիտների կորստից հետո Լուկուլլոսի բանակի թիվը պիտի հասած լիներ մոտավորապես 25.000-ի:

Պոնտոս վերադարձող Լուկուլլոսի բանակի հնարավոր կազմը՝

1.բուն հռոմեական բանակ
- 13.500 լեգեոներներ,
- մոտ 100 թեթևազեներ,
- մոտ 100 հեծյալ,
- մոտ 100 հոգի գումակի զինվորներից,

ընդամենը՝ մոտ 13.8-14.000 զինվոր:

Այդպիսով, կարելի է ենթադրել, որ Մծբինում ձմեռելուց հետո Սեքստիլիոսի և Մուրենայի լեգեոներում կար մոտ 3.500-ական լեգեոներ, իսկ երկու փիմբրիական լեգեոներում՝ մոտ 3.200-ական:

2.Հռոմեական դաշնակիցների կազմում մոտավորապես կար
- 9.000 ծանրազեն հետևակ,
- մոտ 200 թեթևազեն հետևակ,
- մոտ 100 հեծյալ և

- 1.000 օժանդակ զորք,

ընդամենը՝ 10.300 – 10.500 զինվոր:

9.000-ոց Ծանրազեն հետևակը բաժանված էր մոտավորապես 4 մասի, մոտավոր հաշվով՝ 2.250-ական զինվոր, և կցված էր համապատասխան լեգեոներին:

Այսպիսով, 67 թ. գարնանը Լուկուլլոսի բանակում հավանաբար պետք է լիներ մոտ 24-25.000 զինվոր, որից 14.000՝ բուն հռոմեացի:

Լուկուլլոսի ռազմավարական ծրագրերն էին.
1.արշավել Պոնտոս և իրեն միացնել Տրիարիոսի բանակը, որից հետո փորձել ջախջախել Միհրդատին (68 թ. վերջի իրադարձությունները՝ Կոմանայի ճակատամարտը և վրա հասած ձմեռը կասեցրեցին դեպի Լուկուլլոսի բանակ շարժվելու Տրիարիոսի փորձը),
2. իր ձեռքում ամուր պահել Պոնտոսը և համալրել իր ուժերը Տիգրանի դեմ մոտալուտ պայքարի համար,
3. հռոմեական Ասիայում և Հռոմում վերականգնել իր երերված հեղինակությունը:

7.2.69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմ. ռազմական գործողությունների վերսկսումը Հայաստանի հարավում 67 թ. գարնանը

69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի երրորդ տարում՝ 67 թ. գարնանը, Հայաստանի հարավում ռազմական գործողությունների վերսկսման մասին տեղեկություններ մենք կարող ենք քաղել անտիկ ժամանակաշրջանի տարբեր հեղինակներից, որոնցից առաջնակարգ նշանակություն ունեն Ապպիանոսի, Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի աշխատությունները:

7.2.1.Լուկուլլոսի բանակի նահանջը Մծբինից՝ Պոնտոս

67 թ. գարունը Լուկուլլոսը դիմավորեց Մծբինում: Պոնտոսից եկող լուրերը տագնապեցնող էին: Դեռ անցած տարվա վեր-

ջում Միհրդատին հաջողվել էր ջախջախել Փաբիոսին և հռոմեացիներից ազատագրել իր թագավորության մի մասը: Փաբիոսի պարտությունը Միհրդատին տրամադրել էր մեծ քանակությամբ սպառազինություն, այդ թվում ավելի, քան 1.000 լեգեոներական կոմպլեկտ: Օրեցօր աճում էր Միհրդատի զինվորների քանակը: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Հայաստանում գտնվելը Լուկուլլոսի համար խիստ վտանգավոր էր, քանի որ նրա բանակը կարող էր հայկական զորաբանակների կողմից շրջապատվել և իսպառ ոչնչացվել: Պոնտոսում գտնվող հռոմեական բանակն էլ անկարող էր դիմակայելու Միհրդատի զրոհը:

Լուկուլլոսը Ծոփքի և Կապադովկիայի միջով նահանջեց դեպի Պոնտոս, որպեսզի միանա Տրիարիուսի բանակին, սակայն չհասցրեց. Տրիարիոսի բանակն արդեն կործանիչ պարտություն էր կրել Զելայի ճակատամարտում: Լուկուլլոսին հաջողվեց իր բանակին միացնել միայն Տրիարիուսի բանակի մնացորդները:

XIX-րդ դարի պատմաբաններից Հայաստանից Պոնտոս Լուկուլլոսի նահանջին մանրամասն անդրադարձել է Թեոդոր Մոմմզենը: Նա գտնում էր, որ Լուկուլլոսի այս նահանջը ռազմական արշավների գլուխգործոցն է, շատ ավելի դժվար, քան մ.թ.ա. 401 թ. Հայաստանով դեպի Սև ծով Քսենոփոնի ղեկավարած և նկարագրված Բյուրի նահանջը [171]:

Քարտեզ 7.1. Լուկուլլոսի բանակի նահանջը Մծբինից Պոնտոս

Գերմանացի հարգարժան պատմաբանի այս տեսակետի հետ լիովին կարելի է համաձայնվել, հաշվի առնելով այն հատուկ հանգամանքները, որում տեղի ունեցավ նահանջի առաջին մասը՝ Բագրեւանդի դաշտից մինչև Մծբին: Մծբինից դեպի Պոնտոս տանող ճանապարհները Լուկուլլոսի համար արդեն առանձնապես վտանգավոր չէին:

Մծբինից Պոնտոս նահանջի հանգամանքները քննել է Ռուբեն Մանասերյանը նշելով, որ Լուկուլլոսն իր բանակի մեծամասնությունը կարողացավ Պոնտոս հասցնել շնորհիվ հայոց արքայից արքայի հատուկ քաղաքականության [34]: Ինձ այնքան էլ համոզիչ չի թվում այս կարծիքը: Տիգրանը՝ Լուկուլլոսին կարող էր լրջորեն սպառնալ միայն Տավրոսի լեռնանցքների բացվելուց հետո, երբ Աղձնիք կվերադառնար Հայաստանի կենտրոնական նահանգներում ձմեռն անցկացրած հայկական բանակի հիմնական մասը: Լուկուլլոսի երթուղու կլիմայական յուրահատկություններն նրան թույլ էին տալիս շարժվել դեպի Պոնտոս Տիգրանի բանակի արշավից մեկ ամիս առաջ:

67 թ. գարնանը Տիգրանը որոշում է չխոչընդոտել հռոմեական բանակի նահանջին այն պատճառով, որ դրա համար իրական միջոցներ դեռ չուներ: Աղձնիքում մնացած Տիգրանի շարժուն բանակը, մինչև հիմնական ուժերի ժամանելը, կարող էր միայն դանդաղեցնել Լուկուլլոսի բանակի երթը և որոշ կորուստներ պատճառեր:

Տիգրանը ժամանակ չուներ այդպիսի երկրորդային խնդիրներ լուծելու համար (հետագայում Միհրդատ Մեդացու զորաբանակը կհասնի Պոնտոս և կկատարի նրան հանձնարարված առաջադրանքը):

Տիգրանի որոշումները կապված էին մի շարք հանգամանքների հետ.

1.հռոմեացիները փաստացիորեն արդեն տանուլ էին տվել պատերազմը: 68 թ. ռազմարշավի ողջ ընթացքը, հատկապես Արածանիի և Աղձնիքի ճակատամարտերը և հայ-պոնտական զորքերի հակահարձակումը Պոնտոսում դրա վառ ապացույցն էին,

2.պարտված հռոմեական բանակը դեռևս հզոր ռազմական կարողություններ ունեցող մարտական ուժ էր, որին վերջնականապես կործանելու համար անհրաժեշտ էր զոհել հազարավոր, գուցե տասնյակ հազարավոր հայ զինվորների կյանք՝ կո-

բուստ, որը Տիգրանը չէր կարող հանդուրժել: Մի բան է սեփական բանակի զինվորներին զոհել հայրենիքին խիստ անհրաժեշտ հաղթանակի հասնելու համար, այլ է, երբ դա արվում է սեփական փառասիրության համար: Այս պատերազմում Տիգրանը վրեժխնդրության զգացումով չէր առաջնորդվում: Երեքամյա հայ-հռոմեական ծանր պատերազմը մոտենում էր հաղթական ավարտին և Լուկուլլոսի բանակի կործանումը առանձնապես չէր փոխում այս ընթացքը,

3. 74 թ.-ից Տիգրանը, ինչպես և Միհրդատը մշտական հարաբերությունների մեջ էին գտնվում հռոմեացիների հետ: Սկզբում դա Սերտորիոսի մարիական կառավարությունն էր Իսպանիայում, իսկ Սերտորիոսի սպանությունից հետո Տիգրանը որոշ կապեր կարող էր ունենալ Հռոմում, այդ թվում Պոնտոսում գտնվող մարիական սպաների միջոցով: Դա նշանակում է, որ Տիգրանը շատ լավ գիտեր հռոմեական բնավորության առանձնահատկությունները: Հռոմեացիները երբեք չէին ներում իրենց ծանր պարտության հասցրած թշնամիների առաջնորդներին, և հատուկ վրեժխնդրությամբ փորձում էին կործանել նրանց: Եթե Տիգրանը Հայաստանում ոչնչացներ Լուկուլլոսի բանակը, ապա նույնիսկ հեռավոր ապագայում ընդմիշտ կփակվեին Հռոմի հետ բանակցելու նրա բոլոր հնարավորությունները,

4.Տիգրանը մերժողաբար էր վերաբերվում Հռոմի դեմ համընդհանուր պատերազմ վարելու հնարավորությանը: Նա միշտ հիշում էր, որ արևելքից իրեն սպառնում են իրենց հզորությունը մասնակիորեն վերականգնած պարթևները: Ուստի արևելյան ուղղության պաշտպանության ցանկացած թուլացումը հղի էր հնարավոր պարթևական հարձակումով,

5. Հռոմեացիների կողմից Պոնտոսի պետության և հատկապես քաղաքների արտասովոր դաժան կործանումը Միհրդատին զրկել էին իր հզորությունն արագ վերականգնելու հնարավորությունից: Տիգրանը հասկանում էր, որ Միհրդատ Եվպատորի թագավորությունն այլևս չի կարող լիարժեք դաշնակից լինել իր համար: Նա հարկադրված էր լինելու անընդհատ պաշտպանել թուլացած պոնտական թագավորությունը, որի համար անհրաժեշտ էր ունենալ ևս մեկ զորեղ բանակ: Զորեղ բանակ ունենալու ճանապարհներից մեկն էլ խնայողականության քաղաքականությունն էր սեփական զորքերի հանդեպ.

հայաստանյան միջոցներն անսահմանափակ չէին:

Անհրաժեշտ էր բոլոր ջանքերը գործադրել հռոմեական նվաճումից պոնտական պետությունը պահպանելու համար: Այդ խնդիրն էր, որ պարտադրում էր հայկական զորքերի ներխուժումը Կապադովկիա և հռոմեացիների վտարումը մինչև նրանց փոքրասիական տիրույթներ՝ Ասիա նահանգ:

7.2.2.Տիգրանի գործողությունները 67 թ. գարնանը

Հայաստանի ներքին նահանգներում ձմեռող բանակը կարող էր անցնել Տավրոսի լեռնանցքները ապրիլին, վստահաբար՝ մայիսի սկզբին: Որոշ ժամանակ էլ պետք էր 35.000-ոց բանակը երթից հետո կարգի բերելու, իր 16.000-ոց բանակին միացնելու (Աղձնիքի բդեշխ Մանկայոսի 5.000 զորաբանակը արդեն զբաղված էր տարածաշրջանային իր խնդիրներով) և հրամանատարությանը առաջիկա խնդիրների հետ ծանոթացնելու համար: Այդ պատճառով Տիգրանն իր ողջ հզորությամբ կարող էր արշավի դուրս գալ մայիսի վերջից ոչ շուտ:

Միգդոնիայի և Ծոփքի ավելի մեղմ կլիմայական պայմանները Լուկուլլոսին հնարավորություն էր տալիս Տիգրանից գրեթե մեկ ամիս ավելի շուտ գործելու: Լուկուլլոսն օգտագործեց այս հնարավորությունը իր բանակն անփորձանք Պոնտոս հասցնելու համար, որտեղ Տրիարիոսին հասնելուց մի քանի օր առաջ իմացավ Զելեի գլխավոր ճակատամարտում հռոմեացիների ահավոր պարտության մասին:

Տրիարիոսի ուժեղ բանակի ծանր պարտությունը, երկու լեգեոնների իսպառ ոչնչացումը, բանակի կեսից ավելիի կորուստը, հռոմեական բանակում ուժեղացող հակալուկուլլոսյան տրամադրությունները զգալիորեն վատացրին հռոմեացիների ռազմաքաղաքական վիճակը Փոքր Ասիայում: Դա էր հայ-պոնտական զորքերի 67 թ. գարնան հաղթանակների ամենատպավորիչ արդյունքը:

Չնայած Լուկուլլոսի նահանջի պահին Տիգրանը գործնականում նրան խոչընդոտել չէր կարող, սակայն հռոմեացիներին թույլ տալ իր երկրից անվրդով հեռանալ նույնպես չէր ուզում: Լուկուլլոսի նահանջող բանակին հետապնդելու համար նա ու-

դարկեց իր փեսա Միհրդատ Մեդացու հեծելազորը, որի նոսրացած շարքերը, հավանաբար, մի փոքր ուժեղացրեց հայկական հեծելազորով: Միհրդատի խնդիրն էր հետևել հռոմեացիներին և հնարավորին չափ դժվարացնել նրանց նահանջը:

Միհրդատ Մեդացու հեծյալ զորաբանակը հասել էր նահանջող հռոմեացիներին, հավանաբար, վերջիններիս Մծբինից Կապադովկիա արշավի դուրս գալու 4-5-րդ օրը և մաղ ընդհարումներով ուղեկցել մինչև Կապադովկիայի ու Ծոփքի սահմանը՝ Եփրատ գետը, որի ափին կանգնեցրել էր իր հետապնդումը:

Հռոմեացիները շունչ քաշեցին, անվտանգ մտան Փոքր Հայք, որտեղ անհոգացած հռոմեացիների ստորաբաժանումների վրա անսպասելի գրոհեցին նրանց հետապնդումը գաղտնի վերսկսած Միհրդատ Մեդացու հեծյալները և հռոմեացիներից շատերին կոտորեցին:

Իր հզոր բանակը կարգի բերելուց հետո Տիգրանն անմիջապես չարշավեց Լուկուլլոսի ետևից: Տվյալ պահին դա արդեն անիմաստ էր՝ վերջինիս զինվորներն արդեն Փոքր Հայքում էին, Միհրդատ Մեդացին էլ իր առաջադրանքը լավ էր կատարում:

Տիգրանն իր ամբողջ հզորությամբ անցավ Հայաստանի հարավով, մտավ Մծբին, հետո՝ Ծոփք, ուր մոտեցավ Եփրատին՝ Կոմագենեի սահմանագլխին: Այս արշավը ողջ տարածաշրջանում վերականգնեց Տիգրանի գերիշխանությունը և մեծապետական հավակնությունները: Ծոփքում, Միգդոնիայում, Կորդուքում, ինչպես 68 թ. աշնանը Աղձնիքում, տեղադրվեցին հայկական զորքեր: Կարծում եմ, հենց այդ ժամանակ իրեն հնազանդությունը կարող էին հայտնած լինել Օսրոյենեն ու Ադիաբենեն:

Տիգրանը վերականգնեց Գուրասի զորաբանակը, որը կրկին պետք է վերահսկեր Միգդոնիան. Մծբինը դարձյալ ունեցավ իր հայկական կայազորը:

Եփրատի ափ Տիգրանի հզոր բանակի դուրս գալը հայերին հնարավորություն էր տալիս հարձակումը շարունակել երկու հնարավոր ուղղություններով. Առաջինը՝ դեպի Կոմագենե, Կիլիկիա, Սիրիա և Փունիկիա. երկրորդը՝ Լուկուլլոսի բանակը ոչնչացնելու համար, դեպի Կապադովկիա և Պոնտոս:

Տիգրանը նախընտրեց երկրորդը: Հայկական բանակի հնարավոր արշավը դեպի հարավ՝ Կոմագենե ու Կիլիկիա և, վերջում, Սիրիա ու Փունիկիա խոր տագնապ և հակազդեցություն առաջացրեցին այս տարածաշրջանում: 67 թ. գարնանը Լեռնային Կիլիկիայի պրոպրետոր Մարկոս Ռեքսը պաշտոնական այցով ժամանեց Փիլիպպոս II-ի մոտ՝ Անտիոք, սիրիացիներին Հռոմի աջակցությունը ցուցադրելու: Ըստ երևույթին Կոմագենեի թագավոր Անտիոքոսը ևս շփման մեջ էր մտել հռոմեացիների հետ: Այսպիսով, Հռոմը, Սիրիան և Կոմագենեն միահամուռ դեմ կանգնեցին Տիգրանին:

Ռեքսի 3 լեգեոնը, սիրիական և կոմագենական բանակների հետ միասին, ավելի քան 50.000 զինվոր էին: Դա պատկառելի ուժ էր, որն իր հզորությամբ միայն մի փոքր էր զիջում Տիգրանի բանակին:

Այս ժամանակահատվածում ծովահենների դեմ սկսեցին ծավալվել Պոմպեոսի գործողությունները: Տիգրանի բանակը կարող էր Կոմագենեով իջնել Կիլիկիա և, դաշնակցելով ծովահենների հետ, հսկայական մի ռազմաճակատ բացել ամբողջ միջերկրականում գտնվող հռոմեական ուժերի դեմ: Եթե այդպիսի բան տեղի ունենար, կնշանակեր, որ Տիգրանը կրկին սկսում է իր վեճը Հռոմի հետ համաշխարհային տիրապետության համար: Սակայն 67 թ.-ին ամենևին էլ 89 – 85 թթ.-ները չէին, Պոնտոսը կիսաջախջախված վիճակում էր, քայքայված Հայկական կայսրության ռազմական և տնտեսական միջոցներն էլ անհամեմատելի էին ախոյան Հռոմի հնարավորությունների հետ: Պետք է հիշել, որ Արևելքում, ատամները կոթկոթացնելով, իր պահին էր սպասում պարտված Պարթևստանը:

Այսպիսով, հարավային արշավանքը մեծ պատերազմ էր նշանակում գերազանցող ուժերի դեմ, որի ընթացքում Տիգրանն անխուսափելիորեն ներգրավվելու էր Պոմպեոս – ծովահեններ հակամարտությանը:

Տիգրանը մերժեց իրադարձությունների զարգացման հարավային սցենարը. նա պատրաստ չէր այս ծավալի պայքարին: Մնաց արևմտյան ուղղությունը:

Այստեղ ռազմաքաղաքական իրադրությունը Տիգրանի համար ավելի բարենպաստ էր: Միհրդատ Պոնտացին Զելեի հաղթանակից հետո Պոնտոսում որոշ չափով ամրապնդել էր իր դիրքերը: Բայց Լուկուլլոսի բանակի վերադարձը Պոնտոս զգալիորեն վատացրեց Միհրդատ Պոնտացու դիրքերը, չնայած Տիգ-

բանի ուղարկած օգնությանը՝ Միհրդատ Մեդացու հզոր հեծյալ զորաբանակին: Միհրդատի բանակի 16.000 հայ-մեդական և մոտավորապես նույնքան պոնտական զորքերի (ընդամենը՝ 32.000 զինվոր) դեմ կանգնած էր Լուկուլլոսի մեծացած բանակը, որի մեջ էին ներգրավված նաև Տրիարիոսի բանակի մնացորդները, միասին՝ 6 հռոմեական նոսրացած, բայց խիստ մարտունակ լեգեոն, և բազմաթիվ դաշնակցային զորքեր, ընդամենը մոտ 45.000 զինվոր: Այդ պատճառով, Միհրդատն ամրացել էր Փոքր Հայքում՝ Տալավրա ամրոցի մոտակա բարձրունքներում, և այստեղից հարվածներ էր հասցնում հռոմեացիներին: Տիգրանի ուղարկած Միհրդատ Մեդացու հեծյալներն, այս հարաբերությունը կրճատեցին մինչև 38.000-ը՝ 45.000 դեմ:

Տիգրանի բանակի հայտնվելն այս ռազմաճակատում ուժերի հարաբերությունը կրկին կտրուկ կփոխեր հօգուտ հայ պոնտական ռազմական դաշինքի և կրկին կստեղծեր Լուկուլլոսի բանակի ոչնչացման իրական վտանգ:

Այս ռազմաճակատում, Լուկուլլոսի բանակից բացի, հռոմեացիները Փոքր Ասիայի արևմուտքում ունեին ևս որոշ քանակությամբ ուժեր. հռոմեական Ասիայում տեղադրված էր 2 լեգեոն, ինչպես նաև բազմաթիվ դաշնակցային և օժանդակ ուժեր: Չմոռանանք նաև հռոմեական նավատորմը: Այս ամենին գումարենք Ռեքսի լեգեոններից օժանդակություն ստանալու հնարավորությունը: Այնուամենայնիվ, արևմտյան ուղղությունում կար չնայած թուլացած, բայց բանիմաց և եռանդուն դաշնակից՝ Միհրդատ Եվպատորը:

Տիգրանը նախապատվություն տվեց արևմտյան ուղղությանը: Աղձնիքում, Ծոփքում, Կորդուքում և Միգդոնիայում թողնելով բավարար զորք, որի համար բացի Մոմիկի 5.000 և Գոռի 4-5.000 զինվորներից, Հայաստանի այլ վայրերից բերվեց ևս մի քանի հազար զինվոր և նույնիսկ տեղում մասնակի զորահավաք կատարվեց այնպես, որ Կապադովկիա մտնելիս Տիգրանն իր թիկունքում արդեն ուներ մոտ 10-15.000-ոց զորք:

67 թ. ամռանը արքայից արքայի ղեկավարած հայկական բանակը հերթական անգամ ներխուժեց Կապադովկիա. արևմտյան արշավանքը սկսվեց: Կապադովկիայի թագավոր Արիոբարզանեսը, իր մերձավորներով, գլխապատառ փախավ Փոքր Ասիայի հռոմեական հատված:

Տիգրանի արշավանքը Արևմուտք տագնապալի դարձրեց Լուկուլլոսի վիճակը Պոնտոսում. երկու բանակների աջցանում չհայտնվելու համար վերջինս հարկադրված էր սրնթաց արշավել Տիգրանի դեմ՝ Կապադովկիա, որպեսզի մինչև երկու Միհրդատների հայ-պոնտական բանակների վրա հասնելը ճակատամարտի բռնվի արքայից արքայի դեմ:

Այդ ժամանակ պոնտոսյան ռազմաճակատում նույնպես բուռն իրադարձություններ էին ծավալվում:

7.3.69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմ. ռազմական գործողությունների վերսկսումը Պոնտոսում 67 թ. գարնանը

68 թ. ձմռանը Պոնտոսում մարտական գործողությունները դադարել էին: Հակառակորդների ձմեռանոցներն էին. հռոմեացիները՝ Կաբիրան, Միհրդատինը՝ Պոնտոսյան Կոմանան: Ձմեռը չխանգարեց Միհրդատի հեծյալ ջոկատներին երկրով մեկ շրջել և նոր զինվորներ հավաքագրել, միաժամանակ հայթայթելով անհրաժեշտ պարենը:

Մարտական գործողությունները վերսկսվեցին 67 թ. գարնանը: Նախաձեռնությունը պատկանում էր Միհրդատի բանակի ստորաբաժանումներին, որոնք հարձակվեցին պարենավորման համար դուրս եկած հռոմեական ջոկատների վրա: Ծավալված մարտերը էական նշանակություն չունեին, սակայն անցնում էին պոնտացիների որոշ առավելությամբ, որի հետևանքով Միհրդատը դանդաղորեն ավելացնում էր իր տիրապետության տակ գտնվող տարածքները:

Օգտագործելով իր հեղինակությունը և Պոնտոսի բնակչության ատելությունը հռոմեացիների հանդեպ, ինչպես նաև գաղտնարաններում պահված հարստությունները, Միհրդատը սկսեց զորք հավաքել իր հպատակներից և վարձել վարձկանների ջոկատներ:

67 թ. գարնանը Պոնտոսում ծավալվեց 67 թ. ռազմարշավի պոնտական ռազմաճակատի ռազմական գործողությունների առաջին փուլը, որը տևեց մինչև ամառ: Հաջորդ փուլը սկսվեց ամռանը, երբ Տիգրան Մեծի հզոր բանակը մտավ Կապադովկիա:

Դեռ 68 թ. աշնանը Միհրդատը Պոնտոսում պատերազմում էր գերազանցապես Տիգրանի ուղարկած հայկական գնդերով:

67 թ.-ի առաջին կեսին հայկական զորաբանակն իր թվաքանակով ոչ միայն հավասար էր Միհրդատի նոր հավաքագրված պոնտական բանակին, այլև կազմում էր Միհրդատի հրամանատարության տակ գտնվող զորքերի ամենամարտունակ մասը: Պատերազմում Միհրդատի գլխավոր հարվածային ուժը մեծաքանակ մեծհայության հեծելազորն էր:

Անտիկ հեղինակները ոչինչ բան չեն պատմում 67 թ. գարնանը հայ-պոնտական զորքերի ծավալած գործունեության մասին, սակայն Զելայի ճակատամարտի նախօրյակին մենք պոնտական բանակը գտնում ենք ինտենսիվ մարզումների և զորաշարժերի մեջ ներգրավված [51, 59]: Միհրդատ Պոնտացին մտադիր չէր նախաձեռնությունը զիջել հակառակորդին:

Հռոմեացիները՝ Տրիարիոսի բանակը, պասիվ պաշտպանվում էր Պոնտոսի արքայից, նախընտրելով չպատասխանել վերջինիս բազմաթիվ մարտահրավերներին:

Հայ-պոնտական դաշինքը գործում էր անխափան՝ հայկական զորքերի ներկայությունը Պոնտոսում Միհրդատի հաջողություններին հիմք էր (վիճակը կփոխվի միայն 67 թ. սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին, երբ Տիգրանը կկասկածի, որ Միհրդատը կապված է Հայաստանում իր դեմ խռովություն բարձրացրած կազմակերպիչների, մասնավորապես, իր թոռ՝ Տիգրան Կրտսերի հետ և Հայաստան կվերադարձնի իր բոլոր զորքերը):

67 թ. գարնանը Զելա քաղաքի մոտակայքում տեղի ունեցավ 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի վերջին՝ չորրորդ գլխավոր ճակատամարտը:

7.4.Զելայի գլխավոր ճակատամարտը

67 թ. գարնանը Գազիուրա բնակավայրից ոչ հեռու, Սկոտինական բարձրունքների վրա, Զելա քաղաքի մոտակայքում, հռոմեական և հայ-պոնտական բանակների միջև տեղի ունեցավ 69 – 67 թթ. հայ-հռոմեական պատերազմի վերջին՝ չորրորդ գլխավոր ճակատամարտը [42, 51, 59]:

Արդի հետազոտողներից արժեքավոր է Լեոնիդ Նաումովի հոդվածը [173], մնացած հեղինակների մոտ մ.թ.ա. 67 թ. Զելայի ճակատամարտը գրեթե հետազոտված չէ [134, 223, 243, 259]: Նաումովը վերլուծում է պոնտական և հռոմեական բանակների թվաքանակը և պարզում, որ պոնտական բանակի գլխավոր հարվածային ուժը հայկական ճոշավոր այրուձին էր: Զելայի ճակատամարտում Միհրդատը Տրիարիոսին ջախջախում է հայկական կատաֆրակտոսների հուժկու հարվածով: Նաումովի այս հոդվածը ռուսերեն հրատարակվող մասնագիտական գրականության մեջ արձագանքներ չգտավ, որովհետև, հավանաբար, դուրս էր եկել Արևմուտքում ընդունված կարծրատիպերից:

7.3.1.Տրիարիոսի ծրագրերը և հռոմեական բանակի զորադասավորումը

Փորձենք պարզել Տրիարիոսի բանակի մոտավոր կազմը ճակատամարտից առաջ:

Ճակատամարտին մասնակցել էին Տրիարիոսի, Սոռնատիոսի, Փաբիոսի լեգեոնները, որոնց պետք է գումարել Բյութանիայից ժամանած ևս մեկ լեգեոն (Կոմանայի ճակատամարտից հետո, հաշվի առնելով Փաբիոսի լեգեոնի հսկայական կորուստները, Բյութանիայից, ըստ երևույթին, կանչվել էր ևս մեկ լեգեոն, որով լեգեոնների թիվը հասել էր չորսի):

Տրիարիոսի, Սոռնատիոսի լեգեոնները ծանր մարտեր էին ունեցել Երրորդ պոնտական պատերազմի ժամանակ և միջինում նրանց ընդունում եմ 4.500 լեգեոներ (կարելի է և 5.000, սակայն այստեղ առավելագույնով հաշվելը, ըստ երևույթին, սխալ

կլինի, որովհետև այս պատերազմը արդեն լավ համբավ չուներ և կարող է նաև պարզապես խոսափողներ լինեին):

Փաբիոսի լեգեոնի կազմը դժվար թե գերազանցեր 2.500 լեգեոներներից (նա հսկայական կորուստներ էր ունեցել Միհրդատի ներխուժման սկզբում և մեծ ճակատամարտում, որտեղ միայն 500 լեգեոներ սպանվել էր և, ըստ երևույթին, նույնքան էլ գերի էր վերցվել): Փաբիոսի դաշնակցային կոհորտները նույնպես խիստ նոսրացել էին, որովհետև թրակիացիներն անցել էին Միհրդատի կողմը: Որքան էլ Փաբիոսը և Տրիարիոսը համալրած լինեին այս կորուստը, դժվար թե Փաբիոսի լեգեոնի դաշնակցային կոհորտներում 2.500 զինվորից ավելի լիներ:

Հռոմեական մեկ լեգեոնին կցվում էր մեկ ալա հեծելազոր և երկու կոհորտ թեթևազեն, նշանակում է, որ երեք լեգեոններում կար մոտ 800-900 հեծյալ և 3.000-ից մի փոքր ավել թեթևազեն հետևակային: Փաբիոսի լեգեոնը գրեթե ոչինչ այս թվին չէր կարող ավելացնել, միասին կարելի է ընդունել մոտ 1.000 հեծյալ և 3-3.5 հազար թեթևազեններ:

Այսպիսով, Տրիարիուսի հրամանատարության տակ կար.

13.500 լեգեոներ երեք լեգեոններում և 2.500 լեգեոներ Փաբիոսի լեգեոնում, միասին՝ 16.000 լեգեոներ, որոնք 1.000 հեծյալների և 3.000 թեթևազենների հետ կազմում էին Տրիարիոսի բանակի հռոմեացիների կազմը՝ 20.000 զինվոր:

Եթե գումարենք դաշնակիցների և օժանդակ զորքերի կոնտինգենտները, ապա կստացվի՝ ամեն լեգեոնին թվով հավասար, կամ մի փոքր ավել դաշնակցային ծանր հետևակ՝ 15.000-ը գումարած Փաբիոսի 2.500 դաշնակցային ծանր հետևակին, մոտ 17.500 ծանրազեն զինվոր: Դաշնակցային թեթև հետևակը պետք է, որ զգալիորեն գերազանցեր հռոմեականին, իսկ հեծելազորը՝ եռապատիկ, այսինքն դաշնակիցների կոնտինգենտների հնարավոր կազմը կարող էր լինել այսպիսին.

17.500 ծանր հետևակ,
4.000 թեթև հետևակ,
3.000 հեծելազոր,
2.000 օժանդակ զորք,
ընդամենը՝ 26.500 զինվոր:

Հաշվի առնելով ներկայացված թվերի ծայրահեղ հարաբերականությունը, նպատակահարմար է դրանք կլորացնել մինչև 25.000 դաշնակցային զորք (ավելի ճիշտ կլիներ դաշնակցային

զորքի քանակը ավելացնել մինչև 30.000, հաշվի առնելով Դիոն Կասսիոսի ուղղակի ցուցումը [51], սակայն չպետք է մոռանալ, որ Կաբիրայում և Դադասայում հռոմեացիներն ունեին կայազորներ, որոնք ուժեղացված էին դաշնակցային ջոկատներով. նույն պատճառով հռոմեական լեգեոնների թվակազմը հաշվվում է ոչ թե 5.000, այլ 4.500):

Այսպիսով, Զելայի ճակատամարտում Տրիարիոսի բանակը բաղկացած էր 4 լեգեոնից և դաշնակիցների զորքերից, ընդամենը՝ 45.000 զինվոր հետևյալ կազմով.

33.000 ծանր հետևակ,
7.000 թեթև հետևակ,
4.000 հեծելազոր,
1.000 օժանդակ զորք:

Այս զորքերից Տրիարիոսը հռոմեական ճամբարում պետք է թողներ պատկառելի քանակությամբ զինվորներ, մոտավորապես այսպիսի կազմով.

3.000 ծանր հետևակ,
1.000 թեթև հետևակ,
1.000 օժանդակ զորք:

3.000 ծանրազեններից 2.000 կարող էին լինել 4 հռոմեական լեգեոնների ամեն մի կոհորտից առանձնացած 50-ական զինվոր (որպեսզի, առանձին կոհորտներ ճամբարում թողնելու պատճառով, մարտում լեգեոնի կոհորտների թիվը չկրճատվեր [77, 100, 126, 133, 291]), մնացած 1.000-ը՝ դաշնակիցների ծանրազեն հետևակից: 1.000 թեթևազենները կարող էին լինել հենց հռոմեացիները (ավելի շուտ՝ իտալիկները), 1.000 հոգի՝ գումակի և օժանդակ զորքերի զինվորներ: Հռոմեացիները իրենց կողոպտած հարստությունները ոչ մեկին չէին վստահում, լավ պահպանում էին այն և կատաղի կռվում դրանց համար: Հռոմեացի զինվորի համար այս արշավների հիմնական իմաստը թալանով հարստանալն էր [42, 51, 59, 196, 212]):

Այսպիսով, եթե մենք ճամբարում գտնվող և ճակատամարտին անմիջապես չմասնակցող 5.000 զինվորներին հանենք 45.000-ից, ապա Զելայի ճակատամարտում անմիջապես մասնակցած հռոմեացիների և դաշնակիցների թիվը կպակասի մինչև 40.000 զինվոր, հետևյալ հնարավոր կազմով.

30.000 ծանր հետևակ, որոնցից 14.000 լեգեոներ,

6.000 թեթև հետևակ, որից 2.000 հռոմեական (իտալիկյան), 4.000 հեծելազոր, որից 1.000 հռոմեական:

Լեգեոներին կից դաշնակցային կոհորտներում, ըստ երևույթին, հիմնականում ծառայում էին բյութանացիներ, որոնք առանձնապես շահագրգռված չէին պոնտացիների հաջողություններում, գալատներ և, հնարավոր է, թրակիացիներ:

Թվային մեծ գերակշռությունը և, ամենակարևորը, սեփական զինվորների պահվածքը՝ կռվի բռնվելու հրամայական պահանջը (այլ ոչ թե Լուկուլլոսի հետ հաղթանակի փառքը չկիսելու ցանկությունը), հավանաբար, Տրիարիոսին ստիպել էր առանց Լուկուլլոսի բանակին սպասելու ճակատամարտի բռնվել Միհրդատի դեմ:

Հռոմեացի զինվորները պահանջում էին Տրիարիոսից ճակատել Միհրդատի դեմ, քանի որ վերջինս պաշարել էր (իրականում ավելի շատ ձևացրել էր, որ պաշարում է) Դադասա քաղաքը, ուր գտնվում էր հռոմեական բանակի գումակը: Բնական է, որ հռոմեացիներն այդքան հեշտ չէին հրաժարվի Պոնտոսում կողոպտած իրենց ավարից, որը պահվում էր այդ քաղաքում:

Տրիարիոսը որոշել էր Միհրդատին դիմավորել դասական մարտակարգով՝ կենտրոնում հռոմեական լեգեոնները, թևերին դաշնակիցների կոհորտները կամ փաղանգները, մարտակարգի թևերին՝ հեծելազորը: Հաշվի առնելով Միհրդատի բանակի հեծելազորի թվային և որակական գերազանցությունը, Տրիարիոսը էշելոնացրել էր մարտակարգը, հռոմեական լեգեոներին և դաշնակիցների ծանրազեներին դասավորելով երկու գծով: Մարտը պետք է սկսեր թեթև հետևակը, իսկ հետագայում, ըստ անհրաժեշտության, օգնության հասներ կա՛մ ծանր հետևակին, կա՛մ օժանդակեր հեծելազորին: Տրիարիոսի ծրագիրը հստակ էր, հաշվի էր առնում հայ-պոնտական զորքերի գերակշռությունը հեծելազորի մեջ: Եթե Միհրդատն ընդուներ Տրիարիոսի առաջարկած դասական ճակատամարտը, ապա մի քանի ժամից նա կարող էր ճզմվել հռոմեական բանակի ծանր հետևակի հսկայական զանգվածով և կործանիչ պարտություն կրել:

Տրիարիոսը երկար հետաձգում էր ճակատամարտը, սպասելով Լուկուլլոսին, արդարացիորեն համարելով, որ Միհրդատի հետ պետք է կռվի Լուկուլլոսի մակարդակի զորավար, այն

էլ՝ միացյալ հռոմեական բանակով: Նրա մեղքը չէր, որ ենթարկվեց Դադասա ամրոցի ունեցվածքը փրկելու համար Միհրդատի դեմ անհապաղ ճակատելու իր կատաղած զինվորների պահանջին: Նրանք չէին կարող կռահել, որ իրենց մարտի դրդելու համար, Միհրդատը Դադասա էր ուղարկել մի աննշան ջոկատ և, որ այդպիսի ամլտցները այդքան էլ հեշտ չէ գրավել նույնիսկ անհամեմատ ավելի մեծ ուժերով: Այսպես, թե այնպես, Միհրդատի խորամանկ հնարքը Տրիարիոսին ստիպեց ընդունել ճակատամարտը:

Երկրորդ պյունիկյան պատերազմի ընթացքը նկարագրելով, հին աշխարհի մեծագույն պատմիչներից մեկը՝ Պոլիբիոսը, որպես լավ զորավարի պարտադիր հատկություն այսպես բնութագրեց զգուշությունը.

«... Մինչդեռ կարթագենացիների առաջնորդը պատրաստ չէր վճռական ճակատամարտին. ընդ որում, ինչպես բնորոշ է լավ զորավարին, ինքը հետևում էր այն կանոնին, որ առանց կազմված նախագծի, չնչին առիթով պետք չէ համարձակվել վճռական ճակատամարտի. այդ պատճառով նա սահմանափակվեց նրանով, որ կանգնեցրեց իր զինվորներին խրամատի առջև և դեմքով շուռ տվեց դեպի հակառակորդը, սակայն թույլ չտվեց հետապնդել հռոմեացիներին ու մարտի մտնել, և ետ կանչեց նրանց ծառաների և շեփորահարների միջոցով: ...» Պոլիբիոս. Ընդհանուր պատմություն. Գիրք III, 69, [195] (թարգմ. ռուսերենից Ա.Գ.):

Տրիարիոսի կամքը չբավարարեց հետևելու մեծ հույնի խորհուրդներին:

Ճակատամարտից առաջ հռոմեացիների մարտական ոգին բարձր էր, նրանք իրենց հաղթող էին համարում անցած տարեվերջին կայացած Կոմանայի ճակատամարտում և անհամբեր սպասում էին նոր ընդհարմանը:

7.3.2.Միհրդատի ծրագրերը և հայ-պոնտական բանակի զորադասավորումը

Անտիկ պատմիչների վկայությամբ [42, 51, 59, 238] 67 թ. գարնանը Պոնտոսում Միհրդատի և Տրիարիոսի մեջ ծավալված գործողություններն ընդգրկում էին Կաբիրա, Կոմանա, Զելա

քաղաքները, Գազիուրա բնակավայրը և դրանք շրջապատող տարածքները (միայն Լուկուլլոսի բանակի մոտենալուց հետո, Միհրդատը կնահանջի Փոքր Հայք՝ Տալավրա ամրոցի մոտակա լեռները) [51]:

Միհրդատի բանակը ձմեռն անցկացրել էր այստեղ՝ Կոմանայում: Պետք է ենթադրել, որ պոնտացի արքայի զործակալները ձմռանը չէին հանգստանում և բանակը փորձում էին համալրել նոր զինվորներով, սակայն պետք է խոստովանել, որ ձմեռը զորք հավաքելու համար տարվա լավագույն եղանակը չէր: Այդ պատճառով կարծում եմ, որ ձմռանը և գարնան սկզբին Միհրդատին մեծաքանակ զորք հավաքել չէր հաջողվել:

Այժմ փորձենք վերականգնել Միհրդատի բանակի կազմը և տեսնել, թե որտեղից նա կարող էր համալրում սպասել: Բազմաթիվ ընդհարումների ընթացքում, Փաբիոսի զորքերի հետ մարտնչելիս, հատկապես Տրիարիոսի դեմ Կոմանայի ճակատամարտում կորուստ էր ունեցել նաև Միհրդատի բանակի հայկական զորաբանակը:

Չնայած վերոհիշյալ մարտերում հայկական գնդերը կորցրել էին մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր զինվոր, լավ հանգստացած, մարտունակ վիճակում էին: Իմ կարծիքով կորուստը այստեղ տատանվում էր 500-ից մինչև 1.000, միջինացված կարող ենք հաշվել մոտ 700-750 զոհված:

Մեծ Հայքի սահմանագլխին կանգնած մի քանի գնդի՝ տեղում մնալու անհրաժեշտությունը կորել էր, որովհետև Միհրդատն արդեն վերահսկում էր ողջ Փոքր Հայքը և այստեղից եկող վտանգը չեզոքացել էր: Քանի որ, Տրիարիոսի հրամանատարության տակ գտնվող հռոմեական ուժերը մեծաքանակ էին, տրամաբանական էր հայ-պոնտական դաշինքի բոլոր ուժերը կուտակել Միհրդատի մոտ և Տրիարիոսին պարտության մատնել մինչև Լուկուլլոսի վերադարձը Պոնտոս: Այս տրամաբանությունից ելնելով, ինձ թվում է, որ Փոքր Հայքի սահմանագլխին կանգնած բոլոր ուժերը՝ ևս մեկ գունդ թեթև հեծելազոր և նետաձիգների մի գունդ պետք է տրամադրվեին Միհրդատին: Հայկական զորամասերի գումակը հսկող հավանաբար մի քանի հարյուր զինվորները նույնպես անցել էին Միհրդատի տրամադրության տակ:

Այսպիսով, Միհրդատի բանակի մեծհայքյան զորաբանակի հնարավոր կազմն էր.

3 գունդ ծանր այրուձի՝ մոտ 3.000 կատաֆրակտոսներ,
3 գունդ թեթև հեծելազոր՝ մոտ 3.000 հեծյալ,
1 գունդ նիզակակիրներ՝ մոտ 1.000 նիզակակիր,
3 գունդ թեթև հետևակ՝ 3.000 աղեղնավոր և պարսավոր,
ընդամենը՝ 10.000 զինվոր, որից 6.000 հեծյալ և 4.000 հետևակ (առանց օժանդակ զորքերի):

Պոնտական բանակի հնարավոր կազմը հաշվարկելիս պետք է հաշվի առնենք ոչ միայն Հայաստանից Միհրդատի հետ Պոնտոս արշաված 4.000 հեծյալներին, այլև այլ համալրումներ: Առաջինը՝ այն փոքրհայքյան զինվորները, որոնք համալրեցին Միհրդատի բանակը սահմանը անցնելուց հետո: Երկրորդը՝ Փաբիոսի զորքերից Միհրդատի բանակ ետ եկած թրակիացիները և հռոմեացիներին լքած ստրուկներից [51] կազմված կոհորտները (մենք գիտենք, թե առաջին պոնտական պատերազմի ժամանակ ինչ արտակարգ խիզախությամբ մարտնչեցին Միհրդատի կողմից ազատագրված ստրուկները [169, 193, 222]. Պոնտոսի արքան վստահում էր ազատագրված մարդու վերագտած արժանապատվությանը): Մի քանի ամսվա ընթացքում, հատկապես գարնանը, երբ արդեն ակնհայտ դարձան Միհրդատի հաջողությունները, պոնտական բանակը կարող էր ստվարանալ վրեժխնդրությունով լցված հույն և այլազգի պոնտացի զինվորներով ծովափնյա կողոպտված քաղաքներից, պոնտացի (հյուսիսային կապադովկիացի) ազնվականներով և գյուղացիներով:

Այսպիսով, Ջելայի գլխավոր ճակատամարտի նախօրեին Միհրդատն իր պոնտական բանակում կարող էր ունենալ.

ա. Փոքր Հայքից հավաքագրված զորքեր.
1 գունդ փոքրհայքյան ծանր հեծելազոր՝ 1.000 հեծյալ,
1 գունդ փոքրհայքյան թեթև հեծելազոր՝ 1.000 հեծյալ,
6 ջոկատ (կոհորտ) փոքրհայքյան թեթև հետևակ՝ 3.000 նետաձիգ և պարսավոր,
6 ջոկատ (կոհորտ) փոքրհայքյան միջին հետևակ՝ 3.000 նիզակակիր,
ընդամենը՝ 8.000 զինվոր, որից 2.000 հեծյալ:
բ. Պոնտոսում հավաքագրված զորքեր.
1 գունդ պոնտական թեթև հեծելազոր՝ 1.000 հեծյալ,
1 գունդ հունա-պոնտական ծանր հեծելազոր՝ 1.000 հեծյալ,

1 նորաստեղծ պոնտական լեգեոն, համալրված
ստրուկներով՝ վտարանդի հռոմեական սպաների
հրամանատարությամբ՝ 6.000 ծանրազեն,
2 ջոկատ (կոհորտ) թեթև հետևակ՝ 1.000 նետաձիգ և
պարսավոր,
օժանդակ զորք՝ 1.000 սակրավոր, գումակի զինվոր և այլն,
ընդամենը՝ 10.000 զինվոր, որից 2.000 հեծյալ:
գ. Վարձկաններ.
6-8 կոհորտ թրակիացի նիզակակիրներ՝ 3-4.000 զինվոր:

Այսպիսով, Միհրդատը Զելայի ճակատամարտը կարող էր սկսել 21-22.000 պոնտական և 10.000 դաշնակից հայկական զորքերով, միասին՝ 31-32.000 զինվոր, այդ թվում՝ 10.000 հեծելազոր.

5.000 ծանր հեծելազոր,
5.000 թեթև հեծելազոր,
6.000 ծանր հետևակ,
7.000 միջին հետևակ (պելտաստներ),
7.000 թեթև հետևակ,
1.000 օժանդակ զորք:

Ազգային կազմով, հավանաբար, Միհրդատի բանակի կեսից ավելին՝ 18.000-ը հայեր էին (օժանդակ զորքի 1.000 զինվորներից գրեթե կեսը նույնպես կարող էին Փոքր Հայքի հայեր լինել), երկու դաշնակից թագավորների հպատակները:

Միհրդատի բանակը, հավանաբար, 67 թ. գարնանը թվով ոչ միայն չէր գերազանցում տեղի հռոմեական բանակին, այլև ելնելով դեպքերի նախորդ զարգացումներից, նրանց զգալիորեն զիջում էր: Մեր հաշվարկներով 67 թ. գարնանը Միհրդատը կարող էր մարտադաշտ հանել առավելագույնը 20-22.000 զինվոր, որից 4.000 պոնտական, այդ թվում և փոքրհայքյան հեծելազորն էր: Տիգրանի ուղարկած համալրումներից հետո, Պոնտոսում հայկական զորաբանակը հասավ 10.000 զինվորի, որից 6.000 հեծյալ, այդ թվում 3.000 հայկական ճոշավոր այրուձի: Միհրդատի հայ-պոնտական բանակի ընդհանուր թիվը հասնում էր 30-32.000 զինվորի, այն դեպքում, երբ Տրիարիոսի բանակը ավելի մեծաթիվ էր՝ վերջինս մարտի դաշտ հանեց մոտավորապես 40.000 զինվոր:

Որպես զորավար Միհրդատ Եվպատորը գերազանցում էր Տրիարիոսին: Հռոմեական բանակն ուներ ուժեղ ծանր հետևակ՝ չորս հռոմեական լեգեոն, ուժեղացած նույն թվաքանակի դաշնակցային ծանր հետևակով: Հայ-պոնտական բանակն ուժեղ էր իր արտակարգ մարտունակ հեծելազորով, որի լավագույն մասը Տիգրան Մեծի փառապանծ կատաֆրակտոսների գնդերն էին: Հենց նրանք էլ վճռորոշ դեր խաղացին այս ճակատամարտում:

Միհրդատը գիտակցում էր, որ հռոմեական հետևակի ուղղակի գրոհին յուրայինները դիմանալ չեն կարող: Տրիարիոսը բարեխիղճ, սակայն պարզունակ մտածելակերպով զորավար էր, և Միհրդատին թվում էր, որ կարելի էր փորձել շրջապատել նրան իր հզոր հեծելազորով: Սակայն Տրիարիոսը իր ձախ թևը մոտեցրել էր ճահիճներին և դրանով, ինչպես նրան թվում էր, այդ կողմից լավ պաշտպանվել էր հակառակորդի հեծելազորի գրոհից և հետագա հնարավոր զորաշարժից դեպի իր թիկունքը: Տրիարիոսի աջ թևը ևս հեշտ չէր լինի ջախջախել հեծելազորային գրոհով, որովհետև նա իր հեծելազորին օգնության կարող էր ուղարկել իր լեգեոնների երկրորդ գիծը. խոստովանենք, որ հռոմեական մարտակարգը լավ մտածված էր:

Միհրդատ Պոնտացին այս պայմաններում ընդունում է մի որոշում, որը պետք է անմահացնի նրա անունը Հին աշխարհի ռազմարվեստի պատմությունում: Նա առաջին անգամ հռոմեական լեգեոնների դեմ օգտագործում է այն մարտավարությունը, որը Տիգրան Մեծը բազմիցս օգտագործել էր իր անցկացրած բազմաթիվ ճակատամարտերում՝ հայկական կատաֆրակտոսների ճակատային գրոհ:

Միհրդատի որոշումը տրամաբանական էր, չէ՞ որ նրա ժամանակավոր հրամանատարության տակ էր գտնվում տիգրանյան բանակի ընտրանին՝ հայ կատաֆրակտոսների երեք և թեթև հեծելազորի երեքական գունդ:

Մեկ տարի առաջ Տիգրանը Արածանիում Լուկուլլոսին դիմավորել էր վերջինիս համար այնպիսի անսովոր մարտառճով, որին հռոմեացի մեծ զորավարը ոչինչ չէր կարողացել հակադրել: Մինչև տիգրանյան հեծելազորի հոչակավոր «սկյութական» ետադարձ նետահարումը, վարպետորեն հեռացնելով հռոմեական հեծելազորը իր հետևակից, և փորձելով նրան խ-

պառ բնաջնջել՝ Տիգրանն արդեն շահել էր ճակատամարտը: Այժմ Միհրդատը պետք է պարտադրեր Տրիարիոսին իր մարտաձևը:

Միհրդատը որոշում է ճակատային գրոհով ճեղքել հռոմեական լեգեոններից մեկի մարտակարգը, անցնել հռոմեացիների թիկունք ու այնտեղից հռոմեական հեծելազորին և հետևակին հարվածելով՝ խուճապ առաջացնել ու փախուստի մատնել նրանց: Այդ պահին թեթև հետևակը իր նիզակակիրների և վահանակիրների պաշտպանության տակ պետք է նետահարեր շարքերը խախտած լեգեոներներին:

Տրիարիոսի հռոմեացիներն արդեն շփվել և հասցրել էին վախենալ փոքրհայքյան ծանր հեծելազորից՝ առաջին, երկրորդ և, հատկապես, երրորդ պոնտական պատերազմները դրա վառ ապացույցն էին [95, 134, 173, 310]: Հռոմեացիները սակայն, չէին տեսել պոնտականից անհամեմատ ավելի ահագնու՝ աշխարհի լավագույն ծանր հեծելազորի՝ հայկական կատաֆրակտոսների ճակատային գրոհը:

Երկար ժամանակ ես մտածում էի, որ Միհրդատը այնքան էլ սրտացավորեն չէր վերաբերում իրեն չպատկանող Տիգրանի կատաֆրակտոսներին, այդ պատճառով էլ նա հրամայեց նրանց անցկացնել այս հանդուգն գրոհը: Միայն վերջերս, Զելայի ճակատամարտի ընթացքի մոտ մեկ տասնյակ հնարավոր տարբերակները վերլուծելուց հետո, հասկացա, որ մեծ պոնտացին հաղթելու այլընտրանք չուներ՝ իր ընտրած հարվածի տեղը և, ինչը պակաս կարևոր չէ՝ պահը, նա ընտրել էր անթերի: Հարվածը պետք է կատարվեր այնպես, որ հռոմեացիները նահանջեին, իսկ հետո նաև փախչեին հենց Միհրդատի ընտրած ուղղությամբ, որպեսզի ընկնեին բնության՝ գետի ու ճահճի, ապա նաև հայ ու պոնտացի զինվորների ստեղծված ծուղակը: Միհրդատը պատրաստվում էր մեկ շեշտակի գրոհով մահացու հարված հասցնել թշնամուն:

Ճակատամարտի սկզբում Միհրդատը մի փոքր հապաղում էր: Կատաֆրակտոսների գրոհը ճիշտ ուղղությամբ ուղղորդելու համար, շատ կարևոր էր տեսնել հակառակորդի զորքերի դասավորությունը և կռահել մտադրությունը, որը ըմբռնելուց հետո միայն նա կկարողանար իր անցկացնելիք գրոհի ուղղությունը որոշել:

7.3.3.Զելայի ճակատամարտի ընթացքը

Մ.թ.ա. 67 թ. գարնան կեսերին Պոնտոսում, Իրիս գետի ափին գտնվող Գազիուրա քաղաքից ոչ հեռու, Իրիսի վտակ հանդիսացող ինձ անհայտ անունով գետի ափին, Զելա անունով փոքրիկ քաղաքի մոտակայքում գտնվող դաշտում, որի մի եզրում ճահճոտ մի ջրանցք կար, և միմյանց հանդիպող գետերը միանում էին հյուսիսում (հռոմեական բանակի թիկունքում), տեղի ունեցավ 69 – 67 թթ. հայ-հռոմեական պատերազմի չորրորդ և վերջին՝ Զելայի գլխավոր ճակատամարտը:

Ճակատամարտին նախորդող գիշերը հռոմեացիները հարձակվեցին Միհրդատի պահակազորի վրա, սակայն հայերն ու պոնտացիները աչալուրջ էին՝ հռոմեացիները զգալի կորուստներով ետ մղվեցին:

Առավոտյան, ինչպես նշվեց՝ իր զինվորների դրդմամբ, Տրիարիոսը դաշտ հանեց իր բանակը և դասավորվեց հայ-պոնտական զորքերի դեմ:

Ճակատամարտի ընթացքը նպատակահարմար է բաժանել կողմերի նախնական դիրքի և բուն ճակատամարտի չորս փուլերի.

0. կողմերի դասավորությունը ճակատամարտից առաջ (գծանկար 7.2.).
1. Ճակատամարտի «հանդարտ» սկիզբը և Միհրդատի մեծհայքյան թեթև հետևակի զորաշարժը (գծանկար 7.3.),
2. հայ կատաֆրակտոսների գնդերի գրոհը հռոմեական լեգեոնների վրա և նրանց ձախ թևի ջախջախումը (գծանկար 7.4.),
3. հայկական հեծելազորի թիկունքային հարվածը հռոմեական հետևակին և հեծելազորին (գծանկար 7.5.),
4. հռոմեական բանակի կազմալուծումը, խուճապահար փախուստը և ճամբարի կորուստը (գծանկար 7.6.):

7.3.3.1.Կողմերի դասավորությունը ճակատամարտից առաջ (գծանկար 7.2.)

Փորձենք վերականգնել հռոմեական բանակի դասավորության ճակատային երկարությունը և խորությունը:

Ա. Հռոմեական բանակ.

Տրիարիոսը հռոմեական բանակը դասավորեց հռոմեացիների մոտ ընդունված ձևով՝ հռոմեական լեգեոնները՝ կենտրոնում, դաշնակիցների կոհորտները կամ փաղանգը՝ թևերին, որոնց թևերից պաշտպանում էր հեծելազորը: Հակառակորդի մեծաքանակ, այդ թվում ծանր հեծելազորի առկայությունը Տրիարիոսին ստիպել էր իր լեգեոնները դասավորել երկու գծով, յուրաքանչյուրում՝ երկուական լեգեոն:

Կենտրոնում, առաջին գծում, ձախից կանգնած էր Սոռնատիոսի լեգեոնը՝ մոտ 4.000 լեգեոներ, ապա Տրիարիոսինը՝ ևս մոտ 4.000 լեգեոներ, որոնց ետնից, որոշ հեռավորությամբ Փաբիոսի լեգեոնն էր՝ 2.000 լեգեոներ և Բյութանիայից բերված լեգեոնը՝ ոչ պակաս, քան 4.000 լեգեոներ (բոլոր լեգեոններից 500-ական լեգեոներ՝ 50 հոգի ամեն կոհորտից պետք է թողնված լիներ ճամբարում): Նրանց ձախ թևերը պաշտպանված էին դաշնակցային կոհորտներով, որոնք կազմել էին երկու փաղանգ՝ ամեն գծում մեկական: Լեգեոնների աջ թևին նույնպես կանգնած էին փաղանգ կազմած դաշնակցային կոհորտները: Ծանր հետևակի երկու թևերին կանգնած էին 2.000-ական հեծյալ: Թեթևազեներից 1.000-ական մարտիկ տեղավորված էին առաջին գծի փաղանգների ետևում, թևերի մոտ՝ այդպիսով Տրիարիոսը ավելի հուսալի էր դարձնում իր թևերի պաշտպանվածությունը: Մնացած թեթևազենները շարված էին առաջին մարտական գծի առջև և անհրաժեշտության դեպքում զորաստյուների միջև եղած արանքներով կարող էին անցնել առաջին գծի ետևը:

Ամենայն հավանականությամբ ձախ թևը ղեկավարում էր Սոռնատիոսը (մինչ այդ Տրիարիոսը պաշտոնազրկել էր Փաբիոսին), կենտրոնն ու աջ թևը՝ Տրիարիոսը. բանակի ընդհանուր ղեկավարությունը նույնպես իրականացնում էր Տրիարիոսը:

Իմանալով հռոմեական լեգեոնի կառուցվածքը և մարտավարությունը, փորձենք պատկերացնել հռոմեական բանակի տարածական չափերը՝ երկարությունը և խորությունը:

Առաջին գծի լեգեոնները և դաշնակիցների ծանր հետևակը հայոց հեծելազորին դիմակայելու համար պետք է կանգնեին փաղանգով. կոհորտի դասավորությունը պետք է լիներ առավելագույնը՝ 10 շարքերով: Եթե կոհորտներում կար միջինում 400 լեգեոներ, ապա մեկ կոհորտի մարտաշարի ճակատային երկարությունը կազմում էր 40, իսկ խորությունը՝ մոտ 12-15 մ: Եթե լեգեոնի առաջին գծում հաշվենք 7 կոհորտ, ապա լեգեոնի ճակատային մարտագիծը կկազմի 280 մ: Կոհորտների միջև արանքները պետք է հասցվեին նվազագույնի, համենայն դեպս շարժման հարմարության համար նրանց մեջ անհրաժեշտ էր պահպանել 2,5-3 մ տարածք. այս դեպքում լեգեոնի մարտաշարքի երկարությունը ստանում ենք մոտ 300 մ: Լեգեոնների երկրորդ գծում կանգնած 3 կոհորտը գտնվում էին մարտական դասավորության մեջտեղում և եզրերին (տես գծանկար 7.2.) [...], պակաս հնարավոր է, որ նրանք հավասարապես բաշխվեին առաջին շարքի կոհորտների ետևում, լեգեոնի խորությունը հավասարապես հասցնելով 14-15 լեգեոներների (վերջին դեպքում լեգեոնը միանգամից կկորցներ իր երկու սկզբունքային առավելությունները փաղանգի համեմատ՝ անհամեմատ ավելի մեծ շարժունակությունը և լեգեոնային ռեզերվի՝ երկրորդ գծի առկայությունը):

Փաբիոսի լեգեոնը, որ այդքան կորուստներ էր կրել և Զելայի ճակատամարտում մոտ 2.000 լեգեոներներից էր բաղկացած, գտնվում էր Տրիարիոսի բանակի դասավորման երկրորդ գծում, զբաղեցնելով նույն ճակատային գիծը, սակայն կոհորտներն ունեին նվազագույն՝ 5 շարք խորություն:

Երկրորդ գծի լեգեոնները և դաշնակիցների փաղանգները առաջին գծից գտնվում էին 50-100 մ հեռավորության վրա:

Դաշնակիցների փաղանգներն ունեին իրար մոտ կանգնած երկու գիծ, ընդհանուր՝ 18-20 շարք խորությունով, և զբաղեցնում էին 200-220 մ երկարությամբ և 25-30 խորությամբ տարածք:

Այսպիսով, Տրիարիոսի բանակի ծանր հետևակի մարտական գիծը կազմում էր մոտ 1.100-1.200 մ երկարություն և 100 մ խորություն:

Հաշվի առնելով հեծելազորի դասավորության հնարավոր տարբերակները, թևերին հեծելազորի զբաղեցրած տարածության մասին կարող ենք խոսել խիստ մոտավոր: Հաշվի առնելով, որ 2.000 հեծելազորը մոտ 8 ալա էր, կարող ենք ենթադրել, որ նրանք կանգնած էին երկու շարքով՝ 4-ական ալա յուրաքանչյուրում: Ալայի 10 տուրմաները կանգնած էին կողք կողքի՝ հնգական ձիավոր հինգ շարքով, այդ դեպքում տուրման զբաղեցնում էր մոտ 10 x 20 մ տարածություն, համապատաս-

խանաբար ալան՝ 100 x 20 մ, 4 ալան՝ 400 մ և, եթե հեծելազորը շարված էր երկու ալա խորությամբ, նրանց առաջին և երկրորդ գծի միջև տարածությունը պետք է գոնե հավասար լիներ ալայի խորությանը: Այդ դեպքում յուրաքանչյուր թևի հեծելազորը կզբաղեցներ 400 x 60 մ տարածություն:

Հռոմեական բանակն ամբողջովին կունենար մոտ 2.000 մ ճակատ և 60-ից 100 մ խորություն:

Բ. Հայ-պոնտական բանակ.

Միհրդատն աջ թևում կանգնեցրեց Մեծ Հայքի դաշնակից զորքերը՝ Սոռնատիոսի լեգեոնի դեմ 2.000 աղեղնավոր, որոնցից մոտ 50-70 մ հեռավորության վրա 5-6 շարք՝ 1.000 թեթև հեծյալներ. Այս հեծելազորից զգալիորեն ետ՝ մոտ 100-150 մ կանգնած էին մեծհայքյան կատաֆրակտոսների 3 և փոքրհայքյան 1 գունդ, միասին՝ 4.000 հեծյալ: Չորս կատաֆրակտոսների գնդերից երկուսը կանգնած էին առջևում, ետևից մեկ մեծհայքյան և մեկ փոքրհայքյան գնդեր: Ամեն գունդը 50 ձիավորից կազմված 20 շարք էր և զբաղեցնում էր 100 x 80 մ տարածություն, և 4 գունդը, հաշվի առնելով գնդերի մեջ անհրաժեշտ 20-40 մ տարածությունը՝ 220 x 200 մ: Կատաֆրակտոսների այս դրագոնայի, կամ նրա իրական քանակի և հզորության մասին հռոմեացիները լավ պատկերացում չունեին, որովհետև նետաձիգների և թեթև հեծելազորի շարքերը քողարկում էին նրանց: Այստեղ կուտակված հզոր ուժից եկող վտանգը հռոմեացիները չէին ըմբռնում, ինչի համար նրանք պետք է շատ թանկ վճարեին:

Սոռնատիոսի ձախ թևի փաղանգի դեմ կանգնած էին 1.000 նիզակակիր և 1.000 թեթև հետևակ:

Հռոմեական ձախ թևի հեծելազորի դեմ կանգնած էին 2.000 թեթև հեծելազոր, ուժեղացված երկրորդ գծում՝ մոտ 100 մ հեռավորության վրա գտնվող ևս 1.000 փոքրհայքյան թեթև հեծելազորով: Այս հեծելազորի շարքերի մի մասը նիզակակիրների ետևից էր և երևում էին հռոմեացիների կողմից:

Այսպիսով, իր աջ թևում գտնվող Մեծ Հայքի զորքերը 2.000 փոքրհայքյան հեծելազորով ուժեղացնելով, Միհրդատը ստեղծեց հզոր հեծելազորային հարվածային խմբավորում: Եթե նա փոքրհայքյան հեծելազորի տեղը կցեր պոնտացիներին, ապա լեզվական առումով շփումը կդժվարանար Տիգրանի ուղարկած զորաբանակի հետ:

Միհրդատը նախատեսում էր անձամբ մասնակցել հայկական կատաֆրակտոսների գնդերի գրոհին, ղեկավարելով փոքրհայքյան ծանրազեն հեծելազնդի գրոհը:

Միհրդատի բանակի կենտրոնը կազմված էր պոնտացիներից, ազատագրված ստրուկներից և հունա-պոնտական և վտարանդի հռոմեական սպաներից կազմված պոնտական նորաստեղծ լեգեոնը:

Ձախ թևում շարված էին 3.000 փոքրհայքյան նիզակակիրները և 3-4.000 վարձկան թրակիացիները: Վերջիններս, ավելի փորձառու լինելով, ապահովում էին մարտական դասավորության ընդհանուր կայունությունը: Պոնտական լեգեոնի և հայ-թրակիական նիզակակիրների առջևում կանգնած էին 4.000 փոքրհայքյան և պոնտացի թեթևազեներ:

Ձախ թևի հետևակը պաշտպանում էր մեկ գնդից բաղկացած պոնտական ծանր և նույնքան էլ՝ թեթև հեծելազորը, միասին երկու գունդ՝ 2.000 հեծյալ:

Այսպիսով, հայ-պոնտական բանակի ճակատը ևս կազմում էր մոտ 2.000 մ, սակայն աջ թևի խորությունը կազմում էր մոտ 400-450 մ:

Իր հեծելազորի ճնշող մեծամասնությունը՝ 8.000-ը, որից 4.000-ը զրահակիր էր, Միհրդատը կենտրոնացրել էր հռոմեական ձախ թևի դեմ, որովհետև այստեղ էր նախատեսում հասցնել գլխավոր հարվածը: Եթե այդ հարվածը Միհրդատին իրականացնել չհաջողվեր, ապա նրա ձախ թևը հռոմեական վճռական գրոհին կարող էր չդիմանալ:

Միհրդատը, որը և՛ հետևակային, և՛ հեծելազորային փորձված զորավար էր, չնայած 65 տարեկան էր, որպես կանոն, անձամբ էր առաջնորդում զորքը և թեժ ձեռնամարտի բռնվում: Ձելայի ճակատամարտը բացառություն չէր:



Գծանկար 7.2. Կողմերի նախնական դասավորությունը Զելայի ճակատամարտից առաջ

7.3.3.2. . Ճակատամարտի «հանդարտ» սկիզբը և Միհրդատի հայկական թեթև հետևակի զորաշարժը (գծանկար 7.3.)

Ըստ Ապպիանոսի, գիշերը հռոմեացիները գրոհել էին Միհրդատի բանակի վրա, սակայն պոնտացիների պարեկային ծառայությունը աչալուրջ էր և պոնտական բանակը, մարտի բռնվելով հռոմեացիների դեմ, ետ էր շպրտել նրանց [...]: Առավոտյան սկսված ճակատամարտը այդ գիշերային հարձակման շարունակությունն էր:

Առավոտյան հռոմեական բանակը շարվեց, սակայն ճակատամարտը անմիջապես չսկսեց՝ Տրիարիոսը փորձում էր հասկանալ իր ձախ թևին սպառնացող վտանգի չափը:

Վերջապես հռոմեական թեթև հետևակը առաջ անցավ և գրոհեց Միհրդատի թեթև հետևակին՝ ճակատամարտը սկսվեց: Հռոմեական ծանր հետևակը չէր շտապում առաջ շարժվել՝ Տրիարիոսը լավ գիտեր, որ հակառակորդի ծանր հետևակին պետք է գրոհել, որպեսզի չմարի սեփական թափը, իսկ նրա մեծաթիվ հեծելազորին պետք դիմավորել կանգնած՝ լավ դիրքավորված, որովհետև գրոհի ժամանակ անխուսափելիորեն խախտվում է լեգեոնի և փաղանգի դասավորությունը:

Ճակատամարտի առաջին փուլում թևերին գտնվող հայ-պոնտական հեծելագնդերը մարտի են բռնվում հռոմեական հեծելազորի հետ և մարտը գնալով թեժանում է:

Անշտապ մարտի մեջ է մտնում հակամարտող կողմերի ծանր և միջին հետևակը:

Սոռնատիոսի լեգեոնի դեմ հայերը կենտրոնացրել էին նետաձիգների գերակշռող ուժեր: Այստեղ էին գտնվում հայ աղեղնավորների լավագույն երկու գնդերը, որոնց վրայից հեռահար հռոմեական թեթև և ծանր հետևակին նետահարում էին հեծյալ նետաձիգները: Այսպիսով, 3.000 նետաձիգ նետերի տարափ էին տեղում, գլխավորապես հռոմեացի նետաձիգների, պարսավորների և տեգակիրների վրա: Կենտրոնացված և նպատակասլաց ոչնչացվում էին հակառակորդի կողմից հեռահար մարտ վարելու բոլոր միջոցներ ունեցողները:

Այստեղ մենք տեսնում ենք կատաֆրակտոսների գրոհը նախապատրաստող հստակ գործողությունների շարք (ալգորիթմ).

-նետաձիգների (կարող էին լինել նաև պարսավորներ՝ այս երկու զորատեսակներն ավելի շատ փոխլրացնում, քան մրցակցում էին իրար հետ) վաշտերը (գնդերը) զբաղեցնում էին առաջին մարտագիծը, որտեղից սկսում էին հեռահար մարտը հակառակորդի թեթևազեների, հնարավորության դեպքում նաև վահանակիրների դեմ. միաժամանակ զննելով կատաֆրակտոսների երթուղում գտնվող խոչընդոտները՝ հավաքելով հռոմեացիների մոտ հաճախ օգտագործվող հակահեծելազորային երկաթյա փշերը,

-թեթև հեծելազորը խիտ շարքերով կանգնում էր նետաձիգների ետևում և իր նետաձգությամբ զգալիորեն ուժեղացնում էր հետևակային աղեղնավորների նետաձգության հզորությունը. գտնվելով ավելի բարձր՝ ձիու վրա, նրանք հնարավորություն ունեին նետահարել թշնամուն հետևակի գլուխների վրայով,

-նետաձիգները և թեթև հեծելազորայինները վազելով կողմ էին քաշվում այն ժամանակ, երբ կատաֆրակտոսների դրագոնան կամ գնդերը արդեն բավարար թափ էին հավաքել,

-նետահարումը չպետք է ընդհատվեր (միայն կթուլանար), նույնիսկ կատաֆրակտոսների ճանապարհը ազատելու պահին որովհետև կատաֆրակտոսների գրոհը անհամեմատ ավելի արդյունավետ էր, երբ նրանք մինչև հակառակորդի շարքերը հասնելը հեռահար զենքից կորուստ չէին ունենում՝ ընկած կատաֆրակտոսը՝ առավել ևս ձին, կարող էին խախտել շարքերը և դրանով դանդաղեցնել կատաֆրակտոսների դրագոնայի թափը,

-հասկանալի է, թե ինչ նշանակություն ուներ կատաֆրակտոսների և նրանց ձիուցների պաշտպանական սպառազինության կատարելությունը՝ մինչև հակառակորդի մեջ մխրճվելը կորուստներն «անթույլատրելի» էին:

Ձելայի ճակատամարտի նկարագրությունը մեզ համար խիստ կարևոր է կատաֆրակտոսների և այլ զորատեսակների փոխհամաձայնեցված գործողությունները՝ մարտավարությունը պատկերացնելու համար:

Հռոմեացիների համար անսպասելի, Միհրդատի աջ թևում Սոռնատիոսի լեգեոնի դիմաց կռվող հայ նետաձիգներն արագ ազատում են տարածքը, ետ և կողմ քաշվելով առաջին գծից: Հռոմեացիները պատրաստվում են վահանափակով դիմավորել նետաձիգների ետևում երևացող թեթև հեծելազորը, սակայն

վերջինս էլ սրնթաց ցրվում է աջ ու ձախ, իր ետևից ընթացող կատաֆրակտոսների գրոհի համար բացելով անհրաժեշտ տարածություն: Միհրդատը, իր թիկնապահներով, միանում է կատաֆրակտոսների փոքրիայրյան գնդին:

Կատաֆրակտոսների 4 գնդի բաժանված 4.000-ոց զանգվածը փոքր արանքներով, մոտավորապես 200 – 250 մ հեռավորությունից թափ հավաքելով, արդեն Սոռնատիոսի լեգեոնների մարտակարգի մոտ ձեռք է բերում իր առավելագույն արագությունը ...

Դրանով ճակատամարտի առաջին փուլն ավարտվում է:



Գծանկար 7.3. Զելայի ճակատամարտ. առաջին փուլ՝ ճակատամարտի «հանդարտ» սկիզբը և Միհրդատի մեծհայրյան թեթև հետևակի զորաշարժը:

7.3.3.3. Հայ կատաֆրակտոսների գնդերի գրոհը հռոմեական լեգեոնների վրա և նրանց ձախ թևի ջախջախումը (գծանկար 7.4. և 7.5.)

4.000 կատաֆրակտոս, անշտապ արագություն հավաքելով, սլանում են դեպի Սոռնատիոսի լեգեոնը: Նրանք վստահ շարժվում են առաջ՝ հայ աղեղնավորները և թեթև հեծյալները լավ հետախուզել են գրոհի տարածքը և այնտեղ գրոհի համար բնական կամ արհեստական արգելք չկա:

Մինչ հռոմեացի լեգեոներների շարքերը մոտ 200 մ է՝ այն անհրաժեշտ տարածությունը, որի վերջում պողպատի մեջ զրահավորված հայ հեծյալների հոծ շարքերն առավելագույն արագությամբ հարվածում են թշնամուն:

Հռոմեական բանակի թեթևազենների մեծ մասն առաջին գծի ետևն են փախչում, որտեղից փորձում են խոցել կատաֆրակտոսներին, սակայն նրանց դա գրեթե չի հաջողվում հեծյալների ու ձիերի զրահները համարյա անխոցելի են:

Կատաֆրակտոսների դրագոնայի Սոռնատիոսի լեգեոնին հասցված հարվածի ուժը վիթխարի էր. մարդու ֆիզիկական կարողությունները խիստ անբավարար են այսպիսի հարվածին դիմանալու համար: Հռոմեացիների մարտական գիծը մի ակնթարթում ճզմվում է. ևս մի պահ և կատաֆրակտոսների զորասյան գլուխը դուրս է պրծնում լեգեոնի մարտաշարի ետևի կողմից և անհամեմատ ավելի դանդաղ, բայց դեռ բավարար արագությամբ անշեղորեն սլանում արդեն Փաբիոսի լեգեոներների վրա: Վերջիններս, իրենց աչքով տեսածից սարսափած, սպասվող դիմային հարվածին ավելի լավ դիմանալու համար, խուճապահար փորձում են միմյանց մոտեցնել լեգեոնի կոհորտների շարքերը, սակայն մինչև վերջ անել դա ոչ ոք չի հասցնում: Կատաֆրակտոսների հսկայական զանգվածը հարվածում է նաև Փաբիոսի լեգեոներներին, որոնց շարքերը առաջին լեգեոնի խորությունը չունեին, սակայն հայ կատաֆրակտոսներն էլ արդեն նախկին թափի միայն մեկ երրորդը կամ քառորդն ունեին:

Թեժ մարտ է սկսվում, սակայն որոշ ժամանակ անց Փաբիոսի 2.000 լեգեոները այլևս չեն կարողանում դիմակայել 4.000-ոց հայ կատաֆրակտոսների զանգվածին, որոնց ետևից արդեն

սլանում են թեթևազեն հեծյալները: Կատաֆրակտոսները ճեղքում են նաև երկրորդ լեգեոնի մարտական գծերը և սլանում դեպի հռոմեական բանակի թիկունքը:

Հռոմեական բանակի զինվորները սարսափում են ...

Արդի ռազմական պատմաբանները արդարացիորեն նշում են, որ անտիկ դարաշրջանի փորձառու հոպլիտներից կազմված փաղանգների շարքը ճեղքելու շանս ծանրազեն հեծելազորը գրեթե չուներ: Կատարելագործված թամբերի ու ասպանդակների բացակայությունը խիստ թուլացնում էր հեծյալի հարվածի ուժը, դժվարացնում հետագա ձեռնամարտը: Սակայն դա չի նշանակում, որ բոլոր նման ճակատային հարվածները դատապարտված էին անհաջողության: Միհրդատ Եվպատորը ճակատամարտը սկսեց զգուշավոր, ժամանակ շահեց և դասավորեց իր կատաֆրակտոսների գնդերը միայն այն ժամանակ, երբ բացահայտվեց հռոմեական զորադասավորումը: Դա թույլ տվեց նրան ընտրել հռոմեական դասավորության ամենախոցելի տեղը:

Սոռնատիոսի լեգեոնը անսպասելի հարվածին չդիմացավ, իսկ հայերի ու պոնտացիների դեմ կատաղի մարտերում բազմիցս պարտված Ֆաբիոսի լեգեոնը Սոռնատիոսի լեգեոնին թույլ թիկունք էր:



Գծանկար 7.4. Զելայի ճակատամարտ. երկրորդ փուլ՝ հայ կատաֆրակտոսների գնդերի գրոհը հռոմեական լեգեոնների վրա:



Գծանկար 7.5. Զելայի ճակատամարտ. երկրորդ փուլ՝ հայ կատաֆրակտոսների գնդերի գրոհը հռոմեական լեգեոնների վրա և նրանց ձախ թևի ջախջախումը:

7.3.3.4. Հայկական հեծելազորի թիկունքային հարվածը հռոմեական հետևակին և հեծելազորին (գծանկար 7.6.)

Կատաֆրակտոսների ստեղծած ճեղքվածքի մեջ մխրճվում են հայ թեթևազեն հեծյալները և հետևակը: Նրանց 3.000-ոց զանգվածն ընթանում է անմիջապես կատաֆրակտոսների ետևից և թույլ չի տալիս, որ հռոմեական հետևակի մնացորդները հարվածից ուշքի գան:

Միաժամանակ Միհրդատի աջ թևի հայկական հեծելազորը, որը թվաքանակով մեկ ու կես անգամ (ամենայն հավանականությամբ նաև որակապես) գերազանցում էր հռոմեականին, վերջինիս ընկճում է և փախուստի մատնում:

Սոռնատիոսի, Փաբիոսի լեգեոնները և նրանց կցված դաշնակիցների կոհորտները հայտնվում են հայկական հեծելազորի և նիզակակիրների, աղեղնավորների ու պարսավորների ներգացող օղակում: Հեծյալներից փրկվելու համար, նրանք նահանջում կամ փախչում են մոտակայքում գտնվող ճահճոտ ջրանցքը, որտեղ նրանց չի կարող հասնել հեծելազորը: Սակայն, հռոմեացիների մեծ մասին այստեղ փրկվել նույնպես չի հաջողվում՝ ճահճուտի եզրով մեկ նրանք շրջապատվում են մեծհայրյան թեթև հետևակով ու նիզակակիրներով և ոչնչացվում հեռահար միջոցներով՝ նետերով, տեգերով, քարերով:

Միհրդատի ձախ թևի հեծելազորն այդ ընթացքում, փոփոխական հաջողությամբ ծանր մարտ էր վարում հռոմեական հեծելազորի և նրանց օգնության հասած հռոմեական թեթև հետևակի մի քանի կոհորտի դեմ: Միհրդատի ձախ թևում մարտն ընթանում է հռոմեացիների առավելությամբ, և դրությունը շտկելու համար նա հայ կատաֆրակտոսների հաղթական գնդերը թիկունքից ուղղում է դեպի հռոմեական աջ թևի հեծելազորի և Բիթանիայից եկած լեգեոնի թիկունքը: Հարվածն այնքան ուժեղ պետք է լիներ, որ հռոմեական բանակն այլևս կազմակերպված դիմադրություն ցույց տալ չի կարողանում: Տրիարիոսի բանակը կազմալուծվում է և խուճապահար դիմում փախուստի:



Գծանկար 7.6. Զելայի ճակատամարտ. երրորդ փուլ՝ հայկական հեծելազորի թիկունքային հարվածը հռոմեական հետևակին և հեծելազորին:

7.3.3.5. Հռոմեական բանակի կազմալուծումը, խուճապահար փախուստը և ճամբարի կորուստը (գծանկար 7.7.)

Ճակատամարտի դաշտը երիզող գետերը հռոմեացիների թիկունքում միանում են իրար: Փախուստի դիմած հռոմեացիները դրա մասին չգիտեին, և փախչելով կրկին ընկնում են ծուղակի մեջ: Հռոմեացիներին լիակատար բնաջնջումից փրկեց պատահարը:

Ըստ արևելյան սովորության, ծանրազեն հեծյալի կողքից վազում էր նրա ստրուկը, որի պարտականությունն էր տիրոջն անհրաժեշտության դեպքում օգնել: Այդպիսի մի ստրուկ վազում էր նաև պոնտական թագավորի կողքից: Այդ ստրուկը նախկին մարտերի ժամանակ գերի ընկած հռոմեացի հարյուրապետ (կենտուրիոն) էր: Տեսնելով իր նախկին ընկերների փախուստը և մահը, նա զայրանում է և սրով հարվածում արքայի զրահով չպաշտպանված ազդրին: Միհրդատի թիկնապահներն անմիջապես սպանում են ստրուկին և ձիուց ընկած Միհրդատին տանում թիկունք: Միհրդատի զորավարները կանգնեցնում են հետապնդումը և ետ քաշվելով, վերախմբավորում զորքը: Գրոհի հանկարծակի և անիմաստ ընդհատումը տագնապ է առաջացնում պոնտացի զինվորների մոտ: Իմանալով, որ արքան վիրավորված է, նրանք շրջապատում են նրա վրանը և պահանջում, որ իրենց ցույց տան արքային: Բժիշկ Թիմոփեյոսը կանգնեցնում է արյունը և Միհրդատին ցույց են տալիս պոնտացի զինվորներին: Տեսնելով, որ զորքը չի հետապնդում թշնամուն, Միհրդատը զայրանում է և պահանջում է իրեն ձի նստեցնել, որպեսզի զինվորներին առաջնորդի հռոմեական ճամբարի վրա: Սակայն դրա կարիքը չի լինում, որովհետև հռոմեացիները, լքելով ճամբարը, դիմում են փախուստի: Սոռնատիոսի և Փաբիոսի լեգեոնները բնաջնջվում են: Ճամբարում գտնվող հռոմեացիները խուճապահար փախչում են:

Միհրդատը ցնծում է՝ ճակատամարտն ավարտվում է հայ-պոնտական զորքերի փայլուն հաղթանակով:



Գծանկար 7.7. Զելայի ճակատամարտ. չորրորդ փուլ՝ հռոմեական բանակի կազմալուծումը, խուճապահար փախուստը և ճամբարի կորուստը:

7.3.4.Զելայի ճակատամարտի նշանակությունը և կողմերի կորուստները

Հռոմեացիների կորուստների վերլուծությունը շատ ուշագրավ է: Կենտուրիոնների և տրիբունների հսկայական կորուստը զարմացրել է դեռ անտիկ հեղինակներին: Փորձենք բացատրել այս անհավանական թվացող հարաբերությունը՝ ավելի, քան 7.000 զինվոր, 150 հարյուրապետ և 24 հազարապետ՝ մոտ 7.200 սպանված [42, 59]:

Այսպիսի զոհեր հռոմեական հրամանատարական կազմում կարող էր լինել միայն այն դեպքում, երբ գրեթե ամբողջովին ճակատամարտում ոչնչացած լինեին 2 հռոմեական լեգեոն, իսկ մնացած 2-ը ծանր կորուստներ կրած լինեին: Այդ դեպքում երկու լեգեոնի հրամանատարական կազմը՝ 120 կենտուրիոն և մոտավորապես 20 տրիբուն կզոհվեին (լեգեոնում սովորաբար վեց հազարապետ՝ տրիբուն էր լինում, սակայն երբեմն նրանց թիվը հասնում էր տասի. մենք հարկադրված վերցնում ենք վերջին թիվը, որովհետև անհնար է, որ բոլոր ռազմական տրիբունները ճակատամարտում զոհվեին): Մնացած 2 լեգեոնների զոհված հրամանատարական կազմը՝ 30 կենտուրիոն և 4 տրիբուն, հուշում է, որ այս լեգեոնները կորցրել են իրենց կազմի 20% (իրապես՝ 120 կենտուրիոններից զոհվել էր 30-ը՝ 25%, 20 տրիբուններից՝ 4, կամ՝ 20%: Կենտուրիոնների ավելի շատ կորուստը կարող էր կապված լինել լեգեոներներին փախուստից ետ պահելու նրանց փորձի հետ): Ոչնչացված 2 լեգեոնի 6.000 լեգեոներներից զոհվել էր մոտ 5.500-ը, կենդանի էր մնացել մոտ 500-ը, որոնց մեծագույն մասին գերի էին վերցրել (կենտուրիոնները և տրիբունները ավելի համառ են պայքարել և բոլորն էլ սպանվել են): Մնացած 2 լեգեոնի 8.000 լեգեոներները տվել են մոտ 1.600 սպանված և ինչ-որ քանակով, հաշվենք՝ մոտ 500 հոգի՝ գերի, և փախել են մարտի դաշտից: Այսպիսով, Զելայի ճակատամարտում գլխովին ոչնչացվել են Սոռնատիոսի ու Փարիոսի լեգեոնները և, հաշվի առնելով հետագայում զինվորների հատուկ ատելությունը Տրիարիոսի հանդեպ, որին Լուկուլլոսը հետագայում հարկադրված էր նույնիսկ թաքցնել զինվորների հաշվեհարդարից, հսկայական կորուստներ է կրել նաև Տրիարիոսի լեգեոնը: Բիթանիայից եկած մյուս լեգեոնը ևս ունեցել է ծանրագույն կորուստներ, սակայն, ինչպես և Տրիարիոսի լեգեո-

նը, պահպանել է իր կառուցվածքը և, որոշ չափով հետագայում վերականգնել է իր մարտունակությունը:

Այսպիսով, Տրիարիոսի բանակի 4 լեգեոնի 16.000 լեգեոներներից Զելայի ճակատամարտից հետո մնացել է մոտ 7.000 լեգեոներ՝ Բիթանիայից եկած ու Տրիարիոսի երկու լեգեոններում միասին, և մոտ 1.000 լեգեոներ (սրանք հռոմեական ճամբարից փախած՝ փրկված Սոռնատիոսի ու Փաբիոսի լեգեոնների լեգեոներներն էին)՝ երկու ոչնչացած լեգեոններից: Մնացած 7.200-ը զոհվել էին և մոտավորապես 1.000-ն էլ գերի էր վերցվել:

Տրիարիոսի բանակի ընդհանուր կորուստները հաշվելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ կորուստներ է ունեցել բուն հռոմեական (ըստ երևույթին՝ իտալիկներ) թեթև հետևակն ու հեծելազորը, որին գումարել նաև դաշնակիցների կորուստները: Ճակատամարտի ընթացքն այնպիսին էր, որ դեպի ճահիճ ետ շպրտված 2 հռոմեական լեգեոնը զոհվեցին գրեթե ամբողջովին, իսկ մնացած զորքերը ծանր պարտություն կրեցին: Գիտենք, որ Միհրդատի վիրավորվելու պատճառով պոնտացիները և հայերը ժամանակից շուտ էին դադարեցրել հռոմեացիների և նրանց դաշնակիցների հետապնդումը, ինչը նշանակում է, որ հետապնդման ժամանակ սպանվածների և գերիների թիվը այնքան էլ մեծ չպետք է լիներ: Բուն հռոմեական թեթև հետևակը և հեծելազորը միասին մոտ 3.000 զինվոր էին, որոնց ընդհանուր կորուստը դժվար թե գերազանցեր 500 սպանվածը, իսկ արագաշարժությունը ենթադրել է տալիս, որ գերիներով կորուստ նրանք գրեթե չեն ունեցել: Այս կորուստները տվել էին հիմնականում իտալիկները, և անտիկ հեղինակները սրա մասին չեն էլ հիշում [42, 51, 59]: Այսպիսով, ճակատամարտին մասնակցած մոտ 19.000 բուն հռոմեացի զինվորներից զոհվել և գերի էր ընկել կեսը՝ 9.500 հոգի, մյուս կեսը փրկվել էր:

Այժմ դաշնակիցները: 4 լեգեոններին կից Տրիարիոսը ուներ մոտ 18-20.000 դաշնակցային ծանր հետևակ, հիմնականում բիթանիացիներ, մի մասն էլ՝ գալատներ: Ելնելով հռոմեական սկզբունքից՝ դաշնակիցների մոտ հավաքել հռոմեացիների թեթև հետևակի և հեծելազորի եռապատիկը, կարելի է ենթադրել ոչ պակաս, քան 4-6.000 թեթև հետևակ և 2-3.000 հեծելազոր: Անտիկ պատմիչները բազմիցս նշել են, որ Տրիարիոսը ձգտել է հավաքել հնարավորինս մեծ բանակ: Գումարելով այս թվին ևս

մոտ 2.000 դաշնակցային օժանդակ ու գումակային զորք, կստանանք 26-31.000 դաշնակցային զինվոր: Ստացված թվի եվազգույնը գումարելով բուն հռոմեացիների թվին կստանանք 45.000-ոց (չբացառելով և 50.000-ի հնարավորությունը) հզոր բանակ, որից մոտ 40.000-ը անմիջապես մասնակցել է ճակատամարտին: Լուկուլլոսի բանակին գումարած և նրա հմուտ հրամանատարության տակ գտնվելու դեպքում, այս հզոր ուժն ընդունակ էր ևս մեկ անգամ հարցականի տակ դնելու հայոց պետության գոյությունը: (Այս բանակը, ըստ Դիոն Կասսիոսի, պետք է գնար Լուկուլլոսի մոտ, և դրա փոխարեն հարկադրված էր ծանր պայքար վարելու Պոնտոսում: Կոմանայի ճակատամարտից հետո, զգալով Միհրդատի հայ-պոնտական բանակի ուժը, նա ուժեղացվել էր Բիթանիայից կանչված ևս մեկ լեգեոնով):

Եթե հռոմեացիների դաշնակիցների կորուստը համարենք 20%, կարող ենք ենթադրել, որ նրանց կորուստները մոտ էին 5.500 սպանվածի: Սակայն այս զորքերի մի մասն, ըստ երևույթին, եղել է ճամբարում (բուն հռոմեացիների համար հաշվարկ կատարելիս, ես վերցրել եմ կորուստների եվազգույն թվերը, հաշվի առնելով, որ մի քանի հռոմեական կոհորտ գտնվում էին ճամբարում) և ճակատամարտին մասնակցել է մոտ 20-25.000 դաշնակից: Դրա հետ մեկտեղ բիթանիացիները և, նույնիսկ գալատները, մարտունակությամբ չէին համեմատվի հռոմեացիների հետ, այդ պատճառով դաշնակիցների զոհվածների թիվը թողնում եմ անփոփոխ, մոտ 5.500, իսկ գերիների թիվը մի փոքր ավելի շատ, քան հռոմեացիներինը՝ 2.5-3.000:

Այսպիսով, Զելայի ճակատամարտում Տրիարիոսը կորցրեց իր բանակի գրեթե կեսը՝ մոտ 15.000 սպանված և 5.000 գերի: Հաշվի առնելով, որ այսպիսի պարտությունից հետո դաշնակիցների մեջ պետք է խիստ աշխուժանար նաև դասալքությունը, համարձակ կարող ենք մտածել, որ ոչ պակաս, քան 5.000 հոգի այդպես էլ չվերադարձան Տրիարիոսի դրոշի տակ:

Ճակատամարտից հետո Տրիարիոսի բանակն իրենից ներկայացնում էր մոտավորապես 20.000-ոց կատաղած, մի մասն էլ՝ վախեցած, մարդկային զանգված, սակայն, երբ մի քանի օր հետո Լուկուլլոսը նրանց միացրեց իր 25.000-ոց բանակին, ապա հռոմեացիները սրտապնդվեցին և կրկին դարձան հզոր ուժ:

Միհրդատի հայ-պոնտական բանակը նույնպես ճակատամարտում զգալի կորուստներ ունեցավ: Ելնելով ճակատամարտի ընթացքից և Տրիարիոսի բանակի ընդհանուր կորստից, կարող ենք ենթադրել, որ Միհրդատը ճակատամարտում կորցրել էր մոտ 3-4.000 զինվոր, որոնցից մոտավորապես 1.000-ը Տիգրանի զինվորներն էին:

Այսպիսով, ճակատամարտից հետո հայ-պոնտական բանակում մնացել էր մոտ 25-28.000 զինվոր: Այն ակնհայտորեն ուժեղ էր Տրիարիոսի բանակից, սակայն երբ Լուկուլլոսի բանակը մոտեցավ Միհրդատին և իրեն միացրեց Տրիարիոսի ուժերը՝ Միհրդատը, լավ գիտակցելով, որ չի կարող դիմակայել նույնիսկ միայն Լուկուլլոսի բանակին՝ նահանջեց Փոքր Հայքի լեռները, Տալավրա ամրոցի մոտ:

Այստեղ Միհրդատը բավական հաջող պաշտպանվում էր Լուկուլլոսի հարձակումներից, սակայն նրա վիճակը, համենայն դեպս, մնում էր սպառնալից: Տիգրանն օգնության հասավ Միհրդատ Պոնտացուն՝ Պոնտոս ուղարկելով նաև Միհրդատ Մեդացու 6.000-ոց հեծելազորը: Միհրդատ Մեդացին հռոմեացիների համար անսպասելի արագ վրա հասավ և Տալավրայի մոտ կոտորեց գյուղերով ցրված հռոմեական ստորաբաժանումների զգալի մասը: Միհրդատ Մեդացու ժամանումով Պոնտոսում հայ-պոնտական ուժերի կեսը՝ 15-16.000-ը հայկական կայսերական բանակն էր, որն ապահովում էր դաշնակից թագավորների անվիճելի գերազանցությունը հեծելազորի որակի և քանակի մեջ: Տիգրանը, Միհրդատ Մեդացու հեծյալ զորաբանակն անմիջապես Միհրդատ Պոնտացուն չենթարկեց: Ըստ իս, այստեղ կար երկու պատճառ. առաջինը՝ Տիգրանին այս զորամիավորումը պետք էր լինելու Կապադովկիայում, երկրորդը և առավել հետաքրքիրը՝ Միհրդատ Մեդացին, որն արքայից արքա Տիգրան Մեծի օրոք Հայկական կայսրության ազնվականության մեջ ամենաբարձրաստիճան վասալ-թագավորն էր, իրեն կարող էր հավասար զգալ թագավոր Միհրդատ Եվպատորին: Հայ-հռոմեական պատերազմի 69 և 68 թթ. ռազմաշավներին Միհրդատ Եվպատորը ենթարկվում էր Տիգրանի հրամաններին, սակայն դրանք արքայից արքայի հրամաններն էին: 67 թ. Պոնտոսում վիճակն այլ էր, և գրեթե երկու տասնյակ տարվա փառքի կրողը՝ Միհրդատ Մեդացին, կարող էր զգայուն լինել

այսպիսի «մանրունքների» նկատմամբ: Ինչևիցե, գրեթե հեծելազոր չունեցող Լուկուլլոսի բանակի դեմ Տիգրանի զորավարները և Միհրդատ Պոնտացին կենտրոնացրել էին 15.000 հեծելազոր և 20.000 հետևակ: Դա պատկառելի և, ինչպես ցույց տվեց ապագան, Լուկուլլոսին զսպելու համար բավարար ուժ էր: Սակայն Պոնտոսից Լուկուլլոսին վռնդելու համար պետք էր, որ Տիգրանը 67 թ. գարնանը մարտերում կոփված իր հզոր բանակով շարժվեր դեպի Կապադովկիայի խորքերը:

Զելայի ճակատամարտը ես վստահորեն տեղադրում եմ 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի տարեգրության մեջ, որովհետև հաղթանակը ձեռք բերվեց մեծ մասամբ հայկական զորքերով, հայկական հեծելազորային մարտավարության կիրառմամբ, հայկական (փոքրհայքյան) միջավայրում մեծացած և ռազմական առաջին կրթությունը ստացած անձնավորության՝ Միհրդատ Եվպատորի կողմից:

Մեկ անգամ ևս նշենք մեծ պոնտացու արտակարգ մարտավարական և օպերատիվ տաղանդը:

Փոքր Հայքի հսկայական մասնակցությունն այս հաղթանակների մեջ անուրանալի է: Փոքր Հայքի բոլոր ծայրերից հազարավոր հայեր, հավաքագրված, թե կամավոր, համախմբվեցին իրենց արքա Միհրդատ Զ Եվպատորի շուրջ և հզոր հարվածներ հասցրին հռոմեացի նվաճողներին:

Զելայի ճակատամարտը հայ-պոնտական դաշնության փայլուն դրսևորումներից և արդյունքներից մեկն էր: Միհրդատը ևս մեկ անգամ հաստատեց իր մեծ զորավար լինելու անժխտելի փաստը: Ճակատամարտում առաջին անգամ պատմության մեջ հռոմեացիները ստացան հայ կատաֆրակտոսների չորս գնդի (3 մեծհայքյան և 1 փոքրհայքյան) ճակատային հարված, որի հետևանքով գլխովին ջախջախվեցին:

Եթե Արածանիի ճակատամարտում Տիգրանը հռոմեացիներին տվեց պարթևա-հայկական հեծյալ աղեղնամարտի դաս, ապա Զելայի ճակատամարտում Միհրդատը ցուցադրելով ճոշավոր այրուձիու նիզակա- և սրամարտը, վերջացրեց հռոմեացիների զգոնական ուսուցումը: Հռոմեացիները չէին սպասում, որ ընդհանրապես հնարավոր է այդքան արագ ջախջախել հռոմեական լեգեոնի չխախտված մարտակարգը:

Այն, որ հռոմեացիները դաս չառան ոչ Արածանիի, ոչ էլ Զելայի ճակատամարտերից, խոսում է նրանց ռազմական մտքի պահպանողականության մասին: Միայն 53 թ. Խառանի ճակատամարտում պարթևներին կհաջողվի հռոմեական բանակի «ուսուցումը» վերջնականապես ավարտին հասցնել, որի համար անհրաժեշտ էր, որ Խառանի տափաստաններում զոհվեին 20.000 լեգեոներ, 10.000-ն էլ պարթևական գերության մեջ ընկնեին, իսկ զոռոզ Կրասսոսի գլուխը զարդարեր հայոց և պարթև արքայից արքաների Արտաշատում դիտվող թատերական ներկայացումը:

Տիգրանակերտի, Արածանիի, Աղձնիքի և Զելայի գլխավոր ճակատամարտերի ուսումնասիրությունը անվիճելիորեն վկայում է այն մասին, որ Տիգրան Մեծի և Միհրդատ Եվպատորի նման իմաստուն և փորձված զորավարների դեմ, ինչպես հավասարը հավասարի հետ, կարողանում էին մարտնչել միայն Հռոմի ամենատաղանդավոր զորավարները՝ Սուլլան, Լուկուլլոսը, Պոմպեոսը. մյուսները՝ կարճ ժամանակում ջախջախվում էին:

Զելայի ճակատամարտի նշանակությունը հին աշխարհի ռազմական արվեստի պատմության ուսումնասիրության համար անհասանելի էր ոչ միայն անտիկ հեղինակներին, այլ նաև 18-20-րդ դարերի պատմաբաններին ու ռազմական գործի մասնագետներին: Միայն 21-րդ դարասկզբին գտնվեց ռուս գիտնական Լեոնիդ Նառումովը, ով լիովին ըմբռնեց տեղի ունեցած ճակատամարտի նշանակությունը: Առաջին անգամ նա նշեց, որ այդ ճակատամարտի հիմքում ընկած է հայկական զրահապատ հեծելազորի ճակատային գրոհը հռոմեական լեգեոնների վրա [173]: Ընդհանրապես, մանրամասնորեն քննելով հռոմեա-պոնտական պատերազմի դրվագները, Լ. Նառումովը նշում է Պլուտարքոսի չափազանց կարևոր հաղորդումը այն մասին, որ «*Լուկուլլոսը վախենում էր իջնել հարթավայր, որովհետև հեծելազորի մեջ գերազանցությունը թշնամիների կողմն էր*» (Plut., Luc, 15, App., Mithr, 80): Նառումովը տալիս է մի հարց «այդ ի՞նչ հեծելազոր է, որ հինգ հռոմեական լեգեոն վախենում են մարտում հանդիպել 4.000-ոց հեծելազորի հետ», և ինքն էլ պատասխանում է իր տված հարցին՝ դա հայկական զրահապատ այրուձին՝ կատաֆրակտոսներն են [173]:

2005 թ.-ին իմ կողմից բանավոր հայտնած այս մտքի կրկնությունը ռուս պատմաբանի հոդվածում լուրջ վկայություն է այն մասին, որ հռոմեա-պոնտական և հայ-պոնտական պատերազմների ցանկացած անաչառ ուսումնասիրություն բերում է նման եզրահանգումների: Լ. Նառումովի հոդվածի, որպես նման եզրահանգման հանգած առաջին տպագիր (էլեկտրոնային) աշխատության ինքնուրույնությունը և առաջնությունը՝ անկասկած են:

Փաստորեն առաջին անգամ Լ. Նառումովի մոտ մենք հանդիպում ենք համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ հայկական հեծելազորի իրական դերի գնահատմանը: Սակայն առաջին քայլն անելով Նառումովը կանգ է առնում և, ի զարմանս ինձ, չի կատարում երկրորդ քայլը: Նրան անհրաժեշտ էր միայն կապել Արածանիի և Զելայի ճակատամարտում հայկական հեծելազորի կիրառած մարտավարությունը, և պատկերը կդառնար ամբողջական:

Ինձ թվում է, որ 20 տարի հետո՝ 47 թ.-ին տեղի ունեցած Զելայի երկրորդ ճակատամարտը, որտեղ բախվեցին արդեն Հուլիոս Կեսարի և Միհրդատի որդի՝ Փառնակեսի բանակները, ստվերի մեջ գցեցին առաջին՝ 67 թ. Զելայի ճակատամարտը:

Զելայի առաջին ճակատամարտի մասին խոսող գրեթե բոլոր հեղինակները հապճեպորեն նշում են հռոմեացիների խոշոր պարտությունը և վերջացնում շարադրանքը: Ոչ ոք չի փորձում ռազմական տեսանկյունից վերլուծել ճակատամարտի ընթացքը և բացահայտել հռոմեացիների պարտության հիմնական պատճառները:

Զելայի գլխավոր ճակատամարտում Միհրդատ Զ Եվպատոր Պոնտոսի թագավորը վերջին անգամ է հանդես գալիս որպես Տիգրան Բ Մեծ արքայից արքայի զորավար: Լինելով ինքնիշխան թագավոր, դեպքերի բերումով նա կռվեց հռոմեացիների դեմ Հայաստանում որպես դաշնակից ու Տիգրանի զորավար, և իր անուրանալի դերը խաղաց հայոց զենքի հաղթանակների մեջ:

Միհրդատի ու Տիգրանի 27-ամյա բարեկամությանն ու դաշնությունը կխախտի ապագայի նրանց տարբեր ընկալումը,

որը և կդրդի պոնտացուն խառնվել մեծն Հայի արքունական վեճերին, որի պատճառով էլ հետագայում՝ 66 թ. աշնանը նա իր համար կվաստակի 100 տաղանդ գլխագին: 67 թ. ամռանը, սակայն այս դաշինքը դեռ գործող ուժ էր:

Երիվ չընկալելով 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի էությունը, մենք՝ հայերս, այստեղ ևս կորցնում ենք մեր ռազմական պատմության ամենափառավոր էջերից մեկը: Միայն Զելայի գլխավոր ճակատամարտի ընթացքի ուսումնասիրությունը բավական է անցյալի և ներկայի բոլոր հետազոտողների անհիմն հայտարարությունները տիգրանյան բանակի ցածր մարտական հատկությունների մասին հօդս ցնդեցնել: Միաժամանակ ոչինչ այդքան չի ընդգծում Տիգրանակերտի ճակատամարտում Լուկուլլոսի շահած հաղթանակի փառահեղությունը, որքան Զելայի ճակատամարտում հռոմեացիների կրած ծանր պարտությունը: Մնում է ենթադրել, թե ինչ կպատահեր հռոմեական բանակի հետ, եթե Լուկուլլոսը ճակատամարտում կանոնավոր մարտի բռնվեր հայկական բանակի հետ: Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցած 7.500 հայկական և մեդական կատաֆրակտոսների հարվածը կարող էր կործանիչ հետևանքներ ունենար Լուկուլլոսի բանակի համար:

Տիգրանակերտի ճակատամարտում հռոմեացիների հաղթանակի գլխավոր գրավականը, առաջին հերթին, այդ կործանիչ հարվածից խուսափելն էր: Այս դեպքում հայկական ճոշավոր այրուձին պարտության մատնվեց՝ ստանալով հարված թևից և թիկունքից գտնվելով անհարմար տեղում և անշարժ վիճակում:

Զելայի ճակատամարտում հռոմեացիները կորցրեցին իրենց բանակի մոտավորապես կեսը: Մոտ 7.200 զոհված քվիրիտներից բացի, այստեղ պետք է հաշվի առնել նաև մի քանի հազար գերի ընկածներին և հռոմեացիների դաշնակից զորքերի ծանր կորուստները, որոնք միասին պետք է կազմեին ոչ պակաս, քան 15.000 զինվոր: Այդպիսով Զելայի ճակատամարտում հռոմեական զորքերը կրեցին ավելի մեծ կորուստներ քան հայկական զորքերը Տիգրանակերտի ճակատամարտում (որը պայմանավորված էր ճակատամարտի կարճատևությամբ):

Պոնտոսում 68 թ. աշնանից մինչև 67 թ. գարուն-ամառ տե-

ղի ունեցած բոլոր ռազմական գործողություններն ունեն մի առանձնահատկություն՝ Միհրդատի հայ-պոնտական բանակի հիմնական հարվածող ուժը հայոց հեծելազորն էր, հատկապես՝ կատաֆրակտոսների գնդերը: Միհրդատի (և Տիգրանի) համար անչափ կարևոր հաղթանակը Զելայի մոտ հայոց կատաֆրակտոսների կործանիչ հարվածի արդյունքն էր:

67 թ. Տալավրա հասած Միհրդատ Մեդացու հեծելագնդերի սմբակների տակ կործանված մանր հռոմեական ստորաբաժանումները Լուկուլլոսին ահեղորեն հիշեցում էին այն մասին, որ դրանք միայն հայոց հաղթական բանակի առաջապահ հեծյալ զորաբանակի զոհերն են: Միհրդատ Մեդացու հեծելագնդերի ետևից Կապադովկիա էին մտնում Տիգրանի հեծյալ և հետևակային գնդերը ...

7.5.Հայկական բանակի հարձակումը Կապադովկիայում

Կապադովկիա շտապող հայկական բանակի առաջապահը էր Տիգրանի վասալ և փեսա Միհրդատ Մեդացու ատրպատականյան հեծելազորն, որն առաջինը անցավ Մեծ Հայքի սահմանը և կոտորեց Փոքր Հայքի Տալավրա ամրոցի մոտ պարենավորման դուրս եկած մանր հռոմեական ստորաբաժանումները: Երբ հռոմեացիների մնացած ջոկատները նահանջեցին մինչև Լուկուլլոսի բանտկատեղին, այդ պահին Տիգրան Մեծի բանակն արդեն անցնում էր Եփրատը և մտնում Կապադովկիա: Կապադովկիայի Արիաբարզանես թագավորն իր մերձավորներով և գանձերի մի մասով խուճապահար փախուստ Փոքր Ասիայի հռոմեական հատվածը:

Այդ պահին Միհրդատը Լուկուլլոսի բանակի կողմից դեռ շրջափակված էր Փոքր Հայքի լեռնային շրջաններում: Տիգրանի հզոր բանակի մուտքը Կապադովկիա 67 թ. ամռանը Լուկուլլոսին ստիպեց արագ գործել. վերջինս շարժվեց դեպի Տիգրանը, սակայն սեփական զորքը հրաժարվեց գնալ արքայից արքայի դեմ և նահանջեց (կարելի է ասել՝ որ փախան) Գալատիա:

Հայկական և պոնտական զորքերի միավորումը խափանե-

լու համար Լուկուլլոսն իր բոլոր ուժերով Պոնտոսից շարժվում է Տիգրանի դեմ: Սակայն հռոմեական լեգեոնները հասնելով ճանապարհի այն հատվածին, որը բաժանվում էր երկու մասի, մեկը տանում էր դեպի Գալատիա, մյուսը՝ Կապադովկիա, չենթարկվեցին Լուկուլլոսի հրամանին՝ թեքվել դեպի Կապադովկիա, և լիակատար լռություն պահպանելով, շարժվեցին դեպի Գալատիա, որից ճանապարհը շարունակվում էր մինչև հռոմեական Ասիա նահանգ: Լուկուլլոսը հարկադրված ենթարկվեց իր զինվորների ընտրությանը՝ Կապադովկիա ներխուժած Տիգրանի բանակին չհանդիպելու համար Լուկուլլոսի բանակը փախավ Գալատիա:

69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի 67 թ. ռազմարշավը վերջացավ հայերի անվերապահ և լիակատար հաղթանակով:

7.6. 67 թ. աշնանը Հայաստանում Տիգրան Մեծի դեմ սկսված խռովությունը և զինված ապստամբության սկիզբը

Տիգրան Բ Մեծ արքայից արքան 67 թ.-ի աշնանը միակողմանի ընդհատեց 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի բոլոր ռազմական գործողությունները:

Երկու և կես տարի առաջ, առանց պատերազմ հայտարարելու, Լուկուլլոսը հռոմեական Ասիա նահանգից արշավել էր Հայաստան: Այժմ նույն սրընթացությամբ հռոմեական «արծիվները» ետ էին նահանջել և Լուկուլլոսի բանակի մնացորդները, խուսափելով Տիգրանի բանակի հետ հանդիպելուց, ետ էին քաշվել Գալատիա [42, 51]:

Դժբախտ Կապադովկիան ևս մեկ անգամ ենթարկվեց հայկական զորքերի բռնագրավմանը և հիմնահատակ թալանվեց: Կապադովկիայի հյուսիսում շուտով հայտնվեցին նաև պոնտացիների թալանչիական ջոկատները:

Կապադովկիան բազմիցս ենթարկվել է հայկական և պոնտական զորքերի հարձակումներին, որոնք ուղեկցվում էին անխնա թալանով: Սակայն ո՛չ հայերը, ո՛չ պոնտացիները Կապադովկիայի բնակչության հանդեպ երբեք գազանություններ չէին կատարել: Կապադովկիայի բնակչության նկատմամբ թե՛ Հայաստանում, թե՛ Պոնտոսում կար ոչ այնքան թշնամական, որքան՝ բարեկամական վերաբերմունք: Ավելին, Հայաստանում 78 թ.-ից սկսած, որպես հայոց թագավորի հպատակներ, արդեն տասնմեկ տարի ապրում էին ավելի քան 300.000 կապադովկիացիներ: Սակայն հայկական բանակի 93, 91 և 78 թթ. արշավները, բացառություն չէր նաև 67 թթ. ներխուժումը, սովորական էին դարձրել թալանի այս միտումը: Նույնը վերաբերում էր նաև պոնտացիներին, միայն մեկ տարբերությամբ՝ նրանք Կապադովկիան դիտում էին որպես Պոնտոսի թագավորության մի մաս, որն ընկել է ընչաքաղց հռոմեացիների և նրանց կամակատար դրածոների գերիշխանության տակ:

Հայկական 50.000-ոց և հայ-պոնտական 30-32.000-ոց բանակները պատրաստ էին ներխուժել Փոքր Ասիայի հռոմեական նահանգները և Հռոմի դաշնակից թագավորությունների տարածքները: Սակայն այդ ամենը տեղի չունեցավ, պատմական իրադարձությունները զարգացան այլ ուղիներով:

Թվում էր, թե իր տերությունը վերականգնելու համար Տիգրանն ստեղծել է որոշ նախադրյալներ, և դրա համար կարող է շարժվել Սիրիա և Հյուսիսային Միջագետք՝ Արևմուտքում Միհրդատին թողնելով ուժեղ հայկական զորաբանակ: Սակայն հայոց արքայից արքան ձեռնպահ մնաց նման քայլից: Այս զսպվածությունը պայմանավորված էր մի շարք կարևոր հանգամանքներով.

1.Հայկական կայսրության հիմք կազմող Մեծ Հայքում առաջացել էր հակատիգրանյան խոշոր ապստամբություն, որի կազմակերպմանը ներքաշված էր Տիգրանի միակ բազմամյա դաշնակիցը՝ Միհրդատ Պոնտացին,

2.Սիրիայի, Կոմագենեի, Կիլիկիայի, Փյունիկիայի և Հյուսիսային Միջագետքի երկրների հիմնականում հռոմեասեր՝ հակահայկական տրամադրությունների պատճառով Տիգրանը կորցրել էր իր իշխանությունը խաղաղ կամ անշան դիմադրությունից հետո վերականգնելու հնարավորությունը.

3.Հռոմեական տերության հսկայական ռազմական գերազանցությունը՝ նույնիսկ Լուկուլլոսին պարտություն մատնելուց և նրա բանակը կազմալուծման եզրին հասցնելուց հետո:

Լուկուլլոսի Գալատիայում գտնվող 6 լեգեոնից բացի, հռոմեական Ասիայում կար 2, իսկ Լեռնային Կիլիկիայում՝ 3 հռոմեական լեգեոն, չհաշված բազմահազար փոքրասիական դաշնակցային զորքերը: Այս ամենին շուտով զումարվելու էր Իտալիայից և Արևմուտքից Արևելք Պոմպեոսի բերած հսկայական ռազմուժը,

4.Իր ուժերը վերականգնած Պարթևական տերությունում սրնթաց աճում էր հակահայկական կեցվածքը,

5.Հայ-հռոմեական ծանր պատերազմի հետևանքով հայկական հասարակության տարբեր խավերում առաջացել էր որոշակի հոգնածություն,

6.Հայաստանի զգալի մասն ավերվել էր պատերազմից:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ էին համարձակ ու կտրուկ, բայց միաժամանակ՝ խոհեմ և զուսպ լուծումներ:

Ապպիանոսը պատմում է, որ որսի ժամանակ տեղի ունեցած միջադեպի պատճառով Տիգրան Մեծը սպանել տվեց իր և Կլեոպատրայի միջին որդուն: Տիգրանը ձիուց վայր էր ընկել և կորցրել գիտակցությունը: Միջին որդին, հոր վրա ուշադրություն չդարձնելով, հագել էր խույրը: Ուշքի եկած Տիգրանը ձերբակալել և մահապատժի էր ենթարկել որդուն [59]:

Այս պատմությունը լուրջ իրադարձությունների մասին շատ մակերեսային մի հաղորդում է: Տիգրան Մեծի որդին, ինչպես և արքունի ցանկացած պալատական, հիանալի գիտեր ծեսը և տեղի ունեցած միջադեպի ժամանակ վարվելակերպի կանոնները: Ծայրահեղ միամտություն է միջին որդու այս պահվածքի մեջ միայն երիտասարդական անզգուշություն տեսնել: Միջին որդին հավանաբար վաղուց արդեն թշնամաբար էր տրամադրված իր հայր-արքայի նկատմամբ, հնարավոր է նաև, որ արքունիքում գլխավորում էր հերթական հակատիգրանյան խմբավորումը: Այս դժբախտ պատահարը միայն արագացրեց գոյություն ունեցող կնճիռի հանգուցալուծումը:

Այս պատահարի մասին պատմելով, Ապպիանոսը Տիգրանին չի դատապարտում անտեղի դաժանության համար: Կարող է հույն պատմագրին այս դեպքի մասին այլ բաներ էլ էին հայտնի, որի պատճառով արքայից արքային բացասական բնութագիր չի տրվել [59]:

Տիգրան Կրտսերի բարձրացրած ապստամբությունը շատ ավելի առաջ անցած անհնազանդության գործողություն էր: Խոովարարներին, ըստ երևույթին, հաջողվել էր իրենց կողմը քաշել Արտաշատի արքունիքը պահպանող արքայական պահակազնդերի ստորաբաժանումների, ինչպես նաև մայրաքաղաքում և այլ վայրերում գտնվող զորքերի մի մասը: Բարձրաստիճան պաշտոնյաների ներգրավածության մասին որևիցե տեղեկություն մենք չունենք և հիմք էլ չունենք որևէ մեկին մեղադրելու: Ամենամեծ կասկածն ընկնում է միայն Գուգարաց բդեշխի վրա, որը կարող էր ընկնել Միհրդատ Պոնտացու ազդեցության տակ, ինչպես 67 թ. խոր աշնանը – 66 թ. վաղ գարնանը ընկան Վիրքի և Աղվանքի թագավորները, երկու հնարավոր պատճառով.

1.Միհրդատի մոտ գտնվող մեծհայքյան զորաբանակի զգալի մասը Գուգարաց բդեշխի զորաբանակից էր, որը հնարավորություն էր ստեղծում Միհրդատի համար մտերմիկ հարաբերություններ ստեղծել նրանց հետ հօգուտ իր թոռանը՝ Տիգրան Կրտսերի,

2.Վիրքի և Աղվանքի վասալ արքաների դիրքորոշումը կարող էր Միհրդատի և Տիգրան Կրտսերի կողմից ուղեկցվել նույնաստիճան վասալ թագավորության ստեղծման խոստումով՝ Գուգարքի չափերն այդ երկրներին չէին զիջում և բդեշխի մտքով նման բան կարող էր անցնել:

Բոլոր դեպքերում, այս չհիմնավորված ենթադրությունը պետք է ենթադրության մակարդակից չանցնի:

Այժմ կատարենք որոշ հաշվարկներ:

Ապստամբությունը պատահմամբ չէր աշնանը ծագել: Տիգրանն իր բանակով Կապադովկիայում էր, ըստ երևույթին՝ Մաժաքում: Եթե ապստամբությունը սկսվել էր սեպտեմբերի երկրորդ կեսին, ապա հաշվի առնելով Արտաշատից Մաժաք հեռավորությունը, Տիգրանն այդ մասին կարող էր իմանալ միայն սեպտեմբերի վերջին:

Լուրը ստանալուց հետո հնարավոր չէր միանգամից՝ հաջորդ օրը, բանակը շրջել դեպի Հայաստան և սկսել ետդարձը: 50.000-ոց բանակը բարդ և որոշ իմաստով նաև ինքնահոսակարգ է: Անհրաժեշտ էր կազմել հետագա գործողությունների ծրագիրը, կողմնորոշվել՝ ինչ կարգադրել Պոնտոսում գտ-

եվող Տիգրանի զորաբանակին, արդեն Տիգրանին միացած Միհրդատ Մեդացուն: Պետք էր որոշել ինչ անել Կապադովկիայի հետ՝ արդյո՞ք պետք էր թողնել կայազորներ: Այս բոլոր հարցերը լուծելու համար կարող է պետք գար մեկ-երկու շաբաթ: Նույն ժամանակը կարելի էր օգտագործել բանակը մեկ երկար արշավանքից՝ Մծբին – Տոմիսա – Մաժաք, մյուսին՝ Մաժաք – Տոմիսա – Արտաշատ երթուղիով, նախապատրաստելու համար:

Ծոփքում սահմանը վերահսկելու համար Տիգրանը, հավանաբար, թողեց հզոր զորաբանակ և մնացած զորքերով շարժվեց դեպի Արտաշատ:

Այսպիսով, կարելի է մտածել, որ Տիգրանը դեպի Հայաստան շարժվեց հոկտեմբերի առաջին կեսին և հասավ Արտաշատ հոկտեմբերի վերջին կամ, ավելի շուտ՝ նոյեմբերի կեսերին (զինվորներին հոգնեցնել խիստ արագացած երթով իմաստ չուներ՝ մեկ շաբաթը Տիգրանի համար վճռորոշ չէր):

Արտաշատ Տիգրանը մտել է, ըստ երևույթին, իր կողմնակիցների օգնությամբ, հավանաբար ոչ առանց ճակատամարտի: Մտածել, որ խռովարարները կարող էին դիմակայել Տիգրանի հզոր բանակին բաց ճակատամարտում, իմ կարծիքով, ընդունելի չէ:

Մոտավորապես 67 թ. նոյեմբերի կեսերին իր անսահմանափակ իշխանությունը մայրաքաղաքում և շրջակա գավառներում վերականգնելով, Տիգրանն, ըստ երևույթին, չկարողացավ կանխել ապստամբ ուժերի մի մասի փախուստը կամ նահանջը Հայաստանի որևէ մաս, իսկ վաղահաս ձմեռը անհնարին դարձրեց բոլոր ռազմական գործողությունները:

> Տիգրանը հաղթեց իր և Կլեոպատրայի՝ Միհրդատ Եվպատորի ապստամբ երրորդ որդուն, սակայն այս ապստամբության ռազմաքաղաքական հետևանքները խիստ բացասական էին Հայկական տերության համար:

7.7. 67 թ. ռազմարշավի արդյունքները և գնահատականը

67 թ. ռազմարշավը հատկանշական էր նրանով, որ գործողությունները ծավալվում էին երկու ռազմաճակատներում՝ մեկը Հայաստանի հարավում, մյուսն էլ Փոքր Հայքում և Պոնտոսում: 67 թ. հարավային Հայաստանում ծավալվող մարտական գործողությունները ոչ թե ակտիվանում, այլ մարում էին: Տիգրանը մի կողմից վճռականորեն վերականգնում է իր իշխանությունը Հայաստանի հարավում և այստեղ ուժեղ զորագնդեր տեղադրում, մյուս կողմից ցույց էր տալիս որոշակի զսպվածություն: Անընդհատ ռազմավարական սպառնացող դիրքեր զբաղեցնելով հռոմեական բանակի հանդեպ, հայկական բանակը մարտի նրանց հետ գրեթե չէր բռնվում: Տիգրանը սպասում էր Պոնտոսի ռազմաճակատում Միհրդատի հաջողություններին և նրանք շատ սպասել չտվեցին:

Պոնտոսում Միհրդատը մի քանի ծանր հարված հասցրեց հռոմեացիներին պարտության մատնելով նրանց երկու մեծ ճակատամարտերում: Տիգրանի համար հատկապես շատ կարևոր էր Տրիարիուսի դեմ շահած ճակատամարտը: Այստեղ առաջին անգամ Միհրդատը կատաֆրակտոսների ճակատային հարվածով ջախջախում է հռոմեական լեգեոնը: Այս գրոհի հաջողությունը ապշեցուցիչ էր՝ լրիվ մարտական պատրաստվածությամբ կանգնած լեգեոնին ճակատից գրոհում է զրահապատ հեծելազորի հսկայական զանգվածը, որը ճզմում և կոտորում է լեգեոներներին, իսկ հետո գցում նրանց մոտակա ճահիճը, որտեղ լեգեոնի խղճուկ մնացորդներին վերջնականապես ոչնչացնում է Միհրդատի հայ թեթևազեն հետևակը: Այսպիսով հռոմեացիները հնարավորություն են ունենում ծանոթանալ կատաֆրակտոսների մարտավարության բոլոր տարրերին՝ Արածանիի ճակատամարտում ետադարձ հեռահար նետահարում, Տրիարիուսի դեմ ճակատամարտում՝ ճակատային բախում ու մարտական գծի ճեղքում:

Տիգրանակերտի ճակատամարտից հետո Լուկուլլոսը պարծենկոտի նման զեկուցում է Հռոմ, որ 14.000 զինվորով հաղթել է 300.000-ոց բանակին՝ կոտորելով հետևակից 100.000 մարդ և գրեթե ողջ (50.000) հեծելազորը: Եվ դա այն դեպքում, երբ չեզոք

փոքրասիական աղբյուրները վկայում էին միայն 5-10.000 մարդու զոհվելու մասին:

Զելայի ճակատամարտում Տրիարիոսը կորցնում է ավելի, քան 7.000 զինվոր՝ բուն հռոմեացի լեգեոներներ, 150 կենտուրիոն և 24 տրիբուն, միայն սպանվածներ, իսկ հռոմեական բանակի ընդհանուր կորուստները հասնում են 15.000 սպանվածի և 5.000 գերիների: Դա նշանակում է, որ ամբողջովին ոչնչացված էին երկու հռոմեական լեգեոն: Այս թիվը Միհրդատի ջատագովը՝ Ապպիանոսը, հարկ չի համարում մեծացնելու: Հաղթանակն առանց դրա էլ փառավոր էր: Այս հաղթանակը պատկանում է Միհրդատի զորավարական հանճարին և հայոց բանակին, հատկապես ճոշավոր այրուձիու անդիմադրելի հարվածի ուժին:



Նկար 7.8. Հռոմեական ամրացված ճամբարի աշտարակ

67 թ. գարնանը Լուկուլլոսը հարկադրված վերադառնում է Պոնտոս, որտեղ իր բարոյալքված և կիսաքայքայված բանակը լրիվ քայքայվում է և դառնում է անկառավարելի: Լուկուլլոսի բանակը վերջնական կազմալուծումից փրկում է վտանգի զգացումը՝ հայ-պոնտական զորքերի հարևանությունը:

Տիգրան Մեծը Միհրդատ Պոնտացուն օգնելու համար ուղարկում է իր վասալ և փեսա Միհրդատ Մեդացու հեծյալ զորաբանակը, որի գործողությունները Փոքր Հայքում արդյունավետ էին:

Վերջապես մեծաքանակ և ուժեղ հայկական բանակով Կապադովկիա է մտնում Տիգրանը, Արիոբարզանեսին ստիպելով հապճեպ փախչել հռոմեական տիրույթները: Ողջ հռոմեական Ասիայի և Հռոմի դաշնակից թագավորությունների վրա կախվում է 89 թ. ուրվականը՝ երբ պոնտական զորքերն անհախադեպ արագ զավթեցին գրեթե ողջ Փոքր Ասիան: Լուկուլլոսի բանակը, որտեղ խիստ ուժեղացել էր զորավար – զինվորություն հակամարտությունը, Տիգրանի մարտահրավերը չի ընդունում և նահանջում է Գալատիա: Այս նահանջն ավելի նման էր փախուստի: Կապադովկիան վերստին ասպատակվեց հայերի, որոշ ժամանակ անց՝ նաև պոնտացիների կողմից:

Հայկական բանակի հաղթական երթը ընդհատում է Տիգրանի դեմ Հայաստանում Տիգրան Կրտսերի բարձրացրած ապստամբության լուրը, որն իմանալուն պես Կապադովկիայում և Պոնտոսում գտնվող բոլոր հայկական զորքերով Տիգրանը վերադառնում է հայրենիք:

Ամփոփելով 67 թ. ռազմարշավը, մենք կարող ենք ասել, որ հայ-հռոմեական պատերազմի երրորդ տարին Լուկուլլոսի դեմ անցկացված պատերազմի հաղթական ավարտի տարին էր:

Զորաշարժերի իմաստով, բացի քննարկված կռիվներից և ճակատամարտերից, 67 թ. կատարված ուրիշ նշանակալի իրադարձություններ մեզ հայտնի չէ:

7.8. 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ընդհատումը. միակողմանի զինադադար

67 թ. աշնանը Տիգրան Մեծի ռազմաքաղաքական ծրագրերի մի մասը հասանելի դառցավ հայոց ավագանուն և բանակային վերնախավին: Սիրիայի և Դաշտային Կիլիկիայի հանդեպ արքայից արքայի զսպված քաղաքականությունը գտավ իր բացատրությունը: Տիգրանը միտումնավոր չէր սրում հարաբերություններն այնտեղ գտնվող հռոմեացիների և Սելևկյանների շառավիղների հետ: Նա չէր կարող միաժամանակ պայքարել երկու ուղղություններով՝ Փոքր Ասիայում և Սիրիայում: Արքայից արքան որոշ զսպվածություն էր ցուցաբերում Հռոմի ռազմական ձեռնարկումների վերաբերյալ Արևելքում ընդհանրապես: Տիգ-

բանը հարկադրված չեզոքություն պահպանեց (խառնվելու համար բավարար ուժ չուներ) Պոմպեոսի ծավալած հակածովահենական հսկայածավալ գործունեության ժամանակ: Ռազմաքաղաքական հաշվարկի մեծ վարպետը հստակ պատկերացնում էր անխոհեմ քայլերի կործանարարությունը:

Հայոց վերնախավը շատ շուտ զգաց Տիգրանի տրամադրությունների փոփոխությունը: Ավագանուց միայն քչերին էր տրված ըմբռնել արքայից արքայի քաղաքականության հանկարծակի փոփոխության անխուսափելիությունը՝ արքունիքում ոչ բոլորն էին Բագադատ, Միհրդատ Մեդացի կամ Մանկայոս:

Դժգոհները սկսեցին խմբավորվել Տիգրան Կրտսերի շուրջը, որի գաղտնի գաղափարական ղեկավարն ու ոգեշնչողը Միհրդատ Պոնտացին էր: Ինչ՞, ինչ՞, սակայն Միհրդատի նման խորաթափանց քաղաքագետը շուտ էր ըմբռնել Տիգրանի նախնական քայլերի իմաստը՝ Հայաստանին մոտալուտ աղետից փրկելու համար: Այդ ամենը դեմ էր պոնտացու ծրագրերին և նա սկսեց հրաբրել և աջակցել իր թոռանն ու մնացած խռովարարներին: Շուտով վերջիններս ձևավորվեցին այնպիսի պատկառելի ուժի, որ բացահայտ ընդվզեցին Տիգրանի դեմ:

67 թ. աշնան կեսին Տիգրանը կտրուկ որոշում ընդունեց՝ միակողմանի վերջացնել պատերազմը Հռոմի դեմ, զորքերը վերադարձնել Հայկական կայսրության իրական սահմանները և արմատապես կարգավորել իրավիճակը Հայաստանում:

67 թ. աշնանը Տիգրանն իր բոլոր ուժերը վերադարձրեց Հայաստան.

- Կապադովկիայից՝ 50.000 բանակը,
- Պոնտոսից՝ 10.000 զորաբանակը:

67 թ. ուշ աշնանը և ձմռանը Հայաստանում սկսվեց քաղաքացիական պատերազմ արքայից արքա Տիգրան Բ Մեծի և իր որդու՝ արքայազն Տիգրան Կրտսերի կողմնակիցների միջև, որը տևեց մինչև 66 թ. գարունը:

67 թ. ձմռան նախաշեմին արքայից արքայի հավատարիմ զորքերը ջախջախեցին խռովարարներին, դիմադրության վերջին օջախները վերացվեցին արդեն 66 թ. գարնանը: Տիգրան Կրտսերն, իր կողմնակիցներով փախավ Պարթևստան:

Հայաստանում ծագած ներարքունական վեճերը և հայկական զորքերի դուրս բերումը Կապադովկիայից զգալիորեն թեթևացրեցին հռոմեացիների ծանր ռազմաքաղաքական վիճակը Փոքր Ասիայում՝ Տիգրանի ներխուժման վտանգը Գալատիա ու հռոմեական Ասիա նահանգ վերացավ:

67 թ.-ի վերջերից հայ-պոնտական դաշինքը տրոհվեց և Տիգրանը թշնամաբար էր տրամադրված իր նախկին դաշնակցի հանդեպ: Բոլոր անտիկ պատմիչները դրանում մեղադրում են Միհրդատ Պոնտացուն [42, 51], միայն Միհրդատի գովերգու Ապպիանոսը՝ լռում է այդ մասին [59]:

Հաշվի առնելով Միհրդատ Եվպատորի բնավորությունը և իր երկրի համար առաջացած գրեթե անհեռանկարային վիճակը, ես նույնպես կարծում եմ, որ գերակտիվ պոնտացին իր թոռան՝ Տիգրան Կրտսերի միջոցով որոշել էր ամրանալ Հայաստանում և առաջինն էր հակադրվել Տիգրան Մեծին:

Հայ-հռոմեական պատերազմը տևեց 69 թ. գարնանից մինչև 67 թ. աշուն, սակայն զինադադար կամ խաղաղության պայմանագիր հռոմեացիների հետ չկնքվեց, պարզապես Տիգրանը միակողմանի ընդհատեց ռազմական գործողությունները և բանակը վերադարձրեց Հայաստան, ուր սկսվել էին անախորժությունները: Միայն հաջորդ՝ 66 թ.-ին տեղի ունեցած բազմաթիվ իրադարձություններից հետո վերջ դրվեց այս ծանր պատերազմին:

7.9. 67-66(63) թթ. չորրորդ պոնտական պատերազմի սկիզբը և Հայաստանը

67 թ. աշնան կեսից Միհրդատը մեն մենակ մնաց հռոմեացիների դեմ: Տիգրանը թշնամաբար էր վերաբերվում իր նախկին դաշնակցին՝ Տիգրան Կրտսերի ապստամբությունը ընդմիշտ ընդհատեց նախկին դաշնակցությունը:

Իրենից ավելի շրջահայաց և սառնասիրտ դաշնակցի հանդեպ խուլ դժգոհություն Միհրդատ Պոնտացին, ըստ երևույթին, ցուցաբերել էր իր արքունիքում կամ դրացիների մոտ ոչ մեկ

անգամ: Տիգրանն, իր հոյակապ լրտեսական անձնակազմով այդ մասին չիմանալ չէր կարող: Ըստ երևույթին, արքայից արքան ըմբոստումով էր վերաբերվում իր կրտսեր գործակցի ցասման բռնկումներին: Սակայն 67 թ. աշնանը Պոնտոսի թագավորի գործունեությունը այլ տեսք ընդունեց՝ նա բացահայտ աջակցեց Տիգրանի դեմ կազմակերպված խռովությանը:

Շատ հավանական է, որ Միհրդատի ձեռքը խառն էր նաև Տիգրանի միջին որդու հետ կապված պատահարին:

Միհրդատ Պոնտացուն այլևս բավարար չէր մեծն Հայի անկեղծ դաշնակցությունը (անկեղծ գոնե այն պատճառով, որ Տիգրանի համար կենսականորեն անհրաժեշտ էր պահել Պոնտոսի թագավորությունը: Եթե այնտեղ հաստատվեին հռոմեացիները, ապա Հայաստանը միշտ վտանգված կլիներ Արևմուտքից և Արևելքից): Միհրդատի մոտ միտք էր ծագել, որ իր թոռան՝ Տիգրան Կրտսերի միջոցով ինքը կկարողանա վերահսկել Հայաստանի մեծ ռազմա-տնտեսական միջոցները, որը ինքը ի սպաս կդներ իր ռազմաքաղաքական ծրագրերին: Կարճ ժամանակով պապի և թոռան նպատակները համընկան. վերջինս անհամբեր ցանկանում էր հնարավորինս շուտ իր ձեռքը գցել իշխանության գայիսոնը:

Իսկապես, եթե նույնիսկ Միհրդատը կորցներ Պոնտոսը, ապա կպահեր Փոքր Հայքը: Եթե Մեծ Հայքն էլ անցներ իր թոռանը, ապա կարելի էր միավորել երկու թագավորությունները, բնական է՝ սկզբում պապի, հետո՝ թոռան իշխանության տակ, դաշնակցել պարթևների հետ և այսպիսով խուսափել հռոմեացիների վրեժխնդրությունից:

Կյանքը ցույց տվեց, որ Միհրդատ Եվպատորն իր հաշվարկներում խիստ թերագնահատում էր Տիգրան Մեծի կարողությունները՝ վերջինս ավելի շուտ կհանձներ Հռոմին պոնտացուն և կլանելով Փոքր Հայքը՝ դուրս կգար դեպի Մև ծով:

67 թ. աշնանը Տիգրանի բոլոր զորքերը թողեցին Պոնտոսը և վերադարձան Հայաստան: Պոնտոսի պատկառելի ռազմական հնարավորությունները միանգամից խիստ նվազեցին. տարեվերջին Միհրդատն ուներ միայն 2-3.000 հեծելազոր և մոտ 20.000 հետևակ:

Այս ուժերով պոնտացիներն ընդունակ էին ազատագրել իրենց երկիրը Պոնտոսից գործնականորեն հեռացած հռոմեացիներից, ինչպես նաև ասպատակել Կապադովկիայի և Բիթանիայի սահմանամերձ շրջանները, սակայն ավելի լուրջ գործողությունների համար բավարար զորք Միհրդատը Եվպատորն այլևս չուներ:

67-66 թթ. ձմռանը և 66 թ. գարնանը Միհրդատին հաջողվեց իր բանակում հավաքել 30.000 հետևակ, բայց հեծյալների թիվը մնաց անփոփոխ՝ 2-3.000: Հին աշխարհի (նաև մինչև XX դարի սկիզբը) զինվորականներին քաջ հայտնի էր, թե ինչ դժվարությունների հետ է կապված կես տարում լավ հեծյալ զորք հավաքագրելը և մարզելը:

Այսպիսով, Պոնտոսի հզոր ռազմական ներուժը 68 – 67 թթ. հաղթական կռիվներում իրականում հիմնված էր կանոնավոր հայկական բանակի, հատկապես հեծելազորի, գերազանց մարտական հատկությունների վրա:

67 – 66 թ. ձմեռը Միհրդատն անցկացրեց Պոնտոսում՝ երկիրը և զորքը նախապատրաստելով հաջորդ տարվա ծանր մարտերին:

4.000-ից Միհրդատի հեծելազորի թիվը, կարծում եմ, պակասել էր մինչև 3.000-ը, կորուստների և հետևակը համալրած սպաների հաշվին [59]: Համառորեն կրկնվող մյուս թիվը՝ 2.000 հեծելազոր [42], կարող է վկայել այն մասին, որ Տիգրանին հաջողվել էր իր կողմը գրավել նաև փոքրհայքյան հեծելազնդերից մեկը: Արդյո՞ք մեծն ռազմագետը և քաղաքագետը չէր սկսել Փոքր Հայքը իր կողմը քաշելու նախնական որոշ գործողություններ:

7.10. 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմում կայացած ռազմական գործողությունների ընդհանուր բնութագիրը

67 թ. իրադարձությունները շարադրելիս մենք պետք է հստակ սահմանազատենք այն պահը, երբ Տիգրանը փոփոխված ռազմաքաղաքական իրադարձությունից ելնելով, որոշեց հաղթանակած Հայաստանը դուրս բերել պատերազմից:

67 թ. աշնան երկրորդ կեսից Պոնտոսում տեղի ունեցած իրադարձություններն արդեն հայ-հռոմեական պատերազմին չեն վերաբերվում: 67 թ. վերջին և 66 թ. Պոնտոսում տեղի ունեցած ռազմական գործողություններին մասնակցող բոլոր հայկական զորքերը Փոքր Հայքից էին: Վերջիններս Միհրդատ Եվպատորին ճանաչում էին որպես իրենց թագավորի և գործուն մասնակցություն էին ցուցաբերում հակահռոմեական պայքարին:

67 թ. աշնան կեսից մինչև 66 թ. աշունը Պոնտոսում և Փոքր Հայքում ծավալված ռազմական գործողությունները և նրանց շուրջը տեղի ունեցած այլ իրադարձությունները վերաբերվում են արդեն չորրորդ պոնտական (հռոմեա-պոնտական) պատերազմին:

Այդ պատճառով 67 թ. ռազմարշավի հետազոտության մեր ժամանակային շրջանակները սահմանափակվում են 67 թ. աշնան սկզբով, երբ, ըստ անտիկ պատմիչների, Պոմպեոսի դեմ պայքարող Միհրդատի բանակում արդեն կար ոչ թե 8.000, այլ 2-3.000 հեծյալ [34, 59]:

7.10.1. 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմը ռազմարվեստի պատմությունում

Տիգրանի ռազմական գործունեությունը որոշակի նշանակություն ունի հին աշխարհի ռազմարվեստի պատմության ուսումնասիրության համար: Մեծ գիտական նշանակություն ունի տիգրանական բանակի ռազմական վերափոխումների ուսումնասիրությունը, 112-112 թթ. և 86-84 թթ. հայ-պարթևական պատերազմների ընթացքը և հայկական բանակի հաղթանակների գրավականների ուսումնասիրությունը, Տիգրանի ռազմական շինարարությունը և ռազմական քաղաքականությունը նորաստեղծ Հայկական կայսրությունում: Սակայն այս ամենը չի կարող համեմատվել 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ժամանակ երկու կողմերի կիրառած մարտավարական և ռազմավարական նորույթների հսկայական նշանակության հետ:

Նշենք այս պատերազմում աշխարհում առաջին անգամ օգտագործված նորույթները.

1.Լուկուլլոսը Հին աշխարհի ռազմական պատմության մեջ առաջին անգամ Տիգրանակերտի գլխավոր ճակատամարտում գերակշռող հակառակորդի զորքերի վրա օգտագործել է թնային և թիկունքային հարված բանակի հիմնական ուժերով, նախապես մոլորության մեջ գցելով հակառակորդին՝ իր դաշնակից ուժերի ցուցադրական զորաշարժով և հեծելազորի ճակատային գրոհով:

2.Տիգրանը Հին աշխարհի ռազմական պատմության մեջ առաջին անգամ հռոմեական լեգեոնների դեմ կիրառել էր սկյութա-սարմատա-պարթևա-հայկական հեծյալ նետաձիգների ետահար նետաձգման ոճը, որի միջոցով Արածանիի գլխավոր ճակատամարտում հռոմեական բանակին ծանր հարված էր հասցրել և, փաստորեն, պարտության մատնելով նրան՝ հարկադրել հռոմեացիներին մի քանի օր հետո նահանջել:

3.Միհրդատ Եվպատորը Հին աշխարհի ռազմական պատմության մեջ առաջին անգամ Զելայի գլխավոր ճակատամարտում օգտագործել է կատաֆրակտոսների ճակատային հարվածը հռոմեական լեգեոնների վրա, որի հետևանքով Տրիարիոսի հռոմեական բանակը ջախջախիչ պարտություն է կրել: Տիգրան Մեծն այս հարվածը կիրառել էր իր նախորդ ճակատամարտերում:

4.Հայ-հռոմեական պատերազմում Տիգրանի կիրառած ռազմավարությունը «ոչ ուղղակի գործողությունների ռազմավարության» ամենափայլուն օրինակներից է, որն իր արդյունավետությամբ հավասար էր, իսկ երբեմն էլ գերազանցում էր մինչ այդ օգտագործած նման ռազմավարական բազմաթիվ հնարքներին: Մարտավարական որոշ հնարքներ արժանի են Հին աշխարհի ռազմարվեստի պատմության դասագրքերը մտնելու:

5.Տիգրանի քաղաքական, ռազմաքաղաքական և ռազմական գործունեությունն իր մեջ ներառում էր հին աշխարհի ռազմավարական տեսության գագաթնակետը հանդիսացող չինական ստրատեգեմային մտածելակերպի գրեթե բոլոր հիմնական տարրերը:

Նշված դրույթներին ավելացնենք հետևյալը.

1.Այս պատերազմի ուսումնասիրության արդյունքում հին Հայաստանի բանակն ընդմիշտ լքում է "բարբարոսական, ամբոխային" բանակների շարքը և իր արժանի տեղն է գրավում Հին աշխարհի լավագույն կանոնավոր բանակների շարքում:

2.Հին Հայաստանի ռազմական տնտեսությունն այսուհետ պետք է համարվի իր ժամանակի ամենազարգացած և հզոր տնտեսություններից մեկը, որն ընդունակ է ամբողջությամբ բավարարել բարձրակարգ սպառազինությունով հայոց ավելի, քան 100.000-ոց բանակը:

Վերջապես, հայկական հեծելազորի և աղեղնավորների վաստակած վարպետությունը նշելով, մենք առաջին անգամ տեսնում ենք, որ Տիգրանի ջանքերը Հայաստանում բարձրակարգ ծանր հետևակ ստեղծել հաջողությունով էին պսակվել. Աղձնիքի գլխավոր ճակատամարտն էր այն սահեղ քննությունը, որը հաջողությամբ հաղթահարեցին հայ վահանակիրները:

Այսուհետ, նույնիսկ չհասնելով իրենց աշխարհահռչակ ուսուցիչների՝ հռոմեացիների մակարդակին, հայկական ծանր հետևակն իր ավանդը ունեցավ հայկական զենքի բազում հաղթանակներում:

ՄԱՍ III

ՀԱՅ – ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ.

ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՅՈ, ՊՈՆՏՈՍ՝ ՈՉ

Նկար 7.9. 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի հայ զինվորները՝ աղեղնավոր, կատաֆրակտոս, վահանակիր

Գլուխ 8.
Մ.Թ.Ա. 66 Թ.
ՊՈՄՊԵՈՍԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԾՆՈՒՆԴԸ

69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի 66 թ. իրադարձությունները, 67–66 թթ. Հայաստանում հակատիգրանյան խռովության ընթացքը և 66 – 64 թթ. հայ-պարթևական պատերազմի 66 թ. ռազմարշավը տևել էին 66 թ. գարնան սկզբից մինչև դեկտեմբերի վերջը և ներառում էին արշավներ, ռազմական ընդհարումներ (մարտերն ու խոշոր ճակատամարտեր) և այլ գործողություններ, որոնց ցանկը ներկայացվում է ստորև.

Արշավներ

1. Տիգրան Մեծի զորաբանակների արշավները խռովություն բարձրացրած Տիգրան Կրտսերի ջոկատների դեմ 66 թ. գարնան սկիզբին,
2. Տիգրան Կրտսերի ջախջախված ջոկատների փախուստը Պարթևստան,
3. հայկական բանակի վերադասավորումները Հայաստանի սահմաններին,
4. Միհրդատ Մեդացու հեծելազորի վերադարձը Ատրպատական և նրանց օգնության գնացող հայկական զորաբանակների արշավը Ատրպատական,
5. Հրահատ Գ պարթևաց թագավորի բանակի և նրա դաշնակիցներ Տիգրան Կրտսերի և մեդացի Դարեհի արշավանքը Ատրպատական,
6. Տիգրան Մեծի բանակի ատրպատականյան զորաբանակի շտապ նահանջը Հայաստան Փրաասպայի ճակատամարտից հետո,
7. Հրահատ Գ պարթևաց թագավորի և նրա դաշնակից Տիգրան Կրտսերի արշավանքը Հայաստան,
8. Տիգրան Մեծի զորքերի վերախմբավորման զորաշարժերը

Արտաշատի ճակատամարտից առաջ,
9.պարտված պարթևական բանակի հետապնդումը դեպի Ատրպատականի սահմանները,
10.Տիգրան Կրտսերի շքախմբի փախուստը Պոնտոս՝ Միհրդատ Եվպատորի մոտ, որի պարտությունից հետո, ուղղակի՝ Պոմպեոսի ճամբարը,
11.հայ-հռոմեական զինադադարի նախնական պայմանագրի համաձայն՝ Գնեյոս Պոմպեոսի բանակի արշավանքը Արտաշատ,
12.հայ-հռոմեական համատեղ ձմեռային արշավանք Տիգրան Կրտսերի և Միհրդատ Եվպատորի կողմն անցած Աղվանքի և Իբերիայի թագավորների դեմ:

Ռազմական ընդհարումները
1.մանր մարտեր Հայաստանում Տիգրան Կրտսերի խռովարարների զորաբանակի ստորաբաժանումների դեմ,
2.ճակատամարտ Հայաստանում Տիգրան Կրտսերի խռովարարների զորաբանակի դեմ,
3.մանր մարտեր Հայաստանի հյուսիսում Տիգրան Կրտսերին հարած աղվանացիների և իբերների զորաբանակների ստորաբաժանումների դեմ,
4.հայ-ատրպատականյան բանակի սահմանային մարտերը Ատրպատական ներխուժած պարթևական բանակի դեմ,
5.Փրաասպայի գլխավոր ճակատամարտը,
6.Փրաասպայի անկումը,
7.Ատրպատականից նահանջող հայկական զորաբանակի մարտերը հետապնդող պարթևական զորքերի դեմ,
8.զսպող մարտեր Հայաստան ներխուժած պարթևական բանակի դեմ,
9.Արտաշատ մայրաքաղաքի պաշարումը և գրավելու փորձերի ետ մղումը,
10.Արտաշատի մոտակայքում ծավալված ընդհարումներ հայկական և պարթևական բանակի ստորաբաժանումների միջև,
11.Արտաշատի գլխավոր ճակատամարտը,
12.Պարթևական բանակի հետապնդման ժամանակ ծավալված մարտերը,
13.խոթեցի հայերի և իբերների ճակատամարտը Հայաստանի

սահմանը խախտած Միհրդատ Պոնտացու ջոկատի դեմ,
14.հայկական և հռոմեական բանակների ստորաբաժանումների մարտերը Իբերիայի և Աղվանքի սահմանագլխին աղվանների և իբերների դեմ,
15.Աղվանների դեմ 66 թ. դեկտեմբերի 17-ին Կուրի ափին կայացած հռոմեա-հայկական բանակի գլխավոր ճակատամարտը:

Այլ գործողություններ
1.հայկական բանակի համալրման և (ապստամբությունից հետո) հրամանատարական կազմի զտման միջոցառումները,
2.Միհրդատ Պոնտացուն Հայաստանի թշնամի հայտարարելը և ձերբակալելու հրաման արձակելը Տիգրան Մեծի կողմից,
3.բանակցությունները Պոմպեոսի հետ և զինադադարի նախնական պայմանագրի կնքումը,
4.հայ-հռոմեական դաշնակցային պայմանագրի կնքումը և հանդիսությունների անցկացումը,
5.Տիգրան Կրտսերի ձերբակալումը Պոմպեոսի կողմից,
6.Պոմպեոսի և Տիգրանի կողմից Արևելքում ապագա աշխարհակարգի քննարկումը և վերջնական մշակումը,
7.Պանտիկապեում Միհրդատ Եվպատորի ծավալած հակահռոմեական գործունեությունը,
8.Տիգրան Մեծի և փոքրհայքյան ազնվականության հնարավոր շփումների արդյունքները,
9.հայոց զահաժառանգի ընտրությունը:

Համաշխարհային պատմության համար այդքան կարևոր մ.թ.ա. 66 թ. մասին տեղեկություններ են պահպանվել անտիկ շրջանի մի շարք պատմիչների մոտ, որոնցից մեր հետազոտության համար անկյունաքարային են Դիոն Կասսիոսի, Պլուտարքոսի և Ապպիանոսի երկերը [42, 51, 59, 193, 319]: Այս երկերում տվյալ ժամանակաշրջանին վերաբերող նյութերն այնքան մեծածավալ են, որ հնարավոր չհամարեցինք դրանցից մեջբերումներ անել 8-րդ գլխի սկզբում, այլ տեղադրեցինք «Հավելված»-ի համապատասխան բաժնում (էջ 807):

Մնացած պատմիչների հաղորդած տեղեկությունները միայն լրացնում են մեր հիմնական հեղինակներին:

Մ.թ.ա. I դարի առաջին կեսի հռոմեական պատմությունը, տնտեսությունը, հոգևոր ու նյութական մշակույթը և, վերջապես՝ բանակը արդի պատմագրության կողմից բավականին լավ են ուսումնասիրված: Կուտակված նյութերը և եղած հետազոտությունները թույլ են տալիս բավական լավ պատկերացնել այն հեռավոր ժամանակների հռոմեական հասարակության կյանքը: Բանակի կազմակերպական ձևերի, մարտավարության, կենցաղի իմացությունը մեծապես նպաստում է մեր խնդիրներին՝ հայ-հռոմեական առնչություններում հռոմեացիների մտածելակերպը և պահվածքը վերականգնելիս:

Պատկերն անհամեմատ աղոտ է փոքրասիական և մերձավորարևելյան նյութերում, ապա այստեղ, թե՛ գրավոր, թե՛ հնագիտական նյութի սակավ ներկայացվածության պատճառով:

Պատմագրական և հնագիտական նյութն էլ ավելի է նվազում արևելյան տարածքներում. Պարթևստանի հոգևոր, նյութական և ռազմական իրողությունների վերաբերյալ մենք արդեն առանձնապես շատ տեղեկություններ չունենք:

Հին Հայաստանին վերաբերող անտիկ պատմիչներից մեզ հասած տեղեկությունները, ի տարբերություն նույն ժամանակաշրջանի Պարթևստանի՝ էլ ավելի անչնչան են, իսկ հնագիտական նյութը հիմնականում անհասանելի՝ Արևմտյան Հայաստանի բռնազավթման և հայաթափման հետևանքով: Այս առումով Տիգրանի գործունեությունը երջանիկ բացառություն է, որովհետև, թեպետ և ծայրահեղ միակողմանի, համենայն դեպս նկարագրված է անտիկ հեղինակների կողմից, իսկ տիգրանյան դրամները հայտնաբերվում են Առաջավոր Ասիայի ողջ տարածքում:

Վերջին մեկ ու կես դարում Արևելյան Հայաստանի տարածքում կատարված պեղումների շնորհիվ (ցարական Ռուսաստանի տիրապետության, Խորհրդային Միության և Հայաստանի երրորդ հանրապետության ժամանակաշրջաններում) մեր պատկերացումները Արտաշատ մայրաքաղաքի ու մի շարք այլ քաղաքների և ամրոցների պաշտպանական կառույցների մասին զգալիորեն հստակեցվեցին [13, 22, 44, 57, 61-63, 207, 229]: Այս նյութերը շատ կարևոր են 66 թ.-ին Հայաստանում կատարված ռազմաքաղաքական իրադարձություններն ավելի լավ պատկերացնելու համար:

66 թ.-ին տիգրանյան բանակի դերը Հայաստանի ներքաղաքական կյանքում և տարածաշրջանում տեղի ունեցած տարբեր իրադարձությունների մեջ բացահայտելու, ռազմաքաղաքական իրավիճակի զարգացումների ներքին շարժառիթները հասկանալու, ռազմական գործողությունների ընթացքն ըմբռնելու համար մեզ անհրաժեշտ է ծանոթանալ այն ընդհանուր իրավիճակին, որը ստեղծվել էր Օյկումենեում 66 թ. գարնանը:

8.1.Ռազմաքաղաքական իրավիճակը Օյկումենեում մ.թ.ա. 66 թ.-ի գարնանը

Մ.թ.ա. 66 թ. Օյկումենեում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը մենք քննելու ենք խիստ ընտրովի, ելնելով մեր աշխատության բուն նպատակից՝ վերլուծել Տիգրան Բ Մեծ հայոց արքայից արքայի ռազմական գործունեությունը և նրա գլխավոր գործիքի՝ հայկական բանակի կառուցվածքը, մարտավարությունը և վարած պատերազմների քննական պատմությունը:

8.1.1.Ռազմաքաղաքական իրավիճակը Հայկական տերությունում 66 թ. գարնանը

Տիգրան Բ Մեծ թագավորի ակտիվ ռազմաքաղաքական գործունեության մեջ հստակ զանազանվում է երկու փուլ: Առաջինը՝ 94-69 թթ., երբ Հայաստանը խոշոր և ազդեցիկ թագավորությունից վերածվում է տարածաշրջանի խոշորագույն ուժերից մեկի՝ Հայկական կայսրության և, դաշնակից Պոնտական տերության հետ միասին, հակադրվում է Հռոմեական ու Պարթևական տերություններին: Երկրորդը՝ 69-66 թթ., երբ, չնայած Հռոմի ու Պարթևստանի դեմ անցկացրած իր հաղթական պատերազմներին, տեղի է տալիս՝ ընդունելով Հռոմի ռազմական առավելությունը և նախապատրաստելով հետագա հաշտությունը պարթևների հետ:

66 թ.-ի աշնան երկրորդ կեսից սկսած Հայաստանի արտաքին քաղաքականությունն այլևս աշխարհակալ ամենակարող

ուժի դրսևորումն չէ: 66 թ. վերջից մինչև 56 թ.-ը Հայաստանի տիրակալները հարկադրված եղան անցնել իրենց երկրի համաշխարհային դերի վերագնահատման ցավոտ ուղին: Այս գործընթացի սկիզբը դրվեց 66 թ. աշնանը, ուստի մեզ համար կարևոր է 66 թ.-ի տարեսկզբին տեղի ունեցած իրադարձությունների ընդհանուր գնահատականը:

8.1.1.1.Ռազմաքաղաքական իրավիճակը Հայաստանի ներսում 66 թ. գարնանը

66թ. գարունը հայ հասարակությունն ընդունեց տագնապի և սպասումների հակադիր զգացումներով: Իր մեծությամբ և համառությամբ անանախադեպ հակատիգրանյան ելույթի մայրաքաղաքային մասը ջախջախվել էր դեռ 67 թ.-ի աշնանը, սակայն այն գլխատված չէր: 67-66 թթ. ձմռանը և 66 թ.-ի վաղ գարնանը խռովարարների բոլոր ուժերը սկսեցին կենտրոնանալ Հայկական կայսրության երկու վայրերում. հյուսիսում՝ Աղվանքում, որտեղ թագավորում էր Տիգրան Կրտսերի ընկեր և գաղափարակից Աղվանքի թագավոր Օրոյսեսը [42, 51, 59] և, հավանաբար, Պարթևստանի սահմանագլխում, որտեղից, պարտության դեպքում, հեշտությամբ կարելի էր անցնել պարթևների մոտ:

Միհրդատ Պոնտացին իր մասնակցությունը խռովության նախապատրաստմանը չէր բացահայտում (այլապես դժվար թե կարողանար Տիգրան Մեծին աշնանը խնդրել ապաստանի մասին):

Տիգրան Կրտսերի ընդվզումը հոր հանդեպ կարելի է բացատրել միայն իշխանատենչությամբ: Հայրը՝ Տիգրանը, երկրի նավն այնքան վստահ էր վարում քաղաքականության փոթորկալի ծովում, որ նման վարպետության հասնելու համար կրտսեր Տիգրանը դեռ տարիներ շարունակ պետք է հմտանար:

Տիգրան Կրտսերին չկանգնեցրեց իր եղբայրների դժբախտ ճակատագիրը և արքայից արքայի հզոր լրտեսական ցանցը, որը որսում էր Հայկական կայսրությունում և աշխարհում կատարվող բոլոր դեպքերի մասին տեղեկությունները, նույնիսկ արքային նվիրված հզոր բանակում:

Հայ ավագանու այն մասը, որը հարեց արքայազնին, դժվար թե այդպիսի քայլի դիմեր հանուն որևէ քաղաքական համոզմունքի. անհնար էր ավելի վճռական վարել պատերազմը հռոմեացիների դեմ, քան արքայից արքան, իսկ պատերազմը դադարեցնել հնարավոր չէր հակառակորդի հետ շփման բացակայության պատճառով: Վերջապես, եթե Միհրդատը գաղտնի օժանդակում էր իր թոռանը, ապա ոչ նրա համար, որ վերջինս հրաժարվի հռոմեացիների դեմ ընթացող պայքարից:

Միհրդատը, կարծում եմ, բացարձակապես հիմք չուներ իր փեսային մեղադրել պայքարից խուսափելու մեջ: 68-67 թթ. ռազմական հաջողությունների ճարտարապետը Տիգրան Մեծն էր, որի ջանքերի շնորհիվ Միհրդատը կրկին հաստատվեց իր պապական երկրում՝ Պոնտոսում: Հիմնական պատճառը, հավանաբար, Հայաստանի մարդկային և նյութական միջոցները մինչև վերջ՝ «մահ կամ հաղթանակ» կարգախոսով հակահռոմեական պայքարի մեջ Տիգրան Կրտսերի միջոցով ներգրավելու Միհրդատի ցանկությունն էր: Նույնիսկ այստեղ Միհրդատը սխալվում էր՝ Տիգրան Կրտսերի ողջ հետագա գործունեությունը և պահվածքը, մինչև 58 թ. կամ 52 թ.-ին Իտալիայում ռազմական ընդհարման ժամանակ նրա զոհվելը, վկայում են այն մասին, որ Տիգրան Կրտսերի գերնպատակը ոչ թե անձնուրաց պայքարն էր հռոմեացիների դեմ, այլ իշխանության հասնելն էր: Անհավանական է թվում, որ Տիգրան Կրտսերը կույր գործիք դառնար իր հոչակավոր պապի ձեռքին:

Այսպիսով, Տիգրան Կրտսերի դավադրության հիմքում ընկած էր ոչ թե Հայաստանի ներ- կամ արտաքին քաղաքական սեփական ուղու տեսլականը, այլ բնավորության գծերը՝ անսահման փառամոլությունը և իշխանատենչական մոլուցքը:

Տիգրան Կրտսերի շուրջը սկսեցին հավաքվել Տիգրան Մեծից դժգոհ բոլոր տարրերը և պաշտոնների հավակնող, սակայն ստվերում մնացած ավագանու մի մասը: Այս գործում թոռանը օգնեց նախորդ տարիներին հայոց արքունիքում պապի անցկացրած քայքայիչ գործունեությունը:

Միհրդատ Պոնտացու ծրագրի շարժառիթներում կարող էր լինել նաև այն հանգամանքը, որ նա նույնպես հայոց, տվյալ դեպքում, Փոքր Հայքի թագավոր էր: Այստեղից կարող էր բխել նրա ծրագիրը հօգուտ Տիգրան Կրտսերի՝ «համահայկական թեկնածուի» օգտին, ընդդեմ «անխոհեմ համառ ծերունու, որին

պետք է զահազրկել, բայց ոչ ոչնչացնել»: Հայ ավագանու մի մասը հետևեց այս հորդորներին: Տիգրան Կրտսերին հարող Աղվանքի և Իբերիայի ազնվականության կողմնորոշումներում, բացի Միհրդատ Պոնտացու հորդորները, մեծ դեր կարող էր խաղալ Տիգրան Կրտսերի կողմից նրանց լիակատար անկախություն տալու խոստումը:

66 թ. գարնանը խռովարարները կրկին կարողացան զգալի զինված ուժեր հավաքել: Հայաստանի նախորդ տասնամյակների անանախադեպ զարգացումը և հզորացումը ժողովրդից և ավագանուց հսկայական ջանքեր էին պահանջում: Ոչ բոլորն էին ցանկանում այսպիսի ջանքեր գործադրել:

Կարծում եմ, որ բանակը նվազագույնն էր ներգրավված խռովարարների գործողությունների մեջ: Տասնամյակներ շարունակ նա փայփայվում և վարձատրվում էր արքայից արքայի կողմից: Տիգրան Մեծի անձը աստվածացված էր հատկապես բանակում, նա անձամբ էր առաջնորդում բանակը մարտի դաշտում [42], իր զինվորների մոտ հիացմունք առաջացնելով:

Այսպիսով, Տիգրանը դեռ 67 թ. աշնան կեսին վերադարձել էր Արտաշատ, որտեղ ջախջախել և քաղաքից դուրս էր քշել խռովարարների մերձավորներից կազմված ջոկատները և նրանց հարած Արտաշատի կայազորի և այլ տեղերում տեղադրված որոշ զորամասերի մնացորդները, որոնք ճողոպրել էին հյուսիս կամ արևմուտք՝ Պոնտոսի կողմերը:

66 թ. գարնանը մի քանի աննշան ընդհարումներից հետո, հակամարտությունը լուծվեց բաց ճակատամարտում, որտեղ արքայից արքայի մարտերում կոփված գնդերը գլխովին ջախջախեցին խռովարարների ուժերը: Մի մասը կոտորվեց մարտի դաշտում, մյուսները մահապատժի ենթարկվեցին ճակատամարտից հետո: Տիգրան Կրտսերն իր կողմնակիցների մի մասով փախավ Պարթևստան, որտեղ սրտաբաց ընդունելություն գտավ պարթևաց թագավորի կողմից՝ ավելի պատեհ առիթ թուլացնել տիգրանյան Հայաստանը վերջինս այլևս կարող էր չունենալ:

66 թ. գարնան վերջին երկիրը խաղաղվեց և Տիգրան Մեծը կարող էր իր ամբողջ ուժերը ուղղել արտաքին քաղաքական խնդիրների լուծմանը:

8.1.1.2.Ռազմաքաղաքական իրավիճակը արևելյան սահմաններին 66 թ. գարնանը

Հայաստանից արևելք գտնվում էր Ատրպատականը՝ մեծությամբ Տիգրանի կայսրության երկրորդ (Սիրիայից հետո), իսկ ռազմական կարողություններով՝ առաջին, ենթակա երկիրը: Ատրպատականի թագավոր Միհրդատ Մեդացին՝ (Մարը) Տիգրանի փեսան, հավատարիմ վասալը և նրա հուսալի զինակիցն էր:

66 թ. գարնանը ճակատամարտում պարտություն կրած Տիգրան Կրտսերն իր կողմնակիցների հետ փախավ Պարթևստան, որտեղ գրկաբաց ընդունվեց Հրահատ Գ արքայի կողմից: Պարթևները, որոնք արդեն ստացել էին Հայաստանի դեմ ռազմական դաշինք ստեղծելու Պոմպեոսի առաջարկը, լուրջ նախադրյալներ ստացան վերջ դնելու Արևելքում հայոց ռազմական գերազանցությանը:

Տիգրան Կրտսերի փախուստից հետո, Ատրպատականի և Պարթևստանի սահմանագլխին ռազմական լարվածությունը խիստ աճեց: Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ Միհրդատ Մեդացին որպես Տիգրանի զորավար մասնակցելով 69–66 թթ. հայ-հռոմեական պատերազմի բոլոր նշանավոր պատերազմներին, գրեթե երեք տարի գործնականում բացակայել էր իր թագավորությունից:

Բոլոր ժամանակաշրջաններում և բոլոր երկրներում, երբ երկրի գահակալը երկար բացակայում է երկրից, նրա իշխանությունը այս կամ այն չափով թուլանում է: Ատրպատականը, բնականաբար, բացառություն չէր, հատկապես, երբ նրա հարևանությամբ գտնվում էր ազգակից, սակայն հայ-մեդական մերձեցման կատաղի թշնամի Պարթևստանը: Վերջինս խրախուսում էր հակահայկական բոլոր կենտրոնախույս շարժումները Ատրպատականում և օրինավոր արքա Միհրդատ Մեդացու դեմ համախմբում բոլոր հակադիր ուժերը:

Ատրպատականի վրա կախվեց պարթևական հարձակման վտանգը, որի դեմն առնելու համար Հայաստանից Փրաասպա պետք է տեղափոխվեր ոչ միայն ճակատամարտերում կոփված Միհրդատ Մեդացու խիստ մարտունակ հեծելազորը, այլև մեծաքանակ հայկական զորաբանակները:

8.1.1.3.Ռազմաքաղաքական իրավիճակը հարավարևելյան սահմաններին 66 թ. գարնանը

66 թ. գարնանը Հայաստանի սահմանակից հարավարևելյան երկրները՝ Ադիաբենեն ու Օսրոյենեն անկախ էին ինչպես Տիգրան Մեծից, այնպես էլ պարթևներից: Դեռ 69 թ. ձմռանը – 68 թ. գարնանը նրանք կապ էին հաստատել Լուկուլլոսի հետ՝ ձևականորեն անցնելով նրա կողմը, սակայն հայ-հռոմեական պատերազմի ընթացքին ոչ մի միջամտություն նրանք չցուցաբերեցին: Երբ 68թ.-ի աշնանը Տիգրանը վերադարձավ Աղձնիք, իսկ 67 թ. գարնան վերջին մտավ Միգդոնիա՝ Մծբին, Ադիաբենեի ու Օսրոյենեի թագավորները նախընտրեցին ոչ թե ներկայանալ և իրենց հպատակությունը հայտնել Տիգրանին, այլ՝ սպասել իրադարձությունների հետագա զարգացումներին:

Հայկական, Պարթևական և Հռոմեական տերությունների շահերի կենտրոնում գտնվող, այս փոքր և ռազմականորեն թույլ պետություններն իրենց ապագան պարզելու համար հարկադրված էին սպասել տերությունների ծավալվող պայքարի ելքին:

66 թ. գարնանը Միգդոնիայում, Կորդուքում և Աղձնիքում գտնվող հայկական զորքերը մշտական սպառնալիք էին Օսրոյենեի և Ադիաբենեի անկախությանը, իսկ հարավից նրանց սպառնում էին իրենց հզորությունը գրեթե նախկին ծավալով վերականգնած պարթևները:

Այսպիսով, 66 թ. գարնանը, բացի Ատրպատականում գտնվող մի խոշոր զորամիավորումից, բոլոր հայկական զորքերը Տիգրանը կենտրոնացրել էր Հայաստանում:

Տիգրանը վերջնականապես ամրացրեց իր իշխանությունը Հայաստանի հարավում՝ Կորդուքի մեծ մասում և Միգդոնիայի հյուսիսային մասում՝ Հայոց Միջագետքում: Տիգրանի Հայկական կայսրության ենթակայության տակ էր մնացել միայն Ատրպատականը (Հետագայում, քննելով Հայաստանի ռազմաքաղաքական պատմության մ.թ.ա. I – մ.թ. V դդ. դրվագները, մենք կտեսնենք, թե ինչ ջանքեր պետք է թափեին Հռոմը և Իրանը Հայաստան ու Ատրպատականը միմյանցից հեռու պահելու համար: Ամեն անգամ, երբ այս միությունը կայանում էր, հզորացած Հայաստանը միանգամից փոխում էր իր պահվածքը իր հարևան գերտերությունների նկատմամբ):

8.1.1.4. Ռազմաքաղաքական իրավիճակը հարավարևմտյան սահմաններին 66 թ. գարնանը

66 թ. գարնանը Կոմագենեում, Դաշտային Կիլիկիայում, Սիրիայում և Փյունիկիայում իրադրությունը կտրուկ փոխվել էր հօգուտ հռոմեացիների: 67 թ.-ին ծովահենների դեմ Պոմպեոսի տարած վճռական հաղթանակը և չտեսնված մեղմ վերաբերմունքը այս պատերազմում գերի ընկածների հետ, հռոմեացիների հեղինակությունը Դաշտային Կիլիկիայում, Սիրիայում և Փյունիկիայում խիստ բարձրացրեցին:

Դեռ 69 թ.-ին Լուկուլլոսին հարած և իրեն անկախ հռչակած Կոմագենեի թագավորը, բնականաբար, չէր ցանկանում կրկին ենթարկվել Տիգրանին: 66 թ. գարնանը հայկական խոշոր զորամիավորումները կանգնած էին հարևան Ծոփքում և, եթե նրանք ներխուժեին Կոմագենե, դժվար թե այս երկրում գտնվեր մի ուժ, որ կարողանար կասեցնել այդ գրոհը. Տիգրանը Կոմագենեում, անկասկած, դեռ շատ կողմնակիցներ ուներ: Հելլենականացված կիսահայկական այս ոչ մեծ թագավորությունը միացավ հակահայկական կոալիցիային, որի հիմնական ուժը հռոմեական Լեռնային Կիլիկիայում գտնվող Մարկիոս Ռեքսի 3 լեգեոններն էին իրենց դաշնակիցներով՝ մոտ 35-40.000 զինվոր:

Նույն հռոմեասեր հակահայկական տրամադրություններն էին տիրում նաև Սիրիայում, որտեղ Սելևկյանների հերթական շառավիղները սկսել էին իրենց արդեն սովորական դարձած պայքարը միմյանց դեմ՝ սեփական երկիրը անապատի արաբական քոչվոր ցեղերի պարբերական հարձակումների թողնելով: Տիգրան Մեծի դեմ Հռոմը լուրջ դիվանագիտական աջակցություն ցույց տվեց Անտիոքին, իսկ Սիրիան գործնականորեն կարող էր ուժեղացնել Հռոմի հակահայկական կոալիցիան 10-15.000 զինվորով:

Փյունիկիան այս պայքարին գրեթե ներգրավված չէր և

վայելում էր գրեթե լիակատար անկախություն, սակայն պետք է, որ զգուշանար ակտիվացած Հուդայից և Նաբաթեական թագավորությունից:

Հաշվի առնելով, որ Կոմագենեն կարող էր մոբիլ դաշտ հանել մինչև 10-15.000 զինվոր, կարող ենք համարել, որ հակահայկական ուժերն այս ուղղությունում հասնում էին 55-70.000 զինվորի, ինչը լուրջ խոչընդոտ էր Տիգրանի համար այս տարածաշրջանում ակտիվ քաղաքականություն վարելու համար: Այս ամենին պետք է գումարել նաև արևելյան Միջերկրածովքում գտնվող Պոմպեոսի բանակի տասնյակ հազարավոր զինվորներին:

Տիգրանն, անշուշտ, գիտակցում էր իր ուժերի սահմանափակությունը. նա հարկադրված էր ընտրել կամ՝ արևմտյան, կամ՝ հարավարևմտյան ուղղությունը և, բնականաբար, նա ընտրեց արևմտյանը՝ անհրաժեշտ էր վերջացնել պատերազմը Լուկուլլոսի դեմ և վերականգնել Պոնտոսի թագավորությունը:

Պետք է նշել, որ Սիրիայի քաղաքների վրա համառորեն հարձակվող քոչվոր արաբները կարող էին լինել նաև Տիգրանի դաշնակիցները և հարձակվեին Սելևկյանների վրա արքայից արքայի ցուցումով:

Այս իրավիճակից ելնելով, Տիգրանը հարկադրված էր Ծոփքում պահել մի հզոր զորաբանակ, հավանաբար, նորանշանակ Ծոփաց բդեշխի հրամանատարությամբ:

8.1.1.5. Ռազմաքաղաքական իրավիճակը Արևմուտքում՝ մասնավորապես Պոնտոսում 66 թ. գարնանը

66 թ. գարնանը Պոնտոսը ոչ միայն լրիվ ազատագրված էր հռոմեացիներից, այլև պոնտական ջոկատները գրավել էին Կապադովկիայի զգալի մասը և ահ ու սարսափ էին տարածում Բիթանիայի սահմանամերձ շրջաններում: Սակայն այս իրավիճակը ստեղծվել էր ոչ թե պոնտական բանակի հզորության, այլ հռոմեացիների կաթվածահար վիճակի հետևանքով: Հռոմի դաշնակիցների վրա Միհրդատ Եվպատորի հարձակումներին դիմադրելու հռոմեական հզոր ուժերի անկարողությունը պայմանավորված էր մի երևույթով, ինչը հետո՝ XX դարում, կանվանվի հրամանատարության ճգնաժամ (кризис командования), որը ժամանակավոր բնույթ էր կրում: Տարածաշրջանում ամենահզոր հռոմեական բանակը, որը թաքնվել էր թշնամուց Գալատիայում, չէր վստահում իր հրամանատարին՝ Լուկուլլոսին: Հռոմից նշանակված մնացած պաշտոնյաներն ամենևին չէին շտապում իրենց ձեռքը վերցնել կառավարման ղեկը: Բոլորը սպասում էին Պոմպեոսին, որին 66 թ.-ի հունվարից Մանիլիոսի օրենքով արդեն հանձնված էր հերթական՝ չորրորդ պոնտական պատերազմի գերագույն հրամանատարությունը:

Պոնտոսից Տիգրանի զորաբանակների հեռանալուց հետո Միհրդատն ուներ 3.000-ոց հեծելազոր, որից մոտ 2.000 զրահապատ և 30.000 հետևակային, որից գրեթե 5-10.000 հետաձիգ, մնացածը՝ հռոմեական լեգեոնների ձևով կազմակերպված ծանր հետևակ՝ 5 լեգեոն, որի հրամանատարներն ու սպաները վտարանդի հռոմեացի սպաներ էին:

Իբերիայի և Աղվանքի թագավորները, չնայած, Միհրդատ Եվպատորի հետ դաշնակցային կապերին, վերջինիս ռազմական օժանդակություն ցույց չտվեցին: Առանց մեծաթիվ և մարտունակ մեծհայքյան հեծելազորի դիմակայել Պոմպեոսի գրոհին պոնտական բանակը չէր կարող:

Չնայած իր դեմ ձեռնարկած թշնամական գործողություններին, Տիգրանը շահագրգռված չէր Միհրդատ Պոնտացու պարտության մեջ: Տիգրանին կարևոր էր պահպանել Պոնտոսի նույնիսկ խիստ թուլացած թագավորությունը որպես միջանկյալ պետություն իր և Հռոմեական հանրապետության միջև:

66 թ. գարնան երկրորդ կեսին Գնեոս Պոմպեոսը հսկայական հռոմեական բանակով վերջապես ներխուժեց Պոնտոս. սկսվեց չորրորդ պոնտական պատերազմը, որում Միհրդատի պարտությունը միայն ժամանակի հարց էր:

8.1.1.6. Ռազմաքաղաքական իրավիճակը հյուսիսային սահմաններին 66 թ. գարնանը

66 թ. գարնանը Հայաստանի հյուսիսում՝ Կողքիսում, Իբերիայում և Աղվանքում ստեղծված իրավիճակը, նույնպես անբարենպաստ էր հայկական պետության համար:

Կողքիսը մտնում էր Պոնտոսի մեջ և գտնվում էր Միհրդատի բացարձակ հսկողության տակ: Իբերիան և Աղվանքը, հարելով Տիգրան Կրտսերին, դեռ 67 թ. աշնանը ապստամբել էին Տիգրանի դեմ, հավանաբար զորք տրամադրել ապստամբ արքայազնին և վերջինիս պարտությունից հետո նահանջել իրենց երկրները: 66 թ. գարնանը նրանք անկախացել էին Տիգրան Մեծի կենտրոնական իշխանությունից, դաշնակցել Միհրդատ Եվպատորի հետ և հարկադրել Տիգրան Մեծին բավականին ուժեղ զորաբանակ պահել Գուգարքում, որի հրամանատարն էր Գուգարքի հին (եթե չէր անցել Տիգրան Կրտսերի կողմը) կամ նոր (եթե նախկինից ազատվելու հիմքեր կային) նշանակված բդեշխը:

Տիգրան Մեծն այնքան լուրջ հոգսեր ուներ հռոմեացիներից և պարթևներից եկող վտանգները չեզոքացնելու գործում, որ պարզապես չէր կարող ժամանակ և մեծ զորք տրամադրել հյուսիսում առաջացած ապստամբությունը ճնշելու համար: Նա բավարարվեց զսպող գործողություններով, ապագային թողնելով ապստամբ հյուսիսայիների դեմ հաշվեհարդարը:

Աղվանական և իբերական զորքերն իրենց մարտունակությամբ բացարձակ զիջում էին հայկական և ատրպատականյան զորքերին, սակայն իրենց գործողություններով զգալիորեն բարդացնում էին Հայկական կայսրության առանց այդ էլ շատ լուրջ ռազմաքաղաքական իրավիճակը:

Իբերիան և Աղվանքը, որոնք դեռ 67 թ. աշնանը հարել էին Միհրդատ Պոնտացուն ու Տիգրան Կրտսերին և, անկախանալով, դուրս եկել Տիգրանի գերիշխանությունից՝ գրեթե վերջնականապես քայքայեցին Հայկական կայսրությունը, որի կազմում (Կորդուքը ու Միգդոնիան անմիջապես մտնում էին Մեծ Հայքի կազմի մեջ որպես նահանգներ) մնացել էր միայն Ատրպատականը, այն էլ ավելի շատ որպես դաշնակից: 69 թ. աշնանից սկսած Տիգրանից անջատվել էին Սիրիան՝ Դաշտային Կիլիկիայով և Փյունիկիայով, Ադիաբենեն, Հաղրիենեն, Օսրոյենեն և Կոմագենեն:

67 թ.-ի գարնանից Տիգրանն բավարար ռազմական ուժ ուներ իր իշխանությունը անկախացած թագավորություններում վերահաստատելու համար, սակայն հաշվի առնելով հնարավոր պարթևական և հռոմեական միջամտությունը՝ խելամտորեն ձեռնպահ մնաց այդ քայլից:

66 թ. գարնանը Հայկական կայսրությունը, որն արդեն բաղկացած էր միայն բուն Մեծ Հայքից և Ատրպատականից, բոլոր կողմերից շրջապատված էր անբարյացակամ կամ թշնամական երկրներով: Սպասվում էր անզիջում և համառ պայքար, որի ելքը մեծապես կախված էր հայկական պետությունը ղեկավարող վերնախավի և հայոց բանակի արիությունից և տաղանդից:

8.1.2. Հռոմեական տերություն

66 թ. գարնանը Հռոմեական տերության ռազմաքաղաքական իրավիճակը կտրականապես բարելավվեց՝ վերացավ տարիներ շարունակ Հռոմին սպառնացող ծովահեների վտանգը: Պոմպեոսի մեկ հզոր կործանիչ հարվածով ոչնչացվեց հանրապետության բարեկեցությանը սպառնացող խոշորագույն վտանգներից մեկը: Օյկումենեի հզորագույն տերությունը վերջապես կարողացավ իր ողջ ուշադրությունը կենտրոնացնել Փոքր Ասիայում և Սիրիայում կատարվող իրադարձությունների վրա: Դրան նպաստեցին Հռոմի ներքին կյանքում և հռոմեական Արևելքում 66 թ. գարնան դրական տեղաշարժերը:

8.1.2.1. Ռազմաքաղաքական իրավիճակը Հռոմեական հանրապետության ներսում 66 թ. գարնանը

66 թ. գարնանը ներքաղաքական իրավիճակը Հռոմում պայմանավորված էր մի շարք հանգամանքներով.

- 70 թ.-ին Պոմպեոսը համաձայնության էր հասել Կրասոսի և պոպուլյարների հետ, որի շնորհիվ ընտրություններին պարտության էին մատնել օպտիմատներին: 69 թ. ծերակույտից վտարվել էին Սուլլայի կողմնակիցները, 67 թ.-ին Պոմպեոսն արտակարգ լիազորություններ էր ստացել ծովահեների դեմ պատերազմում, իսկ 66 թ.-ի հունվարին՝ անսահմանափակ իշխանություն Արևելքում Միհրդատի դեմ պատերազմ վարելու համար,
- Պոմպեոսը և Կրասոսը կարողացան վերացնել Սուլլայի

առաջարկած օրենքներից ամենահակաժողովրդականները և վերականգնել ժողովրդական տրիբունների իրավունքները, վերականգնել ցենզորների պաշտոնը, դատարաններ մտցնել հեծյալների և պլեբսի ներկայացուցիչներին և թույլ կապալով տալ շարժական և անշարժ գույքը Ասիա նահանգում (հիշենք ինչ պայքար էր վարում կապալառուների դեմ Լուկուլլոսը),

- Սուլլայի հավատարիմ գործակից Կատիլինան, որը 68 թ. նշանակվել էր Աֆրիկա նահանգի պրետոր, երկու տարի հետո վերադարձվել էր Հռոմ և մեղադրվել նահանգն անբարեխիղճ կառավարելու մեջ: 66 թ. գարնանը նա դեռ չէր հասցրել իր հակակառավարական դավադրության թելերը հյուսել և Հռոմի քաղաքական կյանքը իր զինված ելույթով պղտորել:

Այսպիսով, 66 թ. գարնանը Հռոմի ներքաղաքական կյանքում վերջացել էին անցյալի փոթորիկները և չէին սկսվել նորերը (նրանք կսկսվեն մեկ տարի անց), որը մեզ թույլ է տալիս խոսել Հռոմի քաղաքական կյանքում տիրող խաղաղության մասին, մի միճակ, որը մեծապես ավելացնում էր Հռոմի արտաքին ռազմաքաղաքական կարողությունները:

8.1.2.2. Ռազմաքաղաքական իրավիճակը Հռոմեական հանրապետության Արևելքում 66 թ. գարնանը

66 թ. գարնանը բազմաչարչար Փոքր Ասիան մի փոքր շունչ քաշեց՝ Պոնտոսում և Կապադովկիայում գրեթե դադարեցին ծավալուն ռազմական գործողությունները: Պոնտոսը լրիվ վերահսկվում էր Միհրդատ Զ Եվպատորի կողմից, որը եռանդուն վերականգնում էր իր կողոպտված երկրի ռազմական կարողությունները: Միաժամանակ, պոնտական բանակի որոշ ստորաբաժանումներ թափանցել էին Բիթանիա և Կապադովկիա, սակայն խոշոր ընդհարումներ տեղի չէին ունենում: Միհրդատի գերխնդիրն էր մինչև 66 թ. գարնան վերջն ունենալ հնարավորինս մեծ ու մարտունակ բանակ:

Կապադովկիայում, որտեղից Տիգրանը դուրս էր եկել դեռ 67 թ. աշնանը, ստեղծվել էր հետևյալ իրավիճակը. հյուսիսային մասերում հաճախ հանդիպում էին պոնտացիների առանձին ջոկատներ, հռոմեացիները սահմանափակվում էին Կապադովկիայի արևմտյան սահմանների վերահսկողությամբ: Սահմանամերձ Ծոփքում, Եփրատի ափին, կազմ ու պատրաստ կանգնած էին հայկական զորքերը:

Պոմպեոսը 67 թ. ջախջախել էր կիլիկյան ծովահեններին անսովոր կարճ ժամկետում՝ երկու ամսում, սակայն դրան նախորդել էր մի քանի ամիս տևած նախապատրաստական փուլը: Պոմպեոսի հաջողությանը նպաստեցին մի շարք հանգամանքներ.

1.Ծովահեների դեմ պայքարի համար Հռոմի ներդրված վիթխարի միջոցները և ռազմական ուժը,

2.Պոմպեոսի արտակարգ կազմակերպական ունակությունները,

3.Դաշնակից արքաների ռազմավարական պարտությունը (Տիգրան Մեծ արքայից արքայի հաղթանակը 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի 68 և 67 թթ. ռազմարշավներին ընդհանուր անբարենպաստ վիճակը մեղմացրեց, սակայն չփոխեց), որի հետևանքով ծովահեները զրկվեցին իրենց շատ անհրաժեշտ օգնությունից: Ծովահեների համար վտանգավոր էր հատկապես Դաշտային Կիլիկիայի հանդեպ Տիգրանի վերահսկողության կորուստը. այն ծովահեների քաղաքները և բազաները անպաշտպան էր թողնում ցամաքային հարձակումներից,

4.Պոմպեոսի բնավորության արտակարգ գծերը՝ մեղմությունը, արդարամտությունը և մարդասիրությունը: Պոմպեոսը ծովահեների խնդիրը ցանկանում էր լուծել ոչ թե նրանց ոչնչացնելով, այլ նրանց գործունեությունը վերակողմնորոշելով խաղաղ հունի մեջ:

66 թ. գարնանը Պոնտական պատերազմը վարելու իրավունքը հանձնվեց Պոմպեոսին և, մարտական գործողությունները Պոնտոսում շուտով վերսկսվեցին:

Ստանձնելով հռոմեական Արևելքի գերագույն հրամանատարությունը և Բիթանիայի ու Լեռնային Կիլիկիայի ղեկավարությունը, Պոմպեոսը եռանդագին կարգավորեց կառավարումը և կարգի բերեց բանակը: Նախ, նա ժամանեց Գալատիա՝ Լուկուլլոսի մոտ, ըստ էության պաշտոնանկ արեց նրան և միայն 5 կոհորտով՝ 1.600 լեգեոներներով վերջինիս ուղարկեց Իտալիա, որից հետո ետ կանչելով Լուկուլլոսի ժամկետանց լեգեոներնե-

ին, թեթևացեներին և հեծյալներին՝ իր բանակը համալրեց մարտական մեծ փորձ ունեցող զինվորներով:

66 թ. գարնան երկրորդ կեսին Գնեոս Պոմպեոսն իր ուժերի կեսից ավելին կենտրոնացնելով մի հսկայական բանակում, հարձակվեց Պոնտոսի՝ Միհրդատ Եվպատորի վրա:

66թ. գարնանը Պոմպեոսն անհաշտ և թշնամաբար էր վերաբերում Տիգրան Մեծին, սպառնալով, որ ինքը նրան կապանքներով կհանգցնի Հռոմ:

8.1.3.Պարթևական տերություն

8.1.3.1. Ռազմաքաղաքական իրավիճակը Պարթևական տերությունում 66 թ. գարնանը

66 թ. գարնանը Պարթևական տերությունը վերելք էր ապրում: 69 թ.-ին մահացած Սանատրուկին փոխարինել էր նրա որդին՝ Հրահատ Գ-ն: Նա դրսևորեց լավ կառավարչի և կարող զինվորականի իր կարողությունները: Պարթևական տերության համար ծայրամասերի սովորական դարձած անհնազանդությունը և ներարքունական խարդավանքները կասեցվեցին ամենայն վճռականությամբ: Երեք տարի հետո՝ 66 թ.-ի գարնանը, Պարթևստանը միջազգային ասպարեզ դուրս եկավ զգալիորեն ուժեղացած և շատ ագրեսիվ:

8.1.3.2. Ռազմաքաղաքական իրավիճակը Պարթևական տերության արևելյան սահմաններին 66 թ. գարնանը

Մինչև Պարթևական տերության արևմտյան սահմաններին կատարվող իրադարձություններին անդրադառնալը, փորձենք պատկերացնել, թե ինչ իրավիճակ էր ստեղծվել արևելյան սահմաններին 66 թ. գարնանը:

Պարթևստանի արևելյան հարևանները շատ շուտ զգացին իրենց անվանի հարևանի խիստ աճած ռազմական հնարավորությունները: Դրա հետ մեկտեղ, 68 թ.-ից թուլացել էր նրանց կապը Տիգրան Մեծի հետ, որը նախկինում սակարաուկներին թույլ էր տալիս հայոց արքայից արքայի հետ համատեղ աքցանի մեջ պահել Պարթևստանը: Այդ ամենը նպաստեց Պարթևստանի թագավորին խաղաղություն պահպանել իր տերության արևելյան սահմաններում և իր ուժերը կենտրոնացնել Արևմուտքում:

8.1.3.3. Ռազմաքաղաքական իրավիճակը Պարթևական տերության արևմտյան սահմաններին 66 թ. գարնանը

66 թ. գարնանը Պարթևստանն իր արևմտյան սահմաններին ուներ հռոմեացիներին ծանր հակամարտությունում հաղթած Հայկական կայսրությունը, որի մասը կազմող Ատրպատականը պարթևները սովոր էին համարել իրենց երկրի բաղկացուցիչ մասը, անկախացած Աշիաբենեն և Օսրոյենեն, հավանաբար հայկական վերահսկողությունից դուրս էր մնացել նաև Միգդոնիայի ամենահարավային սահմանին գտնվող Հաղրիենեն: Այս ոչ մեծ թագավորությունները ներխուժելու պարթևների փորձը կարող էր հանդիպել հայերի զինված դիմադրությանը, որին դիմակայելու համար պարթևներն իրենց դեռ պատրաստ չէին համարում: Հայերի հետ բազմաթիվ անհաջող ճակատամարտերը որոշակի զգուշություն էին առաջացրել պարթևների մոտ: Իր երկրից հռոմեացիներին դուրս վտարած հայոց արքայից արքան պարթևների համար շատ լուրջ և վտանգավոր հակառակորդ էր:

Սիրիայի սահմանամերձ շրջաններում պարթևներն իրենց զուսպ էին պահում, իսկ Սիրիական անապատի արաբների վրա, հավանաբար, որոշ ճնշում էին գործադրում, որպեսզի ստիպեն համագործակցել իրենց հետ (ժամանակին նույն քաղաքականությունն արաբների հանդեպ վարել էր նաև Տիգրան Մեծը):

66 թ. գարնանը, ստանալով Հայաստանի դեմ համատեղ պատերազմ սկսելու Պոմպեոսի առաջարկը, պարթևները խիստ ոգևորվեցին և սկսեցին նախապատրաստվել ռևանշին: Շուտով Տիզբոն հասավ նաև Տիգրան Մեծից պարտություն կրած Տիգրան Կրտսերը և Հրահատ Գ-ն ընտրություն կատարեց հօգուտ պատերազմի. Պարթևստանը լի էր իր մեծապետական դիրքը վերականգնելու վճռականությամբ:

8.2. Խռովարարների դեմ պատերազմի հաղթական ավարտը Հայաստանում 66 թ. գարնանը

66 թ. գարնանը Տիգրան Մեծին հավատարիմ զորքերի և Տիգրան Կրտսերի ապստամբ ուժերի միջև ռազմական գործողությունները վերսկսվեցին: Տիգրան Կրտսերի պարտությունը անխուսափելի էր՝ նա չէր կարող դիմակայել Օյկումենեի հզորագույն բանակներից մեկի գրոհին: Վճռական ճակատամարտում Տիգրան Կրտսերը ծանր պարտություն կրեց և փախավ ռազմի դաշտից: Պարտված խռովարարները ցրվեցին, աղվանական ջոկատները փախան հյուսիս, իսկ Տիգրան Կրտսերն իր համախոհներով՝ Պարթևստան:

Տիգրան Կրտսերի նահանջող զորքերի երթուղին դժվար է կռահել՝ անտիկ հեղինակները այդ մասին մեզ ոչ մի տեղեկություն չեն թողել [42, 51, 59]: Հավանաբար նահանջը եղել է Ատրպատականի վրայով, պակաս հնարավոր է Մեծ Զաբի հոսանքով դեպի Ադիաբենե, որովհետև Նոր Շիրականում Տիգրան Կրտսերի ջոկատներին կարող էր ոչնչացնել տեղի հայկական հզոր և շարժուն զորաբանակը:

Տիգրան Կրտսերը տակավին երիտասարդ էր, երբ հայտնվեց միջազգային քաղաքականության բարդ հորձանուտում, փորձառության պակասը և բնավորության գծերը նրան կործանման տարան: (Հայկ Հակոբյանը լուրջ բարդություններ ունի ժամանակագրության հետ, կարծելով, որ «մ.թ.ա. 55 թ. Տիգրան Կրտսերը, եթե ողջ էր, կլիներ մոտ 55-60 տարեկան» [21, էջ 196]: Այս պնդումով, Տիգրան Կրտսերը, ով ունեցել է իրենից մեծ առնվազն երկու եղբայր, ծնվել է մ.թ.ա. 110-115 թթ., այն դեպքում, երբ Միհրդատ Եվպատորը Տիգրանին իր դուստր Կլեոպատրային կնության է տվել մ.թ.ա. 94 թ., երբ ինքը, Միհրդատը 38 տարեկան էր, և իր դուստրը պետք է լիներ 18-20 տարեկան, իսկ Տիգրան Բ-ն՝ 46 տարեկան: Եթե Տիգրան Կրտսերը Տիգրանի և Կլեոպատրայի երրորդ որդին էր, ապա նա պետք է ծնված լիներ մ.թ.ա. 91-87 թթ. ժամանակաշրջանում, ինձ ավելի հավանական է թվում մ.թ.ա. 90-89 թթ.-ները, այսինքն 66 թ.-ին Տիգրան Կրտսերը 23-24 տարեկան երիտասարդ էր և մ.թ.ա. 55 թ. «եթե

ողջ էր», կլիներ մոտ 34-35 տարեկան:

Արտաշեսյան հարստության տոհմացանկին վերաբերող որոշ մանրամասնությունների մասին տես սույն աշխատության երրորդ պրակի հավելվածում:)

8.3.66 – 64 թթ. երրորդ հայ- պարթևական պատերազմի սկիզբը. 66 թ. ռազմարշավը

Պարթևստանը՝ Առաջավոր Ասիայի հզորագույն երկրներից մեկը, 66 թ. գարնանը Հայաստանի հանդեպ ուներ ձևավորված և հստակ քաղաքականություն: Պարթևները սրտանց ատում էին հայերին, և դրա համար ունեին բոլոր հիմքերը:

Հեռավոր մ.թ.ա. 247 թ.-ին, երբ պարթևներն անկախացան Սելևկյաններից, հարաբերությունները Հայաստանի հետ անուշան էին, սակայն՝ բարյացակամ: Երկուսն էլ մեկ ընդհանուր թշնամի ունեին՝ Սելևկյանները, իսկ 223 թ.-ին գահ բարձրացած Անտիոքոս Գ Մեծից արժեր վախենալ. թե՛ պարթևները, թե՛ հայերը վերջինից ծանրագույն հարվածներ ստացան և, թեկուզ ժամանակավորապես, սակայն ենթարկվեցին հզոր Սելևկյանին: Մագնեսիայում՝ 190 թ. վերջին, հռոմեացիներից կրած ծանր պարտությունն էր պատճառը, որ Հայաստանն ու Պարթևստանը թոթափեն հզոր սիրիացու գերիշխանությունը և կրկին հզորանան:

Հայաստանը սկսեց ետ վերադարձնել իր թուլության հետևանքով նախկինում կորցրած ծայրագավառները, անհրաժեշտության դեպքում հաջողությամբ պատերազմելով նույնիսկ Սելևկյանների դեմ (165 թ., Տմորիք), իսկ Պարթևստանը դանդաղ, սակայն անշեղորեն, սկսեց նվաճել և իրեն միացնել բոլոր, ավելի շատ՝ արևմտյան հարևաններին: Այդ պատճառով Սելևկյաններն իրենց գլխավոր թշնամին համարեցին ոչ թե սեփական տարածքն ազատագրող Հայաստանը, այլ արագ դեպի Արևմուտք շարժվող Պարթևստանը:

Մի քանի ժամանակավոր հաջողություններից հետո Սելևկյանները ծանր պարտություն կրեցին և պարթևները գրավեցին Միջագետքը: Պարթևաց արքա Միհրդատ Մեծի (123 – 87 թթ.) ժամանակ Պարթևստանը դարձավ մեծ տերություն և հա-

սավ Հայաստանի ու Միրիայի սահմաններին:

112 – 111 թթ. առաջին հայ – պարթևական պատերազմի ելքը անսպասելի էր պարթևների համար՝ նրանք պարտվեցին, «յոթանասուն հովիտներն» էլ մնացին հին տերերին՝ հայերին: Առաջին անգամ պարթևական էքսպանսիան հզոր հակազդեցության հանդիպեց:

Այս պատերազմում պարթևների խոշորագույն հաջողությունը հայոց արքայազն Տիգրանի գերի ընկնելն էր: Տասնվեց երկար տարիներ պարթևական արքունիքում ապրելը, Միհրդատ Մեծի հետ բարեկամանալը, Հայաստան վերադառնալու համար «յոթանասուն հովիտները» պարթևներին զիջելը առաջացնում էր պատրանք, որ պարթևները հյուսիս-արևմուտքի հզոր հարևանի հետ սկսել են լուծել իրենց խնդիրները: Տիգրան Բ-ի առաջին իսկ քայլերը, սակայն, ցույց տվեցին պարթևների փայփայած հույսերի սնանկությունը:

94 թ. սկսած Հայաստանի բոլոր քայլերն ուղղված էին պարթևների մեծապետական դիրքի դեմ՝ Ծոփքի միացումը, Պոնտոսի հետ դաշինքը, բանակի ռեֆորմը, Տիգրանի կովկասյան արշավանքները խորը տագնապ էին առաջացնում պարթևաց արքունիքում: Դեռ 92 թ., վախենալով հայերից, պարթևները ռազմական դաշինք էին կնքել Հռոմի հետ, որն, իր հերթին խիստ անհանգստացած էր հայ-պոնտական դաշնության աննախադեպ ռազմաքաղաքական ակտիվությամբ:

86 – 84 թթ. հայ-պարթևական պատերազմը սկսեցին հայերը, պարթևները պարտվեցին մեզ հայտնի երկու մեծ՝ Նինվեի և Արբելայի ճակատամարտերում (հավանաբար, նաև Էկբատանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում), որից հետո Տիգրանը հասավ և պաշարեց Էկբատանը: Մեծագույն լարումով պարթևներին հաջողվեց պահել իրենց անկախությունը և Միջագետքը՝ Բաբելոնիան, սակայն կորուստները ահավոր էին՝ Կոմագենե, Միգդոնիա, Օսրոյենե, Հադրիենե, Ադիաբենե, «յոթանասուն հովիտներ» և ամենակարևորը՝ Ատրպատականը:

Պարթևական պետության նոր՝ ստորադաս կարգավիճակը ամրագրվեց հօգուտ հայոց արքայի արքայից արքա տիտղոսից հրաժարումով: Տիգրանը հզոր դիվանագիտական աջակցություն ցույց տվեց Քարակենեին և Էլյումայիսին, սակարակուկների հետ հաստատեց դաշնակցային հարաբերություններ, որոնցով աքցանի մեջ գցեց Պարթևստանը և, վերջապես, լուրջ

կապեր ստեղծեց Պարսքի թագավորության հետ:

Շահագրգռված լինելով շարունակական թույլ ու պառակտված վիճակում պահել Պարթևստանը, Տիգրանն անընդհատ կողմ կանգնելով պարթևական գահի ամենաթույլ և վարկաբեկված թեկնածուներին, խրախուսեց խռովությունները և արյունոտ պայքարը պարթևաց գահի համար: 83 թ.-ից տիրելով Դաշտային Կիլիկիային, Միրիային և Փյունիկիային, վերահսկողություն սահմանելով անապատի արաբական ցեղերի, Հուդայի և Նաբաթեայի վրա, խառնվելով Եգիպտոսի ներարքունական վեճերին, Տիգրան Մեծը պարթևների համար հուսալիորեն փակեց մուտքը դեպի Միջերկրածովք: Այսուհետ միջազգային առևտրի կարգավորումը Հայկական կայսրության մենաշնորհն էր:

Վտանգավոր էր նաև հայերի գաղափարական պայքարը պարթևները դեմ: Հեռավոր մ.թ.ա. VI դարում տեղի ունեցած իրադարձությունները դեռ ընդունակ էին հիմք ծառայել տիգրանյան ժամանակաշրջանի գաղափարախոսությանը: Պատմություններն այն մասին, որ նախ մեդացիներն են կործանել աշխարհակալ Ասորեստանը և գերիշխանություն հաստատել բոլորի վրա, իսկ հետո պարսիկ Կյուրոսը, Աքեմենի ցեղից, դաշնակցելով արմեն Տիգրան Երվանդյանի հետ, հաղթել և իշխանազուրկ է արել Աժդահակին (Աստիագեսին), հիմնելով աշխարհակալ Աքեմենյան տերությունը՝ տարածաշրջանում չէին մոռացել ... [55, 56]:

Աքեմենյանների օրոք իշխող ժողովուրդը տերությունում պարսիկներն էին և 100.000 զորք էին տալիս Աքեմենյան արքայից արքային, երկրորդը մեդացիներն էին, որոնք 60.000 զորք էին տրամադրում արքունիքին, երրորդը՝ հայերը՝ 47.000 զինվոր: Այս երեք ժողովուրդները տալիս էին 312.000-ոց պարսկական մշտական բանակի երկու երրորդը՝ 207.000 զինվոր, մնացած 105.000-ը՝ տերության բոլոր ժողովուրդները միասին [55]:

Պարթևներ չկային այս պատվացանկում: Անշուշտ, սկսած քաջ և մարտունակ պարթևներից մինչև պարթևները՝ նույնպես հիշում էր ավանդույթը, սակայն դրանով նրանք առաջին եռյակի հետ համեմատվել չէին կարող:

Երբ Տիգրանը հաղթեց պարթևներին և նրանց ձեռքից առավ առաջնության վկայականը՝ արքայից արքայի տիտղոսը, և Հայաստանին միացրեց Ատրպատականը՝ պարթևները վախեցան: Կարծես կրկնվում էին հին ժամանակները և, մի օր էլ տես՝

հաղթական Տիգրանը ոտքի էր հանելու պարթևներից կիսանկախ Պարսքը և կրկին նույն երեք ժողովուրդները, արդեն արմեն Տիգրանով միացված, տիրելու էին ողջ Արևելքին:

Վերջապես, Տիգրանին հաջողվեց պարթևական Իրանից կտրել Ատրպատականը, և Միհրդատ Մեդացուն դարձնել իր ծրագրերի կարևորագույն համախոհն ու աջակիցը: Ընդհանրապես, Ատրպատականի կարգավիճակը նորաստեղծ Հայկական կայսրությունում հատուկ էր: Ատրպատականը (հնարավոր է նաև Իբերիան ու Աղվանքը) այն միակ ենթակա թագավորությունն էր, որտեղ հայկական բանակի զորամասերը կայազորներով տեղադրված չէին: Հայաստանի գերիշխանությունը հաստատելուց հետո Ատրպատականը մինչև վերջ հավատարիմ մնաց հայոց արքայից արքային: Տիգրանը ատրպատականցիների հավատարմությունը երբեք կասկածի տակ չի առել, հայկական կայսրության բանակում ատրպատականյան զորքերը միշտ զբաղեցրել են պատվավոր երկրորդ տեղը: Եթե պատմության անիվն այլ կերպ պտտվեր, կգար ժամանակ, երբ Ատրպատականը միացնելով Մեդիայի մնացած մասը, որպես Մեծ Մեդիա՝ Մարաստան, կդառնար հայկական կայսրության երկրորդ երկիրը:

Անշուշտ ես չեմ մոռացել Տիգրանի ստեղծած կայսրությունում Սիրիայի հսկայական դերը: Սակայն այդ դերը գերազանցապես առևտրա-տնտեսական էր և շատ սահմանափակ՝ ռազմական: Տիգրանի երկրորդ՝ Սիրիայի թագավորությունն ավելի շատ հայկական տերության այլ տեղերից զորք էր պահանջում իր պաշտպանության համար, քան տրամադրում էր ուրիշ երկրները պաշտպանելու համար: Ատրպատականն այս իմաստով ավելի նման էր Հայաստանին:

Մեր Սանատրուկ պարթև արքան հաշտվողական էր տրամադրված Տիգրան Մեծի հանդեպ: 74 – 69 թթ.-ները խաղաղության տարիներ էին հայկական և պարթևական տերությունների միջև (պարթևական պետության հանդեպ այս ժամանակաշրջանում նույնպես անհրաժեշտ է օգտագործել տերություն բառը, որովհետև նույնիսկ թուլացած վիճակում, պարթևները տիրում էին բազմաթիվ ժողովուրդներին և Առաջավոր Ասիայի սրտի՝ Բաբելոնյան Միջագետքին):

Երբ 68 թ. Լուկուլլոսը, ինչպես Տիգրանն ու Միհրդատը, դիմեց պարթևներին՝ առաջարկով կանգնել իր կողմը, որով հաղթանակի նժարը կթեքվեր հռոմեա-պարթևական դաշինքի կողմը, Արշակունին մտածեց և մերժեց երկուսին, ցույց տալով, որ ուղղորդվում է ոչ թե վրեժի զգացումով, այլ ռազմաքաղաքական հավասարակշռությունը չխախտելու անհրաժեշտությամբ՝ այնպես, ինչպես պահանջում էր Պարթևստանի ռազմաքաղաքական շահը:

66 թ.-ի գարնանը իրավիճակը կտրուկ փոխվեց հօգուտ Հրահատ Գ-ի.

1.Հռոմը, հսկայական զինվորական ուժ ունեցող Պոմպեոսի միջոցով, ռազմական դաշինք կնքեց Պարթևստանի հետ, Հայաստանի դեմ,

2.Հայկական գահի թագաժառանգ Տիգրան Կրտսերն ապստամբեց հոր դեմ, պարտվեց ու փախավ Պարթևստան, որտեղ նրան Հրահատը կնության տվեց իր դստերը: Այսուհետ Հայաստանում պարթևը հույս ուներ աջակցություն ստանալ որոշ ուժերից և, ամենակարևորը, չընկալվել որպես հայերի ոխերիմ թշնամի,

3.Իր կառավարման 3-4 տարիների ընթացքում Հրահատը կարգի էր բերել երկիրն ու բանակը և իրեն պատրաստ էր համարում մրցակցելու հայերի դեմ,

4.Իր լրտեսների միջոցով հետևելով 69 -66 թթ. հայ – հռոմեական պատերազմին, նա հստակ պատկերացում ուներ հայկական ռազմական մեքենայի հզորության մասին և գիտեր, որ առանձ հզոր դաշնակցի՝ Հռոմի, այն կործանել չի կարող:

8.3.1.Հրահատ Գ-ի ուժերը և ռազմավարական ծրագրերը

Հրահատ Գ-ն շատ լուրջ պատրաստվեց պատերազմին: Հիմնական հարվածը պետք է հասցվեր Ատրպատականի մայրաքաղաք Փրաասպայի վրա, որը գրավելուց հետո պարթևական զորքերը պետք է շարժվեին դեպի Արտաշատ՝ Տիգրան Մեծին հաղթելու ու գահազրկելու, և «Տիգրան Գ» թագավորին՝ Տիգրան Կրտսերին, բռնի ձևով գահին նստեցնելու համար:

Աղձնիքից և Կորդուքից հնարավոր հայկական հակահարձակումը կասեցնելու համար, առաջին բանակի ելույթից մի փոքր ուշ, հատուկ մի զորաբանակ պետք է շարժվեր հարավա-

յին ուղղությամբ դեպի Ադիաբենե:

Պատմական երկերում 66 թ. ռազմարշավին մասնակցած պարթևական բանակի քանակի և կազմի մասին տեղեկություններ չեն պահպանվել և մենք, ելնելով հայկական բանակի կառուցվածքից և մ.թ.ա. I դարի պարթևական բանակի մասին ունեցած արդի գիտական պատկերացումներից, կփորձենք վերականգնել՝ պատկերացնել պարթևական բանակի կազմը (մ.թ.ա. 36 թ., Անտոնիոսի արշավանքի ժամանակ, պարթևական բանակի թվաքանակի մասին որոշ տվյալներ հունա-հռոմեական պատմիչները պահել են) [35]:

Պարթևական բանակը՝ ավելի քան 50.000 զինվոր, որից.

- 12.000 կատաֆրակտոս,
- 18.000 թեթև հեծելազորային,
- 10.000 նետաձիգ,
- 10.000 նիզակակիր,
- 5.000 սակրավոր, պաշարողական զորամասեր և գումակայիններ,

ընդամենը՝ 55.000 զինվոր, որից 30.000 հեծելազոր:

Պարթևների դաշնակից Տիգրան Կրտսերի զորաբանակը, հավանաբար մոտ 5.000 զինվոր.

- 2.000 թեթև հեծելազոր,
- 1.000 նիզակակիր,
- 2.000 նետաձիգ:

Ատրպատականում 20-ամյա հայկական տիրապետության ընթացքում անհնար էր, որ չձևավորվեին հակամիհրդատյան (խոսքը Ատրպատականի թագավոր Միհրդատ Մեդացու մասին է) և, ընդհանրապես, հակահայկական՝ հակատիգրանյան լուրջ խմբավորումներ: Անկասկած, բոլոր այդ խմբավորումները հովանավորվում ու աջակցություն էին գտնում Պարթևստանում: Դա նշանակում է, որ Ատրպատական պարթևական ներխուժման պահին պարթևական ճամբարում կային որոշ քանակությամբ ատրպատականցի խռովարարներ, հավանաբար, ոչ պակաս քան 5.000 զինվոր:

Խռովարար ատրպատականցիների զորատեսակները, ելնելով արևելյան ավանդական ռազմակարգից, պայմանական ընդունում եմ մոտ 2.000 հեծյալ և 3.000 հետևակային:

Այսպիսով, Ատրպատական արշավող պարթևական բանա-

կում կարող էր լինել մոտ 65.000 զինվոր՝ 34.000 հեծելազոր և 31.000 հետևակ:

Հարավում, պարթևների դեմ Մանկայոսի զորաբանակի հնարավոր ելույթը Աղձնիքից և Կորդուքից զսպելու համար, հավանաբար պետք է գործեր ոչ պակաս, քան 10-15.000 պարթևական զորաբանակ:

Այդպիսով, պարթևական պետությունը Հայկական կայսրության դեմ դուրս էր հանել հզորագույն՝ 75-80.000-ոց բանակ՝ իր զորքերի կեսից ավելին:

8.3.2.Տիգրան Մեծի ուժերը և ռազմավարական ծրագրերը

Տիգրան Մեծը նույնպես եռանդուն պատրաստվում էր հայ-պարթևական պատերազմին: Կանխատեսելով, որ հայ-մեդական ռազմական համագործակցությունը խորտակելու նպատակով Հրահատը իր առաջին հարվածն ուղղելու է Ատրպատականի դեմ, Տիգրանը Ատրպատականում կենտրոնացրեց մի խոշոր բանակ, որը բաղկացած էր երկու մասից՝ ատրպատականյան (մեդական) և Հայաստանից օգնության հասած հայկական բանակից:

Միհրդատ Մեդացին Կապադովկիայից վերադարձավ Փրաասպա 67 թ. խոր աշնանը, կամ՝ 66 թ. վաղ գարնանը, իր հետ ունենալով իր հեծյալ զորաբանակը՝ մոտավորապես 2.500 կատաֆրակտոս և 2.500 թեթև հեծելազոր, ընդամենը՝ 5.000 հեծյալ:

Ատրպատականի ռազմական կարողությունները մոտավորապես 50.000 զինվոր էին [34, 35, 291], որոնց զորատեսակների համամասնությունը մոտավորապես համապատասխանում էր հայկական բանակին (մինչև 69-68 թթ. ռազմական բարեփոխումները) [...].

- 17.000 հեծելազոր, որից 6.000 կատաֆրակտոս,
- 33.000 հետևակ, որից
  - 15.000 նետաձիգ,
  - 10.000 նիզակակիր,
  - 5.000 վահանակիր,
  - 3.000 օժանդակ զորք:

17.000-ոց հեծելազորից 6.000-ը՝ 3.000-ական ծանր և թեթև հեծե-

լազոր Միհրդատ Մեդացու հետ գնացել էին հայ-հռոմեական պատերազմի, որտեղից վերադարձել էին զգալի կորուստներով՝ սա նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել: Կարծում եմ, որ ատրպատականցի վահանակիրների այս 5.000-ոց լեգեոնզորագունդը Միհրդատ Մեդացին պետք է ստեղծած լիներ 69-68 թթ. հայկական բանակի հետևակի ռազմական ռեֆորմին համընթաց:

Եթե մեդացի 6.000 կատաֆրակտոսներից մնացել էր 5.500, իսկ 11.000 թեթև հեծելազորից՝ 10.500, ապա Միհրդատ Մեդացին այս թվաքանակից մոտ 5.500 կատաֆրակտոսներ և 5.500 թեթև հեծելազոր, ընդամենը մոտ 11.000 հեծյալ կարող էր կենտրոնացնել իր դաշտային բանակում:

Դաշտային բանակի հետևակում կարելի է պատկերացնել հետևյալ բաշխումը.

7.000 նետաձիգ,
5.000 նիզակակիր,
4.000 վահանակիր,
1.000 օժանդակ զորք,

Ընդամենը 17.000 հետևակային:

Այդպիսով, Միհրդատ Մեդացին հակառակորդների դեմ կարող էր հանել 27-28.000-ոց բանակ (36 թ. Անտոնիոսի դեմ պատերազմելիս անտիկ հեղինակների մոտ մենք հանդիպում ենք մոտավորապես նման թվերի):

Հայաստանից Տիգրանը Միհրդատին օգնության էր ուղարկել մի հզոր բանակ, որի հնարավոր քանակը և զորատեսակները պարզելու համար հարկադրված ենք մեկ անգամ ևս քննել հայկական զորքերի բաշխումը 66 թ. գարնան վերջին:

Անմիջապես Միհրդատ Մեդացու հետ Տիգրանը Ատրպատական ուղարկեց հատուկ զորաբանակ, որի հնարավոր կազմն էր.

- 1.000 կատաֆրակտոս,
- 3.000 թեթև հեծելազոր,
- 3.000 նետաձիգ,
- 2.000 նիզակակիր,
- 1.000 սակրավոր և օժանդակ զորք,

Ընդամենը՝ 10.000 զինվոր:

Ատրպատական մտնելուց առաջ, նրանց միացավ նաև Նոր

Շիրակաեի բդեշխի զորաբանակը՝

- 3.000 կատաֆրակտոս,
- 3.000 թեթև հեծելազոր,
- 3.000 նետաձիգ,
- 1.000 սակրավոր և օժանդակ զորք,

Ընդամենը՝ 10.000 զինվոր:

Հայկական զորաբանակի ընդհանուր թիվը կազմեց՝

- 4.000 կատաֆրակտոս,
- 6.000 թեթև հեծելազոր,
- 6.000 նետաձիգ,
- 2.000 նիզակակիր,
- 2.000 սակրավոր և օժանդակ զորք,

Ընդամենը՝ 20.000 զինվոր, որից 10.000 հեծյալ:

Այսպիսով, 66 թ. գարնան վերջին, պարթևական սպասվող ներխուժմանը դիմակայելու համար Փրաասպայի մոտ կենտրոնացվել էր հզոր հայ-ատրպատականյան բանակը, որի կազմում կար.

- 9.500 կատաֆրակտոս,
- 11.500 թեթև հեծելազոր,
- 13.000 նետաձիգ,
- 7.000 նիզակակիր,
- 4.000 վահանակիր,
- 3.000 սակրավոր և օժանդակ զորք,

Ընդամենը՝ մոտ 48.000 զինվոր, որից 21.000 հեծյալ:

Աղձնիքի բդեշխ Մանկարոսը հարավում պարթևական հարձակմանը դիմակայելու համար, կարող էր ունենալ մոտավորապես հետևյալ զորքերը.

- 1.000 թեթև հեծելազոր,
- 1.000 նիզակակիր,
- 3.000 նետաձիգ
- 1.000 սակրավոր և այլ օժանդակ զորք

Ընդամենը՝ մոտ 6.000 զինվոր:

Այս ուժերին պետք է գումարել նաև Կորդուքում գտնվող հայկական գնդերը և Մծբինի կայազորը, միասին ոչ ավելի, քան 4.000 զինվոր:

Այսպիսով, հարավում հայկական զորքերի խմբավորումը բաղկացած էր ոչ պակաս, քան 10.000 զինվորից:

8.3.3.66-64 թթ. հայ- պարթևական պատերազմի սկիզբը

Անտիկ պատմիչները հայ-պարթևական պատերազմի սկզբնական շրջանի մասին ոչ մի մանրամասնություն չեն հայտնում, միայն հաղորդում են, որ պարթևները գրավեցին Ատրպատականը և վերացրին Միհրդատ Մեդացուն, որի տեղը սկսեց թագավորել ոմն Դարեհ [34]:

Փորձենք վերականգնել իրադարձությունների զարգացման որոշ հնարավոր տարբերակներ:

Նախ, ոչ՝ Տիգրանը, ոչ՝ էլ Միհրդատ Մեդացին պարթևներին Ատրպատականը առանց համառ պայքարի չէին զիջի: Միհրդատ Մեդացին, որը իր ավելի քան 20-ամյա ռազմական գործունեության ընթացքում դարձել էր հմուտ զորավար, անկասկած ղեկավարում էր պայքարը հանուն իր գահի ու հայրենիքի: Տիգրան Մեծը այստեղ լինել չէր կարող, որովհետև իրադրությունը քաղաքացիական պատերազմից նոր խաղաղված Հայաստանում բարդ էր, Պոնտոսում Պոմպեոսը ծանրագույն վիճակի էր մատնել Միհրդատ Պոնտացուն, հյուսիսում ապստամբել էին Իբերիայի և Աղվանքի տերերը և բացահայտ անցել Տիգրան Կրտսերի կողմը, հարավում Մանկայոսը և Գուրասը բավարար ուժ չունեին պարթևների հնարավոր հարձակումը կասեցնելու համար, Ծոփքն էլ անհնար էր թողնել առանձ հզոր զորաբանակի, որովհետև այստեղ հայկական զորքերի բացակայությունը վտանգավոր դատարկություն (վակուում) էր ստեղծում տարածաշրջանում:

Առավելագույնը, ինչ կարող էր անել Տիգրանը՝ Միհրդատին մարտունակ մի բանակ՝ մոտ 20.000 զինվոր, ուղարկել էր՝ իր ամենալավ զորաբանակային հրամանատարներով և իր՝ մեծ զորավարի խորհուրդներով:

Միհրդատ Մեդացին պարթևների դեմ չէր կարող դիմել նույն ռազմավարությանը, որը Տիգրանի ղեկավարությամբ նա կիրառել էր Լուկուլլոսի դեմ Արածանիի հովտում կամ նահանջող հռոմեական բանակը հետապնդելիս՝ տարբեր՝ էր հակառակորդը և նրա մարտավարությունը, տարբեր՝ էին նաև ուժերի հարաբերությունները:

Միհրդատ Մեդացին պետք է ճիշտ ընտրեր գլխավոր ճա-

կատամարտի տեղը և փորձեր պարթևներին ջախջախել մարտերում կոփված և փորձված իր զորքերի միջոցով (պարթևական բանակը նույնպես պատկառելի մարտական փորձ էր ձեռք բերել իր տերության արևելյան սահմաններին գրեթե անընդհատ տեղի ունեցող ընդհարումների ժամանակ):

Ճակատամարտի տեղն ընտրելով, նա պետք է հենվեր հզոր ամրությունների համակարգի վրա, որտեղ կարող էր պատսպարվել անհաջող ճակատամարտից հետո: Այդ ամրությունների պաշտպանությունը պետք է քաղաքական նշանակություն ունենային Ատրպատականի համար, որ նա չկորցներ Ատրպատականում քաղաքական զարգացումների վրա ազդելու հնարավորությունը: Այդ բացառիկ վայրը Փրաասպան էր (կարող էր լինել նաև երկրորդ քաղաքը՝ Գանձակը, սակայն նրանց տնտեսական ու քաղաքական կշիռները տարբեր էին՝ Փրաասպան առաջնային էր), որի մոտակայքում էլ, հավանաբար տեղի ունեցավ հայ-պարթևական պատերազմի խոշորագույն ճակատամարտերից մեկը, որն այսուհետ մենք կանվանենք Փրաասպայի գլխավոր ճակատամարտ:

Ելնելով հին աշխարհի ռազմական պատմագրության արդի նվաճումների վրա, փորձենք պատկերացնել ծավալված պայքարի որոշ մանրամասնություններ:

8.3.4. Փրաասպայի գլխավոր ճակատամարտը

66 թ. գարնան վերջին Հայկական կայսրության կարևորագույն հպատակ թագավորության՝ Ատրպատականի մայրաքաղաք Փրաասպայի մոտակայքում տեղի ունեցավ 66 – 64 թթ. երրորդ հայ-պարթևական պատերազմի առաջին գլխավոր ճակատամարտը:

Պարթևները մոտեցան Փրաասպային և պաշարեցին այն, երբ անմիջապես կամ մի քանի օր հետո, նրանց վրա հարձակվեց հայ - ատրպատականյան բանակը: Ճակատամարտը տեղի ունեցավ Փրաասպայից ոչ հեռու, Ատրպատականի մայրաքաղաքի պաշտպանները հավանաբար կարող էին քաղաքի աշտարակներից և պարիսպներից հետևել նրա ընթացքին:

Ճակատամարտը չափազանց արյունահեղ և համառ էր՝

աշխարհի երկու հզորագույն տերությունների բազմահազար ընտիր բանակները մահացու մենամարտ էին մղում: Հաղթանակի արժեքը երկուսի համար էլ անգնահատելի էր: Լուծվում էր հիմնահարցը, ով է տիրելու Առաջավոր Ասիային՝ Հայաստան-Ատրպատական միությունը, թե՝ Արևելյան Իրանը:

Այս ճակատամարտում թե՛ հայերը և մեդացիները, թե՛ պարթևները՝ ոչ միայն սպաները, այլև հասարակ զինվորները քաջ գիտակցում էին, թե ինչի համար են կռվում և ինչ հսկայական նշանակություն ունի իրենց հաղթանակը:

Ճակատամարտի դասավորության մասին շատ դժվար է դատել. ըստ երևույթին պարթևները զորքի մի մասը թողել են Փրաասպայի պատերի տակ՝ պաշարողական ճամբարում, ատրպատականցիների հնարավոր հանկարծակի գրոհները արգելակելու համար, մնացած ուժերով գնացել են Միհրդատ Մեդացու դեմ:

Ճակատամարտի համար երկու կողմերի հնարավոր դասավորությունը կարելի է ենթադրել, եթե ընդունենք, որ տեղի է ունեցել դասական ճակատամարտ՝ հետևակը կենտրոնում, հեծելազորը՝ թևերին, ընդ որում երկու կողմի կատաֆրակտոսները մարտնչել են միմյանց դեմ:

Հայ-մեդական բանակը պարթևականից ուժեղ էր միայն իր հայկական հետևակային գնդերով, հակառակորդների մնացած զորատեսակների մարտունակությունը մոտավորապես հավասար էր, իսկ հեծելազորի քանակով պարթևները զգալիորեն գերազանցում էին մեդացիներին և հայերին:

Այս գրքում նկարագրված բոլոր ճակատամարտերից այս ճակատամարտի նկարագրությունը ամենակամայականն է և վերարտադրում է ճակատամարտի հնարավոր ընթացքը՝ ելնելով միջակ զորավարի ստանդարտ մտածելակերպից ...

Հայ-ատրպատականյան բանակը Փրաասպայի պաշտպանության համար թողել էր մոտ 10.000 զինվոր, որոնցից գրեթե կեսը պետք է լիներ քաղաքային աշխարհազորը: Այդպիսի աշխարհազորները շատ լավ են պաշտպանում իրենց քաղաքները, քաջ գիտակցելով, որ քաղաքը գրավվելուց հետո այն ենթարկվելու է հաղթողի կամայականություններին և անխնա կողոպուտի: Հաշվի առնելով այդ հանգամանքը, Միհրդատը Փրաասպայում պետք է թողներ մոտ 1.000 վահանակիր, 2.000 նիզակակիր և 2.000 նետաձիգ, ընդամենը՝ 5.000 զինվոր, որոնց գումարվում էին օժանդակ զորամասերի 3.000 զինվորները և մոտ 5.000-ոց քաղաքի երիտասարդներից կազմված աշխարհազորը, ընդամենը՝ մոտ 13.000 զինվոր: Այս քանակը ընդունակ էր ետ մղել բոլոր պատահական գրոհները, սակայն քաղաքից դուրս լուրջ գործողությունների համար շատ թույլ էր՝ Միհրդատ Մեդացին իր բոլոր ուժերը կենտրոնացրել էր մարտի դաշտում:

Այսպիսով, հայ-ատրպատականյան բանակի հնարավոր կազմը Փրաասպայի ճակատամարտում.

- 9.500 կատաֆրակտոս,
- 11.500 թեթև հեծելազոր,
- 11.000 նետաձիգ,
- 5.000 նիզակակիր,
- 3.000 վահանակիր,

Ընդամենը՝ մոտ 40.000 զինվոր, որից 21.000 հեծյալ:

Պարթևները Փրաասպայի պարիսպների տակ թողել էին մոտ 10.000 զինվոր, որից 5.000-ը պարթևների կողմնակից ատրպատականցիներն էին՝ ենթադրվում էր, որ նրանք կարող են քաղաքի պաշտպանների համոզել հանձնել քաղաքը: Մնացածը, ըստ երևույթին, հիմնականում հետևակ էր: Պարիսպների տակ էին գտնվում նաև պաշարողական և այլ օժանդակ զորքերը:

Այսպիսով, պաշարողական ճամբարում պարթևները թողել էին.

2.000 նետաձիգ,
2.000 նիզակակիր,
5.000 օժանդակ զորք,
5.000 դաշնակից ատրպատականյան զորք,
Ընդամենը՝ մոտ 14.000 զինվոր:

Պարթևները ճակատամարտ էին հանել հետևյալ ուժերը.

- 12.000 կատաֆրակտոս,
- 20.000 թեթև հեծելազոր, որից 2.000 Տիգրան Կրտսերինը
- 10.000 նետաձիգ, որից 2.000 Տիգրան Կրտսերինը
- 9.000 նիզակակիր, որից 1.000 Տիգրան Կրտսերինը

ընդամենը՝ 51.000 զինվոր, որից 32.000 հեծելազոր:

Այսպիսով, պարթևները խիստ գերազանցում էին հայ-մեդական բանակին հեծելազորով, հատկապես թեթև, և մոտա-

վորապես հավասար էին հետևակով:

Ճակատամարտին մասնակցած հեծելազորի քանակը անախադեպ էր հին աշխարհի ռազմական պատմությունում՝ միասին՝ մոտ 53.000 հեծյալ և, ըստ երևույթին, մոտակա երկու դարերում այլևս չի գերազանցվել կամ գոնե կրկնվել:

Ճակատամարտի ընթացքը կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝

0.նախնական զորադասավորում,

1.հեծելազորային և հետևակային համառ մարտ,

2.հայ-ատրպատական հետևակի հաղթանակը,

3.պարթևական հեծելազորի հաղթանակը թևերում,

4.հայ-մեդական հետևակի շրջապատումը և գերումը,

5.հայկական բանակի հեծելազնդերի նահանջը և փախուստը Հայաստան:

8.3.4.1.Կողմերի նախնական զորադասավորումը

Հայ-ատրպատականյան և պարթևական բանակների զորադասավորումը, հավանաբար ավանդական էր, իրար նման, կենտրոնում՝ հետևակը, թևերին՝ հեծելազորը: Երկու կողմից էլ նիզակակիրների շարասյուների առջևից կանգնած էր թեթև հետևակը: Թևերին կանգնած հեծելազորը դասավորված էր այնպես, որ հակառակորդների կատաֆրակտոսների գնդերը պետք է մարտնչեին միմյանց դեմ:

Պարթևական կողմը՝ Հրահատ Գ-ն որոշել էր կենտրոնում զսպել հայ-ատրպատականյան հետևակի հնարավոր գրոհը և թևերում իր մեծաթիվ հեծելազորով ջախջախելով հայ-մեդական հեծելազորը, վերջում շրջապատել հայ- մեդական հետևակը և ոչնչացնել այն:

Միհրդատ Մեդացին և հայ զորավարները որոշել էին մարտակարգի թևերում դիմակայել մեծաթիվ պարթևական հեծելազորին այնքան, մինչև կենտրոնում հայկական և մեդական հետևակը կջախջախեր և փախուստի կմատներ պարթևականին, որից հետո կհարվածեր պարթևական հեծելազորին թևերից. վերջինիս հնարավոր էր հաղթել միայն հեծելազորի և հետևակի համատեղ գրոհով:

Իմ այս ենթադրությունը քանակապես գերազանցող, մարտունակ հեծելազոր ունեցող հակառակորդին բաց դաշտում հաղթելու միակ տարբերակն էր: Մնացած բոլոր լուծումները ավարտվում էին հայ-ատրպատականյան բանակի անխուսափելի պարտությամբ:

Հայ-մեդական կայսերական բանակի խնդիրը դժվարանում էր նրանով, որ նրա կազմում քիչ էր բուն հայկական միջին հետևակը՝ նիզակակիրները, իսկ մեդացի նիզակակիրների մարտունակությունը մոտավորապես համապատասխանում էր պարթևականին: Պարթևական հետևակի մարտական գիծը պետք է ճեղքեին հատկապես փորձառու հայ նիզակակիրների գնդերը և բավարար մարտական փորձ չունեցող, ատրպատականցի վահանակիրների զորագունդը՝ երկուսն էլ տեղադրված էին հետևակի մարտական դասավորության եզրերին: Դիմացի հակառակորդին փախուստի մատնելուց հետո նրանք պետք է հարվածեին պարթևական հեծելազնդերին թևերից:

Հայկական ծրագիրը դժվար էր, բայց իրագործելի, սակայն ճակատամարտի ծրագրավորման ժամանակ, հավանաբար, երկու սխալ էր թույլ տրվել.

-հետևակի թևերին հայ նիզակակիրների բավարար գերազանց ուժեր չէր կենտրոնացվել, ինչը ծանր հետևանքներ ունեցավ ճակատամարտի ընթացքում՝ նրանց չհաջողվեց արագ ջարդել հակառակորդին, իսկ ատրպատականցի վահանակիրների գրոհը ուժեղացնելու համար երկրորդ գծում ուժեր չէին կենտրոնացվել,

-Միհրդատ Մեդացին հաշվի չէր առել, որ Հրահատ Գ-ի բանակում Տիգրան Կրտսերի հրամանատարության տակ ևս կան բարձր մարտունակություն ունեցող հայկական հետևակային գնդեր:

Պետք էր հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հայկական կողմի հնարավոր մարտավարության տարբերը ծանոթ էին Տիգրան Կրտսերին, որով Միհրդատ Մեդացու համար զգալիորեն նվազում էր անսպասելիության գործոնի լիարժեք օգտագործման հնարավորությունը:



Գծանկար 8.1. Փրաասպայի գլխավոր ճակատամարտը. պատկերող գծանկարների պայմանական նշանները:

8.3.4.2. Հեծելազորային և հետևակային համառ մարտը (գծանկար 8.3.)

Ճակատամարտը սկսվել էր թևերի հեծելազնդերի և կենտրոնում գտնվող հետևակային գնդերի փոխադարձ գրոհներով (հին աշխարհի զորավարներին քաջ հայտնի էր, թե ինչքան վտանգավոր է թշնամուն կանգնած դիմավորել՝ հարձակվողի մոտ հարվածի ուժն ավելանում էր): Կատաղի բախում տեղի ունեցավ՝ հակառակորդները չէին զիջում իրար և մարտը սաստկացավ: Սկզբնական շրջանում ոչ մի կողմի առավելությունը չէր երևում, երկուստեք սպանվածների և վիրավորների քանակը սրընթաց աճում էր:



Գծանկար 8.2. Փրաասպայի գլխավոր ճակատամարտ՝ նախնական զորադասավորումը

8.3.4.3.Հայ-ատրպատական հետևակի հաղթանակը (գծանկար 8.4.)

Որոշ ժամանակ անց, կենտրոնում ի հայտ եկավ հայ-մեդական հետևակի առավելությունը՝ հիմնականում ի հաշիվ ավելի փորձված հայ նիզակակիրների թևի: Չդիմանալով վերջիններիս ուժեղ ճնշմանը, պարթևական մարտական գիծն սկսեց ճկվել, սակայն դրան ի պատասխան ուժեղացրին ճնշումը նաև Տիգրան Կրտսերի հետևակայինները:

Միհրդատ Մեդացու վահանակիրները նույնպես նեղեցին հակառակորդին, սակայն նրանց դեմ կռվում էին մեծ փորձ ունեցող Տիգրան Կրտսերի հայ նիզակակիրները, որոնք իրենց վրա ընդունեցին վահանակիրների հարվածը, որից մի փոքր նահանջեցին, սակայն մարտական գիծը պահեցին:

Հավանաբար հայկական հետևակին հաջողվեց ընկճել պարթևներին, սակայն վճռական արդյունքի նրանք չհասցրին հասնել, որովհետև պարթևական հեծելազորին վերջապես հաջողվեց ետ մղել հայ-ատրպատականյան հեծելազորը:

8.3.4.4.Պարթևական հեծելազորի հաղթանակը թևերում (գծանկար 8.5.)

Ճակատամարտի թևերում տեղի ունեցած իրադարձությունները վճռորոշ էին ճակատամարտի ելքի համար՝ պարթևական հեծելազորին իր մեծաքանակության շնորհիվ հաջողվեց ետ շպրտել կատաղի մարտնչող հայերին և մեդացիներին: Խիզախությունը, վարպետությունը և համառությունն այլևս ոչինչ չէին կարող փոխել՝ ախոյանը ոչ պակաս չափով ուներ նույն հատկությունները: Թվային գերազանցությունն էր արդեն լուծում ճակատամարտի ելքը: Հայ-ատրպատականյան հեծելազորը պարտվեց:

Գծանկար 8.3.Փրաասպայի գլխավոր ճակատամարտ, առաջին փուլ՝ հեծելազորային և հետևակային համառ մարտ:



Գծանկար 8.4.Փրաասպայի գլխավոր ճակատամարտ, երկրորդ փուլ՝ հայ-ատրպատական հետևակի հաղթանակը:



Գծանկար 8.5.Փրաասպայի գլխավոր ճակատամարտ, երրորդ փուլ՝ պարթևական հեծելազորի հաղթանակը թևերում:

8.3.4.5.Հայ-ատրպատական հետևակի շրջապատումը և գերումը (գծանկար 8.6.)

Պարթևական հեծելազորի հաղթական գնդերի մի մասը շարունակեց հետապնդել նահանջից փախուստի դիմած հայ և մեդացի հեծյալներին, մի ստվար հատված էլ երկու կողմից շրջանցեց մարտնչող հայ-մեդական հետևակին: Վերջինս հայտնվեց շրջապատման մահաբեր օղակում: Ճակատամարտն արդեն տանուլ էր տրված, և հայ-ատրպատականյան հետևակին պարթևներն առաջարկեցին հանձնվել հաղթողների ողորմածությանը: Այս հարցում մեծ դեր խաղացին «հայոց թագավոր Տիգրան Գ-ն»՝ Տիգրան Կրտսերը և Ատրպատականի նորանշանակ թագավորը՝ Դարեհը:

Միհրդատ Մեդացին վերջնականապես պարտվեց: Նրա հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ, սակայն հաշվի առնելով, որ այսուհետ նրա անունն ընդմիշտ դադարում է հիշատակվել, ենթադրում եմ, որ նա զոհվել էր մարտի դաշտում:

8.3.4.6.Հայկական բանակի նահանջը և փախուստը Հայաստան (գծանկար 8.7.)

Հայկական հեծելազորի մեծագույն մասին այնուամենայնիվ հաջողվում է դուրս գալ մարտից և մինչև պարթևական հեծելազորի զգալի մասը զբաղված էր հայ-ատրպատականյան հետևակի շրջապատումով, կտրվել կամ ետ մղել իրենց հետապնդող պարթևական հեծելազորին և շարժվել դեպի Հայաստան:

Փրաասպայի գլխավոր ճակատամարտը ավարտվեց պարթևների լիակատար հաղթանակով և հայ-մեդական բանակի զգալի մասի ոչնչացումով և գերեվարումով:



Գծանկար 8.6.Փրաասպայի գլխավոր ճակատամարտ, չորրորդ փուլ՝ հայ-մեդական հետևակի շրջապատումը և գերումը:



Գծանկար 8.7.Փրաասպայի գլխավոր ճակատամարտ, չորրորդ փուլ՝ հայկական բանակի փախուստը Հայաստան:

8.3.4.7. Ճակատամարտի հետևանքները և կողմերի կորուստները

Կողմերը ճակատամարտում մեծ կորուստներ ունեցան: Խիստ մոտավոր ձևով կարելի է ենթադրել, որ նրանք պետք է լինեին հետևյալ կարգի.

Հայկական կայսրության բանակ՝ Միհրդատ Մեդացու բանակ՝ սպանված է 5.000 ատրպատականցի զինվոր, որից, հավանաբար.

- 1.000 կատաֆրակտոս,
- 1.000 թեթև հեծելազոր,
- 1.000 նետաձիգ,
- 1.000 նիզակակիր,
- 1.000 վահանակիր:

Գերի է վերցված մոտ 20.000 ատրպատականցի զինվոր, մնացած 3.000-ը՝ դասալիքներ (անխուսափելի երևույթ նման դեպքերում):

Սպանված է մոտավորապես 5.000 հայ զինվոր, որից,

- 1.000 կատաֆրակտոս,
- 1.000 թեթև հեծելազոր,
- 2.000 նետաձիգ,
- 1.000 նիզակակիր:

Գերի է վերցված 8.500 հայ զինվոր, որից մոտավորապես 1.500 հեծյալ.

- 1.000 կատաֆրակտոս,
- 500 թեթև հեծելազոր,
- 4.000 նետաձիգ,
- 1.000 նիզակակիր,
- 2.000 սակրավոր և օժանդակ զորք:

Հայերի ընդհանուր կորուստը ճակատամարտում՝ 13.500 զինվոր.

- 2.000 կատաֆրակտոս,
- 1.500 թեթև հեծելազոր,
- 6.000 նետաձիգ,
- 2.000 նիզակակիր,
- 2.000 սակրավոր և օժանդակ զորք:

Հայաստան վերադարձած զորաբանակի կազմը՝

- 2.000 կատաֆրակտոս,

- 4.500 թեթև հեծելազոր,

Ընդամենը՝ մոտավորապես 6.500 զինվոր:

Պարթևների ընդհանուր կորուստները, հավանաբար, չէին գերազանցում 5-6.000 սպանվածների, որոնց ըստ զորատեսակների կարելի է համարել.

- 1.000 կատաֆրակտոս,
- 2.000 թեթև հեծելազոր.
- 2-3.000 հետևակային՝ նիզակակիր և նետաձիգ:

Այսպիսով, Փրաասպայի գլխավոր ճակատամարտում ոչնչացվեց հայ-ատրպատականյան բանակը, որը տվեց 10.000 զոհ և մի քանի տասնյակ հազար գերի, մեր ենթադրությամբ՝ 28.500 զինվոր:

Ատրպատականը դուրս եկավ հայկական տերության համակարգից և մտավ պարթևական տերության կազմի մեջ որպես ենթակա թագավորություն: Ատրպատականցի ռազմագերիների մեջ որոշակի զտումներ կատարելուց և նոր թագավորին երդում տալուց հետո, նրանք ազատվեցին գերությունից (սովորական զինվորականների հանդեպ այս ժամանակաշրջանում անիմաստ դաժան վերաբերմունքի օրինակները հայ-պարթևական կամ հայ-պարսկական պատերազմների պատմության մեջ շատ քիչ են):

Սակայն ատրպատականցիներին Տիգրան Մեծի դեմ օգտագործել Հրահատ Գ-ն չհամարձակվեց, դեռ շատ վառ էր նրանց մեջ համատեղ քսանամյա ռազմական դաշնակցությունն ու եղբայրությունը, ինչպես նաև իրենց սիրված զահակալի՝ Միհրդատ Մեդացու հերոսական մահը:

Գերի ընկած հայ զինվորների հանդեպ վարվում էին մեղմ և հարգալի, որովհետև նրանք համարվում էին իրենց դաշնակից «Տիգրան Գ» թագավորի ապագա զինվորները և, վերջապես, նախորդ հայ-պարթևական պատերազմները նույնպես գերիների հանդեպ փոխադարձ դաժան վերաբերմունքի ավանդույթ չէին թողել:

Քիչ հավանական է, որ գերի վերցված հայ զինվորներին թողել էին Ատրպատականում: Ամենայն հավանականությամբ նրանց տեղափոխել էին Պարթևական տերության Արևելք՝ սահմաններն ամրացնելու համար:

Ընթերցողին կարող է թվալ, որ ես չափազանցնում եմ Փրաասպայի ճակատամարտում հայոց պարտության աստիճանը: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել Տիգրան Մեծի համար Ատրպատականի կորուստը և ռազմաքաղաքական վիճակի խիստ վատթարացումը: Եթե չլիներ ծանր պարտության գործոնը, որը միանգամից ընդհանուր իրավիճակը թեքել էր հօգուտ Հրահատ Գ-ի, ապա այսպիսի ռազմաքաղաքական զարգացումներ Տիգրան Մեծը երբեք թույլ չէր տա և Ատրպատականում ծավալված պայքարի արդյունքներն էլ ուրիշ կլինեին:

56 տարվա պայքարից հետո վերջապես պարթևական Իրանին առաջին անգամ հաջողվեց լուրջ հարված հասցնել Հայկական թագավորությանը և, ինչպես թվում էր Հրահատ Գ-ին, վերջնականապես թեքել ուժերի հարաբերությունն իր օգտին: Սակայն անցավ միայն մի քանի ամիս և նա հասկացավ, թե ինչքան վաղաժամ էր մոտալուտ հաղթանակի իր սպասումը:

8.3.5. Փրաասպայի անկումը և հայկական զորաբանակի նահանջը Հայաստան

Փրաասպայի պաշտպանները, տեսնելով կամ տեղեկանալով ճակատամարտի արդյունքների մասին, հավանաբար անշան դիմադրություն ցույց տվեցին պարթևասեր ատրպատականյան ուժերին, որոնց ջանքերով բացվեցին քաղաքի դարպասները և ներս թողեցին հաղթած պարթևներին:

Քաղաքի հանդեպ կողոպուտ և դաժանություններ Հրահատ Գ-ն դժվար թե հանդուրժեր, այլապես դժվար կլիներ բացատրել մեդացիներին հայերից «ազատելու» գաղափարախոսությունը և ապահովեր իր դրածո Դարեհի հեղինակությունը:

Ճակատամարտի ժամանակ կենդանի մնացած և գերությունից խույս տված հայկական հեծելազորին պարթևները հզոր հեծելաբանակով հետապնդեցին մինչև Հայաստանի խորքերը, որտեղ նրանց ետ մղեցին օգնության հասած հայկական զորագնդերը: Պարթևների այս առաջապահ զորաբանակի հետևից շարժվում էին Հրահատ Գ-ի հիմնական ուժերը, որոնք գրավեցին Նոր Շիրակը, «յոթանասուն հովիտները» և Արարատյան դաշտի արևելյան հատվածը:

8.3.6. Միջագետքի հյուսիսի գրավումը պարթևների կողմից

Հաղթանակը Փրաասպայի գլխավոր ճակատամարտում և Ատրպատականի գրավումը Հրահատ Գ-ին թույլ տվեց իրագործել իր ծրագրի միջագետքյան մասը՝ պարթևական ուժեղ զորաբանակը, մոտ 10.000 զինվոր, մտավ Ադիաբենե, հետո Միգդոնիայից հարավ գտնվող Հաղրիենե և, վերջապես, Օսրոյենե, որոնք առանձ լուրջ դիմադրության ենթարկվեցին պարթևներին:

Միգդոնիայում, Աղձնիքում և Կորդուքում տեղադրված հայկական զորքերը Ադիաբենեյում, Հաղրիենեյում և Օսրոյենեյում պարթևներին խոչընդոտել չէին կարող, սակայն Կորդուքը նրանց ոտնձգություններից պահպանել, համենայն դեպս, հաջողվեց: Այստեղ ներթափանցած պարթևներին հայերը ջարդեցին և ետ շպրտեցին:

66 թ. գարնան վերջին և ամռան սկզբին Պարթևական տերությունը, դաշնակցելով Հռոմեական տերության հետ, ուժեղ հարված հասցրեց Հայկական կայսրությանը և գրավելով Ատրպատականը, հետագայում մտնելով անկախացած հյուսիսմիջագետքյան պետությունները, գրեթե ամբողջովին փլուզեց Հայկական կայսրությունը: Վերջինս սահմանափակվեց միայն հայկական երկրամասերով և կիսահայկական Կորդուքով ու Միգդոնիայով:

Պարթևական անհաջողությունը Կորդուքում պատահականություն թվաց հաջողություններից արբեցած Հրահատ Գ-ին և չսթափեցրեց: Հարավային Հայաստանի նահանգներում տեղադրված հայկական զորաբանակների ուժը նա դեռ կզգա հաջորդ՝ 65 թ. իրադարձությունների ժամանակ:

8.3.7. Պարթևների մուտքն Արարատյան դաշտ և Արտաշատի պաշարումը

Փրաասպայի գլխավոր ճակատամարտում հաղթանակ տանելուց և Ատրպատականը գրավելուց հետո դեպի Արտաշատ արշավող պարթևական զորքերը այլևս ոչ մի լուրջ խոչընդոտի չհանդիպեցին:

Տիգրան Մեծի զորաբանակները տեղադրված էին Փոքր Հայքի սահմանագլխին, Աղձնիքում, Միգդոնիայում, Կորդուքում, Ծոփքում, Գուգարքում, Արտաշատում: Նոր Շիրականի բդեշխի զորաբանակը ծանր պարտություն էր կրել Ատրպատականում և ետ շպրտվել Արարատյան դաշտ: Տիգրանին ժամանակ էր պետք իր ուժերը վերադասավորելու և ուժեղ դաշտային բանակ ձևավորելու համար:

Պարթևներին դեպի Արտաշատ մայրաքաղաք ամենահարմար և կարճ ճանապարհներով ուղղորդեց Տիգրան Կրտսերը:

Փրաասպայի ճակատամարտից մեկ ամիս հետո, պարթևներն արդեն կանգնած էին Արտաշատի պարիսպների տակ, սակայն Արտաշեսի և Հաննիբալի հանճարով ստեղծված հզոր պաշտպանական կառույցները հուսալիորեն կանգնեցրին թշնամու հարձակումը:

Արտաշատը 150.000 բնակիչ ունեցող մեծ և բարեկեցիկ քաղաք էր: Շրջակա գյուղական բնակչության հետ միասին, քաղաքում պատսպարված բնակչության թիվը կարող էր հասնել 200.000-ի: Չնայած մայրաքաղաքում կենտրոնացած էր հսկայական քանակությամբ պարեն ու զենք, Տիգրան Մեծը գիտակցում էր, որ չարժի փորձել քաղաքի պաշտպանների ոգու տոկունությունը երկարատև պաշարումով՝ պարթևներին Արտաշատի մոտ երկար թողնել չէր կարելի: Պարթևներից քաղաքը պաշտպանելու համար անհրաժեշտ էր մայրաքաղաքում կենտրոնացնել ոչ պակաս, քան 20.000 զինվոր:

8.3.8.Հայկական բանակի հակահարձակումը

Պարթևներին ջախջախելու համար Տիգրան Մեծը հեռացավ սարերը [42, 51] և սկսեց իր մոտ կենտրոնացնել անհրաժեշտ ուժերը: Հայկական բանակի հեծյալ ստորաբաժանումները պարբերաբար դժվարացնում էին պարթևական բանակի պարենավորումը և անհրաժեշտ կապ էին ապահովում պաշարված Արտաշատի հետ:

Տիգրան Մեծը, առաջին հերթին, հավանաբար, դժվարացրեց կապը Պարթևստանի (Ատրպատականի սահմանով) հետ՝

հայկական թեթև հեծելազնդերը հարձակվում և ջախջախում էին պարթևների մանր զորամիավորումները և կապի ծառայությունները, որի պատճառով այս ճանապարհով կարողանում էին տեղափոխվել միայն խոշոր զինվորական միավորումները:



Նկար 8.8. Արտաշատի պեղումներ՝ կատապուլտի գնդեր (քարից) [63]:

Արտաշատի պաշտպանները ետ մղեցին պարթևների բոլոր գրոհները, մեծ կորուստներ պատճառելով պաշարողներին: Մի քանի գրոհից հետո պարզ դարձավ, որ պարթևների պաշարողական հնարքներն անբավարար են Արտաշատի՝ աշխարհի ամենահզոր պաշտպանական համակարգերից մեկը, հաղթահարելու համար: Քաղաքի անառիկությունը, պաշարվածների ռազմական հմտությունը, Արտաշատի մոտակայքում պարբերաբար հայտնվող հայկական թեթև հեծելազորայինների վաշտերի և գնդերի ակտիվությունը պարտադրաբար պետք է, որ ազդեին պարթևական բանակում տիրող տրամադրությունների վրա՝ արտաշատյան արշավանքի անհաջողություններից սկսեց խամրել Ատրպատականում տարած փայլուն հաղթանակի արևը:

Վերջապես իր խոսքն ասացին հայերի հին դաշնակիցները՝

սակարաուկները, Տիգրան Մեծի խորհրդով կրկին անհանգստացնելով Պարթևստանի արևելյան սահմանը:

Արտաշատի պաշարումն արդեն տևում էր ավելի քան մեկ ամիս, երբ Հրահատ Գ-ն իր երկրի արևելյան սահմաններից սկսեց տագնապալի լուրեր ստանալ: Պարթևաց թագավորի համար Արտաշատի պաշարումը խիստ անցանկալի ռազմական գործողություն էր՝ պարթևական բանակը ուժեղ էր ոչ թե պաշարողական հնարքներով, այլ իր արագաշարժ հեծելազորով:

66 թ. ամառվա վերջին Հրահատ Գ-ն, Արտաշատը պաշարելու համար խոշոր բանակ թողնելով, հարկադրված էր վերադառնալ Պարթևստան:

8.3.9.Հայկական և պարթևական բանակների վիճակն ու կորուստները Արտաշատի ճակատամարտի նախօրեին

Հայկական բանակի կորուստները երրորդ հայ-պարթևական պատերազմում՝ մինչև Արտաշատի գլխավոր ճակատամարտը, կարող ենք հաշվարկել՝ ելնելով տեղի ունեցած մարտերում և արշավներում նրանց հավանական կորուստներից: Ատրպատականից վերադարձած հեծյալ զորագնդում մնացել էր 2.500 կատաֆրակտոս և 4.000 թեթև հեծելազոր, ընդամենը՝ 6.500 զինվոր: Երրորդ հայ-պարթևական պատերազմի սկզբից հայկական բանակը Փրաասպայի ճակատամարտում պարտվելուց հետո ունեցել էր հսկայական կորուստներ ոչ այնքան սպանվածներով, որքան գերիներով՝ 13.500 զինվոր: Հաշվի առնելով այս կորուստները, որոնց գումարվում էին Արտաշատի պաշարման ժամանակ ունեցած կորուստները, ինչպես նաև մանր մարտերում տարած կորուստները՝ 1.000 հետևակային Արտաշատի պաշտպաններից և մոտ 500 թեթև հեծյալ, կարող ենք հայկական բանակի ընդհանուր կորուստները պատերազմի սկզբից համարել մոտ 15.000 զինվոր:

Այժմ պարզենք, թե ինչպես կարող էին բաշխված լինել հայկական զինված ուժերը Հայաստանում և ինչ բանակ կարող էր հանել պարթևների դեմ Տիգրան Մեծը:

Եթե կատաֆրակտոսների 10 գնդում և դրանիկ 2 գնդերում պատերազմներից հաշվված և հիվանդությունների պատճառով

առաջացած անձնակազմի ընդհանուր պակասը համարենք մոտ 10%՝ 1.000 զինվոր, 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմում կատաֆրակտոսների կորուստը ևս մոտ 1.000 զինվոր, սպա հայկական բանակը 66 թ. գարնան վերջին Փրաասպայի ճակատամարտում կատաֆրակտոսների ծանր կորուստներ ունեցավ, որոնցից 1.000-ը զոհվել, իսկ 1.000-ն էլ գերի էին ընկել: Այդպիսով, Տիգրանն իր զինված ուժերում նախատեսված 12.000 կատաֆրակտոսներից շարքում ուներ մոտավորապես 8.000 կատաֆրակտոս: Ծոփքում և Աղձնիքում գտնվող զորաբանակների կազմում նա պետք է թողներ գոնե մեկական գունդ կատաֆրակտոս՝ մոտ 2.000 զինվոր: Այս գնդերը այդ զորաբանակների գլխավոր հարվածային ուժն էին:

Այսպիսով, Տիգրան Մեծը Արտաշատի գլխավոր ճակատամարտի նախօրեին իր ճամբարում կարող էր կենտրոնացնել միայն 4 գունդ կատաֆրակտոսներ, որոնք արքայից արքայի 2 գունդ թիկնազորի հետ միասին կազմեցին 6.000 զինվոր:

Հայկական թեթև հեծելազորը, որի կազմը պետք է լիներ 20.000 հեծյալ նույնպես ծանր կորուստներ էր ունեցել 69 – 66 թթ. հայ-հռոմեական և նոր սկսված երրորդ հայ-պարթևական պատերազմում: Բացի պատերազմներից հաշված և հիվանդությունների պատճառով առաջացած անձնակազմի պակասից՝ մոտ 10%՝ 2.000 զինվոր, ընդհանուր պակասը համարենք 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի կորուստը չհամարած ևս մոտ 2.000 զինվորներ, 66 թ. գարնանն Ատրպատականում հայերը կորցրել էին ևս մոտ 1.500-2.000 հեծյալ, միասին՝ 6.000 զինվորի կորուստ: Այսպիսով, թեթև հեծելազորը իր կազմում ուներ մոտ 14-15.000 զինվոր, որից Տիգրանը պարթևների դեմ կարող էր կենտրոնացնել ոչ ավելի, քան կեսից մի փոքր ավելին՝ մոտ 8.000 հեծյալ: Այսպիսով, Տիգրանը պարթևների դեմ կարող էր կենտրոնացնել միայն 14.000 հեծելազոր, որը զգալիորեն քիչ էր հակառակորդի հեծելազորից:

Ծանր հետևակի՝ վահանակիրների 6 զորագունդ-լեգեոններում, հավանաբար, պատկերն հետևյալն էր.

5 լեգեոն-զորագունդ ունեին 4.000-ական զինվոր և Արտաշատում գտնվող լեգեոն-զորագունդը, որը համեմատաբար քիչ կորուստ էր տվել 69- 66 թթ. հայ-հռոմեական պատերազմում՝ 5.000 զինվոր, ընդամենը՝ 25.000 զինվոր: Այս ուժերից Արտաշատի լեգեոնը պաշտպանում էր մայրաքաղաքը, մեկն էլ հավասարաբար գտնվում էր Ծոփքում: Տիգրանն, ըստ ամենայնի, իր մոտ ուներ 4 լեգեոն-զորագունդ՝ մոտ 16.000 վահանակիր:

20.000 նետաձիգներից միայն 2.000 զոհվել էր Փրաասպայի ճակատամարտում և 4.000 գերի էին ընկել: Եթե դրան գումարենք այլ կորուստները, սպա հայկական բանակում մնացել էր մոտավորապես 10.000 նետաձիգ, որոնցից մոտավորապես 4.000 կենտրոնացել էին արքայից արքայի բանակում: Եթե այս թվին գումարենք մոտ 2.000 սակրավոր և այլ օժանդակ զորամիավորումներ, Տիգրան Մեծի հավաքած բանակի պատկերը կամբողջականանա.

-6.000 կատաֆրակտոս,

-8.000 թեթև հեծելազոր,

-16.000 վահանակիր,

-4.000 թեթև հետևակ,

ընդամենը՝ 34.000 զինվոր, որին գումարելով 2.000 օժանդակ զորքը, միասին՝ 36.000 զինվոր:

Մնացած հայկական զորքերը կենտրոնացած էին Աղձնիքի, Ծոփքի, Գուգարքի, Միգդոնիայի բդեշխների զորաբանակներում, Փոքր Հայքի սահմանագլխին և Արտաշատում, որի 10.000-ոց կայազորին միացել էր նաև 10.000 քաղաքային աշխարհազորը, սակայն այս անգամ կազմված միայն հայերից, ավելին՝ հիշելով Տիգրանակերտի ճակատագիրը, պաշարված Արտաշատում օտարազգի թաղամասերը շուրջօրյա վերահսկվում էին հայկական հատուկ ջոկատներով: Այդ կայազորի կեսը կազմում էր Արտաշատում գտնվող լեգեոն-զորագունդը, մնացած 5.000-ից 3.000 նետաձիգներ և 2.000 սակրավոր և այլ օժանդակ զորք էին:

Պարթևական բանակի կորուստները և համալրումները երրորդ հայ-պարթևական պատերազմում՝ մինչև Արտաշատի գլխավոր ճակատամարտը, նույնպես կարող ենք խիստ մոտավոր հաշվարկել, ելնելով տեղի ունեցած մարտերում և արշավներում նրանց կորուստներից:

Պարթևները կորուստ էին ունեցել Փրաասպայի գլխավոր ճակատամարտում, աննշան կորուստներ՝ Հայաստան արշավելիս և զգալի կորուստներ էին ունեցել Արտաշատը պաշարելիս՝ գրոհների ժամանակ:

Փրաասպայի ճակատամարտում մեր ընդունած կորուստներին.

-1.000 կատաֆրակտոս,
-1.000 թեթև հեծելազոր,
-2.000 նիզակակիր և
-1.000 նետաձիգ,
անհրաժեշտ է գումարել մոտ 500 թեթև հեծելազոր արշավի ժամանակ և մոտ 3-4.000 հետևակային՝ 2.000 նիզակակիր և մոտավորապես նույնքան նետաձիգ, զոհված Արտաշատի վրա կատարած գրոհների ժամանակ:

Այսպիսով, պատերազմի սկզբից պարթևները կորցրել էին մոտ 2.500 հեծելազոր և 6-7.000 հետևակային:

Տիգրան Կրտսերի հայկական զորագնդերը նույնպես մասնակցել էին թեժ մարտերին և նրանց կորուստը խիստ մոտավոր կարելի է համարել 500 հեծյալ և հետևակային, որով պարթևական կողմի կորուստները մոտենում էին 10.000 զինվորի:

Փրաասպայում, իր գերակայությունը հաստատելու համար, Հրահատ Գ-ն պետք է թողներ գոնե աննշան քանակով պարթևական զորքեր: Մինչև Պարթևստանից նոր ուժեր ուղարկելը, իրեն բավարար կլիներ թողնել մոտ 500 թեթև հեծելազոր և մոտ 1.000 սակրավոր:

Պարթևստան վերադառնալիս, Հրահատ Գ-ն, Արտաշատի պաշարման համար թողեց մեծ բանակ, որն իր վերադարձի նախօրեին հավանաբար համալրեց նաև ատրպատականյան հետևակով: Ինչ ու հետևակով, որովհետև ատրպատականյան հետևակը միայն մեկ անգամ՝ 69 թ. Տիգրանակերտի ճակատամարտի ժամանակ հայկական կայսրության բանակի կազմում մասնակցել էր ռազմական գործողություններին, իսկ ատրպատականյան ամենամարտունակ հեծելազնդերը սպանված Միհրդատ Մեդացու ռազմական ընկերներն էին, որոնք տարիներ շարունակ հայ զինակիցների հետ մասնակցել էին բազմաթիվ պատերազմների ընդհանուր թշնամու դեմ: Այդ պատճառով նրանք մնացին Ատրպատականում Դարեհի հրամանատարության տակ, իսկ հետևակից ոչ պակաս, քան 10.000 զինվոր ուղարկվեց համալրելու Արտաշատի տակ ճամբարած պարթևական բանակը: 10.000 հետևակայինի պետք է ուղեկցեր ոչ պակաս, քան 1.000 թեթև հեծելազոր և 1.000 օժանդակ զորք (զորաբանակը գնում էր օգնության քաղաքը պաշարած զորքին), այսպիսով, մինչև մեկնելը Հրահատ Գ-ն, ապահովեց իր բանակն մեծաքանակ համալրումով:

Հրահատ Գ-ն պետք է մեկներ Պարթևստան հզոր հեծյալ զորաբանակով, իր կազմում ունենալով մոտ 2-3.000 կատաֆրակտոս և մոտ 4-5.000 թեթև հեծելազոր: Հայկական զորքերի ամենավտանգավոր մասը կազմում էին կատաֆրակտոսները, ուստի Հրահատը շահագրգռված պետք է լիներ Հայաստանում գտնված պարթևական բանակում հնարավորին չափ շատ կատաֆրակտոսներ ունենալ, այդ պատճառով, հավանաբար նա Պարթևստան էլ գնացել իր հեծյալ թիկնազորով՝ 2.000 կատաֆրակտոսներ և 2.000 թեթև հեծելազոր, որին ավելացրել էր ևս 3.000 թեթև հեծելազորի զորագունդ, ընդամենը՝ 7.000 հեծյալ:

Եթե ընդունենք, որ այս պայմանական թվերը կարող են ինչոր չափով մոտենալ ճշմարտությանը և արտացոլել մ.թ.ա. I դարի մոտավոր իրադրությունը, ապա կարող ենք հաշվարկել 66 թ. ամռան վերջին Արտաշատի տակ կանգնած պարթևական բանակի թվաքանակը և մոտավոր կազմը:

Պարթևական զորքեր.
-9.000 կատաֆրակտոսներ,
-11.000 թեթև հեծելազոր,
- 6.000 նիզակակիր,
- 7.000 նետաձիգ,
ընդամենը 33.000 հեծելազոր ու հետևակ և 4.000 օժանդակ զորք, միասին 37.000 զինվոր:

Ատրպատականյան զորաբանակը (ժամանակին՝ 85 թ., պարթևների դեմ պատերազմելիս, Տիգրան Մեծն էր համալրել իր բանակը Միհրդատ Մեդացու ատրպատականցիներով) կազմում էր մոտավորապես
-1.000 թեթև հեծելազոր,
-5.000 նիզակակիր,
-5.000 նետաձիգ և
-1.000 օժանդակ զորք,
ընդամենը 11.000 հեծելազոր ու հետևակ և 1.000 օժանդակ զորք, միասին 11.000 զինվոր:

Տիգրան Կրտսերի հայկական զորաբանակը, Հայաստանում իր համախոհների հաշվին, հավանաբար, վերականգնել էր իր կորուստները և մոտավորապես կարող էր կազմել.
-2.000 թեթև հեծելազոր,
-1.000 նիզակակիր և
-2.000 նետաձիգ,

ընդամենը 5.000 հեծելազոր ու հետևակ:

Իր հպատակներով և դաշնակիցներով, Արտաշատի գլխավոր ճակատամարտից առաջ պարթևական բանակը կարող էր ունենալ.

-9.000 կատաֆրակտոս,
-14.000 թեթև հեծելազոր,
-12.000 նիզակակիր,
-14.000 նետաձիգ,

ընդամենը 49.000 հեծելազոր ու հետևակ և 5.000 օժանդակ զորք, միասին 54.000 զինվոր: Այս հսկայական բանակը ունակ էր միաժամանակ շրջափակման մեջ պահել Արտաշատի պաշտպաններին և դիմավորել վրա հասած Տիգրան Մեծի բանակին:

Այս զորքերից պաշարողական ճամբարի պաշտպանական պատնեշների հետևում թողնելով 1.000 թեթև հեծելազոր, 2.000 նիզակակիր, 2.000 նետաձիգ և 5.000 օժանդակ զորք՝ 10.000 զինվոր, մնացած 44.000-ոց բանակով պարթևները շարժվեցին Տիգրան Մեծի բանակի դեմ՝ իր կազմում ունենալով 22.000 հեծելազոր, որից 9.000 կատաֆրակտոս և 22.000 հետևակ, որից 10.000 նիզակակիր ու 12.000 նետաձիգ: 66 թ. ամռան վերջին օրերին կամ աշնան սկզբին սարերից իջած հայկական 34.000 բանակը Արտաշատի մոտակայքում գրոհեց պարթևական 44.000-ոց բանակի դեմ:

8.4. Արտաշատի գլխավոր ճակատամարտը

«Երբ հաղթողը կռվում է, այդ նման է կուտակված ջրին, որ ահռելի բարձրունքից գահավիժում է ցած՝ հովիտ: Սա էլ հենց ձևն է:»
Սուն Ցզի (մ.թ.ա. VI դ., Չինաստան) [300]:

8.4.1.Տիգրան Մեծի ծրագրերը և հայկական բանակի զորադասավորումը

Տիգրան Բ Մեծ արքայից արքան մ.թ.ա. I դարի լավագույն զորավարներից մեկն էր, սակայն նրա առջև ծառացած էր շատ ծանր մի խնդիր՝ պարթևներին անհրաժեշտ էր հաղթել պահ-

պանելով երեք պայման.

-պարթևներին պետք էր խորտակել մե՛կ հարվածով, մե՛կ գլխավոր ճակատամարտում՝ Հռոմը ուր որ է պարտության կմատներ Միհրդատ Պոնտացուն և հայերը հարկադրված կլինեին միաժամանակ կռվելու երկու շատ ուժեղ բանակների դեմ,

-ճակատամարտում պետք էր կործանել պարթևների գլխավոր հարվածային ուժը՝ կատաֆրակտոսներին, որոնք ակնհայտ թվային գերազանցություն ունեին հայկական կատաֆրակտոսների հանդեպ, այն էլ հնարավորինս խնայելով սեփական ծանր այրուձին.

-ճակատամարտը շահել ուժերի նվազագույն կորստով, հաշվի առնելով հայկական զինված ուժերի գերլարված վիճակը:

Տիգրանի զորավարները Փրաասպայի գլխավոր ճակատամարտում փորձել էին ընկճել պարթևական հետևակին կենտրոնում և հարձակվել հեծելազորի վրա հետևակով, սակայն ծրագիրը չէր հաջողվել: Պարթևական հետևակը հիմնականում դիմացել էր հայկական և մեդական միջին (պելտաստներ) և ծանր (վահանակիրներ) հետևակի հարվածին այնքան, մինչև թվով խիստ գերակշիռ հեծելազորը թևերում պարտության էր մատնել հայկական և մեդական հեծելազորին:

Տիգրանը, որը Փրաասպայի ճակատամարտի ընթացքի մասին լավ տեղեկացված էր, վերլուծել էր անհաջողության երկու ամենակարևոր պատճառը.

-հայ և մեդացի նիզակակիրները և աղեղնավորները իրենց սպառազինությամբ և մարտաձևով կարող էին միայն համառ մարտում դանդաղորեն իրենց կողմ թեքել հաղթության նժարը, այն էլ այն դեպքում, եթե չխառնվեր պարթևական հեծելազորը. այսպիսի մարտառճը բավարար չէր ճակատամարտում հաղթելու համար,

-հայ-մեդական հետևակը մոտավորապես հավասար էր բաշխված ճակատով, հայերը թևերի գերազանցությանը փորձել էին հասնել այնտեղ ավելի մարտունակ հայկական հետևակային գնդեր տեղադրելով:

Հայ հետախույզների միջոցով Տիգրանը տեղեկացված էր պարթևական բանակի կազմի և թվաքանակի մասին և գիտակցում էր, որ եթե կիրառի 86-84 թթ. ռազմավարությունը, ապա կարող է պարտվել թշնամու գերակշիռ ուժերից: Անհրաժեշտ էր

անակնկալի բերել հակառակորդին:

Տիգրանը որոշեց մարտում կրկնել նույն զորադասավորումը, որը տեսնելով՝ պարթևները պետք է փորձեին կրկնել Փրաասպայի ճակատամարտը Արտաշատի մոտ և նույնպես հասնել հաղթանակի: Սակայն հայկական ծանր հետևակը այս անգամ պետք է պարթևական հեծելազորի դեմ կիրառեր հռոմեական հետևակային մարտավարությունը, որին հայերը ծանոթացան Լուկուլլոսի լեգեոնների դեմ մարտնչելիս:

Պարթևական ռազմական գիտակցությանը խորթ էր այն միտքը, որ կենտրոնում կանգնած հետևակը կարող է արագ ընկճել հակառակորդի հետևակին, առավել ևս գրոհել թևերին գտնվող հեծելազորի վրա: Հատկապես սպասելի չէր դա հայերից, որոնք, ինչպես լավ գիտեին պարթևները, ճակատամարտերում օգտագործում էին հիմնականում նույն պարթևական մարտավարությունը:

Տիգրանը որոշեց իր ողջ թեթևազեներին և 4 լեգեոն-զորագնդերից երեքը շարել առաջին գծում՝ 12.000 վահանակիր, 4-ը՝ 4.000 վահանակիր, տեղադրել մեջտեղում կանգնած լեգեոնի հետևում, կազմելով երկրորդ գիծը, ձախ թևում տեղադրել բոլոր կատաֆրակտոսներին՝ 6.000 հեծյալ և մեկ զունդ թեթև հեծելազոր՝ 1.000 հեծյալ, իսկ աջ թևում՝ մնացած թեթև հեծելազորը՝ 7.000 հեծյալ: 4.000-ոց Ոթեթև հետևակը կանգնելու էր լեգեոնների առջևում և իր հեռահար միջոցներով սկսելու էր հետևակային մարտը:

Մարտը սկսվելուց արդեն մի քանի րոպե հետո երկրորդ գծում գտնվող զորագունդ-լեգեոնը պետք է շարժվեր դեպի ձախ թևի լեգեոնի թիկունքը, որից հետո թևից հարվածեր պարթև կատաֆրակտոսներին. Տիգրանը որոշեց կիրառել պարթևների դեմ այն հնարքը, որը Լուկուլլոսը կիրառել էր իր դեմ Տիգրանակերտի ճակատամարտում:

Հայկական ծանր հետևակի հիմնական խնդիրը պարթևական հետևակին հնարավորինս շուտ ընկճելն էր և փախուստի մատնելն, որից հետո միայն կարելի էր հարվածել պարթևական հեծելազորին, այդ թվում փորձել աքցանի մեջ գցել և ոչնչացնել հատկապես պարթև կատաֆրակտոսներին:

Ճակատամարտում հաղթելուց հետո Տիգրանը նախատեսում էր անընդհատ հետապնդման միջոցով վերջնականապես կազմալուծել և ոչնչացնել պարթևական բանակը:

Տիգրանն իր դաշտային բանակում կենտրոնացրել էր հայկական բանակի ծաղիկը՝ մարտական հսկայական փորձ ունեցող գնդերը: Հայկական բանակի սպայակազմը և հրամանատարությունը մարտական փորձով հիմնականում գերազանցում էր պարթևներին:

Տիգրան Մեծի ծրագիրն իրատեսական էր և համապատասխանում էր մարտերում կուտակված հայկական բանակի հնարավորություններին:

8.4.2.Պարթևների ծրագրերը և բանակի զորադասավորումը

Պարթևների զորավարները և Տիգրան Կրտսերը որոշել էին Արտաշատի ճակատամարտում օգտագործել իրենց երկու կարևորագույն զործոնները՝ բանակի մեծաթվությունը և մարտունակ փորձված հեծելազորի գերակշռությունը:

Ճակատամարտում, հավանաբար, պարթևները ընտրել էին նախկին մարտառճը, որը նրանց հաջողության էր բերել Փրաասպայում, միայն մարտական գծի ապահովությունը բարձրացնելու համար հետևակի կենտրոնի թիկունքում կարող է տեղադրած լինեին լրացուցիչ մեկ-երկու զունդ թեթև հեծելազոր:

Պարթևական հետևակը, որին անհրաժեշտության դեպքում օգնության կհասներ նաև պահեստային երկրորդ գծում գտնվող հեծելազունդը իր թվային գերակշռությունից և ուժեղ հեծելազորի մոտալուտ հաղթանակից ոգևորված, պետք է հայկական հետևակի գրոհին դիմանար այնքան, մինչև թևերին մարտնչող հեծելազնդերը չընկճեին հայերին և թիկունքից չհարվածեին հայկական հետևակին:

Պարթևները իրենց աջ թևին կենտրոնացրել էին, ըստ երևույթին, կատաֆրակտոսների բոլոր գնդերը՝ 9.000 հեծյալ, որոնց թևը պաշտպանել էին թեթև հեծելազորի երկու գնդով՝ 2.000 հեծյալ, կենտրոնում տեղադրել հետևակը, որի թիկունքում կանգնած էր մեկ-երկու զունդ թեթև հեծելազոր, իսկ ձախ թևում կենտրոնացրել մնացած թեթև հեծելազորի ինը-տասը զունդը՝ 9-10.000 հեծյալ: Կենտրոնում կանգնած հետևակը բաժանված էր երեք զորագնդի՝ կենտրոնի՝ 4.000 նիզակակիրներ (որոնց հետևից որոշ հեռավորության վրա դասավորված էին 1-

2.000 թեթև հեծյալ) և 4.000 նետաձիգներ, աջ և ձախ թևերի՝ 3.000-ական նիզակակիր և 4.000-ական նետաձիգ:

Պարթևական բանակը, որն արդեն որոշակիորեն հոգնել էր պաշարողական ծանր աշխատանքներից և քաղաքի պարիսպները գրոհելիս մեծ կորուստներ կրելուց, ոգևորությամբ էր սպասում մոտալուտ ճակատամարտին, հուսալով մեկ հարվածով ընկճել հայերի դիմադրությունը:

Այսպիսով, պարթևական բանակն ուներ բավարար մարտական փորձ, հմուտ սպայակազմ, թվային առավելություն և բարձր մարտական ոգի:

8.4.3.Արտաշատի գլխավոր ճակատամարտի ընթացքը

Արտաշատի մոտակայքում 66 թ. ամառվա վերջին – աշնան սկզբին տեղի ունեցավ 66 – 64 թթ. երրորդ հայ-պարթևական պատերազմի երկրորդ՝ Արտաշատի գլխավոր ճակատամարտը:

Տիգրան Մեծի բանակը հայտնվեց Արտաշատի մատույցներին և ճամբարեց քաղաքից ոչ այնքան հեռու: Մի քանի օր հետո հայկական և պարթևական բանակների միջև տեղի ունեցավ մեծ ճակատամարտ:

Ճակատամարտի ընթացքը կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝

0.նախնական զորադասավորումը,

1.հեծելազորային և հետևակային մարտի սկիզբը,

2.հայկական ծանր հետևակի զորաշարժը,

3.հայկական հետևակի հաղթանակը ձախ թևում և գրոհը պարթև կատաֆրակտոսների վրա,

4.պարթևական ծանր հեծելազորի պարտությունը, թեթև հեծելազորի չափավոր հաջողությունը,

5.պարթևական բանակի վերջնական ջախջախումը և փախուստը:

Ճակատամարտից անմիջապես հետո սկսվեց պարթևական բանակի ռազմավարական հետապնդումը:



Գծանկար 8.9. Արտաշատի գլխավոր ճակատամարտը. պատկերող գծանկարների պայմանական նշանները:



Գծանկար 8.10. Արտաշատի գլխավոր ճակատամարտը. կողմերի նախնական զորադասավորումը:

8.4.3.1.Հեծելազորային և հետևակային մարտի սկիզբը

Մարտը սկսեց թեթև հետևակը. 4.000 հայ և 12.000 պարթև, մեդացի և հայ նետաձիգներ և պարսավորներ նետվեցին միմյանց դեմ: Սկսվեց ուժգին հեռամարտ, որտեղ մեկը երեքի դեմ կռվող հայոց աղեղնավորները և պարսավորները հսկայական կորուստներ ունեցան և հաղթելու ոչ մի հնարավորություն չունեին: Սակայն նրանց զոհողությունը հասավ իր նպատակին՝ նրանք պաշտպանեցին պարթևների վրա գրոհող վահանակիրների կոհորտները ծանր կորուստներից, որով էլ ապահովեցին հայկական ծանր հետևակի հարվածի թափը:

Մի փոքր անց միմյանց վրա նետված թեթև հեծելազորների մեջ ևս կատաղի մարտ սկսվեց: Հայ վահանակիրների բոլոր 4 լեգեոն-զորագնդերը շարված էին հռոմեական ոճով՝ 4 կոհորտ առաջին և 3-ական երկրորդ ու երրորդ գծերում: Վահանակիրների սպառազինության մի մասը ռազմավարային՝ հռոմեական էր, միայն վահանների մակերեսը հռոմեականից տարբերելու համար, դեռ 69-67 թթ. ներկված էր հայկական գույներով և զարդանախշերով:

Առաջին գծի 3 լեգեոնը այնպիսի ուժով հարվածեցին պարթև նիզակակիրներին և հարվածից խուսափել չհասցրած նետաձիգներին ու պարսավորներին, որ պարթևների մարտական գիծը միանգամից ճկվեց դեպի ետ, նրա որոշ հատվածներում մի քանի կոհորտներ բավականին խորը մխրճվեցին պարթև հետևակայինների զանգվածի մեջ. ճակատամարտի կենտրոնում կատաղի ձեռնամարտ սկսվեց:

Մի փոքր ուշացումով, հայկական և պարթևական կատաֆրակտոսների գնդերը նույնպես գրոհեցին միմյանց դեմ: 6.000 հայ կատաֆրակտոսներ 9.000 պարթևներին դիմակայելու համար հարկադրաբար մեկ և կես անգամ փոքրացրել էին իրենց դասավորության խորությունը: Նրանք դիմացան առաջին ահեղ հարվածին, սակայն որքան կդիմանան հետագա ձեռնամարտին՝ ժամանակի հարց էր:

Ճակատամարտի գծի ողջ երկայնքով մարտը թեժացավ:

Այդ պահին հայկական հետևակային երկրորդ գիծը պարթևների համար անսպասելի տեղաշարժ կատարեց դեպի ձախ՝ սկսվեց ճակատամարտի երկրորդ փուլը:



Գծանկար 8.11. Արտաշատի գլխավոր ճակատամարտը., առաջին փուլ՝ հեծելազորային և հետևակային մարտի սկիզբը:

8.4.3.2.Հայկական ծանր հետևակի զորաշարժը

Ճակատամարտը նոր էր սկսում թեժանալ, երբ երկրորդ գծում գտնվող հայկական 4-րդ լեգեոն-զորաբանակը հանկարծակի շրջադարձ կատարեց դեպի ձախ և արագ շարժվեց դեպի առաջին լեգեոնի թիկունքը: Պարթևներն այդ զորաշարժը նկատելով անհանգստացան, սակայն որևէ բան հակադրել չկարողացան:

Այս լեգեոնը արդեն տեղավորվում էր առաջինի ետևում, երբ առաջին գծում կռվող 1-ին լեգեոնը կտրուկ ուժեղացրեց հարձակման ուժը՝ այստեղ էին կենտրոնացած հայ վահանակիրների լավագույն վաշտերը՝ այն հերոսները, որոնց կոհորտները 68 թ. ուշ աշնանը դիմացել էին նույնիսկ հռոմեական լավագույն հետևակի՝ փիմբրիական լեգեոնների կատաղի գրոհներին:

Իր թիկունքում զգալով կանոնավոր շարքերով դանդաղ գրոհող 4-րդ լեգեոնի 4.000-ոց զանգվածը, 1-ին լեգեոնի զինվորները կարծես կրկնակի ուժ ստացան: Վերջապես դիմակայող պարթևական հետևակը չդիմացավ և սկսեց նահանջել. սկսվեց ճակատամարտի հաջորդ՝ երրորդ փուլը:



Գծանկար 8.12. Արտաշատի գլխավոր ճակատամարտը., երկրորդ փուլ. հայկական ծանր հետևակի զորաշարժի սկիզբը:



Գծանկար 8.13. Արտաշատի գլխավոր ճակատամարտը., երկրորդ փուլ. հայկական ծանր հետևակի զորաշարժը

8.4.3.3.Հայկական հետևակի հաղթանակը ձախ թևում և գրոհը պարթև կատաֆրակտոսների դեմ

Պարթևական հետևակի նահանջը պարթևների աջ թևում և հայկական հետևակի ձախ թևի առաջխաղացումը պարթևներին ստիպեց այս կողմ ուղարկել հետևակի երկրորդ գծում գտնվող 1-2.000 զինվորից բաղկացած թեթև հեծելագունդը (հեծելագնդերը), սակայն վերջինիս օժանդակությունն իր հետևակին նվազագույն էր՝ գտնվելով յուրայինների ստվար հետևակային զանգվածի հետևում, նա սահմանափակվեց միայն նետաձգությամբ (երբ ստեղծվում էր այդ հնարավորությունը) և հոգեբանական աջակցությամբ:

Երբ երկրորդ գծի լեգեոնի 4 կոհորտները ևս գրոհեցին պարթևական հետևակի վրա, վերջիններս չդիմացան և ետ շպրտվեցին: Նահանջն այնքան խորն էր, որ մերկացավ հայկական կատաֆրակտոսների դեմ կռվող պարթևական ծանր այրուձիու չպաշտպանված ձախ թևը: Հայկական 4-րդ լեգեոնի երկրորդ և երրորդ գծի կոհորտները խոյացան այնտեղ՝ պարթևական ծանր հեծելազորը ձախից ստացավ 2.400 հայ վահանակիրների հուժկու հարվածը:

Հոչակավոր պարթևական կատաֆրակտոսները, ինչպես և նրանց հայ գործընկերները խիստ մասնագիտացված պատերազմական գործիք էին: Նրանց անդիմադրելի գրոհները տասնյակ ճակատամարտերի ելքեր էին կանխորոշել, սակայն նրանց ամենաթույլ տեղը կանգնած կամ դանդաղ շարժման ժամանակ թևից հարված ստանալն էր:

Պարթև կատաֆրակտոսների վիճակը ծանրանում էր նաև նրանով, որ նրանց աջ թևին գտնվում էր պարթևական թեթև հեծելազորի պատկառելի՝ 2.000 հեծյալներից բաղկացած զանգվածը, առջևից նրանց դեմ մարտնչող հայ կատաֆրակտոսները, իսկ ձախից՝ հայ վահանակիրների գրոհող կոհորտները: Պարթև կատաֆրակտոսների բազմահազարանոց հսկայական զանգվածը չէր կարող ակնթարթային ետադարձ կատարել և փախչել մահաբեր կիսաօղակից:

Հայկական 1-ին լեգեոնի դեմ մարտնչող պարթևական հետևակի նահանջը շուտով սկսեց ավելի շատ նմանվել փախուստի և 4-րդ լեգեոնի առաջին 4 կոհորտները դուրս եկան պարթևական հետևակի դեմ ընթացող մարտից և թիկունքից գրոհեցին պարթև կատաֆրակտոսների դեմ: Նրանց չհաջողվեց ամբողջովին շրջապատել պարթևներին, սակայն նրանք զգալիորեն նեղացրին շրջապատման մահաբեր օղը:

Այդ ընթացքում հայկական հետևակի ուժգին հարվածների տակ պարթևական հետևակի մնացած զորագնդերը նույնպես սկսեցին նահանջել, իսկ հայկական աջ թևում հայկական թեթև հեծելազորը մեծ կորուստներ տալով թվով գերազանցող պարթևական թեթև հեծելազորի դեմ մարտում, այնուամենայնիվ դեռ կարողանում էր զսպել վերջինիս:

Ամենածանր վիճակում հայտնվեցին պարթև կատաֆրակտոսների աջ թևը պահպանող պարթևական թեթև հեծելազորի երկու գնդի դեմ կռվող հայկական մեկ թեթև հեծելագնդի հեծյալները: Նրանք մեծ խիզախությամբ մարտնչում էին՝ մեկը երկուսի դեմ, հսկայական կորուստներ կրում, սակայն չէին նահանջում՝ նրանց աջ թևից հնչող մարտական աղաղակներն արդեն ազդարարում էին հայոց մոտալուտ հաղթանակը:

Վերջապես պարթևական հետևակը, որն այս ճակատամարտում կռվում էր համառ և խիզախ, սակայն որը ոչ՝ սպառազինությամբ, ոչ էլ մարտական պատրաստությամբ չէր կարող համեմատվել հայ վահանակիրների հետ, այլևս չկարողացավ դիմակայել իրենցից ավելի լավ զինված ու վարժված, և ոչ պակաս քաջությամբ կռվող հայկական հետևակի ճնշմանը և դիմեց փախուստի: Պարթևական բանակի կենտրոնը կազմալուծվեց:

Հայկական լեգեոն-զորագնդերն անցան հետապնդմանը, իսկ 3-րդ լեգեոնի երկրորդ և երրորդ գծի կոհորտներն առանց շարվելու, զանգվածաբար նետվեցին պարթևական ձախ թևում կռվող պարթևական թեթև հեծելազորի վրա:

Սկսվեց ճակատամարտի նախավերջին՝ չորրորդ փուլը:



Գծանկար 8.14. Արտաշատի գլխավոր ճակատամարտը. երրորդ փուլ՝ հայկական հետևակի հաղթանակը ձախ թևում և գրոհը պարթև կատաֆրակտոսների վրա:

8.4.3.4. Պարթևական ծանր հեծելազորի պարտությունը և թեթև հեծելազորի չափավոր հաջողությունը

Պարթևական հետևակը ջախջախված էր և փախչում էր մարտի դաշտից, կատաֆրակտոսների գնդերը ծանր մարտ էին վարում կիսաշրջափակված վիճակում, սակայն ձախ թևի հեծելազորին արդեն հաջողվել էր գերազանցության հասնել հայկական ավելի փոքրաթիվ հեծելազորի հանդեպ, երբ այստեղ նույնպես պարթևական հեծելազորի վրա թևից հարձակվեցին հայ վահանակիրների կոհորտները:

Հաղթանակող պարթևական թեթև հեծելազորը նման թևային հարվածի չէր սպասում և նրա հարձակողական թափը զգալիորեն նվազեց:

Ճակատամարտը մտավ իր վերջնական՝ որոշիչ փուլը: Հայերը իրենց ձախ թևում ոչնչացնում էին պարթևական ռազմական մեքենայի գլխավոր հարվածային ուժը՝ կատաֆրակտոսներին, սակայն մեծ դժվարությամբ էին դիմանում երկու անգամ գերազանցող թեթև հեծելազորի գրոհին:

Կենտրոնում, հայկական հետևակի մի մասի կողմից հետապնդվող լրիվ կազմալուծված պարթևական հետևակը դիմել էր անկանոն փախուստի:

Հայկական աջ թևում թվային գերազանցություն ունեցող հաղթանակող պարթևական հեծելազորի վրա գրոհել էր հայկական ծանր և թեթև հետևակը և սկսել էր հաղթանակի վերածել աջ թևի հայկական հեծելազորի մարտը:

Հայկական բանակի գերազանցությունը դարձավ անվիճելի, սկսվեց ճակատամարտի վերջին՝ հինգերորդ փուլը:



Գծանկար 8.15. Արտաշատի գլխավոր ճակատամարտը. չորրորդ փուլ՝ պարթևական ծանր հեծելազորի պարտությունը և թեթև հեծելազորի չափավոր հաջողությունը:

8.4.3.5. Պարթևական բանակի վերջնական ջախջախումը և փախուստը

Վերջապես, պարթևական աջ թևում մարտնչող պարթևական թեթև հեծելազորը, տեսնելով իրենց բանակի, հատկապես կատաֆրակտոսների պարտությունը, դիմում է փախուստի, որով ազատում է պարթև կատաֆրակտոսների աջ թևը և դրանով խիստ թեթևացնում պարթև կատաֆրակտոսների փախուստը:

Պարթևների ձախ թևում կռվող թեթև պարթևական հեծելազորը ևս չի դիմանում հայկական հետևակի և հեծելազորի համատեղ ճնշմանը և նույնպես դիմում է փախուստի:

Այսպիսով, որջ պարթևական բանակը դիմում է փախուստի, իսկ հայկական զորքերն ամենուրեք անցնում են հետապնդման: Միայն հայկական ծանր հետևակը՝ վահանակիրները, շտապ համախմբում են իրենց շարքերը և կոհորտներով շարված շարժվում դեպի պարթևների ճամբարում մնացած զորքերը: Վերջիններս, տեսնելով հայկական հետևակի մոտեցող շարքերը և իմանալով իրենց դաշտային բանակի պարտության մասին, դուրս են գալիս ճամբարից և փախուստի դիմում: Նրանց հետապնդում է Արտաշատից դուրս եկած հայկական հեծելազունդը և գրեթե որջ թեթև հետևակը:

Տիգրանի հաղթած ծանր հետևակը մտնում է ուրախությունից ցնծացող քաղաքը, իսկ մնացած զորքերը հետապնդում են փախչող պարթևներին:

Տիգրանի բանակը վճռական հաղթանակ է տանում: Կոտրածը դադարում է և հայերը սկսում են գերի վերցնել իրենց հանձնվող պարթևներին:

Տիգրան Կրտսերը, որը ճակատամարտի ժամանակ իր կնոջը՝ պարթև Հրահատ Գ-ի դստերը իր կողքին էր պահում, որ հաղթանակից հետո որպես «թագավոր» մտներ Արտաշատ, իր համախոհների մի փոքր հեծելախմբի հետ լքում է ռազմի դաշտը և ուղևորվում դեպի Փոքր Հայք, իր Միհրդատ Եվպատոր պապի մոտ:

Պարթևական զորքերն սկսում են անկանոն փախչել դեպի Հայաստանի և Ատրպատականի սահմանագլուխը:

Ամեն անգամ, երբ կարդում էի անտիկ ժամանակաշրջանի

պատմիչների հաղորդումները մ.թ.ա. 53 թ. Խառանի ճակատամարտի մասին, որտեղ պարթև Սուրենը ջախջախեց Կրասոսի հսկայական բանակը, իմ մոտ առաջանում էր մի հարց՝ ինչպե՞ս պատահեց, որ Սուրենը, որը ոչ մի անգամ չէր պատերազմել հռոմեացիների դեմ, չէր շփվել հեծելազորի դեմ կիրառվող լեգեոնների մարտավարության հետ, այսքան վստահորեն խուսափեց հռոմեական զորավարների ծուղակներից և ոչ մի անգամ թույլ չտվեց, որ հռոմեացիներն իր հեծելազորի դեմ կիրառեն հետևակի ու հեծելազորի կոմբինացված հարվածը:

Միայն երանից հետո, երբ օգտագործելով վերականգնողական մեթոդի հնարավորությունները, վերականգնեցի 66-64 թթ. հայ-պարթևական պատերազմի 66 թ. ռազմաշրջանի հնարավոր մանրամասնությունները, ամեն ինչ իր տեղը գտավ՝ ես հասկացա, որ երիտասարդ Սուրենը պարթևական զորքերի կազմում մասնակցել էր եթե ոչ Փրաասպայի, ապա անպայման՝ Արտաշատի գլխավոր ճակատամարտին: Նա իր սեփական աչքով էր տեսել, թե հռոմեացիների մարտառճով կանգնած հայկական վահանակիրները ինչպես էին գրոհել հայկական կատաֆրակտոսների դեմ գրոհած պարթև կատաֆրակտոսների գնդերի դեմ և օգտագործելով նրանց ընթացքի դանդաղեցումը՝ կողքից հարվածել նրանց: Ամենախոցելի տեղից՝ թևից ուժեղ հարված ստանալով, պարթև կատաֆրակտոսները պարտվել էին: Այն մասին, որ Տիգրան Մեծի կիրառած հնարքը հռոմեացիներից է ընդօրինակված, Սուրենին կարող էր հայտնել Տիգրան Կրտսերի շրջապատից որևիցե հայ սպա-ազնվական:

Արտաշատի ճակատամարտում տեսածը տպավորվեց երիտասարդ պարթև ազնվականի հիշողությունում և 13 տարի անց հմուտ զորավար դարձած պարթև Սուրեն Կարենյանը Կրասոսի դեմ փայլուն ձևով վարեց 53 թ. ողջ ռազմաշրջանը, որը վերջացավ հռչակավոր Խառանի ճակատամարտով, որում հռոմեացիները կործանիչ պարտություն կրեցին: Ողջ ճակատամարտի ընթացքում Սուրենը թույլ չտվեց, որ որևիցե պարթևական հեծելազունդ ենթարկվի հռոմեական հեծելազորի և հետևակի այնպիսի հարվածի, ինչպիսին նա ականատես էր եղել պարթևների համար դժբախտ Արտաշատի ճակատամարտում: Հռչակավոր զորավար պարթև Սուրենը նույնպես, անուղղակիորեն, Մեծն Տիգրանի աշակերտն էր:



Գծանկար 8.16. Արտաշատի գլխավոր ճակատամարտը, հինգերորդ փուլ՝ պարթևական բանակի վերջնական ջախջախումը և փախուստը:

8.4.3.6.Պարթևական բանակի ռազմավարական հետապնդումը

Սկսվում է պարտված պարթևական բանակի ռազմավարական հետապնդումը. հայկական հատուկ զորաբանակը, որի մեջ մտնում են կատաֆրակտոսների գնդերը, թեթև հեծելազորը, թեթև հետևակը և որոշ քանակությամբ նիզակակիրներ, անընդհատ հետապնդում և գերևարում են փախչող պարթևներին, չհանձնվող ստորաբաժանումներն էլ փորձում են ոչնչացնել:

Հայերն այս հակահարձակման ժամանակ պարթևներից ազատագրում են վերջիններիս գրաված «յոթանասուն հովիտները», Նոր Շիրականը և հասնում Ատրպատականի սահմաններին: Այստեղ նրանք կանգնում են, որովհետև եթե անցնեն սահմանը, արդեն պետք է ընդհարվեն նաև Դարեհ թագավորի ատրպատականյան զորքերի հետ, որը հայերի շահերից առայժմ չէր բխում՝ առջևում պայքարն է հռոմեացիների ներխուժման դեմ:

8.4.4.Արտաշատի գլխավոր ճակատամարտի նշանակությունը, հետևանքները և կողմերի կորուստները

Հաղթանակը Արտաշատի գլխավոր ճակատամարտում հսկայական նշանակություն ունեցավ հայ-պարթևական և հայ-հռոմեական հակամարտության ելքերի համար:

Փրաասպայի գլխավոր ճակատամարտում ծանր հարված ստացած և Ատրպատականը կորցրած Հայաստանը Արտաշատի մատույցներում ևս մեկ անգամ հաստատեց Պարթևստանի հանդեպ իր անվիճելի ռազմական գերազանցությունը: Պարթևստան հասան հզոր պարթևական բանակի խղճուկ մնացորդները: Պարթևները ետ քաշվեցին և ժամանակավորապես դադարեցրին ռազմական գործողությունները:

Տիգրանը շունչ քաշեց և հնարավորություն ստացավ զբաղվել Հայաստանի արևմուտքում տիրող իրավիճակով:

Արտաշատի գլխավոր ճակատամարտը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Տիգրան Մեծի ռազմական կենսագրությունում: Մեծ զորավարը այստեղ հաղթանակի էր հասել հայկական բանակի կողմից նախկինում չկիրառված մարտավարական հնարքի շնորհիվ: Ուժեղ հեծելազորին նա կանգնեցրեց հռոմեացիների կողմից օգտագործվող եղանակով՝ նրան ստիպելով կանգնեցնելով հեծելազորով կամ հետևակով և թեից ծանր հետևակով ուժեղ հարված հասցնելով. հնարքը՝ որը պարթևներին անծանոթ էր:

Ավելի մանրամասն վերլուծությունը կկատարվի հաջորդ ենթագլխում:

Այժմ, անդրադառնանք կողմերի հնարավոր կորուստներին:

Ճակատամարտի հնարավոր նկարագրությունից ելնելով, կարելի է ենթադրել պարթևական կողմի հետևյալ կորուստները.

-մոտ 500 կատաֆրակտոսներ հայկական կատաֆրակտոսների դեմ մարտում և մոտ 1.500 զինվոր կիսաշրջապատման մեջ, հիմնականում վահանակիրների ձեռքից՝ միասին 2.000 հեծյալ,

-մոտ 1.000 թեթև հեծելազորային, հայկական հեծելազորի դեմ մարտնչելիս և մոտավորապես նույնքան հայկական հետևակի թնային հարվածից և հետապնդման ժամանակ, միասին՝ մոտ 2.000 հեծյալ,

-մոտ 2.000 թեթև հետևակ, որից մի զգալի մասը գրոհող վահանակիրներից,

-մոտ 4.000 նիզակակիրներ, որոնք կոտորվել էին հայկական ծանր հետևակի դեմ մարտնչելիս,

ընդամենը՝ մոտ 10.000 սպանված, որից մոտավորապես մեկ երրորդը՝ ճակատամարտի ժամանակ, մնացածը՝ շրջափակման և հետապնդման ժամանակ:

Հսկայական էր պարթևական բանակի կորուստը նաև գերի ընկածներով (անմիջապես ճակատամարտում և հետագա հետապնդման ժամանակ).

-մոտ 3.000 կատաֆրակտոսներ,

-մոտ 500-1.000 թեթև հեծելազորային,

-մոտ 6,5-7.000 թեթև հետևակ,

-մոտ 7.000 նիզակակիրներ և

-մոտ 5.000 սակրավորներ և այլ օժանդակ ստորաբաժանումների զինվոր,

ընդամենը՝ մոտ 22-23.000 գերի:

Տիգրան Կրտսերի զորքերի մնացորդները, ինչպես նաև

ատրպատականյան զորաբանակի զինվորների մի մասը ցրվել էին, մնացած պարթևական և ատրպատականյան զորքերը վերադարձել էին Պարթևստան՝ Ատրպատական:

Հայաստանից Պարթևստան նահանջեցին պարթևական զորքերի հետևյալ մնացորդները.

-մոտ 4.000 կատաֆրակտոս,

-մոտ 10.000 հեծելազոր,

-մոտ 4.000 թեթև հետևակ և

-մոտ 1.000 նիզակակիր,

ընդամենը՝ մոտ 19.000 զինվոր:

Հաշվի առնելով պարտությունից հետո Տիգրան Կրտսերի բոլոր և ատրպատականցի զինվորների մի մասի դասալքությունը, կարելի է ենթադրել, որ իրականում պարթևներին հաջողվեց Հայաստանից դուրս բերել ոչ ավել, քան 15-16.000 կազմակերպված զորք:

Այսպիսով, պարթևական բանակն այլևս Տիգրան Մեծի համար սպառնալիք չէր ներկայացնում:

Այժմ պարզենք Արտաշատի գլխավոր ճակատամարտում հայկական բանակի հնարավոր կորուստները.

-մոտ 500 կատաֆրակտոսներ պարթևական կատաֆրակտոսների դեմ մարտում,

-մոտ 1.000-1.500 թեթև հեծելազորային,

-մոտ 1.000 թեթև հետևակ,

-մոտ 1.000 վահանակիր,

ընդամենը՝ մոտ 4.000 սպանված:

Հայկական բանակի բոլոր կորուստները մարտում անմիջապես սպանվածներն էին:

8.4.5. 66 – 64 թթ. երրորդ հայ- պարթևական պատերազմի առաջին փուլի արդյունքները

66 թ. ամռանը խոշոր պարթևական բանակը Հրահատ Գ-ի գլխավորությամբ ներխուժեց Ատրպատական, կատաղի մարտերում ընկճեց Միհրդատ Մեդացու ու նրան օգնության ուղարկված հայկական զորքերի դիմադրությունը և գրավեց երկիրը: Միաժամանակ պարթևները ներխուժեցին Ադիաբենե, Հադրիենե ու Օսրոյենե և գրավեցին դրանք: Սակայն ամենավտանգավորը այն էր, որ օգտվելով հայկական վերնախավում առաջացած պառակտումից, պարթևական խոշոր զորաբանակը կարողացավ ներխուժել Արարատյան դաշտ և պաշարել Արտաշատը: Այս ամենի պատճառներից մեկը Տիգրան Կրտսերն էր, որի բարձրացրած խռովության հետևանքով հայոց ավագանիում առաջացավ անմիաբանություն:

Պարթևական ներխուժումը պարադոքսալ ձևով ազդեց Հայաստանի ներքաղաքական իրավիճակի վրա՝ նույնիսկ Տիգրան Մեծին ընդդիմություն ստեղծած հայոց ավագանու վճռորոշ մեծամասնությունը անվերապահորեն անցավ իր արքայից արքայի կողմը: Ինչ-որ չափով խարխլված հայոց ռազմական հզորությունը վերականգնվեց գրեթե իր ողջ նախկին հզորությամբ:

Այդ ընթացքում Արտաշատի հզոր պաշտպանական համակարգը հաջողությամբ դիմակայում էր պարթևական գրոհներին: Մի քանի ամիս անարդյունք գրոհներից հետո, մեծ կորուստներ կրելով, պարթևները անցան Արտաշատի կանոնավոր պաշարմանը, որից հետո իր հեծյալ զորաբանակներից մեկի գլուխն անցած, Հրահատ Գ-ն վերադարձավ Պարթևստան, որտեղ պարթևաց արքայի երկար բացակայության հետևանքով սկսել էին տարբեր խժդժություններ (չի բացառվում, որ դրանում կար նաև Տիգրան Մեծի «ձեռքը»):

66 թ. ամռան վերջին կամ աշնան սկզբին հայկական բանակը, Տիգրանի գլխավորությամբ, մոտեցավ Արտաշատին և նրա մատույցներում կործանիչ պարտության մատնեց պարթևներին:

Տիգրան Կրտսերն իր պարթև կնոջ հետ մազապուրծ փախավ ռազմի դաշտից: Սկզբում նա որոշեց ուղևորվել Պարթևստան, սակայն հասկանալով, որ Հրահատ Գ-ն այլևս չի կարող օգնել իրեն դառնալ Հայաստանի թագավոր, փոխեց որոշումը և շարժվեց դեպի Պոնտոս՝ իր պապ Միհրդատ Եվպատորի մոտ:

Հայ-պարթևական երրորդ պատերազմի առաջին ռազմարշավը ավարտվեց հայերի համոզիչ հաղթանակով:

Այս հաղթանակի արժեքը չափազանց բարձր էր՝ դա ստիպեց պարթևներին ժամանակավորապես դադարեցնել ակտիվ ռազմական գործողությունները և, ամենակարևորը՝ առանց արտաշատյան հաղթանակի, ապագա համաձայնությունները

Պոմպեոսի հետ չէին կայանա:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ երրորդ հայ-պարթևական պատերազմի 66 թ. ռազմարշավին հայկական հաղթանակը մասնակի էր: Պարտությունը Փրաասպայի գլխավոր ճակատամարտում ծանր հետևանքներ ունեցավ Հայկական կայսրության համար՝ այն վերջնականապես փլուզվեց: Ատրպատականը, որը զգալիորեն ուժեղացնում էր հայկական ռազմական կարողությունները, անցավ պարթևներին, Միջագետքի պետությունները ևս ենթարկվեցին պարթևներին, արդյունքում հայկական զենքի հաղթանակը անձեռնմխելի պահեց միայն բուն Հայաստանի տարածքը (Հայկական Միջագետքը՝ Միգդոնիան և Կորդուքը անմիջապես Հայաստանի կազմում էին):

66-64 թթ. երրորդ հայ պարթևական պատերազմի 66 թ. ռազմարշավը նաև 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի 66 թ. ռազմարշավն է, որովհետև պարթևները պատերազմ սկսեցին որպես հռոմեացիների դաշնակիցներ:

Ռազմարշավի սկզբում հայերը խոշոր պարտություն կրեցին Ատրպատականում, որի հետևանքով պարթևները մտան Արարատյան դաշտ և պաշարեցին Արտաշատը, ինչպես նաև Միջագետքում գրավեցին Տիգրանից անկախացած Ադիաբենեն, Հաղրիենեն և Օսրոյենեն:

66 թ. աշնան սկզբին հսկայական պարթևական բանակը Արտաշատի գլխավոր ճակատամարտում հայերից կործանիչ պարտություն կրեց և հետապնդվեց մինչև Ատրպատական: Շարունակել հարձակումը հայերին խանգարեցին իրադարձությունները Պոնտոսում՝ Միհրդատի բանակը կործանվել էր և Պոմպեոսը նախապատրաստվում էր ներխուժել Հայաստան:

Տիգրանը կանգնեցրեց շարժումը դեպի Պարթևստան և հայկական զորաբանակները կենտրոնացրեց Արտաշատում հռոմեացիների դեմ:

8.5. Հայկական բանակի աստեղային ծաղը. Հայկական տերության դեմ մ.թ.ա. 66 թ. կնքված հռոմեա- պարթևական ռազմական դաշինքի ճակատագիրը

Մինչև 67 – 66(63) թթ. չորրորդ պոնտական պատերազմին վերաբերող նյութերի շարադրանքին անցնելը անհրաժեշտ է ընդգծել Հայաստանի դեմ կնքված հռոմեա-պարթևական ռազմական դաշինքի աննախադեպ բնույթը:

Առաջին անգամ դա տեղի ունեցավ մ.թ.ա. 92 թ., երբ Կապադովկիայում գտնվող Լուկիոս Կորնելիոս Սուլլան և Պարթևստանի արքայից արքա Միհրդատ Բ Մեծը կնքեցին հակահայկական պաշտպանական պայմանագիր:

Երկրորդ անգամ հակահայկական և հակապոնտական պայմանագիր կնքելու առաջարկով Տիգրան՝ Հրահատ Գ-ին, 68 թ. վաղ գարնանը դիմեց Լուկիոս Լիկինիոս Լուկուլլոսը, սակայն մերժվեց. պարթևաց արքան նախընտրեց չեզոքություն պահպանել:

Երրորդ անգամ 66 թ. գարնանը Հրահատ Գ-ին հակահայկական ռազմական դաշինքի առաջարկով դիմում է Հռոմեական տերության զորքերի մեծ մասի հրամանատար, վերջերս ծովահեններին Միջերկրականում փայլուն կերպով հաղթած և այժմ Միհրդատ Պոնտացու 33.000-ոց բանակի դեմ առնվազն 80-100.000-ոց բանակով արշավող Գնեոս Պոմպեոս Մագնը (Մեծը): Միհրդատն ու Տիգրանը այլևս դաշնակից չեն՝ Տիգրան Կրտսերի ապստամբությունը թշնամացրեց հորը պապի դեմ և վերջինս իր հաղթական զորքերը Պոնտոսից և Կապադովկիայից 67 թ. աշնան կեսից վերադարձրել էր Հայաստան: Նշանակում է Հռոմեական և Պարթևական տերությունները դաշնակցում էին միայն ընդդեմ Հայկական կայսրության [42, 51, 59]:

Այդ ի՞նչ վիթխարի ռազմական ուժ էր ներկայացնում տիգրանյան Հայաստանի բանակը, որի դեմ պատրաստվում էին համատեղ պայքարել մոլորակի ուժեղագույն պետությունները:

Սույն ռազմական դաշինքի մասին անտիկ հեղինակների հստակ հայտնած տեղեկությունները կասկած չեն թողնում, որ

այն Հին աշխարհում քաջ հայտնի և ոչ մեկին չշարմացրած փաստ էր:

Պետք էր ունենալ XVIII – XXI դարի պատմաբանների զարմանալի «կուրությունը»՝ «չնկատել» համաշխարհային ռազմական պատմության այս երևույթը և նրա հետևանքները: Բացատրել դա հռոմեական «ամեն ինչի» հանդեպ սիրով, միաժամանակ արևելյան «ամեն ինչի» հանդեպ արհամարհանքով՝ բացատրություն չէ: Մենք պակաս չենք սիրում և գնահատում հունական և հռոմեական «ամեն ինչը», սակայն մնացած աշխարհը հունա-հռոմեականի հավելված չենք համարում:

Հին աշխարհի ռազմական պատմությունն այնքան սղավաղված է ներկայացված, որ երբեմն զգուշությամբ է պետք օգտագործել «գիտական» կցորդը: Եթե համարենք, որ այս վիճակը հետևանք է միայն քաղաքական նախապատվությունների կամ կանխակալությունների, ապա թող այս ամենը ներկայացվեր բազմաթիվ գիտահանրամատչելի և ճանաչողական հրատարակություններում, սակայն ամենայն վճռականությամբ բացահայտ անհեթեթություններ են ներկայացվում նաև լուրջ գիտական հրատարակություններում [73, 84, 90, 262, 283, 285, 311]:

Հին աշխարհի պատմության անհերքելի փաստը՝ մ.թ.ա. 66 թ.-ին հայկական բանակի դեմ հռոմեական և պարթևական բանակների համատեղ ելույթը ռազմաքաղաքական վերլուծության և հստակ գիտական բացատրության կարիք ունի, ընդ որում խնդիրը կարող է ճշմարտացիորեն լուծվել միայն հայկական հասարակության և պետության մշակութային, տնտեսական և քաղաքական զարգացման աստիճանի ճիշտ գնահատականից հետո:

Սույն մենագրությունը առաջարկված հարցին գիտականորեն պատասխանելու փորձերից մեկն է: Տվյալ հարցադրման գոհացուցիչ պատասխանը ենթադրում է մի քանի տասնյակ մասնագիտական աշխատությունների հրատարակում, որոնցում կքննվեն հայկական հասարակության բոլոր ֆենոմենները և, ինչպես հին հունական ու հռոմեական հասարակության դեպքում, կբացահայտվեն առաջացած երևույթների քիչ թե շատ ընդունելի գիտական բացատրությունները:

Իմ աշխատության III պրակի նախավերջին գլխում առաջ

կքաշվեն և կփորձվեն հիմնավորվել մ.թ.ա. I դարի Հայկական պետության հսկայական ռազմական ակտիվության հնարավոր պատճառները և աղբյուրները:

Արտաշատի գլխավոր ճակատամարտում Պոմպեոսի զորեղ դաշնակիցը՝ Պարթևստանը, ծանր պարտություն կրեց և դուրս շպրտվեց Հայաստանից, սակայն Հայաստանից դուրս ունեցավ ակնհայտ հաջողություններ՝ գրավելով Ատրպատականը, Ադիաբենեն, Հադրիենեն և Օսրոյենեն: Տիգրանը չկարողացավ ամրացնել իր հաջողությունը և ետ գրավել իր կայսրության ենթակա երկրները միայն այն պատճառով, որ թիկունքից կարող էր հարված ստանալ Պոմպեոսից: Հայերի հաղթանակը մնաց զուտ պաշտպանական բնույթի՝ հարձակողականի համար Տիգրանը Հռոմ-Պարթևստան միության դեմ բավարար ուժ չուներ:

69-66 թթ. հայ-հռոմեական և 66-64 թթ երրորդ հայ-պարթևական պատերազմների արդյունքում փլուզվեց Հայկական կայսրությունը, սակայն Հայաստանը պարտության մատնելով իր ախոյաններին, վստահաբար պահպանեց իր անկախությունը և համաշխարհային քաղաքականության մեջ պահպանեց ուժեղ պետության իր չափազանց կարևոր դերը:

Հռոմի և Պարթևստանի հակահայկական ռազմական դաշինքը հայկական հասարակության և զինվորականության օրինական հպարտության աղբյուր է՝ հին աշխարհի ոչ մի երկրի դեմ այսքան հզոր դաշինք չի կնքվել և այսքան անհաղթ արդյունքների չի հասել, որքան մ.թ.ա. 66 թ. գարնանը կնքված հռոմեա-պարթևական դաշինքը:

66 թ. հայ-պարթևական պատերազմի դրվագները անհրաժեշտ է ընկալել ոչ միայն որպես երրորդ՝ 66-64 թթ. հայ-պարթևական պատերազմ, այլև 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի բաղկացուցիչ մաս. մենք կարող ենք պնդել, որ Հռոմի դաշնակից Պարթևստանը իր զորքերով մասնակցել է հայ-հռոմեական պատերազմին Հռոմի կողմից և պարտություն է կրել:

Նման իրավիճակ ստեղծվել էր 73-69 թթ., երբ Հռոմի հրահրած հարավսիրիական պատերազմը կապեց Տիգրանի ձեռքերը և թույլ չտվեց օգնության հասնել Միհրդատին Պոնտոսում 73-71 թթ. երրորդ պոնտական պատերազմի ժամանակ: Նույնը

բանը Հռոմը ձեռնարկեց 66 թ.-ին, արդեն Պարթևների ձեռքով:

Այստեղ հետաքրքիր հարց է ծագում՝ ինչպե՞ս էր վերաբերում Տիգրանը իր եղբկին դաշնակից Միհրդատ Եվպատորի պայքարին Ռոմպեոսի դեմ 66 թ. ամռանը: Այս հարցը մենք կքննենք հաջորդ ենթագլխում:

8.6. 67–66(63) թթ. չորրորդ պոնտական պատերազմի ընթացքը և Հայաստանը

Մենք տեսանք, ինչպես Ռոմպեոսը, նախապատրաստելով Պոնտոսի նվաճումը, չեզոքացրեց Տիգրանի հնարավոր հակազդեցությունը՝ ռազմական պայմանագիր կնքելով պարթևների հետ: Պարթևստանի թագավորը օգտվելով նրանից, որ հոր դեմ ապստամբած և պարտված Տիգրան Կրտսերը փախել է Պարթևստան, վերջինիս կնության տվեց իր դստերը: Օգտվելով հարմար առիթից՝ հռոմեացիների հետ կնքած ռազմական դաշինքից և իր արքունիքում հայոց հնարավոր գահաժառանգի ներկայությունից, Հրահատ Գ-ն որոշում է ռազմական ճանապարհով ընկճել Տիգրանին: Այս պայմաններում Տիգրանը հարկադրված էր պաշտպանել իր երկրի կենսական շահերը արևելքում և չէր կարող իրական օգնություն ցույց տալ Միհրդատին: Այսպիսով Ռոմպեոսը «արձակեց իր ձեռքերը» Պոնտոսում:

66 թ. գարնան վերջին Ռոմպեոսի բանակի կազմը կարելի պարզել անտիկ պատմիչների հաղորդած տեղեկությունների համադրությամբ:

Ըստ Ապպիանոսի, Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի Ռոմպեոսին ծովահենների դեմ պատերազմելու համար տրամադրվել էր 120.000 ծանր հետևակ և 4.000 հեծելազոր (նավատորմի թվաքանակի հետ կապված հարցերը մենք չենք քննարկում) [42, 51, 59]:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ խոսվում է ոչ թե 120.000 լեգեոներների, այլ ընդհանրապես ծանրազենների մասին, այսինքն լեգեոնները և դաշնակցային ծանր հետևակը: Այդ դեպքում ստանում ենք մոտավորապես 60.000 լեգեոներ և 60.000 դաշնակցային ծանր հետևակ:

Ռոմպեոսի ղեկավարած ռազմական գործողություններին մասնակցել էին բավական փորձված, երբեմն մեծ մարտական ուղի անցած լեգեոններ: Այդ պատճառով լեգեոնում լեգեոնների թիվը հաշվում ենք ոչ թե սկզբնային 6.000-ոց կազմով, այլ միջինը՝ 5.000 լեգեոներ: Ստացվում է 12 լեգեոն՝ 5.000-ական լեգեոներներով և 300 հեծյալ ջոկատով՝ ալայով (ալայի կազմը կարող էր համալրվեր): 12 լեգեոնում հաշվում ենք 3.600 հեծյալ, գումարելով մեկ ուժեղացված ալա՝ Ռոմպեոսի թիկնազորը, մոտ 4.000 հեծյալ:

Հասկանալի է դառնում նաև 25 լեգատների հիշատակելը [59], որոնք ենթարկվում էին Ռոմպեոսին՝ 12 լեգատ՝ լեգեոնների հրամանատար, 12 լեգատ՝ լեգեոններին կցված դաշնակցային կոհորտների հրամանատար՝ ևս 12 հոգի և 1 լեգատ՝ Ռոմպեոսի զորքերի ընդհանուր հեծելազորի հրամանատար:

Ռոմպեոսը Գալատիայում իր բանակին միացրեց Լուկուլլոսի բանակը՝ 6 լեգեոնը, թողնելով վերջինիս տրիումֆի համար միայն 1.600 լեգեոներ, ինչպես նաև Լեռնային Կիլիկիայի պրոպրետոր Մարկիոս Ռեքսի 3 լեգեոններից առնվազն 2-ը [42, 51]: Ռեքսի լեգեոնները նոր էին հավաքված, ծանր մարտերում չէին մասնակցել, ուստի լեգեոններում ունեին 6.000-ական լեգեոներ, միասին՝ 18.000 լեգեոներ և 900 հեծյալ, ընդամենը՝ 18.900 հռոմեացի:

Լուկուլլոսի մոտ Գալատիայում պահպանվել էին հետևյալ ուժերը.

- Մուրենայի լեգեոնը՝ մոտ 3.300 լեգեոներ,
- Մեքստիլիոսի լեգեոնը՝ մոտ 3.300 լեգեոներ,
- Առաջին փիմբրիական լեգեոնը՝ մոտ 3.100 լեգեոներ,
- Երկրորդ փիմբրիական լեգեոնը՝ մոտ 3.100 լեգեոներ,
- Տրիարիոսի լեգեոնը՝ մոտ 3.800 լեգեոներ,
- Բյութանիայից եկած լեգեոնը՝ մոտ 3.800 լեգեոներ,

Ընդամենը՝ մոտ 20.600 լեգեոներ:

Այս թվերը ստացվել են հետևյալ հաշվարկներից.

Տրիարիոսի և Բյութանիայից եկած լեգեոնների մեջ ընդգրկված են նաև Փաբիոսի և Սոռնատիոսի Ջելայում ոչնչացած լեգեոններում կենդանի մնացած 1.000 լեգեոնները, որով 3.500-ական լեգեոներներին գումարվում է 500-ական լեգեոներ, միասին՝ 4.000 լեգեոներ:

Տալավրայի մոտ տեղի ունեցած մարտերում, հատկապես

Միհրդատ Մեղացու անսպասելի հարձակումից, լեգեոնների նվազագույն կորուստը համարելով 1.000 զինվոր, բաշխում եմ բոլոր լեգեոնների վրա հավասարապես մոտ 200 լեգեոներ և միայն փիմբրիական վետերաններին 100-ական լեգեոնում, երկու լեգեոնում միասին՝ 200 լեգեոներ:

Այսպիսով, բացի Պոմպեոսի Արևելքում գտնվող 64.000 հռոմեացի զինվորներից, Լուկուլլոսի և Ռեքսի 9 լեգեոններում կար 40.500 բուն հռոմեացի զինվորական: 104.500 հռոմեացի զինվոր, բազմահազարանոց դաշնակիցներ՝ այս աննախադեպ հարձակման ծավալները ցնցում են:

Մենք դեռ հաշվի չենք առել Բյութանիայի մեկ և Ասիա նահանգի երկու հռոմեական լեգեոնները՝ մոտ 15.000 լեգեոներ և 800 հեծելազոր: Վստահաբար կարելի է ասել, որ Հռոմը Արևելքում կենտրոնացրել էր իր ուժերի մեծ մասը:

Այս ուժերի մի մասով Պոմպեոսը ներխուժեց Պոնտոս և հարձակվեց Միհրդատ Եվպատորի բանակի վրա:

Պարզենք Պոնտոս ներխուժած Պոմպեոսի բանակի հնարավոր կազմը:

Տրամաբանական է մտածել, որ Պոմպեոսը կարող էր պոնտոսյան արշավի համար հատկացնել իր ամբողջ ուժերի միայն կեսը, որովհետև նա մեծ ուժեր էր տեղադրել արևելյան Միջերկրածովքում (օրինակ Կրետե կղզում՝ մեկ լեգեոն), որոշ քանակությամբ զորք էլ բերվել էր արևմտյան նահանգներից և ծովահեններին ճնշելուց հետո, հավանաբար վերադարձել էր մշտական տեղակայման վայրերը:

Այդ դեպքում հավանական է, որ պոնտական արշավանքին մասնակցել է 60.000 լեգեոներների կեսը՝ 30.000 լեգեոներներ, լեգեոնում միջինը 5.000 լեգեոներ, այսինքն՝ 6 լեգեոն և մոտ 2.000 հեծելազոր:

Հռոմեական լեգեոնների քանակը, կազմը ներկայացված են թիվ 8.1. աղյուսակում:

Աղյուսակ 8.1. Հռոմեական լեգեոնների քանակը և կազմը Փոքր Ասիայի այն մասում, որտեղ 66 թ. գարնանը Պոմպեոսը ձևավորեց իր բանակը (առանց թեթևազենների)

Բանակը և Տեղակայումը	Լեգեոն	Լեգեոներնե-րի քանակը	Հեծելազորի քանակը
Պոմպեոսի բանակ	1-ին լեգեոն	5.000	500
	2-րդ լեգեոն	5.000	300
Լիկիա	3-րդ լեգեոն	5.000	300
Պիսիդիա	4-րդ լեգեոն	5.000	300
Պամֆիլիա	5-րդ լեգեոն	5.000	300
Լեռնային Կիլիկիա	6-րդ լեգեոն	5.000	300
	ընդամենը	30.000	2.000
		ընդամենը	32.000
Լուկուլլոսի բանակ	1-ին փիմբրիական լեգեոն	3.100	-
	2-րդ փիմբրիական լեգեոն	3.100	-
Գալատիա	Մեքստիլիոսի լեգեոն*	3.300	50
	Մուրենայի լեգեոն	3.300	50
	Տրիարիոսի լեգեոն	4.000	150
	Բյութանիայից եկած լեգեոն**	4.000	150
	ընդամենը	20.800	400
		ընդամենը	21.200
Ռեքսի բանակ	1-ին լեգեոն	6.000	300
	2-րդ լեգեոն	6.000	300
Լեռնային Կիլիկիա	3-րդ լեգեոն***	6.000	300
	ընդամենը	18.000	900
		ընդամենը	18.900
	Միասին	ընդամենը՝	72.100

* - 74 թ. Լուկուլլոսի հավաքած լեգեոնը, որից 5 կոհորտ՝

1.600 լեգեոներ, Պոմպեոսը տալիս է Լուկուլլոսին հաղթահանդեսի համար, մնացածը թողնում է Գալատիայում:

** - այս լեգեոնը Պոմպեոսը ետ է ուղարկում Բիթանիա:

*** - այս լեգեոնը Պոմպեոսը թողնում է Լ. Կիլիկիայում:

Աղյուսակ 8.2. Հռոմեական լեգեոնների քանակը և կազմը Փոքր Ասիայի հռոմեական տիրապետության տակ գտնվող այլ մասերում 66 թ. գարնանը (առանց թեթևազենների)

Բանակը	Լեգեոն	Լեգեոներնե-րի քանակը	Հեծելազորի քանակը
Ասիա նահանգ	1-ին լեգեոն	5.000	250
	2-րդ լեգեոն	4.500	250
	ընդամենը	9.500	500
	C	ընդամենը	10.000
Բիթանիա նահանգ	1-ին լեգեոն	4.500	250
Հոռոդոս – Կրետե կղզի	1-ին լեգեոն	5.000	250
	Միասին	ընդամենը՝	20.000

Աղյուսակ 8.3. Գնեյոս Պոմպեոսի պոնտական արշավանքի համար նախապատրաստած բանակի կազմը 66 թ. գարնան վերջին (առանց թեթևազենների)

Լեգեոն	Լեգեոներներ և հեծյալներ	Դաշն. ծանր և թեթև հետևակ	Դաշնակիցն. հեծելազոր
1-ին լեգեոն	5.000 և 500	5.000 և 500	600
2-րդ լեգեոն	5.000 և 300	5.000 և 500	600
3-րդ լեգեոն	5.000 և 300	5.000 և 500	600
4-րդ լեգեոն	5.000 և 300	5.000 և 500	600
5-րդ լեգեոն	5.000 և 300	5.000 և 500	600
6-րդ լեգեոն	5.000 և 300	5.000 և 500	600
1-ին փիմբրի-ական լեգեոն	3.100 և չկա	-	-
2-րդ փիմբրի-ական լեգեոն	3.100 և չկա	-	-
Մուրենայի լեգեոն	3.300 և 50	500	-
Տրիարիոսի լեգեոն	4.000 և 150	500	-
Ռեքսի 1-ին լեգեոն	6.000 և 300	6.000 և 1.000	600
Ռեքսի 2-րդ լեգեոն	6.000 և 300	6.000 և 1.000	600
	55.500 և 2.800	42.000 և 6.000	4.800

Այսպիսով, Պոմպեոսը 12 լեգեոնում ուներ մոտ 55.000 լեգեոներ, և գրեթե 2.8-3.000 հռոմեական հեծելազոր:

Անտիկ պատմիչներից ոչ մեկը Պոմպեոսի մոտ մեծաքանակ հեծելազորի մասին տեղեկություն չի հաղորդում: Ընդհակառակն, Պոմպեոսը Պոնտոսում անընդհատ զգուշանում է մարտունակ պոնտական հեծելազորից: Այս պատճառով ենթադրել, որ, ըստ սովորության, հռոմեացիների մոտ առկա էր եռապատիկ քանակով դաշնակցային հեծելազոր, հավանաբար ճիշտ չի լինի, և ես ենթադրում եմ, որ այն միայն երկու անգամ էր գերազանցում բուն հռոմեականին: Լուկուլլոսի բանակից վերաենթարկված լեգեոններում հեծելազոր գրեթե չկար, որովհետև ոչնչացել էր Տիգրանի հզոր հեծելազորի հարվածներից: Այս ամենը հաշվի առնելով, դաշնակցային հեծելազորի ընդհանուր թիվը ենթադրում եմ 4.8-5.000 հեծյալ:

Մեծաքանակ չէր նաև թեթև հետևակը՝ Պոմպեոսն անընդհատ զգուշանում էր Միհրդատի ուժեղ նետաձիգներից [51]:

Լուկուլլոսի բանակի լեգեոնների դաշնակցային ծանր հետևակը՝ գալատները, բիթանիացիք հասնելով Գալատիա, դժվար թե մնային Լուկուլլոսի հետ, երբ բուն հռոմեական ստորաբաժանումներն էին դժկամորեն ենթարկվում հռոմեացի զորավարին. Պոմպեոսն էլ, իր հերթին, ամեն ինչ արեց, որ ստորացնի ու վարկաբեկի Լուկուլլոսին:

Այդ պատճառով ծանր դաշնակցային հետևակ, հավանա-

բար, կար միայն Պոմպեոսի և Ռեքսի լեգեոնների կից՝ մոտ 40-42.000 զինվոր:

Պոմպեոսի լեգեոնների թեթևազենները մարտերում զգալի կորուստներ էին կրել, այդ պատճառով Պոմպեոսի լեգեոններին պայմանական կցելով 500-ական թեթևազեն և մոտ 1.000-ական Ռեքսի նոր հավաքագրված լեգեոններին, ստանում եմ 4.000 թեթևազեն, որին պետք է գումարել Լուկուլլոսի բանակի ոչ պակաս, քան 1.000 թեթևազեններին (հավանաբար, Լուկուլլոսը, միացնելով իր ուժերին Տրիարիոսի բանակը, ունեցել է մոտ 2-3.000 թեթևազեն, մեծ մասամբ՝ թրակիացի, որոնց մի մասը նույնպես լքել էին Լուկուլլոսի բանակը), ընդամենը՝ մոտ 5.000 թեթևազեն զինվոր:

Այսպիսով, Պոմպեոսը 12 լեգեոնում ուներ մոտ 55.000 լեգեոներներ, հավանաբար 40.000 ծանր դաշնակցային հետևակ, ընդամենը՝ մոտ 85.000 զինվոր, մոտ 6.000 թեթևազեն և մոտ 7.600 հեծելազոր (առանց օժանդակ զորամասերի և գումակի զինվորների), բոլորը միասին՝ 108.600 կամ մոտավորապես 100-110.000 զինվոր: Բանակում հռոմեացիների թիվը մոտենում էր 60.000-ի՝ անանախադեպ թվաքանակ Հռոմի վերջին տասնամյակներում վարած պատերազմներում:

Գումարելով օժանդակ զորամասերի և գումակի զինվորներին, կստանանք՝ մոտ 110-120.000 զինվոր:

Մեր կատարած հաշվարկները ունեն մի մեծ թերություն՝ անհասկանալի է, ինչու՞ պետք էր հաղթել Միհրդատին հսկայական 110-120.000-ոց բանակով, որը պետք էր կերակրել, եթե այս բանակից երկու անգամ ավելի փոքր բանակը հաջողությամբ կարող էր նվաճել անհամեմատ ավելի փոքր բանակ ունեցող Պոնտոսը:

Հին աշխարհն իր խնդիրները լուծելիս նույնքան գործնական էր, որքան մեր ժամանակակիցները: Այդ պատճառով 66 թ. Պոմպեոսի բանակի թվաքանակի որոշման նման ավանդական լուծումը, ըստ իս, կարող է լուրջ վրիպում ունենալ:

Հաշվի առնելով Պոմպեոսի զգուշավոր բնավորությունը և հսկայական մարդկային ու նյութական հնարավորությունները, կարելի է ենթադրել, որ նա չէր սահմանափակվի նվազագույն 60.000-ով, այլ մի փոքր ավելի մեծ բանակով, որպեսզի ավելի ծանրակշիռ դարձներ իր հաղթանակը. Պոնտոս մտնելով մոտ 80.000-ոց բանակով, որը նույնպես հսկայական թիվ է:

Այդ դեպքում մնում է ենթադրել, որ Պոնտոսում ռազմական գործողությունների ավարտը Պոմպեոսը կատարել է գրեթե միատարր՝ բուն հռոմեական ուժերով: Ինչ՞ը կարող էր դրդել Պոմպեոսին այդպիսի որոշում կայացնել:

Փոքր Ասիայում հսկայական քանակությամբ բուն հռոմեացի զինվորներ էին կենտրոնացել: Այս արշավով Պոմպեոսը թույլ էր տալիս նրանց կողոպուտի և վարձատրության միջոցով հարստանալ, որով հավատարիմ կողմնակիցներ էր ձեռք բերում Հռոմի ներքաղաքական պայքարում: Հռոմեացիներին օգտագործել որպես պահակախմբեր ու հարստացնել դաշնակիցներին ոչ մի հռոմեական զորավար չէր ցանկանա: Այս դատողություններից ելնելով, ինձ թվում է, որ Պոնտոս մտած Պոմպեոսի բանակը ուներ մոտավորապես հետևյալ կազմը.

- 55.000 լեգեոներ 12 լեգեոնում,
- 2.800 հռոմեական հեծելազոր,
- 3.200 դաշնակցային հեծելազոր,
- 6.000 թեթև հետևակ,
- 10-13.000 դաշնակցային ծանր (կոհիվների լեռնային բնույթից ելնելով, կարող է միջին՝ պելտաստներ) հետևակ, ընդամենը՝ մոտ 80.000 զինվոր:

Մոտավորապես 5.000 զինվոր պետք է, որ ապահովեին մեծաքանակ գումակի գործունեությունը, այստեղ են մտնում նաև սակրավորները և հատուկ պաշարողական ստորաբաժանումները, միասին՝ մոտ 85.000 զինվոր:

Այս վիթխարի բանակի միայն մի մասը 66 թ. աշնան սկզբին մտավ Հայաստան՝ Պոնտոսում մնացին ոչ պակաս, քան 2 լեգեոն և դաշնակիցների բավարար ուժեր՝ Միհրդատը Բոսփորի թագավորությունում էր և եռանդուն պատրաստվում էր շարունակել պատերազմը:

Եթե Պոմպեոսը Պոնտոսում թողներ Ռեքսի 2 լեգեոնը և դաշնակցային կոհորտները, ապա Հայաստան նա կմտներ մոտավորապես 10 լեգեոնի 42.000 լեգեոներներով, 4.000 թեթև հետևակով և 5.000 հեծելազորով, որից կեսը՝ 2.500 հռոմեական, մնացածը՝ դաշնակիցների, մոտ 2.000 օժանդակ զորքով, ընդամենը՝ 51-53.000 զինվորով: Տիգրանի հետ պայմանագիր կնքելուց հետո այսպիսի հզոր բանակը լրիվ բավական էր Հռոմի հզորությունը ընդգծելու համար:

Այժմ փորձենք հռոմեական բանակի թվաքանակը հաշվել մեր այլ տվյալներից ելնելով: Պլուտարքոսը, Դիոն Կասսիոսը և Ապպիանոսը շատ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում [42, 51, 59] այն մասին, թե ինչպես է Պոմպեոսը վարձատրել իր զինվորներին և սպաներին: Մեզ համար հատկապես կարևոր են Պլուտարքոսի տեղեկություններն այն մասին, որ Պոմպեոսը ծախսել է 16.000 տաղանդ, ամեն մի զինվորին տվել է 1.500 դրաքմ, իսկ կենտուրիոններին և տրիբուններին՝ մի քանի անգամ շատ:

10 լեգեոնում կար մոտ
42.000 լեգեոներ,
2.500 հեծյալ,
600 կենտուրիոն,
60 – 100 տրիբուն,
10 լեգատ, հեծելազորում՝
100 դեկուրիոն,
10 ալայի հրամանատար,
1 հեծելազորի հրամանատար
Վարձատրությունը՝
-Լեգեոներ – 1.500 դրաքմ,
-Հեծյալ – 3.000 դրաքմ,
-Կենտուրիոն և հեծելազորի դեկուրիոն – 6.000 դրաքմ,
-Տրիբուն և ալայի հրամանատար – 12.000 դրաքմ կամ 2 տաղանդ,
-Լեգատ և հեծելազորի հրամանատար – 24.000 դրաքմ կամ 4 տաղանդ:

42.000 լեգեոներ – 1/4 տաղանդ – 10.500 տաղանդ
2.500 հեծյալ – 1/2 տաղանդ– 1.250 տաղանդ
700 կենտուրիոն և դեկուրիոն – 5 տաղանդ – 3.500 տաղանդ
110 տրիբուն և ալայի հրամանատար – 10 տաղանդ – 1.100 տաղանդ
11 լեգատ և հեծելազորի հրամանատար – 100 տաղանդ – 1.100 տաղանդ
Ընդամենը՝ 16.450 տաղանդ (կենտուրիոնների, և, հատկապես, տրիբունների թիվը կարող էր կինել պակաս՝ 16.000 տաղանդ):

Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ Պոմպեոսը 16.000 տաղանդով վարձատրել էր 42-60.000 հռոմեացի զինվորների և

սպաների (հետաքրքիր է, որ Լուկուլլոսը իր հաղթահանդեսին մասնակցած 1.600 լեգեոներին տվել էր 950-ական դրաքմ՝ 1.520.000 դրաքմ կամ մոտ 255 տաղանդ, սպաների հավելավճարներով՝ մոտ 350 տաղանդ [193]):

Այսպիսով, մեր երկու հաշվարկային մեթոդները տալիս են մոտավորապես նույն արդյունքը, ինչը բարձրացնում է ճշմարտությանը հասնելու հավանականությունը:

Պոմպեոսի հսկայական բանակին Միհրդատ Պոնտացին կարող էր հակադրել միայն 30.000 հետևակ և 3.000 (Ապպիանոսի հաղորդումով՝ 2.000) հեծելազոր [42, 59], ընդ որում, անտիկ հեղինակները նշում են Միհրդատի բարձրակարգ հեծելազորը և նետաձիգներին:

Փորձենք պատկերացնել պոնտական բանակի կազմը.

- 2.000 ծանր հեծելազոր, որից 1.000 փոքրհայքյան,
- 1.000 թեթև հեծելազոր,
- 25.000 ծանր հետևակ՝ 5 պոնտական լեգեոն,
- 5.000 թեթև հետևակ:

Այս բանակի կազմակերպումը Միհրդատի 68 – 66 թթ. գործունեության հիմնական արդյունքն ու նվաճումն էր: Եթե Տիգրան Մեծի հետ հարաբերությունները չխախտվեին և Տիգրանը կրկին ուժեղացներ Միհրդատին 10-15.000-ոց բանակով, որից ավելի քան 10.000 հեծելազոր էր, ապա Պոմպեոսի բանակի վիճակը խիստ կբարդանար:

Պոմպեոսը Պոնտոս ներխուժեց ավելի քան 80.000-ոց հզոր բանակով: Այս վիթխարի ուժի դեմ Միհրդատը կարող էր հանել միայն 30.000 հետևակ և 2-3.000 հեծելազոր: Ուժերը խիստ անհավասար էին, այդ պատճառով Միհրդատը խուսափում էր մեծ ճակատամարտերից, առավել ևս՝ գլխավոր ճակատամարտից, նախընտրելով մանր մարտերի մարտավարությունը: Սակայն այսպիսի եղանակով հռոմեական բանակի հուժկու գրոհը դիմագրավել հնարավոր չէր: Հանգուցալուծումը տեղի ունեցավ Կաբիրայի մոտ, որտեղ Պոմպեոսը գիշերային գրոհով ոչ միայն ջախջախեց, այլև իսպառ ոչնչացրեց պոնտական բանակը:

Միհրդատը մեծ դժվարությամբ դուրս պրծավ խուճապի մատնված պոնտական ճամբարից և սկզբում դիմեց դեպի Հայաստանի սահմանը, հետո տեղեկանալով Տիգրանի թշնամական

վերաբերմունքի մասին, 800 ուղեկիցներով ճեղքեց իր վրա հարձակված խոթեցի հայերի մարտական շարքերը և նահանջեց Կողքիս: Պոնտական թագավորության հիմնական երկրամաս կազմող Պոնտոսը վերջնականապես նվաճված էր:

8.6.1.66 թ.-ին Միհրդատ Եվպատորի պարտությունը և Տիգրան Մեծը

66 թ.-ին Միհրդատի պարտությունը կանխորոշված էր ուժերի խիստ անհավասարությամբ և ուժեղ դաշնակցի բացակայությամբ:

Փորձված զորավարը՝ Միհրդատը, ամեն ինչ արեց աղետը հետաձգելու համար, սակայն 66 թ. աշնանը իրավիճակը հանգուցալուծվեց՝ Միհրդատի բանակը ծանր պարտություն կրեց, որի հետևանքով մի մասը ոչնչացավ, մյուսն էլ կազմալուծվեց ու դասալքեց պոնտական բանակի շարքերը:

Միհրդատը 800 հեծյալներով փորձեց մուտք գործել Հայաստան, սակայն ետ մղվեց տեղացի հայերի աշխարհազորի կողմից, որին հաջողության դեպքում Տիգրանը խոստացել էր 100 տաղանդ պարգև, և գնաց Կողքիս, այնտեղից էլ՝ Ղրիմի թերակղզի [42, 51, 59, 308]:

Այդպիսով, 67-63 թթ. չորրորդ պոնտական պատերազմի ակտիվ փուլը վերջացավ 66 թ. աշնան սկզբին:

Տիգրանը զբաղված էր հայ-պարթևական պատերազմով, սակայն ուշադիր հետևում էր Պոնտոսում կատարվող դեպքերին: Արտաշատի գլխավոր ճակատամարտում հաղթելուց անմիջապես հետո Պոմպեոսի ռազմակայանում հայտնվեցին Տիգրանի բանագնացները:

Տիգրանի բանագնացները (որոնք երազում էին, որ Միհրդատի բանակը մի փոքր էլ դիմանա), Պոմպեոսին հավաստեցին Միհրդատի հանդեպ իրենց արքայից արքայի թշնամանքը իր դեմ կազմակերպված թռռան դավադրության համար: Այս բանակցությունները շատ կարևոր էին նաև Պոմպեոսի համար. նրանք թույլ տվեցին հռոմեացուն մեկ անգամ ևս վերլուծել ստացված իրավիճակը և սթափ որոշումներ ընդունել՝ առջևում Տիգրանի դեմ պատերազմն էր կամ զինադադարի կնքումը:

8.7.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ավարտը. հայ-հռոմեական զինադադարի նախնական պայմանագիրը

«Պոմպեոսին հաջողվեց զինադադար կնքել Տիգրանի հետ: Ինքը չփորձեց հետապնդել Միհրդատին հյուսիսում, սակայն ռազմական ընդհարումների մեջ ներգրավվեց կովկասյան ցեղերի դեմ»

Ջոն Վերրի, 1980 թ. [281]:

Գնեոս Պոմպեոսը շատ լավ էր գիտակցում, որ նա չի կարող հաղթել Տիգրան Մեծին: Պատճառը ոչ միայն սարսափազդու 50.000-ոց դաշտային հայկական բանակն էր, այլև քաղաքական իրավիճակի յուրահատկությունը:

Պոմպեոսի կողմից Հայաստանը նվաճելու փորձն անհնար էր: Մեծ հռոմեացին փայլուն դիվանագետ էր և ըմբռնում էր, թե ինչով կարող է վերջանալ Տիգրան Մեծի հնարավոր ջախջախումը, որից հետո «Տիգրան Գ» հայոց արքայից արքան՝ Տիգրան Կրտսերը, Պարթևստանի հզոր արքա Հրահատ Գ-ի փեսան դառնալու էր նրա մրցակիցը Հայաստանում, իսկ պարթևական ու հայկական բանակների հզոր հարձակումը Տիգրան Մեծի հետ պայքարում հյուծված Պոմպեոսի հռոմեական բանակը դիմագրավել արդեն չէր կարողանա: Այդ պայքարն անխուսափելիորեն կավարտվեր Պոմպեոսի հռոմեական զորքերի ծանր պարտությամբ, պարթևա-հայկական բանակի արշավով Պոնտոս, Կապադովկիա, հնարավոր է՝ նաև Սիրիա: Արդյունքում Պարթևստանը որոշ գերակայություն ձեռք կբերեր Հայաստանի նկատմամբ, սակայն երկու երկրների մերձեցումը կբերեր նոր հզոր հակահռոմեական դաշինքի ստեղծմանը:

Հայ-պարթևական զորքերի օժանդակությամբ Ղրիմից Պոնտոս կվերադառնար Միհրդատ Եվպատորը և այնտեղից դուրս կշպրտեր հռոմեացիներին. Պոնտական թագավորությունը կվերականգնվեր:

Հռոմեացիները կարող էին հայտնվել արդեն հայ-պարթևա-

պոնտական դաշնության միացյալ ուժերի դեմ (ինչի մասին երազում էր Միհրդատ Պոնտացին) պատերազմելու հեռանկարի առաջ: Եթե հետագա յոթ դարերում նրանք չկարողացան անցնել Եփրատը, ապա այս դեպքում հարցականի տակ կդրվեին Փոքր Ասիայի նրանց բոլոր տիրույթները և նույնիսկ կվտանգվեր նրանց տիրապետությունը Հունաստանում:

Այսպիսով, Պոմպեոսի մաքսիմալիզմը Հռոմի համար հղի կլիներ մոձավանջային հայ-պարթև-պոնտական միության ստեղծմամբ: Հենց միայն այս պատճառով պարթևներին այդքան պարտություններ և կորուստներ պատճառած Տիգրանին հռոմեացիները պետք է սիրեին և փայփայեցին:

Անձամբ Պոմպեոսի համար Տիգրան Մեծի դեմ պատերազմի շարունակությունը անթույլատրելի էր, այդ դեպքում խաղաղության պայմանագիր կնքողը վստահաբար ուրիշ հռոմեական զորավար կլիներ: Նույնիսկ Պոմպեոսին ենթարկված անանխադեպ հսկայական ուժերը այսպիսի արկածախնդրության համար խիստ անբավարար էին:

Տիգրան Կրտսերն իր անխոհեմ և հայրադավան արարքով Տիգրան Մեծին հնարավորություն տվեց Պոմպեոսի հետ խոսել ուժեղի դիրքից: Որքա՞ն զարմանալի են ճակատագրի ելևէջները:

Այսպիսով, Պոմպեոսի ընտրությունը Տիգրան Մեծի և Կրտսերի միջև կանխորոշված էր: Հայաստանը, հրաժարվելով մեծապետական նկրտումներից, այլևս Հռոմին արտաքնապես հակադրված չէր:

Պարզ դարձավ նաև մեկ ուրիշ ճշմարտություն՝ գերհզորների միջև ընթացող մշտական պայքարում Հայաստանը այսուհետ զբաղեցնելու էր հիմնականում երկրորդական դեր, առաջնությունը զիջելով Հռոմին և Պարթևստանին: Սակայն, դա անմիջապես տեղի չունեցավ՝ Տիգրան Մեծի և Պոմպեոսի կնքած դաշնագիրը Հայաստանին թույլ տվեց խաղալ Հռոմ – Պարթևստան հակամարտության վրա ևս 46 տարի, և պահպանել գերտերության որոշ ֆունկցիաներ:

Հետագայում, մ.թ.ա. 64 թ.-ից մինչև մ.թ. 226 թ.՝ գրեթե երեք դար, Հայաստանը կդաշնակցի Պարթևստանին և դրանով կհավասարակշռի հակամարտող կողմերի ուժերը: Հռոմեական տերությունը իր հզորության գագաթնակետին անգամ չի կարողանա հաղթել իր ախոյաններին: Միայն այն ժամանակ, երբ Սասանյանների օրոք հզորացած Իրանը ակնհայտ ռազմական առավելության կհասնի իր թուլացած թշնամու հանդեպ, Հայաստանն ամբողջ վճռականությամբ կանցնի Հռոմեական կայսրության կողմը և 226 թ.-ց մինչև 387 թ.՝ ավելի, քան մեկ ու կես դար կգոյի հզորագույնին:

Ինչ՞ փառահեղ ընթացք է ունեցել հայոց ռազմական պատմությունը:

Այսպիսի քաղաքականություն իրագործելու համար անհրաժեշտ է հայկական պետության շահերի գերակայության վրա հիմնված համապատասխան գաղափարախոսություն, հզոր բանականություն, քաղաքական պողպատյա կամք և հզոր զինված ուժեր:

Պոմպեոսը և Տիգրան Մեծը քաջ գիտակցում էին, իրենց գործողությունների ազատության աստիճանը՝ երկկողմանի ռազմական ընդհարումը հավասարապես կործանարար էր երկուսի համար: Ճակատագիրն ինքն էր մղում նրանց միմյանց հաշտություն կնքելու:

66 թ.-ի աշնանը մակերեսային հայացքով դիտարկողի համար ստեղծվեց մի պարադոքսալ (խորաթափանց հետազոտողի համար՝ օրինաչափ) իրավիճակ, երբ պատերազմը Հռոմի և Հայաստանի միջև դարձավ անհնարին՝ (в силу одинаковой разрушительности для обоих) այն կործանարար էր երկուստեք: Այս է Տիգրանի և Պոմպեոսի միջև կնքած խաղաղության պայմանագրի իրական հիմքը:

Տիգրան Մեծի Պոնտոս ժամանած բանագնացները Պոմպեոսին հայտնեցին արքայից արքայի հրաժարումը իր կայսերական հավակնություններից և դրանով հիմք ստեղծեցին հաջող նախնական բանակցությունների համար՝ կնքվեց հայ-հռոմեական զինադադարի նախնական պայմանագիրը և պայմանավորվածություն ձեռք բերվեց վերջնական պայմանագիրը կնքել Արտաշատի մոտակայքում:

Իր ողջ արտաքուստ արարողակարգային անհավասարություններով հանդերձ, այս պայմանագիրը իրավահավասար լիարժեք իրավաբանական փաստաթուղթ էր, որը կարգավորում էր տարածաշրջանային գրեթե բոլոր չլուծված հարցերը:

Մինչև 62 թ.-ը Պոմպեոսի անցկացրած բոլոր միջոցառումների հիմքում ընկած է 66 թ.-ին կնքած Պոմպեոս-Տիգրանյան

պայմանագիրը: Այս պայմանագիրը փաստորեն չեղյալ համարեց նույն՝ 66 թ.-ին Պոմպեոսի և Հրահատ Գ-ի նախապես կնքած պարթևա-հռոմեական դաշնակցային պայմանագիրը, իսկ 65 թ.-ին 66 թ.-ի հայ-հռոմեական պայմանագիրն ընդունեց ընդգծված հակապարթևական բնույթ՝ հայերը և հռոմեացիները պատերազմեցին պարթևների դեմ Կորդուքում, որը 64 թ.-ին ստիպեց պարթևներին զիջումներ կատարել հայերին, հետագայում նրանց հետ մերձենալու ակնկալիքով:

66 թ.-ին կնքած Պոմպեոս-Տիգրանյան պայմանագիրն ունի նաև ընդգծված հակապոնտական՝ հակամիհրդատական բնույթ և դրանով ուղղված էր նաև Միհրդատ Եվպատորի և Տիգրան Կրտսերի դաշնակիցներ Իբերիայի ու Աղվանքի տիրակալների դեմ: Վերջիններս բացահայտ պաշտպանում էին Հրահատ Գ-ի փեսա, Տիգրան Մեծի դեմ ապստամբած Տիգրան Կրտսերին: Արդյո՞ք դա չի նշանակում, որ Կովկասում վերջնական ձևավորվում է հակամարտության նոր ռազմաճակատ Տիգրան-Պոմպեոսյան հայ-հռոմեական և Միհրդատ Եվպատոր – Տիգրան Կրտսեր – Հրահատ Գ կոալիցիայի մեջ ներգրավված, 67 թ.-ին Տիգրան Բ Մեծի դեմ ապստամբած, աղվանական Օրոյսես և իբերական (վրացական) Արտոկես թագավորների միջև:

Տիգրանի վճարած ռազմատուգանքի չափը ծիծաղելի քիչ էր՝ 6.000 տաղանդ, այնքան քիչ, որ Տիգրանը հարկադրված էր կոմպենսացնել դա հռոմեական բանակի զինվորներին և սպաներին մի փոքր դրամաշնորհով: Այս իմաստուն քայլը, լցնելով զինվորների քսակները, թույլ էր տալիս նրանց միջոցներ ունենալ Արտաշատի շուկաներում առնտուր անելու համար: Ընդունենք, որ Տիգրանը այս շատ ուժեղ հոգեբանական քայլին ավելացնեց նաև տնտեսական նպատակահարմարությունը: Մոտ ժամանակներում իր բաժանած գումարի մեծ մասը նստելու էր հայ առևտրականների գրպաններում:

Երբ մենք կքննարկենք հայ-հռոմեական պայմանագրի մանրամասները, ես կփորձեմ հիմնավորել իմ վարկածը, որ այս գումարի գաղտնի նպատակը՝ Պոմպեոսին նրա համաձայնության համար փոխհատուցումն էր, Պոնտական թագավորության կազմում գտնվող Փոքր Հայք թագավորության ոչոչ տարածքները Տիգրան Մեծին հանձնելու դիմաց: Հռոմի ծերակույտում Պոմպեոսին անպայման պետք է հարցնեին, թե ինչ իրավունքով է նա իրենց նվաճած երկրի մի մասը տալիս նույնիսկ այդպիսի անվանի դաշնակցին (առավել ևս, որ նա նախկինում թշնամի էր համարվում): Այս պարագայում դա կարող էր դիտվել որպես Պոմպեոսի կողմից անցկացված շահավետ գործարք:

Լուկուլլոսը Հռոմում անցկացրել էր հաղթահանդես, որտեղ մասնակցել էին միայն այն 1.600 լեգեոներները (հավանաբար Սեքստիլիոսի լեգեոնից 5 կոհորտ), որոնց Պոմպեոսը թույլ էր տվել մեկնել Հռոմ Լուկուլլոսի հետ: Այս զինվորներին Լուկուլլոսը տվել էր 950-ական դրախմ: Լուկուլլոսի մնացած զինվորները գտնվում էին Պոմպեոսի բանակի կազմում, բայց վարձատրություն չէին ստացել: Հռոմի սանձազերծած բազմաթիվ պատերազմներում հռոմեական բանակի հիմնական շարժառիթը կողոպուտն էր: Եթե հռոմեական բանակը հասել էր Արտաշատ և պահպանում էր կարգապահությունը, ապա այդ «սխրագործության» համար նա որոշակի վարձատրություն էր ակնկալում: Պոմպեոսի բանակում գտնվող Լուկուլլոսի նախկին 4 լեգեոնի զինվորները նույնպես սպասում էին այդ վարձատրությանը:

Երկու մեծերի՝ Տիգրանի և Պոմպեոսի անձնական հարաբերությունները գնալով ջերմացան: 66 թ. աշնանը նրանք բավական ժամանակ շփվեցին միմյանց հետ և այդ երկարատև զրույցները մտերմացրին նրանց: Հետագայում Տիգրանը և Պոմպեոսը միանգամայն վստահում էին իրար:

Հայ-հռոմեական պայմանագրային համակարգը 66 – 62 թթ. տարածաշրջանում կուտակված անորոշ վիճակն ու ներքին լարվածությունը թուլացրեց և ավելացրեց Հռոմեական տերության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին փոխկապվածությունը (связность): Այսուհետ ներքին հռոմեական հակասություններն Արևելքում զիջեցին նոր ձևավորված արտաքիններին՝ Հռոմ – Պարթևստան հակամարտությանը:

Ստեղծված ռազմաքաղաքական հակամարտության մեջ Հայաստանին վիճակված էր արտակարգ դեր խաղալ և նա այդ հարկադրված իրավիճակին արդեն պատրաստ էր շնորհիվ Տիգրան Մեծի մշակած քաղաքականության:

Հռոմեական և Պարթևական (որին փոխարինեց Սասանյան) տերությունների միջև գտնվող ուժեղ Հայկական պետության գոյությունը հետևանք էր նրանց մեջ կայացած համաձայնու-

թյան (կոմպրոմիսի): Այս աշխարհակարգն իր կենսունակությունը պահպանեց մոտ չորս և կես դար, մինչև 387 թ., երբ մերժվեց հռոմեացիների կողմից: Հետևանքը Հայաստանի բաժանումն էր, հետո թագավորական կարգի կորուստը 391 թ.՝ հռոմեական, 428 թ.՝ պարսկական մասում, որի հետևանքով շատ բան կորցրեցին թե՛ հայերը, թե՛ պարսիկները, սակայն ամենամեծ կորուստներն ունեցավ այս ծրագրի հեղինակը՝ Հռոմը:

8.7.1.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ավարտը

69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ռազմական գործողությունները տևեցին մինչև 67 թ. աշնան կեսերը, երբ Տիգրան Կրտսերի ապստամբության լուրը ստանալուց հետո Տիգրան Մեծը միակողմանիորեն ընդհատեց ռազմական գործողությունները և վերադարձավ Հայաստան: Դրանից հետո, մինչև Տիգրան Մեծի և Գնեոս Պոմպեոսի միջև 66 թ. աշնանը կնքված զինադադարը, մեծհայքյան և հռոմեական բանակները միմյանց դեմ ռազմական ոչ մի գործողություն չեն իրականացրել:

Այդ դեպքում ինչ՞ու ենք մենք պատերազմի ավարտը համարում 66 թ. այլ ոչ թե 67 թ. աշունը:

Մենք բոլոր հիմքերը ունենք համարելու, որ չնայած 67 թ. աշնանից ոչ մի ընդհարում չի եղել, սակայն խաղաղություն ևս չենք ունեցել: Ավելին, հենց 66 թ. գարնանը Պոմպեոսի հրահրելով և աջակցությամբ Հրահատ Գ-ի զորքերը հարձակվեցին Հայկական տերության վրա: Պոմպեոսը լի էր Միհրդատին հաղթելուց հետո, Տիգրանին ջախջախելու և «շղթայակապ Հռոմ տանելու» վճռականությամբ:

Այսպիսով, մենք պատերազմի ավարտը կարող ենք համարել միայն 66 թ. աշնանը երկու հաղթանակած բանակների առաջնորդների՝ Տիգրան և Պոմպեոս Մեծերի Փոքր Հայքում կնքած զինադադարը:

8.7.2. Հայ-հռոմեական զինադադարի նախնական պայմանագիրը

66 թ. աշնանը Պոմպեոսի և Տիգրանի միջև կնքված հայ-հռոմեական զինադադարի նախնական պայմանագիրը հստակ պետք է տարբերել ավելի ուշ՝ նույն թվի աշնանը Արտաշատում կնքված հայ-հռոմեական դաշնակցային պայմանագրից:

Եթե առաջինը պատերազմական գործողությունը վերջացնող և խաղաղության կարևորագույն սկզբունքները հաստատող նախնական փաստաթուղթ էր, ապա Արտաշատում կնքված հայ-հռոմեական դաշնակցային պայմանագիրն անհամեմատ ավելի մանրամասն շփումների և միմյանց փոխըմբռնման հետևանքով առաջացած համաձայնության պաշտոնական վավերացում էր: Հետագայում պայմանագիրը Հռոմում վավերացրեց նաև ծերակույտը և այն ուժի մեջ մտավ:

> Հայ-հռոմեական դաշնակցային պայմանագիրն արքայից արքա Տիգրան Բ Մեծի կայսրությանը ենթարկված մի շարք երկրների՝ Հռոմեական հանրապետության իրավարարության հանձնելու մասին որոշման իրավաբանական վավերացումն էր, ինչի մասին միանշանակ վկայում են անտիկ հեղինակները [42, 51, 59]: Պայմանագրի կարևորագույն դրույթներից էր իր կայսերական կարգավիճակից Հայաստանի հրաժարումը (Հայկական կայսրության ժամանակաշրջանը 85-66 թթ. Է):
>
> 64 թ.-ն այս պայմանագրի դրույթները հայ-պարթևական պայմանագրով վերջնականապես կընդունի նաև Հրահատ Գ-ն և Արևելքում ստեղծված նոր աշխարհակարգը իրավաբանորեն կվավերացվի:

62 թ.-ն Պոմպեոսը Սիրիայում վերջնականապես կկանոնակարգի Հայկական կայսրությունից իրեն հասած ժառանգությունը [51] և Արևելքը կմտնի քաղաքական և ռազմաքաղաքական կայունության ժամանակաշրջան (որը կտևի մինչև 54 թ., երբ այն կխախտեն հռոմեացիները՝ Կրասոսը):

66 – 64 թթ. Արևելքի քաղաքական կացությունը կանոնակարգող պայմանագրերի հիմնական դրույթներն, ըստ էության, գործեցին մինչև 387 թ.՝ մոտ չորս ու կես դար:

66 թ. աշնանը հռոմեական բանակը Պոմպեոսի ղեկավարությամբ Պանտոսում վերջնականապես պարտության էր մատնել Միհրդատին և նվաճել երկիրը, սակայն Միհրդատը Ղրիմում նոր պատերազմի էր պատրաստվում: Պոմպեոսի առաջ ծառացել էր «հայկական խնդիրը»: Հսկայական հռոմեական բանակը կազմ ու պատրաստ կանգնած էր Հայաստանի սահմանագլխին: Թվում էր, թե հայ-հռոմեական հերթական ռազմարշավը անխուսափելի է: Սակայն այն տեղի չունեցավ: Ի՞նչն էր պատճառը, որ հսկայական հռոմեական բանակի գլուխն անցած փառասեր զորավարը հնարավոր հաղթական պատերազմին նախընտրեց խաղաղ պայմանագիրը:

Այս հարցի պատասխանը իր մեջ ներառում է ռազմաքաղաքական, աշխարհաքաղաքական, դիվանագիտական, մշակութաբանական և հոգեբանական տարրեր, որոնցից ռազմական բաղադրիչը այնքան որոշիչ է, որ այս հարցը քննարկվում է գերազանցապես ռազմական պատմության ենթատեքստում:

Պայմանագիր կնքելիս երկու կողմն էլ ձգտում են հասնել իրենց համար առավելագույն արդյունքի: Դա կախված է ոչ միայն պայմանավորվողների դիվանագիտական հմտություններից, այլև բանակցությունների ժամանակ իրենց «զզրոցներում» նրանց ունեցած միջոցներից:

Պայմանագրի բուն էությունը հասկանալու համար պարտավոր ենք մանրամասնորեն վերլուծել այդ «զզրոցների» փաստարկները:

Տիգրանը բանակցությունների եկել էր հետևյալ պաշարով.

1.հաղթանակ Լուկուլլոսի հանդեպ 69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմում,

2.հաղթանակ Հրահատ Գ-ի հանդեպ 66 թ. հայ-պարթևական պատերազմում,

3.փորձված մարտունակ 40-50.000-ոց դաշտային բանակ, որի 10.000 կատաֆրակտոսները աշխարհի լավագույն ծանր այրուձին էին,

4.հռոմեացիների հետ հնարավոր ռազմական բախումը պետք է տեղի ունենար Հայաստանում՝ մի երկրում, որն ուներ աշխարհի ամենակատարյալ ամրությունների համակարգերից մեկը,

5.հռոմեացիներին և պարթևներին պարտության մատնած

հայ ժողովրդի բարոյահոգեբանական վիճակը շատ բարձր էր և նա պատրաստ էր պայքարել երկիր ներխուժած ցանկացած զավթիչի դեմ,

6.Տիգրանը Հռոմում գտնվող իր գործակալների միջոցով լավ տեղեկացված էր Գնեոս Պոմպեոսի կենսագրության և բնավորության յուրահատկություններին,

7.Տիգրանը տեղեկացված էր Հռոմում ծավալված ներքաղաքական պայքարի մանրամասնություններին, ինչը նրան թույլ էր տալիս Պոմպեոսից պահանջել ոչ թե իր ցանկալին, այլ հնարավորը,

8.Միհրդատ Եվպատորը պարտված էր, սակայն խաղաղված չէր և ենթակա Բոսփորյան թագավորությունում նոր ուժեր էր հավաքում Հռոմի դեմ պատերազմը վերսկսելու համար. Տիգրանը կարող էր «մոռանալ պապի դավադրությունը հոր դեմ» և Միհրդատին օժանդակել 5-6.000 զորագնդով, որը վերջինիս ձեռքում անմիջապես կդառնար ապագա հզոր բանակի բյուրեղացման կենտրոն,

9.Պարտության դեպքում Տիգրան Մեծը իշխանությունը կհանձներ Տիգրան Կրտսերին, որն արդեն պարթևների կողմից հռչակվել էր որպես «Տիգրան Գ» հայոց արքա և կնության էր վերցրել Հրահատ Գ-ի դստերը, հռոմեացիների պայքարը հայերի դեմ միանգամից կվերածվեր պայքարի նաև պարթևների դեմ, որը վստահաբար կկործաներ Պոմպեոսին:

«Զզրոցների ունեցվածքի» այս քննությունը ցույց է տալիս, որ Պոմպեոսը Տիգրանին հաղթելու հնարավորություն չուներ. նույնիսկ Տիգրան Մեծին «հաղթելով», նա արձակում էր Տիգրան Կրտսերի գոյությամբ պայմանավորված նույն Տիգրան Մեծի պահեստային ծրագիրը, որով հռոմեացիներն արդեն հարկադրված կլինեին կռվել ոչ միայն հայկական, այլև պարթևական բանակների դեմ, իսկ Հայաստանը դառնում էր Պարթևստանի ամենամոտ դաշնակիցը (հիմնականում Հռոմի դեմ):

Պոմպեոս Մեծը բանակցություններից առաջ ուներ հետևյալ «պաշարը».

1.Լուկուլլոսի ղեկավարած հռոմեական բանակի հաղթանակը Տիգրանակերտի ճակատամարտում և, ավելի շատ՝ Տիգրանակերտի գրավումը և ավերումը, ինչի հետևանքով անկախացան Տիգրանին ենթակա թագավորությունների մեծ մասը.

2.տպավորիչ հաղթանակ ծովահենների հանդեպ արևելյան

Միջերկրածովքում,

3.հաղթանակ Միհրդատի հանդեպ Պոնտոսում և երկրի հպատակեցում,

4.հռոմեական ծերակույտի կողմից շնորհված արտակարգ իրավունքներ,

5.իրեն տրամադրված հսկայական ռազմական միջոցներ՝ նա Տիգրանի դեմ կարող էր դուրս գալ իր տրամադրության տակ գտնվող ուժերի կեսով՝ 60-70.000-ոց հզոր բանակով,

6. Պարթևստանի հետ կնքված դաշինքը նրան թույլ էր տալիս անհրաժեշտության դեպքում հարվածել Տիգրանին երկու կողմից՝ ստեղծել մի վիճակ, երբ օյկումենեի երկու ամենախոշոր տերությունները՝ Հռոմը և Պարթևստանը միաժամանակ արշավի են ելնում տիգրանյան Հայաստանի դեմ (Տիգրան Կրտսերի գոյության հետևանքով առաջացած երկակի վիճակը Պոմպեոսը խորությամբ չէր ըմբռնել):

Հռոմեացիները իրենց թշնամիների հետ պայմանագիր կնքելիս ուղեկցվում էին որոշ կարծրատիպերով, որոնց մասին շատ լավ է պատմում Տիտոս Լիվիոսը:

Տիտոս Լիվիոս. Հռոմի պատմությունը քաղաքի հիմնումից. Գիրք XXVIII.34.7. (թարգմանությունը ռուսերենից – Ա.Գ.) *«Հռոմեացիների մոտ կար հին կանոն. այն ժողովուրդը, որի հետ չկար պայմանագրով ամրացած միություն, ոչ էլ ընկերություն հավասար պայմաններով, համարել հանձնված ու խաղաղեցված միայն այն ժամանակ, երբ նա կհանձնի լրիվ աստվածայինը ու մարդկայինը, պատանդներ կուղարկի, կհանձնի զենքը և երբ նրա քաղաքներում կտեղադրեն հռոմեական կայազորներ»* [306]:

Տիգրանի հետ զինադադար կնքելիս և հետագայում խաղաղության պայմանագրի կետերի վերաբերյալ բանակցելիս այսպիսի պայմաններ Պոմպեոսը չէր կարող ակնկալել՝ արարողակարգից բացի, պայմանագիրն ստացվեց գրեթե իրավահավասար:

8.8.Պոմպեոսը Հայաստանում

66 թ. աշնան կեսին Պոմպեոսի բանակը հայ-հռոմեական զինադադարի նախնական պայմանագրի կետերին համաձայն մտավ Հայաստան և շարժվեց դեպի Արտաշատ, որտեղ և պետք է հանդիսավոր պայմաններում կնքվեր հայ-հռոմեական դաշնագիրը:

Արտաշատի մոտ հանդիպեցին պոնտոսյան պատերազմում հաղթած հռոմեական և պարթևական պատերազմում հաղթած հայկական բանակները: Այս յուրահատուկ զորահանդեսում կողմերը միմյանց ցույց էին տալիս իրենց գերազանց ռազմական պատրաստվածությունը և կարողությունները:

Փորձենք պարզել, թե ինչ ուժերով Հայաստան մտավ Պոմպեոսը և ինչ ուժերով նրան դիմավորեց Տիգրանը:

8.8.1.Պոմպեոսի բանակի կազմը և թվաքանակը

Փոքր Ասիայում Պոմպեոսին ենթարկվում էին մոտ 110-120.000 զինվոր: Պոնտոս մտած Պոմպեոսի բանակն ուներ մոտավորապես 85.000 զինվոր. 66 թ. աշնան սկզբին այս վիթխարի բանակի միայն մի մասը մտավ Հայաստան՝ հայ-հռոմեական նախնական զինադադարը կայացել էր և Հայաստանում ռազմական գործողություններ չէին ենթադրվում:

Պոնտոսում մնացին զգալի ուժեր, ոչ պակաս, քան 2 լեգեոն՝ հավանաբար Ռեքսի լեգեոնները (նրանք նորակազմ էին և, հավանաբար, Պոմպեոսը նրանց վարձատրել չէր նախատեսում) և դաշնակիցների բավարար ուժեր, միասին՝ մոտ 25-30.000 զինվոր. Միհրդատը Բոսփորում էր և եռանդուն պատրաստվում էր շարունակել պատերազմը:

Հայաստան մտած հռոմեական բանակի հնարավոր թիվը կարելի է որոշել մեր նախնական հաշվարկներով, ինչպես նաև հռոմեական բանակին Պոմպեոսի և Տիգրանի տված վարձատրություններով:

Աղյուսակ 8.4. Գնեոս Պոմպեոսի հայկական արշավանքի համար նախապատրաստած բանակի կազմը 66 թ. աշնան

կեսին (առանց թեթևազենների)

Լեգեոն	Լեգեոներներ և հեծյալներ	Դաշն. ծանր և թեթև հետևակ	Դաշնակիցն. հեծելազոր
1-ին լեգեոն	5.000 և 500	2.000 և 500	600
2-րդ լեգեոն	5.000 և 300	2.000 և 500	600
3-րդ լեգեոն	5.000 և 300	2.000 և 500	600
4-րդ լեգեոն	5.000 և 300	2.000 և 500	600
5-րդ լեգեոն	5.000 և 300	2.000 և 500	600
6-րդ լեգեոն	5.000 և 300	2.000 և 500	600
1-ին փիմբրիական լեգեոն	3.100 և չկա	-	-
2-րդ փիմբրիական լեգեոն	3.100 և չկա	-	-
Մուրենայի լեգեոն	3.300 և 50	500	-
Տրիարիոսի լեգեոն	4.000 և 150	500	-
	43.500 և 2.200	12.000 և 4.000	3.600

Այսպիսով, իմպերատոր Գնեոս Պոմպեոսը Հայաստան մտավ 10 լեգեոնից կազմված հզոր 65.000-ոց բանակով, որից 55.000 ծանր հետևակ, 4.000 թեթև հետևակ և 6.000 հեծելազոր:

Պոմպեոսի արշավանքի ներկայացչական բնույթը, սպասվելիք առատ դրամական պարգևները հաշվի առնելով, Պոմպեոսը ընտրեց հայաստանյան արշավի համար այնպիսի կազմ, որն առավելագույնս ընդգրկի բուն հռոմեական զորամասերը:

Արշավը դեպի Արտաշատ ընթանում էր կազմակերպված, Տիգրանի ուղարկած ոչ մեծ պատվիրակության ուղեկցությամբ: Տիգրանի կարգադրությամբ հռոմեական բանակը պարենավորվում էր տեղի հայկական իշխանության կողմից տրամադրված պարենով: Ոչ մի անտիկ հեղինակի հաղորդում այս արշավի ժամանակ գրված հայկական քաղաքների մասին իրականությանը չի համապատասխանում: Եթե դեպի Արտաշատ սրընթաց շարժվող հռոմեական բանակը փորձեր գրավել որևիցե

հայկական քաղաք, ապա պաշարման համար պետք է ծախսեր ամիսներ՝ մենք գիտենք ինչ անհաջողություններ էին կրում հռոմեացիները հայկական քաղաքների պարիսպների տակ [42, 51, 59]: Անտիկ հեղինակների կողմից չկան վկայություններ հռոմեացիների կողմից կատարված կամայականությունների, թալանի և ավերածությունների մասին՝ արշավը ընդհանում էր առանց պատերազմական գործողությունների [42, 51, 59]:

Ճանապարհին Պոմպեոսի մոտ է ժամանում Տիգրան Կրտսերն իր տիկնոջ և փոքրաթիվ շքախմբի հետ, որը շատ է ուրախացնում Պոմպեոսին (Պլուտարքոսը պատմում է, որ Տիգրան Կրտսերը Պոմպեոսի մոտ էր գնացել դեռ այն ժամանակ, երբ վերջինս Պոնտոսում էր և հրավիրել նրան արշավել Հայաստան՝ Տիգրանի դեմ [42], սակայն այս ամենը չեն հաստատում Ապպիանոսը և Դիոն Կասսիոսը [51, 59]): Պոմպեոսը կարծում էր, որ Տիգրան Կրտսերի առկայությունն իր ռազմակայանում իր դիրքերը Տիգրան Մեծի հետ բանակցություններում կուժեղացնի: Հասնելով Արտաշատ, հռոմեացիները մոտակայքում ճամբար են կառուցում. Արտաշատ նրանք չեն մտնում (Արտաշատի գրավման մասին անտիկ հեղինակների մոտ ոչ մի վկայություն չկա, իսկ Արտաշատը հռոմեացիներին հանձնելու Դիոն Կասսիոսի հաղորդումը, դեպքերի տրամաբանությունից ելնելով, ավելի շատ հռոմեացի զինվորականների ազատ ել ու մուտի մասին է վկայում) [34, 42, 51, 59]:

Եթե հռոմեացիները համարեին, որ մ.թ.ա. 66 թ.-ին Պոմպեոսը գրավել է Արտաշատը, ապա 59 թ. Կորբուլոնը չեր հայտարարի, որ այրել է մինչ այդ հռոմեացիներին անհասանելի «հայկական Կարթագենը» [319]:

Պոմպեոսը Լուկուլլոսին ստորացնելու ևս մի արտակարգ ձև հնարեց՝ նա իր Հայաստան մտած բանակի կազմում ընդգրկել էր նաև Լուկուլլոսի այն լեգեոնները, որոնք 69-68 թթ. փորձեցին, սակայն Արածանիի ափերին պարտվելով, չկարողացան հասնել «հայկական Կարթագեն»: Այժմ Պոմպեոս Մեծը Արտաշատին մոտեցավ անկորուստ, բարեկամանալով ահեղ թշնամու հետ, և՝ իր զորքին «հայկական Կարթագենը» ցույց տալու, և՝ պատկառելի դրամական վարձատրություն ստանալու խոստումով:

Պոմպեոսը Լուկուլլոսի վետերանների լեգեոնները ընդ-

գրկեց իր բանակի կազմում նաև նրա համար, որովհետև վախենում էր հայկական բանակից, հատկապես նրա հեծելազորից և արդարացիորեն համարում էր, որ նոր հայկական արշավում հնի մասնակցածներն իրենց փորձը կհաղորդեն նորեկներին: Եթե ինչ-ինչ պատճառներով հաշտությունը չկայանար, Լուկուլլոսի հայաստանյան փորձը կարող էր պետք գալ ...

Պոմպեոսն իր լեգեոներներից կազմված շքախմբով ժամանեց մայրաքաղաքի պարիսպներից դուրս գտնվող Տիգրանի շքեղ պալատ և հյուրընկալվեց այնտեղ: Այս պահվածքը ևս կոչված էր ընդգծելու Պոմպեոսի վեհությունը և Լուկուլլոսի նենգությունը, որի հրամանով Սեքստիլիոսի լեգեոներները 69 թ. թալանել ու ավերել էին Տիգրանակերտի մոտ գտնվող Տիգրանի պալատը, հրդեհելով չքնաղագույն շինությունը: Այս միջադեպի մանրամասնությունները հասել էին Հռոմ և Լուկուլլոսի քաղաքական հակառակորդներին հիմք տվել բարբաջանության ու վայրենության մեջ մեղադրելու Լուկուլլոսին:

Բանակցությունների ժամանակ, որոնք տեղի ունեցան արդեն հռոմեական զորակայանում, Պոմպեոսը հայ-հռոմեական պատերազմի հրահրման համար ուղղակիորեն կմեղադրի Լուկուլլոսին և կհայտարարի, որ եկել է վերականգնելու արդարությունը (ահա և՝ պատերազմը հրահրող «մեղավորը», և՝ արդարությունը վերականգնող հռոմեական հերոսը, որի «բարերարության» դիմաց շնորհակալ «տուժածը» «հանձնում է իր նախկինում զավթած տիրույթների մի մասը»): Մենք այստեղ տեսնում ենք հռոմեական պատմությունից քաջ ծանոթ դասական հռոմեական մտածելակերպի կարծրատիպ, որը, սակայն, պայմանագիր կնքող երկու կողմերին տվյալ պահին լիովին բավարարում էր:

Պոմպեոսի բանակին Արտաշատի մոտ դիմավորեց հայկական բանակը՝ մոտ 45.000 զինվոր, որից

-մոտ 7.500 կատաֆրակտոսներ,
-մոտ 8.000 թեթև հեծելազոր,
-մոտ 20.000 ծանր հետևակ,
-մոտ 8.000 թեթև հետևակ և
-մոտ 1.000-1.500 սակրավորներ:

Տիգրանը Հայաստանի բոլոր ծայրամասերից Արտաշատ էր հավաքել իր բանակի լավագույն զորամասերը՝ բոլոր կատաֆրակտոսներին, ընտիր թեթև հեծելազոր, 5 լեգեոն-զորագունդ վահանակիր, նետաձիգների ընտիր գնդեր:

8.8.2.Հայ-հռոմեական պայմանագրի կնքումը

Նախնական պայմանավորվածության ժամանակ կողմերը մանրամասն մշակել էին նաև արարողական կողմը.

-Պոմպեոսի հյուրընկալվելը Արտաշատից դուրս գտնվող Տիգրանի պալատում,
-Տիգրանի հռոմեական ճամբար մտնելու արարողակարգը,
-բանակցությունների վայրը՝ հռոմեական ճամբարը,
-բանակների փոխադարձ զորահանդեսը,
-Պոմպեոսի հետագա գործողությունները,
-Պարթևստանի հետ կապված խնդիրները,
-Հռոմում անցկացվելիք հաղթահանդեսին Տիգրանին հետաքրքրող որոշ մանրամասնությունները:

Այս ամենին անսպասելի ծանրացավ Պոմպեոսի մոտ փախած Տիգրան Կրտսերի հարցը:

Պոմպեոսի և Տիգրանի հանդիպումը նկարագրել են մի շարք անտիկ պատմաբաններ, որոնց ծայրահեղ միակողմանի նկարագրությունների մեջ անգամ պետք է փորձել նշմարել ճշմարտության որոշ պահեր:

8.9.Հայ-հռոմեական դաշնային պայմանագիրը և Արևելքում նոր աշխարհակարգի ստեղծումը

Հայ-հռոմեական դաշնային պայմանագրի կնքումը, դրան հաջորդող Տիգրանի հայկական (մեկ վայրկյան անգամ չեմ կասկածում, որ Տիգրանը դրամաշնորհ էր հատկացրել նաև հայ զինվորներին և սպաներին, այլապես նրանք շատ նվաստացած կլիներին) և հռոմեական բանակներին դրամական պարգևներ տրամադրելու մասին հայտարարությունը, սպասվող ծանր

պատերազմի փոխարեն հանգիստ հայրենիք վերադառնալու հնարավորությունը մեծ ոգևորություն էին առաջացրել հռոմեական և հայկական բանակներում: Արտաշատ մտնել որպես մասնավոր անձ հռոմեական զինվորներին ոչ ոք չէր արգելում՝ դրամային պարգևատրությունները սկսեցին արագ հալվել մայրաքաղաքային շուկաներում, պանդոկներում և պոռնկատներում:

Այս ամենից հետո պետք է տեղի ունենար համատեղ հսկայական գործունեություն՝ ուժի ցուցադրում, յուրահատուկ գործողություն-ապառնալիք Պոմպեոսի և Տիգրանի արտաքին և ներքին թշնամիներին:

66 թ. հայ-հռոմեական դաշնակցային պայմանագիրը միջազգային իրավունքի երկու իրավահավասար սուբյեկտների միջև կնքված (հետագայում՝ 62 թ., նաև հռոմեական ծերակույտի կողմից ճանաչված) փաստաթուղթ է, որով ավարտվում է 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմը, երկու պետությունների միջև կնքվում է դաշնակցային պայմանագիր և սահմանվում են երկու կողմերի իրավունքները և փոխադարձ պարտավորությունները:

Պայմանագրի իրավահավասարության մասին են վկայում հետևյալ փաստերը.

-կողմերը պատանդներ չեն փոխանակում,

-Պոմպեոսի կողմից Հայաստանում գերի է վերցվում միայն Տիգրան Կրտսերը իր ընտանիքով, որը հանցագործ է համարվում թե՛ հայերի, թե՛ հռոմեացիների կողմից, սակայն ձերբակալման պահին Պոմպեոսի հյուրն էր հանդիսանում և վիրավորում է հատկապես Պոմպեոսին,

-Տիգրանը Պոմպեոսին հանձնում է 6.000 տաղանդ արծաթ, որպես Փոքր Հայքի Անահտաց գավառի և մի շարք այլ գավառների Մեծ Հայքին անցնելու հատուցում (մեր համար կարևոր չէ ինչպես է դա մատուցվում Հռոմում՝ Հին Չինաստան եկած ցանկացած պատվիրակության նվերները Չինաստանի կայսրը ընդունում էր որպես տուրք, սակայն ոչ մի ժամանակակից հետազոտող այս փաստից չի եզրակացնում, որ այդ երկիրը պարտադիր նրան հպատակվել է),

-պայմանավորվող երկրները դաշնակցի տարածքներում ռազմական կայազորներ չեն տեղադրում,

-փոխադարձ պայմանավորվածության հիմնական երկու կետերից առաջինով պարտավորվում են միմյանց օգնել պատերազմի ժամանակ,

-երկրորդ հիմնական կետով համաձայնեցնում և սահմանում են Օյկումենեի Արևելքում իրենց տարածքային հավակնությունները, ընդորում Տիգրանը հօգուտ Հռոմի հրաժարվում է փաստացիորեն իր կողմից չվերահսկվող Հայկական կայսրության հարավային երկրների մի մասից. փոխարենը Հռոմը ճանաչում է նրա իրավունքները Եփրատից արևելք,

-Տիգրանի վարձատրությունը հռոմեական (և հայկական) բանակին կամավոր գործողություն էր արքայից արքայի կողմից՝ վարձատրության չափը և ձևը սահմանում է Տիգրանը,

-ամենակարևորը՝ Տիգրանը և իր հաջորդները պահպանում են արքայից արքա տիտղոսը ոչ թե ձևականորեն, այլ իրականորեն՝ Հռոմը Հայաստանին ճանաչում է, որպես Առաջավոր Ասիայի խոշորագույն ուժ՝ Պոմպեոսը անընդհատ պարթև Հրահատ Գ-ին մատնանշում է Տիգրան Մեծի նկատմամբ նրա ավելի ստորադաս վիճակը:

Պայմանագրի մանրամասն իրավաբանական (հին աշխարհի միջազգային իրավունք) վերլուծությունը թողնելով իրավաբան մասնագետներին, նշում եմ պայմանագրի միջի ռազմական խնդիրներին նվիրված կետերի ուսումնասիրության կարևորությունը:

Տիգրանն և Պոմպեոսը անխտիր կատարեցին կնքված պայմանագրի բոլոր կետերը՝ արդեն 66 թ. աշնանը հայ-հռոմեական ռազմաքաղաքական դաշնակցությունը ակտիվ գործում էր:

Հետաքրքիր է, որ Պոմպեոսը Փոքր Հայքի գավառների համար Տիգրանից ուզեց այն գումարը, որը նա վերցրել էր հռոմեական գանձարանից կիլիկյան ծովահենների դեմ պատերազմ վարելու համար: Այս գումարի վերադարձը Հռոմ համապատասխանում էր Գնեոս Պոմպեոս Մագնի՝ Հռոմի պատվարժան քաղաքացու բնավորության լավագույն կողմերը ընդգծելու ծրագրին:

66 թ. հայ-հռոմեական պայմանագրի էությունը կայանում էր նրանում, որ 93 – 66 թթ.-ին դեպի Արևելք Հռոմի առաջխաղացմանը ակտիվ խոչընդոտած, հռոմեական բանակների դեմ հաղթանակներ տարած Հայաստանն այսուհետ ճանաչում էր Հռոմի ներկա և ապագա տարածքային ձեռքբերումները մինչև Եփրատ գետը, իսկ Հռոմն, իր հերթին, ճանաչում էր Հայկական թագավորությունը, ներառյալ Ծուփքը, Միգդոնիան, Կորդուքը և Փոքր Հայքի մի մասը, որպես անկախ դաշնակից երկիր: Կողմերը պարտավորվում էին իրար փոխադարձ օգնություն ցույց տալ երրորդ կողմի հարձակման դեպքում և այս դաշնային պայմանագրին հակասող միություններ չմտնել: Երկուսը ճանաչում էին միմյանց տարածքի անձեռնմխելիությունը և ամբողջությունը:

27-ամյա պայքարից հետո Հայաստանը և Հռոմը վերջապես կարգավորեցին իրենց քաղաքական փոխհարաբերությունները:

Հռոմը ճանաչեց Հայաստանի իրավունքը ռազմական ճանապարհով ետ բերել Միջագետքի անկախացած թագավորությունները: Սակայն 65 և 64 թթ. հայ-պարթևական պատերազմը վերջացավ status quo-ի պահպանմամբ՝ չնայած հռոմեացիների գործուն օգնության և հայերի նախնական հաջողությունների, պարթևները կարողացան իրենց պահել վիճելի թագավորությունները, ինչը և ամրագրվեց հռոմեացիների միջնորդությամբ կնքված 64 թ. հայ-պարթևական պայմանագրով: Հայաստանը և Պարթևստանը փոխադարձաբար ստեղծված սահմանները ճանաչեցին որպես վերջնական: Օյկումենեի Արևելքը բաժանվեց երեք անհավասար մասի. Հայաստանի իրավահավասարությունը Հռոմի և Պարթևստանի հետ անկասկած էր, սակայն Հռոմի հետ փոխհարաբերություններում՝ կրտսեր գործընկերոջ կարգի էր:

Տիգրան Մեծի հաղթանակների և իրատես քաղաքականության շնորհիվ Հայաստանը վերջնականապես ճանաչվեց որպես միջազգային քաղաքականության ծանրաքաշ խաղացող:

Տիգրանը և Պոմպեոսը դրանից հետո մոտ երկու շաբաթ հնարավորություն ստացան պարբերաբար շփվել միմյանց հետ: Ի՞նչ էին քննարկում իրենց ժողովուրդների և Պատմության կողմից պատվական «Մեծ» կոչման արժանացած իրենց ժամանակի

ամենակարկառուն երկու այրերը: Ի՞նչ ծրագրեր էին մշակել, փոխադարձ ի՞նչ պարտավորություններ վերցրել (Փարսալում պարտվելուց հետո Պոմպեոսը ինչ՞ու չմեկնեց Հայաստան, որտեղ անհամեմատ ավելի շատ հնարավորություններ կունենար պայքարել Կեսարի դեմ): Հայտնի է միայն, որ երկուսն էլ բացարձակ վստահում էին իրար: Ի՞նչ համատեղ շահերի վրա էր հիմնված այս փոխվստահությունը: Այս հարցերին սպառիչ պատասխան տալ այլևս չենք կարող, սակայն վերլուծելով իրավիճակը, որոշ եզրահանգումների հասնել հնարավոր է:

«Զիջելով» Պոմպեոսին Արևելյան Միջերկրածովը, Տիգրանը պետք է ակնկալեր հռոմեացիների աջակցությունը Միջագետքի նախկին հայկական ժառանգությունը՝ Ադիաբենեն, Հաղրիենեն և Օսրոյենեն վերադարձնելու գործում: Կարծում եմ, որ հաջորդ՝ 65 թ. Կորդուքում ռազմական գործողությունները ձեռնարկել էր ինքը՝ Տիգրանը: Հայկական զորքերը պետք է այստեղից թափանցեին Ադիաբենե և Հաղրիենե և վերագրավեին այդ երկրները: Պարթևներն ուժեղ դիմադրեցին և հայերին ետ մղեցին Կորդուք: Այս իրադարձությունների մանրամասնությունները կշարադրվեն 65-55 թթ. նվիրված հաջորդ գլխում:

Տիգրանը բանակցությունների առարկա պետք է դարձներ նաև Փոքր Հայքի ճակատագիրը: Պոմպեոսը չէր կարող համաձայնվել Տիգրանին հանձնել Փոքր Հայքը մի շարք պատճառներով.

-հռոմեացիներին ձեռնտու չէր Հայաստանի զգալի ուժեղացումը, իսկ Փոքր Հայքի միացումը Մեծ Հայքին զգալիորեն ուժեղացնում էր Տիգրանին,

-Փոքր Հայքը համարվում էր Միհրդատ Եվպատորի նախկին թագավորությունը և նրա հանձնումը Պոնտոսի նախկին դաշնակցին, կնշանակեր փոխզիջման առկայություն, ինչը Պոմպեոսը չէր կարող հանդուրժել՝ իր հաղթանակը վերջնական էր և անբեկանելի,

-հավանաբար, արդեն խոստում էր տրված Գալատիայի թագավոր Դեյոտարոսին, որ նա Հռոմին մատուցած ծառայությունների համար թագավորելու է նաև Փոքր Հայքում,

-Փոքր Հայքի ավագանու մի մասը դեմ էր Մեծ Հայքին միանալուն, համարելով, որ այդ միացումը կլինի Փոքր Հայք թագավորության վերջը:

Այս նկատառումներից ելնելով, Պոմպեոսը Տիգրանին զիջեց

միայն Փոքր Հայքի որոշ գավառներ (Փոքր Հայքի բավական ընդարձակ տարածքի մեջ էր մտնում նաև Տրապիզոնի մարզը, որը հայոց ավագանու պահանջով Փոքր Հայքին էր հանձնել Միհրդատը):

Տիգրան Կրտսերը իր դժգոհությունը բանակցությունների արդյունքներից և դրանց դեմ ըմբոստանալը արտահայտեց Պոմպեոսին ստորացնելու միջոցով: Տիգրան Կրտսերը հրաժարվեց Պոմպեոսի և նրա հյուրի՝ Տիգրան Մեծի հետ ճաշելու հրավերից: Ճաշը հռոմեացիների համար հասարակական գործողություն էր, որտեղ տանուտերը ցույց էր տալիս իր վերաբերմունքը հյուրերի նկատմամբ: Դիմավորելով Տիգրան Մեծին որպես հավասարը հավասարին, Պոմպեոսը պարտադրված չեր նույնպես վարվել այլ հյուրերի հետ, որոնց հանդեպ կարող էր ցույց տալ գերազանցության որոշ նշաններ [302]:

Հայոց արքայից արքայի ըմբոստ որդին ու թագաժառանգը, և պարթևաց արքայի փեսան իրեն վեր էր համարում Պոմպեոսից, որի համար էլ ձերբակալվեց:

Ծոփքի վիճակը մնաց անփոփոխ՝ նահանգ Մեծ Հայքի կազմում:

8.10.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի արդյունքներն ու գնահատականը

8.10.1.Հակամարտող կողմերի կորուստները

69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի երեք ռազմարշավներին հռոմեացիները կորցրեցին
-69 թ.՝ մոտավորապես 10.000 սպանված հռոմեացի և դաշնակից զինվոր,
-68 թ.՝ մոտավորապես 30.000 սպանված հռոմեացի և դաշնակից զինվոր,
-67 թ.՝ մոտավորապես 20.000 սպանված և 5.000 ռազմագերի հռոմեացի և դաշնակից զինվոր,

Այսպիսով, ողջ պատերազմի ընթացքում հռոմեացիները կորցրեցին մոտավորապես 60.000 սպանված հռոմեացի և դաշ-

նակից զինվոր և 5.000 գերի, ընդամենը՝ 65.000 զինվոր:

69 թ. գարնանը Հայաստան ներխուժած 55.000-ոց հռոմեական բանակը պատերազմի տարիներին ստանալով մոտ 12.000 զինվոր համալրում, 67 թ. գարնանը նահանջեց Պոնտոս, որտեղ հասան Լուկուլլոսի 24-25.000 զինվորներ: Հայաստան մտած 24.000 բուն հռոմեացիներից և իտալիկներից դուրս պրծնել կարողացան միայն 14.000-ը:

Միայն Տրիարիոսի բանակը 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի Պոնտոսում կայացած Զելայի գլխավոր ճակատամարտում սպանվածներով կորցրեց 15.000 և 5.000 գերիներով՝ իր բանակի կեսը, որոնցից, համապատասխանաբար՝ մոտավորապես 10.000 և 3.000 հռոմեացի ու իտալիկներ: Այս կորուստներն ամենաբարձրն էին ողջ պատերազմի ժամանակաշրջանում: Ընդհանուր առմամբ, Պոնտոսում հայ-պոնտական բանակի հետ ընդհարումներում զոհվել է մոտավորապես 14.000 հռոմեացի և գերի է ընկել մոտավորապես 5.000 զինվոր:

Այսպիսով, 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ժամանակ զոհվել է մոտավորապես 28.000 հռոմեացի, և 5.000 գերի ընկել (հիմնականում 67 թ.՝ Պոնտոսում): Հետագայում, 66 թ. Կաբիրայի մոտերքում տեղի ունեցած վճռական ճակատամարտում Պոմպեոսին հաջողվեց ազատել Պոնտոսի գրեթե բոլոր հռոմեացի գերիներին: Այս մեծ կորուստները գումարվել էին 73-70 թթ. Պոնտոսում երրորդ պոնտական պատերազմում հռոմեացիների ունեցած զգալի կորուստներին:

Պատերազմի ընթացքը շատ լարված էր, և Գալատիա նահանջած հռոմեական լեգեոնները հոգնած և հյուծված էին:

69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի երեք ռազմարշավներին հայերը կորցրեցին
-69 թ.՝ մոտավորապես 30.000 զոհված զինվոր հայերից և հպատակ ազգերից, և 5.000 ռազմագերի, ընդամենը 35.000 զինվոր,
-68 թ.՝ մոտավորապես 17.000 զոհված զինվոր հայերից և հպատակ ազգերից,
-67 թ.՝ մոտավորապես 4.000 զոհված զինվոր հայերից և հպատակ ազգերից:

Այսպիսով, ընդամենը պատերազմի ընթացքում հայերը, Հայաստանի այլ հպատակներն ու դաշնակիցները կորցրել են մոտավորապես 51.000 սպանված զինվոր (որից 3.000 դաշնա-

կից պոնտացի) և 5.000 գերի (որոնք, հավանաբար, Տիգրանին են հանձնվել 66 թ. խաղաղության պայմանագրից հետո):

Հայկական բանակը 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմը սկսել էր անմիջապես 73-69 թթ. հարավսիրիական պատերազմից հետո, որը հրահրված էր հռոմեացիների կողմից և բավականին լուրջ էր հայերի համար: Այսպիսով, հայկական զորքերը, ինչպես և հռոմեացիները, նույնպես բավականին հոգնած էին:

Պատերազմը ավերել էր Հայաստանի գրեթե ողջ հարավը, հսկայական նյութական կորուստներ պատճառելով Հայկական տերությանը, միայն Տիգրանակերտի և Մծբինի անկումները Տիգրանին պատճառեցին ավելի քան 13.000 տաղանդի նյութական կորուստ, որի մի աննշան մասը միայն հետագայում հաջողվեց հռոմեացիներից ետ խլել:

Ավելի ցավալի էին մարդկային կորուստները՝ մի քանի տասնյակ հազար մարդ հարկադրված էին իրենց նախկին քաղաքները վերադառնալ կործանված Տիգրանակերտից (Լուկուլլոսը հասավ իր նպատակին և գրեթե կիսով չափ ամայացրեց ավելի քան 100-150.000-ոց քաղաքը):

Տիգրանը հաղթեց և դուրս շպրտեց Լուկուլլոսին մինչև Գալատիա, վերականգնեց Պոնտոսի կործանված թագավորությունը, սակայն եթե նա նույնիսկ իսպառ բնաջնջեր Լուկուլլոսի բանակը, որը կազմում էր այդ պահին Արևելքում գտնվող հռոմեական զինված ուժերի մոտ մեկ քառորդը, ապա ռազմաքաղաքական իրավիճակն առանձնապես չէր փոխվի ի նպաստ Տիգրանի: Տիգրան Մեծի Հայկական կայսրության փլուզման սկզբից՝ 69 թ.-ից սկսած, արքայից արքան զրկված էր պայքարում իր կայսրության հարավային երկրների միջոցներն օգտագործելու հնարավորությունից:

Հռոմի և Պարթևստանի դեմ ծանրագույն պայքարում Հայաստանը սահմանափակված էր իր ուժերով, եթե չհաշվենք ենթակա Ատրպատականի գործուն աջակցությունը:

Տիգրանակերտի տակ կրած ծանր պարտությունը և Տիգրանակերտի կորուստը ծանրագույն տպավորություն թողեցին Հայկական կայսրության այլազգի բնակչության վրա: Հռոմեական կողմնորոշումը նրանց թվաց չարյաց այն փոքրագույնը, որը ինչ-որ չափով մարդկանց կփրկեր պատերազմի արհավիրքներից:

Իրենց երկիրը Տիգրան Մեծին հանձնած սիրիական վերնախավն այլևս չէր հավատում Տիգրան-Միհրդատյան դաշնակցության հաղթանակին և որպես նոր տեր ընտրել էր Հռոմը: 69 թ. վերջին միացյալ հայ-սիրիական երկու թագավորությունների միությունը խախտվեց սիրիացիների կողմից՝ երանք այլևս Տիգրանին չճանաչեցին Սիրիայի թագավոր, իսկ 67 թ. գարնանը, երբ Տիգրանի հաղթական բանակները կրկին մոտեցան Եփրատի ափին, Սիրիան արդեն անհրաժեշտ էր նվաճել ուժով, մի բան, որը Տիգրանն այդ պահին չէր կարող անել՝ Լուկուլլոսի վերջնական ընկճումը և Պոնտոսի վերականգնումն ավելի կարևոր ռազմավարական խնդիրներ էին: Հետո հայտնվեց Պոմպեոսն իր հսկայական բանակով և հայերի դեմ դաշնակցեց հզորացած Հրահատ Գ-ի հետ: Վերջիններիս ռազմական ելույթն էլ վերջ դրեց հայկական մեծապետական նկրտումներին:

8.10.2.Հակամարտող կողմերի ձեռքբերումները

69-66 թ. հայ-հռոմեական պատերազմի հետևանքով հակամարտող կողմերը կորուստներից բացի, ունեցան նաև ձեռքբերումներ:

Հռոմեացիները

-քայքայեցին Հայկական կայսրությունը և հիմք դրեցին ապագա նվաճումների համար,

-զրկեցին Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորին (որը, ելնելով իր շահերից, առաջինը դավաճանեց Տիգրանին, որդուն ապստամբեցնելով հոր դեմ) միակ իրական դաշնակցից՝ Հայաստանից,

-հայ-հռոմեական դաշնակցային պայմանագրի միջոցով Արևելքում ձեռք բերեցին ուժեղագույն մի դաշնակցի, որն իր գոյությամբ արդեն զսպում էր Պարթևստանի ագրեսիվությունը,

-կողոպուտի և ռազմատուգանքի միջոցով ձեռք բերեցին հսկայական հարստություն,

-ծանոթացան արևելյան հեծելազորային մարտավարությանը:

Հայերը

-խիստ կատարելագործեցին հետևակային, մասամբ էլ հեծելազորային մարտավարությունները, ինչը հայկական բանակը վե-

ռածեց իր ժամանակի ամենամարտունակ բանակներից մեկը,
-67 թ. հերթական անգամ ասպատակելով Կապադովկիան, մեծ հարստություն և այլ նյութական միջոցներ տեղափոխեցին Հայաստան,
-հայ-հռոմեական դաշնակցային պայմանագրի միջոցով Արևելքում ձեռք բերեցին որոշակի կարգավիճակ, որն արդեն իր գոյությամբ զսպում էր Հռոմի ագրեսիվությունը Հայաստանի հանդեպ,
-մերձենալով Հռոմի հետ, հետագայում հաջողացրին կապեր հաստատել պարթևական արքունիքի հետ՝ ընդդեմ Հռոմի,
-ձեռք բերեցին Հռոմի գերիշխանության տակ անցնող Փոքր Հայքի մի պատկառելի մասը:

8.10.3.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի գնահատականը ժամանակակիցների՝ մ.թ.ա. I դարի գործիչների կողմից

Մարկոս Տուլլիոս Կիկերոնը (մ.թ.ա. 106 - 43 թթ.) Հին Հռոմի ամենափայլուն մտավորականներից և տիգրանյան ժամանակաշրջանի ամենախոշոր քաղաքական գործիչներից մեկն էր: Այս կամ այլ դեպքերի վերաբերյալ նրա գնահատականները, բնականաբար անկողմնակալ չեն, սակայն խիստ կարևոր են այն պատճառով, որ տրված են ժամանակաշրջանի քաղաքական զարգացումների մանրամասներին տեղյակ և խորաթափանց ընդհանրացումների ընդունակ մարդու կողմից: Ես արդեն հիշեցրել եմ 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի նրա գլխավոր գնահատականը, որը Կիկերոնը տվել էր պատերազմը վերջանալուց տաս տարի հետո, 56 թ. մարտի 13-ին՝ «Մենք ինքներս վերջերս վարել ենք հայոց թագավոր Տիգրանի դեմ երկարատև և ծանր պատերազմ» (cum Armeniorum rege Tigrane grave bellum nuper ipsi diuturnumque gessimus. Cic., Pro Sestio oratio, 27,58.) [34]:

Գայոս Սալլյուստիոս Կրիսպոսը (մ.թ.ա. 86 – 35 թ.), որը 51-50 թթ. ուղարկվել էր Սիրիա նահանգ որպես պրոկոնսուլ Մարկոս Կալպուրնիոս Բիբուլոսի լեգատ, և քաջատեղյակ էր հռոմեական Արևելքում տեղի ունեցած իրադարձություններին, հետագայում դարձավ հայտնի պատմաբան, որի աշխատանքները

բարձր են գնահատել թե՛ ժամանակակիցները, թե՛ արդի պատմաբանները: Դժբախտաբար, նրա գլխավոր աշխատությունը՝ «Հռոմեական պատմությունը», որը երբորդն էր «Կատիլինայի դավադրության մասին» ու «Յուգուրտյան պատերազմի մասին» աշխատություններից հետո (մանր ստեղծագործությունները չհաշված) և, լինելով մեզ չհասած Լուկիոս Կորնելիոս Սիսենայի (119 – 67 թթ.) պատմական երկի շարունակությունը, բաղկացած էր հինգ գրքից և նկարագրում էր 78 – 67 թթ. Իրադարձությունները, հեղինակի մահվան պատճառով անավարտ է մնացել և մեզ հասել է առանձին պատառիկներով: Նրա պատմության պահպանված պատառիկներից է «Միհրդատի նամակը», որտեղ Սալլյուստիոսը իր գնահատականն է տալիս 69 թ. Տիգրանի դեմ Լուկուլլոսի տարած հաղթանակին՝ «տեղի անբավարարության պատճառով, նրանք թույլ չտվեցին Տիգրանի մեծաթիվ զինված ուժերին մարտի մտնել և նրա հապճեպությունը ներկայացնում են որպես հաղթանակ» [34, 289]: Սալլյուստիոսի երկի բացակայությունը տիգրանագիտության համար մեծ կորուստ է: Հեղինակի տվյալները զգալիորեն կճշտեին ժամանակաշրջանի մեր ըմբռնումը:

Մետրոդորոս Սքեպսացին (անհայտ – մոտ մ.թ.ա. 70 թթ.) հույն փիլիսոփա և պատմաբան էր, որը սկզբնական շրջանում գտնվում էր Միհրդատ Եվպատորի արքունիքում, հետո տեղափոխվեց Տիգրան Մեծի արքունիք: Մշտապես շփվելով արքայից արքայի հետ, բազմաթիվ խորհուրդներ է տվել և, ամենակարևորը, գրել է Տիգրան Մեծի պատմությունը, որը դժբախտաբար չի պահպանվել [21, 34]:

Պոսիդոնիոս Ապամեացին (մ.թ.ա. 135 - 50 թթ.) Արիստոտելից հետո հաջորդ մեծ հույն մտածողն էր, որի հանրագիտական գիտելիքները և մտքի խորությունը ապշեցնում էին ժամանակակիցներին: Նա ծնվել էր Սիրիայի Ապամեա քաղաքում, որին Տիգրանը լայն ինքնավարություն և առևտրական արտոնություններ էր տվել, ինչի շնորհիվ 83 – 69 թթ. այս քաղաքը տնտեսական և մշակութային մեծ վերելք ապրեց: Այս տարիներին Պոսիդոնիոսը, լինելով հռոմեասեր և հակամիհրդատյան հայացքների կրող՝ ապրում, դասավանդում և ստեղծագործում էր Հռոդոսում, սակայն ոչինչ նրան չի արգելել այդ տարիներին այցելել իր հարազատ քաղաքը: Պոսիդոնիոսի երկերի մեծագույն մասը չի պահպանվել, գիտենք միայն, որ նա գրել է իր ժամա-

նակաշրջանի պատմությունը մինչև 60-ական թթ. վերջը և որ 62 – 60 թթ. Պոմպեոսը փիլիսոփայության դասեր է վերցրել անվանի փիլիսոփայից:

Պոսիդոնիոսի փիլիսոփայական հայացքները «կոսմոպոլիսի», «ստոիկ իմաստունի», «համընդհանուր սիմպատիայի» մասին, պնդումը, որ պատմությունը ոչ թե տարբեր երկրների մասին տեղեկությունների հավաքածո է, այլ աշխարհի բացատրությունն է՝ աննախադեպ էին հունական պատմա-քաղաքական մտքի պատմությունում: Պոսիդոնիոսը իր «պայմանագրի տեսության» մեջ, որը հիմնված էր համընդհանուր հավասարության գաղափարի վրա, համարում էր, որ բարբարոսները հույների ու հռոմեացիների հետ միասին պատմության սուբյեկտ են, որ աշխարհն անհամեմատ ավելի բազմազան և բարդ է, քան պատկերացնում է հունական ավանդական միտքը: Եթե պահպանվեին մեծ փիլիսոփայի պատմական երկերը, մենք անհամեմատ ավելի լավ կպատկերացնեինք մ.թ.ա. I դ. պատմությունը, սակայն Պոսիդոնիոսի մտքերը հայտնի էին հունալեզու և լատինալեզու մտավորականությանը [316-318]:

Պոմպեոսի շփումները Հայաստանում մեծապես նպաստեցին նրա աշխարհայացքի ընդլայնմանը: Հույն կամ հռոմեացի և «բարբարոս» հակադրումները սկսեցին հարցականի տակ դրվել: Հետագայում, 61-60 թթ. Հռոդոս կղզում Պոսիդոնիոսի հետ շփվելիս, Պոմպեոսն այս հարցում արդեն հստակ աշխարհայացք ուներ:

Անկասկած, այս բուռն ժամանակաշրջանից կարող էին պահպանվել նաև ականատեսների այլ նոթեր՝ նամակներ, նկարագրություններ և այլն, սակայն այդ ամենը մեր համար անվերադարձ կորել է [299]:

8.10.4.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի արդի հայ պատմագրության գնահատականը

Հայ պատմագրության հայր Մովսես Խորենացուց մինչև Լեո՝ Տիգրան Մեծը գտնվել է ուշադրության կենտրոնում. Մ. Խորենացու [14] մոտ նրա գործունեությունը և կերպարը խառնված է ուրիշ գործիչների հետ, Լեոն [295] տանջալից փորձում

է արքայից արքայի կերպարի իր ընկալումը պաշտպանել հունա-հռոմեական և արդի եվրոպական պատմագրության զրպարտանքներից:

Հակոբ Մանանդյանը համարում էր, որ հռոմեացիների համար հաղթական հայ-հռոմեական պատերազմից հետո Հայաստանի համար ստեղծվել էր աղետալի վիճակ. «Հայաստանի այս աղետալի դրությունը, որ ստեղծվել էր Պոմպեոսի հաղթական արշավանքներից ու 66 թվից հետո, շարունակվեց ոչ՝ միայն հռոմեա-պարթևական, այլև բյուզանդական-սասանյան, բյուզանդական-արաբական և հետնագույն շրջաններում» [29]:

Մեծ պատմաբանի հռետես գնահատականը պայմանավորված է Հայաստանի պատմության իր ժամանակաշրջանին բնորոշ սև-սպիտակ գույների նկարագրություններով և եվրոպական կանխակալ գնահատականների ազդեցությամբ: Երկրորդը, Մանանդյանը վատ է պատկերացրել ռազմական գործողությունների ընթացքը, հավատացել է անտիկ պատմիչների բոլոր ռազմական նկարագրություններին:

Նիկողայոս Ադոնցը անդրադարձել է հայ-հռոմեական պատերազմի ընթացքին ու շատ դիպուկ գնահատականներ տվել հունա-հռոմեական պատմագրության և նրանց ժամանակակից մեկնաբանների ծայրահեղ կողմնակալությանը [1, 321]: Սակայն Ն. Ադոնցը նույնպես իրադարձությունների զարգացման ընթացքը քննել է առանց հայկական բանակի կիրառած մարտավարական նրբությունների մեջ խորանալու:

Սարգիս Սարգսյանը համարում էր, որ հայ-հռոմեական պատերազմը վերջացել է 67 թ. Տիգրանի հակահարձակումով Կապադովկիա և Պոնտոսում Միհրդատին վերահաստատելով: Պոմպեոսի արշավանքն է հարկադրել Տիգրանին, որը չէր կարող միաժամանակ պայքարել նաև Հրահատ Գ-ի դեմ, ընդունել Պոմպեոսի թելադրած պայմանները [45]:

Ռուբեն Մանասերյանի մենագրությունը [34] ներկա աշխատության պատմաբանական հիմքն է, սակայն հեղինակի ոչ բոլոր պատկերացումների հետ եմ համաձայն: Ռ. Մանասերյանը գրում է. «Տիգրանի ռազմական հզորությունը կոտրված չէր, նա ի վիճակի էր վարել պատերազմը, բայց վճռականապես մերժում էր նման հեռանկարը, իրեն հաշիվ տալով դրա վերջնա-

կան դատապարտվածության համար, չխաբվելով անգամ այնպիսի կարծես հուսադրող հանգամանքից, որ կոիվների վերջին երկու տարում նրա զորքերի մարտունակությունը բարձրացել էր: 66 թ. աշնանը կնքված հաշտությունը արձանագրեց Հռոմի հետ իր վեճը շարունակելու հայոց թագավորության անկարողությունը՝ Արևելյան Միջերկրածովքում տիրապետելու համար (բայց դա, ի դեպ չէր նշանակում, որ նույն թագավորությունը անկարող էր դեռ ինչ-որ ժամանակ համառ ու հուսահատ պայքար մղել իր գոյության համար): Տիգրանի համար հաշտությունը նշանակում էր Հռոմի էքսպանսիայի դեմ սեփական քաղաքական պարտության ճանաչում: Միաժամանակ, ակնհայտ է Արտաշատի մոտ կնքված հաշտության փոխզիջումային բնույթը: Համաձայնությունը անհրաժեշտ է գնահատել որպես խոշորագույն հաջողություն, իսկական հաղթանակ Հռոմի ագրեսիայի նկատմամբ: Համաձայնելով խաղաղության հաստատմանը, Հռոմը հրաժարվում էր Հայաստանը զավթելու և Հայկական պետությունը ջախջախելու ծրագրից. մի պատերազմից, որում նրա վերջնական հաղթանակը կասկածից վեր էր» [34]:

69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմն ավարտվեց Հռոմեական և Պարթևական տերությունների մասնակի ռազմաքաղաքական հաղթանակով, որի շնորհիվ նախադրյալներ ստեղծվեցին Արևելյան Միջերկրածովքում Հռոմի, իսկ Միջագետքի հյուսիսում՝ Պարթևստանի տիրապետությունը հաստատելու համար:

Հռոմեական հաղթանակն ուղեկցվել էր իր և իր դաշնակցի՝ Պարթևական տերության 69 – 66 թթ. հայ-հռոմեական պատերազմի ժամանակ կրած ռազմական պարտություններով, երբ սկզբնական՝ 69 թ. ռազմարշավի մեծ հաջողություններից հետո, վճռորոշ՝ 68 և 67 թթ. ռազմարշավների ժամանակ ծանր պարտություն էր կրել հռոմեական, իսկ 66-64 թթ. հայ-պարթևական պատերազմի, 66 թ. ռազմարշավին՝ Հռոմի դաշնակից պարթևական բանակը:

Հայաստանի հիմնական դաշնակցի՝ Պոնտոսի թուլացումը և ապա՝ վերջնական պարտությունը Հայկական տերությանը հարկադրեց մեն մենակ, առանց իր տերության ենթակա երկրների և դաշնակիցների, պայքարել իրենից անհամեմատ ավելի մեծ ռազմական և տնտեսական հնարավորություններ ունեցող Հռոմեական և Պարթևական տերությունների դեմ:

Տիգրան Մեծի ռազմաքաղաքական և դիվանագիտական հանճարի շնորհիվ հնարավոր եղավ 66 թ. աշնանը Պոմպեոսին բացատրել Հայաստանի հետ պատերազմելու անհնարինությունը, մի պատերազմ, որի սկսվելուց հետո Տիգրան Մեծը հրաժարվելու էր գահից հօգուտ Պարթևստանում հայոց թագավոր հռչակված իր ըմբոստ որդու՝ Տիգրան Կրտսերի, որից հետո հայկական և պարթևական բանակները ոչնչացնելու էին Պոմպեոսի հսկայական բանակը: Հայաստանը որոշ ենթակայության տակ կընկներ Պարթևստանից և հարկադրված կլիներ բավարարվել «կրտսեր եղբոր» կարգավիճակով: Ոչ մի սարսափելի բան հայերի համար չէր կատարվի, սակայն Հռոմն այլևս կարող էր մոռանալ Արևելքում հանգիստ կյանքի մասին:

Պոմպեոսն ըմբռնեց իր համար այս ծանր իրավիճակը և կնքեց զինադադարը: Հետո երիտասարդ Տիգրանն իր իշխանությամբ հայտնվեց Պոմպեոսի մոտ և զգալիորեն դժվարացրեց Տիգրան Մեծի բանակցությունները, սակայն հռոմեացիները Տիգրանին արդեն համարում էին պարթևների դեմ իրենց դաշնակից, և «պարթևամոլ» Տիգրան Կրտսերը տանուլ տվեց:

Ավելի ուշ, 65 թ.-ին, կիետևեն Տիգրանի մի քանի ծանր հարվածները Հրահատ Գ-ին, որոնց ընթացքում արքայից արքան լայնորեն կօգտագործի իր դաշնակից հռոմեացիների ուժերը, որից հետո պարթևները խորապես կըմբռնեն հայերի հետ մշտական հակահռոմեական դաշնակցության անհրաժեշտությունը:

Վերջապես ընդունենք, որ Պոմպեոսի կողմից հայերին նվիրած անկախության մասին անտիկ պատմիչների տեղեկությունները առասպել են և արտացոլում են այս պատերազմի հռոմեացիներին ցանկալի նկարագրությունը: Չի եղել այդպիսի բան և համաշխարհային պատմության մեջ չի էլ լինում. եթե հռոմեացիները կարողանային նվաճել Հայաստանը՝ կնվաճեին: Փոթորկալի մ.թ.ա. I դարում մեր հարևան գիշատիչ պետությունների ու նրանց զորավարների ատամները ջարդվեցին հայկական պողպատից և դրա մասին ճշմարտությունն անհրաժեշտ է հասցնել թե՛ մեզ, թե՛ աշխարհին:

Մ.թ.ա. 20 – մ.թ. 387 թթ. շրջանը ներկայացնող իմ աշխատություններից մեկում ցույց կտրվի, թե ինչպես Հռոմի կողմից փորձեր կատարվեցին փոխելու Տիգրան-Ղոմպեոսյան պայմանագրի հիմնադրույթները 113 թ.-ին և ինչով այն ավարտվեց 117 թ.-ին:

Մեկ անգամ ևս պետք է հիշել, որ գերիզոր Հռոմին երբեմն խաղաղությունը ավելի էր անհրաժեշտ, քան իր ախոյաններին: 66 թ.-ին ստեղծվել էր այդ իրավիճակը՝ հայ-հռոմեական պայմանագիրը, որը հարկադրված էին ստորագրել երկու կողմերը, երանցից յուրաքանչյուրի ձեռքերումն էր:

Պարթևների հետ միասին հարձակվելով Հայաստանի վրա, հռոմեացիները կորզել էին ամենակարևորը՝ Հայաստանի հրաժարումը մեծապետական դիրքից: Այժմ Ղոմպեոսը պետք է սլանար Տիգրանից պայմանագրով ստացած [42, 51] երկրները հպատակեցնելու և թալանելու:

Ռուբեն Մանասերյանի հետ կարելի է համաձայնվել այն դեպքում, եթե նա Արտաշատի պայմանագիրը խոշորագույն հաջողություն համարեր և՛ Ղոմպեոսի, և՛ Տիգրանի համար. ևս մեկ անգամ հարկ եմ համարում նշել, որ 66 թ.-ին Ղոմպեոսը կարող էր պատերազմել, սակայն Հայաստանը նվաճել նա չէր կարող:

66 թ.-ին տեղի ունեցածը Հռոմը լավ չիմաստավորեց: Խանգարեցին ոչ միայն Ղոմպեոսին բնորոշ սովորական հռոմեական սնապարծությունը և պարծենկոտությունը, այլև վրա հասած բուռն ներքաղաքական իրադարձությունները: Ավելի ուշ, Խառանում 53 թ. կտրված Կրասոսի գլուխը, որը պետք եկավ միայն Արտաշատի հույն դերասանների խաղի համար, 20.000 զոհված ու 10.000 գերի ընկած հռոմեացի զինվորների տառապանքները, և Սուրենի կատաֆրակտոսների սպառազինության փայլը (ինչը ընդմիշտ մնաց հռոմեական հասարակության հիշողությունում) հարկադրեցին հռոմեացիներին իմաստավորել Եփրատից արևելք գոյություն ունեցող, իրենցից անկախ հզոր ուժի և կամքի առկայությունը:

Հայկ Հակոբյանը հայ-հռոմեական պատերազմին ընդհանրացված ռազմագիտական գնահատական չի տալիս, սակայն ըստ իր հայեցակետի, նա հայերին այս պատերազմում պարտված չի համարում: Նա, սակայն չի բացատրում, թե ինչու չպարտված կողմը այդքան երկրներ է կորցրել և զրկվել կայսրության կարգավիճակից [21]: Հեղինակը ռազմական մտածողություն չունի և պատերազմի ընթացքի մասին դատում է պատմաբանի և հնագետի տեսանկյունից: Սրան գումարվում է բացավառ հայրենասիրությունը, որը, օրինակ, թույլ է տալիս հեղինակին պնդել, որ ըստ էության Տիգրանակերտի ճակատամարտ չի եղել [19, 21, 301]: Պատերազմի դրվագների վերաբերյալ պատկերացումներն ինձ համար գրեթե մեծամասնությամբ անընդունելի են, սակայն Տիգրան Մեծի կերպարի ընդհանուր բնութագիրը, հատկապես նրա մշակութաբանական կողմը՝ հիմնականում ընդունելի:

Սուրեն Մարտիկյանը 2008 թ. գրում է. «Համաշխարհային ռազմարվեստում Ք.ա. 70-68 թթ. հայ-հռոմեական պատերազմի նշանակությունը այն է, որ գործնականում ապացուցվեց, որոշակի պայմաններում հռոմեական բանակի բոլոր մարտավարական առավելությունները կարող են չեզոքացվել ռազմավարական հմտությամբ:

Այսպիսով, աշխարհակալ Հռոմի դեմ Ք.ա. 70-68 թթ. հայ-հռոմեական պատերազմում հաջողությամբ կիրառված տիգրանյան ռազմավարությունն այն աստիճան համապիտանի էր, որ ընդամենը երկու տասնամյակում առնվազն երկու անգամ ընդօրինակվեց, իսկ հետագայում Հռոմի դեմ պատերազմող գրեթե բոլոր ժողովուրդների պայքարի պարտադիր հայեցակարգի վերածվեց:» [38]:

Ես չգիտեմ ինչ պատճառով և հիմնավորվածությամբ 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմը, որը մեր այլ պատմաբանները 69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմ են անվանում, Մարտիկյանի մոտ դարձավ 70-68 թթ. հայ-հռոմեական պատերազմ:

Ես կուզենայի, որ ինձ բացատրեին, թե ո՞ր ռազմավարական հմտությունն է չեզոքացրել հռոմեական բանակի մարտավարական առավելությունը: Ես գիտեմ հռոմեական գերազանց հետևակային մարտավարության մասին, սակայն հռոմեական գերազանց հեծելազորային մարտավարության մասին ցանկացած պնդումը կարող է միայն ժպիտ առաջացնել: Մինչև Միհրդատ Պոնտացին և, հատկապես, Տիգրան Մեծը հռոմեացիները երևի մեկ անգամ են միայն գործ ունեցել գերազանց հեծելազորի

դեմ, և գրեթե միշտ պարտվել են՝ խոսքս երկրորդ պունիկյան պատերազմում կարթագենացի Հաննիբալ Բարկայի նումիդիական հեծելազորի մասին է: Սակայն նույնիսկ այս գերազանց հեծյալներն իրենց մարտական պատրաստվածությամբ չէին կարող համեմատվել հայ-պարթևական կանոնավոր ծանր և թեթև հեծելազորի հետ: 4.000 փոքրհայքյան հեծյալներից վախեցած 5 հռոմեական լեգեոնները հրաժարվում են իրենց ճամբարից մարտի դաշտ իջնել [173], ավելի բարձր գնահատական կարող ենք արդյոք մենք գտնել, այն էլ հակառակորդից:

Տիգրանյան մարտավարական հնարքներին գերազանց ծանոթ էր և՛ Միհրդատ Պոնտացին, և՛ պարթև զորավարները, որոնցից լավագույնը՝ Սուրենը, 66 թ.-ին Արտաշատի գլխավոր ճակատամարտում դաս ստանալով Տիգ-րան Մեծից և տեսնելով հայ վահանակիրների կռռորտները հռոմեական ձևով մարտ վարելիս, իր այդ փորձը 53 թ.-ին փայլուն կօգտագործի և Խառանի մոտակայքում կջախջախի ահռելի հռոմեական բանակը:

Իսկ գալլերի հեծելազորային մարտավարությունը ոչ մի առնչություն չունի խիստ կարգապահություն, երկարամյա մարզումներ, լավ սպառազինություն և պետական հոգածություն պահանջող արհեստավարժ հայկական և պարթևական այրուձիների հետ:

Տիգրան Մեծի ժամանակաշրջանին նվիրված քարտեզների քանակը ահի միտում ունի, ընդ որում զուգահեռ աճում է նաև Տիգրանյան Հայաստանին ենթարկված տարածքների չափը, գագաթնակետին հասնելով Բ. Հարությունյանի և Վ. Մխիթարյանի աշխատասիրած քարտեզում, որտեղ Պարթևական տերությունը հանկարծ հայտնվում է Հայկական տերությունից կախյալ վիճակում [293, 294, 296, 297]: Ես այսպիսի պատկերացումներին վճռականապես դեմ եմ, որովհետև նրանք աղավաղում են պատմական ճշմարտությունը:

Հին հռոմեական ռազմական երկու հեղինակներից փոքրիկ պատառիկներ թարգմանած Վահան Մկրտչյանը «անտեսում» է Ֆրոնտինոսի տեղեկությունները հայերի մասին, որովհետև դրանք չեն շոյում մեր լսողությունը [298]: Մենք, հայերս, սովոր չենք հանգիստ լսել մեր հակառակորդների կարծիքը և ցույց տալ ներկայացված իրադարձության մեր հիմնավոր գնահատականը ...

Հին աշխարհի ռազմարվեստը հիմնված է նույն հիմքերի վրա, ինչը և արդի ռազմական միտքը: Վերջին հարյուրամյակում մենք բազմիցս համոզվել ենք նախնիների փորձի օգտագործման արդյունավետության մեջ, սակայն դա հնարավոր է միայն անկողմնակալ քննական վերլուծությունից և գաղափարների էության ըմբռնումից հետո [309, 312, 320]:

8.10.5.69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի արտասահմանյան պատմաբանների գնահատականը

Թեոդոր Մոմմզենը, որ ժամանակ առ ժամանակ կասկած է հայտնում հռոմեական պարծենկոտության գլուխգործոցների ճշմարտացիության վերաբերյալ, անտիկ պատմիչներին համաձայն է և հայ-հռոմեական պատերազմի մասին գրեթե անփոփոխ կրկնում է հռոմեամետ բոլոր գնահատականները: Չնայած այդ թերությանը, մեծ գերմանացու աշխատությունը, որը գրված է ավելի քան 150 տարի առաջ, կարդացվում է մեծ հետաքրքրությամբ և արդի պատմաբանը պարտավոր է իմանալ Մոմմզենի մոտեցումները և եզրահանգումները [170-172]:

Մոմմզենը ճիշտ էր նկատել այն զայրույթը, որ առաջացրել էր Լուկուլլոսի ներխուժումը հայ ժողովրդի բոլոր խավերի մոտ, սակայն լինելով իր ժամանակի զավակը, նա այս ցասումը անտեղի նմանակել էր XIX դարում զավթիչների դեմ համամահմեդական ընդվզման պատկերին:

Կուրտ Էքհարտի աշխատությունը հայ-հռոմեական պատերազմին նվիրված առաջին մասնագիտացված հետազոտությունն է [11]: Չափազանց մանրամասն հետազոտություն, որում արտահայտած մտքերը հետագայում բազմիցս կրկնվել են հայ և արտասահմանյան հետազոտողների կողմից: Ոչ հետևողական քննական մեթոդի վառ օրինակ է: Հեղինակը մոտենում է ինչ-որ եզրահանգման, սակայն հետո վախենում է իր «հակահռոմեական» մտքի զարգացումից և կրկնում է անտիկ պատմիչներին (վառ օրինակներից է Արածանիի ճակատամարտի վերլուծությունը, երբ Էքհարտը պարզապես «վախենում» է խոստովանել հայերի հաղթանակը):

Ջոն Վերրին իր աշխատությունում [281] Միհրդատի և Տիգրանի դեմ Լուկուլլոսի և Պոմպեոսի պատերազմների արդյունքների գնահատականներում մեծ զգուշություն է ցուցաբերում: Նյութին նա, հավանաբար, լավ ծանոթ չէ, սակայն իր մասնագիտական ընդհանուր իմացությունների շնորհիվ լավ տարբերում է հնարավորն անհնարինից:

Վերջին տարիներին արտասահմանյան պատմագրությունը Հին աշխարհի պատմության ոչ մի դրվագում համառորեն «չի նկատում» հայերին: Դրա վառ ապացույցն է Դունկան Կէմպբելլի «Պաշարման արվեստը» մենագրությունը [303], որտեղ հեղինակը 142 էջում գրում է՝ « Տիգրանակերտ քաղաքը, որտեղ Լուկուլլոսին վերջապես հաջողվեց շրջապատել Միհրդատին մ.թ.ա. 69 թ., այնքան հարուստ էր, որ բացի կողոպուտից, ամեն մի զինվոր ընդհանուր ավարից ստացավ նաև 800 դրախմ (Պլուտարքոս, 29.3):»

Ես չգիտեմ, թե այս անհեթեթությունը՝ «Տիգրանակերտ քաղաքը, որտեղ Լուկուլլոսին վերջապես հաջողվեց շրջապատել Միհրդատին ...» հեղինակի՞, թե՞ թարգմանչի լկտի ստի արդյունքն է, ավելի շուտ՝ հեղինակի: Անբարոյականության կամ անտարբերության ի՞նչ աստիճանի կարելի է հասնել՝ Պլուտարքոսին վերագրելով բառեր և մտքեր, որոնք նա երբեք չի ունեցել [42, 191-194]:

Եվգենի Մոլևի աշխատությունում [169] նույնպես ամեն ինչ ծայրահեղ կողմնակալ և հաճախ նաև անգրագետ է: Աշխատությունը Միհրդատ Պոնտացուն ուղղված ներբող է, և ատելությամբ է լցված Տիգրան Մեծի նկատմամբ: Այս աշխատությունը գիտականի գրչին պատկանող գործ չէ, հեղինակը կատարում է սկսնակ ուսանողին անվայել սխալներ, որոնց մի քանիսի մասին ես գրել եմ իմ աշխատության առաջին պրակում:

Մոլևը և ստվար քանակություն կազմող նրա գործընկերները 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի բոլոր դրվագները վերագրում են միայն Միհրդատին, ընդ որում այն մակարդակի կեղծիքներով, որ կարող են գրել, որ 69 թ. Միհրդատի պոնտացիների (ընդգծումը – Ա.Գ.) 100.000 բանակը Տիգրանակերտի մոտ պարտվեց Լուկուլլոսի բանակին:

Ռուս պատմագրության այս՝ ընդհանրապես հայերի պատ-

մական գոյությունը շրջանցող, միտումը պատահական չէ, հավանաբար լավ վարձատրվում է շահագրգռված ուժերի կողմից և հայկական կառավարության ու գիտնականների լռությունն այս հարցում պարզապես հանցավոր է:

Կավե Ֆարրոխը գրում է [315], որ 1980 թ.-ից սկսած Արևմտյան Եվրոպայում և Միացյալ Նահանգներում անշեղորեն դուրս է նետվում ամենը, ինչ վերաբերում է Իրանին: Արդյո՞ք մենք՝ հայերս, ինչ-որ մեկի չար կամքով նույնպես այս վիճակում չենք հայտնվել:

8.10.6. Հին աշխարհի ռազմական արվեստի պատմության մասնագետների գնահատականը

Նախորդ գլուխներում ես մանրամասն շարադրեցի 69-66 թթ. հայ-հռոմեական և 66-64 թթ. հայ-պարթևական պատերազմի 66 թ. ռազմարշավի հայերի համոզիչ հաղթանակը, սակայն հենց այս հաղթական պատերազմների ժամանակ Հայաստանը կորցրեց իր արտաքին ձեռքբերումների ճնշող մեծամասնությունը և կայսրությունից կրկին վերածվեց մեծ և ազդեցիկ թագավորության: Այս պատմական ֆենոմենը բազմակողմանի հետազոտության, ընկալման և համապատասխան բացատրության կարիք ունի: Մենք ունենք պատմական օրինակներ, երբ հաղթական պատերազմի արդյունքները հաղթող կողմն անփութորեն վատնում է, և երբեմն էլ՝ ավելի կորցնում, քան պարտվողը: Սակայն մեր արքաների բանիմաց և զուսպ քաղաքականությունը վկայում է, որ այս դեպքում պատճառը այլ բանում է:

Հայաստանի և Պոնտոսի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ ի սկզբանե անցկացվում էր խիստ անհավասար ուժերով: Անհամեմատելի էին երկու հակամարտող կողմերի մարդկային և տնտեսական հնարավորությունները:

Պաշտպանվող կողմն, ըստ էության, Հայաստանը և Պոնտոսն էին, սակայն եթե Հռոմը 89 թ. Պոնտոսին դրդեց պատերազմ սկսել, ապա Հայաստանը 86 թ. ինքը սկսեց իր հաղթարշավը Պարթևստանի դեմ:

74-64 թթ. հակահարված տվեց Հռոմը, 66 թ.-ից հետո՝ նաև

նրան դաշնակցած Պարթևստանը: Հռոմին հաջողվեց կործանել Պոնտոսի երբեմնի հզոր ռազմական հնարավորությունները՝ 67 թ. տիգրանյան բանակի կողմից ազատագրված Պոնտոսն ամենևին նման չէր Հայաստանի երբեմնի հզոր դաշնակցին:

66 թ.-ին Հայաստանը մեն-մենակ մնաց Օյկումենեի ամենահզոր տերությունների առջև: Թվում էր, որ նրան նույնպես սպասում էր հոշոտված Պոնտոսի ճակատագիրը, սակայն փայլուն հաղթանակները Արածանիի, Աղձնիքի, Ձելայի և Արտաշատի ճակատամարտերում և 66-64 թթ. Տիգրանի հանճարեղ դիվանագիտությունը Հայաստանին թույլ տվեցին 94-64 թթ. անհավասար ծանրագույն պայքարից դուրս գալ ոչ թե կորուստներով, այլ որոշակի ձեռքբերումներով՝ Ծոփք, Կորդուք, Միգդոնիա, մի քանի մարզ Փոքր Հայքից: Հայաստանն իր ձեռք բերածի մեծ մասը զիջեց Հռոմին՝ Կոմագենե, Դաշտային Կիլիկիա, Սիրիա, Փյունիկիա, մի մասն էլ Պարթևստանին՝ Ատրպատական, Ադիաբենե, Հաղրիենե, Օսրոյենե, սակայն հասավ կարևորագույն դիվանագիտական հաջողության. հիմնվելով Հռոմի հետ բարեկամության պայմանագրի վրա, իրականում հարկադրեց իր հետ բարեկամանալ Պարթևստանին, որի շնորհիվ մոտ երեք դար Պարթևստանը և Հայաստանը զսպեցին ավելի ուժեղ Հռոմի էքսպանսիան:

Հայ-հռոմեական պատերազմի շնորհիվ հետագայում, Հռոմի կողմից որպես կրտսեր, իսկ երբեմն էլ՝ որպես ենթակա դաշ-նակից դիտվող Հայաստանը երբեք չմոռացավ, որ իր և Հռոմի միջև ստեղծված հարաբերությունների հիմքում ընկած է հռո-մեական զենքի դեմ 69-66 թթ. հայերի տարած հաղթանակը: Հաջորդ դարերում հռոմեական բանակները բազմիցս փայլուն հաղթանակներ կտանեն հայկական և հայ-պարթևական բանակների հանդեպ, սակայն հաճախ նաև չարաչար կպարտվեն և հիմնահատակ կոչնչանան հայոց և պարթևաց այրուձիու սմբակների տակ: Այսուհետ արևելյան պատերազմները դառնալու էին Հռոմի ամենածանր և անհեռանկարային ռազմական ձեռնարկումները: Այս հակամարտության սկիզբը հայոց առաջին հաջողված փորձն էր՝ 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմը:

Ռազմական արվեստի զարգացման տեսանկյունից 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի արժեքի մասին բազմիցս խոսվել է արշավանքների և ճակատամարտերի վերլուծություն-

ներում: Ինչպես 112-111, 86-84 և 66-64 թթ. հայ-պարթևական, այնպես էլ 93-91 և 69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմները Տիգրան Մեծի ռազմական մտքի կարևորագույն ստեղծագործություններն են՝ մեծ զորավարի ներդրումը համաշխարհային ռազմարվեստի գանձարանում:

8.11. 66 թ. Պոմպեոսի կովկասյան արշավանքը

66 թ. Պոմպեոսի կովկասյան արշավանքը բավական մանրամասն նկարագրել են Պլուտարքոսը, Դիոն Կասսիոսը և Ապպիանոսը, կարևոր մանրամասնություններ են պահպանվել Ֆրոնտինիոսի և Ստրաբոնի մոտ [42, 51, 59, 219, 238]: Այս արշավանքին անդրադարձել են ժամանակակից պատմաբանները [34, 165], սակայն հայ-հռոմեական դաշնակցային պայմանագրի և Պոմպեոս – Տիգրան հարաբերությունների տեսանկյունից այս ռազմարշավը մինչ այժմ մանրամասն վերլուծության չի արժանացել:

66 թ. ուշ աշնանը-ձմռանը Պոմպեոսը որոշեց շարունակել իր ռազմարշավը Միհրդատ Եվպատորի դեմ, սակայն վերջինս գտնվում էր Պանտիկապեյում և նույնիսկ եթե Պոմպեոսը նավատորմ ուղարկեր Միհրդատի դեմ, նա կարող էր թաքնվել Ղրիմի թերակղզու խորքերում: Այդ պատճառով Պոմպեոսը որոշեց պատերազմել Միհրդատի Կովկասյան դաշնակիցների՝ իբերների թագավոր Արտոկեսի և աղվանների թագավոր Օրոյսեսի դեմ: Վերջիններս ապստամբել էին հայոց արքայից արքա Տիգրան Մեծի դեմ դեռ 67 թ. աշնանը և հարել էին Տիգրան Կրտսերին և Միհրդատ Եվպատորին:

66 թ. հռոմեական արշավանքը կատարվում էր Արտաշատից դեպի Կուրի ավազան, դաշնակից հայկական զորքերի աջակցությամբ: Հակառակորդին պարտության մատնելուց բացի, հռոմեական բանակը պետք է ձմեռեր Հայաստանի հյուսիսում՝ Ուտիքում: Այստեղ, Կուրի ափին, կլիման շատ ավելի մեղմ էր, քան Հայաստանի կենտրոնական նահանգներում, և

ցրտին անտվոր հռոմեացիները շատ չէին դժվարանա: Հավանաբար պարենավորման հարցը նույնպես հայկական կողմի խնդիրն էր:

Այժմ պարզենք, թե ինչ ուժերով կատարեց իր Կովկասյան արշավանքը Գնեյոս Պոմպեոսը:

Մենք գիտենք, որ իր բանակի մի մասը Պոմպեոսը ետ ուղարկեց ձմեռելու Փոքր Հայք, հիմնական մասով շարժվեց դեպի Կուր, որի ափին հռոմեացիները սկսեցին երեք ձմեռային ճամբար պատրաստել [42, 51]:

Աղյուսակ 8.5. Գնեոս Պոմպեոսի կովկասյան արշավանքի համար նախապատրաստած բանակի կազմը 66 թ. աշնան վերջին

Լեգեոն	Լեգեոներներ և հեծյալներ	Դաշն. ծանր և թեթև հետևակ	Դաշնակիցն. հեծելազոր
1-ին լեգեոն	5.000 և 500	2.000 և 500	600
2-րդ լեգեոն	5.000 և 300	2.000 և 500	600
3-րդ լեգեոն	5.000 և 300	2.000 և 500	600
4-րդ լեգեոն	5.000 և 300	2.000 և 500	600
5-րդ լեգեոն	5.000 և 300	2.000 և 500	600
	25.000 և 1.700	12.000 և 2.500	3.000

Պոմպեոսը Փոքր Հայք ձմեռելու պետք է ուղարկեր հավանաբար ավելի վաղ հավաքագրված լեգեոնները՝ առաջին ու երկրորդ փիմբրիական լեգեոնները, Տրիարիոսի լեգեոնը, որը հետո պետք է, ըստ երևույթին, վերադառնար Բիթանիա, և Մուրենայի լեգեոնը: Լուկուլլոսի հրամանատարության տակ տարիներ շարունակ կռված այս լեգեոներներին մասնակի վարձատրելով (մնացած 1.500 դրաքմը նա կտա 62 թ.-ի հաղթահանդեսից առաջ արդեն Հռոմում) և վերադարձնելով Պոնտոս ու Փոքր Հայք, Պոմպեոսը կատարեց իր խոստումը:

Լուկուլլոսի նախկին լեգեոնների հետ նա կարող էր ուղարկել նաև իր լեգեոններից մեկը, որովհետև ըստ Պոմպեոսի և

Տիգրանի գնահատականների՝ պատերազմը հյուսիսում ծանր չպետք է լիներ, սակայն այստեղ միշտ լինելու էին պարենավորման խնդիրները:

Այսպիսով, վերը նշված 5 լեգեոնները՝

-18.500 լեգեոներներ և 2.000 դաշնակցային ծանր հետևակ,

-1.500 թեթևազեն,

-մոտ 800 հոգուց կազմված հեծելազոր, ինչ-որ քանակով նաև այլ զորամասերից ետ վերադառնող զինվորներ, օժանդակ զորամասեր, գումակային ստորաբաժանումներ, ընդամենը՝ մոտ 23-25.000 զինվոր շարժվեցին դեպի Փոքր Հայք՝ Նիկոպոլիս:

Մնացած 5 լեգեոնները շարժվեցին դեպի հյուսիս՝

-25.000 լեգեոներներ և 10.000 դաշնակցային ծանր հետևակ,

-2.500 թեթև հետևակ,

-ավելի, քան 4.500 հեծելազոր,

ընդամենը՝ մոտ 42.000 զինվոր:

Հասնելով Կուր, հռոմեական բանակը տեղավորվեց երեք ճամբարներում:

Պոմպեոսի զորքերին, անկասկած, ուղեկցում էին դաշնակից հայերը: Այս մասին անտիկ պատմիչները ոչ մի բան չեն հայտնում, սակայն դա զարմանալի չէ՝ Պոմպեոսը բացարձակ շահագրգռված չէր իր հաղթանակի փառքը կիսել նույնիսկ դաշնակցի հետ: Բացի այդ, արշավին մասնակցում էր հայկական զորաբանակ, որն իմ կարծիքով պետք է բաղկացած լիներ թեթև հեծելազորի և նետաձիգների գնդերից՝ 2-3.000 թեթև հեծելազոր և 2-3.000 նետաձիգ և պարսավոր, ընդամենը՝ 4-6.000 զինվոր: Այս հայկական զորաբանակն ուղղված էր այն ուժերի դեմ, որոնց դեմ պատերազմել էր Տիգրանի Մեծի բանակը 67 թ. աշնանը և 66 թ. գարնանը [34, 42, 51]:

Անհշան քանակությամբ այս զորախումբը հռոմեական բանակի կազմում կարող էր և չնշվել, սակայն շատ կարևոր էր նրանց կատարած դերը՝ ուշ աշնանային և ձմեռային ճանապարհներով հռոմեացիների տեղ հասցնել, կատարել հետախուզական և պահպանման առաջադրանքներ, ինչպես նաև կայազորներ տալ հայկական ազատագրված ամրոցներում:

Հռոմեական բանակի ռազմարշավը սկսեց հայ-հռոմեական դաշնագրի կնքումից մեկ-երկու շաբաթ հետո:

Ըստ նոր կնքված պայմանագրի, դաշնակիցները պատերազմի դեպքում պետք է օգնեին միմյանց: Ի՞նչպես կարող էր Հայաստանի նախկին տարածքում՝ Իբերիայում ու Աղվանքում, կամ բուն Հայաստանի հյուսիսային նահանգների սահմանագծին ռազմական գործողություններ ընթանային առանց հայերի գործուն մասնակցության:

Առաջին հարձակումը հռոմեացիների վրա աղվանների կողմից կատարվեց Կուրի աջափնյակում՝ Հայաստանի տարածքում, նշանակում է հայերի դեմ Իբերիայի և Աղվանքի ապստամբած արքաներից առաջինն աղվանացի Օրոյսեսն էր անցել Կուրը, ներխուժել Հայաստան և հակահարված ստացել դաշնակից հռոմեական ու հայկական զորքերից:

Փորձենք մանրամասն վերլուծել իրավիճակը և պարզելով հակառակորդների գործողությունների հերթականությունը, հնարավորինս վերականգնել իրադարձությունների ընթացքը:

Ինչպես Տիգրանը, այնպես էլ Պոմպեոսը շահագրգռված էին 66-65 թթ. Կովկասյան պատերազմի մեջ:

Տիգրանը գործնականորեն աջակցել էր Պոմպեոսի հաղթանակին, այդ պատճառով էլ 65 թ.-ին օրինաչափորեն սպասում էր նույն վերաբերմունքը իր դաշնակցից՝ Պոմպեոսից, որը և երկար սպասել չտվեց՝ Ավրանիոսի աջակցությունը հայերին Կորդուքում հայ-պարթևական պատերազմի երկրորդ՝ 65 թ. ռազմարշավին հավաստված է անտիկ պատմիչների կողմից [42, 51]:

Կովկասյան պատերազմի ժամանակ Տիգրանի ուղարկած զորքերը Արտոկեսի և Օրոյսեսի ապստամբության ժամանակ հայերի կորցրած տարածքների և ամրոցների վրա վերականգնեցին վերահսկողությունը:

Պոմպեոսը կարող էր ավելի մեծ բանակով արշավել Իբերիայի և Աղվանքի դեմ, սակայն Տիգրանը և Պոմպեոսը, հավանաբար, համարում էին, որ հյուսիսայինները մեծ զորք հավաքել չեն կարող: Կյանքը ցույց տվեց, որ Տիգրանը սխալվում էր. փոքրաքանակ բանակներին միացնելով տասնյակ հազարավոր աշխարհազորային, Արտոկեսը և Օրոյսեսը հավաքեցին հսկայական բանակներ: Հռոմեացիներին և նրանց դաշնակից հայերին հաղթանակի հասնելու համար հարկ եղավ այս պատերազմը վարել ուժերի մեծագույն լարումով:

Կուր հասած հռոմեական բանակը բաժանվեց երեք մասի, Մետելլոս Կելերի, Լուկիոս Փլակկոսի և անմիջապես Գնեոս Պոմպեոսի հրամանատարության տակ: Դեկտեմբերի կեսերին, հռոմեական Սատուրնալիա տոնի ժամանակ, վրա հասած 40.000-ոց աղվանական զորքերը գրոհեցին հռոմեական կիսակառույց ճամբարների վրա:

Տիգրան Կրտսերին պահում էին Մետելլոս Կելերի մոտ, այդ պատճառով Օրոյսեսն անձամբ հարձակվեց երա վրա, մնացած ճամբարները գրոհեցին դրա համար հատուկ առանձնացած աղվանական զորքերը:

Դիոն Կասսիոս. Քսիփիլինոս, Գիրք 36, 54,2. "*Եվ ինքը՝ Օրոյսեսը, քայլեց Մետելլոս Կելերի վրա, որի մոտ էր Տիգրան (Կրտսերը), ուրիշներին ուղարկեց Պոմպեոսի դեմ և մյուսներն էլ զորքի երրորդ մասի հրամանատար Լուկիոս Փլակկոսի դեմ այն հույսով, որ բոլորը միաժամանակ շփոթության կմատնվեն և չեն կարողանա իրար օգնել: Բայց, այսուհանդերձ, նա ոչ մի տեղ ոչ մի հաջողություն չունեցավ: Քանզի Կելերը նրան ուժգնորեն ետ մղեց. իսկ Փլակկոսը, քանի որ խրամատի շրջագիծը մեծ լինելու պատճառով անկարող էր այն պաշտպանել (ամբողջությամբ), ներսում մեկ այլ խրամատ պատրաստեց: Թշնամին այդ տեսնելով ենթադրեց, որ նա վախեցել է ու ետ նահանջել, որով և նա թշնամուն արտաքին խրամատից այս կողմ ներքաշեց և այստեղ նրանց վրա անակնկալ հարձակվելով, շատերին ձեռնամարտում, շատերին էլ փախուստի մատնելով սպանեց: Այդ ժամանակ էլ Պոմպեոսը, տեղեկանալով մյուսների դեմ բարբարոսների ձեռնարկած փորձի մասին, անակնկալ եկավ իր դեմ արշավողներին ընդառաջ և, հաղթելով նրանց, իսկույն, ինչպես կար, շտապեց Օրոյսեսի դեմ: Եվ նրան չհանդիպեց, քանի որ (սա) ետ մղվելով Կելերի կողմից, և տեղեկանալով մյուսների ձախողությունների մասին, փախուստի էր դիմել. Սակայն (Պոմպեոսը) ալբաններից շատերին ձեռք գցելով Գյուտոնոսի գետանցի մոտ, կործանեց: Այնուհետև նրանց խնդրանքով դաշինք կնքեց. քանի որ թեպետև նա բուռն կերպով ցանկանում էր ներխուժել նրանց երկիրը՝ վրեժ լուծելու համար, բայց ձմեռվա պատճառով ուրախությամբ հետաձգեց պատերազմը:" [51]:*

Ըստ Պլուտարքոսի, աղվանները խոշոր կորուստներ ունեցան, իսկ նրանց թագավորը դեսպանների միջոցով ներում խնդրեց [42]:

Այսպիսով, արդեն 66 թ. հայ-հռոմեական ռազմական համագործակցությունը սկսեց գործել, ինչի մասին տեղեկացան պարթևները և խիստ վրդովվեցին:

Փաստորեն հռոմեական բանակը տարեվերջին ճամբարեց Հայաստանի սահմանից ներս, Կուրի ափին, բաց դաշտում, այլ ոչ թե Լուկուլլոսի նման Մծբինում, ինչը նշանակում էր, որ Պոմպեոսը Հայաստանին ևս վերապահում էր միայն Իտալիային և Հունաստանին պատկանող զորքը քաղաքներ չմտցնելու սահմանափակում-արտոնությունը:

Հռոմեացիները Իտալիայում մ.թ.ա. I դարում զորքերին քաղաքներում ձմեռել չէին թույլատրում, եթե դրա համար հատուկ պատճառներ չկային: Մենք տեսնում ենք, որ Պոմպեոսը 66 թ. ձմռանը Հայաստանի ոչ մի քաղաքում, աղավել ևս մայրաքաղաք Արտաշատում ձմեռող զորամասեր չի թողնում, հռոմեական բանակի մի մասը գնում է ձմեռելու Փոքր Հայք՝ Անահտաց երկիր, մեծ մասը՝ դեպի Կուրի ափ, որտեղ տեղադրվում է երեք ճամբարով:

Արշավանքի առաջին տարին այսպես վերջացավ, և մինչև հռոմեացիները ձմեռում էին Կուրի ափին, Տիգրանը վերականգնում էր իր բանակի կորուստները:

8.12. 66 թ. հայ-պարթևական ռազմարշավի և հռոմեա-հայկական առնչությունների արդյունքները և գնահատականը

Երրորդ հայ-պարթևական պատերազմի առաջին՝ 66 թ. ռազմարշավը հարուստ նյութ է տրամադրում հին աշխարհի ռազմական պատմաբաններին: Պարթևների դեմ պատերազմելու Տիգրանի ոճը անգերազանցելի էր՝ նա պարթևական բանակի ամենահզոր ախոյաններից մեկն էր:

Հռոմեացիների և պարթևների դեմ անցկացրած ռազմարշավները վկայում են, որ հայերը մշակել էին պատերազմական ուրույն մարտավարություն, այսինքն հռոմեացիների և պարթևների մարտառճերը կիրառելիս հայերը ստեղծագործաբար էին

մոտենում խնդրին: Այս ամենը մեզ թույլ է տալիս պնդել, որ տիգրանյան ժամանակաշրջանում կար ուրույն հայկական ռազմարվեստ, որն այսուհետ պետք է ուսումնասիրել, ինչպես հունական, հռոմեական, պարթևական և այլ ռազմական դպրոցները:

Հայաստանը մ.թ.ա. I դարում հանդիսանում է առանձին քաղաքակրթություն: Ինձ, որպես Հին աշխարհի ռազմական պատմաբանի, պատշաճ է խոսել Հայաստանի ռազմական կառուցվածքի առանձնահատկությունների մասին, որտեղ քաղաքակրթական առանձնահատկությունները ևս զգալիորեն ընդգծված են:

Ընդօրինակելով պարթևական հեծյալ և հռոմեական հետևակային մարտավարությունների տարրերը, հայկական ռազմական կազմակերպությունը պահպանում և զարգացնում է նաև տեղական՝ բուն հայկական, ռազմական համակարգի հիմնական ձեռքբերումները, որոնք, ի վերջո, դառնում են համակարգաստեղծ գործոն:

Այս հարցին ես կանդրադառնամ Հին Հայաստանի մ.թ.ա. XV – մ.թ.ա. II դդ., հետո՝ մ.թ.ա. 55 թ.- մ.թ. 428 թթ. ռազմական գործին և, վերջապես՝ Հին Հայաստանի զինագործությանը նվիրված իմ աշխատություններում:

Հնագույն ակունքներից եկող հայկական ռազմական ավանդույթի ուժը և ազդեցության չափը տիգրանյան ժամանակաշրջանի հայկական բանակի գործունեության տարբեր ոլորտների վրա պարզելով միայն, կարելի է փորձել ըմբռնել հայկական քաղաքակրթության ռազմական տարրի ֆենոմենը:

Հին Հայաստանի ռազմական համակարգը առանձնահատուկ էր, Արատտայի, Արմանիի, Հին Հայքի (խեթերի Հայասա), Նաիրիի, Վանի թագավորության և Վաղ Երվանդյան Հայքի նվաճումների վրա հիմնված: Այն հարստացել էր, անշուշտ հարևանների ռազմարվեստի նվաճումները յուրացնելով և ստեղծագործաբար ձևափոխելով: Այն համաշխարհային ռազմական ժառանգության անբաժանելի, բայց քիչ հետազոտված մասն է:

Հայաստանում զարգացման արտակարգ բարձր վիճակում

էր գտնվում ամրոցների և քաղաքների պաշտպանության գործը (նաև պաշարողական արվեստը):

Հռոմեացիներին և պարթևներին պաշարումով և քաղաքի պարիսպների վրա կատարված գրոհներով ոչ մի քաղաք Հայաստանում վերցնել չհաջողվեց. Տիգրանակերտը Լուկուլլոսին հանձնեցին ապստամբած վարձկանները և հույն բնակիչները, Մծբինը գրավվեց սեփական պաշտպանների անփութության պատճառով, Արտաշատի վրա պարթևների ձեռնարկած բոլոր գրոհները ետ մղվեցին՝ մինչև նրանց ջախջախեց վրա հասած Տիգրանի բանակը: Մինչ այդ բոլոր երեք քաղաքներն էլ դիմացել էին երկար պաշարմանը և բազմահազար կորուստներ պատճառել հակառակորդին:

Մենք կարող ենք հաստատել հռոմեական և պարթևական բանակների համեմատ հայկական պաշտպանական տեխնիկայի և մարտավարության ակնհայտ գերազանցությունը:

Հայերն իրենց հերթին ցույց տվեցին, թե ինչ կայծակնային արագությամբ կարող են գրավել հզորագույն պաշտպանական համակարգերը՝ Փինական իր երեք պարիսպներից բաղկացած ուժեղ համակարգով Տիգրանի զորքերը գրավեցին մի քանի օրում, Պտղոմայիսը՝ համառ պաշարումից և հզոր գրոհներից հետո:

8.12.1. 66 թ. հայ-պարթևական ռազմարշավի արդյունքները և գնահատականները

Փրասպայի գլխավոր ճակատամարտում, հավանաբար, մեծ նշանակություն էր ունեցել պարթևների թվային զգալի գերազանցությունը, որը կարող էր որոշիչ լինել նրանց հաղթանակի համար:

Արտաշատի գլխավոր ճակատամարտը, հավանաբար, կոմբինացված մարտ էր, որտեղ հայկական ծանր հետևակի զորաշարժը, վճռական գրոհը, և հեծելազորի տոկունությունը որոշեցին ճակատամարտի ելքը: Այս պարագայում թվային գերազանցությունը պարթևներին պարտությունից արդեն չփրկեց:

69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմի 66 թ.-ի դեպքերն

իրականում հայ-պարթևական պատերազմն է, որտեղ հռոմեացիների դաշնակից պարթևները պարտվեցին Տիգրանի բանակից և Պոմպեոսն ստիպված էր բանակցություններ վարել ոչ միայն որպես Պոնտոսում Միհրդատին հաղթող, այլև պարտված կողմ, որովհետև իր դաշնակիցը պարտվել էր Հայաստանում:

66 թ. աշնան կեսից հայերը և հռոմեացիներն արդեն դաշնակիցներ էին, և պարթևները տեսան նրանց համատեղ հարվածի ուժը Կովկասում: Հետագայում, 65 թ.-ին Պոմպեոսի զորավար Ավրանիոսը Կորդուքում օգնության կհասնի հայերին և պարթևների դեմ կօգտագործի Լուկուլլոսի և Տիգրան Մեծի մշակած մարտավարության որոշ տարրերը:

64 թ.-ց հետո, երբ արդեն կնքվել էր հայ-պարթևական խաղաղության դաշնագիրը, Տիգրան Մեծը և Հրահատ Գ-ն պետք է մտահոգված լինեին իրենց երեխաների՝ Տիգրան Կրտսերի և նրա կնոջ՝ պարթև արքայադստեր ճակատագրով: Այն բոլոր իրադարձությունները, որոնց մասին մեզ հասել են կցկտուր տեղեկություններ [34, 42, 51], հավանաբար, կատարվել են հարևան հզոր արքաների միջնորդների և ոսկու միջոցով:

Հայ-պարթևական պատերազմների ընթացքում, միմյանց դեմ ճակատամարտելիս, հսկայական կորուստներ էին տալիս հայ և պարթև արհեստավարժ կատաֆրակտոսները: Երկուստեք կորուստը խիստ թուլացնում էր բանակները: Ավելի ուշ հայոց և պարթևաց ազատագնդերն իրենց հզոր ռազմական ուժը չսպառելու համար պարզապես խուսափում են միմյանց դեմ ճակատային մարտեր վարել:

8.12.2. 66 թ. հայ-հռոմեական առնչությունների արդյունքները և գնահատականը

Տիգրան Մեծը կարողացավ իր դեմ ապստամբած Տիգրան Կրտսերի՝ պարթև Հրահատ Գ-ի մոտ մեկնելը և փեսա դառնալն օգտագործել Հայաստանի օգտին՝ ընդդեմ Պոմպեոսի: 66

թ. աշնան սկզբին Պոնտոսում կայացած զինադադարի բանակցությունների ժամանակ նրա բանագնացները, հավանաբար, Պոմպեոսին ուղղակի հայտնեցին, որ եթե նա փորձի ընկճել Հայաստանը, ապա Տիգրան հայրը իր իշխանությունը կզիջի Տիգրան որդուն, որից հետո հայկական և պարթևական բանակները կոչնչացնեն ցանկացած մեծության հռոմեական բանակ (որքանով դա իրական սպառնալիք էր՝ կարող ենք դատել Անտոնիոսի հսկայական բանակի դժբախտ ճակատագրով): Սպառնալիքը գործեց անմիջապես՝ Պոմպեոսը հարկադրված էր խաղաղություն կնքել Տիգրան Մեծի հետ:

Սակայն երբ Տիգրան Կրտսերն իր արտաշատյան պարտությունից հետո Արևմուտք փախչելով՝ իր պապ Միհրդատ Պոնտացուն տեսավ պարտված և օգնության կարոտ, ապա գնաց Պոմպեոսի մոտ՝ որպես այդ պահին իր հոր ամենառիսկային թշնամու: Միայն այս փաստը կարող է ցույց տալ, թե ինչ վրեժխնդրությամբ էր լցված երիտասարդ արքայազնը:

Պոմպեոսը լրիվ օգտագործեց անսպասելիորեն իրեն հասած հաջողությունը՝ զգալիորեն խստացնելով Տիգրանին ներկայացրած իր նախկին պահանջները: Սակայն ինքը՝ Պոմպեոսը լավ գիտեր, որ այս հարցում չի կարելի չափազանց կոշտ լինել՝ դեպի Արևելք կատարվելիք արշավանքի երազանքները դեռ չէին սպառվել, իսկ պարթևների թշնամի Տիգրան Մեծը, որի բանակի մարտունակության և հզորության իրական պատկերը նա գիտեր, անհամեմատ ավելի լավ դաշնակից կլիներ, քան հավակնոտ երիտասարդ Տիգրան Կրտսերը պարթևական արքայաստեր հետ:

Տիգրան Կրտսերի փառամոլությունը և անհամբերությունն անսահման էին՝ բոլոր գործած հանցանքներից հետո իր հայրգահակալի դեմ նրան ոչ թե պատժում են, այլ փաստորեն ուղարկում են որպես անկախ Ծոփքի տիրակալ, այն պայմանով, որ հոր մահից հետո այն վերստին կմիանա Մեծ Հայքին և ինքը կդառնա հայոց թագավոր (այսինքն, Ծոփքի բդեշխ, մի փոքր ավելի լայն իրավունքներով): Ռազմատուգանքը Տիգրան Մեծը կարգադրում է տալ Ծոփքի գանձարաններից, հաստատելով, որ գերագույն իշխանությունն իր երկրում, այդ թվում և Ծոփքում իրեն է պատկանում, նա արքայից արքան է: Խնդրի այս լուծումից նեղացած, Տիգրան Կրտսերն արդեն ընդվզում է ոչ միայն Տիգրան Մեծի, այլև Գնեոս Պոմպեոսի դեմ, հարկադրելով վերջինիս ձերբակալել նրան: Այս միջադեպի ընթացքում Տիգրան Մեծի ցուցաբերած զսպվածությունը և իմաստությունը Պոմպեոսին վերջնականապես տրամադրում են Տիգրան Մեծի կողմ:

Այս միջադեպի մասին անտիկ պատմիչները մեզ հաղորդում են Հայաստանում տիրող մի կարգի մասին, երբ գերի ընկած տիրակալը պահանջում է բացել գանձատները, սակայն նրա ենթակաները մերժում են կատարել այդ պահանջը, հայտարարելով, որ տիրակալն այդ հրամանը տվել է անազատության մեջ [51]: Հետագայում նույնպես այս կարգի երևույթների [51, 193, 319] հանդիպում ենք՝ երկրի ինքնապաշտպանական մեխանիզմները կարող են տարբեր լինել:

69-66 թթ. հայ-հռոմեական պատերազմը շատ վճռական և ծանր է եղել պատերազմող կողմերի համար, սակայն այս պատերազմի ժամանակ պահպանվել են նաև որոշ համամարդկային սկզբունքներ և վեհանձնության դրսևորումներ: Մենք տեղեկություններ չունենք հռոմեական բանակի զանգվածային գազանությունների մասին: Հայկական կողմը նույնպես պատշաճ է վերաբերվել գերիներին: Այս ամենը հռոմեական հասարակական հիշողության մեջ տպավորվել է որպես պատերազմ Արևելքի ազնվազարմ վեհապետի դեմ:

Հատկանշական է Տիգրանակերտը գրավելուց անմիջապես հետո Լուկուլլոսի հրամանը՝ ազնվական կանանց չվիրավորել և չպատվազրկել, որպեսզի հետագայում նրանց ամուսինները, որոնց մի մասը հայկական բանակի սպաներ են, Լուկուլլոսի բանակի դեմ կատաղի պայքար չվարեն [42]: Հայկական կողմը գնահատում էր Լուկուլլոսի նման վերաբերմունքը [42]: Այս միջադեպը վկայում է, որ հակամարտող կողմերը պահպանում էին պատերազմի որոշ քաղաքակիրթ նորմեր, միաժամանակ ենթադրել է տալիս, որ Լուկուլլոսը շահագրգռված չէր Հայաստանում պատերազմի կրակը թեժացնելու:

Հաջորդ գլխում (վերջին՝ երրորդ պրակում) մենք մանրամասն կքննարկենք, թե ինչպես Տիգրանը արագ վերականգնեց Հայաստանի տնտեսությունն ու ռազմական հզորությունը: Բազմամյա պատերազմներից հետո Տիգրանն ամրացրեց և վերջնականապես հաստատեց հայկական ռազմակարգը: Առա-

ջավոր Ասիայում հայկական բանակը մնաց առաջատարներից մեկը: Նրա կառուցվածքը և մարտավարությունը հիմնականում անփոփոխ մնացին մինչև Արտաշեսյանների հարստության անկումը:

Վերջ երկրորդ պրակի

ԳՆԴԱՊԵՏԻ ՄԱՀԸ

Ճակատամարտի աղմուկը փոխվեց անակընկալ լռությամբ,
Գլխիս ճեղքվեց սաղավարտս, հարվածին չդիմացավ,
Տաք արյունս աչքս փակեց, ախոյանիս քողարկեց,
Թուլությունը՝ իմ թշնամին, մարմնիս մեջ սողոսկեց:

Ախոյանս հանգստացած հաջորդ զոհն է իր փնտրում,
Տես՝ ինձ արդեն մոռացել է, դեպ զինվորս է թեքվում,
Երիտասարդ իմ գեղջուկս, որ նոր է ձեռքը սուր առել,
Մենամարտում չի դիմանա այս մարտիկին ալեհեր:

Սպասումը հաղթանակի դրոշմվեց դեմքին գազազած,
Արհամարհանքով զինվորիկիս անփորձ հարվածը վանեց,
Եվ այդ պահին՝ ընկնելիս, վերջին ուժերս եմ լարում
Ու սրովս խոցում նրան, որ նոր հարվածից հանգչեմ ...

Մնացածն արդեն կանի իմ պատանին տաքարյուն,
Նրա սուրը կհաստատի հաղթանակս հետմահու ...
Ես էլ չկամ, բայց հաղթել է հաջորդ սերունդը հայկյան
Ու թրծվել է իր առաջին մարտում հանուն հայության:

Հետո դո՛ւ տես, զինվորիկս, որ հաղթել ես այս մարտում,
Տուն ետ կգաս ու անպայման կհանդիպես քո սիրուն,
Ցնծությանը հաղթանակի հարանյացն կավելանա,
Մանկիկներով տուն կլցվի, որ գնան դեպ ապագան:

Ես հաղթեցի ախոյանիս, զոհվելս կյանք պարգևեց,
Այսուհետև, նա թշնամուն կջախջախի ճիշտ այնպես,
Ինչպես մենք ենք երկիր պահել ահեղ պահին փորձության,
Մայր Հայաստա՛ն, որդիներդ մարտակոչդ չմոռացան:

Արա Գևորգյան
2.01.2010 թ.

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԲԱՆԱԿԸ II



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Նիկողայոս, Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ: Երկրի հինգ հատորով. Հատոր Ա. Պատմագիտական ուսումնասիրություններ: Եր., Եր. համալս. հրատ., 2006, էջ 156-168:
2. Աթոյան Կարլեն, Ռազմա-սպորտային մենամարտերը Հայաստանում: Երևան, «Լույս», 1965, 220 էջ:
3. Աթոյան Կարլեն, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում. (Ֆիզիկական կուլտուրան հին և մեջնադարյան Հայաստանում): Մասն առաջին, Եր., «Լույս», 1985, 375 էջ:
4. Ալեքսանդր Մակեդոնացի, Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը. Քվինտուս Կուրցիուս Ռուֆոս. Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, Եր., 1987, 656 էջ:
5. Աստուրեան Հ. Յ. Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռովմայ. 190-էն ն. Ք. Մինչեւ 428 յ. Ք., Վենետիկ – Ս.Ղազար, 1912, 5+391 էջ:
6. Արմեն Ք. Հրանդ. Մեծն Տիգրան: Գահիրե, 1957, 9+248 էջ:
7. Գևորգյան Արա, Արածանիի ճակատամարտի նշանակությունը ռազմարվեստի պատմության մեջ: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ, Աշտարակ, 2005, էջ 55-59:
8. Դանիելյան Էդուարդ. Տիգրան II Մեծի քաղաքակրթական գործունեության ռազմավարությունը: //Պատմա-բանասիրական հանդես, 2006, 2, էջ 3-12:
9. Եղիազարյան Արման, Արաբական ցեղերը Տիգրան Մեծի տերության համակարգում: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ: Աշտարակ, 2005, էջ 63:
10. Էլչիբեկյան Ժ.Գ. Հայաստանը և Մելենկյանները, Եր., ԳԱ հրատ., 1979. – 128 էջ:
11. Էքհարտ Կուրտ Տիգրան Բ եւ հայ-լուկուլլեան պատերազմները: Թարգմ. գերմ. Աշխատասիրեց Հ. Գարեգին Գարանֆիլեան, Վիեննա, 1926, 291 էջ:
12. Լեսկով Վ.Ա. Սպարտակ: Թարգմ. ռուս. Եր., «Հայաստան», 1987, 472 էջ:
13. Խաչատրյան Ժորես, Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո: //Պատմա-բանասիրական հանդես, 2007, 2, էջ 3-36:
14. Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ն. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկն. Ստ. Մալխասյանի. Երևան, Եր. պետ. համալս. հրատ., 1981, 588 էջ:
15. Կարագյոզյան Հովհաննես, Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի «Հայաստանը մ.թ.ա. 522-520 թթ. ապստամբության ժամանակ» հոդվածի մասին: //Պատմա-բանասիրական հանդես, 2001, 1, էջ 247-249:
16. Կրկյաշարյան Ս.Մ. Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI – մ.թ. IV դդ.), Եր., «Լուսակն», 2005, 312 էջ:
17. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. Հատոր 1. Հնագույն ժամանակներից մինչև դարի IX կեսերը: Կազմ. Պ.Հ. Հովհաննիսյան, Ա.Գ. Աբրահամյան, Եր., Երևանի համալս. հրատ., 1981, 944 էջ:
18. Հայ ժողովրդի պատմություն. Հատոր 1. Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, Եր., ԳԱ հրատ. 1972, 992 էջ:
19. Հակոբյան Հայկ, Հռոմեա-արևելյան առնչությունները ռազմական տակտիկայի բնագավառում. Բանբեր Երևանի համալսարանի, 1983, 3 (51), էջ 49-70.
20. Հակոբյան Հայկ, Ավարայրի ճակատամարտը (Պատմաքննական տեսություն): //Պատմա-բանասիրական հանդես, 2003, 1, էջ 40-67.
21. Հակոբյան Հայկ, Տիգրան Մեծ, Եր., 2005, 244 էջ:
22. Հակոբյան Հայկ, Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը: //Պատմա-բանասիրական հանդես, 2007, 3, էջ 3-29.
23. Հակոբյան Սիեր, Հայ ժողովրդի ռազմական տարեգիրք. Գիրք յոթերորդ՝ մ.թ.ա. 95-65, Եր., Հեղինակային հրատ., 2007, 40 էջ:

24. Հակոբյան, Մեհեր, Հայ ժողովրդի ռազմական տարեգիրք. Գիրք ութերորդ՝ մ.թ.ա. 65- մ.թ.1, Եր., Հեղինակային հրատ., 2007, 40 էջ:
25. Հարությունյան Բաբկեն, Պոնտոսի Միհրդատ VI Եվպատոր թագավորը նաև հայոց արքա: //Պատմա-բանասիրական հանդես, 2003, 3, էջ 131-152:
26. Հերոդոտոս. Պատմություն ինը գրքից. Թարգմ. հին հուն. Ս. Կրկյաշարյանի, Եր., ԳԱ հրատ., 1986. - 652 էջ:
27. Հովհաննիսյան Պետրոս, Տիգրան Մեծի գործունեության լուսաբանումը Նիկողայոս Ադոնցի աշխատություններում: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ, Աշտարակ, 2005, էջ 31-34:
28. Մաժի Դավիթ, Հռոմէական քաղաքականութեան նպատակը Հայաստանի եւ Անդրկովկասի մէջ: Թարգմ. անգլ., Փարիզ, 1939, 14 էջ:
29. Մանանդյան, Հակոբ. Տիգրան Երկրորդը և Հռոմը. Նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների: Վերահրատարակություն 1940 թ., Երևան, 1972, 260 էջ:
30. Մանասերյան Ռուբեն, Հայկական ռազմարվեստի սկզբունքները Տիգրան Մեծի օրոք: - Թեզիսներ հանրապետական գիտաժողովի, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարություն, նոյեմբեր, 1997 թ., էջ 27- 28:
31. Մանասերյան Ռուբեն. Թագավորական իշխանության հաստատության զարգացման առանձնահատկությունները Արտաշեսյանների օրոք (Թագավորը և ավագանին): //Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1999 թ., թիվ 1, էջ 78- 85:
32. Մանասերյան Ռուբեն. Տիգրան Մեծ (համառոտ ակնարկ): Պատմություն, թիվ 1, Եր., 2002 թ., էջ 144-158:
33. Մանասերյան Ռուբեն. Սպարտակի մոտ ժամանած հեծելազորի հարցի շուրջ (Վարկած՝ Սպարտակի հետ Տիգրան Մեծի ռազմական կապերի վերաբերյալ): //Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2004 թ., թիվ 3, էջ 252- 269:
34. Մանասերյան Ռուբեն. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ. Մ.թ.ա. 94 – 64 թթ.:

Երկրորդ, լրացված հրատարակություն, Երևան, 2007, 258 էջ:
35. Մանասերյան Ռուբեն. Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, «Արեգ», 1997, 216 էջ:
36. Մարգարյան Երվանդ. Տիգրան Բ-ի աշխարհակալ տերության գաղափարաբանական հայեցակարգի հիմքերի մասին: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ, Աշտարակ, 2005, էջ 63-66:
37. Մարտիկյան Սուրեն. Հայոց բանակի մարտավարության և ռազմավարության առանձնահատկությունները Ք.ա. 80 – 70 թթ. Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ, Աշտարակ, 2005, էջ 53-54:
38. Մարտիկյան Սուրեն, Մովսիսյան Արտակ. Մեր հաղթանակները. Հատոր Ա., Երևան, «Նորավանք», 2008, 260 էջ:
39. Մելքոնյան Հ.Գ. Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, ԳԱ հրատ., 1980, 275 էջ:
40. Մինասյան Էդիկ. Տիգրան Մեծի ռազմաքիվանագիտական գործունեության պատմությունից: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ, Աշտարակ, 2005, էջ 50 - 53:
41. Շահնազարյան Ն.Հ. Հայ-իրանական և հայ-հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ (մ.թ.ա. VI – մ.թ. V դ.), Եր., Եր. համալս. հրատ., 1990, 296 էջ:
42. Պլուտարքոս, Կենսագրություններ, թարգմ. հին հուն. Ս. Գրքաշարյանի, Եր., «Սարգիս Խաչենց», 2001, 392 էջ:
43. Ջահուկյան Գ.Բ. Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., ԳԱ հրատ., 1987, 748 էջ:
44. Սահինյան Ա.Ա. Գառնի ամրոցի պաշտպանական համակարգը: //Պատմա-բանասիրական հանդես, 1980, թիվ 3 (90), էջ 88 - 106:
45. Սարգսյան Ս.Վ. Հայ ռազմական արվեստի պատմությունից, Եր., 1969, 220 էջ:
46. Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան ...

Հատվածաբար թարգմանություն հին հուն. Ս.Մ. Կրկյաշարյանի. (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Հին հունական աղբյուրներ Բ), Եր., ԳԱ հրատ., 1985: - 204 էջ:
47. Ստեփանյան Ալբերտ, Հելլենիստական Հայաստանի տնտեսական կյանքի մի հարացույցի մասին: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ, Աշտարակ, 2005, էջ 20-24:
48. Տիգրան Մեծ՝ հայրենապաշտ տիրակալը: Գիտահանրամատչելի փաստագրական ֆիլմ, DVD, 2005 թ.:
49. Տիրացյան Գ.Ա. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. վերջ — մ.թ.ա. III դ. վերջ): //Պատմա-բանասիրական հանդես, թիվ 2 (93), էջ 68 - 84:
50. Ուտչենկո Ս.Լ. Հուլիոս Կեսար, թարգմ. ռուս., Եր., 1980, 448 էջ:
51. Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, Հատվածաբար թարգմանություն հին հուն. Ս.Մ. Կրկյաշարյանի. (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Հին հունական աղբյուրներ Ա), Եր., ԳԱ հրատ., 1976: - 268 էջ:
52. Քարամեան Ն. Պարթեւները Պարսկաստանում եւ նրանց յարաբերութիւնները հայոց հետ, Վաղարշապատ, 1897, 9+70 էջ:
53. Քսենոփոն, Անաբասիս, Հին հուն. թարգմ. Ս. Կրկյաշարյանի., Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 284 էջ:
54. Օհանյան Մուրադ, Նորից Խորենացու առաջին Արտաշեսի մասին. //Պատմա-բանասիրական հանդես, 2003, 1, էջ 40-67.
55. Օհանյան Մուրադ, Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Եր., 2003, 84 էջ:
56. Օհանյան Մուրադ, Տիգրան Մեծի արտաքին քաղաքականության տրամաբանությունը: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ, Աշտարակ, 2005, էջ 59-62:
57. Акопян, А.М. Каменные ядра из Арташата. В кн. Проб-

лемы античной археологии. М., 1986, с. 235.
58. Амфитеатров, А.В. Армения и Рим. Петроград: «Просвещение». – 361 с.
59. Аппиан. Римская история. http://ancientrome.ru/antitr/appian
60. Аппиан. Гражданские войны. http://ancientrome.ru/antitr/appian
61. Аракелян, Б.Н. Раскопки крепости Гарни. //Вестник древней истории, 1951, 4, с. 101-114.
62. Аракелян, Б.Н.. Основные результаты раскопок древнего Арташата в 1970 – 1973 гг. //Историко-филологический журнал, 1974, No 4 (67), с.44 – 60.
63. Аракелян, Б.Н.. Арташат: основные результаты раскопок 1970 – 1977 г. Том I. (Археологические раскопки в Армении, No 16.), Ереван, Изд. АН АрмССР, 1982, 71 с., 46 с Илл..
64. Арманд, Д.Л., Добрынин, Б.Ф., Ефремов, Ю.К., Зиман, Л.Я., Мурзаев, Э.М., Спрыгина, Л.И. Зарубежная Азия: Физическая география. М.: Гос.уч.-пед. изд. МП РСФСР, 1956. – 608 с.
65. Артиллерия римской сухопутной армии. http://www.xlegio.ru
66. Арутюнян, А.Ж. Арташес I и создание древнеармянской профессиональной армии. //Вестник древней истории, 2009, No 2, с.129 – 137.
67. Археология СССР с древнейших времен до средневековья в 20 томах: Древнейшие государства Кавказа и Средней Азии. Отв. Ред. Тома Г.А. Кошеленко. М., «Наука», 1985, 496 с.
68. Афиней. О машинах. //Вестник древней истории, 1940, No 3-4, с. 414 – 424.
69. Бабаян, Давид. Такое в истории Ирана сымели сделать лишь Александр Македонский и Тигран Великий. http://www.panarmenian.ru
70. Бабичев, Н.Т., Боровский, Я.М.. Словарь латинских крылатых слов. М.: «Русский язык», 1982, 960 с.
71. Беликов, А.П.. Парфянский поход Красса: военно-технический аспект. http://www.xlegio.ru и военно-истори-

ческий журнал «PARA BELLUM».
72. Беликов, А.П. Рим и Парфия: истоки взаимного неприятия. «Античный мир и археология», Вып. 11, Саратов, 2002. http://www.xlegio.ru и военно-исторический журнал «PARA BELLUM».
73. Бенгтсон, Г. Правители эпохи эллинизма. Пер. с нем. М., 392 с.
74. Бикерман, Э.. Государство Селевкидов. Пер. с франц. – М.: Изд-во «Наука»; 1985. – 264 с.
75. Блаватский, В.Д. Битва при Фате и греческая тактика. Битва при Фате и греческая тактика IV века до н.э. //Вестник Древней истории, 1946, No 1, с. 101 – 106.
76. Блаватская, Т.В. Из истории греческой интеллигенции эллинистического времени. М., «Наука», 1983. – 328 с.
77. Ле Боэк, Я. Римская армия эпохи Ранней Империи. Пер. с франц. М.Н. Челинцева. М.: «Российская политическая энциклопедия», 2001. www.roman-glory.com
78. Бокщанин, А.Г. Парфия и Рим. Часть II. Система политического дуализма в Передней Азии. М.: Изд. Московского ун-та, 1966, 304 с.
79. Бокщанин, А.Г. Битва при Каррах. //Вестник Древней истории, 1949, No 4, с. 41 – 50.
80. Болингброк. Письма об изучении и пользе истории. (Серия «Памятники исторической мысли») Пер. с англ. М.: «Наука», 1978. – 360 с.
81. Бурназян, Г.С. Армянское войско в борьбе против римских завоевателей в первом веке до нашей эры. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук. 1956, 40 с.
82. Владзимирский, А. Скифы – конные стрелки из лука. http://www.xlegio.ru
83. Военное искусство античности. (Антология мысли).– М,: Изд-во Эксмо, Спб.: Terra Fantastica, 2003. – 768 с.
84. Всемирная история войн. (Часть 1. Войны Древнего мира. с. 3-85) .Авторы-составители А.Г. Мерников и А.А. Спектор. Минск: ООО «Харвест», 2004. – 640 с.: ил.
85. Габелко, О.Л. Вифинское царство в системе эллинистических государств. Автореф. дисс. на соиск. уч. ст. канд.

ист. н. М., 1998. www.referatama.ru
86. Габриелян, Р.А.. Армения и Атропатена. Ереван, Изд. РАУ, 2002. 320 с.
87. Гельцер, М.Л. Войско Угарита и его организация. Вестник Древней истории, 1969, No 3, с. 21-38.
88. Гиро, П.. Частная и общественная жизнь римлян: Легион, когорта и их боевой порядок во времена Цезаря. (По Colonel Stoffel, Histoire de Jules Cesar, II, p. 274, pp. 337–342). Тактика. (По Colonel Stoffel, Histoire de Jules Cesar, II, 323 et suiv.). http://www.xlegio.ru
89. Глушанин, Е.П. Военные реформы Диоклетиана и Константина. //Вестник древней истории, 1987, No 2, с. 51-73.
90. Голдсуорти, А. Во имя Рима. Пер. с англ. М. Алферова. М.: «Транзиткнига», 2006. www.roman-glory.com
91. Горелик, М.В. Панцирное снаряжение из кургана у с. Красный Подол. //В сб.: Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 119-120.
92. Горончаровский, В.А., Никоноров В.П. Илуратский катафрактарий (К истории античной тяжелой кавалерии). //Вестник Древней истории, 1987, 1, с. 201-213.
93. Гуленков, К.Л.. Один эпизод из Спартаковской войны: Последний поход Спартака. http://www.xlegio.ru
94. Гуленков, К.Л.. Битва за Пирей. http://www.xlegio.ru
95. Гуленков, К.Л. Третья Митридатова война: кампания 71 г. До н.э. «Studia historica», Volume III. М., 2003. http://www.???.ru
96. Дандамаев М.А., Луконин В.Г.. Культура и экономика Древнего Ирана. М.: «Наука», Гл. Ред. Восточной литературы. 1980, 416 с.
97. Дандамаев М.А. Политическая история Ахеменидской державы. М.: «Наука», Гл. Ред. Восточной литературы. 1985, 320 с.
98. Дебс, Г. Гомер. Военное соприкосновение между римлянами и китайцами в античное время. //Вестник Древней истории, 1946, No 2, с. 45-50.
99. Денисон Дж. История конницы. – М.: АСТ, 2001. – 480 с.: ил. (Военно-историческая библиотека). www.militera.lib.ru

100. Дельбрюк, Ганс. История военного искусства в рамках политической истории. Том 1. Античный мир. Пер. с нем. М.: Гос.воен.изд., 1936. – 464 с.
101. Дельбрюк, Ганс. История военного искусства в рамках политической истории. Том 2. Германцы. Пер. с нем. М.: Гос.воен.изд., 1937. – 400 с.
102. Дильс, Г. Античная техника. Пер. с нем. М-Л.: Гос.тех.-теор.изд., 1934. – 216 с.
103. Дмитриев, В.А. «Всадники в сверкающей броне»: Военное дело сасанидского Ирана и история римско-персидских войн. - Спб.: Петербургское востоковедение, 2008. - 368 с. (серия «Militaria Antiqua», XII).
104. Добролюбов, Ярослав. Обнажение приема: Нефедкинский перевод Полиэна. //Отечественные записки, 2002. http://magazines.russ.ru/02/2002/8/2002 08_58.html
105. Дройзен, И.Г. История эллинизма. Т.1. История Александра Великого. Пер. с франц. М.: Изд. Солдатенкова, 1891.- 399+185 с.
106. Дройзен, И.Г. История эллинизма. Т.2. История диадохов. Пер. с франц. М.: Изд. Солдатенкова, 1893.- 391+119 с.
107. Дройзен, И.Г. История эллинизма. Т.3. История эпигонов. Пер. с франц. М.: Изд. Солдатенкова, 1893.- 514+202 с.
108. Егоров, А.Б. Теодор Моммзен и «Римская история». http://rome.webzone.ru/public/mommsen/hist/intro.htm
109. Егоров, А.Б. Последние планы Цезаря (к проблеме римского глобализма). - Мнемон: Исследования и публикации по истории античного мира. Вып. 5. Под ред. Проф. Э.Д. Фролова. Спб., 2006, с. 77-94.
110. Есаян С.А. Оружие и военное дело Древней Армении (III – I тыс. До н.э.). Ер., Изд АН АрмССР, 1966, 160 с.
111. Есаян С.А. Древняя культура племен Северо-восточной Армении (III – I тыс. До н.э.). Ер., Изд АН АрмССР, 1976, 271 с.
112. Есаян С.А. Доспех Древней Армении (III – I тыс. До н.э.). Ер., Изд АН АрмССР, 1986, 88 с.
113. История корабля в открытках. Вып.1. http://www.xlegio.ru

114. Жигунин, В.Д. Международные отношения эллинистических государств в 280 – 220 гг. до н.э. Издательство Казанского университета, 1980. – 192 с.
115. Жмодиков, А. Тактика римской пехоты IV – II в. До н.э. http://www.xlegio.ru
116. Жмодиков, А. Ответ на замечания И. Литсиоса. http://www.xlegio.ru
117. Жмодиков, А. Второй ответ Илье Литсиосу. http://www.xlegio.ru
118. Жмодиков, А. Этапы развития фаланги. В сб. Военная археология. Материалы международной конференции 2-5 сентября 1998 г. СПб, 1998, с. 89-92. http://www.xlegio.ru
119. фон Зенгер, Харро. Стратагемы. Т. 1. Пер. с нем. М.: Изд-во Эксмо, 2004. – 512 с.
120. фон Зенгер, Харро. Стратагемы. Т. 2. Пер. с нем. М.: Изд-во Эксмо, 2004. – 1024 с.
121. Зубарь, В.М., Симоненко, А.В. О снаряжении боевых коней в первые века н.э. на территории Северного Причерноморья. // Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 148-155.
122. Казаров С.С. Поход Антиоха III в Греко-Бактрию (208 – 206 гг. До н.э.) http://www.xlegio.ru
123. Калинин, Алексей. Битва при Платеях. http://www.-xlegio.ru
124. Калинин, Алексей. Марафонское сражение. Сержант: военно-исторический журнал No 9, с. 45-52. www.xlegio.ru
125. Калинин, Алексей. Примечания к «Заметкам на полях» И.Литсиоса. http://www.xlegio.ru
126. Канья, Р. Legio. http://www.xlegio.ru
127. Караев, Г.Н. Военное искусство Древнего Китая. М., Воениздат. 1959, 218 с.
128. Китайская военная стратегия. Сост., пер., вступ. ст. и коммент. В.В. Малявина. (Кит. классика: новые переводы, новый взгляд). М.: ООО «Издательство АСТ», 2004. – 432 с.

129.Клаузевиц, Карл. О войне. Пер. с нем. – М.: Эксмо; СПб.: Мидгард, 2007. – 864 с.
130.Клир. Дж. Системология: автоматизация решения системных задач. Пер. с англ. – М.: «Радио и связь», 1990. – 544 с.
131.Кнабе, Г.С. Рим Тита Ливия – образ, миф, история. В кн. Тит Ливий. История Рима от основания города. Т. 3. М., 1994, с. 591 - 655.
132.Кован, Р. Римские легионеры: 58 г. до н.э. – 69 г. н.э. Пер. с англ. И.А. Феногенов. М.: «Астрель», 2005. www.roman-glory.com
133.Колесов, А.С. История войн Древнего Мира: Римская армия после реформы Гая Мария. – 2005-6. www.war-strategy.narod.ru
134.Колесов, А.С. История войн Древнего Мира: Митридатовы войны. – 2005-6. www.war-strategy.narod.ru
135.Колобов, А.В.. О трактате «De munitionibus castrorum». http://www.xlegio.ru
136.Колобов, А.В.. Римские легионы вне полей сражений (эпоха Ранней империи): Учебное пособие. Пермь, 1999. Из http://www.xlegio.ru
137.Коннолли, П. Греция и Рим. Энциклопедия военной истории. Пер. с англ. С. Лопухова, А. Хромова. М.: «Экмо-Пресс», 2000. www.roman-glory.com
138.Конрад, Н.И.. Избранные труды: Синология: Сунь-цзы. У-цзы. М.: «Наука», Гл. ред. восточной литературы. 1977, 624 с.
139.Кораблев, И.Ш. Ганнибал. М.: Из-во «Наука», Гл. ред. вост. лит., 1976, 400 с.
140.Ксенофонт. Киропедия. Пер. с древнегр. М., «Наука», 1976, 336 с.
141.Ксенофонт. Гиппарх (обязанности начальника конницы). Пер. с древнегр. http://www.xlegio.ru
142.Ксенофонт. О коннице. Пер. с древнегр. http://www.xlegio.ru
143.Кузищин, В.И. Историография античной истории. – 398 с. www.sno.pro1.ru/lib/kuzll/
144.Кузищин, В.И. История древней Турции. Изд. 2-е, перераб. и доп. М.: Высшая школа, 1996. – 400 с. http://www.vo-krug-mira.ru/sno.pro1.ru_all_for_Kuz.ru

145.Куликов, А.В. Восточная политика Рима и политическая борьба в Римской республике (II-I вв. до н.э.). Псков: ПГПИ, 2004. – 108 с.
146.Кусикьян, И. Тигран II и Рим. //Исторический журнал, No 10. – с. 87-98.
147.Ленцман, Я.А. О хлебной торговле Делоса в III – II вв. до н.э. //Вестник Древней истории, 1946, No 2, с. 89-96.
148.Лиддел Гарт, Б.Х. Стратегия непрямых действий. Пер. с англ. М.: Изд. иностр. лит., 1957. – 536 с.
149.Литсиос, Илья. Замечания на статью А. Жмодиков. "Тактика римской пехоты IV – II в. до н.э." http://www.xlegio.ru
150.Литсиос, Илья. Второй ответ А.Л. Жмодикову. http://www.xlegio.ru
151.Литсиос, Илья. Марафонское сражение Калинина – Заметки на полях. http://www.xlegio.ru
152.Литсиос, Илья. Ответ Калинину. http://www.xlegio.ru
153.Лукиан. Как следует писать историю. В кн. Лукиан. Сочинения: В двух томах. Пер. с греч. Т.2. М.: «Алетейя», 2001. –с. 81 - 99.
154.Лукулл, Луций Лициний (до 117 – 56 г. до н.э.). http://www. ancientrome.ru
155.Магн, Гней Помпей (106 – 48 г. до н.э.) http://www.ancientrome.ru
156.Макьюэн, Эдвард, Роберт Л. Миллер, Кристофер Бергман. Конструкции и изготовление древних луков. http://www.xlegio.ru
157.Манандян, Я.А. Тигран II и Рим в новом освещении по первоисточникам. Ереван, 1943. – 240 с.
158.Манасерян, Р.Л. Тигран Второй и римско-понтийская война 73 – 71 гг. //Вестник общественных наук АН Арм.ССР, 1977, No 5.
159.Манасерян, Р.Л. Процесс образования державы Тиграна II. //Вестник Древней истории, 1982, No 2, с. 122-140.
160.Манасерян, Р.Л. Держава Тиграна II у ее борьба против экспансии Рима и Парфии (Автореферат дисс. На

соискание ученой степени канд. историч.наук), Ереван, АН Арм.ССР, Институт истории., 1982 г., 40 с.
161. Манасерян, Р.Л. Борьба Тиграна II против экспансии Рима в Каппадокии. //Вестник Древней истории, 1985, No 3, с. 109-118.
162. Манасерян, Р.Л. К вопросу о вероисповедании населения городов Армении (I в. до н.э. - IV в. н.э.). //Историко-филологический журнал, 1989, No 2 (125), с. 198 — 204.
163. Манасерян, Р.Л. Международные отношения на Переднем Востоке в 80-70 гг. до н.э. (Тигран II и войска с берегов Аракса). //Вестник Древней истории, 1992, No 1, 152-160.
164. Марр, Н.Я. К вопросу о задачах арменоведения. В кн. Кавказский культурный мир и Армения. Ереван, «Гандзасар», 1995, с. 15 — 23.
165. Мартиросян, Амаяк. Пути Арташат – Тигранакерт и Арташат – Мцхета на карте Пейтингера. //Историко-филологический журнал, 1999, 2-3, с. 359-363.
166. Махлаюк А. В. Scientia rei militaris (к вопросу о профессионализме высших военачальников римской армии) //Вестник Нижегородского государственного университета им. Н. И. Лобачевского. Сер.: История. «Издательство ННГУ». Нижний Новгород, 2002. www.roman-glory.com
167. Мемнон. О Гераклее. Пер., введ. и коммент. В.П. Дзагуровой. //Вестник Древней истории, 1951, No 1, с. 283-316.
168. Мкртчян, Т. А. Долгий путь от камня до железа. Ер., 2004, 251 с.
169. Молев, Евгений Александрович. Властитель Понта. Н.Новгород: Изд-во ННГУ, 1995, - 144 с. www.militera.lib.ru/bio/molev_el/indeh.html
170. Моммзен, Теодор. История Рима. Том II: От битвы при Пидне до смерти Суллы. Пер. с нем. М., ГСЭИ, 1937, 448 с.
171. Моммзен, Теодор. История Рима. Том III: От смерти Суллы до битвы при Тапсе. Пер. с нем. М., Огиз,

госполитиздат, 1941, 560 с.
172. Моммзен, Теодор. История Рима. Том V: Провинции от Цезаря до Диоклетиана. Пер. с нем. М., Изд. иностр. лит., 1949, 630 с.
173. Нзумов, Л.А. Численность армии Митридата. http://gym1505.ru/files/pages/page 4626-analizdoc.doc
174. Нечитайлов, М.В. И снова битва при Иссе ... http://www.xlegio.ru
175. Нечитайлов, Максим. Конница Ахеменидской державы во второй половине V в. До н.э. «Para bellum», No 10, 2000. http://www.xlegio.ru
176. Нечитайлов, Максим. Кавалерия Александра Македонского. Журнал «Para bellum», No 10, 2000. http://www.xlegio.ru
177. Нефедкин, А.К. Новая история конницы? Рецензия на книгу: Тараторкин В.В. Конница на войне. История кавалерии с древнейших времен до эпохи Наполеоновских войн (Библиотека военной истории). Минск: Харвест, 1999, 431 с., 100 илл. http://www.xlegio.ru
178. Нефедкин, А.К. Происхождение и история серпоносных колесниц. //Журнал «Para bellum», No 2, 1997, No 9, 2000. http://www.xlegio.ru
179. Нефедкин, А.К. Об истории серпоносных колесниц. Журнал «Para bellum», No 2, 1997, No 11, 2000. http://www.xlegio.ru
180. Нефедкин, А.К. Длинные копья варваров (К вопросу об элементарной тактике херусков в начале I века нашей эры). http://www.xlegio.ru
181. Нефедкин А.К. Спецсеминар «Битва в Античности». Журнал «Para bellum», http://www.xlegio.ru
182. Нефедкин, А.К. Научная жизнь – новые явления. Журнал «Para bellum», http://www.xlegio.ru
183. Нефедкин, А.К. Использование собак в римском военном деле. Журнал «Para bellum», http://www.xlegio.ru
184. Нефедкин, А.К. Основные этапы формирования фаланги гоплитов: военный аспект проблемы. //Вестник древней истории, No 1, 2002, с. 87-96.

185. Нефедкин, А.К. Worley L.J. Hippies: The Cavalry of Ancient Greece (History and Warfare) Boulder – San Francisco – Oxford: Westview Press, 1994, 241 p., ill. (рецензия; источник: ВДИ, No 3, 2000.)
186. Нефедкин, А.К. M. Mielczarek. The Army of the Bosporan Kingdom. Translated by N.V. Sekunda (Studies In the History of the Ancient and Medieval Art of Warfare. V. Iv.). Lodz: Oficyna Naukowa Ms, 1999, 103 p. 25 Pis. (рецензия; источник: ВДИ, No 3, 2002.)
187. Новичков, Ю.А. Г. Флавий Фимбрия во главе армии популяров в первой Митридатовой войне. – 7 с. http://vestnik.ssu.samara.ru/gum/2008web1/hist/200810203.pdf
188. Перевалов, С.М.. Сарматский контос и сарматская посадка. Российская археология, 1999, No 4.
189. Перл, Г. Эры вифинского, понтийского и боспорского царств. //Вестник Древней истории, 1969, No 3, с. 39-69.
190. Пинк, И. Катафрактарии Древнего мира. http://www.xlegio.ru и военно-исторический журнал «PARA BELLUM».
191. Плутарх. Серторий. //Вестник Древней истории, 1939, No 2, с. 301-316.
192. Плутарх. Избранные жизнеописания в двух томах. Пер. с древнегреч. Т.1. М.: «Правда», 1987. – 592 с.
193. Плутарх. Избранные жизнеописания в двух томах. Пер. с древнегреч. Т.2. М.: «Правда», 1987. – 608 с.
194. Плутарх. Изречения царей и полководцев. В кн. Плутарх. Застольные беседы. Л.: «Наука», 1990, с. 340-386. (Серия «Литературные памятники»).
195. Полибий. Всеобщая история. Том 1. Книги I – X. Пер. с древнегреч. (Историческая библиотека). М.: ООО «Издательство АСТ», 2004. – 765 с.
196. Полибий. Всеобщая история. Том 2. Книги XI – XXXIX. Пер. с древнегреч. (Историческая библиотека). М.: ООО «Издательство АСТ», 2004. – 765 с.
197. Полиэн. Стратегемы. Пер. с греч. Под общей ред. А.К. Нефедкина. СПб.: Евразия, 2002. – 608 с.
198. Пугаченкова, Г.А. О панцирном вооружении парфянского и бактрийского воинства. //Вестник Древней истории, 1966, No 2, с. 27-43.

199. Разин, Е.А.. История военного искусства. Том 1. Военное искусство рабовладельческого периода войны. – М.: Воениздат, 1955. – 560 с.
200. Ренат, Флавий Вегеций. Краткое изложение военного дела. Вестник древней истории, 1940, 1, с. 231 – 293.
201. Римская миля и другие меры длины. http://vostlit.narod.ru
202. Родионов, М.В. История Древней Греции и Древнего Рима: Конспект лекций. М.: А-Приор, 2006. – 224 с.
203. Россия (СССР) в локальных войнах: Введение. М., 2000, с. 15 – 17.
204. Ростовцев, М.И. Армия и флот Селевкидов. («Кембриджская древняя история», глава «Сирия и Восток», русский оригинал). ВДИ, No 4, 2000. http://www.xlegio.ru
205. Садаев, Д.Ч. История Древней Ассирии. М., Наука, 1979. – 248 с.
206. Сапрыкин, С.Ю. О хронологических границах эпохи эллинизма. - История: Мир прошлого в современном освещении. Сб. научн. ст. К 75-летию со дня рождения проф. Э.Д. Фролова. Под ред. проф. А.Ю. Дворниченко. Спб., 2008, с. 213 – 234.
207. Саркисян, Г.Х. Тигранакерт: из истории древнеармянских городских общин. М., Изд-во вост. лит., 1960. - 160 с.
208. Саркисян, Г.Х. Обожествление и культ царей и царских предков в древней Армении. //Вестник Древней истории, 1966, No 2, с. 3-26.
209. Саркисян, Г.Х. Свидетельство поздневавилонской клинописной хроники об Армении времени Тиграна II. //Историко-филологический журнал, 1991, No 2 (133), с. 45 – 54.
210. Севастьянова, О.И. Новый труд по древней истории Армении. //Вестник Древней истории, 1946, No 2, с. 112-118.
211. Секунда, Н. Армия Александра Великого. Пер. с англ. Я. Зверева. М. ООО «Издательство АСТ»: ООО «Издательст-

во Астрель», 2004. – 53 с., 8 цв. илл. (Военно-историческая серия «Солдать»).
212. Селецкий, Б.П. Источники финансирования Суллы в период войны с Митридатом Евпатором. //Вестник Древней истории, 1982, No 2, с. 63-75.
213. Свечин, А.А. Эволюция военного искусства. Том I. М.-Л. Воениз, 1928. http://www.militera.lib.ru
214. Симоненко, А.В.. Некоторые дискуссионные вопросы современного сарматоведения. //Вестник Древней истории, 2002, No 1, с. 107-122.
215. Скобелев, Д.А.. Праща: снаряды и способы метания в Античности. http://www.xlegio.ru
216. Скобелев, Д.А.. Техника стрельбы из пращи и способы ее держания. http://www.xlegio.ru
217. Скорый, С.А. Доспех скифского типа. //В сб.: Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 82-102.
218. Смыков, Е.В.. Луций Лициний Лукулл: полководец и общественное мнение. АМА. Вып. 10. Саратов, 1999, с. 47-62. http://www.militera.lib.ru
219. Страбон. География в 17 книгах. Пер. с древнегреч., статья и ком. Г.А. Стратановского. Л.: «Наука», 1964. – 944 с.
220. Строков, А.А. История военного искусства: Рабовладельческое и феодальное общество. М., Воениздат., 1955, с. 46 – 47, 62 – 63, 80 – 89, 108 – 119.
221. Сулла, Луций Корнелий: Война с кимврами и тевтонами. Союзническая война. Консулат. Источник: Инар Франсуа. Сулла. Ростов-на-Дону, «Феникс», 1997. http://www.militera.lib.ru
222. Сулла, Луций Корнелий: Начало войны с Митридатом. Инар Франсуа. Сулла. Ростов-на-Дону, «Феникс», 1997. http://www. militera.lib.ru
223. Сулла, Луций Корнелий: Окончание войны с Митридатом. Инар Франсуа. Сулла. Ростов-на-Дону, «Феникс», 1997. http://www. militera.lib.ru
224. Тактик, Эней. О перенесении осады. //Вестник Древней истории, 1965, No 1, с. 237 – 268.
225. Тараторин, В.В. История боевого фехтования: Развитие

тактики ближнего боя от древности до начала XIX века. OCR Палек, 1998. http://www. militera.lib.ru
226. Тарн, В. Эллинистическая цивилизация. Пер. с англ. М.: Изд. иностр. лит., 1949. – 372 с.
227. Тер-Мартиросов, Феликс. Армения в период восстания 522 – 520 гг. до н.э. //Историко-филологический журнал, 2001, 1, с. 231-246.
228. Тер-Мартиросов, Феликс. Границы Армении в Закавказье (IV – II вв. до н.э.). //Историко-филологический журнал, 2006, 1, с. 298-306.
229. Тер-Мартиросов, Феликс. Ервандашат. //Историко-филологический журнал, 2008, 1, с. 3-19.
230. Томсинов, В.А. Краткая история египтологии. (Серия «Исследования по всемирной истории») М.: Изд. «Зерцало»: Изд. дом «Вече», 2004. – 320 с.
231. Трейстер, М.Ю. Комментарий к письму X.74 Плиния Младшего. //Вестник Древней истории, 1987, 1, с. 213-219.
232. Труб, Е.Л. Военная техника античности. http://www. genstab.ru
233. Утченко, С.Л. Римская армия в I в. до н.э. //Вестник Древней истории, 1962, No 4, с. 30 – 47.
234. У-цзин. Семь военных канонов древнего Китая. Изд. 2-е, исправленное. Пер. с англ. иссл. и прим. Ральфа Д. Сойера. СПб.: «Евразия», 2001. – 448 с.
235. Феликс, Луций Корнелий Сулла (138 – 78 г. До н.э.). http://www.ancient-rome.ru
236. Фрай, Ричард. Наследие Ирана. Пер. с англ. М.: Наука, 1972. – 468 с.
237. Франсуа И., Ковалев С.И. Митридатовы войны. 6 декабря 2006 г. Источник: Франсуа И.Сулла. «Феникс». РнД., 1997. Ковалев С.И. История Рима. Курс лекций. СПб., 2003. http://www.militera.lib.ru
238. Фронтин, Юлий Секст. Стратегемы. //Вестник Древней истории, 1946, No 1, с. 217 – 306.
239. Хазанов, А.М.. Очерки военного дела сарматов. М.: «Наука», Гл. Ред. Восточной литературы. 1971, 172 с.
240. Хазанов, А.М.. Катафрактарии и их роль в истории воен-

ного искусства. //Вестник древней истории, 1968, No 1, с. 180-191.
241. Хазанов, А.М.. Пешие и конные. Вокруг света, 1977, 1. http://www.xlegio.ru
242. Хан, Иштван. Аппиан и Александрия. //Вестник древней истории, 1968, No 1, с. 72-86.
243. Харболт, Т. Битвы мировой истории: Зела (Zela) 3-я Митридатова война. Тигранокерта (Tigranokerta) 3-я Митридатова война. 1993. http://interpretive.ru/dictionary/407/word/
244. Хачикян, Армен. Ганнибал на востоке и в Армении. //Историко-филологический журнал, 2006, 1, с. 285-297.
245. Херцог, Хаим, Гишон, Мордехай. Библейские сражения. Пер. с англ. М.: АСТ: Астрель, 2005. – 320 с.
246. Хефлинг, Гельмут. Римляне, рабы, гладиаторы: Спартак у ворот Рима. Пер. с нем. М.: «Мысль», 1992. – 272 с.
247. Хлевов, А.А. Морские войны Рима. СПб.: Изд-во С.-Петерб. ун-та, 2005. – 496 с.
248. Холмогоров, В.И. Римская стратегия в IV в. н.э. у Аммиана Марцеллина. //Вестник древней истории, 1939, No 3, с. 87-97.
249. Цезарь, Гай Юлий. Записки о галльской войне. http://lib.aldebaran.ru
250. Цезарь, Гай Юлий. Записки о гражданской войне. Записки продолжателей Цезаря. http://lib.aldebaran.ru
251. Черненко, Е.В. Битва при Фате и скифская тактика IV в. до н. э. //В сб.: Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 59-74.
252. Чолоян, Джемил Муразович. Исторический ареал сложения курдского этноса. Курдистан – страна курдов. 9.12.2005. http://www.ezdixane.ru/content/view/679/218
253. Шабан, В.А. Рецензия на книгу Нефедкин, А.К. «Боевые колесницы и колесничие древних греков». СПб., 2001. www.lmr.ru
254. Шабан, В.А. О непобедимости конницы катафрактов. Альманах_Фрідріх2: славянский милитаристский альманах, декабрь 2006, No 6. http://wars175xnarod.ru/f2/Html/6Fridrich6.html

255. Шабан, В.А. Реконструкция македонской сариссы. Альманах_Фрідріх2, декабрь 2007, No 7. http://wars175xnarod.ru/f2/Html/7Fridrich7.html
256. Шабан, В.А. О величине полибиевого фута. Альманах _Фрідріх2, декабрь 2007, No 7. http://wars175xnarod.ru/f2/Html/7Fridrich7.html
257. Шахермайр, Фриц. Александр Македонский. 2-е изд., исправленное. М.: Наука, 1986. – 384 с.
258. Шкрабо, Дмитрий. Битва при Магнесии (190 г. До н.э.). «Воин», No 12, 2003, с.2-12. http://www.xlegio.ru
259. Шмалько, Андрей. «Пришел, увидел, победил» (Битва при Зеле 2 августа 47 г. До н.э.). http://www.xlegio.ru
260. Шокарев, Ю.В. Луки и арбалеты. М., 2001, 173 с.
261. Шрамко, Б.А. Из истории скифского вооружения. // В сб.: Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 22-38.
262. Шустов, В.Е. Войны и сражения древнего мира. Ростов-на-Дону: «Феникс», 2006. www.roman-glory.com
263. Энциклопедия военной мысли. Под ред. Питера Тоураса. Пер. с англ. М.: «ЭКСМО», 2002, 736 с.

264. Caldwell, Craig H. War and Peace in the Ancient World (review). The Journal of Military History - Volume 71, Number 4, October 2007, pp. 1217-1218. http://muse.jhu.edu/journals.
265. Goldsworthy, A.K. The Othismos, Myths and Heresies: The Nature of Hoplite Battle. «War ih History», 1997; 4; 1. www.roman-glory.com
266. Hanson, Victor Davis. Introduction: the Historiography of Ancient Warfare. – 10 p. – The Cambridge History of Greek and Roman Warfare, Volume 1: Greece, the Hellenistic World and the Rise of Rome. www.cambridge.org
267. Hanson, Victor Davis. The Status of Ancient Military History: Traditional Work, Recent Research, and On-going Controversies. The Journal of Military History Vol. 63, Iss. 2 April 1999. www.victorhanson.com/articles/hanson/
268. Kimberly, Kagan. 1972 - Redefining Roman Grand Strategy. The Journal of Military History. - Volume 70, Number 2, April 2006, pp. 333-362. http://muse.jhu.edu/journals-

/journal of military history/vo70/70.2.kagan.html
269. Lendering, Jona. Parthian Empire. www.iranchamber.com/history/parthian/
270. Liddell, Henry George and Scott, Robert. A Greek – English Lexicon. www.perseus.tufts.edu/cgi-bin/ptext?.doe
271. Muller, Carolus. Fragmenta historicorum graecorum. Volume III. Parisiis. Editore Ambrosio Firmin Didot, 1849, p.746 (606 p.). www.archive.org
272. Nercessian, Y.T. Silver Coinage of the Artaxiad Dynasty of Armenia. Los Angeles, 2006. – 222 p., 96 plates.
273. Poirot III, John Joseph. Perceptions of Classical Armenia: Romano-Parthian relations, 70 BC-220 AD. A Thesis degree of Master of Arts in the Department of History. Louisiana State University, 2003. – 85 p.
274. Roman infantry tactics. http://wapedia.mobi/en/Roman infantry tactics, strategy and battle formation.
275. Shahbazi, A.Sh. Parthian Army. www.iranchamber.com/history/parthian/
276. Speidel, Michael Alexander. Early Roman Rule in Commagene. – 19 p. Mavors-Institut fur antike Militargeschichte. www.mavors.org
277. Starspawn. Римско - армянская война. http://www.war online.org/forum
278. Webber, Christopher. Odryssian Cavalry Arms, Equipment, and Tactics. – Early Symbolic Systems for Communication in Southeas Europe. Chapter 45. Ed. Nikolova L. – p. 529-554.
279. Eutropius. www.thelatinlibrary.com/eutropius/eutropius1.shtml
280. Война и мир в терминах и определениях – Словарь: Глава 16. Военная история. www.voina_i_mir.ru/dicchapter/
281. Вэрри, Джон. Войны античности от греко-персидских войн до падения Рима: Иллюстрированная история. Пер. с англ. (Военная история человечества) – М.: Эксмо, 2009. – 232 с.
282. Голыженков, И.А. Армия императорского Рима I – II вв. н.э. М. ООО «Издательство Астрель»: ООО «Издательство АСТ», 2000. – 48 с., 8 цв. илл. (Военно-историческая серия «Солдать»).

283. Келли Девриз, Мартин Догерти, Йен Дикки, Филлис Джестайс, Роб Райс. Великие сражения Древнего мира: 1285 г. до н.э. – 451 г. н.э. Пер. с англ. М.: Эксмо, 2008. – 224 с.: илл. (История военного искусства).
284. Попов, И. Армии Древнего Китая III вв. до н.э. – III вв. н.э. М. ООО «Издательст-во АСТ» : ООО «Издательство Астрель», 2001. – 48 с., илл. (Военно-историческая серия «Солдать»).
285. Саймон Энглин, Филлис Дж. Джестис, Роб С. Райс, Скотт М. Раш, Джон Серрата. Войны и сражения Древнего мира : Энциклопедия военной истории. Пер. с англ. М.: Эксмо, 2004. – 272 с.: илл.
286. Առաքելյան Ա.Գ. Հունական գրականության պատմություն, երկրորդ լրացված և բարեփոխված հրատ., Եր., 1962. – 616 էջ :
287. Лосев, А.Ф. Эллинистически – римская эстетика I – II вв. н.э. М.: Изд. Моск. ун-та, 1979. – 416 с.
288. Спартак. www.vikipedia.ru
289. Крисп, Гай Саллюстий. Сочинения. Пер. с лат. М.: Изд. «Наука», 1981. – 224 с. (Памятники исторической мысли).
290. История Древнего мира. Под ред. И.М. Дьяконова, В.Д. Нероновой, И.С. Свенцицкой. Изд. 3-е, испр. и доп. М.: Наука. Главная редакция восточной литературы, 1989. Кн. 2. Расцвет древних обществ. Отв. ред. И.С. Свенцицкая. – 572 с. с карт.
291. Գևորգյան Արա, Տիգրան Մեծի բանակը մ.թ.ա. 95-55 թթ. Պրակ I., Եր. «Արևելք - Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2009. – 372 էջ:
292. Դեմոյան Հայկ, Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան սպառազինությունն ու ռազմարվեստը: (Հայոց պատերազմները և ռազմարվեստը մատենաշար. Հատոր Ա), Եր. 2009. 64 էջ:

293.Զարդարյան Մ.Հ. Քարտեզ. Հայաստանը Տիգրան Բ Մեծի օրոք (մ.թ.ա. 95-56 թթ.), մաս Ա. Տիգրան Բ-ի նվաճումները Մերձավոր Արևելքում մ.թ.ա. 94-70 թթ., Եր., «Նոյ» հրատ., 1991:
294.Զարդարյան Մ.Հ. Քարտեզ. Հայաստանը Տիգրան Բ Մեծի օրոք (մ.թ.ա. 95-56 թթ.), մաս Բ. Տիգրան Բ-ը և Հռոմը մ.թ.ա. 70-56 թթ., Եր., «Նոյ» հրատ., 1991:
295.Լեո, Երկերի ժողովածու 10 հատորով. Հատոր 1. Հայոց պատմություն. Ա հատոր. Հին պատմություն, Եր. «Հայաստան», 1966. – 568 + 16 էջ:
296.Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ատլաս, Երևան-Մոսկվա, 1961, 112 էջ. (Պատմական քարտեզներ՝ էջ 101-111):
297.Հարությունյան Բ.Հ., Մխիթարյան Վ.Գ. Քարտեզ. Տիգրան Մեծի տերությունը, Եր. պետ. համ., 2005 :
298.Հռոմեական ռազմարվեստի պատմությունից, թարգմ. Վահան Մկրտչյան, Եր., ՀՀ ՊՆ Լրատվության և քարոզչության վարչություն, 2004: - 32 էջ:
299.Միրզախանյան Ե.Ա. Ուրվագծեր հռոմեական պատմագրության, Եր. համալս. հրատ., 1971. – 280 էջ:
300.Չինական ռազմարվեստի պատմությունից, թարգմ. Վահան Մկրտչյան, Եր., ՀՀ ՊՆ Լրատվության և քարոզչության վարչություն, 2003: - 48 էջ:
301.Акопян Айк. Тигранакертская битва в новом освещении. – Вестник общественных наук АН АрмССР, 1983, 9, с. 65–79 :
302.Быт и история в античности. Отв. ред. Г.С. Кнабе. М.: Наука, 1988. – 272 с.
303.Кэмпбелл, Б. Дункан. Искусство осады: знаменитые штурмы и осады Античности. Пер. с англ. (Военная история человечества). М., ЭКСМО, 2008. – 224 с.
304.Ливий, Тит. История Рима от основания города. Том I. Пер. с лат. (Памятники исторической мысли) М.: Наука, 1989. – 576 с.
305.Ливий, Тит. История Рима от основания города. Том II. Пер. с лат. (Памятники исторической мысли) М.: Наука, 1991. – 528 с.
306.Ливий, Тит. История Рима от основания города. Том III.

Пер. с лат. (Памятники исторической мысли) М.: Наука, 1994. – 768 с.
307.Лукк (базовые рекомендации по изготовлению, технике стрельбы и трезвой оценке исторических данных). http://www.alendill.fastbb.ru
308.Манандян, Я.А. Маршруты понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду. //Вестник Древней истории, 1940, No 3-4, с. 89-100.
309.Мао Цзе-Дун. Избранные произведения по военным вопросам. М.: Воениздат МО СССР, 1958. – 399 с.
310.Одинцов, Д.С. Численность понтийской армии во время Первой митридатовой войны. http://www.referat.ru
311.Остапенко, П.В. Тайная война в Древнем мире. (Серия «Командос») Минск: Харвест, 2004. - 512 с. (Глава 20. Жестокий полиглот).
312.Переслегин, Сергей при участии Владислава Гончарова. Новая история второй мировой. – М. : Яуза : Эксмо, 2009. – 608 с. – (Военно-исторический бестселлер).
313.Стрельба из лука: Правила соревнований. М.: Физкультура и спорт, 1981. – 47 с.
314.Тишкин, А.А., Горбунов, В.В. Средневековые воины Алтая. http://www.....ru
315.Фаррох, Каве. Персы: Армия великих царей. Пер. с англ. (Военная история человечества) – М.: Эксмо, 2009. – 344 с.
316.Хазина, А.В. Эллинизм и варвары : открытие Посидония. //«Античный мир и археология», Вып.11. Саратов, 2002, с. 37-39. http://ancientrome.ru/publik/khazina/khaz01.htm
317.Шелов,Д.Б. Из античной литературной традиции о Митридатовых войнах (Посидоний и Цицерон). //История и культура античного мира. М., «Наука», 1977, с. 197 -201. http://artyx.ru/books/item/f00/s00/z0000002/st033.shtml
318.Franklin, Claire. To what did Posidonius and Theophanes record Pompean ideology? - «Romanization»? Digressus Supplement 1 (2003), 99-110. http://www.digressus.org
319.Cassius Dio. Roman History. Loeb Classical Library, 9 volumes, Greek texts and facing English translation: Harvard University Press, 1914 thru 1927. Translation by

Earnest Cary. http://penelope.uchicago.edu/Thayer/E/Roman/Texts/Cassius_Dio/
320. Hanson, Victor Davis. The Status of Ancient Military History: Traditional Work, Recent Research, and On-going Controversies. - The Journal of Military History, April 1999, Vol. 63, Iss. 2.
321. Արոնց Նիկողայոս, Տիգրան Մեծ: Ուսումնասիրություններ, Եր.: «Բավիղ», 2010. – 120 էջ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Դիոն Կասսիոս Կոկկեան

Քսիփիլինոս. Գիրք 36.

50.1. *Այնժամ Միհրդատը շտապեց դեպի Տիգրանը. բայց երբ նրա մոտ նախ բանագնացներ ուղարկեց, ոչ մի սիրալիրության չհանդիպեց, քանի որ (Տիգրանի) որդին՝ Տիգրանը, ապստամբել էր (հոր) դեմ, իսկ սա կասկածում էր, որ Միհրդատը, լինելով նրա պապը, հրահրել էր այդ վեճը իր դեմ: Ուստի և Տիգրան (արքան) ոչ միայն չընդունեց նրան, այլև նրա կողմից եկած բանագնացներին կալանավորեց ու բանտարկեց: (Ահա այս բոլորից հետո) Միհրդատը հուսախափ լինելով, շուտ եկավ դեպի Կոլխիս և այնտեղից հետիոտն հասավ Մայոտիս և Բոսպորոս ոմանց համոզելով, մյուսներին բռնանալով. նա ետ վերցրեց այդ երկիրը Մաքարեսից՝ իր որդուց, որն ընդունել էր հռոմայեցիների հովանավորությունը և իշխում էր այդ երկրի վրա, և նրան այնպես ահաբեկեց, որ նա նույնիսկ չներկայացավ իր առաջ: Միհրդատը նրա մերձավորների միջոցով սպանեց նրան, ներում խոստանալով և հարստություն տալով նրանց: 3. Բայց երբ նա փախչելով անցավ Փասիսը, Պոմպեոսը իր հաղթանակ տարած վայրում քաղաք հիմնեց, այն տալով իր միրավոր և տարեց զինվորներին. նրանց հետ այստեղ բնակվեցին նաև շատ ցանկացողներ հարևան վայրերից. նրանք գոյություն ունեն մինչև այժմ և կոչվում են նիկոպոլսեցիներ և հիմա ենթարկվում են Կապպադովկիայի նահանգին:*

51.1. *Պոմպեոսը այսպես էր գործում. իսկ Տիգրանը՝ Տիգրանի որդին, վերցնելով իր հետ հզորներից ոմանց, որովհետև նրանց հաճելի չեր ծերունու իշխանությունը, փախավ Փրաատեսի մոտ. և մինչդեռ սա Պոմպեոսի հետ կնքված դաշինքի պատճառով մտածում էր իր անելիքի մասին, համոզեց նրան ներխուժել Հայաստան: 2. Եվ նրանք եկան մինչև Արտաշատ, իրենց առաջ ընկած երկիրը հպատակեցնելով, մինչև իսկ հարձակվեցին (Արտաշատի վրա). քանզի ծերունի Տիգրանը վախենալով նրանցից, ապաստանել էր լեռները. բայց երբ պարզվեց, որ (քաղաքի) պաշարման համար ժամանակ էր պետք, Փրաատեսը զորքերի մի մասը թողնելով (Տիգրանի) որդուն, վերադարձավ իր հայրենի երկիրը. այնժամ էլ հայրը դուրս եկավ արդեն մենակ մնացած որդու դեմ և հաղթեց. 3. իսկ նա փախչելով, նախ ուղևորվեց դեպի Միհրդատը՝ իր մեծ հայրը. բայց երբ իմացավ, թե նա պարտվել է և ավելի շուտ ինքն է օգնության կարիք զգում, քան թե ի վիճակի է ուրիշին օգնելու, գնաց հռոմայեցիների մոտ. և Պոմպեոսը նրան օգտագործելով իբրև առաջնորդ, արշավեց Հայաստան, նրա հոր դեմ:*

52.1. *Եվ Տիգրանը իմանալով այս մասին և տագնապելով, իսկույն նրա մոտ հաշտության բանագնացներ ուղարկեց և նրան հանձնեց Միհրդատի դեսպաններին: Եվ քանի որ իր որդու հակառակվելու պատճառով չեր կարող մեղմ պայմանների հասնել, և երբ արդեն Պոմպեոսն էլ Արաքսն անցնելով մոտեցել էր Արտաշատին, այնժամ Տիգրանը թե՛ քաղաքը հանձնեց նրան և թե՛ ինքը հոժարակամ եկավ նրա զորակայանը: 2. Նա զգեստավորվել էր այնպես, որ դրսևորվեր և՛ իր նախկին շքեղությունը, և՛ այժմյան խեղճի վիճակը, որպեսզի նրան արժանի երևա թե հարգանքի և թե կարեկցանքի: 3. Քանզի նա իր վրայից հանել էր սպիտակաշերտ պատմուճանը և համակ ծիրանի վերարկուն, բայց գլխին կրում էր խույրը և ապարոշը: Արդ՝ Պոմպեոսը իր մականակիրներից մեկին ուղարկելով նրան ընդառաջ, ձիուց վար իջեցնել տվեց, որովհետև նա, իրենց սովորության համաձայն, հեծյալ վիճակում էր մտել ամրություն: 4. Բայց երբ Պոմպեոսը տեսավ նրան, որ հետիոտն ներս մտավ և դեն նետելով գլխի ապարոշը գետին ընկավ և ուզում էր իրեն երկրպագել, գթաց և տեղից վեր կենալով բարձրացրեց նրան և ապարոշը կապելով նրա գլխին, նստեցրեց նրան իր կողքի բազմոցին և մխիթարելով ասաց նաև, թե նա ոչ միայն չի կորցրել հայոց թագավորությունը, այլև ձեռք է բերել հռոմայեցիների բարեկամությունը: Այս խոսքերով նա քաջալերեց նրան և ընթրիքի հրավիրեց: 53.1. Իսկ որդին, որը նստած էր Պոմպեոսի մյուս կողքին, հորը տեսնելիս վեր չկացավ և ոչ իսկ որևէ մի այլ ձևով նրան պատվեց. նույնիսկ ճաշի հրավիրված լինելով հանդերձ, չգնաց: Այս պատճառով էլ նա մեծապես ատելի դարձավ Պոմպեոսին:*

2. *Այսպիսով, հաջորդ օրը (Պոմպեոսը) լսելով նրանց, ավագին վերադարձրեց նրա ամբողջ հայրենի իշխանությունը. բայց նրա կողմից նվաճված երկրները – որոնց մեջ նաև Կապպադովկիայի և Աստրիքի մասերը, ինչպես նաև Փյունիկիան և ոչ փոքր երկիր Ծոփքը – վերցրեց նրանից, ինչպես նաև զանձեր պահանջեց նրանից. իսկ կրտսեր (Տիգրանին) պարգևեց միայն Ծոփքը: 3. Եվ քանի որ պատահմամբ Ծոփքում էին գտնվում գանձատները,*

ուստի և երիտասարդը սրանց պատճառով վիճեց և հաջողություն չունենալով – քանի որ Պոմպեոսը ոչ մի այլ տեղից չէր կարող ստանալ պայմանավորված գումարը – դժգոհեց և մտադրվեց փախչել: Սակայն Պոմպեոսը, տեղեկանալով այդ մասին, նրան հսկողության տակ վերցրեց առանց կալանքի, և սուրհանդակներ ուղարկելով, գանձերի պահապանների մոտ, հրամայեց նրանց, որ այդ բոլորը հանձնեն նրա հորը: 4. Եվ որովհետև նրանք չհնազանդվեցին, ասելով, թե երիտասարդ (Տիգրանը), որին այժմ պատկանում է այդ երկիրը, պետք է այդ բանը հրամայի իրենց, ապա (Պոմպեոսը) նրան ուղարկեց դեպի բերդերը: Եվ սա, բերդերը փակ գտնելով, մոտիկ գնաց և դժկամությամբ հրամայեց բաց անել դրանք: Եվ երբ նրանք այլևս չէին հնազանդվում, առարկելով, որ նա այդ հրամանը տվել է ոչ թե կամովին, այլ հարկադրված, Պոմպեոսը զայրացավ և շղթայեց (երիտասարդ) Տիգրանին:

5. Եվ այսպիսով, ծերունի (արքան) ստացավ գանձարանները. իսկ նա (Պոմպեոսը –թրգմ.) զորքը երեք մասի բաժանելով, ձմեռեց Անահտական երկրում և Կյուռնոս գետի մոտ ու Տիգրանից էլ մեծ քանակությամբ այլ բաներ նա ստացավ, ինչպես նաև պայմանավորվածից ավելի շատ գանձեր: 6. Եվ առավելապես այդ իսկ պատճառով քիչ ժամանակ անց նա (Տիգրանին) գրանցեց (հռոմեական ժողովրդի) բարեկամների ու դաշնակիցների ցուցակի մեջ և նրա որդուն հսկողության տակ բերեց Հռոմ:

54.1. Այստեղերն նա հանգստությամբ չձմեռեց: Քանզի Օրոյսեսը՝ Կյուռնոսից վերև բնակվող ալբանների թագավորը, ցանկանալով մի կողմից շնորհ անել Տիգրան կրտսերին, որը իրեն բարեկամ էր, մյուս կողմից հատկապես վախենալով, որ հռոմայեցիները կներխուժեն Ալբանիա, և կարծելով, որ անկասկած հաջողություն կհասնի, եթե ձմեռ ժամանակ անսպասելի հարձակվի նրանց վրա, քանի դեռ նրանք չեն կենտրոնացել մեկ միասնական զորակայանում, արշավեց նրանց վրա Սատուռնալիա տոնի ժամանակ:[51]

Հռոմեական պատմություն. Գիրք XII. Միհրդատական.

103. Այդպես էին դասավորվել գործերը Միհրդատի հետ. իսկ Պոմպեոսը սկզբում նրան հետապնդում էր մինչև կոլխերի երկիրը, իսկ հետո համարելով, որ նրան երբեք չի հաջողվի շրջանցել ոչ՝ Պոնտոսը, ոչ՝ էլ Մայոտիդեսը և որ փախստականը այլևս չի համարձակվի խոշոր գործողության դիմել, սկսեց շրջել կոլխերի երկրով, հետաքրքրվելով նախկինում այնտեղ եղած արգոնավտոսների, Դիոսկուրոսների և Հերակլեսի մասին պատմվածքներով. հատկապես ցանկանալով տեսնել այն տեղը, որտեղ, ըստ առասպելի, Կովկասյան լեռներում տառապում էր Պրոմեթևսը: Կովկասյան լեռներից հոսող բազմաթիվ աղբյուրները իրենց հետ բերում են աննկատ մանրագույն ոսկե ավազ. տեղաբնակները ջրի մեջ դնելով ոչխարների երկարամազ մորթիները, հավաքում են այն ոսկին, որը կուտակվում է բրդի մեջ: Հավանաբար, այդպիսին էր եղել և Էետոսի ոսկե գեղմը. երբ Պոմպեոսը շրջում էր այդ պատմական տեղերով, Միհրդատի թագավորության հարևան ցեղերից ոմանք թույլ էին տալիս անցնելու, բայց ալբանացի արքա Օրոյսեսը և, Իբերիայի արքա Արտոկեսը 70.000 զինվորով դարանակալել էին նրան Կյուռնոս գետի մոտ, որը, նրանից հետո, երբ նրա մեջ թափվում են բազմաթիվ գետեր, որոնցից ամենամեծը՝ Արաքսն է, 12 նավարկելի գետաբերաններով թափվում է Կասպից ծով: Նկատելով դարանը, Պոմպեոսը գետի երկու ափերը միացրեց կամրջով և, քշելով բարբարոսներին խիտ մացառուտները (նրանք թաքնվելով և աննկատ հայտնվելով, շատ հմուտ էին անտառային պատերազմում) զորքով շրջապատեց մացառուտները և այրեց դրանք. Նրանց, ովքեր դուրս էին վազում այնտեղից նա հետապնդում էր այնքան, մինչև չուղարկեցին պատանդներին և ընծաներ չմատուցեցին: Հռոմում՝ հաղթահանդեսում նրանց էլ անցկացրեց: Պատանդների և գերիների մեջ կային շատ կանայք, որոնց վերքերը տղամարդկանց վերքերից պակաս չէին: Համարվում էր, որ նրանք ամազոնուհիներ են, թե՝ նրա համար, որ ամազոնուհիները օգնության կանչված առանձին հարևան ցեղ էին, թե՝ նրա համար, որ տեղացի բարբարոսները ռազմատենչ կանանց ամազոնուհիներ են անվանում: (թարգմ. ռուս.- Ա.Գ.) [59]

104. Պոմպեոսը արշավեց Հայաստան, պատճառ բռնելով, թե Տիգրանը օգնել է Միհրդատին: Եվ սրդեն նա մոտեցել էր արքայանիստ Արտաշատին: Տիգրանը որոշել էր այլևս չպատերազմել: Նա Միհրդատի դստերից ունեցել էր երեք որդի, որոնցից երկուսին սպանել էր ինքը՝ Տիգրանը, մեկին պատերազմում, երբ (որդին) կռվել էր իր դեմ, մյուսին՝ որսի ժամանակ, քանի որ սա, երբ Տիգրանն ընկել էր, հոգատար չէին եղել, այլ, մինչդեռ հայրը պառկած վիճակում էր, թագը դրել էր իր գլխին: Իսկ երրորդը՝ Տիգրանը, որը որսի ժամանակ շատ էր անհանգստացել իր հոր համար, թագ էր ստացել նրանից, այտուտանդերձ, քիչ ժամանակ անց սա ևս ապստամբելով՝ հեռացավ, պատերազմեց հոր դեմ և, պարտվելով, ապաստանեց պարթևների թագավոր Փրաատի մոտ, որը նոր էր ժառանգել իր հոր՝ Սինտրիկոսի, իշխանությունը: Երբ Պոմպեոսը արդեն մոտեցել էր, որդին Փրաատի հետ խորհրդակցելով, ստացավ նրա համաձայնությունը ևս, քանի որ Փրաատը նույնպես ձգտում էր Պոմպեոսի բարեկամությանը, ապաստանեց Պոմպեոսի մոտ իբրև խնդրարկու, մանավանդ որ ինքը Միհրդատի թոռն էր: Բայց Պոմպեոսի արդարամտությունը և հավատարմությունը մեծ համբավ ուներ բարբարոսների մոտ, ուստի և հայր Տիգրանը ևս, հուսալով այդ բանին, առանձ նախապես լրատար ուղարկելու, գնաց նրա մոտ: Սա ամբողջապես իրեն վստահելով Պոմպեոսի արդարամտությանը՝ ուզում էր մեղադրել որդուն Պոմպեոսի առաջ: Երբ Պոմպեոսը, ի պատիվ նրա, հրամայեց իր տրիբուններին և հեծելապետներին գնալ նրան դիմավորելու, Տիգրանի հետ եղողները ճանապարհին վախեցան և ետ փախան, քանի որ գնում էին առանց նախապես լրատարի միջոցով հայտնելու: Բայց Տիգրանը եկավ և, Պոմպեոսին առավել հզոր համարելով, բարբարոսական ձևով երկրպագեց: Կան նաև աղբյուրներ, որ Տիգրանին, որը նախապես հրավիրված է եղել Պոմպեոսի կողմից, առաջնորդել են լիկտորները: Ինչևէ, գալով Պոմպեոսի մոտ, (Տիգրանը) բացատրվեց կատարված դեպքերի համար և տվեց իրեն՝ Պոմպեոսին, 6.000 տաղանդ, զինվորներից յուրաքանչյուրին՝ 50 դրաքմե, (յուրաքանչյուր) վաշտապետին՝ հազար, իսկ (յուրաքանչյուր) տրիբունին՝ 10 հազար (դրաքմե):

105. Պոմպեոսը ներեց նրան կատարված դեպքի համար, հաշտեցրեց որդու հետ և որոշեց, որ որդին իշխի Ծոփքի և Կորդուքի վրա, որոնք այժմ կազմում են Փոքրագույն Հայաստանը, իսկ հայրը՝ մյուս Հայաստանի վրա, և որ տղան պետք է լինի ժառանգորդը: Իսկ նրա նվաճած երկրները պետք է վերադարձվեն: Եվ Տիգրանը թողեց Ասորիքը, Եփրատ գետից սկսած մինչև ծովը. քանզի Տիգրանը նվաճել էր այդ երկիրը և Կիլիկիայի մի մասը, այդ երկրից դուրս քշելով Եվսեբես մականվանյալ Անտիոքոսին: Հայերից նրանք, ովքեր լքել էին Տիգրանին Պոմպեոսի մոտ գնալիս, քանի որ կասկածում էին վերջինիս վրա, որդուն, որը դեռևս Պոմպեոսի մոտ էր, համոզում են հարձակվել հոր վրա: Բայց քանի որ նա մինչև այդ փորձել էր պարթևներին ոտքի հանել Պոմպեոսի դեմ, ձերբակալվեց, շղթայակապ արվեց, տարվեց նրա հաղթահանդեսին ու (հետագայում) սպանվեց: ... [17]

Պլուտարքոս Քերոնեացի

Կենսագրություններ. Պոմպեոս.

32. ... Այստեղից Տիգրանը մեկնեց Հայաստան Տիգրանի մոտ: Բայց քանի որ Տիգրանը մերժեց նրան ապաստան տալ և անգամ հարյուր տաղանդ պարգև խոստացավ նրա գլխի համար, Միհրդատը, շրջանցելով Եփրատի ակունքները, շարունակեց փախչել Կողքիսի միջով:

33. Այդ ընթացքում Պոմպեոսը ներխուժեց Հայաստան, որտեղ նրան հրավիրել էր Տիգրան Կրտսերը: Վերջինս սրդեն ապստամբել էր իր հոր դեմ և Պոմպեոսին դիմավորեց Արաքս գետի մոտ: Այս գետն սկսվում է ճիշտ նույն տեղից, ինչ և Եփրատը, բայց, թեքվելով դեպի արևելք, թափվում է Կասպից ծով: Պոմպեոսն ու երիտասարդ Տիգրանը առաջ էին գնում, գրավելով իրենց ճանապարհին գտնված քաղաքները: Սակայն Տիգրան թագավորը, որը նորերս պարտվել էր Լուկուլլոսից, տեղեկանալով, որ Պոմպեոսը մեղմ ու բարի բնավորություն ունի, հռոմեական պահազորային ջոկատը ներս թողեց իր պալատը, իսկ ինքը, ընկերների և ազգականների ուղեկցությամբ, մեկնեց Պոմպեոսի մոտ, նրան հանձնվելու համար: Երբ նա ձի հեծած հասավ ճամբար, Պոմպեոսի երկու լիկտոր մոտենալով նրան, կարգադրե-

ցին իջնել ձիուց և գնալ հետիոտն, քանի որ երբեք չեն տեսել, որ որևէ մեկը հեծյալ մտնի հռոմեական ճամբար: Տիգրանը ենթարկվեց և անցավ հանելով իր սուրը, այն հանձնեց նրանց: Ի վերջո, երբ արքան ներկայացավ Պոմպեոսին, հանեց իր խույրը, այն զորավարի ոտքերի առաջ դնելու մտադրությամբ և, ինչը առավել ամոթալի էր, ուզեց նրա առաջ ծնրադրել: Պոմպեոսը, սակայն, կանխեց նրան, բռնեց արքայի աջը և նրան քաշեց դեպի իրեն: Հետո նստեցրեց իր կողքին, իսկ որդուն՝ մյուս կողքին: Նա արքային հայտարարեց, որ նրա նախկին բոլոր դժբախտությունների համար մեղավոր է Լուկուլլոսը, որը նրանից վերցրել է Ասորիքը, Փյունիկիան, Կիլիկիան, Գալատիան և Սոփենեն: Իսկ այն հողերը, որոնք դեռ մնացել են իրեն, թող ինքը տիրի, հռոմայեցիներին հասցրած վիրավորանքի համար նրանց վճարելով յոթ հազար տալանտ, իսկ Սոփենեում կթագավորի նրա որդին: Տիգրանն այս պայմանները սիրով ընդունեց, և այնժամ հռոմայեցիները նրան արքայավայել ողջունեցին. իսկ Տիգրանը, արտակարգ ուրախացած, խոստացավ յուրաքանչյուր զինվորին տալ կես մինա արծաթ, կենտուրիոնին՝ տասը մինա, տրիբունին՝ մեկ տալանտ: Որդին, ընդհակառակը, խիստ դժգոհեց և, երբ նրան հրավիրեցին հյուրասիրության, հայտարարեց, թե ինքը Պոմպեոսի կողմից նման պատիվների կարիքը չունի, քանի որ կարող է իր համար այլ հռոմայեցու ճարել: Այնժամ Պոմպեոսը հրամայեց շղթայել նրան և պահել բանտում, հաղթահանդեսի համար: Քիչ ժամանակ անց Փրատտեսը, պարթևաց արքան, դեսպաններ ուղարկեց Պոմպեոսի մոտ, պահանջելով կրտսեր Տիգրանին, որպես իր փեսայի, հանձնել իրեն, միաժամանակ երկու տերությունների սահման ճանաչել Եփրատը: Պոմպեոսը պատասխանեց, որ Տիգրանը ավելի մոտ ազգական է իր հորը, քան աներոջը, իսկ վերաբերվում է սահմանին, ապա այն կհաստատվի արդար կերպով:

34. Այնուհետև Պոմպեոսը Ափրանիոսին թողեց Հայաստանը պահպանելու համար, իսկ ինքը, այլ ելք չտեսնելով, մեկնեց Միհրդատին հետապնդելու կովկասյան ցեղերով բնակված երկրների միջով: Ամենամեծաթիվներն այդ ցեղերից աղվաններն են և իբերները: Իբերների երկիրը տարածվում է մինչև Մոսխական լեռները ու Եվկսինյան Պոնտոսը, իսկ աղվաններն ապրում են դեպի արևելք, մինչև Կասպից ծովը: Աղվանները սկզբում համաձայնվեցին թույլ տալ Պոմպեոսին անցնել իրենց երկրով:

Բայց երբ ձմեռը հռոմեական զորքերին վրա հասավ այդ երկրում, և հռոմայեցիները նշում էին Սատուռնալիա տոնը, աղվանները, չորս բյուրից ոչ պակաս թվով, հավաքվեցին անցան Կյուռնոս գետը և հարձակվեցին նրանց վրա: Կյուռնոս գետը սկիզբ է առնում իբերական լեռներից, իր մեջ է ընդունում Հայաստանից հոսող Արաքսը և ապա տասներկու գետաբազուկով թափվում է Կասպից ծով: Ոմանք, սակայն, հավաստում են, թե Կյուռնոսը չի խառնվում Արաքսին, այլ ինքն իրեն, թեև Արաքսին շատ մոտիկ, թափվում է նույն այդ ծովը:

Պոմպեոսը թույլ տվեց բարբարոսներին հանգիստ անցնել գետը, թեև կարող էր խոչընդոտել նրանց: Այնուհետև նա հարձակվեց թշնամիների վրա և նրանց փախուստի մատնեց, շատերին կոտորեց: Երբ աղվանից թագավորը դեսպանների միջոցով գթություն հայցեց, Պոմպեոսը ներեց նրան վիրավորանքը և, հաշտություն կնքելուց հետո, շարժվեց իբերների դեմ: Վերջիններս թվով չէին զիջում աղվաններին, բայց անհամեմատ ռազմունակ էին: Նրանք այրվում էին իրենց նվիրվածությունը Միհրդատին ցույց տալու և Պոմպեոսին քշելու ցանկությամբ: Իբերները հպատակ չէին ոչ մարերին, ոչ պարսիկներին. նրանք կարողացան խուսափել անցած մակեդոնացիների իշխանությունից, քանի որ Ալեքսանդրը պետք է չափազանց արագ նահանջեր Հյուրկանիայից: Սակայն Պոմպեոսը նրանց ևս ջախջախեց մեծ ճակատամարտում, կոտորելով ինը հազար և գերի վերցնելով տասը հազարից ավելի մարդու: Դրանից հետո նա ներխուժեց Կողքիս: Այստեղ Փասիս գետի մոտ նրան հանդիպեց Սերվիլիոսը, որը գլխավորում էր Եվքսինյան Պոնտոսը պահպանող նավատորմը:

35. Բոսպորոսում և Մայոտիսի շուրջն ապրող ցեղերի երկրում թաքնվող Միհրդատին հետապնդելը մեծ դժվարություններ էր ներկայացնում: Բացի այդ, Պոմպեոսը լուր ստացավ աղվանների նոր խռովության մասին: Պոմպեոսը վրդովված ու զայրացած ետ դարձավ նրանց դեմ: Նա նորից անցավ Կյուռնոս գետը մեծ դժվարությամբ և զորքը վտանգելով, քանզի բարբարոսները գետափին երկար ցցապատնեշ էին քաշել: Քանի որ նա պետք է երկար և տանջալի ճանապարհ անցներ ջրազուրկ վայրերով, ուստի հրամայեց ջրով լցնել տասը հազար տիկ: Թշնամիների դեմ ելնելով, Պոմպեոսը նրանց պատահեց Աբաս գետի մոտ արդեն մարտական շարքերով: Բարբարոսների զորքը բաղկացած

էր վեց բյուր հետևակից և տասներկու հազար հեծյալից, սակայն զինվորների մեծ մասը վատ էր զինված և գազանի մորթիներ հագած: Ջորքը գլխավորում էր արքայի Կոսիս անունով եղբայրը: Սա, հենց որ բանը հասավ ձեռնամարտի, պոմպեոսի վրա հարձակվելով, նետեց տեգը, որը դիպավ նրա լանջապանի փեշին: Իսկ Պոմպեոսը նրան խոցեց նիզակով ու տեղնուտեղը սպանեց: Ինչպես հաղորդում են, այս ճակատամարտում բարբարոսների կողմում կռվել են նաև ամազոնուհիները, որոնք եկել էին Թերմոդոն գետի մոտ գտնվող լեռներից: Հիրավի, ճակատամարտից հետո, երբ հռոմայեցիներն սկսեցին կողոպտել սպանված բարբարոսների դիակները, պատահում էին ամազոնուհիների վահաններ ու կոշիկներ, սակայն ոչ մի կնոջ դիակ չի նկատվել: Ամազոնուհիները բնակվում են Կովկասի այն հատվածում, որը տարածվում է մինչև Հյուրկանաց ծովը, սակայն նրանք անմիջական սահման չունեն աղվանների հետ, այլ նրանց միջև ապրում են գելերն ու լեգերը: Այս ցեղերի հետ նրանք ամեն տարի հանդիպում են Թերմոդոն գետի մոտ և նրանց հետ անցկացնում երկու ամիս, իսկ հետո քաշվում են իրենց երկիրը, և այնտեղ ապրում իրենք իրենց համար, առանց այրերի:

36. Այս ճակատամարտից հետո Պոմպեոսը մտադրվել էր առաջանալ մինչև Կասպից ծովը, բայց բազմաթիվ թունավոր սողունների պատճառով ստիպված եղավ ետ վերադառնալ, թեև գտնվում էր ծովից ընդամենը երեք օրվա ճանապարհի վրա: Այնուհետև նա նահանջեց Փոքր Հայք: Եղիմայեցիների և միդիացիների թագավորներին, ի պատասխան նրանց դեսպանությունների, Պոմպեոսը բարեկամական ուղերձներ հղեց: Պարթևաց արքայի դեմ, որը ներխուժել էր Գորդիենե և ոչնչացնում էր Տիգրանին հպատակ ցեղերին, Պոմպեոսը զորք ուղարկեց Ավիրանիոսի գլխավորությամբ: Վերջինս քշեց պարթևներին և նրանց հետապնդեց մինչև Արբելիտիս:... [42]:

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ
մատենաշար

«Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշարը նախատեսված է Հայաստանի և հարակից երկրների պատմության հին և վաղ միջնադարյան ժամանակաշրջանի ռազմական պատմության տարբեր հարցերի լուսաբանման համար: Այն ընդգրկելու է գիտական և գիտահանրամատչելի, ինչպես նաև կարևորագույն սկզբնաղբյուրների հրապարակումները: Հետագայում նախատեսվում է ունենալ մշտական կայք համացանցում, որի միջոցով համագործակցել տվյալ բնագավառում աշխատող արտասահմանյան մասնագետների հետ և տարածել ճշտված և համակարգված տեղեկություններ մեր ժողովրդի գործունեության այս կարևորագույն բնագավառի մասին:

Մատենաշարով նախատեսվում է հրատարակել հետևյալ մենագրությունները.

- Արա Գևորգյան. Տիգրան Մեծի բանակը. մ.թ.ա. 95 – 55 թթ. Պրակ III: Երևան, «Արևելք– Արևմուտք» ԳԲՀ հրատարակչություն, 2010 թ.: («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հատոր II):

- Արա Գևորգյան. Հին Հայաստանի բանակը. մ.թ.ա. XV – II դդ.: Երևան, «Արևելք– Արևմուտք» ԳԲՀ հրատարակչություն, 2011 թ.: («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հատոր I):

- Արա Գևորգյան. Հին Հայաստանի բանակը. մ.թ.ա. 55 – մ.թ. 428 թթ.: Երևան, «Արևելք– Արևմուտք» ԳԲՀ հրատարակչություն, 2012 թ.: («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հատոր III):

- Արա Գևորգյան. Հին Հայաստանի զինագործությունը մ.թ.ա. XV – մ.թ. V դդ.: Երևան, «Արևելք– Արևմուտք» ԳԲՀ հրատարակչություն, 2013 թ.: («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հատոր IV):

Արա Գևորգյան. Հին Հայաստանի բանակը. մ.թ.ա. XV – II դդ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք

Նախաբան

ՄԱՍ I. Հայկական բանակի հնագույն պատմությունը

Գլուխ I. Ռազմական գործը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մ.թ.ա. XVI դ.

Գլուխ II. Հին Հայքի՝ Հայասայի բանակը՝ մ.թ.ա. XV – XIII դդ.

Գլուխ III. Նաիրիի բանակը՝ մ.թ.ա. XIII – IX դդ.

ՄԱՍ II. Բիայնիլիի բանակը հին արևելյան ռազմական համակարգում

Գլուխ IV. Վանի թագավորության բանակը՝ մ.թ.ա. IX – VIII դդ.

Գլուխ V. Վանի թագավորության բանակը՝ մ.թ.ա. VII – VI դդ.

ՄԱՍ III. Հայկական բանակը մ.թ.ա. VI – II դդ.

Գլուխ VI. Հայաստանի բանակը՝ մ.թ.ա. VII – VI դդ.

Գլուխ VII. Հայկական բանակը Աքեմենյանների ռազմական համակարգում՝ մ.թ.ա. 550 – 331 թթ.

Գլուխ VIII. Երվանդունիների բանակը՝ մ.թ.ա. 331 – 201 թթ.

Գլուխ IX. Արտաշեսյանների բանակը՝ մ.թ.ա. 201 – 95 թթ.

Գլուխ X. Եզրակացություններ

Վերջաբան

Գրականություն

Հավելված

Արա Մկրտչի Գևորգյան

Ծնվել է 1954 թ. Երևանում: 1977 թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը, մասնագիտությամբ բժիշկ-թերապևտ և ասեղնաբույժ է: 1970 թ.-ից զբաղվում է ռազմական պատմության և ռազմական գործի տարբեր հարցերով: 1971 թ.-ից զբաղվում է Հին աշխարհի ռազմական պատմության ուսումնասիրությամբ: 1973 թ.-ից զբաղվում է ծրագրավորման և համակարգային վերլուծաբանության, 1979 թ.-ից բժշկական փորձագիտական համակարգերի մշակման տեսական և գործնական հարցերով:

1996 թ.-ից՝ «Արևելք–Արևմուտք» գիտական և բժշկական հիմնադրամի տնօրեն, 2007 – 2009 թթ.՝ Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիայի տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետի «Ծրագրակազմի ճարտարագիտություն» առարկայի դասախոս:

Վերոհիշյալ բոլոր բնագավառներում ունի հրատարակած գիտական աշխատություններ:

Ղարաբաղյան պատերազմի մասնակից և II կարգի հաշմանդամ:



Քարտեզ. Արևելքի քաղաքական վիճակը 94 – 66 թթ. մ.թ.ա.
Կազմեց Ռ.Լ. Մանասերյանը [34]:
Նկար. երկրորդ էջում պատկերված է Անտիոքում հատած Տիգրանի տետրադրաքման՝ [272]:
Հռոմեական բանակի նկարները՝ Ե. Ռազինի գրքից [199]:

Արա Մկրտչի Գևորգյան

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԲԱՆԱԿԸ
մ.թ.ա. 95 – 55 թթ.
Գրակ II

Հրատ. խմբագիր՝ Հրանուշ Խառատյան–Առաքելյան
Տեխն. խմբագիր՝ Նարինե Գևորգյան

Նկարիչ՝ Ծովինար Ղազարյան
Համակարգչային ձևավորում՝ Տաթևիկ Հովսեփյան
և Լիլիթ Ասոյան
Կազմարար՝ Հովհաննես Հովսեփյան

«Արևելք – Արևմուտք» ԳԲՀ հրատարակչություն
Երևան, Ավան, Դուրյան թաղ. 28/9
Հեռ. 61-13-78, (093) 38-70-22
Էլ. փոստ arevelkarevmutk@acupuncture.am